Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ՝

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ՝

Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԱՐՔ. ԿՃՈՅԱՆԻ՝

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ՝

ԱՐԱՄ ՖՐԱՆԿՅԱՆԻ՝

Ի ՀԻՇԱՏԱԿ ԻՐ ԾՆՈՂՆԵՐԻ՝
ՀԱՅԿ ՖՐԱՆԿՅԱՆԻ
ԵՎ ՖԵՆՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԴԱՐՈՒՑ

Ցորիկից եւ բացատրեց
(† Երուսաղէմի միաբան եւ Կ. Պոլսոյ Պատրիարք)
ՊՕՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼՍԵՑԻ

ՀԱՏՈՐ Բ.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.
Վեհափառ եւ Արարատեան Կաթուղիկոսի
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թարգմանեց
ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՈՒՆԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1902

Վաղարշապատում 1902 թ. տպագրված բնագրի շապիկը

ՊՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ

ՀԻՆԳ ԴԱՐԵՐԻ ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոխադրություն արևմտահայերենից

ՀԱՏՈՐ Բ

ԵՐԵՎԱՆ
Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի
2020

ՀՏԴ 27–242
ԳՄԴ 86.37
Պ 797

Արևմտահայերենից փոխադրեց
Վաչագան սարկավագ Դոխոլյանը

Խմբագիր՝
Նազիկ Հովհաննիսյան

Պողոս եպիսկոպոս Ադրիանուպոլսեցի
Պ 797 Հինգ դարերի զանազանությունը: Հին կտակարանի պատմություններ / Պողոս եպիսկոպոս Ադրիանուպոլսեցի. թարգմ. արևմտ.՝ Վաչագան սարկավագ Դոխոլյանի.– Եր.: Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի, 2020. Հատոր Բ.– 584 էջ:

Ընթերցողին է ներկայացվում Պողոս եպիսկոպոս Ադրիանուպոլսեցու՝ 1902 թ. Վաղարշապատում հրատարակված եռահատոր համանուն երկի երկրորդ հատորի արևելահայերեն թարգմանությունը: Սույն հատորը նվիրված է Հին Կտակարանի՝ իսրայելացիների կողմից ավետյաց երկիրը ժառանգելուց մինչև Հերովդես չորրորդապետի գահակալությունը ընկած ժամանակահատվածին՝ մարդկության պատմության չորրորդ և հինգերորդ հոգևոր դարաշրջաններին: Գրքում հարցուպատասխանով ներկայացված է հինկտակարանյան պատմությունների ամբողջական պատկերը՝ մանրամասներով և խրթին հատվածների մեկնություններով:

ՀՏԴ 27–242
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-1-1081-3

© Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի, 2020

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ

Հարց Ա: **Հեսուն ինչպե՞ս է ժողովրդին անցկացնում Հորդանան գետը:**

Պատասխան: Աստծու բացահայտ օգնությամբ և մեծ հրաշքով: Աստված հրամայում է Հեսուին՝ որպես Մովսեսի հաջորդի և կարգված առաջնորդի, որ ժողովրդին անցկացնի Հորդանանի մյուս ափը և չվախենա, որովհետև ինչպես Մովսեսի, նույնպես և իր հետ պիտի լինի, միայն թե հոգա, որ օրենքը կատարվի:

Թեպետ Աստված Հեսուին խոստանում է նրա հետ լինել, սակայն ամեն մարդ պարտավոր է անհրաժեշտը ձեռնարկել, ուստի Հեսուն երկու լրտես է ուղարկում Երիքով քաղաք, որպեսզի այնտեղի բնակիչների վիճակի և զորության մասին ստացած տեղեկության համապատասխան գործի: Ամենից առաջ անհրաժեշտ էր գրավել Երիքովը, քանի որ այն մոտ էր Հորդանանին:

Հիշյալ երկու լրտեսները քաղաքը հետազոտելուց հետո իջևանում են Ռախաբ անունով մի կնոջ տանը: Երբ Երիքովի թագավորն իմանում է սա, Ռախաբից պահանջում է լրտեսներին, վերջինս պատասխանում է. «Արդարև, երկու մարդիկ եկան իմ տուն, սակայն դարձյալ հեռացան, նրանց հետևից արագորեն մա՛րդ ուղարկեք, հնարավոր է՝ հասնեն նրանց»:

Հիշյալ կինը, քանի որ լսել էր իսրայելացիների՝ Կարմիր ծովն անցնելու և անապատում նրանց դեմ դուրս եկած ազգերի կործանվելու մասին, հասկանում է, որ, անշուշտ, Երիքովն էլ են գրավելու: Սա է պատճառը, որ լրտեսներին թաքցնում է, չի հանձնում փնտրողներին, և նրանց էլ երդվեցնում է, որ երբ քաղաքը գրավեն, իրեն և իր ազգականներին չվնասեն:

Նրանք էլ խոստանալով կարգադրում են, որ տան պատուհանից կարմիր պարան կախի՝ որպես նշան, որ քաղաքը

գրավելու ժամանակ իսրայելացիները ճանաչեն ու այդ տանը վնասելու նպատակով չմոտենան: Եվ քանի որ տունն էլ էր բերդի վրա, Ռախաբն օգնում է լրտեսներին փախչել՝ պատուհանից իջեցնելով. սրանք գնալով եղելությունը պատմում են Հեսուին և տեղեկացնում Երիքովի բնակիչների երկյուղի մասին:

Իսրայելացիների բանակը տակավին գտնվում էր Սատտիմ կոչվող վայրում, և այնտեղից շարժվելով՝ մոտենում էր Հորդանանին: Երեք օր հետո Հեսուն ժողովրդին պատվիրում է, որ իրենց մաքուր պահելով՝ պատրաստ լինեն, քանի որ հաջորդ օրը գետի ջուրը կտրվելու է, և տապանակը պիտի անցնի:

Ռուբենի, Գադի և Մանասեի ցեղերի կեսին նույնպես պատվիրում է, որ ամենից առաջ զինվեն՝ Հորդանանն անցնելու համար, իսկ նրանք վերստին խոստանում են (տե՛ս ԻԴ հարցը) ամեն կերպ հնազանդ լինել նրա հրամանին: Ապա ժողովրդին հրամայում է, որ քահանաների՝ տապանակը վերցնելու ժամանակ ամեն մեկը երկու հազար կանգուն հեռավորությունից հետևեն դրան (1 կանգունը = 0,77 մ):

Իրոք, հաջորդ օրը քահանաները վերցնում են տապանակը, և երբ գետի ափին մոտենալով՝ ջուրն են մտնում, Աստծու կամքով անմիջապես գետի վերին հոսանքը դադարելով կանգ է առնում, իսկ ներքևի հոսքը, բնականորեն հոսելով, չորանում է, և ժողովուրդը ջրազուրկ գետնի վրայով դիմացի ափն է անցնում[1]:

Աստծու հրամանով՝ իսրայելացիների տասներկու ցեղերից մի-մի պատվավոր մարդ, քահանաների կանգնած

---

[1] Տիրոջ ուխտի տապանակը կրող քահանաները հաստատ կանգնեցին Հորդանան գետի հունի մեջ, ցամաքի վրա: Եվ բոլոր իսրայելացիներն անցան ցամաքով, մինչև որ ամբողջ ժողովուրդն ավարտեց Հորդանան գետի անցումը (*Հեսու 3:17*):

տեղից մեկական քար վերցնելով, այդ գիշեր իրենց իջևանելու տեղն են տանում և այդ քարերով մի կոթող կանգնեցնում, որ հետագայում, երբ ապագա սերունդը հարցնի, թե ի՛նչ քարեր են դրանք, հայտնի դառնա իսրայելացիների՝ Հորդանան գետը հրաշքով անցնելը, և չմոռանան Աստծու զորությունը[2]:

Հեսուն նույնպես, տասներկու քար վերցնելով, Հորդանանում՝ քահանաների կանգնած վայրում, նշան է կանգնեցնում: Հետո, երբ տապանակն էլ է անցնում, գետն առանց ափերից դուրս գալու սկսում է հոսել սովորական հունով:

Դու տե՛ս Աստծու ողորմությունը. քառասուն տարի առաջ առանց նավի կարիք ունենալու իսրայելացիներն անցնում են Կարմիր ծովը, իսկ այժմ առանց կամրջի կարիք ունենալու Հորդանան գետն են անցնում: Հիրավի, իսրայելացիները սրա պատճառով շատ են ուրախանում, իսկ այդ կողմերում գտնվող կռապաշտ թագավորները, իսրայելացիների՝ Հորդանանը հրաշքով անցնելու մասին լսելով, մեծապես երկյուղում և մտատանջվում են, շվարում՝ չիմանալով ինչ անել:

Քանի որ քառասուն տարիների ընթացքում անապատում ծնվածները մինչ այդ պահը չէին թլպատվել, Աստծու պատվիրանի համաձայն՝ Հեսուն գայլախազ քարով բոլորին թլփատում է: Ամեն օր իջնող մանանան Ավետյաց երկիր ոտք դնելուց և դրա ցորենն ուտելուց հետո դադարում է: Այդպես նաև հրաշալի ամպը, որը անապատում առաջնորդում էր իսրայելացիներին, Հորդանանն անցնելու ժամանակ անհետանում է:

---

[2] Երբ վաղը ձեր որդիները հարցնեն և ասեն՝ «Այս ի՞նչ քարեր են», ասացե՛ք ձեր որդիներին, որ Իսրայելը ցամաքով անցավ Հորդանան գետով (*Հեսու 4:22, 23*):

Հարց Բ: **Երիքովի թագավորը, իմանալով իսրայելացիների՝ Հորդանանը հրաշքով անցնելը, հնազանդվո՞ւմ է Հեսուին:**

Պատասխան: Չի հնազանդվում, և քանի որ նրա դեմ դուրս գալու կարողություն չուներ, երկյուղից ամբողջ բնակչությամբ փակվում է քաղաքում, և ոչ մեկը չի համարձակվում դուրս գալու: Իսրայելացիների բանակը իջևանում է քաղաքի մոտ, և Հեսուն, ցանկանալով զննել դրա պարիսպը, ավելի մոտենալով, տեսնում է մեկին, որ կանգնել էր՝ սուրը ձեռքին:

Թեպետ նրա տեսած անձնավորությունը հրեշտակ էր, սակայն քանի որ մարդկային կերպարանքով էր երևում, Հեսուն հարցնում է. «Իսրայելացի՞ ես, թե՞ թշնամու կողմից»[3], և երբ իմանում է, որ Աստված է ուղարկել՝ իրեն օգնելու[4], իսկույն երկրպագում է և հարցնում. «Ի՞նչ ես հրամայում ծառայիդ»: Հրեշտակը հրամայում է, որ կոշիկները ոտքերից հանի, քանի որ նրա կանգնած վայրը սուրբ է[5], և Հեսուն հանում է կոշիկները:

Ապա, ըստ Աստծու պատվիրանի, Հեսուն կարգադրում է, որ բոլոր պատերազմողները զինված և հանդիսավոր առաջ քայլեն, տապանակը՝ նրանց հետևից, յոթ քահանաներ փողեր հնչեցնեն, նրանց հետևից էլ ժողովուրդն առանց որևէ ձայն հանելու վեց օր՝ օրը մեկ անգամ, պարսպի շուրջը կանոնավորությամբ պտտվի:

Արդարև, վեց օր առավոտյան այս ձևով հավաքվելով՝ այդքան շատ ժողովուրդը, կանոնավորապես և կատարելապես

---

[3] «Մեզնի՞ց ես, թե մեր թշնամիներից» (*Հեսու 5:13*):

[4] Նա ասաց. «Ես Տիրոջ զորքի զորավարն եմ և հիմա եկա» (*Հեսու 5:14*):

[5] «Հանի՛ր կոշիկները քո ոտքերից, որովհետև քո կանգնած տեղը սուրբ է» (*Հեսու 5:16*):

լուռ, Երիքովի շուրջը ծանրաքայլ շրջելով, բնակավայր է վերադառնում: Քաղաքի բնակիչները, սա տեսնելով, սաստիկ զարմանում են: Իսկ յոթերորդ օրը դարձյալ նույն ձևով շրջան անելուց հետո, երբ բոլորը միասնաբար և միաձայն մեծ աղաղակ են բարձրացնում, ո՛վ հրաշք, Երիքովի պարիսպը ինքնիրեն կործանվում է:

Այն ժամանակ իսրայելացիները հարձակվում և կոտորում են քաղաքի բնակիչներին՝ և՛ մարդկանց, և՛ անասուններին, բացի վերոհիշյալ Ռախաբ կնոջից, որն իսրայելացի լրտեսներին ապաստան էր տվել, և որին իր ազգականներով և ունեցվածքով, պատվով և անվնաս բանակատեղի են բերում: Աստծու ողորմությամբ հիշյալ կինը, մովսիսական օրենքն ընդունելով, Սաղմոն անունով մի մարդու կինն է դառնում[6]:

Եվ քանի որ հիշյալ հաղթանակը միմիայն Աստծու ողորմությամբ էր իրողություն դարձել, և քանանացիների երկրի առաջին գրավյալ տարածքն էր, ուստի Երիքովում գտնված ոսկին, արծաթը, պղինձը և երկաթը Հեսուն որպես շնորհակալություն Աստծուն է ընծայում՝ խորանի գանձանակին տալով: Եվ քաղաքը կրակի մատնելով՝ ամբողջությամբ այրում է, միևնույն ժամանակ նզովքով կարգադրում, որ ոչ մեկն այնտեղից ոչինչ չվերցնի:

Նույն ձևով՝ նզովքով, վճռում է, որ ով վերակառուցի այս քաղաքը, հիմքն անդրանիկ որդով դնի, իսկ կրտսեր որդով էլ դարպասը կանգնեցնի: Եվ, իրոք, գրեթե չորս հարյուր տարի հետո այս վճիռն իրագործվում է[7]:

---

[6] Սաղմոնը ծնեց Բոոսին՝ Ռաքաբից (*Մտ. 1:5*):

[7] Նրա օրոք բեթելացի Աքիելը կառուցեց Երիքովը, իր անդրանիկ որդի Աբիրոնի հետ դրա հիմքերը դրեց, իսկ կրտսեր որդի Սեգուբի հետ դրա դարպասները կանգնեցրեց, համաձայն Տիրոջ խոսքի, որ ասվեց Նավեի որդի Հեսուի բերանով (*Գ Թագ. 16:34*):

Սակայն Աքար անունով մեկը առանց կարևորելու նզովքը Երիքովից մի ծաղկակար վերարկու, երկու հարյուր արծաթ դրամ և ձուլածո ոսկյա կտոր է վերցնում, որոնք իր վրանում գաղտնի թաղում է՝ համարելով իր ագահությունը բոլորից թաքցված, սակայն չարաչար սխալվում է:

Դու Աստծու դատաստանի՛ն նայիր: Հիրավի, Աքարը չարությամբ հակառակվում է հրամանին, բայց նրա պատճառով բոլոր իսրայելացիների՝ թշնամուց հաղթվելուց բացի՝ Հեսուն էլ ծանր սրտատանջության է մատնվում: Քանի որ շրջակա քաղաքների բնակիչները, լսելով Երիքովը գրավելու լուրը, սարսափում են, և իսրայելացիներն էլ, չափազանց ուրախ, հույս ունեին, որ գնացած բոլոր վայրերը անպատճառ պիտի կարողանան գրավել:

Արդ, Հեսուն մոտակա Գայի քաղաք լրտեսներ ուղարկելուց հետո իմանում է, որ բնակչությունը սակավաթիվ է և դիմադրելու անկարող, երեք հազար մարդ է ուղարկում՝ կռվի, սակայն բնակիչները դիմադրում են, և իսրայելացիները բախումը սկսելուն պես իսկույն նահանջում են, իսկ թշնամին, նրանց հետապնդելով, երեսունվեց մարդ է սպանում, շատերը վիրավորվում են, մնացածը, երկյուղով խույս տալով, հազիվ մազապուրծ է լինում:

Հեսուն, տեսնելով իսրայելացիների նմանօրինակ փախուստն ու թշնամուց խայտառակվելը, իսկույն պատռում է իր հանդերձները և գլխին մոխիր ցանելով՝ գետնամած խոնարհվում է տապանակի մոտ, և մինչև երեկո հառաչանքներով ու պաղատանքներով աղաչում Աստծուն: Նաև ժողովրդի ծերերն են այս օրինակով և փշրված սրտով աղոթքի կանգնում, որպեսզի Աստված իսրայելացիներից չհեռացնի Իր խնամակալությունը:

Խոհեմությա՛մբ մտապահիր. նախ Աստված Հեսուին խոստանում և քաջալերում է, որ չվախենա թշնամուց, բայց այժմ,

երբ թշնամին հաղթանակ է տանում, չիմանալով ինչ անել՝ աղաղակում է առ Աստված. «Ո՛վ Տեր, հիմա ես ի՞նչ անեմ, ահա Իսրայելը հաղթվեց թշնամուց»[8] :

Սակայն մի՛ կարծիր, որ Աստված Իր ողորմությունը նրանից վերցնում է, այլ քանի որ հանցանքը ժողովրդինն էր, և Հեսուն դեռևս չգիտեր, որ իր նզովքին հակառակ՝ Երիքովից գողություն էին արել, դրա պատճառով Աստված, ժողովրդի մեղքը հայտնելով[9], հրամայում է, որ վիճակ գցելով հայտնաբերեն գողին և կրակի վրա այրեն, որպեսզի կարողանան հաղթել թշնամուն:

Հրամանի համաձայն՝ Հեսուն իսրայելացիների տասներկու ցեղերի միջև վիճակ է գցում, և գողությունը վերոհիշյալ Աքարին է բաժին ընկնում: Հեսուն իր մոտ է կանչում նրան, թեև վերջինս, գողությունը խոստովանելով, զղջում է, սակայն այն չի ընդունվում: Քանի որ զղջումը ոչ թե ի սեր կամ ի պատիվ Աստծու էր, այլ հանցանքը հաստատվելուց հետո ակամա ստիպված է լինում զղջալու և հայտնելու գողոնի տեղը: Գործը բացահայտվելուն պես Հեսուն և ողջ ժողովուրդը նրան, *Աքովրի ձոր* կոչվող վայրը տանելով, քարկոծում են, նրա որդիներին, անասուններին և ողջ ունեցվածքը այրում, հետո այդ վայրում քարեր կուտակում: Այն մի բլուր է դառնում՝ այլոց ահարկու խրատ լինելու համար[10]: Աքարի կորստյամբ արդարություն գործադրվելով՝ Աստծու բարկությունը մեղմանում է[11]: Ուստի Աստված Հեսուին

---

[8] Օ՜հ, Տե՛ր, հիմա ես ի՞նչ անեմ (*Հեսու 7:8*):

[9] Ժողովուրդը մեղք գործեց…. նզովք դարձան (*Հեսու 7:11*):

[10] Եվ բոլոր իսրայելացիները նրան քարկոծեցին քարերով ու նրա ունեցվածքը այրեցին հրով…., և դիզեցին նրանց վրա մեծ քարակույտ (*Հեսու 7:25*):

[11] Եվ իջավ Տիրոջ սաստիկ բարկությունը (*Հեսու 7:26*):

քաջալերում է, որ չվախենա, և միաժամանակ նախապես հայտնում է Գայի քաղաքը կործանելու ձևը:

Օրինա՛կ վերցրու. ինչպես Աքարը, ագահությունից և ընչասիրությունից գողություն անելով, իր գողացածից օգուտ չի քաղում, այլև նրա ողջ ունեցվածքն ու որդիները այրվում են և մոխիր դառնում, նույնպես և գողերը, գողոնից օգուտ չունենալուց բացի, իրենք նույնպես կորստյան մատնվելով, անպատճառ հանդերձյալ կյանքում անվերջ տանջանքների են ենթարկվում:

Հետո Հեսուն երեսուն հազարանոց մի գունդ է ուղարկում՝ Գայի քաղաքի մի կողմում դարանակալելու, երբ ինքն ամբողջ զորքով դեպի քաղաք է շարժվում: Բնակիչները նորից նրանց դեմ են դուրս գալիս, և Հեսուն ձևացնում է, թե փախչում է, քաղաքացիներն էլ, կարծելով, որ իսրայելացիներն իրոք փախչում են, բոլորը միաժամանակ թշնամուն հետապնդելու նպատակով քաղաքից դուրս են գալիս, իսկ դարանակալած իսրայելացիների զորքն իսկույն ներխուժում է քաղաք և այն կրակի մատնելով՝ այրում:

Երբ բնակիչները տեսնում են կրակի ծուխը, քաղաքը պաշտպանելու նպատակով հետ են դառնում, ահա այդ ժամանակ Հեսուն, որը դիտավորյալ էր փախուստի դիմել, ընկնում է նրանց հետևից և, ըստ Աստծու պատվիրանի, ձեռքի նիզակը դեպի քաղաք պարզում[12]: Քաղաքն այրող երեսուն հազար զորքն էլ, քաղաքից դուրս գալով, երկու կողմից սկսում է կոտորել քաղաքի բնակչությանը, և Հեսուն ձեռքը չի իջեցնում, մինչև բոլորին էլ կոտորում են: Գայիի թագավորին բռնելով՝ կախաղան են հանում, նրանց անասուններին ավար

---

[12] Հեսուն մեկնեց իր ձեռքում եղած նիզակը դեպի քաղաքը (*Հեսու 8:18*):

առնելուց հետո քաղաքը նզովքներով այրում են և ամբողջովին ավերակ դարձնում:

Ապա Հեսուն մուրճ չդիպած քարերով սեղան է պատրաստում, Աստծուն շնորհակալության ընծաներ մատուցում, և սեղանի քարերին գրում օրենքը: Ժողովրդի մի մասը՝ Գարիզի, իսկ մյուս մասը Գեբազ լեռն է բարձրանում, իսկ քահանաներն էլ, տապանակով նրանց միջև կանգնելով, բարձրաձայն կարդում են օրենքը, որի ընթացքում հնազանդվողներին՝ օրհնություն, իսկ անհնազանդներին անեծք կարդալու ժամանակ ժողովուրդը «ամեն» է ասում, ինչպես պատվիրել էր Մովսեսը (տե՛ս ԻԵ հարցը):

Թեև Սինա լեռան վրա Մովսեսը կարդում է օրենքը, ժողովուրդն էլ հանձն է առնում և խոստանում հնազանդվել, սակայն նրանք բոլորն էլ անապատում մահանում են, ուստի այս անգամ նորից է կարդացվում, որպեսզի ներկա ժողովուրդը նորից խոստանա և օրենքին հակառակ չգործի:

Հարց Գ: **Երիքովի և Գայիի կործանումից հետո մոտակայքում գտնվող քաղաքի թագավորները հնազանդվո՞ւմ են:**

Պատասխան: Չեն հնազանդվում: Թեև իսրայելացիների՝ Եգիպտոսից հրաշքով դուրս գալը և մինչ այդ ժամանակ նրանց դիմադրողների պարտությունը բոլորին հայտնի էին, սակայն այդ կողմերի թագավորները դարձյալ միավորվում են իսրայելացիների դեմ: Գաբավոն գավառի մեծամեծները նրանց հետ չեն համաձայնում, և մարդ են ուղարկում Հեսուի մոտ՝ հնազանդություն հայտնելով, ապա խնդրում են, որ Հեսուն իրենց հետ բարեկամության դաշինք կնքի, որ միշտ միմյանց բարեկամ լինեն:

Բայց քանի որ Գաբավոնը գտնվում էր իսրայելացիների բնակավայրի մոտակայքում, նրանք, վախենալով, որ գուցե

հենց դրա պատճառով Հեսուն չընդունի իրենց առաջարկը և Երիքով և Գայի քաղաքների նման Գաբավոնն էլ ավերի, հին և պատռված հագուստներ հագնելով և իրենց հետ որդնած հաց վերցնելով, ներկայանում են և այնպես խոսում՝ իբր շատ հեռու վայրերից են եկել:

Արդարև, Հեսուն հարցնում է, թե միգուցե մոտ տեղից են գալիս, սակայն երբ նրանք հայտնում են, որ իրենց հանդերձները ճանապարհին են մաշվել, իսկ հացը բորբոսնել ու որդնել է, Հեսուն հավատում է նրանց խոսքերին, քանի որ Գաբավոնի բնակիչները այնպիսի թշվառ և ողորմելի կերպարանք ունեին, որ նրանց տեսնողի գութն անպատճառ կշարժվեր: Այս պարագայում Հեսուն և ժողովրդի իշխանները առանց Աստծու կամքը հարցնելու, երդումով դաշինք են կնքում, որ գաբավոնացիներին չվնասեն[13]:

Երեք օր հետո սրանց նենգությունը հայտնի է դառնում, և պարզվում է, որ մոտ տեղից են, սակայն Հեսուն երդման պատճառով նրանց չի վնասում: Միայն իսրայելացիներին ստախոսությամբ խաբելու համար դատապարտում է, որ բոլոր գաբավոնացիները՝ մեծից փոքր, որպես ջրկիրներ և փայտահատներ, գերիների նման ծառայեն իսրայելացիներին[14]:

Խրա՛տ ընդունիր. գաբավոնացիներին խոնարհությամբ հաջողվում է իսրայելացիների հետ բարեկամություն հաստատել և անվնաս մնալ, մինչդեռ մյուսները հպարտությամբ, իրենց կարողության վրա հույս դնելով, կորստյան են մատնվում: Օրինակ՝ Երուսաղեմի Ադոնիբեզեկ թագավորը, Հեսուի գործերի մասին տեղեկություն հավաքելով, մանավանդ Գաբավոնի նման մեծ քաղաքի քաջասիրտ բնակիչների

[13] Հեսուն նրանց հետ խաղաղություն հաստատեց և ուխտեց (*Հեսու 9:15*):

[14] Նրանց փայտահատներ ու ջրկիրներ կարգեց (*Հեսու 9:27*):

առանց պատերազմի անձնատուր լինելու պատճառով զայրացած, Քերբրոն, Հերիմութ, Լաքիս և Սդոդոմ քաղաքների թագավորներին լուր է ուղարկում, որ միավորվեն և բազմաքանակ զորքով Գաբավոն շարժվեն. նրանք պաշարում են քաղաքը բնակիչներին պատժելու նպատակով:

Գաբավոնացիները լուր են ուղարկում Հեսուին, որ իրենց պաշտպանի: Նա անթիվ զորքով իսկույն շարժվում է թշնամու դեմ, և Աստված թշնամու սիրտը երկյուղ է գցում[15]. թշնամին սկսում է փախչել, իսրայելացիներն էլ հետապնդում են կոտորելու նպատակով: Սակայն փախստական զորքը ցիրուցան փախչում է անհարթ տեղերով, և Հեսուն խնդրում է Աստծուն, որ քարե կարկուտ տեղա՝ ջնջելու իսրայելացիների թշնամիներին, որոնք նաև իր թշնամիներն են:

Իրոք, իսկույն սկսում է սաստիկ կարկուտ տեղալ այնպես, որ կարկուտից մահացածների թիվը սրից ընկածներից ավելի շատ է լինում[16]: Իսրայելացիների զորքը նույնպես շարունակում է կոտորել փախչողներին, սակայն արդեն մթնում էր: Հեսուն նորից է խնդրում Աստծուն, որ արեգակը կանգնի Գաբավոնի, իսկ լուսինը՝ Էլոն ձորի մոտ: Այս խոսքն արտասանելուն պես Աստծու կամքով արևն ու լուսինը կանգնում են իրենց տեղում և չեն շարժվում, մինչև բոլոր փախչողներին կոտորելով՝ Աստված իսրայելացիների վրեժն առնում է թշնամիներից[17]: Ապա արևը սովորականի նման շարունակում է իր ճա-

---

[15] Տերը իսրայելացիների ահը գցեց նրանց մեջ (*Հեսու 10:10*):

[16] Երբ նրանք Բեթորոնի զառիվայրով փախչում էին…. Տերը նրանց վրա երկնքից կարկտի քարեր թափեց…. կարկտի քարերից մեռածներն ավելի շատ էին, քան նրանք, որոնց իսրայելացիները պատերազմում սրով կոտորեցին (*Հեսու 10:11*):

[17] Եվ արեգակն ու լուսինը կանգնեցին իրենց տեղում, մինչև որ Աստված նրանց թշնամիներից վրեժն առավ (*Հեսու 10:13*):

նապարհը: Այս հրաշքի պատճառով այդ օրը երկու օրվա չափ երկարում է[18]:

Դու հիշյալ թագավորների ողորմելի վիճակի՛ն նայիր. քանի որ իրենց զորքերի կոտորածից բացի՝ նրանք էլ, հինգը միասին, հուսահատ մեկ քարայրում են պատսպարվում: Հեսուն հրամայում է նրանց իր մոտ բերել, քաջ զինվորներին էլ հրամայում է, որ նրանց պարանոցները աներկյուղ ոտնակոխ անելով՝ սպանեն և մարմիններն էլ փայտերից կախեն, որպեսզի մյուսներին իսրայելացիների դեմ չգործելու խրատ լինի:

Նույն օրը՝ երեկոյան, հիշյալ թագավորների մարմիններն իջեցնելով՝ նույն քարայրի մեջ են նետում՝ քարերով փակելով այն, և Հեսուն անմիջապես գրավում է նրանց քաղաքները:

Արդ, հետևի՛ր Աստծու ողորմությանը: Թեև այդպիսի մեծ պատերազմ էր, բայց քանի որ Աստված իսրայելացիների հետ էր, նրանցից ոչ մեկը չի վնասվում: Եվ քանի որ այդ կողմերում այլ թագավորներ էլ կային, միգուցե նրանք նույնպես միավորվեին ու պատերազմեին, Հեսուն նրանց դեմ նույնպես զորք է ուղարկում և կոտորում՝ գրավելով նրանց քաղաքները:

Սակայն Սուր գավառի Հաբին թագավորը հանգիստ չի մնում, և շրջակայքում բնակվող թագավորներին միանալով՝ ծովի ավազի նման անթիվ զորք է հավաքում, որպեսզի հարձակվի իսրայելացիների վրա: Հեսուն նրան և նրան միացածներին, Աստծու օգնությամբ նույնպես կոտորելով, ամբողջությամբ բնաջնջում է:

Ապա քանանացիների և այդ երկրներում բնակվող ժողովուրդների հետ յոթ տարի շարունակ պատերազմում է, քանինը թագավորների իրենց ժողովուրդների հետ երկրի երեսից ամբողջությամբ բնաջնջելով՝ կորստյան մատնում, նրանց

---

[18] Եվ մեկ օրը եղավ որպես երկու (*Սիրաք 46:5*):

տարածքները գրավում և իսրայելացիների ցեղերի միջև կանխապես որոշված ձևով հավասարապես բաժանում:

Հարց Դ: **Ավետյաց երկիրն ինչպե՞ս է բաժանվում իսրայելացիների միջև:**

Պատասխան: Քանի որ տասներկու ցեղերից երկուսուկեսը՝ Ռուբենի, Գադի, և Մանասեի կես ցեղը, Հորդանանի մյուս կողմում էին բնակություն հաստատել, ինչպես նախապես վերևում հիշատակվել է, Հեսուն նվաճված և գրավված երկրները հաապատասխանաբար բաժանում է մնացած իննուկես ցեղերի միջև, ինչպես Աստված պատվիրել էր Մովսեսին[19]:

Եվ դարձյալ ըստ Աստծու պատվիրանի՝ ամեն մի ցեղի հողատարածքում ղևտացիներին քահանայագործելու համար տարածք է հատկացվում: Եվ քանի որ հիշյալ երկուսուկես ցեղերի՝ զինվորության պիտանի մասը, ժողովրդի հետ Հորդանանն անցնելով, միավորված պատերազմում էր, ուստի թշնամիներին հաղթելուց հետո յուրաքանչյուր ցեղ տիրանում է իր տարածքին և այնտեղ տեղավորվում: Հեսուն հետ դառնալու և իրենց տեղերը վերադառնալու օրհնությամբ հրաման է տալիս՝ պատվիրելով, որ Աստծու պատվիրանները հնազանդությամբ պահպանելու զգուշություն ունենան:

Սակայն տապանակն ու վկայության խորանը Հորդանանի այս կողմում՝ իննուկես ցեղերի մեջտեղում էին, ուստի նրանք մտածում են, թե միգուցե որոշ ժամանակ հետո երկու ցեղերի միջև գժտություն և անհամաձայնություն ծագեն, և սրանք մտածեն, թե իրենք իսրայելացիներ չեն և հետզհետե իրենց այդ ժողովրդի ընդհանրությունից դուրս համարեն: Սրա պատճառով Հորդանանի մյուս կողմում՝ Գալիլոթ կոչվող

---

[19] *Թվեր 34*:

վայրում, մի մեծ սեղան են կառուցում՝ ոչ թե զոհ մատուցելու, այլ ցույց տալու, որ իրենք նույնպես իսրայելացիներ են:

Եվ քանի որ խորանից բացի՝ այլ տեղ Աստծուն զոհ չմատուցելու հատուկ կարգադրություն կար, ուստի ժողովուրդը, լսելով, որ նրանք հատուկ սեղան են կառուցել, կարծում է, որ օրենքին հակառակ զոհ մատուցելու նպատակով են կառուցել: Սրա պատճառով նրանց դեմ պատերազմելու համար հավաքվում են Սելովում: Սակայն նախ իրողությունը ստուգելու համար մարդիկ են ուղարկում, որոնք գնալով քննում, տեղեկանում են, որ սեղանը զոհ մատուցելու համար չի կառուցվել, և երբ ժողովրդին էլ են տեղեկացնում, բոլորն ուրախանալով աղոթում են այն կառուցողների համար, քանի որ սեղանը կառուցվել է՝ ի նշան և ի վկայություն իսրայելացի լինելու:

Հետո Հեսուն, ժողովրդի ազդեցիկ ծերերին և օրենսգետներին հիշյալ Սելովում՝ խորանի առջև, հավաքելով, իսրայելացիներին մեկ առ մեկ հիշեցնում է Աստծու բարերարությունները ու գործած հրաշքները և պատվիրում, որ Աստծուն ընդհանրապես իրենց մտքից ու սրտից չհանեն, միշտ հնազանդ լինեն իրենց բարերար և ողորմած Արարչին:

Հեսուն նաև պատվիրում է, որ մեծապես զգուշանան կռապաշտների հետ մտերմիկ հարաբերություններ հաստատելուց, նրանց աղջիկ տալուց և առնելուց, նրանց կուռքերը պաշտելուց, քանի որ եթե պաշտեն, անտարակույս պիտի պատժվեն: Ժողովուրդն էլ Աստծուն և Նրա օրենքներին հնազանդվելու խոստում է տալիս: Նրանց խոսքերն ու խոստումները օրենքների գրքի մեջ արձանագրելուց բացի՝ որպես վկայություն՝ այնտեղ քարե մի մեծ կոթող են կանգնեցնում, որպեսզի ամեն անգամ այն տեսնելով՝ իրենց խոստումը մտաբերեն և միշտ հնազանդ լինեն:

Արդարև, քանի դեռ Հեսուն և նրան ժամանակակից ծերերը ողջ էին, բոլոր իսրայելացիները ամեն ինչով հնազանդ են

մնում: Սակայն Հեսուն հարյուր տասը տարեկանում վախճանվում է և թաղվում Թամնասարա կոչվող վայրում: Նրա փոխարեն ուրիշ առաջնորդ չի ընտրվում, և յուրաքանչյուր ցեղ կառավարում են նրա ազդեցիկ և խոսքի տեր անձինք, և բոլորին վերաբերող որևէ խնդիր ծագելիս քահանայապետի և մեծամեծների վճիռներով են տնօրինվում:

Ինչպես որ երկրորդ դարի քառասունմեկերորդ հարցի մեջ է հիշատակվել, քանի որ իսրայելացիները Եգիպտոսից դուրս գալու ժամանակ Հովսեփի ոսկորներն ամբողջությամբ բերել էին, յուրաքանչյուր ցեղ իրեն հատկացված վայրում հաստատվելուց հետո հիշյալ ոսկորները թաղում է Սիկիմում, որոնք Հակոբը մահանալիս հատկապես Հովսեփին էր տվել, ինչպես որ հիշատակվել է երրորդ դարի երեսունիններորդ հարցի մեջ:

Հարց Ե: **Հեսուի մահվանից հետո իսրայելացիները մշտապես հնազա՞նդ են մնում Աստծուն:**

Պատասխան: Չեն մնում: Հիրավի, որքան էլ Հեսուն շատ թշնամիներ է կոտորում, այսուհանդերձ, դեռևս շատ կռապաշտներ են մնում. նա չի կամենում բոլորին կոտորել՝ մտածելով, որ միգուցե ժողովուրդը հանգիստ լինելով անձնատուր լինի մարմնական հաճույքների և զվարճանքների և մոռանա Աստծուն: Սրան հակառակ՝ թշնամու գոյությունը նրանց խթան կլինի և կհուշի, որ թշնամուց չհաղթվելու համար պարտավոր են Աստծու օգնությանն ապավինել և հնազանդվել Նրա սուրբ պատվիրաններին[20]:

---

[20] Սրանք են այն ազգերը, որոնց թողեց Հեսուն, որպեսզի Աստված նրանցով փորձի իսրայելացիներին, ամենքին, որոնք չգիտեին քանանացիների բոլոր պատերազմների մասին (*Դատ. 3:1*):

Դու հիմա նայի՛ր իսրայելացիների ապերախտությանը. և՛ Մովսեսը, և՛ Հեսուն կրկին ու կրկին խստորեն կարգադրում են կռապաշտների հետ մտերմիկ հարաբերություններ չհաստատել՝ զգուշացնելով չպաշտել նրանց կուռքերը: Եղիազար քահանայապետի և նրան ժամանակակից ծերերի մահվանից հետո իսրայելացներն այնքան են մտերմանում դրացի կռապաշտների հետ, որ սկսում են պաշտել նրանց կուռքերը:

Այն ժամանակ Աստված բարկանալով հետզհետե նրանցից վերցնում է Իր խնամակալությունը և պաշտպանությունը, թշնամիներն աստիճանաբար համարձակություն են ձեռք բերում, և իսրայելացիներն էլ հարկադրված վերստին պատերազմում են նրանց դեմ: Սրա պատճառով ժողովրդի մեծամեծները, խորանի առջև հավաքվելով, քահանայապետի միջնորդությամբ Աստծուն հարցնում են, թե ո՛վ է պատերազմելու քանանացիների դեմ[21]:

Աստված հրամայում է, որ Հուդան պատերազմի, իսկ Հուդայի ցեղապետն էլ, զորքի գլուխ անցնելով և իր հետ Շմավոնի ցեղից էլ մարդ վերցնելով, միասնաբար պատերազմ սկսի Ադոնիբեզեկ թագավորի դեմ, որը Բեզեկ քաղաքի թագավորն էր: Իսրայելացիներն այս քաղաքը գրավելուց հետո թագավորին ձերբակալում են՝ նրա ձեռքերի և ոտքերի մատների ծայրերը կտրատելով:

Ըմբռնի՛ր Աստծու արդարությունը. հիշյալ թագավորը, խիստ անգութ և բարբարոս անձ լինելով, նախապես յոթանասուն թագավորների դեմ պատերազմելու ժամանակ նրանց գերել և մատների ծայրերը կտրատել էր տվել, և այս թագավորներին իր հացի սեղանի տակ էր պահում, որպեսզի նրանք

[21] Հեսուի վախճանվելուց հետո իսրայելացիները հարցնում էին Տիրոջը և ասում. «Մեզնից ո՞վ առաջինը դուրս կգա պատերազմի քանանացիների դեմ» (*Դատ. 1:1*):

սնվեին իր նետած հացի կտորներով: Իրոք, իր անգթությունը նույն կերպ իրեն է վերադառնում, և նա, Աստծու արդարությունը խոստովանելով, ասում է. «Ինչպես որ ես արեցի, Աստված էլ նույնպես հատուցեց ինձ»[22]:

Խրա՛տ ընդունիր հիշյալի թշվառ վիճակից. ոչ մեկին մի՛ անիրավիր և մի՛ զրկիր. եթե թշնամուդ նկատմամբ հաղթանակ տանելով՝ նույնիսկ պատեհ առիթ ունենաս, վրեժխնդիր մի՛ եղիր, այլ չարության փոխարեն բարի՛ք արա, որպեսզի բարիք գտնես: Քանի որ մարդն ուշ կամ շուտ իր գործերին համապատասխան Աստծուց պետք է հատուցում ստանա: Պետք է նաև իմանալ, որ այն ժամանակ փոքր գավառների իշխաններին *թագավոր* էին կոչում, հետևաբար մի՛ տարակուսիր, թե ինչքան շատ թագավորներ են եղել:

Աստծու օգնությամբ Հուդայի և Շմավոնի ցեղերը այդ ժամանակ շատ վայրեր են գրավում: Հովսեփի ցեղն էլ Բեթել քաղաքն է պաշարում, սակայն չեն կարողանում գտնել ներս մտնելու ճանապարհը: Նույն պահին քաղաքից դուրս եկող մի մարդու են բռնում, որին դրամ են խոստանում, եթե նա քաղաք մտնելու գաղտնի ճանապարհն իրենց ցույց տա: Նա էլ ագահությունից հայտնում է այն ամենը, ինչ նրանք ցանկանում են: Զորքը ներս մտնելով քաղաքի ողջ բնակչությանը սրի է քաշում, տիրում քաղաքին՝ որևէ վնաս չկրելով:

Թեև վերոհիշյալ մատնիչին շատ էին վճարել, սակայն այլևս չվստահելով՝ և՛ նրան, և՛ նրա ազգականներին այլ վայր են ուղարկում: Որովհետև հայտնի է՝ նա, ով մատնում է միայն իր փրկության կամ ընչասիրության համար՝ չխնայելով իր ազգը

---

[22] Ադոնիբեզեկն ասաց. «Յոթանասուն թագավորներ, որոնց ձեռքերի ու ոտքերի մատները կտրված էին, հավաքում էին իմ սեղանի տակի փշրանքները: Արդ, ինչպես ես էի արել, այդպես էլ Աստված ինձ հատուցեց» (*Դատ. 1:7*):

կամ հայրենիքը, երբեք չի կարող ուրիշին հավատարիմ լինել և ոչ էլ վստահության է արժանի:

Այդ ժամանակահատվածում Իսրայելի ամեն մի ցեղ պատերազմում էր՝ իրեն սահմանակից թշնամի ցեղին հաղթելու եռանդով լցված, սակայն սույն եռանդը երկար չի տևում: Ոմանք, ընչասիրության ախտով համակված, կռապաշտներից կաշառք են վերցնում, մյուսները մարդահաճությամբ այնքան են մտերմանում նրանց հետ, որ աղջիկ առնելուց և տալուց բացի՝ ամենայն հիմարությամբ սկսում են նաև պաշտել նրանց կուռքերը՝ հետ կանգնելով իրենց բարերար, ողորմած և պահապան Աստծուն և Նրա օրենքներին հնազանդվելուց:

Հարց Զ: **Աստված արդյոք իսկույն պատժո՞ւմ է իսրայելացիների անհնազանդությունը:**

Պատասխան: Չի պատժում: Թեև ժողովուրդն այս դեպքում արժանի էր պատժի, սակայն Աստված Իր անսահման ողորմությամբ առանց անմիջական պատժի նրանց մոտ հրեշտակ է ուղարկում, որպեսզի ուղղվեն: Գաղգաղայում մարմնավոր կերպարանքով հրեշտակ է հայտնվում և տեղեկացնում, որ եթե շարունակեն Աստծու օրենքներին հակառակ իրենց վարքը և անմիջապես չզղջան, կպատժվեն:

Թեև հրեշտակի խոսքերը լսելով՝ արտասվում են, ողբում, սակայն, այդուհանդերձ, իրենց չար ճանապարհից հետ չեն դառնում: Քանի որ ըստ նախորդ հարցի մեջ նշվածի՝ Հեսուի մահվանից հետո մինչ նոր առաջնորդ կկարգեին, ամեն մարդ ընթանում էր իր սրտի ցանկություններով[23], ուստի մարդիկ

[23] Այն օրերին Իսրայելում թագավոր չկար, և ամեն մարդ անում էր այն, ինչ հաճելի էր իրեն (*Դատ. 21:25*):

այն վիճակի են հասնում, որ հանդգնում են անգամ միմյանց վնաս և չարիք պատճառելու (տե՛ս *Դատ. 17—21* գլուխները, որոնց մեջ մանրամասն գրված է):

Օրինակ՝ հիշենք հետևյալ դեպքերը: Եփրեմի ցեղից Միքա անունով մի մարդ կուռք է պատրաստում և մի ղևտացու գտնելով՝ նրան այդ կուռքի համար քահանայության է կարգում և համարձակորեն սկսում պաշտել այն: Ապա Դանի ցեղը, իրեն հատկացված տեղը սակավ լինելու պատճառով և կռապաշտների երկրից ընդարձակ տարածքներ գրավելու ցանկությամբ, հինգ հոգի է ուղարկում՝ շրջակա գավառները լրտեսելու, քննելու և հետազոտելու հանձնարարությամբ:

Սրանք վերոհիշյալ Միքայի տանը իջևանելու ժամանակ, ղևտացուն տեսնելով, իմանում են նրա պաշտոնի մասին և առաջարկում են Աստծուն հարցնել, թե արդյոք կհաջողվի իրենց գործը, նա էլ պատասխանում է. «Գնացե՛ք, խաղաղություն է»:

Ապա հետախուզում են Լայիսա քաղաքը և լուր բերում: Դանի ցեղից վեց հարյուր զինված մարդ վերոհիշյալ քաղաքը գրավելու ժամանակ Միքայի տնից իրենց հետ վերցնում են այդ ղևտացուն և կուռքերը, տունն էլ կողոպտում են՝ հափշտակելով ողջ ունեցվածքը: Միքան, թեև հիշյալ մարտիկների հետևից ընկնելով, բողոքում է և աղաղակում՝ գանգատվելով սույն բռնության դեմ, բայց տեսնելով, որ իրեն էլ կարող են սպանել, վախից հուսահատ՝ հետ է դառնում:

Հիշյալ արշավախումբը, Լայիսայի բնակիչներին էլ կոտորելով, քաղաքն այրում է: Նրանք բնակվում են գրավված վայրում և իրենց ցեղի անունով այն *Դան* կոչում: Ահա այդ օրերից մինչև իսրայելացիների գերությունը Դանի ցեղը պաշտում է հիշյալ կուռքը: Հետագայում նաև իսրայելացիների թագավորը իր կերտած երկու ոսկե հորթերից մեկն այդտեղ է

հաստատում, որպեսզի ժողովուրդը Երուսաղեմ գնալու փոխարեն այնտեղ զոհեր մատուցի[24]:

Մեկ այլ դեպք: Եփրեմի գավառում մի ղևտացի էր բնակվում, որը Բեթղեհեմից է կին առնում: Որոշ ժամանակ հետո նրանց միջև անհամաձայնություն է ծագում, և կինը հոր տուն է վերադառնում: Երեք ամիս հետո ամուսինը գնում է Բեթղեհեմ, անները նրան պատվով ընդունում է, և առաջվա նման սիրով հաշտվում են:

Ապա ղևտացին որոշում է կնոջ հետ իր բնակավայր վերադառնալ, և ճանապարհին՝ Բենիամինի գավառի Գաբաա կոչվող վայրում, որոշում են գիշերել: Սակայն ոչ մի բնակիչ գիշերը նրանց չի հյուրընկալում, որի պատճառով թեև սկզբում հրապարակում են մնում, սակայն Եփրեմի երկրից մի ծերունի մարդ, որը Գաբաայում էր բնակվում, ուշ ժամի տուն վերադառնալիս նրանց իր տուն է տանում, և մինչ ուրախությամբ ուտում և խմում էին, քաղաքի չարագործ մարդիկ, տունը շրջապատելով, ցանկանում են բռնել ղևտացուն և իրենց պիղծ մտքերն իրականացնել:

Թեև ծերունին շատ է աղաչում և պաղատում, մինչև անգամ համաձայնում է իր աղջկան և ղևտացու կնոջը նրանց հանձնել, սակայն այդ ամբարիշտները ոչ մի կերպ չեն ցանկանում զիջել և ամեն կերպ ղևտացուն են պահանջում: Մինչ նրանք վիճաբանում էին, ղևտացին ճարահատյալ համաձայնում է՝ իր կնոջն այդ անամոթ մարդկանց ձեռքը մատնելու, որպեսզի ինքն ազատվի: Ողջ գիշեր, մինչև առավոտ ողորմելի

---

[24] Արքան խորհեց ու երկու ոսկե հորթ պատրաստելով՝ ասաց ժողովրդին. «Բավական է մինչև Երուսաղեմ գնաք: Ահա քո աստուածները, ո՛վ Իսրայել, որոնք քեզ դուրս բերեցին Եգիպտացիների երկրից»: Նա կուռքերից մեկը դրեց Դանում, իսկ մյուսը՝ Բեթելում (*Գ Թագ. 12:28,29*):

կնոջ հանդեպ իրենց պիղծ կիրքն են հագեցնում և առավոտյան արձակում: Սակայն խեղճը հազիվ է կարողանում հասնել իրենց իջևանած տան մոտ, որտեղ էլ ընկնելով և ձեռքը տան շեմին դնելով՝ մահանում է: Ղևտացին էլ, որ կնոջից հույսը կտրել էր, կամենում է իր ճանապարհը շարունակել, դուռը բացելով և կնոջն այնտեղ տեսնելով՝ կարծում է, թե կենդանի է: Իսկ երբ հայտնաբերում է, որ մահացել է, առանց որևէ մեկին ասելու գրաստին է դնում և տանում իր քաղաքը: Նրա մարմինը տասներկու կտորի բաժանելով՝ հատուկ մարդկանց միջոցով մեկական կտոր է ուղարկում Իսրայելի տասներկու ցեղերին՝ հայտնելով գաբաացիների այդ անօրեն արարքի մասին:

Այս գարշելի եղելության լուրը իսրայելյան ցեղերի մեջ տարածվելուն պես իսկույն Մասեփայում չորս հարյուր հազար զինյալ մարդ է հավաքվում: Այնտեղ գործը ստուգելուց հետո բոլորը միաձայն աղաղակում են, որ հարկ է իրավունք ու արդարություն իրականացնել: Ուստի որոշելով պատժել այդ չարագործներին՝ Բենիամինի ցեղի մեծերին լուր են ուղարկում, որ հիշյալ անզգամներին իրենց հանձնեն: Սակայն նրանք, հիշյալ չարագործներին պաշտպանելով, չեն ցանկանում հանձնել: Եվ մանավանդ գաբաացիներից բացի՝ քսանհինգ հազար զինյալ և յոթ հարյուր դիպուկ նշանառու և պարսատիկ նետող մարդիկ էլ են մարտնչելու պատրաստվում:

Արդ, Իսրայելի տասնմեկ ցեղերը, բենիամինցիների սույն ապօրեն վարքը տեսնելով, միաձայն որոշում են տուն չվերադառնալ առանց նրանց արժանի պատիժ տալու, և որ Բենիամինի ցեղին աղջիկ տվողը կամ նրանցից աղջիկ առնողը կնզովվի: Նաև որոշում են՝ Իսրայելի ո՛ր քաղաքի բնակիչները չմասնակցեն պատժին, ևս պատժի արժանանան, և սույն վճիռը երդմամբ հաստատելով՝ քառասուն հազար մարդու հանձնարարում են պաշար պատրաստել:

Սակայն այսպիսի մի մեծ գործի համար գլխավոր հրամանատարի կարիք ունենալու պատճառով հարցնում են Աստծուն, և Նա էլ Հուդայի ցեղապետին է առաջնորդ ընտրում: Երբ պատերազմը սկսվում է, իսրայելացիներից երկու հազար մարդ է մահանում: Սրանք, անտարակույս, հույս են ունենում Բենիամինի ցեղին հաղթելու, ուստի երբ ձախողվում են, մինչ երեկո սրտակոտոր նստում և արտասվում են իրենց վիճակի համար:

Թեև նորից պատերազմելու համար Աստծուն հարցնում են և պատերազմում, սակայն այս անգամ էլ ութ հազար մարդ է կոտորվում: Այն ժամանակ նորից արտասվելով ծոմ են պահում և խորանի առջև փրկության համար կոտրված սրտով ողջակեզներ մատուցում[25]:

Խրա՛տ ընդունիր, ի՛նչ զարմանալի բան. երբ նրանք Աստծու հրամանով են պատերազմում, կոտորվում են: Բնավ մի՛ զարմացիր, որ նրանք հավաքվել էին՝ որպես դատախազներ գաբաացիներին դատելու, սակայն նրանցից առավել պատժի արժանի լինելով՝ կոտորվում են:

Որովհետև երբ շատերը կուռքեր են երկրպագում, ոչ մեկը չի կամենում նրանց ուղղվելու համար դատախազ լինել: Սակայն կուռքեր պաշտելը Աստծուն ուրանալ է նշանակում և ամեն մի մեղքից առավել ծանր է: Օրինակ՝ վերոհիշյալ Միքան, որը Եփրեմի ցեղից էր, և Դանի ամբողջ ցեղը և այդ կուռքին քահանա կարգված ղևտացին որպես կռապաշտներ ծանրորեն մեղանչել էին Աստծու դեմ:

Եվ դարձյալ, նրանք, իրենց բազմության վրա հույս դնելով, հպարտանում են, և բենիամինցիներին անպատճառ հաղթելու հույս փայփայում: Դրանից բացի՝ բոլորովին անորոշ էր՝

[25] Բոլոր իսրայելացիները, ամբողջ ժողովուրդը վեր կացան եկան Բեթել, նստեցին լաց եղան Տիրոջ առաջ, ծոմ պահեցին այդ օրը և փրկության ողջակեզներ մատուցեցին Տիրոջ առաջ (*Դատ. 2:26*):

ինչպիսին կլինի ճակատամարտի վախճանը, և նրանք առանց գործը հանգամանալից քննելու, բարկությամբ երդվելով, իրենք իրենց են պարտավորեցնում: Մանավանդ պատերազմելու վճիռ կայացնելուց հետո նոր միայն Աստծուն հարցնում են, թե ո՛վ լինի զորավարը կամ զորահրամանատարը, և դրա պատճառով Աստված նրանց չի օգնում, որպեսզի իրենց չափը ճանաչելով՝ խրատվեն և ամբողջ սրտով առ Աստված դառնան:

Իրապես, երբ նրանք ուղղում են իրենց ապրելակերպը, միայն Աստծու զորությանն ապավինում, արտասվելով ու ծոմապահությամբ պատարագ մատուցում, հաջորդ օրն իսկ մի նշանակալից հաղթանակով Բենիամինի ցեղից քսանհինգ հազար մարդ կոտորելուց բացի՝ նրանց քաղաքներն էլ են կործանում, և՛ մարդկանց, և՛ անասուններին՝ բոլորին, առհասարակ կոտորում: Միայն վեց հարյուր մարդ, փախչելով անապատ, ապաստան է գտնում Ռեմոնի ժայռ կոչվող վայրում և ընդհանուր կոտորածից ազատվում:

Թեպետ այս անգամ, ըստ նպատակի և բաղձանքի, նրանց վրեժխնդրության կիրքը կատարելապես հագեցնում է, սակայն քանի որ նրանք Իսրայելի ժողովրդի մի մասն էին, դրա պատճառով մյուս ցեղերը հետագայում սրտացավորեն զղջում են: Քանի որ նրանք նաև երդվել էին, որ Բենիամինի ցեղին աղջիկ չտան, սակայն այդ ցեղից փախուստով վեց հարյուր տղամարդու ազատված լինելը հաշվի առնելով՝մտածում են, որ եթե նրանց աղջիկ տան, իրենց երդմանը դեմ գնալով՝ պիտի մեղանչեն, իսկ եթե նրանց աղջիկ չտան, ապա նրանք չեն ամուսնանա, և Իսրայելից մի ցեղ կկորչի, իսկ եթե կռապաշտներից աղջիկ առնեն, ապա բացահայտորեն օրենքին հակառակ կգործեն, ուստի մեծապես մտատանջվում են:

Բայց նաև երդվել էին, որ իսրայելացի լինելով՝ որ քաղաքի բնակիչները պատերազմին չմասնակցեն, պիտի պատժի

արժանի համարվեն: Հաբիս քաղաքից ոչ մեկը պատերազմին չի մասնակցում. տասներկու հազար ընտիր զորք են ուղարկում այդ քաղաք, որոնց բնակիչներին՝ առհասարակ մեծ թե փոքր, կոտորում են՝ բացի կույս աղջիկներից, որոնց ընդհանուր թիվը միայն այդ քաղաքում չորս հարյուր էր:

Ապա նրանք միասնական որոշմամբ լուր են ուղարկում անապատում ապաստանած վեց հարյուր բենիամինցիներին, որոնցից չորս հարյուրին կնության են տալիս Հաբիսի չորս հարյուր կույս աղջիկներին, իսկ մնացած երկու հարյուրին հարսնացու գտնելու միասնական որոշմամբ պատվիրում են, որ թաքնվեն Սելովի այգիներում, և երբ Ձատկին աղջիկներն ըստ իրենց սովորության այնտեղ պարեն, ամեն մեկը, իսկույն մի աղջիկ բռնելով, իրեն կին վերցնի, և ոչ ոք նրանց չի արգելի:

Արդարև, գործը վերոհիշյալ ձևով կարգադրելով՝ հիշյալ վեց հարյուր մարդով Բենիամինի ցեղը օրըստօրե բազմանում է, և թեպետ Իսրայելի տասներկու ցեղերի թիվը չի պակասում, սակայն չար և անզգամ մարդկանց՝ արդարությանը հակառակելու անխոհեմ վարքի պատճառով բազում մարդկանց կորստյան և քաղաքներ ավերելու պատճառ է լինում:

Հարց է: **Հիշյալ դեպքերից հետո իսրայելացիներն ուղղվո՞ւմ են:**

Պատասխան: Ո՛չ, նրանք չեն ուղղվում, քանի որ Աստծուն ուրանալով՝ *բահաղ* անունը կրող կուռքն են պաշտում: Սա է պատճառը, որ Աստված բարկանում է և որպես պատիժ՝ ասորիների Քուսարսաթեմ թագավորի ձեռքով ութ տարի չարչարում նրանց: Ժողովուրդը, չկարողանալով հանդուրժել նրա բռնությունները, դիմում է Աստծում և իր փրկության համար սկսում աղոթել: Աստված Գոթոնիել անունով մի մարդու միջոցով կոտորում է թշնամուն և ազատում նրանց:

Հիշյալ անձը քառասուն տարի դատավարություն է անում, և թեպետ ժողովուրդը հանգիստ էր, սակայն նրա մահից հետո իսրայելացիները նորից օրենքին հակառակ են ընթանում, ուստի մատնվում են մովաբացիների թագավոր Եգղոմի ձեռքը, որը տասնութ տարի նրանց նեղելուց հետո Բենիամինի ցեղից Ավովդ անունով մի անձի շնորհիվ և ուշադրության արժանի հետևյալ եղանակով փրկում է նրանց, երբ վերջիններս զղջալով աղոթում են Աստծուն:

Քանի որ իսրայելացիները Եգղոմի իշխանության ներքո էին, Ավովդի միջոցով ընծա են ուղարկում թագավորին: Ավովդը, որը քաջ և միանգամայն խոհեմ անձնավորություն էր, մտածում է մի հնարքով սպանել Եգղոմին: Նա ոչ մեկին չի հայտնում իր մտքերը, այլ թզաչափ երկարության մի երկսայրի սուսեր է պատրաստում՝ պահելով հանդերձի տակ, և փախչելու ճանապարհն էլ է գտնում, երբ ընծան մատուցելու ընթացքում զննում է նրա բնակարանի ելումուտը:

Ապա գնում է Գաղգաղա, որտեղ մովաբացիների կուռքերն էին: Վերադարձին իբր թե կուռքից մի նոր պատգամ հաղորդելու նպատակով, որը, թագավորից բացի, մնացածի համար գաղտնիք էր, թագավորին տեսնելու ցանկություն է հայտնում: Վերջինս ստիպված է լինում թիկնապահներին հեռացնելու, և քանի որ դանդաղկոտ մարդ էր, Ավովդը մոտենալով հանում է թաքցրած սուսերը և մի այնպիսի ուժգնությամբ խրում նրա կողը, որ անկարող է լինում երախակալը կողից հանելու: Երբ թագավորը, ձայն չհանելով, մեռնում է, Ավովդը, դուռը փակելով, արդեն որոշած ձևով անմիջապես փախչում է:

Իսկ Եգղոմի պալատականները, դուռը փակ տեսնելով, անշուշտ կարծում են, որ թագավորը կարևոր և գաղտնի գործ ունի, սակայն երբ նա հապաղում է, թեև դուռը բացելով՝ պարզում են եղելությունը, սակայն Ավովդի հետևից այլևս չեն

հասնում: Այդպիսով, նա ապահով իսրայելացիների երկիր է հասնում՝ միանգամից պատերազմի փող հնչեցնելով[26]:

Իսրայելացիները, հասկանալով խնդիրը, շտապ հավաքվում են: Նրանց գլուխ անցնելով՝ Ավովդը պաշարում է թշնամուն և, փախուստի հնարավորություն չտալով, տասը հազար պատերազմող զորք է կոտորում և հաղթում մովաբացիներին: Արդարև, այս դեպքից հետո իսրայելացիները ութսուն տարի հանգիստ և անվրդով են ապրում: Ավովդը նույնպես մինչև կյանքի վերջ դատավարություն է անում Իսրայելում:

Ապա Սամեգար անունով մի հողագործ, որն անչափ քաջ և ճարպիկ մարդ էր, վեց հարյուր կռապաշտների սպանելով՝ նրանց կովերն և ոչխարներն ավար է առնում, քանի որ այն ժամանակ թշնամիները նորից սկսել էին նեղել իսրայելացիներին: Թեև Սամեգարը կարճ ժամանակահատված է դատավարություն անում, սակայն անզոր է լինում բոլոր թշնամիներին նվաճելու, մանավանդ իսրայելացիները նորից Աստծու օրենքին հակառակ վարքով Նրա բարկությունն էին շարժել, ուստի քանանացիների Հաբին թագավորը սկսում է չարչարել և տառապեցնել նրանց, որպեսզի խրատվեն[27]:

Սույն հզոր թագավորը, որը ինը հարյուր պատերազմական երկաթե կառքեր է ունենում, քսան տարի սաստիկ չարչարում է իսրայելացիներին[28], որոնք, այլևս չկարողանալով հանդուրժել այդ դառնաղետ և անտանելի տառապանքները, աղաղակում են առ Աստված, և քանի որ Սամեգար

---

[26] Իսրայելացիները աղաղակ բարձրացրին Տիրոջ առաջ (*Դատ. 3:15*):

[27] Իսրայելացիները շարունակեցին չարիք գործել Տիրոջ առաջ (*Դատ. 4:1*):

[28] Մինչև որ մեջտեղ ելավ Դեբորան.... Իսրայելի մայրը (*Դատ. 5:7*):

դատավորը մեռել էր, Դեբովրա անունով մի որբևայրի կնոջ ձեռքով Աստված փրկում է իսրայելացիներին:

Որովհետև Աստված նրան մարգարեական շնորհ էր պարգևել, ապա արդարությամբ լուծում էր ժողովրդի խնդիրները: Նա, իբրև գորովագութ մայր, բոլորին հավասար աչքով էր նայում, և այդ է պատճառը, որ *իսրայելացիների մայր* է կոչվում: Թեև վերջինս ձեռնամուխ է լինում ժողովրդի փրկության գործին, սակայն Դեբովրան կանչում է Նեփթաղիմի ցեղից Բարակ անունով շատ քաջասիրտ մի մարդու, որին էլ պատվիրում է Թաբոր լեռ գնալ, Նեփթաղիմի և Զաբուղոնի ցեղերից տասը հազար մարդ վերցնել և հարձակվել թշնամու վրա:

Բարակը հնազանդությամբ հանձն է առնում կատարելու իրեն առաջարկված գործը, սակայն քանի որ Դեբովրան մարգարե էր, խնդրում է, որ նա էլ իր հետ գնա, որպեսզի հայտնի հաղթանակի ժամանակը: Դեբովրան, ընդունելով նրա խնդրանքը, համաձայնում է հետը գնալ՝ պատասխանելով. «Ես կգամ քեզ հետ, սակայն իմացի՛ր, որ հաղթանակը կնոջ ձեռքով պիտի լինի»: Վերոհիշյալ Հաբին թագավորը, լսելով սրանց պատրաստության մասին, իր Սիսարա զորավարին է հայտնում, որը թեև ինը հարյուր պատերազմական կառքերով և բազմաքանակ զորքով Բարակի վրա է հարձակվում, սակայն երբ վերջինս Թաբոր լեռից իջնում է իր տասը հազար մարտիկներով, իսկույն Սիսարայի զորքերը համակվում են մեծ վախով, շվարում, կառքերը սկսում են միմյանց խանգարել, որի հետևանքով մի սոսկալի խառնաշփոթ է տիրում:

Այն ժամանակ Բարակի քաջալերված զորքերը կոտորում են բոլորին. թշնամու զորքից մի հոգի անգամ չի կարողանում ազատվել: Սիսարան երկյուղից հետիոտն փախչում է, և ճանապարհին Կինեցի Քաբեր անունով մի մարդու վրանին հասնում: Սրա կինը՝ Հայելը, նրան դիմավորելով, պատվով

ներս է ընդունում և իսրայելացիներից աննկատ պահելու համար նրան վրանում թաքցնում, մինչև մտքինը կատարի:

Քանի որ հիշյալ Քաբերը Մովսեսի աներոջ սերնդից էր, իսրայելացիներին սիրով էր կապված: Հաբին թագավորն էլ, իմանալով, որ նա մի այլ ցեղից է, չարիք չէր անում նրան, և Սիսարան, առանց թշնամություն ակնկալելու, վստահորեն նրա վրան է մտնում: Անչափ հոգնած և ծարավ՝ ջուր է խնդրում, իսկ Հայելը, կաթ հյուրասիրելով, նրան թաքցնում է:

Հիրավի, ապահով վայրում լինելու գաղափարը թեև ուրախացնում է Սիսարային, սակայն երկյուղն այնքան սաստիկ էր, որ կնոջը պատվիրում է վրանի դռան մոտ կանգնել և եկողին պատասխանել, որ ներսում մարդ չկա, իսկ ինքը քնում է: Այն ժամանակ Հայելը, վրանի ցցերից մեկը վերցնելով, ինչպես նաև մի դարբնի մուրճ առնելով, զգուշորեն մոտենում է նրան և բերանից այդ ցցով գետնին գամում, և սա այսպիսի թշվառ ձևով մահանում է:

Բարակը, որը Սիսարային հետապնդելու նպատակով նրա հետևից էր ընկել, քիչ անց այնտեղ է հասնում: Հայելը, ընդառաջ գնալով, պատմում է եղելությունը, նա էլ, Սիսարային մահացած տեսնելով, ուրախությամբ փառք է տալիս Աստծուն և շնորհակալ լինում Հայելին:

Հասկացի՛ր. ինչպես Դեբովրան էր նախապես գուշակել, որ հաղթանակը մի կնոջ ձեռքով է լինելու, արդարև, Սիսարան մահանում է Հայելի ձեռքով, և Աստծու ողորմությամբ իսրայելացիները ազատվում են մի անգութ թշնամուց: Սրա առիթով Դեբովրան և Բարակն Աստծուն գոհություն են մատուցում՝ Իսրայելին արած բարերարությունների, Իսրայելի վիճակի և Սիսարայի մահվան ձևի մասին պատմական և օրհնաբանական սքանչելի ու գեղեցիկ մի երգ հորինելով, այսպես անմահացնելով այդ նշանավոր դեպքերը: Ահա այս հաղթանակից

հետո քանանացիները տկարանում են, իսրայելացիները՝ քառասուն տարի հանգիստ և ազատ մնում նրանց հարստահարիչ և կեղեքիչ իշխանությունից: Դեբովրան և Բարակն էլ են մահանում՝ փառավորվելով իրենց ազգականներից:

Հարց Ը: **Ինչպիսի՞ն էր իսրայելացիների վիճակը Դեբովրայի մահվանից հետո:**

Պատասխան: Անչափ թշվառ: Որովհետև թշնամու հարստահարությունից ազատվելուց հետո սկսում են հանգիստ կյանք վարել և նորից Աստծու օրենքներին հակառակ կենցաղ որդեգրում: Աստված բարկանում է և մադիամացիների ձեռքով նրանց դառնագույնս չարչարում[29]:

Այստեղ հիշատակված Մադիամը Եգիպտոսի հարևանությամբ գտնվող Մադիամը չէ, ուր ժամանակին փախչում է Մովսեսը՝ փարավոնի ձեռքից ազատվելու համար, այլ Հորդանանի մյուս կողմում գտնվող ուրիշ վայր է, որի մասին հիշատակվել է քսանչորսերորդ հարցի մեջ, և որտեղ էլ Մովսեսը կոտորում է մադիամացիներին: Ճշմարիտ է՝ Մովսեսի ժամանակ նրանք շատ են նվազում և տկարանում, սակայն որոշ ժամանակ հետո իրենց նախկին զորությունը վերագտնելով, ամաղեկացիների և արևելյան կողմում բնակվող այլ ազգերի հետ միավորվելով՝ այնքան են նեղում իսրայելացիներին, որ սրանք հարկադրված են լինում իրենց անասունները պաշտպանելու համար լեռնային քարայրերում գոմեր պատրաստելու:

Հունձքի ժամանակ թշնամու անհամար ուղտերն ու անասունները մորեխի պես սփռվում են իսրայելացիների արտերում, ամբողջությամբ ապականում դրանք, իսկ աշնանը՝

---

[29] Տերը նրանց յոթ տարի մադիամացիների ձեռքը մատնեց (*Դատ. 6:1*):

տերերի հետ վերադառնում իրենց տները: Երբ իսրայելացիները տքնելով նորից ցանում են, արդյունքը դեռ չհավաքած՝ թշնամին, դարձյալ գալով, ավերում է, և այսպիսով, իսրայելացիները հետին աստիճանի աղքատության են մատնվում[30]:

Դրա պատճառով յոթ տարի իրենց բերքն ու բարիքները ամբարել չեն կարողանում, և ամբողջ հարստությունը վատնելուց բացի՝ նաև սարսափելի սովի են մատնվում[31]: Ահա այս չքավորության և խեղճության մեջ վերջապես իրենց չափը հասկանալով՝ սկսում են աղաղակել Տիրոջը և փրկություն հայցել իրենց անտանելի վիճակից[32]:

Ստուգությա՛մբ մտապահիր. իսրայելացիները նեղության ժամանակ շրջվում են առ Աստված և աղաչում, իսկ հանգիստ և բարօրություն վայելելուն պես մոռանում են իրենց Փրկիչ և բարերար Աստծուն, Որը, սակայն, Իր անսահման ողորմությամբ մարգարե է ուղարկում նրանց մոտ, որպեսզի այդ ապերախտ ժողովրդին հիշեցնի Աստծու սերն ու բարերարությունները, ինչպես նաև ցույց է տալիս ժողովրդի օրինազանց վարքը և նրանց հորդորում՝ ընդունելու հանցանքը, ամբողջ սրտով գիտակցելու և անկեղծությամբ դառնալու առ իրենց Տեր Աստված[33]:

Այո՛, թող չմտածեն, որ թշնամին կարող է որևէ վնաս կամ չարիք պատճառել Իսրայելին, երբե՛ք, այլ բոլոր այդ չարիքները միայն Աստծու թույլտվությամբ և կամքով են գալիս: Ուրեմն, քանի որ ժողովուրդը, իր չափը ճանաչելով, Աստծու

---

[30] Իսրայելը մադիամացիների պատճառով շատ աղքատացավ (*Դատ. 6:6*):

[31] Դատավորների կառավարման օրերին սով եղավ երկրում (*Հռութ 1:1*):

[32] Իսրայելացիները մադիամացիների պատճառով աղաղակեցին Տիրոջը (*Դատ. 6:7*):

[33] Տերն իսրայելացիների մոտ մարգարե ուղարկեց (*Դատ. 6:8*):

գթությանն է ապավինում, Նա էլ կամենում է անողորմ թշնամու ձեռքից փրկել իր ժողովրդին, ուստի Մանասեի ցեղից Գեդեոն անունով մարդու մոտ մի պատգամաբեր հրեշտակ է ուղարկում և հայտնում, որ նրա ձեռքով պիտի փրկի իսրայելացիներին:

Քանի որ մադիամացիները ամեն տարի հունձքի ժամանակ փչացնում էին իսրայելացիների աշխատանքի և քրտինքի արդյունքը, ուստի մինչև նրանց գալը Գեդեոնը հոր սեփական արտերը հնձելով և ցորենը կալսելով էր զբաղվում, որպեսզի ժամանակից շուտ հավաքի: Մինչ նա դեռ կալում էր, հրեշտակը, մարդկային կերպարանքով երևալով, ասում է. «Տերը Իր հզոր զորությամբ քեզ հետ է»[34]: Գեդեոնը պատասխանում է. «Եթե Տերը մեզ հետ է, ուրեմն այս բոլոր չարիքներն ինչո՞ւ են պատահում, ո՞ւր են այն հրաշքները, որոնց մասին մեր հայրերն էին մեզ պատմում, ինչո՞ւ է մերժում մեզ»:

Արդարև, Գեդեոնի սիրտը մաքուր և անկեղծ է. նա, Աստծու օրենքներին հնազանդ մարդ լինելով, համարում է, որ Աստված հրաժարվել է իրենցից, քանի որ չարաչար հարստահարվում են կռապաշտներից, անողորմ զրկանքների և բռնությունների ենթարկվում: Սակայն ճշմարտությունն այն էր, որ ոչ թե Աստված էր մերժել Իսրայելին, այլ ընդհակառակը, Իսրայելը, կուռքեր պաշտելով, ուրացել էր իր Տեր Աստծուն:

Կարող ենք նաև ասել, որ ոչ թե չարիքներն են գալիս և գտնում իսրայելացիներին, այլ իսրայելացիներն իրենց չար ապրելակերպով գնում և չարիքի են հանդիպում: Ահա սա է իրողությունը: Մանավանդ Աստված իսրայելացիներին հրաշքներով ազատում է Եգիպտոսից, և նույն Աստվածը

---

[34] Տիրոջ հրեշտակը երևաց նրան և ասաց. «Տերը քեզ հետ է, ով զորավոր» (*Դատ. 6:12*):

պատժում է օրինազանցներին: Քանի որ ինչպես Իր ողորմությամբ փրկում է, այդպես էլ Իր արդարությամբ պատժում:

Գեդեոնի այդ խոսքերը նրա կատարյալ հավատքի և Աստծու զորությանն ունեցած հզոր հույսի ապացույցն են, ուստի հրեշտակը նորից պատասխանում է. «Գնա՛, այդ զորությամբ պիտի փրկես իսրայելացիներին»[35]:

Սակայն նայելով Մանասեի ցեղի մեծ և ազդեցիկ գերդաստաններին և նկատելով իր հոր գերդաստանի փոքրությունն ու ցածրությունը, մտաբերելով իր ավագ եղբայրներին, մանավանդ իրեն անարժան համարելով ազգի ու ժողովրդի պետ և գլուխ լինելու՝ Գեդեոնը հրեշտակին հարցնում է, թե ինչպես պիտի ազատի իսրայելացիներին, և ի պատասխան՝ հրեշտակն ասում է. «Տերը քեզ հետ է»[36]:

Հրեշտակի սույն քաջալերող խոսքից Գեդեոնը հանձն է առնում իրեն առաջարկվող պաշտոնը: Սակայն հնարավոր համարելով, որ ժողովուրդն իրեն չհնազանդվի, ուստի նշան է խնդրում: Նաև աղաչում է իր խոսակցին, որ բարեհաճի սպասել մինչև ինքը կերակուր կպատրաստի հյուրի համար, քանի որ դեռ չգիտեր, որ հրեշտակ է:

Երբ գնում և բաղարջ հաց ու արգանակով միս է բերում, հրեշտակի ցուցումով բաղարջ հացը և միսը մի քարի դնելով՝ մսի ջուրը վրան է լցնում: Երբ հրեշտակն իր ձեռքի գավազանով դիպչում է մսին և բաղարջին, Աստծու կամեցողությամբ քարից իսկույն կրակ է ելնում՝ այրելով կերակուրը, և հրեշտակը Գեդեոնի աչքից աներևութանում է:

Գեդեոնը սույն նշանը տեսնելուն պես հասկանում է, որ իր հյուրը հրեշտակ է և վախենում է, որ կմեռնի, քանի որ

---

[35] «Գնա՛ քո այդ զորությամբ և փրկի՛ր» (*Դատ. 6:14*):

[36] Տիրոջ հրեշտակը նրան ասաց. «Տերը քեզ հետ է» (*Դատ. 6:16*):

հրեշտակը այնտեղ աներևութապես ներկա էր և քաջալերում էր նրան, որ չերկնչի՝ հայտնելով, որ չի մեռնի, այլ իսրայելացիներին փրկելու համար պատրաստ լինի՝ Աստծու կամքը կատարելու: Այն ժամանակ Գեդեոնը, քաջալերվելով հրեշտակի սույն գոտեպնդող խոսքերից, ճշմարիտ Աստծու անվան պատվին այնտեղ սեղան է կանգնեցնում:

Սակայն նրա հայրը՝ Հովասը, *բահաղ* կուռքի անունով էր սեղան պատրաստել և շրջակայքն էլ անտառապատել: Աստված այդ գիշերը Գեդեոնին հրամայում է նախ այդ սեղանը կործանել և անտառն էլ ամբողջովին ոչնչացնելով՝ Աստծու համար սեղան կանգնեցնել, այլ նաև հոր պարարտ եզը և մի յոթ տարեկան զվարակ այդ սեղանի վրա զոհ մատուցել:

Եվ քանի որ նրա հայրը և քաղաքի բնակիչները պաշտում էին *բահաղ* կուռքը, Գեդեոնը երկյուղելով գիշերը գաղտնի իր ծառաներից տասներեքի օգնությամբ կատարում է Աստծու հրամանը: Առավոտյան երբ բնակիչները տեսնում են, հասկանում են, որ դա Գեդեոնն է արել, քանի որ նա, իմանալով, որ կուռքերն աստվածներ չեն, հենց սկզբից չէր ցանկանում անշունչ իրերին երկրպագություն մատուցել:

Այդ է պատճառը, որ նրա հորից պահանջում են Գեդեոնին իրենց ձեռքը հանձնել, որպեսզի սպանեն նրան: Սակայն հայրը, քաղաքի ազդեցիկ մարդկանցից լինելով, պատասխանում է. «Դո՞ւք պետք է բահաղի դատաստանը տեսնեք, եթե աստված է, թող մինչև առավոտ նրան վնասողը մեռնի, թող բահաղն իր սեղանը կործանողից վրեժ լուծի»: Այս պատասխանով հանդարտեցնելով բնակիչներին՝ Գեդեոնի անունը Հերոբոաղ է դնում, որ նշանակում է «բահաղին պատժող»:

Այդ ժամանակ թշնամիները նույնպես գալիս ու բնակվում են նրա մոտ՝ Հեզրայելի հովիտներում: Գեդեոնն ի

վերուստ՝ Աստծուց զորություն է ընդունում[37], և երբ հնչում է պատերազմի փողը, Աբիեզերի սերունդը, որից սերում էր նաև Գեդեոնը, հոժարությամբ և գովելի եռանդով իսկույն նրա շուրջն է հավաքվում:

Քանի որ թշնամու բանակը Ասերի, Զաբուղոնի և Նեփթաղիմի ցեղերի երկրների մերձակայքում էր, Գեդեոնը, նրանց մոտ մարդ ուղարկելով, հրավիրում է՝ պատերազմին մասնակցելու, և իսկույն երեսուն հազար զորք է հավաքվում: Գեդեոնը, սրանց գլուխ անցնելով, Աստծուց վերստին նշան է խնդրում՝ ասելով. «Ահա կալի վրա գեղմ կդնեմ, եթե միայն նրա վրա ցող իջնի, և մնացած ամեն ինչ չոր մնա, կիմանամ, որ իսրայելացիներն իմ ձեռքով պիտի փրկվեն», և գեղմը կալի վրա է դնում:

Եվ ահա այդ գիշեր Աստծու կամեցողությամբ անձրևի նման ցող է իջնում գեղմի վրա, և շուրջն ամեն ինչ չոր է մնում, առավոտյան գեղմը քամելով՝ մի ամբողջ կոնք ջուր է դուրս գալիս, հաջորդ օրը կրկին չորացած գեղմը կալի վրա դնելով՝ առավոտյան տեսնում է, որ դրա շուրջը բոլորը ցող է իջել և թրջել, ու միայն գեղմն է չոր մնացել. եղել էր այնպես, ինչպես Գեդեոնը խոնարհաբար խնդրել էր Աստծուց:

Պետք է հասկանալ, որ Գեդեոնը ոչ թե թերահավատության պատճառով է նշան խնդրում, այլ որպեսզի ժողովուրդն իմանա, որ իսրայելացիները միայն Աստծու զորությամբ են փրկվելու: Այդ է պատճառը, որ Աստված Գեդեոնին ասում է՝ զորքը շատ է, երկչոտները թող հետ դառնան, որպեսզի ժողովուրդը չասի. «Իմ զորությամբ փրկվեցի»[38]: Զորքի մի մասը հետ է դառնում. մնում է քսաներկու հազար մարդ, սակայն

---

[37] Տիրոջ հոգին զորացրեց Գեդեոնին (*Դատ. 6:34*):

[38] Տերն ասաց Գեդեոնին. «Քեզ հետ եղող զորքը շատ է…. չլինի թե Իսրայելն իմ առաջ պարծենա և ասի, թե՝ «Իմ ձեռքը փրկեց ինձ» (*Դատ. 7:2*):

Աստված նորից է ասում. «Այդքան զորքն ավելորդ է: Նրանց գետի եզե՛րքը տար: Ովքեր, ջուրն իրենց ափի մեջ վերցնելով, շան նման լեզվով կխմեն, նրանց առանձնացրո՛ւ մյուսներից»:

Գեդեոնը, սույն հրամանը կատարելով, տեսնում է, որ ափով ջուր խմողների թիվը երեք հարյուրի է հասնում, այն ժամանակ Աստված հայտնում է. «Երեք հարյուր մարդկանց ձեռքով պիտի փրկեմ իսրայելացիներին[39], թող մնացածն իրենց տները վերադառնան»: Ուստի բացի այդ երեք հարյուրից՝ ոչ մեկը չի մնում Գեդեոնի հետ:

Թշնամին անչափ մարդաշատ էր, և Գեդեոնը չէր կարող չվախենալ. այն գիշեր Աստված նրան հրամայում է գնալ մադիամացիների բնակավայրերը և հասկանալ, թե նրանք ինչ են խոսում, որից էլ պիտի քաջալերվեր: Նա էլ, իր ծառայի հետ մի կերպ թշնամու մեջ մտնելով, լսում է, որ զինվորներից մեկն իր տեսած երազն է պատմում ընկերոջը:

Երազում գարեհացի մի նկանակ գլորվելով գալիս դիպչում է մադիամացիների վրանին և կործանում այն: Ընկերը պատասխանում է, որ դա Հովասի որդի Գեդեոնն է:Այս խոսքը լսելով՝ Գեդեոնն ինքը իսկույն գետնամած խոնարհվում է, զոհ և ուրախ սրտով երկրպագում Աստծուն: Երբ վերադառնում է, հիշյալ երեք հարյուր զինվորներին տալիս է մեկական եղջերափող, և հրամայելով ջահերը սափորների մեջ թաքցնել՝ պատվիրում է հետևել իր օրինակին. ինչ որ ինքն անի, բոլորն էլ իր նման անեն:

Դու Աստծու ողորմությա՛նն ու զորությա՛նը նայիր. Գեդեոնը, գիշերը թշնամու վրա հարձակվելով, հարյուրական մարդ երեք կողմի է բաժանում, որոնք միահամուռ բարձրաձայն աղաղակում են. «Աստծու և Գեդեոնի սուրը»:

---

[39] Տերն ասաց Գեդեոնին. «Այն երեք հարյուր մարդկանցով, որոնք լակեցին ջուրը, ձեզ կփրկեմ» (*Դատ. 7:7*):

Մադիամացիները, վստահ իրենց ուժերին, անհոգությամբ խոր քուն էին մտել, երբ հանկարծ աղմկալից ձայներից երկյուղով արթնանում են: Գեդեոնի հրամանով երեք հարյուր մարդ, սափորներն իրար հարվածելով, կոտրում են այնպես, որ իսկույն հայտնվում են ջահերը, և սկսում են փող հնչեցնել, և բոլորը միահամուռ գոչում են. «Աստծու և Գեդեոնի սուրը», որից թշնամին շվարում է:

Մանավանդ երբ ջահերի լույսը լուսավորում է շրջակայքը, թշնամին ծառերն ու քարերն էլ է մարդկանց տեղ դնում՝ կարծելով, որ իրենց բանակն անհամար զորքով է շրջապատված: Մեծ խառնաշփոթությամբ և վայրկյան առաջ փախչելու բաղձանքով՝ սկսում են իրար կոտորել, իսկ մյուս կողմից Գեդեոնը, երեք հայրուր զորքով նրանց հետևից ընկնելով, ահավոր ջարդ է սկսում:

Գեդեոնի՝ հետ ուղարկած զորքերն էլ, լսելով թշնամու փախուստի մասին, Եփրեմի ցեղի մարդկանց հետ հետապնդում են փախստականներին, և թշնամուց քսանհինգ հազար մարդ կոտորելուց բացի՝ նրանց մեծ իշխանավորներից երկուսին՝ Օրեբին և Զեբին, սպանելով՝ գլուխները կտրում և Գեդեոնին են բերում:

Թեև Աստծու օգնությամբ իսրայելացիները մեծ հաղթանակ են տանում և շատ ուրախանում, սակայն Եփրեմի ցեղի մարդիկ Գեդեոնին մեղադրում են, որ իրենց պատերազմելու չի կանչել, և սկսում են ապստամբական խոսքեր ասել: Սակայն սա ոչ թե հայրենասիրական զգացումներից էր, այլ ավելի թալանելու և կողոպտելու ընչասիրական փափագից:

Գեդեոնը իմաստուն և խոնարհամիտ անձնավորություն էր, և որպեսզի ժողովրդի մեջ անհամաձայնություն և գժտություն չծագեն, մեղմ և պատվաբեր խոսքերով շահում է նրանց սիրտը՝ ասելով. «Մադիամացիների Օրեբ և Զեբ իշխաններին դուք եք սպանել. ձեր ճռաքաղը իմ այգեկութից

լավը եղավ»[40]: Այս խոսքերը մեղմում են ապստամբների բարկությունը, և նրանք այլևս չեն պատասխանում:

Սակայն Մադիամի երկու թագավորները՝ Զեբեեն և Սալմանան, տասնհինգ հազար զորքով Հորդանանի մյուս կողմն են փախչում: Գեդեոնը ցանկանում է նրանց նույնպես բռնել, բայց ուտելիքի պաշարը սպառվել էր, և այս է պատճառը, որ գալիս է Սոկքովթ և պաշար խնդրում, որը տեղի մեծամեծները ոչ միայն մերժում են տալ, այլև «մի՞թե Զեբեեն և Սալմանան քո ձեռքում են» ասելով՝ ծաղրում նրան: Գեդեոնը բարկացած պատասխանում է. «Եթե Աստված այդ թագավորներին իմ ձեռքը մատնի, այն ժամանակ անապատի փշերով ձեզ պիտի սպանեմ»:

Փանուելի բնակիչները նույնպես մերժում են հաց տալ Գեդեոնի քաղցած զորքին: Գեդեոնը նրանց սպառնում է, որ եթե ողջ վերադառնա, պիտի կործանի Փանուելի աշտարակը: Նա թեև գիտեր, որ իր զորքը խիստ հոգնած և անոթի է, բայց ապավինելով Աստծու օգնությանը՝ հարձակվում է թշնամու վրա և նրա բանակը ավերելով՝ բռնում մադիամացիների Զեբեե և Սալմանա թագավորներին:

Վերադարձի ճանապարհին Սոկքովթի բնակիչներից մի պատանու բռնելով՝ նրանից պարզում է քաղաքի մեծամեծների անունները և քաղաք մտնելով՝ նրանց ցույց է տալիս Զեբեեին և Սալմանային, հետո փշերով և տանջանքներով նրանցից յոթանասունյոթ մարդ սպանում և վերոհիշյալ Փանուելի աշտարակը կործանելով՝ քաղաքի երևելի մարդկանց չարաչար կոտորում:

Սակայն մի՛ համարիր, որ Գեդեոնը այս դեպքում անգթություն և անիրավություն է անում, քանի որ նրանք

---

[40] Նա նրանց ասաց. «Մի՞թե Եփրեմի ճռաքաղը Աբիեզերի խաղողաքաղից լավ չէ» (*Դատ. 8:2*):

իսրայելացիներ էին, և Գեդեոնն էլ Աստծու հրամանով իսրայելացիներին թշնամուց աշխատում էր փրկել, մանավանդ երբ նրա զորքը սաստիկ հոգնած և անոթի էր, և հաց չտալը մեծ հանցանք էր: Նրանք նաև, «մի՞թե Զեբեեն և Սալմանան ձեր ձեռքում են» ասելով, ծաղրում են Աստծու ընտրյալին:

Գեդեոնը անցյալում Թաբոր լեռան վրա իր եղբայրներին սպանած հիշյալ թագավորներին հարցնում է, թե արդյոք ուր են և ինչպիսի մարդիկ էին, նրանք պատասխանում են, որ կատարելապես նրա նման էին: Այս խոսքից հետո Գեդեոնը հայտնում է, որ իր եղբայրներն են եղել, որոնց եթե չսպանեին, իրենց կխնայեր, ապա իր որդուն հրամայում է սպանել նրանց, սակայն որդին, տակավին մանուկ լինելով, չի համարձակվում, ուստի ինքն իր ձեռքով է կյանքից զրկում այդ անխիղճ մարդկանց:

Գեդեոնի ձեռքով նվաճված այսպիսի մեծ հաղթանակը ժողովրդին դրդում է՝ նրան թագավոր դարձնելու ցանկություն հայտնելու, և թեև նրան խնդրում են, որ որդոց որդի իշխի իրենց, սակայն նա հրաժարվում է՝ պատասխանելով. «Թող Աստված իշխի ձեզ վրա»[41]: Եվ քանի որ Զաբեե և Սալմանա թագավորների ուղտերի պարանոցների օղակներից և զարդարանքներից բացի՝ ամեն ինչ զորքին էր շնորհել, խնդրում է, որ յուրաքանչյուրը հոժարակամ մեկական գինդ տա իրեն:

Արդարև, յուրաքանչյուրը մեկական գինդ տալուց բացի՝ հոժարակամ այլ զարդեր էլ են տալիս, որոնցից էլ Գեդեոնը, քահանայական *վակաս* պատրաստելով, պահում է, որպեսզի Աստծու սույն բարերարության հիշատակը չմոռացվի, սակայն, դժբախտաբար, Գեդեոնի մահվանից հետո ժողովուրդը հիշյալ եփուտն օգտագործում է կուռքեր պաշտելու համար:

---

[41] Գեդեոնը նրանց ասաց. «Ես ձեզ վրա չեմ իշխի, և ոչ էլ իմ որդին կիշխի ձեզ վրա, Տե՛ր թող իշխի ձեզ վրա» (*Դատ. 8:23*):

Սույն հաղթանակից հետո իսրայելացիները քառասուն տարի զերծ են մնում թշնամու ճնշումներից: Գեդեոնը, բարվոք ապրելով, խոր ծերության հասակում մահանում է:

Օրինա՛կ վերցրու Գեդեոնի առաքինությունից. քանի որ չի կամենում թագավոր լինել իսրայելացիներին և ոչ էլ հարմար է գտնում, որ իր որդիներն իշխեն, այլ փափագում է, որ միայն Աստված թագավորի, որպեսզի իրենց հույսը միայն Աստծու զորության վրա դնեն և օրենքներին հնազանդվելով՝ զերծ մնան թշնամիներից:

Թեպետ Գեդեոնը խոնարհությամբ հրաժարվում է թագավոր լինելուց, սակայն նրա փառքը թագավորների փառքից շատ ավելի մեծ էր, քանի որ ինչքան մարդը փախչում է մեծությունից, այնքան նրա փառքը ավելի է բազմանում: Աշխարհիկ փառքը մարդու ստվերի նման է, որից եթե փախչես, քեզնից չի հեռանա, և եթե նրա հետևից վազես, երբեք չես կարող հասնել:

Նա, ով փառք է փնտրում, անարժան է փառքի, իսկ նա, ով արժանավոր է, փառքն ինքն է գտնում նրան: Ճշմարիտ փառքը փառքին հասնելը չէ, այլ ճշմարտապես դրան արժանի լինելը: Մարմնավոր փառքի տենչը հպարտություն է, իսկ հպարտությունը հիմարությունից է, ուրեմն ով իրեն մեծության և փառքի արժանի է համարում, հիմար է:

Իր վիճակից չգոհանալը և բարձր դիրք տենչալը ստորության նշան է, քանի որ եթե մեկը ստորին կարգում չլինի, բարձրանալու կարիք չի ունենա: Եթե փառք ես փնտրում, առաքինի՛ եղիր, քանի որ առաքինությունից մեծ փառք չկա մարդու համար: Մանավանդ հեզաբարո և խոնարհամիտ լինելով՝ Աստծու երկյուղը սրտիցդ մի՛ հանիր, որպեսզի Աստված քեզ հետ լինի, և ամեն կերպ փառավորվես[42]:

---

[42] «Ես ո՞ւմ եմ նայելու, եթե ոչ հեզերին ու խոնարհներին և նրանց, ովքեր դողում են իմ խոսքից» (*Ես. 66:2*):

Հարց Թ: **Գեդեոնի մահվանից հետո իսրայելացիները նորից կո՞ւռք են պաշտում:**

Պատասխան: Պաշտում են: Քանի որ նա, քառասուն տարի իշխելով, Աստծուն և Նրա սուրբ օրենքներին հնազանդ է լինում, ժողովուրդն էլ չար վարքագիծ չի ունենում և խաղաղությամբ ու հանգիստ ապրում է, սակայն Գեդեոնի մահվանից հետո նորից սկսում են կուռքեր պաշտել, որից էլ խաթարվում է նրանց հանգիստը[43]:

Թեպետ այս անգամ Աստված կռապաշտների ձեռքով նրանց չի պատժում, սակայն նույն այդ ապօրինի կյանքով իրենք իրենց են պատժում: Գեդեոնը, յոթանասուն որդիներից բացի, նաև Աբիմելեք անունով մի որդի ուներ, որը հարճից էր ծնվել և հեռացվել էր տնից, որպեսզի մյուս որդիների հետ հավասար ժառանգություն չունենա. սա հին օրենք էր. հարճի որդիները հոր անունով հիշվելու փոխարեն մոր անունով էին հիշվում:

Արդ, Աբիմելեքի մայրը, Սիկիմ քաղաքից լինելով, Գեդեոնի մահվանից հետո վերադառնում է այդ քաղաք և, մորն ազգակից բնակիչների միջոցով տեղի ժողովրդի սիրտը շահելով, ցանկանում է թագավոր դառնալ: Նրանք խոստանում են օգնել՝ հույս ունենալով, որ նրա շնորհիվ իրենց քաղաքի փառքը կավելանա, իսկ իրենք էլ պաշտոն, պատիվ և հարստություն ձեռք կբերեն, ուստի *բահաղ* կուռքի եկամուտից առատ դրամ են տալիս Աբիմելեքին:

Սակայն Աբիմելեքը գիտեր, որ քանի դեռ իր եղբայրները կենդանի են, ինքը չի կարող հանգիստ լինել: Ուստի այդ դրամով սրիկա և անխիղճ մարդկանց է վարձում և հանկարծ եղբայրների վրա հարձակվելով՝ բոլորին բռնում է.

---

[43] Երբ Գեդեոնը մեռավ, իսրայելացիները, նորից բահաղիմյաններին հետևելով, կուռքեր պաշտեցին (*Դատ. 8:33*):

վաթսունիննին էլ մի քարի վրա սպանում է, և միայն կրտսեր եղբորը՝ Հովաթամին է հաջողվում մի կերպ փախչել, իսկ ինքը, Սիկիմ վերադառնալով, բնակիչներից թագավոր է հռչակվում:

Այստեղ քա՛ջ գիտակցիր իսրայելացիների թշվառ վիճակը. Գեդեոնը, նրանց ազատելով թշնամուց, մեծ երախտագիտության էր արժանի, սակայն երբ Սիկիմի բնակիչների օգնությամբ Աբիմելեքը կոտորում է նրա որդիներին, իսրայելացիներից ոչ մեկը չի ցանկանում նախանձախնդրորեն պաշտպան և դատավոր կանգնել արդարությանը: Հովաթամը, չկարողանալով հանդուրժել այդպիսի անողորմ և վայրագ արարքը, բարձրանում է Գարիզի լեռն ու արտասվում: Բնակիչները հավաքվում են լեռան մոտ, որը քաղաքից հեռու չէր, և Հովաթամը, հիշեցնելով Գեդեոնի արած բարիքներն ու նրանց անգթությունը, մի առակով հայտնում է, որ Աբիմելեքին թագավոր դարձնելով՝ միմյանցով պիտի պատժվեն՝ ասելով հետևյալը. «Ծառերը, թագավոր ունենալու փափագով, ձիթենուն, թզենուն և որթատունկին խնդրում են, որ թագավոր դառնան, սակայն նրանք հանձն չեն առնում՝ իրենց պտուղն ու փառքը թողնելու և փայտի վրա թագավորելու, այն ժամանակ դժնիկին էլ են խնդրում, որ իրենց թագավորի: Դժնիկը ծառերին պատասխանում է. «Եթե ինձ թագավոր կընդունեք, եկեք իմ հովանու ներքո պատսպարվեք»: Սակայն եթե նույն այդ դժնիկից հուր բորբոքվի, արդյո՞ք չպիտի այրի նաև լիբանանի մայրու փայտը»: Սույն առակը ասելուց հետո Հովաթամը վախից անմիջապես փախչում է:

Առակում հիշատակված պտղատու ծառերը Գեդեոնն ու իր որդիներն էին, իսկ դժնիկը խորհրդանշում էր Աբիմելեքին, քանի որ նախ Գեդեոնին են առաջարկում թագավորել: Սակայն Աբիմելեքը, եթե դժնիկի նման թագավորեր, մի օր հարստահարության հուրը պիտի այրեր նրա իշխանության ներքո գտնվող ժողովրդին: Արդարև, քանի որ անագորույն

Աբիմելեքը և Սիկիմի բնակիչները պատժի էին արժանի, քիչ ժամանակ անց Աստծու կամքով նրանց միջև թշնամություն է ծագում, և սիկիմացիներն այնպես են երես թեքում Աբիմելեքից, որ երբ նա բացակայում է, թաքնվում են լեռների ծերպերում, որպեսզի վերադարձին նրան արգելեն մտնել իրենց սահմաններից ներս: Սրանք անցորդներին էլ էին կողոպտում՝ ձևացնելով իբր Աբիմելեքի հպատակներն են:

Թեպետ և նրանք զղջում են Աբիմելեքին թագավոր հռչակելու համար և փափագում են ազատվել նրա կեղեքիչ և բռնակալ իշխանությունից, սակայն այս գործի համար գլխավորի կամ առաջնորդի կարիք ունեին, ուստի երբ Գաաղ անունով մի անձ իր եղբայրների հետ Սիկիմ է գալիս, սկսում են հուսալ, որ նա պիտի ազատի իրենց: Այդ ընթացքում նաև դուրս են գալիս այգեկութի, ուտում և խմում են, և պար բռնելով *բահաղի* կռատուն գնում, որտեղ անիծում են Աբիմելեքին:

Հիշյալ Գաաղը ևս փառքի և մեծության հասնելու նպատակով գոչում է. «Ո՞վ է Աբիմելեքը, որ ես ծառայեմ նրան»: Նա սկսում է ամբարտավան խոսքերով ժողովրդին իր կողմը գրավելու այլ միջոցներ էլ ձեռնարկել: Սակայն Զեբուղը, որին Աբիմելեքն այնտեղ կառավարիչ էր կարգել, Գաաղի և սիկիմացիների խլրտումների մասին տեղյակ է պահում Աբիմելեքին, որն իր զորքով շուտով նրանց դեմ է դուրս գալիս:

Թեև Գաաղը քաղաքի բնակիչների հետ ստիպված պատերազմում է նրա դեմ, սակայն իսկույն հաղթվելով՝ կարողանում է փախչել, իսկ բնակիչներից շատերը կոտորվում են: Երկրորդ անգամ էլ պատերազմելով և հաղթելով՝ Աբիմելեքը կործանում է քաղաքը: Քաղաքի աշտարակում պատսպարվածները, սա տեսնելով, թաքնվում են *բահաղի* կռատանը, քանի որ այն ամրոցի նման ամրակառույց էր: Աբիմելեքն այնտեղ ապաստանածներին կորստյան մատնելու բաղձանքով մի բեռ

փայտ է կտրում, զորքին էլ հրամայում է նույնը անել և, փայտը կռատան շուրջը դիզելով, հրի է մատնում, որից էլ այր և կին՝ հազար հոգի, կռատանը մեռնում են:

Ապա գրավում է Թեբիսը, որի բնակիչները ապաստանել էին տեղի չափազանց ամուր աշտարակում: Աբիմելեքն ուզում է այն նույնպես կործանել, և երբ մոտենում է դրա դարպասներին, մի կին երկայնաքարի մի բեկոր է նետում նրա գլխին, որը ջախջախում և սպանում է նրան[44]:

Օրինա՛կ վերցրու և խրա՛տ ընդունիր Աբիմելեքի թշվառ վիճակից. երբ իմանում է, որ քարը մի կին է նետել, իր կապարճակրին հրամայում է սպանել իրեն, որպեսզի չասեն, թե մի կնոջ ձեռքով մահացավ:

Հասկացի՛ր Աստծու արդարությունը. ինչպես Աբիմելեքն է իր եղբայրներին սրով սպանում քարի վրա, այդպես էլ իր գլուխը քարով է ջախջախվում, որից հետո սրից է մահանում: Սիկիմի բնակիչներն էլ իրենց փառքն ու օգուտն ավելացնելու նպատակով Աբիմելեքին թագավոր են հռչակում, սակայն փառքի փոխարեն զղջում են և ողբում, քանի որ իրենց քաղաքը կործանելուց բացի՝ իրենք ևս գրեթե ամբողջովին ջնջվում են:

Իսկ վերոհիշյալ Գաաղը, նույնպես ինքնահավան և իր չափը չիմացող անձ լինելով, կեղծիքով իշխանության հասնելու ցանկությամբ այդքան ժամանակ ապօրինի ջանքեր է գործադրում և պատերազմի դաշտում պարտվելով՝ ստիպված է լինում գլուխն ազատելու համար անարգաբար և աճապարանքով փախչելու:

Դու տե՛ս, թե ինչպես է կետ առ կետ կատարվում Հովաթամի առակը. քանի որ հարստահարության կրակը, դժնիկի

---

[44] Մի կին երկանաքարի մի կտոր գցեց նրա գլխին (*Դատ. 9:53*):

նմանեցվող անգութ Աբիմելեքից վառվելով, այրում-սևացնում է իրեն և Սիկիմի բնակիչներին[45]: Աբիմելեքը, միայն երեք տարի իշխելով, իր և շատերի կորստյան պատճառ, նաև Աստծու և մարդկության թշնամի է դառնում:

Հարց Ժ: **Հետո ո՞վ է լինում իսրայելացիների դատավորը:**

Պատասխան: Իսաքարի ցեղից Թովղա անունով մեկը, որը քսաներեք տարի վարում է դատավորական իշխանությունը: Ապա Գաղաացի Հայիրը, որը քսաներկու տարի դատում է Իսրայելում: Արդարև, այս ընթացքում իսրայելացիները հանգիստ և ազատ էին թշնամիների ճնշումներից, սակայն նրանք, նեղություններից ազատ լինելով, սովորաբար իրենց հարևան ժողովրդների կուռքերն են սկսում պաշտել[46]:

Սրա պատճառով Աստված բարկանալով՝ Ամոն թագավորի ձեռքով տասնութ տարի խրատում է նրանց: Այնպես որ ժողովուրդը, այլևս չկարողանալով համբերել Ամոնի պատճառած տառապանքներին, նորից աղաչանքներով Աստծուն է դիմում և խոստովանում մեղքերը[47]:

Այստեղ հարկ է նկատել, որ մինչ այդ իսրայելացիները, երբ մեղքից հետո զղջում էին, Աստված Իր անսահման ողորմությամբ փրկում էր նրանց, սակայն այս անգամ արդարություն իրագործելով՝ նրանց պատասխանում է. «Երբ թշնամին ձեզ

---

[45] Աստված Աբիմելեքի գլխին թափեց նրա չարիքը ....Սիկիմի մարդկանց բոլոր չարագործություններն Աստված նրանց գլխին թափեց (*Դատ. 9:56,57*):

[46] Իսրայելացիները շարունակեցին Տիրոջ առաջ չարիք գործել (*Դատ. 10:6*):

[47] Նրանք աղաղակեցին Տիրոջը և ասացին. «Մեղանչեցինք Քո դեմ, որովհետև թողեցինք մեր Աստծուն» (*Դատ. 10:10*):

նեղեց, ձեր աղաչանքների համար փրկեցի ձեզ, սակայն դուք, Ինձ թողնելով, նրանց կուռքերին ծառայեցիք, ուրեմն Ես այլևս չեմ ցանկանում ձեզ փրկել, թող նրանք փրկեն»:

Աստծու այս խոսքերը լսելով՝ վերստին աղաչում են, որ իրենց ազատի՝ միևնույն ժամանակ խոստովանելով, որ մեղավոր են Աստծու առջև և մանավանդ իրենք իրենց Նրա կամքին հանձնելով[48]՝ կուռքերը վերացնում են իրենց միջից: Սակայն այդ ընթացքում թշնամին, Գաաղադ գալով, բանակ է դնում:

Իսրայելացիներն էլ թշնամուն դիմակայելու համար հավաքվում են Մասեփայում: Բայց նրանք այնքան տկարացած և խեղճ վիճակում էին, որ ոչ մեկը չէր համարձակվում զորքի գլուխ անցնել և պատերազմել: Թեև բոլորը միահամուռ խոստանում և հանձն են առնում ժողովրդի պետ ընդունելու այն մարդուն, որը, նախ պատերազմական գործողություններ ձեռնարկելով, կառաջնորդի զորքը, բայց դարձյալ բավականին քաջ մեկը չի գտնվում, որ ընդունի սույն առաջարկը:

Այն ժամանակ Հեփթայե անունով շատ քաջասիրտ մի մարդ է լինում, որը Գաաղադի երկրի Մասեփա քաղաքից էր, սակայն նրա եղբայրները քաղաքի մեծամեծների ձեռքով նրան զրկել էին հոր ժառանգությունից և հեռացրել տնից՝ պատճառաբանելով, որ նա իրենց հոր հարազատ որդին չէ: Նա էլ հարկադրված բնակություն է հաստատում Տոբում, որտեղ նրա շուրջը շատ անկարգ և հանդուգն մարդիկ են հավաքվում, որոնց հետ Հեփթայեն ասպատակում է կռապաշտների երկիրը՝ կողոպուտով վերադառնալով, և այսպիսով նրա՝ որպես քաջ և պատերազմող անձնավորության համբավը տարածվում է:

---

[48] «Մենք մեղանչեցիք, արա՛ Դու մեզ այն, ինչ որ քեզ հաճելի է թվում, բայց միայն, Տե՛ր, ազատի՛ր մեզ» (*Դատ. 10:15*):

Ահա այս մարդուն են դիմում Գաաղադի մեծամեծները, որ գա և իրենց զորավար լինի, որպեսզի պատերազմեն թշնամու դեմ: Թեպետ Հեփթայեն իր ազգի փրկության համար գործելու պատրաստակամություն է հայտնում, սակայն նրան հայտնի էր նեղ դրությունից իրեն դիմելու պատճառը, ուստի նախ նրանց հետ դաշինք ու պայման է կապում, որովհետև եթե Աստծու օգնությամբ հաղթեն թշնամուն, միգուցե դրանից հետո իրեն նորից մերժեն, և ինքը անպատվություն և անարգանք կրի նրանցից:

Երբ Գաաղադի իշխանավորները, ըստ նրա պահանջածի, երդվում են, այն ժամանակ նրանց հետ Մասեփա է գնում, որտեղ հավաքվել էր ժողովուրդը: Այնտեղ բոլորը երդվում են Աստծու անունով, որ նրան դատավոր կարգեն:

Արդ, Հեփթայեն ժողովրդի առաջնորդ դառնալուն պես, վաղեմի սովորությամբ Ամոն թագավորի մոտ դեսպան է ուղարկում՝ հարցնելով, թե ինչու է պատերազմում իսրայելացիների դեմ: Նա, իմանալով իսրայելացիների թույլ լինելը, Հորդանանի մյուս ափին Մովսեսի օրոք իսրայելացիների գրաված քաղաքներն ու երկրներն է պահանջում:

Սակայն հիշյալ վայրերը այլ ազգերի էին պատկանել, մանավանդ իսրայելացիները Աստծու հրամանով և պատերազմով գրաված լինելով՝ թեև Հեփթայեն ժխտում է ամոնացիների իրավունք ունենալը, սակայն թշնամին չի համոզվում, ուստի Հեփթայեն դատն Աստծու կամքին է հանձնում[49]:

Դու այստեղ Աստծու ողորմությա՛նը նայիր. որովհետև Հեփթայեն ուղղամիտ և արդար մարդ էր, մանավանդ Աստծու զորությանն ապավինելով՝ գործը նրա կամքին է հանձնում,

---

[49] Իսրայելացիների և ամոնացիների միջև դատավոր եղող Տերը թող այսօր դատաստան անի (*Դատ. 11:27*):

ուստի թշնամուն հաղթելու համար անհրաժեշտ զորությունը նրան ի վերուստ[50] է շնորհվում, և երբ ամոնացիների դեմ է շարժվում, Աստծու օգնությամբ կարողանում է կոտորել նրանց զորքը և փախցնել:

Սակայն Հեփթայեն, պատերազմը դեռ չսկսած, ուխտ է անում, որ եթե պատերազմում Տիրոջ հաջողությամբ հաղթանակի և խաղաղությամբ տուն վերադառնա, այն ժամանակ ով առաջինն իրեն դիմավորի, Տիրոջը ողջակեզ պիտի անի: Արդ, հաղթանակից հետո ուրախությամբ տուն վերադառնալու ժամանակ նրան ընդառաջ է դուրս գալիս միակ աղջիկը, որից բացի՝ այլ զավակ չուներ: Հեփթայեն նրան տեսնելուն պես մեծ ցավով և հառաչանքով պատռում է օձիքը:

Սակայն աղջիկը, հոր սրտի կսկիծի պատճառը հասկանալով, պատասխանում է. «Ինձ համար ինչ որ ուխտել ես Աստծուն, այն էլ կատարի՛ր, ես հոժար եմ», բայց և հորից երկու ամիս ժամանակ է խնդրում, որ ընկերների հետ լեռները գնալով՝ ողբա իր կուսությունը: Հայրը աղջկան նրա ցանկությամբ գործելու թույլտվություն է շնորհում, որից հետո նա ընկերների հետ երկու ամիս կուսությունը սգալուց հետո վերադառնում է, ինչպես խոստացել էր:

Սուրբ գրքի պատմությանը հետևելով՝ շատերը կարծում են, որ հիշյալ աղջիկը չամուսնանալով կույս է մնում, և նրա կույս մնալով՝ Հեփթայեն իր ուխտը կատարված է համարում: Քանի որ իսրայելացիների մեջ որդի կամ զավակ չունեցողը անիծյալ և մեռյալ էր համարվում, սա է պատճառը, որ տարին չորս օր աղջիկները նրա կուսություն էին ողբում:

Հիրավի, Աստծու օգնությամբ թշնամին պարտվում է: Սակայն այս անգամ էլ Եփրեմի ցեղը՝ խռովարար և

---

[50] Եվ Տիրոջ հոգին հակվեց Հեփթայեի կողմը (*Դատ. 11:29*):

ապստամբ մարդիկ, Հորդանան գետի դիմացի ափն անցնելով, խմբովին հարձակվում են Հեփթայեի վրա՝ ասելով. «Ինչո՞ւ մեզ լուր չտվեցիր, որ մենք էլ մասնակցեինք պատերազմին»: Մինչև իսկ անօրինությամբ պատրաստվում են նրա տունն այրելու և նրան էլ սպանելու: Սակայն նրանք նույնպես այսպես են վարվում ոչ թե հայրենասիրական զգացումներից, այլ ընչասիրությունից: Քանի որ եթե պատերազմի մասնակցեին, իրենք էլ կողոպուտ կունենային (ինչպես Գեդեոնի ժամանակ, այժմ էլ նույն կերպ են վարվում): Հեփթայեն նրանց պատասխանում է. «Ամոնացիների մեզ նեղություն տալու ժամանակ ձեզ բողոքեցի, դուք չօգնեցիք մեզ, և ազատագրող որևէ մեկին չգտնելով՝ ստիպված եղա իմ անձը վտանգելու, հիմա ինչո՞ւ եք հարձակվել ինձ վրա»: Սույն պատասխանով հայտնելով, որ նրանք անիրավ են, կարծում է, որ համոզվելով հետ կդառնան:

Սակայն երբ տեսնում է, որ խոսքով չեն համոզվում և ավելի են համառում, ստիպված է լինում սրով համոզելու և իր զորքին հրամայում է կոտորել նրանց: Այուհանդերձ, դարձյալ չուղղվելով, ասում են. «Ո՞վ է Գաաղադի ժողովուրդը, որ մեզ դիմակայի», և քանի որ Հեփթայեն նույնպես Գաաղադից էր, հրամայում է, որ շարունակեն կոտորածը, մինչև ոչ մեկը չմնա:

Արդ, Եփրեմի զորքը, Հորդանանի դիմացի ափին լինելով, Հեփթայեն գետանցումներում նույնպես զորք է կանգնեցնում, որպեսզի ոչ մեկը փախչելով չազատվի: Գետեզերք հասած փախստականներին հակառակ ափն անցնելու ժամանակ հարցնում են. «Դուք Երփրեմի ցեղի՞ց եք»: Նրանք երկյուղից պատասխանում են, որ ո՛չ, եփրեմացի չեն, այն ժամանակ նրանց խոսելուց հասկանալու համար ստիպում են *շիբբոլեթ* բառն արտասանել, որը «հասկ» է նշանակում: Սակայն եփրեմացիք *շ* տառով որևէ բառ չեն կարողանում արտասանել,

ուստի *սիքբոլեթ* են ասում[51]: Այսպիսով հայտնի է դառնում, որ Եփրեմի ցեղից են և կոտորվում են. սույն եղբայրասպան պատերազմում քառասուներկու հազար մարդ անխնա սպանվում է սրով միայն եփրեմացիների ագահության և նրանց ապստամբասեր բնավորության, ինչպես նաև մեծի հանդեպ ինքնահավան անհնազանդության պատճառով:

Հեփթայեն վեց տարի դատավորի իշխանությունը վարելուց հետո մահանում է: Ապա Բեթղեհեմից Եսեբոն՝ յոթ տարի, զաբուղոցի Էլոն՝ տասը տարի, և փարաթոնացի Աբդոն՝ ութը տարի: Նույն դատավորական իշխանությանը հասնելով՝ ամեն մեկը շատ կամ քիչ ձգտում է օգտակար լինել իր ազգին, և Սուրբ գրքում նրանք հիշվում են որպես *Իսրայելի դատավորներ*:

Հարց ԺԱ: **Ինչպիսի՞ն էր Իսրայելի վիճակը վերոհիշյալ դատավորներից հետո:**

Պատասխան: Շատ վատ: Որովհետև նրանց ժամանակ, թշնամին տկարանալով, իսրայելացիները միաժամանակ հանգիստ էին, և դարձյալ Աստծու օրենքներին հակառակ կենցաղի են հակվում: Ուստի Աստված, նորից բարկանալով, նրանց կռապաշտների իշխանության ներքո է թողնում[52], որպեսզի խրատվեն, ինչպես շատ անգամ էր արել:

Օրինա՛կ վերցրու. երբ իսրայելացիները հնազանդության շավիղներից խոտորվում են, թշնամին զորանում և հաղթում է, քանի որ Աստված թշնամիներին՝ որպես արդարության

---

[51] Նրանց ասում էին. «Մեզ մի նշան տվե՛ք, ասացե՛ք՝ հասկ, հասկ»: Բայց նրանց չէր հաջողվում այդպես ասել (*Դատ. 12:6*):

[52] Իսրայելացիները շարունակեցին չարիք գործել Տիրոջ առաջ, և Տերը նրանց քառասուն տարի այլազգիների ձեռքը մատնեց (*Դատ. 13:1*):

գործիքի, թույլ է տալիս, որ խրատեն իսրայելացիներին: Այս դեպքում հանցանքը թշնամունը չէր, այլ իսրայելացիներինը, քանի որ իրենց ապրելակերպն իրենց պատժում էր[53]:

Արդարև, երբ իսրայելացիներին դատավոր էր տալիս, Ինքն էլ նրա հետ լինելով՝ աստվածային օգնությամբ հաղթում էին թշնամուն: Սակայն նույն դատավորի մահվանից հետո ժողովուրդը, նախկին ուղղությունը դեպի չարը շեղելով, վատթարագույն վիճակում է հայտնվում[54]:

Թեպետ վերոհիշյալ դատավորներից հետո Հեղի քահանան է դատավոր դառնում, սակայն ժողովուրդը սրա օրոք չի ուղղվում, այլ իր սովորական չար ճանապարհով է ընթանում, թշնամիների հարստահարություններն էլ օրըստօրե սաստկանում են, և իսրայելացիները ծայրահեղ թշվառ և ողորմելի վիճակում են հայտնվում:

Սակայն որպեսզի թշնամին չհպարտանա և չմտածի, որ ինքն իր զորությամբ է կարողանում պատժել իսրայելացիներին, Աստված կամենում է նրան էլ պատժել, որ իր աստվածային զորությունը հայտնի դառնալով՝ թշնամին էլ իր չափը ճանաչի, և իսրայելացիներն էլ միխիթարվեն և զգաստանան:

Դրանից բացի՝ Աստված ոչ թե նախկինի պես պատերազմով և զորքով, այլ միայն Սամսոնի ձեռքով էր փրկելու իսրայելացիներին, ուստի նախ մարդկային կերպարանքով հրեշտակը, նրա մորը երևալով, ավետիս է տալիս, որ մի որդի պիտի ծնի, և նաև պատվիրում է՝ ոգելից խմիչքներից զգուշանա,

---

[53] Ասում է Տերը. «Քո ճանապարհներն ու քո ընթա՛ցքը քեզ հասցրին այդ ամենը» (*Երեմ. 4:18*)

[54] Եվ երբ Տերը նրանց համար դատավորներ կարգեց, Տերն այդ դատավորների հետ էր.... Եվ երբ դատավորը մեռնում էր, նրանք դառնում, նորից անօրենություն էին անում իրենց հայրերից ավելի (*Դատ. 2:18,19*):

օրենքով սահմանված անսուրբ կերակուր չուտի, և մանկան գլխին էլ երբեք ածելի չդիպչի:

Սույն բարի լուրն իր ամուսնուն՝ Մանուեին է հայտնում, և Մանուեն, հասկանալով, որ Աստծուց է, խնդրում է, որ նորից այդ մարդուն ուղարկի, որպեսզի տեղեկանալով տրված պատվիրաններին՝ հակառակ բան չանի: Հրեշտակը նորից է գալիս և կրկնում նախապես տրված պատվիրանը, և Մանուեն առանց իմանալու, որ նա հրեշտակ է, ցանկանում է շուտափույթ մի ուլ մորթել՝ պատիվ տալու համար, իսկ նա էլ հայտնում է, որ պատրաստելիք կերկուրն Աստծուն զոհ մատուցի:

Այս անգամ Մանուեն նրա անունն է հարցնում, որպեսզի տրված ավետիսը կատարվելուց հետո գոհանալով փառավորի Աստծուն: Հրեշտակը պատասխանում է, թե ինչու է հարցնում իր անունը. հարցնում է մի բանի մասին, որը սքանչելի է[55] (իբր անթարգմանելի):

Երբ Մանուեն, հրեշտակի պատվիրանին համապատասխան, պատրաստած կերակուրը այնտեղ գտնվող մի քարի վրա զոհ է մատուցում, իսկույն քարից բոց է դուրս գալիս և երկինք բարձրանում. հրեշտակն էլ, բոցի հետ բարձրանալով, աներևութանում է: Մանուեն և նրա կինը, այս հրաշքը տեսնելով, երկյուղից ընկնում են երեսնիվայր, մանավանդ Մանուեն ասում է, որ պիտի մեռնեն, քանի որ Աստծուն տեսան[56]:

Սակայն կինը հուսադրական և քաջալերող խոսքերով պատասխանում է. «Եթե Աստված մեզ պիտի սպաներ, զոհն ընդունելով՝ այս բարի լուրն ու պատվիրանը չէր հայտնի»: Ապա ծնվում է Սամսոնը, և երբ մեծանում է, Աստված, նրան

---

[55] «Ինչո՞ւ ես հարցնում իմ անունը, դա մի սքանչելի անուն է» (*Դատ. 13:18*):

[56] Անպատճառ կմեռնենք, որովհետև տեսանք Աստծուն (*Դատ. 13:22*):

օրհնելով, այնքան ուժ ու զորություն է տալիս, որի նմանը անցյալում չէր եղել[57]:

Եվ քանի որ նրա ձեռքով պիտի պատժվեին թշնամիները, ուստի Թամնաթա է գնում և այնտեղ մի կռապաշտ աղջիկ տեսնելով՝ ցանկանում է նրան կնության առնել: Բայց քանի որ իսրայելացիներին արգելված էր ամուսնանալ կռապաշտի հետ, ծնողները չեն համաձայնում. նրանք չգիտեին, որ դա Աստծու կողմից էր[58]:

Սամսոնը, անպատճառ ցանկանալով կնության առնել հիշյալ աղջկան, հարսանիքը կարգադրելու համար ծնողների հետ Թամնաթա գնալիս ճանապարհից այգիների կողմն է թեքվում, որտեղ իսկույն նրա դեմ մի առյուծի կորյուն է դուրս գալիս, որի երախից բռնելով, քանի որ զենք չուներ, ուլի նման մեջտեղից երկու կես է անում[59]:

Սակայն Սամսոնն առյուծին սպանելը չի պատմում իր ծնողներին, և Թամնաթա գնալով, ըստ սովորույթի, գործը պատշաճորեն կարգավորելուց հետո վերադառնում են: Սամսոնը, առյուծին սպանելու վայրը վերադառնալով, տեսնում է, որ մեղուները նրա երախի մեջ մեղր են պատրաստել: Այդ մեղրից վերցնելով՝ և՛ ինքն է ուտում, և՛ ծնողներին է տալիս առանց հայտնելու, թե որտեղից է վերցրել:

Թամնաթա գնալով, ըստ երկրի սովորույթների, յոթ օր հարսանիք են անում: Բայց բնակիչները, դրա ընթացքից վախենալով, նրա հետ, որպես ընկեր, երեսուն տղամարդ են դնում: Սամսոնը, առյուծի երախից հանած մեղրի մասին մի

---

[57] Եվ կինը մի որդի ծնեց ու նրա անունը Սամփսոն դրեց: ….և Տերը նրան օրհնեց: Տիրոջ Հոգին սկսեց շրջել նրա հետ (*Դատ. 13:24, 25*):

[58] Նրա հայրն ու մայրը չգիտեին, որ դա Տիրոջից է (*Դատ. 14:4*):

[59] Տիրոջ Հոգին աջակցեց նրան, և նա պատառեց առյուծին ինչպես մի ուլի, մինչ նրա ձեռքին զենք չկար (*Դատ. 14:6*):

առեղծվածային հանելուկ հորինելով, նրանց ասում է՝ ուտողից կերակուր է դուրս գալիս, հզորից՝ քաղցր[60]: Միևնույն ժամանակ պայման են կապում, որ եթե յոթ օրվա ընթացքում խնդիրը լուծեն, ինքը նրանց երեսուն կտոր հագուստ կտա, եթե ոչ՝ իրենք կտան:

Երբ երեք օրում անկարող են լինում առեղծվածը լուծելու, ստիպում են նրա կնոջը, որ Սամսոնից անպատճառ պատասխանն իմանա և դրա նշանակությունը իրենց հաղորդի, իսկ եթե չանի, նրան և հոր տունը կայրեն: Նա էլ տեսակ-տեսակ հնարքներով, ծանր հանդիմանությամբ, կեղծավոր և շողոքորթող խոսքերով ու արտասուքով չորս օր այնքան է ձանձրացնում Սամսոնին, որ սա ստիպված է լինում կնոջը հայտնելու հանելուկի բացատրությունը:

Թեև նա զգուշությամբ պատվիրում է, որ ոչ մեկին չհայտնի, բայց սա պատասխանն իմանալուն պես իսկույն տեղեկացնում է բնակիչներին: Նրանք էլ Սամսոնին պատասխանում են, թե ինչ կա մեղրից քաղցր և առյուծից հզոր: Սամսոնը հասկանում է, որ կինը բերանբացություն է արել, սակայն պայման կապած լինելու պատճառով և մանավանդ Աստծուց զորանալով[61]՝ Ասկաղոնի բնակիչներից երեսուն մարդ (կռապաշտ) է սպանում և նրանց հագուստները տալիս այդ մարդկանց:

Լա՛վ մտապահիր. Սամսոնն առյուծին հաղթում է, բայց կեղծավոր և շողոքորթ կնոջից հաղթվելով՝ ծնողներից թաքցրած գաղտնիքը նրան է հայտնում: Սակայն սա էլ խորհուրդ ուներ, քանի որ սահմանված էր նրա՝ կռապաշտներին պատժելը, և սա պատրվակ էր, որ հետո նրանցից վրեժ լուծի:

---

[60] Եվ նրանց ասաց. «Ուտողից կերակուր դուրս եկավ, և հզորից քաղցրություն դուրս եկավ» (*Դատ. 14:14*):

[61] Տիրոջ հոգին աջակցեց Սամփսոնին (*Դատ. 14:19*):

Հարց ԺԲ: **Ինչպե՞ս է Սամսոնը վրեժխնդիր լինում կռապաշտներից:**

Պատասխան: Երբ կինը, ինչպես վերը նշվել է, գաղտնիքը կռապաշտներին է հայտնում, Սամսոնը բարկացած տուն է վերադառնում, և աները նրա կնոջն ամուսնացնում է ամուսնության ժամանակ իբրև ընկեր հատկացված այն երեսուն մարդկանցից մեկի հետ: Հետո Սամսոնը, որպես ընծա մի ուլ վերցնելով, Թամնաթա է գալիս, որպեսզի հաշտվի կնոջ հետ, սակայն երբ լսում է, որ նա մի այլ մարդու հետ է ամուսնացել, սաստիկ բարկանում է: Թեև աները համաձայնում է՝ իր փոքր աղջկան Սամսոնին տալու, սակայն նա, այս առաջարկը չընդունելով, ասում է. «Եթե այսուհետև ձեզ չարիքներ հասցնեմ, հանցանքն իմը չպիտի լինի»[62]:

Արդ, կռապաշտներից վրեժ լուծելու համար Սամսոնը երեք հարյուր աղվես է բռնում և նրանց պոչերը երկու-երկու իրար է կապում և մի հնարով այդ կապերի մեջ ջահեր զետեղելով՝ վառում է ջահերը և կռապաշտների արտերի մեջ բաց թողնում:

Ու թեև աղվեսները կրակի երկյուղից ցանկանում են փախչել, սակայն անկարող լինելով իրարից բաժանվելու՝ ուր գնում են, այնտեղ հրկիզում են: Ժամանակն էլ հունձքի և կալի լինելով՝ կրակն այնքան է բորբոքվում, որ շրջակայքում ամեն ինչ այրվելուց բացի՝ այգիներն ու ձիթենիներն էլ այրվում, որից իսրայելացիների թշնամիներն ահռելի կորուստներ են ունենում:

Կռապաշտները, սույն հրդեհի պատճառ համարելով Սամսոնի աներոջը, նրա տունը, աղջկան և նրան այրում են, որ-

---

[62] Սամփսոնն ասաց. «Ես միանգամայն անմեղ կլինեմ այլազգիներիդ առաջ, եթե նրանց դեմ չարություն անեմ» (*Դատ. 15:3*):

պեսզի Սամսոնը, իմանալով, որ հանցագործը պատժված է, հանդարտվի: Սակայն Սամսոնը չի ցանկանում այդքանով բավարարվել, այլ նրանցից շատերին սպանելուց հետո գնում է և Եդիմի քարայրում մենակ բնակվում:

Այն ժամանակ իսրայելացիները կռապաշտների իշխանության ներքո էին, և ոչ մեկը չէր կարող նրանց ընդդիմանալ, այլ միայն Սամսոնը, որն իբր թե իր կնոջն ուրիշին տալու պատրվակով, վրեժխնդրության նպատակով նրանց մեծ վնաս է տալիս, որից էլ թշնամու սիրտն այնպիսի վախ է ընկնում, որ իմանալով, որ նա վերոհիշյալ քարայրում է բնակվում, չեն համարձակվում նրա վրա հարձակվել, այլ ահագին բազմությամբ Հուդայի երկիրը գնալով՝ նրանից պահանջում են, որ Սամսոնին կապված իրենց հանձնի սպանելու համար: Իսրայելացիները, կռապաշտների զորությունից վախենալով, երեք հազար մարդ են ուղարկում Սամսոնի գտնվելու վայրը, որպեսզի նրան կապելով՝ հանձնեն թշնամուն:

Դու իսրայելացիների թշվառ և խեղճ վիճակի՛ն նայիր. Սամսոնն իր ազգի փրկության եռանդով է գործում, և ազգն էլ պարտավոր էր՝ նրան պաշտպանելու, սակայն, ընդհակառակը, փափագում են նրան իրենց ձեռքով թշնամուն հանձնել: Թեպետ Սամսոնը Աստծու շնորհով երկյուղ չուներ նրանցից, սակայն իր ազգին չվնասելու համար համաձայնում է, որ իրեն կապեն, միայն թե նրանց երդվել է տալիս, որ իրեն չսպանեն: Այն ժամանակ նրան կապում են երեք տակ գործված պարանով և տանում, թողնում են բանակի առջև, իրենք էլ հեռվից հետևում են դեպքերի զարգանալուն:

Խորհի՛ր, թե այդ պահին Սամսոնի մտքով ինչեր են անցնում, քանի որ թշնամին զինված էր և ստվարաքանակ, ինքը՝ միայնակ և մանավանդ կապկպված, իր ազգակիցներն էլ՝ լոկ հանդիսատես, և ոչ մի տեղից օգնող չկար: Սակայն մի՛

կարծիր, որ քաջարի Սամսոնը, թշնամուց վախենալով, հուսահատվում է, այլ, ընդհակառակը, Աստծու զորությունը և օգնությունը հուսալով՝ աներկյուղ մնում:

Երբ թշնամին նրան կապված է տեսնում, բոլորն ուրախությամբ միանգամից հարձակվում են նրա վրա, Սամսոնը, Աստծուց զորանալով, իսկույն շարժում է բազուկները, և ահա Աստծու կամքով նրա բազուկների կապերը կրակն ընկած լաթի նման հալվում են[63]: Եվ թեպետ այժմ թևերը կապանքից ազատ էին, բայց թշնամուն դիմադրելու համար զենք չուներ:

Սակայն Աստծու զորությունը մարդկանց անհնարին թվացող պարագաներում է հայտնվում, և Սամսոնն այնտեղ մի ավանակի ծնոտ է գտնում և դրանով թշնամուց հազար մարդ սպանելուց և մյուսներին փախուստի մատնելուց հետո ոչինչ չարած մարդու անհոգությամբ մի կողմ է նետում ծնոտը: Սամսոնը, մարտական այսպիսի քաջագործություն կատարելով, ինչքան էլ չի հոգնում, բայց սաստիկ ծարավում է:

Ուստի խոստովանելով, որ հաղթանակի համար Աստծու օգնությանն է պարտական և վախենալով, որ ծարավից կմահանա և թշնամու ձեռքը կընկնի, դիմում է Աստծուն, և ահա մի հրաշքով վերոհիշյալ ծնոտից ջուր է բխում[64], նա էլ խմելով զովանում է: Տեղն էլ *ծնոտի աղբյուր* է անվանում, որպեսզի իր նկատմամբ աստվածային ողորմությունը չմոռացվի, և Աստծու մեծ զորությունը բոլորին հայտնի լինի:

Հետո Սամսոնը, կռապաշտ փղշտացիների Գազա քաղաք գնալով, իջևանում է մի կնոջ տանը: Բնակիչները, նրա

---

[63] Տիրոջ Հոգին աջակից եղավ Սամփսոնին, նրա բազուկների վրայի պարանները դարձան կրակից այրված թելի նման (*Դատ. 15:14*):

[64] Եվ Տերը Ծնոտ կոչվող վայրում մի անցք բացեց, նրանից ջուր դուրս եկավ, նա խմեց.... այդ պատճառով դրա անունը դրեց «Ծնոտի աղբյուր» (*Դատ. 15:19*):

գալստյան լուրը լսելով, աշտարակի դռան մոտ սպասում են, որ հեռանալիս սպանեն նրան: Սամսոնը, ցանկանալով կեսգիշերին այնտեղից մեկնել, երբ տեղեկանում է նրանց նպատակի մասին, իսկույն քաղաքի դուռը՝ սեմերով և նիգերով, իր ուսին դնելով, տանում է մինչև լեռը[65]:

Լա՛վ մտապահիր. Սամսոնը գիտեր, որ կռապաշտներն իրեն թշնամի են, սակայն դիտմամբ նրանց քաղաքներն է գնում, որպեսզի նրանց պատժելու պատճառ գտնի, և մանավանդ բոլորին հայտնի դառնա Աստծու զորությունը, Որն իրեն այնպիսի գերմարդկային ուժ է շնորհել:

Հետո կռապաշտների Ովրիկ քաղաք գնալով՝ այնտեղ Դալիլա անունով մի կնոջ է սիրահարվում, որին կռապաշտ մեծամեծները շատ ոսկի են խոստանում, որպեսզի նա պարզի, թե ինչից է Սամսոնի ուժը, և ինչպես կարելի է ջլատել այդ զորությունը, մի ճարտար հնարքով իմանա դա և հայտնի իրենց, քանի որ մտածում են, որ Սամսոնի այդպիսի տարօրինակ ուժը անպատճառ մի գաղտնիք պիտի ունենա: Եվ նախ փափագում են իմանալ այդ գաղտնիքը, որպեսզի դրանով հետագայում նրան տկարացնելու անհրաժեշտ միջոցներ գտնեն, որովհետև բոլորին հայտնի էր՝ այլ կերպ անկարելի պիտի լինի հաղթել Սամսոնին:

Արդ, խարդախ և ագահ կինը, երբ, ըստ թշնամիների ցանկության, հարցնում է Սամսոնին, թե նրա ուժն ինչից է տկարանում և թուլանում, նա պատասխանում է. «Եթե նոր և չգործածած ջլերով կապեն, իմ զորությունն ինձնից կգնա», և քանի որ տանը մարդիկ էին թաքնվել, որպեսզի նրա գաղտնիքը իմանալով՝ բռնեն նրան, Դալիլան, եղնիկի ջլեր բերել

---

[65] Պոկեց քաղաքի դարպասների փեղկերը և դրանք նիգերով մեկտեղ բարձրացրեց, դրեց իր ուսերի վրա, տարավ այն լերան գլուխը (*Դատ. 16:3*):

տալով, կապում է Սամսոնին և փորձելու համար ասում. «Ահա այլազգիները եկան, որ բռնեն քեզ»: Այս բառերից հետո Սամսոնն իսկույն բոլոր կապերը բարակ թելի նման կտրտում է և պատրաստվում՝ դիմադրելու:

Հասկացի՛ր. հիշյալ կինն առաջին անգամ մտերմաբար և հպանցիկ է հարցնում և երբ տեսնում է, որ Սամսոնի պատասխանը ճիշտ չէ, մեղմ հանդիմանական ոճով կրկնում է հարցը և պատասխան ստանում, որ եթե նոր պարանով կապվի, ուժը կկորցնի: Սակայն երբ յոթ նոր պարաններով նրան կապելուց հետո և «ահա այլազգիները եկան, որ բռնեն քեզ, Սամսո՛ն» ասելուն պես նա իսկույն հեշտությամբ կտրում է պարանները, այս անգամ էլ նրանք իրենց նպատակին չեն հասնում, քանի որ գաղտնիքն անհայտ է մնում: Սակայն անզգամ կինը, դարձյալ չհուսահատվելով, «մինչև երբ պիտի ինձ խաբես» ասելով, խստիվ ստիպում է, որ ճշմարտությունը հայտնի իրեն:

Սամսոնը պատասխանում է. «Եթե գլխիս մազերի յոթ գիսակները կտավի ծոպերի հետ հյուսված ցիցերով պատին գամես, այն ժամանակ կտկարանամ, մի հասարակ մարդու նման կլինեմ»: Քանի որ մանկությունից նրա գլխին ածելի չէր դիպել, որից էլ մազերը շատ էին աճել և մանկությունից յոթ գիսակների էին բաժանված:

Այն ժամանակ խարդախ և դավաճան Դալիլան, Սամսոնին քնեցնելով, ըստ նրա ասածի, գիսակները գամում է պատին, և «ահա այլազգիները եկան, որ բռնեն քեզ, Սամսո՛ն» սովորական խոսքը ասելուն պես Սամսոնը, իսկույն արթնանալով, քաշում և հանում է գամերը: Հարկ է նկատել, թե մի ամբողջ գիշեր անզգամ և խաբված կինը ինչպիսի նենգ և կեղծ ու պատրանքային խոսքերով է կրկնապատկում իր ջանքերը ճշմարտությունն իմանալու համար:

Ուստի և՛ հանդիմանական, և՛ միանգամայն սիրալիր եղանակով ասում է. «Ահա երեք անգամ խաբեցիր ինձ, և սիրտդ իմ առջև ուղիղ չէ», և այնքան է խնդրում, որ Սամսոնը, մեռնելու չափ անհանգիստ և ձանձրացած, նրա սիրտը չկոտրելու համար ակամա հայտնում է, որ ինքը մոր արգանդից ուխտավոր է, և որ իրեն արգելված է մազերը սափրել, և եթե սափրի, այն ժամանակ իր գերմարդկային ուժը կկորցնի:

Նենգամիտ Դալիլան, իմանալով, որ այս անգամ Սամսոնի խոսքը հիմնավոր և ճշմարիտ է, իսկույն կռապաշտ մեծամեծ իշխաններին լուր է ուղարկում, որոնք, բերելով իրենց խոստացած գումարը, Սամսոնի քնած ժամանակ սափրիչով նրա մազերը սափրում են, որով էլ Աստծուց նրան պարգևված ուժը վերանում է: Այն ժամանակ անգութ Դալիլան՝ իբր թե նրան հավատարիմ մեկը, ասում է. «Այլազգիները քեզ վրա են հարձակվում, Սամսո՛ն»: Սա առանց իմանալու, որ իր ուժն իրենից վերցվել է, թեև առաջվա նման գործել և դիմադրել էր ցանկանում, սակայն անկարող է լինում. նրան իսկույն բռնելով՝ հանում են աչքերը և Գազա քաղաքը տանելով՝ բանտարկում, և շղթայակապ ջաղացքար պտտելով՝ ծառայում է[66]:

Հարկ է նկատի ունենալ Սամսոնի այս վիճակը. նա, ով բազմիցս կարողանում է պատժել թշնամիներին, այս անգամ ինքն է պատժվում, սակայն ոչ թե թշնամու զորությամբ, այլ իր գաղտնիքը նենգավոր կնոջը հայտնելով: Թեև այն ժամանակ Սամսոնը զղջում է, սակայն չի հուսահատվում. օրըստօրե մազերը երկարելու համապատասխան՝ նրա զորությունն էլ զգալիորեն աճում է:

---

[66] Նա զարթնեց քնից և ասաց. «Վեր կենամ և անեմ այնպես, ինչպես միշտ և թափ տամ»: Նա չգիտեր, թե Տերը մեկնել էր իրենից: Այլազգիները նրան բռնեցին, հանեցին նրա աչքերը, իջեցրին նրան Գազա, կապեցին երկաթե կապանքներով, և նա բանտում աղորիք էր պտտեցնում (*Դատ. 16:20,21*):

Հետո երբ կռապաշտ իշխանները, Դագոն չաստծու կռատանը զոհ մատուցելով, կերուխումի և զվարճանքների են անձնատուր լինում, Սամսոնին էլ բերել են տալիս այնտեղ: Մի պատանի, նրա ձեռքից բռնելով, ծաղրանքի համար խաղացնում է՝ հանդիսատեսին զվարճություն պատճառելով: Իրենց թշնամուն այդ վիճակում տեսնելով՝ բոլորը, ցնծությամբ աղաղակելով, զոհանում են կուռքից:

Այն ժամանակ Սամսոնն իրեն հսկող պատանուն խնդրում է, որ հենվելու համար իրեն տան գլխավոր երկու սյուների մոտ տանի, որոնց միջև կանգնած, մեկը՝ աջ, մյուսը՝ ձախ ձեռքով բռնելով՝ աղոթում է Աստծուն՝ ասելով. «Ո՛վ ամենակարող Աստված, այս վերջին անգամ ևս ինձ զորությո՛ւն շնորհիր, որ աչքերիս վրեժն առնելով՝ մեռնեմ կռապաշտների հետ»: Եվ ահա Աստծու կամեցողությամբ սյուները կործանելով՝ ամբողջ տունը քանդում է, որի մեջ տղամարդիկ և կանայք միասին երեք հազար մարդ է մեռնում[67]:

Թեև Սամսոնը նույնպես փլատակների տակ է մահանում, սակայն իր կենդանության օրոք երբևէ այդքան մարդ միանգամից չէր սպանել, որքան այս անգամ՝ իր մահվան ժամանակ է սպանում: Ապա եղբայրները նրա մարմինը տանում և մեծ փառքով հոր դամբարանի մեջ են թաղում:

Պետք չէ մտածել, որ Սամսոնը հուսահատվելով մեռնել էր ցանկանում, այլ քանի որ նվիրված էր իսրայելացիների փրկության գործին, վերջին պահին նույնպես եռանդով այդ նպատակին ծառայելով, հույսը իսրայելացիների հզոր Աստծուն և աղոթքով Նրան դիմելով, Նրա թշնամիներից արդարացիորեն վրեժխնդիր լինելով է ցանկանում մեռնել: Ահա այս է

---

[67] Սամփսոնն աղաղակեց Տիրոջը և ասաց. «Տե՛ր, զորությունների՛ Տեր, հիշի՛ր ինձ և զորացրո՛ւ ինձ այս մի անգամ էլ, Աստվա՛ծ, որ իմ երկու աչքերի համար վրեժս լուծեմ այս այլազգիներից» (*Դատ. 16:28*):

պատճառը, որ Աստված, նրա աղոթքն ու աղաչանքը լսելով, նրան իր նախկին ուժն է շնորհում: Ուրեմն պարզ է, որ Սամսոնի մահը Աստծու հրամանի համաձայն և Նրա կամքով էր:

Սամսոնը քսան տարի վարում է դատավորի իշխանությունը, սակայն ոչ միայնակ, այլ Հեղի քահանայապետի հետ: Հեղին, միշտ զբաղված Սելովում Աստծու տապանակին ծառայելով, անկարող էր թշնամու դեմ պատերազմելու, և միայն Սամսոնն էր եռանդով ստանձնել իսրայելացիների փրկության գործը:

Սամսոնը թշնամիներին այնքան էր սարսափեցրել, որ նրա մահվանից հետո էլ, չնայած մինչև Սամվել մարգարեի օրերը իսրայելացիները նրանց լծի ներքո էին, երկյուղը սրտերում՝ միառժամանակ չեն հարստահարում իսրայելացիներին:

Հարց ԺԳ: **Սամվելը ո՞ր ցեղից և ո՞ւմ որդին էր:**

Պատասխան: Սամվել մարգարեն Ղևիի ցեղից էր և Եղկանայի որդին: Հիշյալը, Արիմաթիմ քաղաքում բնակվելով, երկու կին ուներ, որոնցից մեկի անունը Աննա էր, իսկ մյուսինը՝ Փեննանա: Վերջինս զավակ ուներ, իսկ Աննան, ամուլ լինելով, միշտ տխուր և տրտում էր:

Եղկանան ժամանակ առ ժամանակ իր կանանց հետ Սելով էր գնում՝ զոհ մատուցելու: Մի անգամ էլ Սելովում զոհ մատուցելուց հետո, երբ, ըստ հնավանդ սովորույթի, զոհի մսից իր կանանց էր բաժանում, Աննային մի բաժին է տալիս, սրանից Աննան, սաստիկ կոտրված սրտով, սկսում է արտասվել և կերակուր չի ուտում:

Եղկանան նրան սփոփելու համար ասում է. «Մի՞թե ես քեզ համար տասը զավակներից լավ չեմ»[68], և թեև Աննան կերա-

---

[68] Մի՞թե ես քեզ համար տասը որդուց լավ չեմ (*Ա Թագ. 1:8*):

կուրն ուտում է, սակայն սիրտը վշտով լի և Աստծու ողորմությանն ապավինելով՝ գնում է խորանի դռան մոտ՝ աղոթելու: Որտեղ էլ արտասվալից աչքերով և ջերմագին սրտով ուխտում է, որ եթե Աստված իրեն մի արու զավակ պարգևի, նրան Աստծուն կնվիրի, և որը մինչև մահ Աստծուն կծառայի, ոգելից խմիչքներից հեռու կմնա, և միևնույն ժամանակ գլխին ածելի չի դիպչի:

Թեպետ Աստված նրա խնդրանքն ընդունում է, սակայն քանի որ առանց ձայնի էր սրտանց աղոթում և մանավանդ երկար ժամանակ էր այդ վիճակում, Հեղի քահանան կարծում է, թե նա գինովցած է, և սպասավորն էլ նրան հանդիմանում է, որ գինովությունից սթափվելով՝ այնտեղից հեռանա:

Ուստի Աննան շտապում է հայտնելու նրան, որ ինքն արբած չէ և չարությունից էլ զերծ է, միայն թե Աստծուն աղաչելու համար է կանգնել. Հեղին լսելով ասում է. «Գնա՛ խաղաղությամբ և թող Աստված կատարի քո բոլոր խնդրանքները»[69], այն ժամանակ Աննան գոհունակությամբ հեռանում է, և այլևս փարատվում է նրա տրտմությունը:

Հետո Արիմաթիմ գնալով՝ Աննան հղիանում է և մի արու զավակ ծնելով՝ անունը Սամվել դնում: Եվ երբ նրան մեծացնելով՝ կտրում է կաթից, Եղկանան և Աննան ընծաներով և նվերներով Սելով են գնում, որտեղ իրենց ընծան Աստծուն մատուցելուց բացի՝ Աննան, իր ուխտի համաձայն, Հեղի քահանային է հանձնում Սամվելին, որպեսզի ամբողջ կյանքում խորանին ծառայի, և աղոթքով զոհանում է Աստծուց[70]:

---

[69] Պատասխան տվեց Հեղին և ասաց. «Գնա՛ խաղաղությամբ և Իսրայելի Աստվածը թող կատարի նրանից հայցած քո բոլոր խնդրանքները» (*Ա Թագ. 1:17*):

[70] Սիրտս ամրացավ իմ Տիրոջ շնորհիվ (*Ա Թագ. 2:1*):

Հեղին, նրանց օրհնելով, մաղթում է, որ Աստված Սամվել մանկան փոխարեն նրանց այլ մանուկներ պարգևի, և, իրոք, Աննան երեք արու և երեք աղջիկ զավակներ է ունենում[71]:

Հասկացի՛ր. Աննան որդի է ցանկանում, որ իր ազգականների մեջ փառավորվի, սակայն նրան Աստծուն նվիրելով՝ ոչ միայն իր ազգականներից է փառավորվում, այլև Աստծուց փառավորվելուց բացի՝ նրան որպես վարձատրություն վեց զավակ է պարգևվում:

Արդ, խորանին և Հեղի քահանայապետին ծառայելով, ամենայն հնազանդությամբ օրըստօրե մեծանալով, և՛ Աստծու, և՛ մարդկանց աչքին հաճելի լինելով՝ բոլորին հայտնի է դառնում Սամվելի առաքինությունը: Սակայն Հեղին արդեն ծեր էր, իսկ նրա երկու որդիները՝ Ոփնին և Փենեհեսը, որ նույնպես քահանա էին և խորանին էին ծառայում, օրենքին հակառակ կենցաղ և անպարկեշտ վարքուբարք ունեին, որոնցով էլ, դժբախտաբար, ժողովրդին չար օրինակ էին:

Թեպետ Հեղին, նրանց ապօրինի վարքի մասին լսելով, երբեմն խրատում էր նրանց, սակայն ուղղվելու փոխարեն նրանց չարությունն օրըստօրե ավելի էր սաստկանում: Այսպիսով, նրանք իհարկե անարժան էին՝ տապանակին ծառայելու, իսկ պատժվելու՝ արժանի, սակայն Հեղին նրանց չէր պատժում, քանի որ թույլ և անհոգ մարդ էր:

Այս էր պատճառը, որ Աստված, հրեշտակի միջոցով Հեղի քահանայապետին հանդիմանելով, հայտնում է, որ քահանայությունը նրա ցեղից պիտի վերցվի և հավատարիմ ու արժանավոր մեկին տրվի, ինչպես նաև նրա երկու որդիները՝ Ոփնին և Փենեհեսը, նույն օրը պիտի մահանան:

---

[71] Ամուլը յոթ որդի ծնեց, իսկ բազմածինը դադարեց որդի ունենալուց (*Ա Թագ. 2:6*):

Հեղիի՝ որդիների չար վարքի մասին իմանալով՝ նրանց անպատիժ թողնելը նշանակում էր, որ նա որդիների սերը Աստծու սիրուց և պատվից ավելի էր գերադասում: Թեև այս հանդիմանանքից Ոփնին և Փենեհեսը պարտավոր էին զղջալ և իրենց չար վարքից հետ կանգնել, սակայն նրանք, Աստծու երկյուղը և մարդկային ամոթը բոլորովին մոռացած, չեն ապաշխարում, և դրա պատճառով էլ Աստված միառժամանակ իսրայելացիներին մարգարե չի ուղարկում[72]:

Արդարև, Հեղիի և նրա որդիների համար մեծ ողորմություն էր, որ Աստված հրեշտակի միջոցով է Իր սուրբ կամքը հայտնում նրանց: Սակայն նրանք չեն ցանկանում հասկանալ այս շնորհը, ուստի մեկ անգամ ևս Սամվելի միջոցով է հայտնում, որպեսզի իրենց վարքն ուղղելով՝ վերահաս վտանգից զերծ և պատժից ազատ մնան:

Այն ժամանակ Սամվելը դեռևս մանուկ էր, և ննջում էր տապանակի գտնվելու վայրում: Աստված ձայնում է՝ Սամվե՛լ, և սա, կարծելով, որ իրեն կանչողը Հեղին է, նրա մոտ գնալով՝ հարցնում է, թե ինչու է կանչում: Հեղին պատասխանում է. «Ես քեզ չեմ կանչել, գնա քնի՛ր»: Սամվելը գնում է՝ քնելու, և ահա նորից ձայն է լսում՝ Սամվե՛լ, Սամվե՛լ, և պատանին երկրորդ անգամ է գնում Հեղիի մոտ և հարցնում է, թե ինչ է ուզում:

Հիշյալ քահանան վերստին հայտնում է, որ ինքը նրան չի կանչել, և պատվիրում է գնալ քնելու: Սակայն երբ Սամվելը երրորդ անգամ է ձայն լսում և գնում Հեղիի մոտ, այս անգամ քահանայապետը, հասկանալով, որ Աստված է ձայն տալիս Սամվելին, պատվիրում է, որ մի անգամ էլ ձայնը լսելու դեպքում պատասխանի՝ ասելով. «Խոսի՛ր, ո՛վ Տեր, որ ծառադ լսի»:

---

[72] Այդ օրերին Տիրոջ խոսքը հազվագյուտ էր, և տեսիլք չկար, որ գուշակվեր (*Ա Թագ. 3:1*):

Արդարև, երբ Սամվելը քնելով նորից նախկինի նման իր անունն է լսում, Հեղիի պատվիրածով պատասխանում է. «Խոսի՛ր, ո՛վ Տեր, որ ծառադ լսի»[73]: Այն ժամանակ Աստված ինչպես նախկինում հրեշտակի միջոցով Հեղիին էր հայտնել, այնպես էլ այժմ Սամվելին է հայտնում, որ Հեղիի որդիները այնպիսի սարսափելի ձևով պիտի պատժվեն, որ լսողները զարհուրեն[74]:

Թեև առավոտյան Սամվելը վախենում է պատմել լսած սպառնալիքը, սակայն Հեղի քահանայապետի ստիպելով, առանց թաքցնելու ամբողջը պատմում է: Հեղին, Աստծու հրամանին հնազանդվելով, պատասխանում է. «Ինչ որ բարի է, թող Աստված կատարի»[75]: Այսուհանդերձ, իր որդիներին դարձյալ անպատիժ է թողնում, նրանք էլ, անուղղելի մնալով, ամեն օր հարատևում են իրենց չար կենցաղի մեջ[76]:

Սակայն աստվածային շնորհների արժանանալով՝ Սամվելի առաքինությունն ու անունը ողջ ժողովրդի մեջ հետզհետե մեծանում է: Տիրոջ՝ նրա հետ լինելու շնորհիվ նրա ամեն մի խոսք կատարվում է, որից էլ հայտնի է դառնում, որ նա Տիրոջ մարգարեների մեջ Աստծու հավատարիմ մարգարեն է[77]:

Այստեղ ուշադրության է արժանի իսրայելացիների խեղճ և թշվառ վիճակը: Հեղիի որդիների ամբարշտության

---

[73] Խոսի՛ր, Տե՛ր, քո ծառան լսում է (*Ա Թագ. 3:11*):

[74] Տերն ասաց Սամվելին. «Ահա ես Իսրայելի մեջ այնպիսի բաներ պիտի անեմ, որ ով լսի դրանք, ականջները պիտի զնգան» (*Ա Թագ. 3:11*):

[75] Հեղին ասաց. «Տերը թող անի այն, ինչ բարի է իր համար» (*Ա Թագ. 3:18*):

[76] Հեղին շատ էր ծերացել, իսկ որդիները շարունակում էին իրենց ընթացքը, և նրանց ճանապարհը չար էր (*Ա Թագ. 3:21*):

[77] Ամբողջ Իսրայելը, Դանից մինչև Բերսաբե, իմացավ, որ Սամվելը դարձել է Տիրոջ մարգարե (*Ա Թագ. 3:20*):

պատճառով, գալիք պատուհասների հետևանքով կռապաշտների ահագին բազմություն է հարձակվում իսրայելացիների վրա, և թեև սրանք, նույնպես զորք ուղարկելով, պատերազմում են, սակայն իսրայելացիները պարտվելով՝ չորս հազար մարդ է կոտորվում:

Այս պարտությունից հետո ժողովրդի ծերերը, տապանակը Սելովից վերցնելով, բանակատեղի են տանում, որպեսզի նրա շնորհիվ և զորությամբ թշնամուն հաղթեն, և Հեղիի որդիներն էլ տապանակի հետ են գնում: Տապանակը բանակ բերելու ժամանակ իսրայելացիները միաձայն, ցնծությամբ աղաղակում են:

Թեպետ այլազգիները, նրանց աղաղակները լսելով, սկզբից վախենում են, մանավանդ երբ իմանում են, որ պատճառը տապանակի առկայությունն է բանակում, որից էլ ենթադրում են, թե իսրայելացիների Աստվածը նրանց պիտի օգնի, սակայն հետո, երբ իրար քաջալերելով՝ նորից են պատերազմում, այս անգամ իսրայելացիներից երեսուն հազար մարդ է մեռնում, որոնց մեջ նաև Հեղի քահանայապետի երկու որդիները՝ Ոփնին և Փենեհեսը, իսկ մյուսները շտապում են փախչելու, և ուխտի տապանակն էլ թշնամիների ձեռքն է ընկնում:

Այս է պատճառը, որ փախստականներից մեկը, օձիքը պատռած և գլխին մոխիր ցանած, գալիս է Սելով, որտեղ Իսրայելի բանակի և տապանակի մասին պատմելու ժամանակ ամբողջ ժողովուրդը սգի և տրտմության մեծ աղաղակ է բարձրացնում: Հեղին, որ իննսունութ տարեկան էր, և աչքերն էլ կուրացել էին, դռան առջև նստած, աղմկալից ձայներ լսելուն պես հարցնում է պատճառը: Փախստականը, որն այնտեղ էր, պատմում է իսրայելացիների պարտության և Ոփնի և Փենեհես քահանաների մահվան մասին: Երբ Հեղին լսում է, որ

տապանակն էլ թշնամու ձեռքն է ընկել, իսկույն աթոռից ընկնելով՝ մահանում է[78]:

Փենեհեսի հղի կինն էլ, գույժը լսելուն պես երկունքի ցավերով բռնվելով, թեև մի արու զավակ է ծնում, սակայն նրան չի հաջողվում վերապրել, իսկ նորածին մանկան անունը Վայքաբոթ են դնում, որը նշանակում է «իսրայելացիների փառքը վերացավ»[79]:

Լա՛վ մտապահիր. նախկինում տապանակի շնորհիվ մեծ հրաշքներ կատարվելով՝ թշնամիները հաճախ են հաղթվում: Ի՞նչն է պատճառը, որ այս անգամ ոչ միայն թշնամին չի հաղթվում, այլև տապանակն էլ անհավատ այլազգիների ձեռքով գերվում է: Մի՛ զարմացիր, քանի որ սրանով հայտնի է դառնում, թե Աստված ինչպիսի ծանր մեղք է համարում հոգևոր պաշտոնյաների պարտազանցությունը:

Պարզ է, որ եթե Մովսեսի և Հեսուի նման սուրբ մարդկանց միջոցով տապանակը տարվեր բանակ, թշնամին, նախկինի նման հրաշքով պարտվելով, պիտի պատժվեր, սակայն Ոփնին և Փենեհեսը, տապանակին ծառայելով, անարժան էին ողորմության և երկնային օգնության, և Աստված նրանց օրոք խափանում է հրաշքի զորությունը՝ որպես օրինակ և խրատ ապագա սերունդներին:

Մանավանդ հարկ է նկատի ունենալ, որ թեև ժողովուրդը գիտեր այդ քահանաների անարժան վարքի մասին, սակայն մինչ այդ պահը ոչ մեկը, ոչ միայն Աստծու փառքի և պատվի համար նախանձախնդիր լինելով, նրանց չէր ամբաստանում, այլև իրենք առանց երկյուղի ընդհանրապես աստվածային օրենքներին հակառակ էին ընթանում, որից էլ թշնամուց չարաչար հաղթվում են:

---

[78] Եվ երբ նա հիշեց Աստծու տապանակը, Հեղին աթոռից հետ ընկավ դռան մոտ, նրա ողնաշարը ջարդվեց և մեռավ (*Ա Թագ. 4:18*):

[79] Ասելով. «Իսրայելի փառքը վերացավ» (*Ա Թագ. 4:22*):

Օրինա՞կ վերցրու. եթե հին օրենքի ժամանակաշրջանում հոգևոր պաշտոնյանները, Աստծու հրամաններին հակառակ գործելով, պատժվում էին, ովքեր առավել պատժի կարժանանան նրանք, որոնք նույնքան և ավելի մեղավոր են նոր օրենքի գործադրության մեջ:

Պետք չէ առարկել, թե աստված նախապես ինչու չպատժեց Ոփնիին և Փենեհեսին, որպեսզի տապանակը թշնամու ձեռքը չընկներ: Արդարև, մարդու խելքը չի հասնի Աստծու գաղտնի դատաստաններին, միայն թե այս պարագայում կարող ենք ասել, որ նրանք անմիջապես չեն պատժվում, որպեսզի Աստծու համբերությունը, գթությունը, արդարությունն ու զորությունը հայտնի դառնալով՝ նրանց պատժի ժամանակ ամեն մարդ երկնչելով ուղղվի և զգաստանա:

Ինչպես որ նրանց չզղջալու պատճառով պատիժը բոլորին մեծ խրատ լինելուց բացի՝ նրանց պատճառով տապանակի գերվելու մասին լսողները խիստ մեծ սարսափի են մատնվում, նույնպես կռապաշտները, հպարտանալով, որ իրենց կուռքերին ապավինելով՝ տապանակը գերի են տարել, չլսված և չտեսնված ձևով են պատժվում, որպեսզի Աստծու զորությունը հասկանալով՝ այլևս իսրայելացիներին չբռնանան:

Այս ահավոր օրինակից թող խրատվեն նրանք, ովքեր իրենց զավակներին չեն կրթում մանկությունից, քանի որ որդիների սիրո համար Աստծուն բարկացնելով՝ ոչ միայն իրենք, այլև իրենց որդիներն են չարաչար պատժվում հոգեպես և մարմնապես, որի պատճառը միայն իրենք են, այսինքն՝ այն անհոգ և որդեսեր կարծեցյալ ծնողները, որոնք ժամանակին չեն հոգում իրենց զավակների կրթության մասին:

Արդարև, բնական է, որ մարդ սիրում է իր զավակին, սակայն ոմանք, չիմանալով, թե այդ սերն ինչ է, թշնամուց

ավելի են վնասում զավակներին: Քանի որ թշնամին ինչքան էլ անգութ լինի, միայն մարմինը կարող է սպանել, իսկ զավակին անկիրթ մեծացնելով և մեղքից չզգուշացնելով՝ ծնողը հոգին է սպանում:

Եթե սիրում ես զավակիդ, նրան Աստծու երկյուղո՛վ մեծացրու, և մեղքից պահպանելով՝ առաքինության շավղո՛վ առաջնորդիր, քանի որ եթե ուշադիր և հոգածու լինես միայն մարմնին, անասունների աստիճանի կիջնես, քանի որ անասուններն էլ, իրենց ձագերին մեծացնելով, պահպանում են վնասներից: Նամանավանդ եթե ցանկանում ես, որ զավակդ բարի մարդ լինի, նախ դո՛ւ բարի եղիր և չար օրինակ մի՛ եղիր զավակիդ, քանի որ նա, ով ծնողից չար օրինակ է վերցնում, օրըստօրե ավելի է չարանում:

Հարց ԺԴ: **Կռապաշտները տապանակի պատճառով ինչպե՞ս են պատժվում:**

Պատասխան: Այնպիսի վերքերով են պատժվում, որ մարմիններին ուռուցքներ և սաստիկ խոցեր են լինում, որոնց ցավին չդիմանալով՝ շատ մարդիկ են մահանում[80]: Էլ ավելի խայտառակ լինելու համար այդ վերքը միայն նրանց նստատեղին է զոյանում[81]: Նրանց երկրում նաև անհամար մկներ են հայտնվում, որոնք այգիների, դաշտերի և պարտեզների կանաչն ուտում և ավերակ են դարձնում:

Այս պատիժներից բացի, քանի որ այլազգիները տապանակը տարել և Ազովտոս քաղաքի Դագոն չաստծու մոտ էին դրել, ասես հաղթանակը ձեռք էր բերվել նրա զորությամբ և

---

[80] Եվ քաղաքում մահառիթ սոսկում առաջացավ (*Ա Թագ. 5:6*):

[81] Նա թշնամիներին հետ շպրտեց՝ հավիտենական նախատինք տալով նրանց (*Սղ. 77:68*):

օգնությամբ, ուստի կուռքի անզոր լինելը և որևէ մեկին օգնելու անկարող լինելը հայտնի դառնալու համար այդ գիշեր Աստծու հրամանով Դագոն կուռքը երեսնիվայր ընկնում է Աստծու տապանակի առջև:

Առավոտյան կռատան քուրմը տեսնելով նորից այն իր տեղում է կանգնեցնում: Հաջորդ գիշեր դարձյալ գետնին ընկնելով՝ կտոր-կտոր է լինում: Կտորները տարբեր կողմեր են ցրվում, բազուկներն էլ՝ դռան սեմերին ընկնում: Երբ քրմերն իրենց չաստծուն այդ վիճակում են տեսնում, ի պատիվ կուռքի ներս մտնողներին արգելում են սեմին ոտք դնել:

Դու այս կռապաշտ քրմերի հիմարությա՛նը նայիր, որովհետև թեև Դագոնի պատիվը պահպանելու նպատակով այդպիսի կարգադրություն են անում, սակայն նրա խայտառակ տկարությունը և տապանակի զորությունն աշխարհին ավելի հայտնի լինելու պատճառ են դառնում: Քանի որ ներս մտնողները, պատճառը հարցնելով, բնականաբար իմանում են Դագոնի՝ տապանակի առջև կործանվելը:

Հիրավի, այս դեպքերը նրանց համար մեծ պատիժ ու անարգանք էին, սակայն նրանք ոչ թե խրատվում են, այլ իրենց մարմնին գոյացած վերքերը տապանակի պատճառով պատիժ տրված լինելը չեն հասկանում՝ կարծելով, որ բնական երևույթ է:

Սակայն քանի որ հիշյալ վերքերը այլ գավառների մարդկանց մարմիններին չեն գոյանում, այլ հանդիպում են միայն Ազովտոսի և նրա շրջակայքում, նաև մկները բացի Ազովտոսից այլ տեղերում չեն երևում, դրա պատճառով կասկածելով՝ խորհրդակցում են և որոշում փորձելու համար տապանակը այլ տեղ ուղարկել, և եթե տարվելիք վայրում էլ մուկ և վերքեր հայտնվեն, կհամոզվեն, որ տապանակից է:

Այն ժամանակ Գեթ քաղաքի իշխանները համարձակությամբ տապանակն իրենց քաղաք են տանում, որտեղ, ո՞վ

հրաշք, իսկույն մկներ և վերքեր են հայտնվում, բոլորը՝ մեծ ու փոքր, վիրավորվելով և ոչ մի ձևով չկարողանալով նստել, նստելու համար ստիպված հարմարավետ աթոռներ են պատրաստում:

Այս է պատճառը, որ քաղաքի բնակիչները սկսում են բողոքել, թե ինչու են տապանակն այդտեղ բերել, որից էլ քաղաքում մեծ աղմուկ և իրարանցում է լինում: Թեպետ տապանակը բերելու համար զղջում են, այդուհանդերձ, չհավատալով Աստծուց պատիժ լինելուն՝ մի նոր փորձի համար այն Ասկաղոն քաղաք են ուղարկում:

Սակայն Ասկաղոնի բնակիչներն էլ, արդեն համոզված, որ տապանակը բոլոր տեղերում էլ մահ է սփռում, որի փորձառությունը նրանք ևս ունեցել էին, այսպես են տրտնջում Գեթի բնակիչների դեմ. «Մի՞թե տապանակն այստեղ բերեցիք, որպեսզի մեզ կոտորեք», և նրանց աղաղակը երկինք է բարձրանում[82]:

Հասկացի՛ր, թեև նրանք չեն հավատում իսրայելացիների Աստծուն, սակայն նայելով պատուհասի բնույթին և տապանակի պատճառով ծագած զանազան հանգամանքներ հաշվի առնելով՝ նրանց կասկածները հետզհետե սաստկանում են, և նրանց իշխանները ստիպված հավաքվում են և որոշում տապանակն անմիջապես իր տեղն ուղարկել:

Սակայն այն ինչպես հետ ուղարկելն իմանալու համար կռատան քրմերից խորհուրդ են հարցնում, և ըստ նրանց հրահանգների՝ իրենց մարմնի վերքերի և մկների նմանությամբ հնգական ոսկյա պատկերներ սարքելով՝ որպես ընծա տալիս են տապանակին: Քանի որ Ազովտոս, Գազա, Ասկաղոն,

---

[82] Մահից ազատվելով՝ կենդանի մնացած մարդիկ թութքով էին տառապում, և քաղաքի աղաղակը երկինք բարձրացավ (*Ա Թագ. 5:12*):

Գեթ և Ակկարոն քաղաքները նրանց իշխանության ներքո էին, կարգադրում են ընծա տալ նրանց իշխանների թվով, որպեսզի փարավոնի նման չպատժվեն, նաև գյուղերի և ագարակների բնակիչներն են ընծաներ բերում:

Թեև այդ որոշումը կայացնում են՝ չկասկածելով, որ իրենց կրած պատուհասը տապանակի պատճառով է, սակայն մի վերջին անգամ փորձելու ցանկությամբ՝ մի նոր սայլ են պատրաստում, որին երկու անդրանկածին և չլծված երինջներ են լծում՝ դրանց հորթերը տանը թողնելով, և տապանակն ու ընծաները քաղաքից դուրս երինջների կամքին հանձնում:

Վերոհիշյալ իշխաններն էլ հեռվից դիտում են, որ եթե երինջները առանց աջ կամ ձախ շեղվելու իսրայելացիների Բեթսամյուս քաղաքի ճանապարհը բռնեն, իմանան, որ տապանակի պատճառով են իրենց պատուհասած այդ բոլոր պատիժները: Բայց եթե այլ ճանապարհով գնան կամ իրենց հորթերի պատճառով վերադառնալ ցանկանան և լծին անսովոր՝ չցանկանան ուղիղ գնալ, այն ժամանակ ընդունեն, որ օդի աղտոտությունից առաջացած բնական երևույթ են, որ ամբոխը պատիժ է համարում:

Դու այստեղ Աստծու կարողությո՛ւնը տես. որովհետև դեռևս չլծված և ամենևին անվարժ անասունները վարժվածի նման առանց աջ կամ ձախ խոտորվելու, իրենք իրենց կամքին թողած, ճանապարհից չխոտորվելով, ուղիղ Բեթսամյուս քաղաք են գնում, որտեղ Օվսե անունով մի մարդու արտը մտնելով՝ դադար են առնում:

Հունձքի ժամանակն էր, և երբ արտում գտնվողները տեսնում են տապանակը, ուրախությամբ դիմավորելով՝ որպես նշան այնտեղ մի մեծ քար են կանգնեցնում և կառքը կոտրելով՝ այդ փայտերով երինջները ողջակիզում են, որպեսզի դրանք այլևս որևէ այլ նպատակի չծառայեն: Այնտեղ

ղևտացիներ լինելով էլ՝ տապանակն ու ընծաները նշանաքարին են դնում:

Վերոհիշյալ իշխանները, որոնք մինչև Բեթսամյուս էին եկել, երբ տեսնում են, որ տապանակը ղևտացիների ձեռքն անցնելուն պես իրենց մարմնի վերքերն իսկույն բժշկվում են, կատարելապես համոզվում են, որ մինչ այդ իրենց կրած նեղությունները և ցավերը տապանակի պատճառով են, և որ հատկապես իսրայելացիների պաշտած ճշմարիտ Աստծուց են որպես պատիժ իրենց հասել, վերադառնում են Ասկաղոն:

Մտապահի՛ր կռապաշտների այս թշվառ վիճակը. երբ պատերազմ է լինում, չիմանալով իսրայելացիների Աստծու զորությունը՝ յոթ ամիս տեսակ-տեսակ փորձեր են անում (տապանակը յոթ ամիս է մնում նրանց մոտ), որից, իրենց քաղաքները ավերակ դառնալուց բացի, նաև շատ մարդ է մահանում, և մանավանդ կենդանի մնացածների աղաղակները երկինք բարձրանալուց հետո կամա թե ակամա ստիպված են լինում ընդունելու Աստծու զորությունը և զոջալու տապանակը գերեվարելու համար:

Բացի դրանից՝ նախապես ինչքան են ուրախանում, որ մեծ պատերազմ մղելով՝ աստվածային տնօրինությամբ գերել են տապանակը, ապա նույնքան էլ վնաս կրելով և նաև ավելի մեծամեծ պատիժներ ստանալով և վախենալով՝ համաձայնում են սիրահոժար և ընծաներով իր տեղը վերադարձնել:

Արդարև, կռապաշտները, տապանակն Իսրայել ուղարկելով, պատուհասներից են ազատվում, և թեև Բեթսամյուսի բնակիչները տապանակը բերելու համար սաստիկ ուրախանում են, սակայն պատշաճ հարգանքով չպահելու համար նրանք ևս մեծամեծ պատիժների են ենթարկվում:

Քանի որ կարգադրություն կար, որ չի կարելի առանց ծածկոցի տեսնել[83], նրանք բազմությամբ, օրենքին հակառակ և առանց երկյուղի, այն անծածկույթ տեսնելուց բացի, հետաքրքրասիրությամբ միջի պարագաներն էլ են ցանկանում տեսնել, թե արդյոք ամբողջն այնտեղ է, թե ոչ, և ահա նրանց այս հանդգնության համար իսկույն պատժվում են, քանի որ Աստված պատուհասով նրանցից հիսուն հազար յոթանասուն մարդ է այնտեղ սպանում[84]:

Այս պատժից տապանակին ծառայելու երկյուղը կրելով[85]՝ ցանկանում են այլ վայր ուղարկել այն, դրա համար Գարիաթարիմ քաղաքի բնակիչներին լուր են ուղարկում, որ գան և տապանակը այնտեղ տանեն: Թեև այն ժամանակ խորանը Սելովում գտնվելով՝ հարկ էր, որ այն Սելով տանեին, սակայն Գարաթարիմը իրենց Սելովին ավելի մոտ էր, և նրանց բնակիչներին են տեղեկացնում, որ գան և տապանակը տանեն, քանի որ իրենք չէին համարձակվում դրան մոտենալ:

Հիրավի, Բեթսամյուսի բնակիչներին պատուհասած պատիժը բոլորին էր հայտնի, բայց նաև հայտնի լինելով, որ հանցանքը նրանցն է, Գարիաթարիմի բնակիչները չեն վախենում գալուց և տապանակը տանելուց: Սակայն ոչ թե համարձակությամբ և խառնիխուռն բազմությամբ, այլ գեղեցիկ կանոնավորությամբ, մեծ պատվով և հարգանքով վերցնելով՝ Գարիաթարիմ քաղաք են տանում, որտեղ Ամինադաբ անունով մի անձի տանը մի հատուկ տեղ և քահանա հատկացնելով՝ տապանակն այնտեղ է մնում ամբողջ քսան տարի:

---

[83] Կահաթի որդիները հենց այնպես թող ներս չմտնեն սրբությունները տեսնելու համար, թե ոչ կմեռնեն (*Թվեր 4:20*):

[84] ….որ տեսել են Տիրոջ ուխտի տապանակը: Տերը նրանցից հիսուն հազար յոթանասուն մարդ կոտորեց (*Ա Թագ. 6:18,19*):

[85] Ո՞վ կարող է կանգնել այս սուրբ Տեր Աստծու առաջ (*Ա Թագ. 6:20*):

Հարց ԺԵ: **Հեղիի մահից հետո ո՞վ է լինում դատավոր:**

Պատասխան: Սամվելը: Քանի որ նրա առաքինությունը բոլոր իսրայելացիներին էր հայտնի, ուստի նրան միաձայն դատավոր են ընտրում: Սամվելը ոչ մի վայրկյան չի թերանում՝ կատարելու Աստծու հրամանները ժողովրդին ամեն կերպ սովորեցնելու պարտականությունը: Մանավանդ նա հարատև աղոթում էր, և ժողովուրդը նրանից բարի օրինակ է վերցնում. նրա օրոք օրենքին հակառակ իրենց նախկին վարքից հեռանում են, և կարող ենք ասել՝ կատարելապես ուղղվում են[86]:

Դու Սամվելի հավատքի՛ն նայիր. որովհետև իսրայելացիների դատավորն է դառնում, սակայն չի փորձում տապանակը թշնամու ձեռքից ազատելու համար զորք գումարել և նրա վրա հարձակվելու շարժում և նախաձեռնություն անել, միայն իր ողջ ուշադրությունը նվիրում է ժողովրդին ուղղորդելուն և աղոթքին:

Քանի որ գիտեր, որ տապանակը իսրայելացիների մեղքի պատճառով է գերվել, և եթե իսրայելացիները զղջալով հնազանդության շավղին կանգնեն, Աստված կարող է այն առանց պատերազմի էլ ազատագրել: Արդարև, երբ իսրայելացիները իրենց չար ճանապարհից հետ են դառնում, Աստված էլ մեծ հրաշքով տապանակը փրկում է թշնամու ձեռքից, ինչպես նշվել է վերը:

Այնուհետև Սամվելը իսրայելացիներին հավաքում է Մասեփաթում, որպեսզի Աստծու պատվիրաններն ու օրենքները նրանց նորից հիշեցնելով՝ խոստում ստանա, որ այլևս ոչ մի անգամ օրենքին հակառակ վարք չեն ունենա, և եթե նորից բարկացնեն Աստծուն, մի արարքով ցույց է տալիս, որ դարձյալ

---

[86] ....և ամբողջ Իսրայելը հայացքը չէր կտրում Տիրոջից (*Ա Թագ. 7:2*):

կպատժվեն: Այսինքն՝ ջուր հանել տալով՝ Աստծու առջև՝ գետնին է թափում:

Քանի որ ինչպես գետնին թափված ջուրն է ոչնչանում, այդպես էլ Աստծու դեմ գործող ժողովուրդը պետք է գետնին թափված ջրի նման ոչնչանա: Արդարև, ժողովուրդը սույն օրինակը ազդու խրատ ընդունելով՝ բոլորը միահամուռ զղջում են և խոստովանում, որ Տիրոջ առջև մեղավոր են և այդ օրը ծոմ պահում[87]:

Իսկ այլազգիները, լսելով իսրայելացիների հավաքվելու մասին և կարծելով, որ պատերազմելու նպատակ ունեն, մեծ բազմությամբ պատրաստվում են հարձակվելու նրանց վրա: Թշնամու սույն շարժման մասին իմանալով՝ ժողովուրդը վախենում է և Սամվելին խնդրում, որ իրենց փրկության համար անդադար աղոթի Տեր Աստծուն, քանի որ իրենք թշնամու դեմ դուրս գալու բավականին զորություն չունեն[88]:

Երբ Սամվելը, զոհ մատուցելով, աղոթում էր, հանկարծ թշնամին հարձակվում է մեծ բազմությամբ, սակայն Աստծու կամեցողությամբ իսկույն սարսափելի որոտ և զարհուրելի ձայներ են լսվում, որոնցից թշնամու զորքի մեջ իրարանցում է ընկնում, բոլորովին շփոթվում են, փրկվելու համար սկսում են փախչել:

Այն ժամանակ իսրայելացիները, նրանց հետևից ընկնելով, մեծ վնաս են հասցնում, և հեշտությամբ հաջողվում է առանց որևէ վնաս կրելու մեծ մասին կոտորել[89]: Եվ քանի որ այս հաղթանակի համար Աստծու հատուկ օգնությանն էին պարտա-

---

[87] ...ջուր հանեցին ու թափեցին գետին, Տիրոջ առջև, այդ օրը ծոմ պահեցին և ասացին. «Մեղանչել ենք Տիրոջ առաջ» (*Ա Թագ. 7:6*):

[88] Իսրայելացիներն ասացին Սամվելին. «Մի՛ դադարիր աղաղակելուց քո Տեր Աստծուն մեզ համար» (*Ա Թագ. 7:8*):

[89] Տերը բարձր ձայնով որոտաց այլազգիների վրա, և նրանք շփոթվելով փախան իսրայելացիների առջևից (*Ա Թագ. 7:10*)

կան, ուստի Նրա այս բարերարության հիշատակը անմոռաց պահելու համար Սամվելը, մի քարե կոթող կանգնեցնելով, այդ վայրի անունը Աբենեզեր («օգնող վեմ») է դնում, որպեսզի ապագա սերունդներն իմանան, որ մինչև այնտեղ Աստված օգնել է իսրայելացիներին:

Արդարև, մինչ այժմ պատմած դեպքերից հայտնի է, որ երբ կռապաշտները, և՛ իսրայելացիների սրից, և՛ աստվածային հարվածներից կոտորվելով, տկարանում էին, միառժամանակ հանդարտ և խաղաղ էին մնում, իսկ երբ հարձակվելու համար իրենց բավականին զորեղ էին զգում, դարձյալ իսրայելացիների երկիր արշավելով՝ բազում վնասներ էին հասցնում:

Սակայն այս անգամ Աստծու ողորմությամբ և Սամվելի աղոթքով նրանք այնքան են կոտորվում, որ վախենում են և Սամվելի օրոք այլևս չեն համարձակվում հարձակվել իսրայելացիների վրա: Բացի դրանից՝ նախկինում իսրայելացիներից բռնի գրավված վայրերը վերադարձնում են, և այսպիսով, իսրայելացիներն ազատվում են թշնամուց:

Հարկ է օրինակ վերցնել Սամվելի առաքինությունից: Թեպետ թշնամին տկարանում է, և իսրայելացիներն էլ իրենց չար ճանապարհից հետ են դառնում, բայց նա չի դադարում դարձյալ ժողովրդին խրատելուց: Նա, իր ծննդավայր Արիմաթիմ քաղաքում բնակվելով, այնտեղ սեղան է կառուցում, որպեսզի առանձին աղոթի և երկրպագություն մատուցի Աստծուն:

Սակայն միգուցե ժողովուրդը, նորից մեղանչելով, Տիրոջ բարկությունն իր վրա հրավիրի, և նա, տարեցտարի հատկապես նրանց վիճակը իմանալու, Աստծու օրենքը քարոզելու, Նրա սուրբ կամքը ժողովրդին հայտնելու և նամանավանդ նորահաս սերնդի կրոնական և բարոյական դաստիրակության գործը հսկելու համար անդադար քաղաքից քաղաք շրջելով, վերստին Արիմաթիմ էր վերադառնում այնպիսի գոհ

և խաղաղված մտքով, որ միայն պարտաճանաչ անձանց է հատուկ:

Սամվելն արդեն ծերացել էր, և երկու որդիներին, որոնցից մեկի անունը Հովել էր, մյուսինը՝ Աբիա, դատավոր է կարգում: Սակայն նրանք, ընչասեր լինելով, արդարությամբ չեն դատում: Ժողովուրդը, դժգոհ նրանց այս վարմունքից, Արիմաթիմ գալով, Սամվելին ասում է. «Ահավասիկ դու ծերացար, քո որդիները քո շավղին չեն հետևում, այլ ազգերի նման մեզ թագավո՛ր կարգիր, որ մեզ կառավարի»[90]:

Ժողովրդի այս պահանջը Սամվելին նպատակահարմար չի թվում[91], քանի որ Աստված, իսրայելացիների թագավոր չկարգելով, հատկապես ցանկացել էր Ինքը կառավարել[92], այժմ այլ ազգերի նման ժողովուրդը ցանկանում էր մարդկանց իշխանությանը ենթարկվել:

Բայց քանի որ բոլորը միավորվել էին սրա շուրջը, այս է պատճառը՝ մերժողական պատասխան չի տալիս, գործը աղոթքով Աստծու կամքին է հանձնում, և Աստված պատասխանում է, որ ժողովրդի խնդրանքն ընդունի. «Նրանք մինչև հիմա ինչպես Ինձ արեցին, այդպես էլ քեզ կանեն, քանի որ ոչ թե քեզ մերժեցին, այլ Ինձ մերժեցին, որ իրենց վրա չթագավորեմ»[93]:

---

[90] Ասացին նրան. «Դու, ահա, ծերացել ես, իսկ քո որդիները քո ճանապարհով չեն գնում: Արդ, մեզ վրա մի թագավո՛ր դիր, որ մեզ դատավորություն անի, ինչպես բոլոր ազգերի մոտ է» (*Ա Թագ. 8:5,6*):

[91] Այս բանը Սամվելին դուր չեկավ (*Ա Թագ. 8:7*):

[92] Նրանք պիտի գիտենան, որ ե՛ս եմ իրենց Տեր Աստվածը, որ իրենց հանեց Եգիպտացիների երկրից, որպեսզի նրանք տան իմ անունը, և ես լինեմ իրենց Տեր Աստվածը (*Ելք 29:46*):

[93] Տերն ասաց Սամվելին. «Լսի՛ր ժողովրդի ձայնը…. Նրանք ոչ թե քե՛զ անարգեցին, այլ չուզեցին, որ ե՛ս թագավորեմ իրենց վրա» (*Ա Թագ. 8:8*):

Ինչքան էլ Աստծու այս խոսքը ծանր հանդիմանություն էր ամբողջ ժողովրդին, Սամվելի համար մխիթարություն էր: Քանի որ նրանք, ինչպես Աստծու բարերարությունը չհասկանալով, կուռք էին պաշտում, նույնպես և Սամվելի լավությունը մոռանալով՝ խնդրում են թագավոր կարգել՝ առանց մտաբերելու այն պարտքը, որը ստիպված են լինելու վճարելու թագավորին:

Այս է պատճառը. որ Աստծու հրամանով Սամվելն այդ պարտականությունների, ինչպես նաև թագավորների մասին տեղեկություններ տալու համար ժողովրդին հայտնում է. «Թագավորը ձեր որդիներին բռնությամբ իրեն ծառայության պիտի հատկացնի, պիտի գրավի ձեր կալվածքները, ձեր ստացվածքներից և բերքից տասանորդ վերցնի, եթե հետո գանգատ անեք, Աստված չի լսի», սակայն ժողովուրդը ոչ մի կերպ չի ցանկանում հասկանալ:

Հիրավի, մինչ այն ժամը իսրայելացիները թագավոր չունեին, սակայն Աստծու ողորմությամբ և նրա հզոր պաշտպանությամբ բոլոր ազգերից ամեն ինչով ավելի փառք ու պատիվ ունեին, և միայն այն ժամանակ, երբ նրանք մեղանչում էին, Աստված բարկանալով կռապաշտներին նրանց դեմ էր ուղարկում, որպեսզի զոջալով քավեն իրենց մեղքը, և երբ զոջում էին, իսկույն ազատում էր նրանց, ինչպես հայտնի է մինչ այժմ պատմածներից: Ուրեմն նրանք թագավոր խնդրելու փոխարեն պարտավոր էին միշտ Աստծու կամքը կատարել, սակայն, դժբախտաբար, իրենց հանցանքները չմտաբերելով՝ թագավոր են ցանկանում, կարծես նրա զորությամբ թշնամուց զերծ և ազատ են մնալու[94]:

Սամվելը Աստծու հրամանով Սավուղ անունով մի անձնավորության իսրայելացիների թագավոր է կարգում:

---

[94] Ժողովուրդը չուզեց լսել Սամվելին և ասաց նրան. «….Մենք ևս այլ ազգերի նման լինենք» (*Ա Թագ. 8:20,21*):

Հարց ԺԶ: **Սավուղը Իսրայելի ո՞ր ցեղից, ո՞ւմ որդին և ինչպիսի՞ մարդ էր:**

Պատասխան: Բենիամինի ցեղից և Կիս անունով մի քաջ հողագործի որդին էր. բարձրահասակ էր և վայելչագեղ, որի նմանը իսրայելացիների մեջ չկար: Նա մի ծառայի հետ հոր կորած էշերին փնտրելու է գնում, և երեք օր շրջելով՝ չեն կարողանում գտնել:

Երբ նա Սամվելի գտնվելու վայրն է հասնում, մտադրվում է հետ դառնալ, որպեսզի հայրը չմտատանջվի իր համար: Սակայն ծառան հայտնում է, որ այնտեղ մի մարդ կա, որի խոսքն անկասկած կատարվում է, և առաջարկում է գնալ՝ նրանից խորհուրդ հարցնելու:

Սավուղը համաձայնում է և երբ հարցուփորձ է անում, թե որտեղ է մարգարեն, հանդիպում է Սամվելին, որին էլ հարցնում են, և նա պատասխանում է, որ իրենց փնտրած մարգարեն ինքն է: «Այսօր ինձ մո՛տ անցկացրեք, վաղը ձեզ ճանապարհ կդնեմ,— ասում է նա և ավելացնում,— իսկ էշերի համար մի՛ մտահոգվիր, քանի որ արդեն գտնվել են, և Իսրայելի փառքն ու տերությունն էլ քոնն են»:

Մարգարեն այս խոսքերն է ասում, քանի որ Աստված իրեն հայտնել էր, որ Իսրայելում նա պիտի թագավորի: Սակայն Սավուղը, փոքր ցեղից լինելով, իրեն թագավորելու անարժան է համարում, թեև մարգարեի խոսքերից զարմանում է և նրան առարկում, բայց Սամվելը նրան իր տուն է տանում և այդ գիշեր արժանի ընդունելություն կազմակերպում ցանկալի հյուրի համար:

Առավոտյան ծառային առաջ ուղարկելով, երբ երկուսով առանձին են մնում, օծում է Սավուղի գլուխը և համբուրելով հայտարարում, որ Աստված նրան Իր ժողովրդի թագավոր է կարգել, որպեսզի թշնամիներից ազատի նրան:

Լա՛վ մտապահիր. Սավուղը հոր էշերը փնտրելու ժամանակ թագավոր է կարգվում, և որպեսզի այս դեպքը պատահական մի բան չհամարվի, այլ Աստծու գերագույն կամքով կատարված, ի նշան դրա՝ Սամվելը հայտնում է Սավուղին. «Այսօր վերադարձիդ Ռաքելի գերեզմանի մոտ երկու մարդու պետք է հանդիպես, որոնք շտապելով վազում են, որ քեզ հայտնեն, որ հորդ էշերը գտնվել են: Հետո առաջ գնալով մինչև Դեբովրայի կաղնին՝ երեք անձինք պիտի դիմավորեն քեզ, որոնցից մեկը՝ երեք ուլ, երկրորդը՝ երեք աման կերակուր, երրորդը՝ մի տիկ գինի են բարձած տանելու, և քեզ ողջունելով՝ երկու հաց պիտի տան քեզ: Երբ քաղաք մտնես, երաժիշտ մարգարեների պիտի հանդիպես, որոնց խառնվելով՝ դու նույնպես բարձրյալ Աստծու շնորհով պիտի մարգարեանաս: Արդ, երբ այս նշանները տեղի ունենան, և ամեն ինչ ըստ իմ զուշակության կատարվի, այն ժամանակ քա՛ջ եղիր և գործադրի՛ր զորությունդ, քանի որ Տերը քեզ հետ է: Ապա Գաղգաղա գնալով՝ այնտեղ յոթ օր սպասի՛ր, մինչև ես գամ, Աստծուն պատարագ մատուցեմ և անելիքդ էլ ասեմ»: Արդարև, ամեն ինչ ըստ Սամվելի ասածի կատարվելով՝ աստվածային շնորհն էլ տրվում է Սավուղին[95], որպեսզի իր նոր իրավիճակին համապատասխան խորհի և ըստ այդմ գործի:

Սավուղը հողագործ էր, և երբ սկսում է մարգարեանալ, ամեն մեկը մյուսին զարմանքով հարցնում էր. «Մի՞թե Սավուղն էլ է մարգարե», և այս խոսքը ժողովրդի մեջ է տարածվում և ընդհանրական առած դառնում[96]: Սակայն Սավուղը թագավոր կարգվելու մասին բնավ ոչ մեկին չի հաղորդում, մինչև Սամվելն անհրաժեշտ ձևով անձամբ է հայտնում:

---

[95] Նրա վրա Աստծու հոգին շարժվեց, և նա նրանց մեջ մարգարեություն արեց (*Ա Թագ. 10:10*):

[96] Այս առթիվ ասացվածք ստեղծվեց, թե՝ «Սավո՞ւղն էլ մարգարեների մեջ է» (*Ա Թագ. 10:12*):

Թեև Սամվելը Աստծու հրամանով է Սավուղին թագավոր կարգում, սակայն այս գործը իրենց՝ երկուսի մեջ գաղտնի մնալու պատճառով Սամվելը ցանկանում է ժողովրդի առջև հաստատել, որ նա արժանի է թագավորության, որպեսզի բոլորը հնազանդվեն նրան, ինչպես հարկ է:

Ուստի նա ժողովրդին հավաքում է Մասեփաթում և իսրայելացիների տասներկու ցեղերի անունով վիճակ է գցում, որով թագավորությունը Սավուղին է վիճակվում: Այդ պահին Սավուղը ժողովրդի մեջ էր թաքնվել, Սամվելը աստվածային հայտնությամբ գտնում է նրան և ժողովրդին ներկայացնելիս տեսնում, որ նա հասակով բոլորից բարձր է, տեսքով էլ խիստ վեհաշուք և ակնածելի: Այն ժամանակ ժողովուրդը, նրան թագավոր ընդունելով, համամիտ և հնազանդ, միաձայն գոչում է. «Կեցցե՛ արքան»:

Սամվելը ժողովրդին նորից է հայտնում թագավորի իրավունքի և պարտքի մասին, որն էլ գրի է առնում, որպեսզի հետո չգանգատվեն, որ թագավորն իրենց հարստահարում է, և որ նախապես հայտնել էր:

Հետո Սամվելի հրամանով ամեն մարդ իր տեղն է գնում: Սավուղը նույնպես Գաբաա քաղաք է գնում՝ իր հոր տուն: Թեև միայն որոշ ժանտ և չար մարդիկ սկսում են ասել, թե դա ով է, որ իրենց ազատի, նաև ընծա չեն բերում, սակայն Սավուղը ձևացնում է՝ նրանց խոսքը չի լսում[97], և նախկինի նման հողագործությամբ է զբաղվում, մինչև թագավորական իշխանությունը վարելու հարմար ժամանակը գա:

Մի ամիս հետո պատեհ առիթը ներկայանում է, քանի որ ամոնացի կռապաշտ թագավոր Նաասը պաշարում է

---

[97] Բայց կային նաև չար մարդիկ, որոնք ասում էին. «Ո՞վ է սա, որ մեզ պիտի փրկի»: Եվ նրանք քամահրեցին նրան ու ընծաներ չմատուցեցին (իսկ նա կարծես չէր լսում) (*Ա Թագ. 10:27*):

Գաաղադի կողմերում գտնվող Հաբիս քաղաքը, և բնակիչները, անկարող ընդդիմանալու, առաջարկում են, որ Նաասը իրենց հետ դաշինք կնքի, և իրենք էլ պատրաստ են խոնարհաբար ծառայելու նրան:

Նաասը նրանց պատասխանում է, որ եթե իրենց աջ աչքերը կհանեն, այն ժամանակ դաշինք կկնքի: Հաբիսի ժողովուրդը ճարահատյալ յոթ օր ժամանակ է խնդրում, որպեսզի Իսրայելի քաղաքներ մարդիկ ուղարկեն, և եթե յոթ օրվա ընթացքում իրենց ազատող չգտնվի, այն ժամանակ հոժարակամ անձնատուր լինեն Նաասին:

Թեև սույն առաջարկն անընդունելի էր, սակայն Նաասը, նրանց տկար վիճակն իմանալով, այսպիսի ապօրինի առաջարկ է ներկայացնում, որպեսզի իսրայելացիներին ավելի անարգի: Ուստի խնդրած ժամկետը շնորհում է՝ վստահ, որ յոթ օրվա ընթացքում չեն կարող որևէ մեկից օգնություն գտնել: Արդ, Հաբիսի բնակիչները, Սավուղի թագավոր կարգվելու մասին իմանալով, նրա մոտ մարդ են ուղարկում, որ որպես իրենց թագավոր՝ թշնամուց ազատի:

Սակայն քանի որ Սավուղը նախկինի պես երկրագործությամբ էր զբաղվում և այդ ժամանակ էլ արտ էր գնացել, ուստի Գաբաա քաղաքի բնակիչները, վերոհիշյալ գույժը լսելով, մեծ վայնասուն են բարձրացնում և սկսում են լալ ու ողբալ: Երբ Սավուղը վերադառնալով տեղեկանում է իրավիճակին, նրա հոգին սաստիկ զայրանում է, մանավանդ Աստծուց զորություն ստանալով[98]՝ երկու եզ է մասնատում և դրանցից մի-մի կտոր Իսրայելի քաղաքներ ուղարկելով՝ հայտարարում է. «Ով որ Սավուղի և Սամվելի հետ պատերազմի չգա, նրա եզներն այսպես պիտի անել»:

---

[98] Տիրոջ հոգին շարժվեց Սավուղի վրա (*Ա Թագ. 11:6*):

Աստված էլ ժողովրդի սրտում երկյուղ է զցում[99], որից էլ բոլորը միասին և իրար խրախուսելով՝ վեց օրվա ընթացքում վեց հարյուր յոթանասուն հազար մարդ է հավաքվում՝ պատերազմելու եռանդագին տենչով: Այն ժամանակ Սավուղը Հաբիսի բնակիչներին լուր է ուղարկում, որ նրանք վաղը կազատվեն: Այս լուրից նրանք իհարկե սրտապնդվում և ուրախանում են, սակայն որպեսզի թշնամին չզգա, որ իսրայելացիները պատերազմելու պատրաստ են, իբր թե օգնություն գտնելու անկարող, հուսահատ՝ Նաասին լուր են ուղարկում, որ վաղը նրան անձնատուր կլինեն, ինչ ուզում է, իրենց անի:

Նաասի՝ այս տեղեկությունից ուրախացած, անհոգ և անպատրաստ ժամանակ Սավուղը հանկարծ նրա բանակի վրա է հարձակվում, իսրայելացիները այնքան են կոտորում թշնամուն, որ կենդանի մնացածներից երկուսը, մեկտեղ մնալ չկարողանալով, յուրաքանչյուրը, մի- մի կողմ փախչելով, հազիվ է կարողանում ազատվել:

Հասկացի՛ր. Սավուղը, ինչպես վերը հիշատակվել է, իրեն թագավոր լինելու արժանի չէր համարում, և թեև վատաբարո մարդիկ էլ նրան արհամարհում են՝ ասելով, թե նա ով է, որ իրենց փրկի, սակայն Աստծու ողորմությամբ նրա ձեռքով այսպիսի մեծ հաղթանակ տանելուց հետո նրա անունը ժողովրդի մեջ այնպես է փառավորվում, որ նրա հակառակորդներին սպանել են ցանկանում:

Սավուղը, չցանկանալով, որ իր պատճառով Իսրայելի ժողովրդից մեկը մեռնի, վեհանձնորեն նրանց հանցանքներին ներում է շնորհում, որով էլ իր սրտի գթության մի փայլուն ապացույց է տալիս ժողովրդին և այսպիսով, բոլորին ուրախություն

---

[99] Տիրոջ ահն ընկավ Իսրայելի ամբողջ ժողովրդի սիրտը (*Ա Թագ. 11:7*):

և գոհունակություն պատճառելով, ջանում է գրավել նրանց ջերմ սերը և համակրությունը:

Հետո Սամվելը, Իսրայելի բոլոր ցեղերին Գաղգաղայում հավաքելով, բոլորի ներկայությամբ Սավուղի գլխին նորից յուղ լցնելով, նրան թագավոր է օծում, և ողջ ժողովուրդը ցնծության տոնախմբություն է կազմակերպում՝ Սամվել մարգարեի և Սավուղ թագավորի ներկայությամբ զոհ մատուցելով և շնորհակալ լինելով Աստծուց, որ հաճեցել է իրենց թագավոր և մի այդպիսի փառավոր հաղթանակ տալ անողորմ թշնամու նկատմամբ:

Այստեղ հարկ է հիանալ Սամվելի առաքինությամբ. որովհետև մինչ այդ պահը նա իշխում և կառավարում էր ողջ Իսրայելը, ուստի Սավուղի թագավոր լինելով, ազգի կառավարումը նրան հանձնելով՝ խնդրում է, որ ինքը գնա և իր տանը բնակվի:

Սակայն ժողովուրդը դեռևս չցրված, ինքն իրեն արդարացնել ցանկանալով, Աստծուն և թագավորին վկայակոչելով՝ ժողովրդին առաջարկում է, որ եթե իր իշխանության ընթացքում մեկից մի բան է վերցրել կամ տկարին զրկել և հարստահարել է, թող հայտնի, որպեսզի իսկույն հատուցի նրան:

Ամբողջ ժողովուրդը միահամուռ հայտարարում և խոստովանում է, որ նա ոչ մեկին չի հարստահարել, և երբ այսպես բոլոր առումներով, ժողովրդի վկայությամբ վավերացվում է նրա հավատարմությունը, այն ժամանակ Սամվելը, նորից խոսելով և սկսելով նրանց հայրերի ժամանակներից, թվում է Աստծու արած բարիքները և միևնույն ժամանակ հիշեցնում նրանց օրինազանցությունները, որոնց համար արդարացիորեն պատժվել են:

Հետո Սամվելն ավելացնում է. «Հիմա, եթե դուք և ձեր թագավորն Աստծուն ծառայեք, Աստված ձեզ պատժելու

փոխարեն ամենայն բարիքներով կլիացնի և կփառավորի, իսկ եթե Նրա հրամանների և օրենքների դեմ մեղանչեք, չարաչար կպատժվեք»: Սամվելը, ցանկանալով խոսքերը հրաշքով էլ հաստատել, աղոթում է առ Աստված և խնդրում, որ որոտ լինի, և անձրև էլ տեղա, որպեսզի ժողովուրդը հասկանա իր խոսքի ճշմարտությունը, այլև իրենց տկարությունն ու հանցավորությունը:

Թեև հունձքի ժամանակ էր, երբ Երուսաղեմի կողմերում այդ ժամանակ անձրև չի տեղում, սակայն Սամվելի՝ աղոթքի կանգնելուն պես Աստծու հրամանով իսկույն խիստ որոտ է լինում և սաստիկ անձրև տեղում[100], որից բոլորը վախենալով խոստովանում են, որ իրենք հանցավոր են Տիրոջ առջև և Սամվելին խնդրում են, որ աղոթի, որպեսզի իրենք չմեռնեն:

Սամվելը, տեսնելով նրանց զղջումը, քաջալերում է, որ չվախենան և մխիթարական խոսքերով հորդորում է, որ միշտ հավատարմությամբ ծառայեն Աստծուն, որպեսզի խաղաղությամբ ապրեն:

Սավուղի թագավոր լինելուց մինչ այն ժամանակ մեկ տարի էր անցել, ուստի Սուրբ գրքում գրված է, որ Սավուղը թագավոր լինելու ժամանակ մեկ տարեկան էր[101]:

Այնուհետև Սավուղը ժողովրդին արտոնություն է տալիս, որ ամեն մեկը վերադառնա իր տուն, իսկ ինքը, երկու հազար մարդ վերցնելով, Մաքմաս կոչվող վայրն է գնում, հազար մարդ էլ որդու՝ Հովնաթանի հետ թողնում: Այդ ժամանակ Գաբաա քաղաքի մոտակայքում մի աշտարակ դեռևս թշնամու ձեռքին էր, իսրայելացիները դրա պատճառով խիստ

---

[100] Սամվելը Տիրոջն աղաղակեց, ու Տերը նույն օրը որոտ և անձրև ուղարկեց (*Ա Թագ. 12:18*):

[101] Սավուղը Իսրայելում մեկ տարի թագավորելուց հետո (*Ա Թագ. 13:1*):

նեղվում էին, ուստի Հովնաթանը, հանկարծ հարձակվելով, բռնի ուժով գրավում է այն:

Թեպետ սրա համար ամբողջ ժողովուրդն ուրախանում է, սակայն պարզ էր, որ թշնամին հանգիստ չի մնալու, դրա համար էլ Հովնաթանը այն պահպանելու համար հազար հոգով Գաբաայում է մնում:

Սավուղն էլ, երկու հազար զորքով Գաղգաղա գնալով, Սամվելին և ժողովրդին հրավիրում է՝ այնտեղ հավաքվելու, որպեսզի Աստծուն զոհ մատուցելուց հետո թշնամու դեմ դուրս գան, քանի որ այն ժամանակ տապանակը ժամանակավորապես այնտեղ էր:

Բայց երբ թշնամին, երեսուն հազար մարտակառքերով, վեց հազար հեծյալով և ծովի ավազի նման անհամար զորքի բազմությամբ Մաքմաս գալով, բանակ է դնում, իսրայելացիները վախից չեն կարողանում Սավուղի մոտ գնալ, ուստի պատսպարան են որոնում քարայրերում, գոմերում և ցամաքած ջրհորներում:

Սրանից բացի՝ Սավուղի մոտ եղած զորքն էլ սկսում է խույս տալ, որից էլ նա մասամբ երկյուղից, մասամբ անհամբերության պատճառով առանց Սամվելի գալուն սպասելու և դեռ յոթ օրը չլրացած, շտապում է՝ անձամբ զոհ մատուցելու: Բայց քանի որ Սամվելը նախապես պատվիրել էր Գաղգաղա գնալ և յոթ օր այնտեղ սպասել, մինչև ինքը գա և զոհ մատուցի, ուստի Սամվելի գալուց առաջ զոհ մատուցելը մեծ հանցանք էր:

Երբ զոհաբերությունը հազիվ կատարել վերջացրել էին, Սամվելը գալով հանդիմանում է Սավուղին, թե ինչու է Աստծու հրամանին հակառակ գործում: Սավուղը ինքն իրեն արդարացնելու նպատակով առարկում է. «Ժողովուրդը ցրվեց, իսկ դու չեկար, վախեցա, որ թշնամին մեզ վրա կհարձակվի», սակայն այս առարկությունն էլ չի ընդունվում:

Մանավանդ այս խոսքերով նա իրեն անմեղ համարելով՝ հանցանքը կրկնապատկում է, քանի որ Սամվելը նրան հայտնում է հանցանք կատարելը, նա էլ, իբրև մի անմեղ, զանազան պատրվակներ է բերում:

Այստեղ հարկ է նկատել, թե ինչպիսին է լինում անհամբեր և հանցանքը չընդունող, չզղջացող մարդու վիճակը, քանի որ Սավուղի այսպիսի վարքի պատճառով Սամվելը վճռում է, որ «թագավորությունը նրանից վերցվելով Աստծուն հաճելի և արժանագույն մարդու է տրվելու», և իսկույն իր տեղն է վերադառնում:

Հարց ԺԷ: **Սավուղը Սամվելի հանդիմանությանը որևէ պատասխան տալի՞ս է:**

Պատասխան: Չի տալիս: Մանավանդ ձեռնամուխ է լինում եռանդուն գործելու. նա նորից Գաբաա է գնում, որպեսզի որդու՝ Հովնաթանի հետ թշնամուն դիմակայի: Սակայն զորքը ցրված լինելով՝ նրա մոտ ընդամենը վեց հարյուր մարդ կար, և սրանք նաև զենք չունեին: Քանի որ այն ժամանակ թշնամին, զորեղ լինելով, իսրայելացիներին թույլ չէր տալիս երկաթագործությամբ զբաղվել, որպեսզի զենք չունենան, մինչև անգամ հարկադրված՝ հողագործության գործիքները թշնամուն էին պատրաստել տալիս:

Այս էր պատճառը, որ Սավուղից և Հովնաթանից բացի՝ զինվորների ձեռքին սուր և նիզակ չկար, իսկ մնացյալ զորքը ստիպված էր նետերով, պարսատիկով, լախտերով և երկրագործական զանազան գործիքներով պատերազմելու, և այս վիճակը պակաս չէր վհատեցնում ժողովրդին, որը կռվից խույս էր տալիս:

Թեև Հովնաթանը տեղյակ էր ժողովրդի խիստ տկար այս վիճակին, սակայն այն ժամանակ թշնամին տարածվել էր

Իսրայելում և սկսել էր շատ վայրեր քանդել և ավերել: Նա հույսն Աստծու զորությանը և օգնությանն է դնում, և խոստովանելով, որ Աստծու համար բազմությունը նշանակություն չունի, և Նա կարող է Իրեն հավատարիմներին պաշտպանել, երբ նրանք քիչ են ու սակավաթիվ, իր կապարճակիր ծառային ասում է. «Գնանք թշնամու կողմը, եթե մեզ տեսնելով՝ *մի՛ եկեք, հե՛տ գնացեք* ասելու լինեն, չգնանք, իսկ եթե ասեն՝ *եկե՛ք*, հարձակվենք»[102]:

Երբ այսպիսի կատարյալ հավատով զինված՝ Հովնաթանը, հորից գաղտնի, գաղտագողի անցնելով կիրճերով, նեղ կիրճ է մտնում, այնտեղ գտնվող զինվորները տեսնելով ձայնում են՝եկե՛ք, որից խրախուսված՝ Հովնաթանն իսկույն բացահայտորն ասպարեզ է դուրս գալիս և նետով ու քարերով թշնամուց քսան մարդ սպանում: Սա տեսնելով, իսրայելացիների հարձակվելու վախից՝ թշնամու բանակում իրարանցում և աղմուկ է սկսվում, և մանավանդ Աստված նրանց սրտերում երկյուղ և սարսափ է գցում[103], բոլորովին ապշում են, և մեծ խառնաշփոթությունը գնալով սաստկանում է:

Գաբաայում գտնվող Սավուղի հսկողները, թշնամու բանակի սույն աղմկալից վիճակը տեսնելով, նրան են հասցնում, և նա հրամայում է ստուգել զորքը ՝ պարզելու, թե իրենցից ով է գնացողը, և երբ Հովնաթանին ու նրա կապարճակրին չեն գտնում, Սավուղը ցանկանում է Աբիա քահանայի միջոցով Աստծուն հարցնել (այն ժամանակ տապանակը ժողովրդի հետ էր):

Մինչ նա խոսում է, թշնամու բանակի աղմուկը հետզհետե սաստկանում է, ուստի երբ իր զորքով հապճեպ

---

[102] Հովնաթանն ասաց իր կապարճակիր ծառային. «Ե՛կ անցնենք այս անթլփատների կիրճը» (*Ա Թագ. 14:6*):

[103] Սոսկում ընկավ…. Տիրոջ ահն ընկավ թշնամու սիրտը (*Ա Թագ. 14:15*):

պատերազմի վայր է հասնում, թշնամիները, խառնաշփոթ վիճակում, սկսում են միմյանց կոտորել: Միևնույն ժամանակ շրջակայքում գտնվող փախստական և թաքնված իսրայելացիներն էլ գալով Սավուղի մոտ տասը հազար զորք է հավաքվում:

Այն ժամանակ, երբ բոլորը միահամուռ թշնամու վրա են հարձակվում, Սավուղը, հաղթանակի տենչով համակված, առանց մտաբերելու, որ զորքն անոթի է, անեծքով կարգադրում է՝ այդ օրը մինչև երեկո առանց կերակուր ուտելու կռվեն, որպեսզի թշնամուց կատարյալ վրեժ լուծի:

Արդարև, այս կարգադրությունից հետո ոչ մեկը ոչ թե կերակուր, այլ նույնիսկ իրենց անցած վայրերից ծառի խոռոչներում մեղուների պատրաստած մեղրից էլ չի համարձակվում ուտել, միայն թե սաստիկ քաղցած լինելով՝ այդ տեղերով քրթմնջալով են անցնում: Սակայն Հովնաթանը, որը չէր լսել հոր պատվիրանը, նիզակի ծայրով վերցնում է մեղրից, ուտելուն պես հոգնությունը փարատվելով՝ աչքերը բացվում են:

Այն ժամանակ զորքից մեկը Հովնաթանին հիշեցնում է Սավուղի հրամանը, և սա, հոր այդ կարգադրությունն ընդհանրապես չհավանելով, համարձակվում է ասել. «Եթե ես, մի քիչ մեղր ուտելով, աչքերս բացեցի և զորացա, նույնպես եթե զորքը այսօր իրենց կողոպուտից ուտեր, շատ թշնամի կկոտորեր»: Այն օրը զորքը, չափազանց քաղցած և հոգնած, երեկոյան չի կարողանում դիմանալ քաղցին, և դրա պատճառով էլ իրենց կողոպտած անասուններից մորթելով՝ առանց համբերելու, արյան հետ միասին ուտում են, որն օրենքով բացարձակապես արգելված էր: Սավուղը ժողովրդի այս մեղքի մասին իմանալուն պես մի մեծ քար է բերել տալիս և հրամայում, որ այդ քարի վրա մորթելով՝ սպասեն՝ ամբողջ արյունը հոսի, նոր ուտեն: Ապա այդ քարը սեղան է դարձնում նա, ով մինչ այդ սեղան չէր կառուցել:

Թեպետ այդ օրը իսրայելացիները շատ թշնամիներ են կոտորում, սակայն Սավուղն այդքանով չի բավարարվում, այլ զորքին հրամայում է, որ այդ գիշեր էլ հետապնդեն նրանց և բոլորին կոտորելով՝ ավերեն և կողոպտեն: Այս հրամանին զորքը համաձայն էր, սակայն քահանան առաջարկում է նախ Աստծուն հարցնել, և երբ հարցնում են, Աստված չի պատասխանում:

Սավուղը ցանկանում է իմանալ, թե ում մեղքի պատճառով Աստված չի պատասխանում, և մեղավորին գտնելու համար այնքան է համառում, որ իրեն ու իր որդի Հովնաթանին էլ ժողովրդի շարքում դնելով՝ վիճակ է գցում՝ Աստծուն խնդրելով, որ եթե ինքը կամ Հովնաթանը հանցավոր են, հայտնի, իսկ եթե հանցավորը ժողովրդից է, ների: Երբ նորից վիճակ են գցում, հայտնի է դառնում, որ ժողովուրդը հանցանք չունի, այն ժամանակ Սավուղը պահանջում է, որ իր և Հովնաթանի համար էլ վիճակ գցեն՝ հայտարարելով, որ մեղավորը պիտի մեռնի:

Հիրավի, ժողովուրդը այս վճռին համաձայն չէր, քանի որ վտանգվում էր երկու կարևոր մարդկանց կյանք, սակայն Սավուղի համառությամբ նորից վիճակ գցելով՝ Հովնաթանի հանցանքը հաստատվում է, որը մահվան է դատապարտվում: Սավուղը հարցնում է որդուն, թե ինչ հանցանք է գործել, և Հովնաթանը պատասխանում է. «Մի փոքր մեղր կերա, և դրա համար ես հիմա պիտի մեռնեմ»[104]:

Ճշմարիտ է՝ Սավուղը չի ցանկանում Հովնաթանի մահը, սակայն նրա հանցանքը հաստատվելով՝ նորից երդումով վճռում է, որ մեռնի: Այս անգամ նաև ժողովուրդն է դեմ լինում և թույլ չի տալիս, որ Հովնաթանը մեռնի, այլ առ Աստված

---

[104] Սավուղն ասաց Հովնաթանին. «Ասա՛ ինձ, ի՞նչ ես արել»: Հովնաթանը պատմեց նրան՝ ասելով. «Իմ ձեռքի գավազանի ծայրով մի քիչ մեղր կերա և հիմա պիտի մեռնե՞մ» (*Ա Թագ. 14:43*):

արված աղոթքներով և պաղատանքներով ժողովուրդն ազատում և փրկում է նրա կյանքը:

Լա՛վ մտապահիր. երկուսն էլ՝ Սավուղն ու Հովնաթանը, հաղթանակի փափագով իրենց հույսն ու վստահությունը զորքի վրա են դնում, մեկն ասում է՝ թող զորքը հաց չուտի, որ ժամ առաջ կոտորի թշնամուն, մյուսն էլ ասում է՝ թող զորքն ուտի, որ կազդուրվելով թշնամուն շուտափույթ կոտորի: Այս պարագայում երկուսն էլ սխալվում են, քանի որ հաղթանակն ամբողջովին Աստծու կամքից է կախված:

Քանի որ ինչպես Սավուղի վերաբերյալ Սուրբ գիրքն է գրում, որ սխալվել է[105], այդպես էլ Հովնաթանի հանցավոր լինելը վիճակ գցելով է հայտնի դառնում: Սակայն ոչ թե մեղր ուտելու համար էր, քանի որ կերել էր՝ հրամանը չլսելով, և լսելուց հետո այլևս չէր կերել, այլ հոր հրամանին հակառակ խոսելով, նրան զորքի առջև բամբասելու և նրա արարքը քննադատելու համար:

Մանավանդ զորքը Սավուղի այդ կարգադրությունից դժգոհ էր, և հավանական է՝ Հովնաթանի խոսքերից խրախուսված՝ այն օրը՝ երեկոյան, միսն արյան հետ ուտելու համարձակություն էր ստացել:

Խրա՛տ ընդունիր. Սավուղն առանց գործը լրջորեն քննելու, անեծքով հրաման արձակելով, Հովնաթանի կյանքը ծանր և մահաբեր վտանգի ենթարկելուց բացի, ամբողջովին կոտորել և կողոպտել ցանկանալով, թշնամուն էլ փախչելու հնարավորություն է տալիս: Քանի որ Աստծուց պատասխան չստանալով և չհամարձակվելով թշնամու վրա հարձակվելու և հալածելու՝ պարտավորվում է շրջվել և վերադառնալ իր տեղը:

---

[105] Այդ օրը Սավուղը անգիտությամբ նզովեց ժողովրդին (*Ա Թագ. 14:24*):

Այնուհետև Սամվելը Աստծու հրամանով Սավուղին ասում է. «Գնա՛, ամաղեկացիների՛ն հարվածիր, նրանցից մարդ և անասուն ողջ չթողնելով՝ նրանց ունեցվածքն ու բնակարաններն էլ կոչնչացնես»: Քանի որ իսրայելացիների՝ Եգիպտոսից դուրս գալու և Երուսաղեմի երկիր գալու ժամանակ Ամաղեկի ցեղն առանց իրավունքի պատերազմելու պատճառով Աստված վճռում է նրան լիովին ջնջել (տե՛ս Երրորդ դար, ԾԷ հարցը):

Թեև այն ժամանակներից մինչև Սավուղի օրերը չորս հարյուր տարվա չափ ժամանակ էր անցել, և Աստված, այդքան ժամանակ համբերելով, նրանց չի պատժում, սակայն այդ անզգամ և ամբարիշտ ցեղը, ուղղվել չցանկանալուց բացի, օրըստօրե ավելի շատ չարիք է գործում, և նրանց մեղքի չափը լցվելու պատճառով ցանկանում է, որ նախապես տրված վճիռը Սավուղի ձեռքով կատարվի, որպեսզի իրավունքն ու արդարությունը վերջապես հաղթանակեն:

Սակայն Սավուղը նախ կինեցիներին, որոնք սահմանակից էին ամաղեկացիներին և անապատում իսրայելացիների հանդեպ գութ և մարդասիրություն էին ցուցաբերել, հայտնում է, որ հեռանան այդ սահմաններից, որպեսզի ամաղեկացիներին հարվածելու ժամանակ չվնասվեն:

Դու Աստծու արդարադատությա՛նը նայիր. քանի որ իսրայելացիներին չարիք պատճառող ազգը բնաջնջում է, իսկ բարիք և մարդասիրություն ցույց տվող ժողովուրդներն ամեն վտանգից զերծ և ազատ են մնում:

Արդ, Սավուղը, չորս հարյուր երեսուն հազար զորք գումարելով, հանկարծ հարձակվում է ամաղեկացիների երկրի վրա և թեև բոլորին՝ այր ու կին, մեծ և փոքր, կոտորում է, բայց նրանց Ագագ անունով թագավորին ողջ բռնելով՝ չի ցանկանում սպանել: Նաև կոտորում է նրանց տկար և անպիտան

անասուններին, սակայն լավերին պահում է, այդպես էլ նրանց ունեցվածքի անարժեք մասը ոչնչացնում է, իսկ թանկարժեքը՝ պահում:

Եվ քանի որ Սավուղի սույն կենցաղը որոշակիորեն հակառակ էր Աստծու հրամանին, մանավանդ Ագագ թագավորին կենդանի թողնելու համար հանցավոր է դառնում: Բացի դրանից՝ հպարտանում է, կարծես իր զորությամբ էր հաղթանակը վաստակել, և Կարմեղոս լեռան մոտ գալու ժամանակ իր անվամբ կոթող է կանգնեցնում[106] և ապա անմիջապես Գաղգաղա գնում:

Աստված, բարկանալով հիշյալի այսպիսի անկարգ և շեղ վարքից, Սամվելին հայտնում է, որ նրան թագավորությունից զրկելու է: Սամվելը ողջ այդ գիշերը տրտմությամբ անցկացնելուց և Աստծուն աղոթելուց հետո՝ վաղ առավոտյան, Գաղգաղա է գնում, որտեղ Սավուղը կողոպտված և հափշտակված անասուններից զոհ էր մատուցում: Նամանավանդ Սամվելը դեռ չխոսած՝ իբր թե կատարած գործն անթերի է, մի հպարտ եղանակով հայտնում է, թե Աստված ինչ իրեն հրամայել է, լիովին կատարել է:

Սամվելը, անասունների ձայները լսելով, երբ հարցնում է, թե ինչ ձայներ են, Սավուղը պատասխանում է, որ ժողովուրդն է դրանք բերել՝ զոհաբերելու: Սույն պատասխանով նա կամենում է իրեն արդարացնել, բայց նրա հանցանքը հայտնի լինելով՝ Սամվելն ասում է. «Դու փոքր ցեղից էիր, Աստված քեզ թագավոր կարգեց, ինչո՞ւ նրա հրամանները չլսեցիր և ավար վերցնելով՝ պարտազանց եղար»:

Այս հանդիմանությունից հետո զղջալու փոխարեն նորից է առարկում, թե Աստծու հրամանները կատարել է, և

---

[106] Սավուղը եկել է Կարմեղոս, իր համար հուշարձան կանգնեցրել (*Ա Թագ. 15:12*):

ժողովուրդն է անասունները բերել՝ զոհաբերելու: Սամվելը պատասխանում է. «Աստծուն հնազանդվելը զոհ մատուցելուց ավելի ընդունելի է, դու Աստծու խոսքը մերժեցիր, Աստված էլ քեզ թագավորությունից մերժեց»[107]:

Թեպետ սույն սպառնալիքներից Սավուղը ակամա զղջում է, բայց նորից իրեն արդարացնելու տենչանքով պատրվակ է բերում ժողովրդից վախենալը, և ապա կեղծավորությամբ ներում խնդրելով՝ ցանկանում է, որ Սամվելի հետ գնա՝ Աստծուն երկրպագություն մատուցելու:

Սամվելը չի ցանկանում նրա հետ գնալ և երբ ցանկանում է հետ դառնալ, Սավուղը նրա պատմուճանի քղանցքից է բռնում, արգելելու պահին պատմուճանը պատռվում է, այն ժամանակ Սամվելն ասում է. «Աստված այսօր, քեզնից թագավորությունդ պատռելով, քեզնից լավագույնին պիտի տա», սակայն նա, դարձյալ չզղջալով, խնդրում է, որ Սամվելն իր հետ գնա:

Բայց ոչ թե ի պատիվ և ի սեր Աստծու և իր արարքների համար անկեղծորեն զղջալու պատճառով է թախանձում Սամվելին, որ նա իր հետ երկրպագելու գնա, այլ որպեսզի ժողովրդի առջև Սամվելը փառավորի իրեն և իր պատվին պակասություն չլինի:

Դու Սավուղի թշվառ վիճակի՛ն նայիր. որովհետև մինչ Աստծու երեսից արդեն ընկած լինելով՝ թագավորությունը ուրիշին տրվելու վճիռն արդեն արձակվել էր, ինքը դեռևս ցանկանում է մարդկանց շրջանում հարգանք և պատիվ գտնել. ահա այսպիսին է հպարտ և անմիտ մարդու վիճակը:

---

[107] Սամվելն ասաց. «Մի՞թե Տիրոջ համար ավելի հաճելի են ողջակեզներն ու զոհերը, քան Տիրոջ ձայնին անսալը: Հնազանդությունն ավելի լավ է, քան ընտիր զոհը, և անսալն ավելի լավ է, քան խոյերի ճարպը» (*Ա Թագ. 15:22*):

Խրա՛տ ընդունիր. որտեղ աստվածային հրամանների դեմ են գործում, այնտեղ պետությունը չի կարող կանգուն մնալ և անպատճառ կորստյան է մատնվում: Այո՛, Սամվելն այս անգամ էլ է Սավուղի հետ գնում, բայց ոչ թե նրա փառքի, այլ մանավանդ ամաղեկացիների Ագագ թագավորին սպանելով՝ Աստծու հրամանը կատարելու համար, քանի որ նրան իր մոտ բերել տալով՝ սպանելուց անմիջապես հետո վերադառնում է իր տեղը, Սավուղը նույնպես իր տեղն է գնում: Այնուհետև Սամվելը մինչև մահ այլևս Սավուղին չի տեսնում:

Թող օրինակ վերցնեն բոլոր նրանք, ովքեր Աստծու հրամաններին հակառակ են շարժվում և գործում, քանի որ Սավուղի այդպիսի ապօրինի կենցաղավարությամբ և համարձակությամբ ոչ միայն ինքն է զրկվում թագավորությունից, այլև այն գերդաստանը, որին պատկանում էր, և այն ցեղը, որից սերում էր, ինչպես ցույց են տալիս հետայսու կատարված դեպքերը:

Հարց ԺԸ: **Հետայսու ինչպիսի՞ն էր Սավուղի վիճակը:**

Պատասխան: Խիստ թշվառ: Քանի որ նա, իր խելքին վստահելով, հպարտ և համառ, ուղիղ սրտով չգղջալու պատճառով Աստված բոլորովին մերժում է նրան: Թեև Սամվելը, նրա համար սգալով, աղոթում և աղաչում է, սակայն Աստված նրան ասում է. «Մինչև ե՞րբ Սավուղի համար սուգ պիտի պահես, Ես նրան մերժեցի[108], քեզ ուղարկում եմ Բեթղեհեմ՝ Հեսսեի մոտ, որ քեզ հայտնեմ՝ որդիներից որին իսրայելացիներին թագավոր կարգես»:

---

[108] Տերն ասաց Սամվելին. «Մինչև ե՞րբ պետք է սգաս Սավուղին, ես նրան զրկել եմ Իսրայելի վրա թագավորելուց» (*Ա Թագ. 16:1*):

Երբ Սամվելը հարցնում է. «Ինչպե՞ս գնամ, երբ Սավուղը լսի, ինձ անպատճառ կսպանի»: Աստված պատասխանում է. «Դու մի երինջ վերցրո՛ւ և ասա՛, որ զոհ մատուցելու համար Բեթղեհեմ ես գնում, և Հեսսեին էլ զոհի հրավիրի՛ր»:

Թեև Սամվելը ամեն կերպ առ Աստված ունեցած հնազանդությամբ կատարյալ էր, և գիտեր, որ Աստված կարող է Սավուղի թշնամությունից իրեն փրկել, սակայն իբրև մարդ, որոշակի գործի համար պարտավոր լինելով անհրաժեշտ պարագաներն էլ ուշիուշով քննելու և խորհելու, որոշակիորեն խոստովանում է Սավուղից ունեցած երկյուղը:

Նրա սիրտը հանգստացնելու համար Աստված նույնպես մարդուն վայել կարգադրություններ է անում, և Սամվելն ապահով և անվախ Բեթղեհեմ է գնում:

Սավուղի թագավորելուց սկսած՝ Սամվելը միշտ իր տանն էր բնակվում, և միմիայն կարևոր գործերի պատճառով էր այլ վայր գնում: Եվ երբ Բեթղեհեմի ծերերը տեսնում են նրան, երկյուղում են, թե միգուցե մի տխրառիթ գործով է եկել, ուստի շտապում են հարցնելու[109] գալու պատճառը, և երբ իմանում են, որ զոհ մատուցելու համար է եկել, իրենց ապահով են զգում և ուրախանում. Սամվելը զոհ մատուցելու է հրավիրում հատկապես Հեսսեին և նրա որդիներին:

Սրանից հետո Հեսսեի տուն գնալով՝ նրան գաղտնապես հաղորդում է Աստծու հրամանը: Հեսսեն իր մեծ որդուն Սամվելի մոտ է բերում, և Սամվելը, նրա վայելչադեմ կերպարանքին նայելով, մտածում է, որ նա է թագավորության արժանի անձնավորությունը: Սակայն Աստված մարդու սրտին է նայում և ոչ թե արտաքին տեսքին, որի համար էլ նրան

---

[109] Քաղաքի ծերերը զարհուրած դիմավորեցին նրան՝ ասելով. «Քո մուտքը թող խաղաղությամբ լինի, ո՛վ տեսանող» (*Ա Թագ. 16:4*):

արժանավոր չհամարելով՝ Սամվելին ասում է, որ նրա տեսքին չնայի[110]:

Ապա երկրորդ, երրորդ և վերջապես յոթ որդիներն էլ մեկ առ մեկ ներկայանում են Սամվելին, որը Հեսսեին հայտնում է, որ Աստված նրանցից ոչ մեկին արժանի չի գտնում և հարցնում է՝ մի՞թե ուրիշ որդի չունի: Հեսսեն, Դավիթ անունով մի որդի էլ ունենալով, պատասխանում է, որ մի փոքր որդի էլ ունի, որը ոչխարներն է արածեցնում:

Երբ Սամվելի հրամանով նրան ևս բերել են տալիս, Աստված Սամվելին ասում է. «Ելի՛ր և օծի՛ր Դավթին»[111]: Սամվելը նրա գլխին յուղ է լցնում, և օծելուն պես ի վերուստ այնպիսի շնորհ է տրվում Դավթին[112], որ թագավորական գործերը վարելուն անհրաժեշտ հմտությունները ստանալուց բացի՝ անմիջապես սկսում է մարգարեանալով սաղմոս ասել և գրի առնել:

Հասկացի՛ր. երբ Դավիթը, ինչպես մի պարզ հովիվ, հոր ոչխարներն էր արածեցնում, խոնարհամտության և հնազանդության համար աստվածային գերբնական շնորհների է արժանանում, սակայն Սավուղը, աստվածային հրամաններին հակառակ կենցաղով արդեն իսկ տրված շնորհը կորցնելով, դիվահարության ախտով է վարակվում, որից էլ չափազանց անհանգիստ դառնում[113]:

---

[110] Մարդիկ երեսին են նայում, իսկ Աստուած՝ սրտին (*Ա Թագ. 16:7*):

[111] Հեսսեն մարդ ուղարկեց ու բերել տվեց նրան: Նա խարտյաշ էր, սիրուն աչքերով ու Տիրոջ համար գեղանի տեսքով: Տերն ասաց Սամվելին. «Վե՛ր կաց, օծի՛ր Դավթին, քանզի նա լավ է» (*Ա Թագ. 16:12,13*):

[112] Այդ օրվանից և հետո Տիրոջ հոգին շարժվեց Դավթի վրա (*Ա Թագ. 16:13*):

[113] Տիրոջ հոգին վերացավ Սավուղից, և Տիրոջ կողմից առաքված մի չար ոգի նեղում էր նրան (*Ա Թագ. 16:14*):

Այս է պատճառը, որ պալատականներն առաջարկում են մի մարդ բերել, որը, քնար նվագելով, նրան կհանգստացնի, որին Սավուղն իր համաձայնությունն է տալիս: Այդ ժամանակ նրանցից մեկը, Դավթի մասին խոսելով, հայտնում է, որ նա քնար նվագել և սաղմոս երգել գիտի, և որպես գովեստ՝ ավելացնում է, որ իմաստուն և տեսքով էլ գեղեցիկ անձնավորություն է:

Սավուղն իսկույն Հեսսեին լուր է ուղարկում, որ Դավիթ որդուն իր մոտ ուղարկի: Նա էլ նրան թագավորի մոտ է ուղարկում ընծաներով: Սավուղը, Դավթին շատ հավանելով, իր մոտ ծառայության է նշանակում, և երբ հիվանդանում է, Դավիթը քնար է նվագում և քաղցրաձայն սաղմոս երգելով՝ Սավուղի ցավերը փարատում: Դավիթը միառժամանակ արքունիքում մնալուց հետո տուն է վերադառնում և նորից հովվություն անում:

Դրանից հետո թշնամիները, անթիվ զորքով իսրայելացիների երկիր գալով, մի լեռան վրա բանակ են դնում: Սավուղը նույնպես հանդիպակաց լեռն է բարձրացնում իր բանակը: Երկու լեռների միջև մի ձոր է լինում, և երկու ճակատները միմյանց են դիտում: Թեև ժամանակ առ ժամանակ պատերազմական գործողությունների շարժումներ են ցույց տալիս, սակայն զորքերն առանց պատերազմելու նորից իրենց բանակատեղին են վերադառնում:

Թշնամու կողմից Գողիաթ անունով մի հսկա մարդ, որի հասակը վեց կանգուն և մի թզաչափ էր (4,8 մ), ինքն էլ ահարկու և զրահներ հագած և վահանով ու նիզակով, դեպի իսրայելացիների բանակը գալով, հպարտորեն ասում է. «Ինչո՞ւ եք պատերազմի դուրս գալիս, ձեր միջից թող մի մարդ դուրս գա ասպարեզ, եթե նա ինձ հաղթի, մենք ձեզ ծառայենք, իսկ եթե ես նրան հաղթեմ, դուք ծառայեք մեզ»:

Հիշյալը հպարտանալով այնքան վստահ էր իր ուժին և զորությանը, որ իսրայելացիներից ոչ մեկը չի համարձակվում նրա դեմ դուրս գալ, և եթե որևէ մեկը դուրս գար, անտարակույս նրան սպանելու վստահությամբ՝ Գողիաթը իսրայելացիներին առավել նախատելու նպատակով հավելում է. «Ահավասիկ, այսօր ես իսրայելացիների զորքին նախատեցի, մի մա՛րդ տվեք, որ մենամարտեմ»[114]:

Այսպիսի խոսքերով իսրայելացիներին ցանկանում է վախեցնել: Արդարև, Սավուղը և բոլոր իսրայելացիները, Գողիաթի խոսքերը լսելով, սաստիկ վախենում են, քանի որ ոչ մեկը չի հմարձակվում նրա դեմ մենամարտել, դրա պատճառով ահարկու հսկան, քառասուն օր՝ առավոտյան և երեկոյան, ասպարեզ դուրս գալով, միևնույն խոսքն է կրկնում, որպեսզի ավելի անարգի:

Եվ քանի որ Դավթի երեք երդբայրներն էլ Սավուղի հետ բանակում էին, Դավիթը, հոր կարգադրությամբ նրանց համար ուտելիքի պաշար տանելով, եղբայրներին փնտրելու ժամանակ Գողիաթը, նորից ասպարեզ գալով, վերոհիշյալ խոսքերն է ասում: Դավիթը, նրա հրահրող խոսքերը լսելով, մտադրվում է սպանել նրան:

Այդ ժամանակ զորքերն էլ, երկյուղով խույս տալով, միմյանց հայտնում են, որ ով այս մարդուն սպանի, թագավորն իր աղջկան նրան է տալու և նրան տոհմով մեծ պատվի արժանացնելու: Սույն խոսքը նույնպես լսելով՝ Դավիթը թեև գիտեր, որ ստույգ է, սակայն դարձյալ իր շուրջը գտնվող մարդկանց հարցնում է, թե այս մարդուն սպանողին արքան ի՛նչ պարգևներ է խոստանում: Նրանք էլ թագավորի խոստումները

---

[114] Այլազգին ավելացրեց. «Ահավասիկ ես այսօր Իսրայելի զորքը խայտառակելու եմ: Մի մարդ տվե՛ք, և ես ու նա երկուսով մենամարտենք» (*Ա Թագ. 17:10*):

Դավթին կրկնելու ժամանակ նրա մեծ եղբայրը՝ Եղիաբը, երբ մոտենալով լսում է զորքի հետ Դավթի խոսակցությունը, սաստիկ հանդիմանում է Դավթին, թե անապատում ոչխարներն ո՛ւմ է թողել և իբր պատերազմ տեսնելու համար այստեղ եկել:

Դավիթը եղբոր հանդիմանական խոսքերին խոնարհությամբ պատասխանում է, որ ինքը ոչինչ չի արել, խոսք է՝ խոսում են[115], սակայն այնտեղից հեռանալով՝ այդ խոսքերը վստահությամբ ուրիշների մոտ էլ է կրկնում:

Այս պարագայում մի՛ մտածիր, թե Դավիթը փառասիրական կամ շահադիտական նպատակով է այսպիսի խոսքեր ասում, այլ Աստծու սուրբ անվան և ազգի պատվասիրության նախանձախնդրությամբ ցանկանում է, որ թագավորի հրամանով սպանի Գողիաթին:

Արդարև, Դավթի խոսքերը, բերնեբերան անցնելով, Սավուղի ականջին են հասնում, որը իր մոտ է կանչում նրան: Դավիթը թագավորին համարձակ պատասխանում է. «Հոգ մի՛ արա, ծառադ կպատերազմի այդ կռապաշտի դեմ, եթե Ձերդ տերությունը թույլ տա»: Այն ժամանակ Դավիթը հազիվ քսան տարեկան էր, և Սավուղն ասում է. «Դու դեռևս մանուկ ես, գուցե չկարողանաս նրա դեմ կռվել»:

Սավուղի այդ խոսքերին Դավիթը հետևյալ պատասխանն է տալիս. «Ծառադ առյուծ և արջ է սպանել, թող այդ այլազգին էլ նրանցից մեկի նման լինի, Աստված, որ ինձ առյուծի և արջի ձեռքից փրկեց, նրա ձեռքից էլ կարող է փրկել»[116]:

---

[115] Դավիթն ասաց. «Ի՞նչ եմ արել, բան էր՝ ասացինք» (*Ա Թագ. 17:29*):

[116] Դավիթն ասաց Սավուղին. «....Քո ծառան առյուծ էլ է սատկացրել, արջ էլ: Նույն կերպ կվարվեմ ես այդ անթլփատ այլազգու հետ.... Եթե Տեր Աստուած ինձ փրկել է առյուծի ու արջի ճանկերից....» (*Ա Թագ. 17:34, 36, 37*):

Իրոք, առյուծը կամ արջը ոչխարների հոտից մի ոչխար հափշտակելու ժամանակ Դավիթը, դրանց հետևից գնալով, սպանում է և հափշտակած ոչխարը դրանց բերանից դուրս կորզելով՝ հետ բերում:

Արդ, Սավուղը, Դավթի քաջությանը նայելով, այս անգամ պատասխանում է. «Գնա՛, Տերը թող հետդ լինի», և միևնույն ժամանակ զրահ հագցնելով՝ իր սուրն էլ տալիս է Դավթին: Սակայն նա, զրահներ կրելուն անվարժ, քայլելու ժամանակ երկու անգամ գայթում է և սայթաքում, ուստի հայտնելով, որ դրանցով չի կարող առաջ գնալ, սուրն ու զրահը թողնելով՝ վերցնում է հովվական գավազանը և, հեղեղատից հինգ կլորիկ քար իր մախաղի մեջ դնելով, պարսատիկն էլ ձեռքին, առաջ է շարժվում[117]:

Երբ նա մոտենում է Գողիաթին, սա, իր առջև մի վահանակիր ունենալով, առաջ է գալիս և տեսնելով, որ Դավիթը մի գեղեցկադեմ պատանի է, արհամարհում է նրան, ով իր դեմ է դուրս գալիս՝ ցուպով ու պարսատիկով և մեջքին միայն մախաղ ունենալով: Մանավանդ Գողիաթը, սաստիկ հպարտ լինելով, նրա դեմ մենամարտելը իրեն անպատվություն է համարում, ուստի այնտեղ նստելով՝ արհամարհանքով ասում է. «Մի՞թե ես շուն եմ, որ ինձ վրա փայտով ու պարսատիկով ես գալիս»:

Արդարև, Գողիաթի դեմ ցուպով և պարսատիկով դուրս գալը նրան շան տեղ դնել էր, մանավանդ Դավիթը նրան Է՛լ ավելի նախատելու համար ասում է. «Դու շնից էլ վատթար ես»: Այդ ժամանակ Գողիաթը, խիստ բարկանալով, Դավթին իր կուռքերի անուններով անիծելով, աղաղակում է. «Արի՛՝ քո մարմինը թռչուններին և գազաններին որպես կերակուր տամ»:

---

[117] Նա ձեռքն առավ ցուպը (*Ա Թագ. 17:40*):

Դավիթը պատասխանում է. «Դու սրով, նիզակով և վահանով ես գալիս ինձ վրա, ես կգամ ամենակարող Աստծու անունով[118], և Նա այսօր քեզ մատնելու է իմ ձեռքը, և ես քեզ պիտի սպանեմ և գլուխդ իմ ձեռքով կտրեմ, քո և զորքերիդ դիակները թռչուններին և գազաններին կերակուր տամ, որպեսզի ողջ աշխարհն իմանա, որ միակ ճշմարիտ Աստված իսրայելացիների Աստվածն է, և Նա է աշխարհի բոլոր ազգերի Տերը, և որ միայն Նա է հզոր և ամենակարող»:

Այս խոսքերից զայրացած՝ Գողիաթը հարձակվում է Դավթի վրա, իսկ վերջինս, Աստծու օգնությանն ապավինելով, մախաղից իսկույն մի քար է հանում, և պարսատիկով նետելուն պես, Աստծու կարողությամբ նրա սաղավարտը ճեղքելով, ճակատի մեջ է մխրճվում, որից անճոռնի հսկան երեսնիվայր կործանվում է:

Այդ ժամանակ Դավիթն իսկույն հենց նրա սրով կտրում է գլուխը. կատարյալ հաղթանակ տանելուն պես թշնամու զորքը սկսում է հապշտապ փախչել, և ահա իսրայելացիները, նրանց հետևից ընկնելով, շատերին կոտորելուց բացի՝ նրանց բանակն էլ թալանում են: Երբ Դավիթը Գողիաթի գլուխը զորքի մոտ է տանում, իսրայելացիների զորապետը նրան հաղթականորեն Սավուղի մոտ է ուղեկցում:

Սակայն Սավուղը, Դավթին չճանաչելով, Աբեններին հարցնում է, թե ում որդին է այդ պատանին, և երբ զորապետը չի կարողանում պատասխանել, Սավուղն ինքն է հարցնում, որին ի պատասխան՝ Դավիթն ասում է, որ բեթղեհեմցի Հեսսեի որդին է: Թեև Դավիթը նախկինում որոշ ժամանակ Սավուղի մոտ էր ապրել, ինչպես հիշատակվել է վերևում, բայց

---

[118] Դավիթն ասաց այլազգուն. «Դու ինձ վրա ես հարձակվում սրով, գեղարդով և վահանով, իսկ ես քեզ վրա եմ հարձակվում Իսրայելի զորքի զորությունների Տիրոջ անունով» (*Ա Թագ. 17:45*):

նա, հիմարության ախտով վարակված, Դավթի տեսքը մոռանալով, որպես նրան ընդհանրապես անծանոթ, հարցնում է, թե ում որդին է:

Այնուհետև Դավիթը, Գողիաթի գլուխը Երուսաղեմ տանելով, մի ձողի է անցկացնում և այն կանգնեցնում, որպեսզի թշնամին տեսնելով սարսափի: Սավուղը, նորից Դավթին իր մոտ պահելով, թույլ չի տալիս, որ հայրական տուն վերադառնա: Նաև Սավուղի որդին՝ Հովնաթանը, Դավթին այնպիսի եղբայրական սիրով է կապվում, որ սկսում է իր անձի պես սիրել նրան. այս սերը անքակտելի է մնում և տևում մինչև Հովնաթանի կյանքի վերջ և շատ օգտակար լինում Դավթին, որին ընծայում է իր թիկնոցն ու ամբողջ զենքը:

Ահա այսպես Աստծու օգնությամբ թշնամին հաղթվում է, երբ Սավուղն իր տեղն էր վերադառնում, գյուղերով և քաղաքներով անցնելու ժամանակ կանայք, խումբ-խումբ դիմավորելով, ուրախությամբ և նվագարանների ձայնակցությամբ սկսում են երգել և Սավուղին ու Դավթին գովաբանել՝ ամեն տան մեջ հետևյալ ձևով կրկնելով. «Սավուղը հազար սպանեց, իսկ Դավիթը՝ տասը հազար»[119]:

Արդ, հոգևոր առումով Գողիաթը՝ սատանայի, իսկ Դավիթը Մեսիայի օրինակն է: Քանի որ ինչպես Գողիաթը բոլոր իսրայելացիներին իր իշխանությանը ենթարկելու փափագով մի մարդու է ասպարեզ հրավիրում՝ մենամարտելու, և ոչ մեկը նրա դեմ դուրս գալու կարողություն չի ունենում, և միայն Դավիթն է Աստծու ողորմությամբ կարողանում նրան կորստյան մատնել և իսրայելացիներին փրկել: Այդպես և սատանան, Ադամին դրախտում մեղքի կապանքներով կապկպած, ողջ

---

119 Պարող կանայք երգելով ասում էին. «Սավուղը հազար, իսկ Դավիթը բազմահազար մարդկանց սպանեց» (*Ա Թագ. 18:7*):

մարդկային ազգը որպես գերի իր բռնակալ իշխանության ներքո չարաչար խոշտանգումների էր մատնում, և մինչ ոչ մեկը չէր կարողանում, նրա դեմ խիզախելով, հաղթանակի դրոշ պարզել, միայն Դավթի ցեղից Մեսիան, Որ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս է, Իր անսահման և ամենաառատ ողորմությամբ մարդակային ազգից ամենաչար թշմնամու դեմ դուրս գալով, արիաբար պատերազմում է, և հաղթանակ տանելով՝ փրկում և ազատում է մարդկային տկար և անկյալ բնությունը[120]:

Հարց ԺԹ: **Սավուղը պատվո՞ւմ է Դավթին, որի շնորհիվ հաղթանակել էր:**

Պատասխան: Ո՛չ, Սավուղը նախապես չի ցանկանում որևէ պատիվ տալ Դավթին: Քանի որ «Սավուղը հազար կոտորեց, իսկ Դավիթը՝ տասը հազար» խոսքը գրգռում է նրա բարկությունն ու նախանձը, և նա ոչ միայն զլանում է անհրաժեշտ հարգանք տալ Դավթին, այլև տեսնելով նրա իմաստությունը և քաջությունը, նախանձից դրդված՝ ասում է. «Էլ ի՞նչ է Դավթին պակաս, եթե ոչ թագավորություն»[121]:

Դու Սավուղի սրտի չարությա՛նը նայիր: Քանի որ Դավիթը նրա հրամանով էր Գողիաթին սպանել, Դավթին վերագրվող պատիվն ու փառքը իրապես իրեն էր պատկանում, ուստի բոլորից ավելի ինքն էր պարտավոր՝ նրան փառավորելու, սակայն, ընդհակառակը, ժողովրդից նրան ընծայված պատվին ու փառքին նախանձելով՝ իր ապերախտությունը, անարդարությունը ու մանավանդ հիմարությունն է բացահայտում, քանի

---

[120] Նայեցի, բայց օգնող չկար, մտածեցի, թե ինչու ոչ ոք չկար, որ թիկունք դառնար ինձ: Իմ բազուկը փրկեց նրանց (*Ես. 63:3*):

[121] Սավուղը զայրացավ.... և ասաց. «Բազմահազարը Դավթին վերագրեցին, իսկ ինձ՝ հազարը: Արդ, նրան ի՞նչ է պակասում» (*Ա Թագ. 18:8*):

որ նախանձը՝ հպարտությունից, իսկ հպարտությունը հիմարությունից է առաջանում:

Արդարև, ամեն նախանձ մարդ հպարտ է, և ամեն մի հպարտ հիմար է անվանվում, որովհետև եթե հիմար չլինի, չի հպարտանա, եթե չհպարտանա, նույնպես երբեք չի նախանձի: Ուրեմն Սավուղի թշվառ վիճակից խրա՛տ ընդունիր և ոչ մեկին մի՛ նախանձիր: Քանի որ երբ նախանձի որդը սկսում է նրա սիրտը կրծել, հաջորդ օրը նրա դիվահարական ախտը նորից է հայտնվում[122], և Դավիթը հավատարմությամբ նորից նվագում է, որպեսզի Սավուղը հանգստանա: Սակայն մինչ Դավիթը նվագում է, Սավուղը, նրա կյանքի դեմ դավեր նյութելով, այդ պահին Դավթին պատին զամելու և սպանելու դիտավորությամբ, ձեռքի գեղարդը նետում է նրա ուղղությամբ: Երբ Դավթի մի կողմ գնալով՝ հարվածը վրիպում է, համարում է, որ դա նրա ախտի հետևանքով մի սխալմունք է, և դարձյալ նրա մոտ է մնում, քանի որ Դավիթը, սիրտը մաքուր լինելով, Սավուղից այդպիսի չարություն չի սպասում:

Սակայն Սավուղը, չար մտադրություն ունենալով, երկրորդ անգամ ավելի ուշադիր է նետում գեղարդը, որպեսզի ճիշտ հարվածելով՝ անպատճառ սպանի Դավթին: Բարեբախտաբար, երբ այս անգամ էլ հարվածը չի վնասում է, և նա հասկանում է, որ Աստված պահպանում է Դավթին, դրանից հետո Սավուղը պարզապես սկսում է վախենալ Դավթից և հեռացնում է իր մոտից:

Այդուհանդերձ, Սավուղը, իր չար դիտավորություններից հետ չկանգնելով, Դավթին հազարապետ է կարգում, որպեսզի պատերազմում թշնամու ձեռքից մահանալով՝ ինքը նրա

---

[122] Հետևյալ օրը Աստծուց ուղարկված չար ոգին պատեց Սավուղին (*Ա Թագ. 18:10*):

մահվան պատճառ չլինի[123]: Սակայն Աստծու ողորմությամբ նա, իր մղած պատերազմներից միշտ հաղթական դուրս գալով, ժողովրդի մեջ օրըստօրե ավելի է փառավորվում, և այս է պատճառը, որ Սավուղը նենգամտությամբ ցանկանում է իր մեծ աղջկան՝ Մերովբին, նրան կնության տալ, որպեսզի Դավթի վստահությունը շահելով, միշտ պատերազմների ուղարկելով՝ մի օր ոչնչացնի[124]:

Թեպետ Դավիթը խոնարհամտությամբ հրաժարվում է՝ ասելով. «Ես ո՞վ եմ, որ թագավորի փեսա լինեմ», սակայն Սավուղն իր աղջկան նրան տալու համար օր է որոշում, և Դավիթն էլ ստիպված հավանություն է տալիս: Բայց երբ հարսանիքի օրը գալիս է, Սավուղը, իր խոստմանը հավատարիմ չմնալով, աղջկան Դավթին տալու փոխարեն մեկ ուրիշի է տալիս:

Հիրավի, այս առումով Դավթի սիրտը խիստ վշտանում է, սակայն այս անպատվությունն ու անարգանքը ավելի Սավուղինը լինելով՝ այս պարագայում նրա ստախոսությունը և անգթությունը են հայտնի դառնում: Քանի որ Գողիաթին սպանելու համար նախապես խոստացել էր իր աղջկան կնության տալ, այս անգամ էլ խոստանալուց հետո նորից խոստումը դրժելը և՛ նախատինք էր իր անվանը, և՛ արդարությանը հակառակ, սակայն քանի որ Աստծուց չի վախենում, մարդկանցից էլ չի ամաչում՝ Դավթին նեղություն պատճառելով:

Հարկ է այստեղ նկատել Դավթի հանդեպ Սավուղի նենգամիտ մտադրությունը. քանի որ նա, ով իր մեծ աղջկա

---

[123] Սավուղը Դավթի ներկայությունից վախենում էր, որովհետև Տերը նրա հետ էր.... Սավուղը նրան հազարապետ կարգելով.... (*Ա Թագ. 18:12,13*):

[124] Սավուղը մտածում էր. «Թող իմ ձեռքը նրա դեմ չլինի, այլ թող այլազգիների ձեռքը նրա դեմ լինի» (*Ա Թագ. 18:17*):

պատճառով Դավթին խաբելով՝ նրա սիրտն է կոտրում, այս անգամ էլ Մեղքող անվամբ փոքր աղջկա համար է նրա կյանքը մեծ վտանգի ենթարկում:

Սավուղը գիտեր, որ այս աղջիկը սիրում է Դավթին, ուստի առաջարկում է նրան Դավթին տալ, որը Սավուղի խարդախ բնավորությունն իմանալով՝ նույնիսկ չի ցանկանում պատասխանել: Սավուղն առանց հուսահատվելու իր մեծամեծների միջոցով ջանում է համոզել Դավթին, որն էլ պատասխանում է. «Մի՞թե հեշտ բան է փեսայանալ թագավորին, ես մի հասարակ մարդ եմ»:

Սույն միջնորդ մարդիկ շտապում են՝ Դավթի խոսքը թագավորին հայտնելու, որը պատասխանում է. «Դավթին ասացե՛ք, որ թագավորը ընծաներ չի ցանկանում, այլ միայն վրեժխնդրության համար խնդրում է թշնամիներից հարյուր մարդ սպանել և նրանց անթլպատության նշաններն իրեն բերել, որպեսզի սպանվածների անթլփատ լինելը հայտնի լինի»:

Թեպետ Սավուղի այսպիսի առաջարկը միայն արտաքուստ էր վրեժխնդրության համար. նրա իրական դիտավորությունը թշնամու ձեռքով Դավթին սպանելն էր[125]: Քանի որ այդ խայտառակ առաջարկը պատերազմի կանոններին և հաստատված վաղեմի սովորույթներին ամբողջությամբ հակառակ և անընդունելի մի պայման լինելով՝ հայտնի էր, որ թշնամիները միահամուռ ուժերով Դավթի վրա են հարձակվելու:

Սակայն Դավիթը, նրան ամոթով թողնելու փափագով համաձայնում է այդ պայմանին և երբ Աստծուն հուսալով, թշնամիներից հարյուր մարդ սպանելով՝ այդ պահանջն էլ է կատարում, Սավուղը կամա թե ակամա իր աղջկան Դավթին է տալիս:

---

[125] Սավուղը մտածեց. «Նրան կնության տամ, որ նա նրա համար որոգայթ դառնա» (*Ա Թագ. 18:21*):

Արդարև, Դավիթը փեսայանում է թագավորին, սակայն երկու անգամ իր կյանքը վտանգի է ենթարկում. առաջինը՝ Գողիաթին սպանելու ժամանակ, երկրորդը՝ վերոհիշյալ ապօրինի առաջարկը կատարելով, և ինչպես Սավուղն է Դավթին ասում՝ երկու պատճառներով նա պիտի փեսայանա իրեն[126]:

Հարց Բ: **Սավուղը Դավթին իրեն փեսա դարձնելուց հետո դադարեցնո՞ւմ է նրա դեմ թշնամությունը:**

Պատասխան: Չի դադարեցնում: Որովհետև որպես նրա թշնամի[127] և թշնամական դիտավորությամբ է իրեն փեսա դարձնում, որպեսզի Դավիթը, միշտ պատերազմներ մղելով, մի օր կռապաշտների ձեռքով սպանվի:

Սակայն Դավիթը թշնամիների դեմ բոլոր հարձակումներից միշտ հաղթող է դուրս գալիս, և մանավանդ երբ նրա առաքինությունը, իմաստությունը և քաղաքական գործերում հմտությունը և խոհեմությունը հայտնի են դառնում, բոլոր իսրայելացիները սկսում են համակրել և սիրել Դավթին, ամեն կերպ նրան փառքով շրջապատել[128], և Սավուղը, սրտում ունեցած թշնամությունը Հովնաթանին և իր իշխաններին հայտնելով, տեղեկացնում է, որ պետք է սպանի Դավթին:

Բայց քանի որ Հովնաթանը Տիրոջից վախենում էր և Դավթին էլ շատ հավատարիմ էր, Դավթին հայտնում է, որ հայրը մտադրվել է՝ նրան սպանի, ուստի պետք է զգուշանա: Հաջորդ

---

[126] Սավուղն ասաց Դավթին. «Այսօր դու ինձ երկու աղջիկներով փեսա դարձար» (*Ա Թագ. 18:21*):

[127] (Սավուղը) սկսեց առավել ևս վախենալ Դավթից: Եվ Սավուղը միշտ թշնամությամբ էր վերաբերվում Դավթին (*Ա Թագ. 18:29*):

[128] Ամեն անգամ Դավիթն ավելի խորագետ էր գործում, քան Սավուղի բոլոր ծառաները, ուստի նրա անունը գնալով ավելի էր փառավորվում (*Ա Թագ. 18:30*):

օրը՝ Սավուղի ուրախ տրամադրության պահին, Դավթի մասին նպաստավոր խոսքեր խոսելով՝ Հովնաթանն ամոքում է հոր բարկությունը և երդումով խոստում կորզում, որ չի սպանի Դավթին: Հովնաթանը, այս խոստումին վստահելով, Դավթին Սավուղի մոտ է տանում, որը սիրալիր ընդունում է, և այնուհետև, գոնե միառժամանակ, Դավիթը, առաջվա նման ամենայն քաջությամբ և հավատարմությամբ գործակցելով, զինվորական ծառայության է մնում Սավուղի մոտ:

Սակայն մի անգամ թշնամիները անհամար զորքով նորից Իսրայել երկիր են արշավում, և Դավիթը, նրանց դեմ գնալով, մեծամեծ հարվածներ է հասցնում: Այո՛, երբ Դավիթը, Աստծու օգնությամբ իսրայելացիների ոխերիմ թշնամիների նկատմամբ մեծ հաղթանակ տանելով, ժողովրդից փառավորված, վերադառնում է, նրա այդ հաղթանակը, ինչպես նաև փառքը Սավուղին հաճելի չեն լինում, և դիվահարության ախտը ամբողջությամբ նորից տիրում է նրան:

Եվ քանի որ Դավիթը նախկինի նման նրա առջև քնար էր նվագում, Սավուղը սպանելու դիտավորությամբ գեղարդն ամբողջ ուժով Դավթի ուղղությամբ է նետում: Բարեբախտաբար, այս անգամ էլ է Դավիթն ազատվում և տուն վերադառնում: Եվ այս անգամ Սավուղը սաստիկ բարկացած, զինվորական գումարտակ ուղարկելով, նրա տունը պաշարել է տալիս, որպեսզի չփախչի, քանի որ վերջնականապես որոշել էր, որ լույսը բացվելուն պես նրան որևէ ձևով անպատճառ սպանելու է:

Ճշմարիտ է, որ եթե Դավթի մեկնելուց անմիջապես հետո Սավուղը հրամայեր նրա տան վրա հարձակվել, կարող էր ձերբակալել Դավթին, բայց քանի որ Աստված պահպանում է Դավթին, ուստի Սավուղը որոշում է հաջորդ օրը բռնել և սպանել Դավթին, և Դավիթը խույս տալու և ազատվելու ժամանակ է ունենում: Նրա կինը՝ Մեղքողը, նրան պատուհանից

փախցնելուց հետո փախուստը չհայտնաբերելու համար, մարդկային հասակին համապատասխան մի խրտվիլակ պատրաստելով, նրա մահճում է դնում, թե իբր Դավիթը հիվանդ պառկած է, և այն զգուշությամբ ծածկում է: Երբ առավոտյան Սավուղը մարդ է ուղարկում՝ Դավթին բերելու, պատասխանում են, թե հիվանդ է, ուստի հրաման է տրվում, որ նրան մահճով վերցնեն և տանեն Սավուղի մոտ: Սակայն երբ վերջապես պարզվում է, որ նա փախել է, անօրեն Սավուղը բոլորովին կատաղում է և մինչև իսկ Մեղքողին բարկությամբ ասում. «Ինչո՞ւ ինձ խաբելով՝ իմ թշնամուն փախցրիր», սակայն հիշյալն իրեն արդարացնելու համար պատասխանում է, որ Դավիթն իրեն սպառնացել էր, որ եթե ընդդիմանա, կսպանի, և այս պատասխանից Սավուղը ստիպված լռում է:

Քանի որ Սամվելը բնակվում էր Արիմաթեմում, ուստի Դավիթը, նրա մոտ գնալով, Սավուղի բոլոր արաքները մեկ առ մեկ պատմում է նրան: Սա Դավթին թագավորի բռնություններից ազատելու համար նրան տանում է Նավաթ-Հռամա կոչվող վայրը, որտեղ մի նշանավոր վարժարան կար, բազմաթիվ ուսանողներ գիտություններ էին ուսումնասիրում, և Սամվելն էլ նրանց պետն էր:

Այստեղ հարկ է նկատի առնել Սավուղի տարօրինակ և ողորմելի վիճակը: Քանի որ երբ լսում է, որ Դավիթը Նավաթ-Հռամայում է, նրան բռնել-բերելու համար զինվորներ է ուղարկում: Սրանք գնալով տեսնում են մարգարեների հավաքույթը և նաև Սամվելին, որոնք մարգարեանում են, և ահա իրենք նույնպես Աստծու ազդեցությամբ սկսում են մարգարեանալ և իրենց գալու նպատակը մոռանալով՝ առանց Դավթին մի բառ ասելու մնում են այնտեղ:

Սավուղը կրկին զորք է ուղարկում, սակայն սրանք նույնպես, նախորդների նման մարգարեանալով, մնում են այնտեղ,

ուստի երբ երրորդ անգամ զորք ուղարկելով՝ տեսնում է՝ չեն վերադառնում, սաստիկ բարկանալով՝ ինքն անձամբ է գնում, սակայն տակավին այնտեղ չհասած՝ ճանապարհին, զարմանալի բան, ինքն էլ ներշնչվելով սկսում է մարգարեանալ, և մինչև Դավթի գտնվելու վայրն է հասում՝ ինքնամոռաց, մերկ և անսնունդ, մի ամբողջ օր ու գիշեր մնում է այնտեղ, այնպես որ նրան տեսնողները միմյանց հարցնում են. «Մի՞թե Սավուղն էլ մարգարե է» (ԽԲ հարցի մեջ հիշատակվածի համաձայն՝ նախկինում էլ էին սույն հարցը տվել):

Ահա այսպես, Սավուղը, որը Դավթին գտնելու և սպանելու միակ բաղձանքով էր այնտեղ գտնվում, ամբողջովին իրեն կորցնելով, խառը և խելագար մի վիճակի է մատնվում:

Վերոհիշյալ՝ մարգարեություն անող ուսանողների մասին կարծիք կա, որ սրանք, վարժարանում գիտելիք ստանալով, ամեն մեկը մի-մի հայտնությամբ Աստծու անունը, փառքն ու տերությունն էին գովաբանում և հայտնում: Երբեմն էլ, ի վերուստ ներշնչված, ճշմարիտ մարգարեի նման ապագա իրադարձություններն էին գուշակում, և այս է պատճառը, որ Սուրբ գիրքը հաճախ *մարգարեների որդիներ* անվամբ է հիշատակում նրանց:

Սակայն Դավթին կալանավորելու գնացողներն և Սավուղը, գիտելիք չունենալով, միայն աստվածային ներշնչմամբ են մարգարեանում, և սրանց՝ իրենց գալու նպատակը մոռանալը Դավթի անմեղության նշանն ու ապացույցն է: Ուստի Սավուղի այդ խառը վիճակից օգտվելով՝ այնտեղից խույս է տալիս և Գաբաա գնալով՝ Հովնաթանին ասում. «Ես ի՞նչ չարիք եմ գործել, որ հայրդ ցանկանում է ինձ սպանել»: Հովնաթանը նրան քաջալերելու համար պատասխանում է. «Մի՛ վախեցիր հայրս առանց ինձ տեղեկացնելու ոչինչ չի անում», սակայն Դավիթը այս խոսքից իրեն ապահով չի զգում, այլ, ընդհակառակը,

հաստատվում է, որ Սավուղը, իմանալով Հովնաթանի նվիրվածության մասին, առանց նրա հետ խորհրդակցելու կարող է հետամուտ լինել՝ իրեն սպանելու, ինչպես փորձն էր ցույց տալիս:

Հովնաթանը, որ Դավթին շատ հավատարիմ էր և նրա փրկությունն էր ցանկանում, հայտնում է, որ պատրաստ է կատարել, ինչ նա խնդրի: Այն ժամանակ Դավիթն առաջարկում է. «Վաղը ամսագլուխ է, ես Սավուղի հետ սեղան նստելու փոխարեն երեք օր արտի մեջ կթաքնվեմ, և երբ ինձ հարցնի, ասա՛՝ զոհ մատուցելու համար Բեթղեհեմ է գնացել: Եթե հավանություն տա, ուրեմն խաղաղություն է ծառայիդ համար, եթե դժգոհելով բարկանա, այն ժամանակ իմացի՛ր, որ իմ հանդեպ չարիք է նյութում. արդ, եթե ծառայիդ վրա հանցանք ես գտնում սպանի՛ր և հորդ մոտ մի՛ տար»:

Արդարև, Հովնաթանը, Դավթի՝ մահու չափ վտանգի ենթակա լինելու պատճառով խիստ տխրելով, երդումով խոստանում է իմանալ հոր միտքը և նրան տեղեկացնել: Սրա համար, ըստ Դավթի խնդրանքի, քաղաքից դուրս՝ մի արտում, տեղ են որոշում, որտեղ Դավիթը թաքնվելու էր, մինչև նրան տեղեկություն բերեին:

Այս գաղտնիքը ոչ մեկին չասելու համար որոշում են հայտնելիք լուրը մի նշանով տեղեկացնել. այն է՝ Հովնաթանը այդտեղ պիտի գա մի պատանու հետ և նետ արձակի: Եթե պատանին արձակված նետը վերցնելու ժամանակ ասի, որ նետը նրա այդ կողմում է, Դավիթն առանց վախենալու կարող է դուրս գալ, իսկ եթե ասի՝ նետը նրա մյուս կողմում է, այն ժամանակ Դավիթն առանց սպասելու պիտի խույս տա:

Բացի սրանից՝ Հովնաթանը, իմանալով, որ Դավիթը մի օր թագավոր պիտի դառնա, շատ է ուրախանում և խնդրում է, որ այդ ժամանակ շնորհ անի և իրեն չմոռանա, իսկ եթե այն ժամանակ ինքը մահացած լինի, իր զավակներին չմոռանա,

նրանցից նրա խնամքը անպակաս դարձնելու համար երդվել է տալիս Դավթին:

Այս պարագայում հայտնի է դառնում նրանց միմյանց հանդեպ ունեցած հավատարմությունը, ինչպես նաև կատարյալ վստահությունը: Քանի որ ինչպես Դավիթը, սիրտը Հովնաթանի մոտ բացելով, իր փրկության համար նրանից խորհուրդ և տեղեկություն ստանալ է ցանկանում, նույնպես և Հովնաթանն ամենայն վստահությամբ իրեն և իր զավակներին Դավթի խնամքին և պաշտպանությանն է հանձնում:

Սրանից հետո Դավիթը, ինչպես որ համաձայնեցրել էր Հովնաթանի հետ, գնում է Բեթղեհեմ և որոշված ժամին գալով դաշտ՝ թաքնվում է մի քարի մոտ, որպեսզի սպասված լուրը Հովնաթանից ստանա:

Ավելորդ է ասել՝ Սավուղը, որ մի խելագարի նման Նավաթ-Հռամայում մերկ պառկած էր, միաառժամանակ հետո սթափվելով, առանց իր նպատակին հասնելու ձեռնունայն Գաբաա է վերադառնում: Հաջորդ օրն ամսամուտ էր. սովորության համաձայն՝ Հովնաթանի, Աբենների և այլ հազարապետերի հետ սեղան է նստում՝ հաց ուտելու, ու թեև Դավթի տեղը դատարկ էր, սակայն այդ օրը Սավուղը ձայն չի հանում:

Երկրորդ օրը, երբ նշմարում է Դավթի բացակայությունը, Հովնաթանին հարցնում է, թե ինչու Հեսսեի որդին այդ օրը իրենց հետ սեղան չի նստել, և Հովնաթանը շտապում է պատասխանելու, որ Դավիթն իր եղբայրների և ազգատոհմի հետ զոհ մատուցելու համար Բեթղեհեմ գնալու հրաման է վերցրել իրենից: Սավուղը սա լսելուն պես, սաստիկ զայրանալով, սկսում է հայհոյել և վճռականորեն ասում է. «Քանի որ Հեսսեի որդին կենդանի է, քո թագավորությունդ չի կարող հաստատուն մնալ, հիմա մա՛րդ ուղարկիր, բռնե՛լ տուր նրան, քանի որ նա մահվան է արժանի»:

Մտապահի՛ր. Սավուղն այնքան էր թշնամացել Դավթին, որ նույնիսկ նրա անունը չցանկանալով հիշել՝ նրան Հեսսեի որդի է անվանում: Իրոք, Սավուղի այսպիսի անիրավ վարմունքի պատճառով Հովնաթանի սիրտը խորապես խոցվում է, սակայն և՛ հորը մեղանչելուց հեռու պահելու, և՛ Դավթին ազատելու համար գովելի եռանդով հարցնում է. «Ինչո՞ւ մահանա, ի՞նչ է արել»:

Այս խոսքերից Սավուղը, նորից բարկանալով, վերցնում է գեղարդը, որ Հովնաթանին հարվածելով սպանի, սակայն սա, իսկույն բարկանալով, հեռանում է և այնքան է վշտանում, որ այդ օրը կերակուր չի ճաշակում: Առավոտյան իր հետ վերցնելով մի պատանու՝ Դավթի թաքնված վայրն է գնում և ըստ վերոհիշյալ պայմանավորվածության՝ սկսում է նետեր արձակել: Պատանու՝ արձակված նետերը հավաքելու ժամանակ Հովնաթանը նրա հետևից բարձրաձայն գոչում է. «Նետը քո այն կողմում է, շտապի՛ր, արագացրո՛ւ և բնավ մի՛ կանգնիր»:

Դավիթը, որ այնտեղ էր, այս խոսքը լսելով, հասկանում է, որ պետք է հեռանա, քանի որ հայտնի է դարձել, որ Սավուղը իր չարությամբ անդրդվելի է և համառ: Երբ պատանին, որը գործին տեղյակ չէր, Հովնաթանի հրամանով քաղաք է վերադառնում, Դավիթը թաքստոցից դուրս է գալիս և շնորհակալությամբ երեք անգամ խոնարհվում է Հովնաթանի առջև, և արտասվալից իրար եղբայրական համբույր են տալիս: Հովնաթանը, ինչպես նախապես Դավթին խնդրել էր, որ միշտ միմյանց հանդեպ սիրով մնան, այս անգամ էլ է նույնը հաստատում և Աստծուն վկայակոչելով՝ ասում, որ գնա խաղաղությամբ, և Տերը թող նրա հետ լինի: Դավիթը Սավուղի ձեռքից ազատվելու համար փախչում է, և Հովնաթանն էլ Գաբաա է վերադառնում:

Հարց ԻԱ: **Դավիթը, Հովնաթանից բաժանվելով, ո՞ւր է գնում:**

Պատասխան: Կռապաշտների երկիր փախչելու համար գնում է Նորմա քաղաք: Որովհետև այն ժամանակ Ուխտի տապանակը այնտեղ էր, այնտեղ է գնում՝ նախ Աքիմելեք քահանայի միջոցով Տիրոջ կամքն իմանալու և ըստ այդմ վարվելու դիտավորությամբ: Երբ Աքիմելեքը նրան միայնակ և առանց զենքի է տեսնում, վախով հարցնում է, թե ինչու ոչ մի ընկեր չունի իր հետ: Դավիթը այնպես է իրեն պահում, ասես թագավորի հրամանով մի գաղտնի հանձնարարություն ունի և իր մարդկանց այլ վայրում է թողել. նրա այսպիսի վարքի նպատակը Սավուղի ձեռքից փախչելը գաղտնի պահելն էր:

Մանավանդ շատ շտապելու պատճառով իր հետ հաց և զենք չէր վերցրել, ուստի քահանայապետից զենք և հինգ հատ հաց է խնդրում: Սակայն սեղանին դրված առաջավորաց հացից բացի, որը միայն քահանաներին էր արտոնված ուտել (տե՛ս Ժ հարցը), այնտեղ այդ օրը այլ հաց չլինելով՝Դավիթը շտապում է հայտնելու, որ տղաները երեք օրից ավելի է, որ մաքուր են, և այսպես հնարավոր է լինում ուտել սեղանի հացից:

Սրանից բացի՝ Դավիթը, Գողիաթին սպանած լինելով, նրա սուրը խորանին էր ընծայել, և քահանայապետը այն Դավթին է վերադարձնում: Սակայն Սավուղի ախոռապետը՝ Դավիկ անունով մի ասորի, որ այնտեղ էր գտնվում իր լուսնոտությունից բժշկվելու և զոհ մատուցելու համար, ահա այս օտարական և մատնիչ անձնավորությունը տեսնում է, որ Աքիմելեք քահանայապետը Դավթին հաց և զենք է տալիս, և այս արարքը նույն այդ Դավիկ ասորու գարշելի և վատ մատնությամբ վերջում բավականին տխուր հետևանքներ է ունենում:

Դրանից հետո Դավիթը իր մարդկանց մոտ է գալիս և այդ հացից նրանց ևս տալով՝ ինքը միառժամանակ ապահով

լինելու համար միայնակ Գեթ քաղաքի Անքուս թագավորի մոտ է գնում: Թեև Անքուսը նրան պատվով է ընդունում, սակայն նրա իշխանները, Դավթին իմանալով, ասում են. «Սա այն Դավիթը չէ՞, որի մասին ժողովուրդը երգում էր, որ Սավուղը հազար սպանեց, Դավիթը՝ տասը հազար»:

Նրանց սույն խոսքը լսելով և մանավանդ իմանալով, որ վերոհիշյալ Գողիաթը Գեթ քաղաքից էր, Դավիթը վախենում է, թե միգուցե նրա պատճառով իրեն սպանեն, ուստի սկսում է, սողալով և բերանից փրփուր թափելով, իրեն խելագար մարդու նման պահել և քաղաքի դռան մոտ խաղալ, որպեսզի խելագար կարծելով՝ վռնդեն իրեն:

Արդարև, Անգուսը, Դավթին այդ վիճակում տեսնելով, ասում է. «Մի՞թե խելագարի կարոտ էի, ինչո՞ւ այս մարդուն ինձ մոտ բերեցիք, ևս մեկ անգամ չտեսնեմ», և այս կերպ Դավիթն ազատվելով Բեթղեհեմի Ողողոմի քարայրն է գալիս: Դավթի գալու մասին լսելով՝ նրա ծնողներն ու եղբայրները մոտն են գալիս: Բայց այստեղ իրենց վիճակից դժգոհ, պարտքեր ունեցող և զանազան դիպվածների պատահած ու ցավից տանջվող չորս հարյուր հոգու չափ մարդիկ, հոժարակամ գալով, նրա իշխանությանն են ենթարկվում:

Հիրավի, Դավիթը չորս հարյուր մարդկանց գլուխ է դառնում, սակայն մտածելով, որ միգուցե իր պատճառով Սավուղն իր ծնողներին չարիք հասցնի, նրանց տանում է Հորդանանի մյուս կողմը և Նաաս թագավորից խնդրում, որ միառժամանակ պահպանի իր ծնողներին, մինչև Աստված իրեն ողորմություն անի:

Թեպետ Դավիթը կռապաշտների երկրում է ապաստանում, սակայն Տիրոջից հույսը չկտրելով, Նրա հզոր օգնությանն ապավինելով՝ Գադ մարգարեն, Աստծու հրամանով Դավթի մոտ գալով, ասում է. «Այստեղ մի՛ նստիր, ելի՛ր և գնա՛

Հուդայի երկիր»: Ուստի Դավիթը, իր ծնողներին Նաաս թագավորի մոտ թողնելով, այնտեղից մեկնելով, գալիս է Հուդայի երկիր՝ Սարիթ քաղաք:

Ուշադրությո՛ւն դարձրու. Սավուղը Դավթին սպանելու համար փնտրում է նրան, որը նրա ձեռքից ազատվելու համար օտար երկիր է փախչում, սակայն Դավթի առաքինությունը և Սավուղի չարությունը ամբողջ աշխարհին հայտնի լինելով՝ Աստված Դավթին հրամայում է, որ նորից Սավուղի հողը վերադառնա: Այո՛, Դավիթը Սավուղին վնասելու դիտավորություն չի ունենում, այլ միայն մտածում է իրեն պաշտպանելու մասին, սակայն քանի որ Սավուղի միտքը չար էր, կասկածում է, որ միգուցե զորք հավաքելով՝ հարձակվի իր վրա, ուստի հեգնորեն և հանդիմանությամբ իրեն շրջապատող հպատակներին ասում է. «Հեսսեի որդին ձեզ արտ, այգի և աստիճան կտա, որի համար էլ դուք միավորվել եք իմ դեմ, և ոչ ոք ինձ կարեկցելով՝ Հովնաթանի և Դավթի միավորվելն ինձ չհայտնեց, նա էր, որ իմ ծառային ինձ թշնամի դարձրեց»:

Մինչ Սավուղը այսպես խոսում էր, վերոհիշյալ Դավիկ ասորին էլ պատմում է, թե ինչպես է Աքիմելեք քահանայապետը Դավթին հաց և Գողիաթի սուրը տվել: Սա լսելուն պես Սավուղն իսկույն մարդ է ուղարկում և Աքիմելեքին և նրա բոլոր քահանաներին բերել է տալիս: Սավուղը բարկությամբ հարցնում է. «Ի՞նչ է սա, որ դուք, Հեսսեի որդու հետ միավորվելով, հաց և սրեր եք տալիս նրան»:

Աքիմելեք քահանան, որ անտեղյակ էր Սավուղի և Դավթի գժտությունից, կտրուկ պատասխանում է. «Քա՛վ լիցի, որ ծառադ թագավորին հակառակ գործի, ուղղակի ես Դավթին որպես թագավորին հավատարիմ մարդ, փեսա և նրա ծառա եմ ճանաչում, և ոչնչից տեղյակ չեմ», սակայն Սավուղը

չհամոզվելով հրամայում է, որ Աքիմելեքին և նրա հետ բոլոր քահանաներին անխնա կոտորեն:

Դու տե՛ս, թե նախանձը, որը հպարտության ծնունդ է, մարդու միտքն այնքան է խավարեցնում, որ այլևս անկարող է լինում զանազանելու չարն ու բարին, բարեկամին և թշնամուն, ինչպես Սավուղը, նախանձի ախտով վարակված, բացարձակապես անիրավ գործելով, հրամայում է որպես չարագործների սպանել քահանաներին:

Սակայն նրանց անմեղությունը բոլորին էր հայտնի, և Սավուղի ծառաները չեն համարձակվում ձեռք բարձրացնել Տիրոջ պաշտոնյաների վրա: Այն ժամանակ Սավուղը վերոհիշյալ մատնիչ Դավիկին է հրամայում կատարել իր կամքը, և այդ օրը երեք հարյուր հինգ քահանա, որոնք բոլորն էլ խորանին էին ծառայում, անխնա սպանվում են:

Սրանից բացի՝ բարկությունն այնքան է տիրում նրա սրտին և գրավում ողջ էությունը, որ քահանաներին սպանելով չի բավարարվում, այլ նաև նրանց Նոմբա քաղաքի բնակիչներին՝ տղամարդկանց և կանանց, ծերերին և մանուկներին մինչև կաթնակերը, նույնիսկ նրանց բոլոր անասուններին է բարբարոսաբար սրի քաշում, միայն Աքիմելեքի որդի Աբիաթարը ազատվելով Դավթի մոտ է գնում և պատմում է Սավուղի անգթությունը, և Դավիթը, նրան մխիթարելով, իր մոտ է պահում:

Դավթի սիրտը շատ է ցավում քահանաների և Նոմբայի բնակիչների կոտորածի համար, նաև իմանում է, որ այս դժբախտությունը Դավիկ ասորու մատնությամբ և նրա անօրեն և գործուն մասնակցությամբ է կատարվել:

Այնուհետև Դավիթը տեղեկանում է, որ կռապաշտները Կեիլա քաղաքի բնակիչների դեմ են պատերազմում, և որոշում է գնալ ու նրանց ազատել: Սակայն այդ վայրը թշնամուն սահմանակից էր, և երբ իր մարդիկ երկյուղ են հայտնում,

վերոհիշյալ Աբիաթարի միջոցով Տիրոջից հարցնում է և Նրա հրամանով անմիջապես թշնամու վրա հարձակվելով՝ շատ մարդկանց է կոտորում, և թեև մնացածները փախուստի են դիմում, սակայն նրանց անասունները Դավթի ձեռքն են անցնում և այսպես քաղաքը փրկելով՝ ինքն էլ այնտեղ է մնում:

Օրինա՛կ վերցրու Դավթի առաքինությունից. Սավուղը ցանկանում է սպանել Դավթին, սակայն սա, ազգային նախանձախնդրությամբ և եռանդով լցված, Սավուղի երկիրն ազատում է թշնամիներից: Հիրավի, այս պարագայում Սավուղը պարտավոր էր, ամեն թշնամությունից հետ կանգնելով, շնորհակալ լինել Դավթից, քանի որ նա, թշնամու վրա հարձակվելով, իր անձն էր վտանգում, սակայն Սավուղը, ինչպես նախկինում իր սաստիկ նախանձի պատճառով, այդպես էլ այս անգամ չի ցանկանում ընդունել Դավթի երախտիքը:

Հարց ԻԲ: **Սավուղը, Դավթի տեղն իմանալով, հետամտո՞ւմ է նրան:**

Պատասխան: Այո՛, հետամտում է: Որովհետև Կեիլա քաղաքում նրա բնակվելու մասին լսելուն պես իր զորքերին հրամայում է, որ քաղաքը պաշարելով՝ բռնեն Դավթին: Դավիթը տեղյակ է լինում կատարվելիքին, մանավանդ Աբիաթարի միջոցով Տիրոջը հարցնելով՝ պատասխան է ստանում, որ Սավուղը քաղաքը պաշարելու է, և քաղաքացիներն էլ վախից նրան Սավուղի ձեռքն են հանձնելու, ուստի իր պատճառով ոչ մեկին չվնասելու համար, այդ քաղաքից մեկնելով, այլ տեղ է գնում:

Թեև Կեիլայից Դավթի մեկնելու մասին լսելով՝ Սավուղն այնտեղ չի շարժվում, սակայն հանգիստ չմնալով՝ փափագում է բռնել նրան և պատեհ առիթի է սպասում: Դավիթը, իր մարդկանց հետ Զիփա անապատ գնալով, բնակություն է

հաստատում Մռայլ լեռան մի քարայրում: Քանի որ այն կողմերում անտառներ և բազում քարայրեր կային և ըստ անհրաժեշտության՝ հեշտությամբ կարելի էր այնտեղ ապաստանել: Ու քանի որ (ինչպես Ի հարցի մեջ է հիշատակվել) Հովնաթանը Դավթի հետ ուխտել էր միշտ սիրով մնալ, հիշյալ քարայրում բնակություն հաստատելը լսելուն պես, Սավուղից գաղտնի նրա մոտ է գնում և առաջին ուխտը նորոգելով՝ Դավթին ասում է. «Մի՛ վախեցիր հայրս չի կարող քեզ գտնել, դու պիտի թագավոր լինես, և ես՝ քո երկրորդը»[129], և այսպիսի հուսադրող խոսքերով Դավթին քաջալերելուց հետո մեկնում է:

Թեև Հավնաթանի սույն վարմունքը Սավուղի կամքին հակառակ էր, սակայն Աստծու հրամանի համաձայն լինելով՝ նա առանց վախենալու գնում է Դավթի մոտ: Քանի որ Սավուղի չարությանը և Դավթի առաքինությանը նայելով՝ հասկանում է, որ թագավորությունը, իր հորից վերցվելով, արդարությամբ Դավթին պիտի տրվի:

Դու Հովնաթանի հավատարմությա՛նը նայիր. ինչքան Սավուղը, արդարությանն ընդդիմանալով և Դավթին նախանձելով, թշնամանում է, այդքան էլ Հովնաթանը, արդարության սկզբունքներին համապատասխան, սիրում է նրան: Սավուղը ցանկանում է Դավթին սպանել, որ թագավոր չդառնա, Հովնաթանը, ընդհակառակը, նրան օգնում է, որ թագավոր լինի: Դավթի հայրը սոսկ մարդ է, մինչդեռ Հովնաթանը, թագավորի որդի լինելով, թագավորությունը Դավթին վայել և հարմար է գտնում, և ինքը սրտանց և անկեղծորեն ցանկանում է նրա երկրորդը լինել:

---

[129] Հովնաթանն ասաց նրան. «Մի՛ վախեցիր, որովհետև իմ հայր Սավուղի ձեռքը քեզ չի գտնի, և դու կթագավորես Իսրայելի վրա, իսկ ես քո երկրո՛րդը կլինեմ» (*Ա Թագ. 23:17*):

Ճշմարիտ է, որ Հովնաթանը մահանալով Դավթի թագավորելը չի տեսնում, սակայն Դավթի սրտից նրա սերը երբեք չի ջնջվում[130]:

Արդ, վերոհիշյալ Զիփ քաղաքի բնակիչները, իմանալով, որ Դավիթը իրենց մոտ մի տեղ է թաքնվել, և միգուցե Սավուղը, դա իմանալով, Նորմա քաղաքի բնակիչների աղետն իրենց էլ հասցնի, Դավթի գտնվելու վայրի մասին հայտնում են Սավուղին և մանավանդ խոստանում են Դավթին բռնելու համար իրենք էլ նրա հետ լինել:

Արդարև, Սավուղը, այս լուրը շատ հավանելով, պատվիրում է, որ նորից ուշիուշով հետազոտելուց հետո վերստին իրեն տեղեկություն հայտնեն, և ինքն էլ առանց սպասելու իր զորքով պատրաստվում է: Դավիթը, լսելով նրա մտադրության մասին, գնում և ապաստանում է Մաոնի անապատի ժայռերում:

Այն ժամանակ Սավուղն ընկնում է նրա հետևից և, շրջապատելով նրան, մոտենում է բռնելու չափ, երբ հանկարծ Աստծու կամեցողությամբ մի սուրհանդակ, «շուտ հասի՛ր և մի՛ հապաղիր» ասելով, լուր է բերում Սավուղին, որ թշնամիները, նրա երկիր մտնելով, ավերում են: Սույն մեծագույն վտանգի լուրը ստանալուն պես Սավուղը, Դավթին թողնելով, վերադառնում է, որպեսզի թշնամուն իր երկրից դուրս հանի: Այսպես, վերին օգնության շնորհիվ Դավիթն ազատվում է Սավուղից:

Այստեղ Աստծու գաղտնի դատաստանի մասի՛ն խորհիր, քանի որ այս անգամ Դավիթը այնքան նեղ դրության մեջ էր ընկել, որ մարդու պես խորհելով՝ փրկության ոչ մի ելք չէր

---

130 Ցավում եմ քեզ համար, եղբա՛յր իմ Հովնաթան: Ինձ շատ սիրելի էիր, քո սերը կանանց սիրուց բարձր էր (*Բ Թագ. 1:26*):

երևում, սակայն Տերն իր զորությունն անհնարին պարագաներում է ցույց տալիս, այնպես որ Սավուղը մի ահավոր վտանգի լուրն առնելուն պես ստիպված է լինում Դավթին անմիջապես թողնելու և հեռանալու:

Այս է պատճառը, որ այս վայրը կոչվում է *բաժանված կամ բաժանող վեմ*[131], քանի որ Սավուղը, որն այնտեղ պաշարել էր Դավթին, բաժանվելով գնում է, սակայն ոչ թե իր հոժար կամքով, այլ Տիրոջ՝ առ Դավիթ ունեցած հատուկ պաշտպանության զորությամբ, ինչպես սրա մասին Դավիթն է խոստովանում Աստծու իր հանդեպ կատարած ողորմությունը[132]: Դրանից հետո Դավիթը գնում է Գադդայի անապատ և բնակվում մի քարայրում:

Արդ, թեպետ Սավուղը իր երկրից դուրս է հանում թշնամուն, սակայն Դավթի անվնաս մնալն ու ազատվելը սրտին շատ ծանր լինելով, երբ լսում է, որ նա Գադդայի անապատում է, երեք հազար զորքով այն կողմ է գնում, որպեսզի այս անգամ անպատճառ սպանի նրան: Սակայն այդ երկրում բազում ժայռոտ լեռներ և քարանձավներ են լինում, և «արդյոք որտե՞ղ է» ասելով որոնելու ժամանակ՝ Դավթի թաքնված քարանձավն են մտնում, որպեսզի հանգստանան:

Սույն քարայրի մուտքը՝ փոքր, ներսը ընդարձակ և մանավանդ մութ էր, և Սավուղը լույսից մութ տեղ մտնելու պատճառով չի կարողանում նշմարել, որ ներսում մարդ կա, սակայն Դավիթը և նրա մարդիկ, որոնք մթության մեջ էին, Սավուղի ներս մտնելը տեսնելով՝ ճանաչում են նրան: Թեև հիշյալի այնտեղ գտնվելու ժամանակ Դավթի մարդիկ ցանկանում են

---

[131] Այդ պատճառով այս վայրը կոչվեց Բաժանված վեմ (*Ա Թագ. 23:28*):

[132] Ժայռից բարձր պահեցիր ինձ, այժմ էլ գլուխն իմ բարձրացրո՛ւ թշնամիներիս վրա (*Սղ. 26:6*):

նրան սպանել, սակայն Դավիթը չի համաձայնում նրա վրա ձեռք բարձրացնել, միայն իր հավատարմությունը նրա հանդեպ հաստատելու համար վերարկուի փեշն է կտրում և անգամ այս արարքի համար է Դավիթը զղջում[133]՝ այն Սավուղի համար անարգանք համարելով, քանի որ երբևէ նրան վնասելու մտադրություն չի ունենում, այլ միայն ցանկանում է իր անձը պահպանել նրա համառ չարությունից:

Երբ Սավուղը, քարայրից դուրս գալով, պատրաստվում է հեռանալ, Դավիթն էլ նրա հետևից, Տիրոջը հուսալով դուրս գալով, բարձրաձայն աղաղակում է. «Ո՛վ իմ տեր թագավոր»: Սավուղը ծանոթ ձայնը լսելուն պես հետ է նայում, և Դավիթը, իսկույն երեսնիվայր գետնամած խոնարհվելով, ասում է. «Ինչո՞ւ ուրիշի խոսքին լսելով՝ ինձ թշնամի ես համարում քեզ, ահա այսօր Տերը քեզ իմ ձեռքը մատնեց, ահա քո թիկնոցի կտորը, որն այժմ կտրել եմ, սակայն թագավոր լինելուդ համար քեզ չսպանեցի, ուրեմն իմացի՛ր, որ քո դեմ երբեք չարություն և հանցանք չեմ գործել, միայն դու ես, որ ցանկանում ես ինձ սպանել»: Մանավանդ Սավուղի աստիճանին նայելով՝ իրեն սատկած շան և լվի հետ է համեմատում, և վերջապես իրենց դատը Տիրոջը հանձնելով՝ ամենայն խոնարհությամբ հավելում. «Թող մեր դատն Աստված տեսնի»[134]:

Եվ իրոք, Դավթի խոսքերից ամեն մեկը նետի պես Սավուղի սիրտն են խրվում, և նա պատասխանում է. «Ո՛վ իմ որդի Դավիթ, այս ձայնը քո՞նն է»[135]: Այո՛, մինչև այն պահը Սավուղն ինչքան չարիք հասցրել էր Դավթին, այս անգամ նրա

---

[133] Դրանից հետո Դավիթը խղճի խայթ զգաց, որ նրա թիկնոցի մի ծայրը կտրել է (*Ա Թագ. 24:6*):

[134] Թող Տերը դատ անի իմ ու քո միջև (*Ա Թագ. 24:13*):

[135] Սավուղն ասաց. «Այդ քո՞ ձայնն է, որդյա՛կ իմ Դավիթ» (*Ա Թագ. 24:17*):

բարությունն ու հավատարմությունը արեգակի նման հայտնի դառնալով՝ սկսում է բարձրաձայն արտասվել և խոստովանում է. «Դու ինձնից արդար ես, քանի որ ես քեզ չարիք ցանկացա, իսկ դու ինձ միայն բարիք արեցիր. նա, ով թշնամու նեղ օրերին բարիք է անում, Տիրոջից ողորմություն կգտնի»[136]:

Սրանից բացի՝ Սավուղը, իր կենցաղը ու Դավթի առաքինությունը նկատի ունենալով, հասկանում է, որ մի օր նա թագավոր պիտի դառնա, դրա համար էլ նրան երդվել է տալիս, որ թագավոր ժամանակ իր որդիներին չի կոտորի, Դավիթն էլ նրա պահանջածի համաձայն երդվում է:

Մտածի՛ր. Սավուղը, Դավթին քինախնդիր մարդ համարելով, նրան երդվել է տալիս, սակայն Դավիթը, քինախնդիր և ոխակալ մարդ չլինելով, ինչպես Սավուղին չարիք չի կամենում, այդպես էլ հայտնի է, որ նրա սերունդներին չարիք չի հասցնում և միայն դա ապահովելու համար երդվում է թողնել թշնամությունը:

Օրինա՛կ վերցրու. Դավիթը թեև պատերազմի զենքերով կռվելով չի հաղթում Սավուղին, այլ չարիքի փոխարեն բարիք անելով՝ մի այնպիսի հաղթանակ է տանում նրա նկատմամբ, որ Սավուղը ստիպված նրան իրավունք է տալիս և արտասվում: Մանավանդ երեք հազար մարդկանցով լեռներն ընկած՝ Դավթին սպանել փափագելու ժամանակ նրան գտնելուց հետո հարկադրված է լինում թողնելու և ապաշխարելով վերադառնալու իր տեղը:

Դավիթն էլ այնտեղից գնում և բնակվում է Մասարայում, քանի որ Սավուղի հեղհեղուկ բնավորությունն իմանալով՝

---

[136] Սավուղն ասաց Դավթին. «Դու ավելի արդար մարդ ես, քան ես, քանզի դու ինձ բարիք հատուցեցիր, իսկ ես քեզ չարիք հատուցեցի…. Եթե մեկն իր թշնամուն նեղության մէջ բռնելով՝ նրան ազատ է արձակում…. Տերը նրան բարությամբ է հատուցում (*Ա Թագ. 24:18–20*):

ցանկանում է նրանից զգուշանալ: Այդ ընթացքում մահանում է Սամվել մարգարեն, նրան թաղում են Արիմաթեմում, և բոլոր իսրայելացիները նրա համար սուգ են պահում:

Այնուհետև Դավիթը Մաոնի անապատ է գալիս, որտեղ Նաբաղ անունով մի մարդ կար, որը երեք հազար ոչխար և հազար էլ այծ ուներ, և որի հովիվները նրա հոտերն արածեցնում էին Մեռյալ ծովի մոտ՝ Հուդայի երկրի Կարմեղոս լեռան լանջերին: Եվ քանի որ հիշյալ վայրը Դավթի մնալու տեղին մոտ լինում, Դավիթը նրա հոտերը պաշտպանում է թշնամիներից:

Դավիթը տեղեկանում է, որ Նաբաղը խուզում է իր ոչխարներին, և քանի որ ըստ սովորույթի՝ այդ օրերը ուրախության և կերուխումի օրեր են լինում, Դավիթը Նաբաղի մոտ տասը մարդ ուղարկելով և սիրալիր խոսքերով նրա որպիսությունը հարցնելուց հետո այդ օրերի և բարեկամության պատվին խնդրում է, որ իր ծառաներին և Դավիթ որդուն շնորհի, ինչ որ սիրահոժար կամքով կցանկանա տալ:

Նրանք թեև Նաբաղի հետ Դավթի պատվիրածի համաձայն քաղցր խոսքերով և խոնարհությամբ են խոսում՝ հիշեցնելով, որ իրենք նրա հոտերը անվնաս են պահում թշնամուց, սակայն Նաբաղը, որը անմարդասեր, տգետ և խիստ չար անձնավորություն էր, պատասխանում է. «Ո՞վ է Դավիթը. այս օրերին իրենց տերերից փախչող ծառաները շատացել են, մի՞թե իմ մարդկանց համար պատրաստած հացը, գինին և միսը անծանոթ մարդկանց պիտի տամ»:

Հիշյալ տասը պատգամավորները, Նաբաղի այսպիսի անհիմն խոսքերը լսելով, թեև բարկանում են, սակայն առանց պատասխան տալու վերադառնում են և պատմում Դավթին: Հիրավի, Դավիթը ոչ մեկին չի ցանկանում վնասել, ընդհակառակը, չարիքի փոխարեն բարիք է անում, սակայն չկամենալով

հանդուրժել Նաբաղի անկիրթ խոսքերը՝ չորս հարյուր մարդկանցով իսկույն գնում է, որպեսզի Նաբաղի ամբողջ ընտանիքը, մինչև իսկ նրա շանը, սրի քաշի:

Սակայն ինչքան Նաբաղը չար էր, նույնքան էլ նրա կինը՝ Աբիքեան, բարի, իմաստուն և խոհեմ էր: Իր ամուսնու վարմունքի մասին ծառաներից մեկից իմանալով, իսկույն, ամուսնուց թաքուն, երկու հարյուր հաց, հինգ եփած ոչխար, գինի և այլ ուտելիք ավանակներին բարձելով և Դավթին ուղարկելով՝ ինքն էլ ավանակով հետևում է դրանց:

Սույն ազնվական կինը, ճանապարհին Դավթին հանդիպելով, իսկույն իջնում է ավանակից և նրա առջև երեսնիվայր գետնամած խոնարհվելով՝ խոնարհաբար և կոտրված սրտով սկսում է խոսել. «Տե՛ր իմ, լսի՛ր աղախնիդ, հանցանքն իմս է, որովհետև երբ ուղարկածդ մարդիկ գալիս են, ես այնտեղ չէի, Նաբաղի համար ընդհանրապես մի՛ նեղացիր, քանի որ նա շատ չար է, և ինքն իրեն չի հասկանում, դրա պատճառով արյուն չթափվելու համար Աստված աղախնիդ ուղարկեց, ընդունի՛ր իմ ընծաները, թող քո թշնամին Նաբաղի պես լինի, տերը քեզ թշնամու չարիքից փրկի, և թող քեզ վրա ոչ մի չարություն չգա»:

Միևնույն ժամանակ հայտնելով, որ նա թագավոր պիտի լինի, խնդրում է, որ իրեն չմոռանա: Այսպիսի իմաստուն կնոջ խոսքերը լսելուն պես ոչ միայն Դավթի բարկությունն է մեղմանում, այլև Նաբաղի նման մի վատ մարդու պատճառով բարկացած լինելն էլ չախորժելով՝ Աստծուն շնորհակալ է լինում, որ իրեն մեղքից ազատեց:

Նաև հիշյալ կնոջ ընծան ընդունելուց բացի՝ գովում է նրան և ասում, որ գնա խաղաղությամբ, ապա, քանի որ մեծ վտանգից և մեղքից է ազատվում, ուրախությամբ վերադառնում է իր տեղը: Աբիքեան էլ, վերադառնալով իր տուն, այդ գիշեր

Նաբաղին ոչինչ չի հայտնում, քանի որ հիշյալը, մեծ խնջույք սարքելով, սաստիկ հարբած էր: Երբ առավոտյան սթափվում է, եղելությունը մեկ առ մեկ պատմելուն պես երկյուղից սիրտը քար է կտրում, և տասն օր հետո մահանում է: Երբ Դավիթը լսում է Նաբաղի մահվան մասին, շնորհակալ է լինում Աստծուն, որ իր դատաստանը արդարությամբ է տեսնում: Դրանից հետո, օրենքի համաձայն, մարդ ուղարկելով Աբիքեայի մոտ՝ իրեն կնության է առնում:

Հարց ԻԳ: **Սավուղը նորից թշնամանո՞ւմ է Դավթին:**

Պատասխան: Այո՛, Սավուղը, տեսնելով Դավթի վերոհիշյալ վեհանձն արարքը և օրինակելի հավատարմությունը, թեև որոշակիորեն խոստովանում է նրա արդար լինելը, սակայն ուղղվելու փոխարեն նա, մինչ այդ ժամանակ անկարող հասնելու իր չար նպատակին, նեղսրտած, Դավթի կնոջը՝ Մեղքոլին, ուրիշին է կնության տալիս:

Իրոք, այս արարքը մեծ անարգանք և անպատվություն էր և՛ Սավուղին, և՛ նրա աղջկան, սակայն հիշյալն իր թշնամության կիրքը հագեցնելու համար հանձն է առնում այդ անպատվությունը:

Դավիթն էլ նորից գալիս է Զիփ քաղաքի մերձակա անապատում գտնվող Եքեղատի բլուր և բնակվում այնտեղ: Այդ քաղաքի բնակիչները, ինչպես անցյալում, այդպես էլ այժմ, վախից Սավուղին տեղյակ են պահում Դավթի գալու մասին: Սա էլ անմիջապես երեք հազար զորքով գալիս և բանակ է զարկում Դավթի գտնվելու վայրի մոտ: Դավիթը, սա իմանալով, գաղտագողի գնում է Սավուղի վրանի համար հատկացված վայրը և ամենայն զգուշությամբ քննում և տեղեկանում է ամեն ինչին:

Դրանից հետո՝ հենց նույն գիշերը, Դավիթը մեկի ընկերակցությամբ մտնում է Սավուղի զորքի մեջ, և երբ Սավուղը

քնած էր՝ գլխավերևում գետնի մեջ մխրճված նիզակն ու ջրի սափորը կողքին, նրա զորավար Աբենները և ամբողջ զորքն էլ նրա շուրջը խոր քուն էին մտել, հաջողեցնում է մտնել նրա վրանը:

Այդ ժամանակ Դավթի ընկերը իսկույն ցանկանում է սպանել Սավուղին, Դավիթն արգելում է՝ ասելով. «Ո՞վ կարող է տիրոջ կողմից թագավոր կարգված մարդու վրա ձեռք բարձրացնել և թողություն գտնել, թող Աստված խրատի նրան, թող բնական մահով կամ պատերազմելիս մահանա, քա՛վ լիցի, որ ես թագավորի վրա ձեռք բարձրացնեմ», և միայն Սավուղի նիզակն ու ջրի կուժը վերցնելով՝ մեկնում է:

Արդարև, Դավթի այս արարքը մեծ համարձակություն էր, քանի որ երեք հազար մարդու մեջ մտնելն ու ընկերոջ հետ վիճաբանելը մեծ վտանգ էր: Սակայն մի՛ մտածիր, թե չէր խորհում այդ վտանգի մասին, այլ մանավանդ Տիրոջ զորությանն ու արդարությանն ապավինելով՝ քայլում էր առաջ՝ ոչ թե իր հակառակորդին վնասելու դիտավորությամբ, այլ իր հավատարմությունը նրան հայտնելու:

Արդյոք այս դեպքը արդարացում չի՞ լինում Դավթի համար, քանի որ Աստծու զորությամբ այդ բազմությունից ոչ մեկը չի արթնանում և չի իմանում նրա գալու և գնալու մասին, և նրա առաքինությունն ու Սավուղի չարությունը ամբողջ աշխարհին հայտնելու համար Տիրոջից, որպես Դավթի փրկության շնորհ, բոլորի վրա մի ծանր քուն և թմրություն է իջնում[137]:

Սրանից բացի, երբ Դավիթը բանակից դուրս է գալիս, մի բարձր տեղ կանգնելով՝ ձայն է տալիս, որ զորքն աթնանա, և Աբենների անունը տալով՝ հարցնում է, թե ինչու չի

---

[137] Քանզի թմրությունը Տիրոջ կողմից իջած լինելով նրանց վրա՝ բոլորը քնի մեջ էին (*Ա Թագ. 26:16*):

պատասխանում: Սրանից էլ զարթնելով՝ Աբենները ցանկանում է տեղեկանալ, թե ով է իրեն կանչում: Ահա այդ ժամանակ Դավիթը, նրան հանդիմանելով, ասում է. «Ո՛վ Աբեններ, քեզ նման քաջ Իսրայելում ո՞վ կա, և ինչո՞ւ չես պաշտպանում թագավորին, քանի որ մեկը զորքի մեջ մտավ, որպեսզի սպանի թագավորին. արածդ լավ բան չէ: Տերը գիտի, որ դուք արժանի եք մահվան: Ահա ինձ մոտ են այն նիզակն ու ջրի կուժը, որոնք թագավորի գլխավերևում էին»:

Դավթի՝ այս խոսքերը ասելու ժամանակ Սավուղը, նույնպես արթնանալով, տեսնում է, որ նիզակն ու ջրի կուժը չկան, և Դավթի ձայնը լսելով՝ ասում է. «Ո՛վ իմ որդի Դավիթ, սա քո՞ ձայնն է»:

Դու Սավուղի խորամանկությա՛նը նայիր. բանակ հավաքելով՝ Դավթի դեմ է դուրս գալիս նրան սպանելու նպատակով, երբ նրա ցանկացած և փնտրած հնարավորությունը Դավթի ձեռքն է անցնում, և վերջինս չի վնասում նրան, միայն այն ժամանակ է նրան *իմ որդի* անվանում: Դավիթը, իրեն *նրա ծառա* անվանելուց բացի, դարձյան սրտառուչ խոսքերով և եղանակով այսպես է պատասխանում. «Ո՛վ իմ տեր, ինչո՞ւ ես ընկել ծառայիդ ետևից, ի՞նչ հանցանք եմ գործել, եթե Աստված է քեզ իմ դեմ ուղարկել, թող քո զոհը լինեմ, իսկ եթե մարդկանց թելադրանքով է, թող նզովյալ լինեն նրանք, ովքեր ինձ, իսրայելացիների երկրից զրկելով, կռապաշտների երկիր են քշում, որտեղ ակամա թափառում եմ: Սակայն իմացի՛ր, որ Տերը չի ցանկանում, որ իմ արյունը գետնին թափվի, դու՝ իսրայելացիների թագավորդ, իմ դեմ դուրս գալով, ես էլ գիշատիչ թռչունի ձեռքից փախչող թռչունի նման լեռներն եմ փախչում»:

Սավուղը, սույն խոսքերը լսելով, ինչքան էլ Դավթին թշնամի, սակայն հասկանում է, որ իրավունքը նրա կողմն է, ուստի պատասխան չունենալով՝ ակամա զղջում է: Մանավանդ

խոստովանելով, որ հանցավոր է, ավելացնում է. «Արի՛, որդի՛ս, այլևս չարիք չեմ անի քեզ»[138]:

Սակայն Դավիթը, վստահությունը կորցնելու լուրջ պատճառներ ունենալով, պատասխանում է. «Թող մեկը զա և տանի թագավորի նիզակն ու ջրի կուժը, Աստված թող յուրաքանչյուր մարդու ըստ նրա սրտի և գործերի վարձատրի, ինչպես ես քեզ արեցի, այդպես էլ թող Աստված ինձ անի և ինձ ազատի ամեն մի նեղությունից»: Թեև այն ժամանակ Սավուղն օրհնության մի քանի խոսք է ուղղում Դավթին[139], սակայն նա առանց կարևորություն տալու մեկնում է այնտեղից. Սավուղը ևս առանց հետապնդելու վերադառնում է իր տեղը:

Հարց ԻԴ: **Սավուղի «մեղա՛» ասելուց հետո Դավիթը նորից բնակվո՞ւմ է նրա երկրում:**

Պատասխան: Ո՛չ, չի բնակվում: Քանի որ ճիշտ չէ փորձածը վերստին փորձել: Ցանկանում է հեթանոսների երկիրը գնալ և զերծ մնալ Սավուղի հալածանքներից: Հիրավի, (տե՛ս հարց ԻԱ) Դավիթը չորս հարյուր մարդ ուներ, բայց հետո երկու հարյուր քաջ, մարտնչող և առյուծասիրտ մարդիկ ևս գալով՝ նրանց թիվը հասնում է վեց հարյուրի, ինչպես հայտնի է[140]:

Սակայն Սավուղի վարքին նայելով՝ իսրայելացիների երկրում հնարավոր չէր անվտանգ լինել, ուստի վերոհիշյալ վեց հարյուր մարդիկ, ընտանիքներն ու ինչքը վերցրած,

---

[138] Սավուղն ասաց. «Մեղք եմ գործել: Վերադարձի՛ր, որդյա՛կ իմ Դավիթ: Քեզ չար բան չեմ անի…. և շատ հանցավոր եմ» (*Ա Թագ. 26:21*):

[139] Սավուղն ասաց Դավթին. «Օրհնյալ ես դու, որդյա՛կ իմ Դավիթ, դու հաջողություն ես գտնելու և զորանալով զորանալու ես» (*Ա Թագ. 26:25*):

[140] *Ա Մնաց. 12*:

գնում են Գեթա՝ Անքուս թագավորի մոտ, ուր մի անգամ արդեն գնացել էին: Կռապաշտների վերոհիշյալ թագավորը և Սավուղը մշտապես թշնամի էին: Սավուղն այլևս չէր կարող Դավթին վնաս հասցնել, ուստի Սավուղը դադարում է հալածել Դավթին:

Անքուս թագավորը, Դավթին այս անգամ շատ հավանելով, ցանկանում է իր թագավորանիստ քաղաքում մի վայր հատկացնել և նրան պատվով պահել, սակայն Դավիթը, պատճառաբանելով, որ իրեն պատշաճ չէ թագավորի գտնվելու վայրում նստել, խնդրում է, որ իրեն մի այլ վայր շնորհի, որտեղ իր ողջ ունեցածով գնա և բնակվի:

Նա էլ, որպեսզի Դավիթը իր իշխանության ներքո մնա և իսրայելացիների երկիր չգնա, Սիկիլակ քաղաքը, որպես կալվածք, նրան է տալիս, որն արդեն իսկ պատկանում էր իսրայելացիներին, սակայն կռապաշտներն այն գրավել էին, և որտեղ դարձյալ իսրայելացիներ էին ապրում: Թեև Դավիթը Սիկիլակում էր բնակվում, սակայն ժամանակ առ ժամանակ հայրենասիրությունից մղված գնում էր քաղաքներից և անապատներից հեռու տեղեր, որտեղ հեթանոսներից կամ կռապաշտներից շատերին կոտորելով և կողոպտելով վերադառնում էր:

Թեպետ Դավթի գնացած վայրերը Անքուսի իշխանության ներքո չէին, այլ ուրիշ օտար ցեղերի վրա էր հարձակվում, սակայն նրանք ևս կռապաշտ էին, ուստի երբ հիշյալ թագավորը հարցնում էր, թե այդ օրը որ կողմ են գնացել, Դավիթը, որպեսզի նրա սիրտը չցավեցնի, անորոշ պատասխանում էր. «Այսօր իսրայելացիների հարավային կողմերն էինք գնացել»:

Արդարև, քանի որ նրա գնացած վայրերը իսրայելացիների հարավային կողմերում էին, Անքուսը չի իմանում, որ կռապաշտներին է կոտորում և կողոպտում, որովհետև կատարելապես վստահում է Դավթին:

Այդ օրերին բոլոր կռապաշտները միավորվելով իսրայելացիների դեմ պատերազմի են դուրս գալիս և Ափեկ կոչվող վայրում բանակ դնում: Անքուսը ցանկանում է Դավթին էլ հետը պատերազմ տանել, թեև Դավիթն առերես նրա հետ գնալու ցանկություն է հայտնում, սակայն ներքուստ՝ մեծապես սրտատանջվում, քանի որ եթե չգնա, թագավորի միտքն իր հանդեպ պիտի պղտորվի և այլևս չպիտի վստահի իրեն, իսկ եթե պատերազմ գնա, բացահայտորեն իր ազգին պիտի դավաճանի, այսպիսով, երկու սրի արանքում մնալով՝ խիստ նեղվում է:

Վերջապես ելքը Աստծու կամքին թողնելով՝ Անքուսի հետ կռապաշտների հավաքված վայրն է գնում, որտեղ այլ ցեղերի մեծամեծներ, նրան տեսնելով, հարցնում են, թե ով է: Անքուս թագավորը, նրա ով լինելը և երկար ժամանակ իր մոտ մնալը հայտնելով, ավելացնում է, որ նրանից որևէ վատ արարք չի տեսել: Սակայն նրանք, դրան հավանություն չտալով, ասում են. «Նրան հե՛տ դարձրու, որպեսզի մեզ հետ պատերազմի չգնա»: Քանի որ վախենում էին, որ Սավուղին հաճոյանալու համար, գուցե իրենց հանդեպ թշնամություն անի, մանավանդ իրենց երկյուղը հայտնելով՝ հարցնում են. «Սա այն Դավիթը չէ՞, որի մասին իսրայելացիները երգում էին, թե Սավուղը հազար կոտորեց, Դավիթը՝ տասը հազար»:

Հիրավի, թեպետ Անքուսը Դավթից մատնություն չէր սպասում, սակայն նրա պատճառով ուրիշներին ընդդիմանալ չցանկանալով՝ մեղմ խոսքերով Դավթին ասում է. «Դու արդար և հաճելի ես ինձ համար, բայց քանի որ նրանք քո գալը չեն ցանկանում, խաղաղությամբ վերադարձի՛ր քո տեղը»: Թեև Դավիթը, այս խոսքերը լսելով, սրտանց ուրախանում է, սակայն նա այլ տպավորություն չթողնելու և կասկած չհարուցելու համար չի ցանկանում վերադառնալ:

Անքուսը նորից է խոսում՝ ասելով. «Դու իմ առջև Աստծու հրեշտակի նման ես, սակայն քանի որ նրանք ասացին, որ մեզ հետ չգնաս պատերազմելու, ուրեմն վերցրո՛ւ քո մարդկանց և շո՛ւտ վերադարձիր»: Այն ժամանակ Դավիթը, Աստծուց շնորհակալ լինելով, մեծ ուրախությամբ վերադառնում է: Սակայն այս ուրախությունը, երկար չտևելով, տրտմության է վերածվում, քանի որ երրորդ օրը, երբ Սիկիլակ է հասնում, տեսնում է, որ թշնամին վերադառնալով ոչ միայն կողոպտել է, այլև այրել և ավերելուց հետո այնտեղի բոլոր մարդկանց գերեվարել:

Այս դեպքի պատճառով Դավիթն ու իր զորքը այնքան են ցավում և արտասվում, որ այլևս ուժ և զորություն չեն ունենում: Թեև Դավիթը բոլորից ավելի էր վշտահար, սակայն զորքը, իրենց սրտերի կսկիծներից բորբոքված, ցանկանում է նրան քարկոծել՝ ասելով. «Ինչո՞ւ չհոգացիր քաղաքի ապահովության մասին»: Իսկ Դավիթը, ինչպես միշտ, այդպես էլ այս անգամ իր հավատով զորացած[141], Աբիաթար քահանայի ձեռքով Աստծուն հարցնելուց հետո նրա հրամանով որոշում է հետապնդել թշնամուն:

Եվ քանի որ վեց հարյուր մարդ ուներ, երկու հարյուրին թողնում է, որ գույքն ու պաշարը պահպանեն, մանավանդ որ նրանք, խիստ հոգնած լինելով, քայլելու ունակ չէին, ուստի մնացածի հետ ճանապարհ է ընկնում և առաջին իջևանի մեջ մի եգիպտացու է գտնում, որը, երեք օրից ավելի քաղցած և ծարավ լինելով, կիսամահ տառապում էր:

Այս մարդուն գթալով՝ ուտելիք և ջուր տալուց հետո Դավիթը հարցնում է, թե ով է: Սա խոստովանում է, որ Սիկիլակը իրենք կողոպտել են, և ինքը, ամաղեկացի մի մարդու ծառա

---

[141] Եվ Դավիթը զորացավ իր Տեր Աստծով (*Ա Թագ. 30:6*):

լինելով, իր տիրոջ հետ էր եկել, սակայն խիստ հոգնած լինելով, անկարող քայլելու՝ տերը ճամփի կեսին թողել, լքել է իրեն: Դավիթը պահանջում է, որ իրեն հայտնի ասպատակների տեղը, մարդը համաձայնում է մի պայմանով, որ երդվի իրեն չսպանել և տիրոջն էլ չհանձնել. Դավիթը երդվում է:

Այդ պահին Մանասեի ցեղից չորս քաջարի և հզոր մարդիկ են գալիս Դավթի մոտ, որոնք նաև հազարապետեր էին, և Սավուղից բաժանվելով՝ իրենց ընկերների հետ են գալիս, որոնց Դավիթը սիրով ընդունում է, և առանց ժամանակ կորցնելու շարժվում են թշնամի ասպատակների գտնվելու վայրը: Այնտեղ տեսնում են, որ բոլորը անվախ, անհոգ և ցրված, ուրախությամբ ուտելով և խմելով են զբաղված: Դավիթն իսկույն հարձակվում է և սկսում կոտորել նրանց:

Այդ օրը՝ առավոտից մինչ երեկո, և մինչև հաջորդ օրն ամենայն հաջողությամբ պատերազմում է, այնպես որ թշնամուց միայն չորս հարյուր հոգու է հաջողվում՝ իրենց ուղտերին նստելով խույս տալ, իսկ մնացածին կոտորելով, ամեն ինչ, ինչ Սիկիլակից կողոպտել և հափշտակել էին, նաև հիշյալ քաղաքներից հափշտակած կողոպուտն ու ավարը, որ պատրաստ նրանց մոտ էին, նույնպես հետ է վերցնում, ինչպես նաև բոլոր գերիներին լիովին ազատում: Դավթի՝ նրանց և իրենց անասունների հոտերը առջևը գցած և սրտի գոհունակությամբ վերադարձի ժամանակ ժողովուրդն անապատում, ցնծությամբ «այս ավարը Դավթինն է» ասելով, սրտանց նրան փառքերի փառքին է բարձրացնում[142]:

Վերադարձին մի քանի շահամոլ անձինք չեն ցանկանում ավարից բաժին հանել վերոհիշյալ այն երկու հարյուր զորքին,

---

[142] Դավիթն առավ բոլոր հոտերն ու արջառները և տարավ ավարի առջևից: Ավարի համար ասում էին. «Սա Դավթի ավարն է» (*Ա Թագ. 30:20*):

որ Դավթի հրամանով պահպանում էր նրանց գույքը և պաշարները, սակայն նրանց բաժին տալը օրինավոր լինելով՝ Դավիթը հրամայում է չթերանալ այս եղբայրական պարտականությունը կատարելիս, և ստիպում է բոլորին բաժին հանել, և այն ժամանակից սկսված՝ Իսրայելի ժողովրդի և զորքի միջև այս պայմանն ու սովորությունը անդրժելիորեն և նվիրականորեն միշտ հաստատուն են մնում:

Դավիթը նույնպես հաջողությամբ Սիկիլակ վերադառնալուց հետո բերված ավարից առատությամբ, իբրև սիրո և աղոթքի արժանի լինելու նշան, ուղարկում է իր այն բարեկամներին, որոնք այլ քաղաքներում էին բնակվում, որպեսզի այդ ընծաներով իր բացակա սիրելիներն էլ ուրախացնի, և նրանք աղոթեն իր հաջողության համար:

Հարց ԻԵ: **Ինչ վիճակում էր Սավուղը, երբ Դավիթը Սիկիլակում փառավորված և ուրախ էր:**

Պատասխան: Չափազանց թշվառ և ողորմելի վիճակում էր: Դու Աստծու արդարությո՛ւնը տես: Սավուղը ցանկանում էր սպանել Դավթին, և Դավիթը նրա հալածանքներից խույս է տալիս օտար երկիր, սակայն Տիրոջ ողորմածությամբ գնացած բոլոր վայրերում ուրախ և զվարթ է լինում, իսկ Սավուղը, որի իշխանությանը բոլոր իսրայելացիներն էին հպատակվում, ծանր մտատանջության և տխրության ենթարկվելով, միշտ անհանգիստ էր և տառապում էր:

Սակայն մի՛ զարմացիր. որովհետև առ Աստված կատարյալ հնազանդություն ունեցող հավատացյալը որտեղ էլ լինի, փառքի կհասնի և կուրախանա, իսկ հնազանդության մեջ թերացող մարդը թագավոր էլ լինի, զերծ և ազատ չէ տրտմությունից և վտանգներից: Քանի որ (տե՛ս ԻԴ հարցը) բոլոր կռապաշտ ցեղերը, իսրայելացիների դեմ միավորվելով և

պատերազմի դուրս գալով, Ափեկ կոչվող վայրում բանակ են դնում և այնտեղից էլ շարժվելով՝ գալիս են Սովման:

Սակայն Սավուղի բանակը նախ Այենդովրում էր գտնվում, և թեև հետո այն տանում է Գեղբուե լեռան վրա, սակայն թշնամու բանակի բազմությանը նայելով՝ միտքը երկյուղից ոչ մի կերպ չէր հանդարտվում, մանավանդ զորքի մեծ մասը, իրեն լքելով, Դավթի մոտ է գնում, զինվորների թիվն էլ խիստ նվազում է:

Սրանից բացի՝ (ըստ 20-րդ հարցում հիշատակածի) նախկինում քահանաների կոտորած լինելով՝ մոտը քահանա չկար, որ նրա միջոցով Տիրոջը հարցնի, և երբ բոլորովին անճար է մնում, ստիպված ինքն է հարցնում: Աստված ոչ միայն չի պատասխանում, այլև մարգարեի միջոցով կամ որևէ նշանով չի ցանկանում Սավուղի այդ վիճակի մասին որևէ բան հայտնել:

Թեև Սավուղը հասկանում է, որ Աստված իր դեմ բարկանալու պատճառով չի պատասխանում, սակայն զոջումով մեղքերի թողություն խնդրելու փոխարեն է՛լ ավելի է չարանում: Որովհետև նախապես կախարդությունը Տիրոջ օրենքներին և հրամաններին հակառակ լինելով՝ ինքն էր հրամայել կախարդներին կոտորել, այս անգամ Տիրոջից պատասխան չստանալով՝ նրանց օգնությանն է ապավինում և մի կախարդ կին է փնտրել տալիս: Երբ փնտրտուքներից հետո իմանում է տեղը, ծպտված, երկու ծառաների հետ գիշերը նրա տուն է գնում, որ նրա միջոցով Սամվելին բերել տալով՝ իր փրկության մասին հարցնի, քանի որ Սամվելն արդեն մահացել էր:

Հիրավի, կախարդ կինը, չճանաչելով Սավուղին, պատասխանում է, որ վախենում է թագավորից, և սա երդումով պատասխանում է. «Մի՛ վախեցիր, սրա համար քեզ ոչինչ չի պատահի»: Կինը հազիվ սկսել էր կախարդության խաբեպատիր հնարքները, և ահա վերին հրամանով հայտնվում է Սամվելը,

և ինչպես իր կենդանության օրոք էր վճռվել, որ Աստծու հրամանով թագավորությունը, նրանից վերցվելով, ուրիշին պետք է տրվի, այդպես էլ այս անգամ այդ վճիռը հաստատելուց բացի, որպեսզի Սավուղն ուղիղ սրտով ապաշխարի, հայտնում է, որ վաղը նա և որդիները պատերազմում պիտի մահանան, և իսրայելացիների բանակն էլ թշնամու ձեռքը պիտի մատնվի:

Սակայն նա դարձյալ չի զղջում, այլ երկյուղից ոտքի վրա կանգնելու կարողություն չունենալով՝ ընկնում է գետնին: Եվ քանի որ նախորդ օրվանից ոչինչ չէր կերել, կախարդ կինը, կերակուր պատրաստելով, խնդրում է ուտել և կազդուրվել, և երբ նրա ծառաներն էլ են խնդրում, այն ժամանակ ճաշում է և բանակ վերադառնում:

Այս դեպքի վերաբերյալ Սուրբ գրքի պատմությանը նայելով՝ ոմանք կարծում են, որ Սամվելը սատանայական զորությամբ չէ, որ երևում է, քանի որ նրանք ասում են՝ սատանան չի կարող մահացած մարդու հոգին իր գտնվելու վայրից դուրս հանել կամ էլ թե հայտնել ապագայում կատարվելիքն ու այն բաները, որոնք կախված են մարդու կամքից, ուստի կախարդ կինը դեռևս կախարդական արարողությունը չսկսած, Սամվելը երևում է Աստծու հրամանով, սակայն սատանան, նենգավոր և հնարագետ լինելով, կարող է երևալ, ինչ կերպարանքով էլ ցանկանա, ուստի միգուցե նախապես սուտ կերպարանքով և խոսքերով, Սամվելի նախկինում ասածներին հակառակ ոչինչ չի ասում: Ոմանք էլ հակառակն են ասում, և արդ, սրա վերաբերյալ հարկ է դիմել մեկնողական գրականությանը:

Հասկացի՛ր. Սավուղի՝ նախկինում Աստծու կամքին հակառակ գործելու համար թագավորությունը նրանից պետք է վերցվեր, սակայն այս անգամ, առավել ևս սատանայի վրա հույսը դնելով, պատիժը է՛լ ավելի էր սաստկանալու: Քանի որ պատերազմում իր և որդիների մահվանից բացի՝ նրա

պատճառով անդառնալիորեն վճռվում է իսրայելացիների բանակի կոտորվելը:

Թող խրատվեն նրանք, ովքեր օգնություն են փնտրում կախարդների և բախտագուշակների խաբեբա հնարքներով, քանի որ սա Աստծուն ուրանալ և սատանային պաշտել է նշանակում: Սատանան մարդու թշնամին է, թշնամուց բարեկամություն ու ստախոսից ճշմարիտ պատասխան ակնկալելն ամենամեծ հիմարությունն է:

Եթե երբևէ կախարդների տված տեղեկությունների համապատասխան նույնիսկ մի գործ կատարվի, նրանց խոսքերին հավատ ընծայելը և հույս կապելը պարզապես հանցանք են: Քանի որ այդ գործը ոչ թե նրանց զորությամբ և գիտությամբ է կատարվում, այլ սատանան, գործի բնական ընթացքին նայելով, չարության գործիք լինող կախարդի մտքին ներգործում է այն, ինչ բնականաբար պիտի տեղի ունենար, որպեսզի մարդկանց խաբելով՝ իրեն կապի և այս եղանակով Աստծու հնազանդությունից հանելով՝ իր նման ապստամբ դարձնի:

Այժմ դու Սավուղի թշվառ վիճակի մասի՛ն խորհիր. որովհետև երբ Սամվելը վստահորեն ազդարարում է հաջորդ օրը պատերազմում մեռնելը, այդ գիշեր բանակ վերադառնալու և ամբողջ գիշեր աղոթքներով և աղաչանքներով Աստծու հետ հաշտվելու փոխարեն, քանի որ դեռ ժամանակ ուներ, միայն պատերազմելու կարգադրություններով և պատրաստություններով է զբաղվում, և մտադրություններն էլ լոկ մարդկային միջոցների մասին են, իբր պատերազմի ելքը կամ հաջողությունը այդպիսի բաներից են կախված:

Երբ առավոտյան երկու կողմերը սկսում են կռվել, իսրայելացիները իսկույն փախուստի են դիմում, և թշնամին մի լավ ջարդում է նրանց: Պատերազմի սաստիկ բորբոքված պահին

մահանում են նաև Սավուղի երեք որդիները՝ Հովնաթանը, Ամինադաբը և Մեղքիսավեն: Սավուղը, նույնպես մահացու վիրավորված, տեսնում է, որ իր կողքին, զինակրից բացի, այլ մարդ չկա, ուստի նրան ասում է. «Հանի՛ր սուրդ և սպանի՛ր ինձ, որպեսզի թշնամին չտանջի ինձ»:

Երբ ծառան երկմտում է, Սավուղը, իր սրի վրա ընկնելով, մահանում է ողորմելի ձևով, և զինակիրն էլ, սա տեսնելուն պես իր սրի վրա նետվելով, մահանում է: Ճրջակա քաղաքի իսրայելացիները, այս սարսափելի աղետի և դժբախտության լուրն իմանալով, երկյուղից փախչում և թաքնվում են, և թշնամին էլ, տիրելով դատարկված քաղաքներին, դրանցում իր ժողովրդին է հաստատում:

Սրանից բացի՝ թշնամին, կռվում ընկածներին կողոպտելու համար հաջորդ օրը գալով, երբ գտնում է Սավուղի և նրա որդիների մարմինները, ավետաբերներ է ուղարկում իրենց երկրներ, ասես այդ հաղթանակը իրենց կուռքերի օգնությամբ էին տարել, Սավուղի գլուխը կտրելով՝ Դագոն չաստծուն, և նրա զենքերը Աստարովդի կռատանն են դնում, իսկ մարմիններն էլ իսրայելացիներին անարգելու համար Բեթսան քաղաքի պարիսպներից են կախում:

Քանի որ Սավուղն իր կենդանության օրոք և թագավորելու առաջին օրերին ամոնացիների Նաաս թագավորի ձեռքից փրկել էր Հաբիս քաղաքը (ինչպես հիշատակվել է ԺՁ հարցի մեջ), նրա այդ երախտիքի փոխարեն հիշյալ քաղաքի բնակիչներից քաջասիրտ մարդիկ գիշերը Սավուղի և նրա որդիների մարմինները իջեցնում են պարսպից, պատվով թաղում և յոթ օր էլ սուգ են պահում:

Խորհի՛ր, թե այս աշխարհի մեծությունը որքան մեծ վտանգ է մարդուն. մինչ Սավուղը հողագործ էր, խոնարհությամբ իրեն թագավոր լինելու անարժան էր համարում,

սակայն երբ թագավորելուց հետո զորություն և մեծություն է ձեռք բերում, հպարտության դևը տիրում է նրա ներքին էությանը, որից էլ, Աստծու հրամանին հակառակ ընթանալով, ոչ միայն իր չարաչար կորստի պատճառ, այլև իր որդիների և բազում այլ մարդկանց կործանման առաջնորդ է լինում:

Տե՛ս այս կետում Աստծու արդարությունը. իսրայելացիները Սամվելից թագավոր են խնդրում, որպեսզի թշնամու դեմ իրենց պաշտպանի (ինչպես հիշատակվել է ԺԵ հարցի մեջ), Աստված բարկանալով Սավուղին է թագավոր կարգում[143]: Սակայն նրա անհնազանդության պատճառով նրա հետ իրենք էլ են պատժվում, քանի որ Աստծու զորության վրա հույս դնելու փոխարեն մարդու վրա են հույս դնում:

Թեև գրված է, որ Սավուղը երկու տարի է թագավորում (*Ա Թագ. 13*), սակայն քանի որ գրված է քառասուն տարի (*Գործք 13:21*). սրա մասին հարկ է դիմել մեկնողական գրականությանը:

Հարց ԻԶ: **Դավիթը, Սավուղի մահվան մասին լսելով, ուրախանո՞ւմ է:**

Պատասխան: Երբե՛ք, ո՛չ. մանավանդ խիստ տրտմելով՝ արտասվում է: Որովհետև Սիկիլակը կողոպտողների դեմ Դավթի արշավելու օրն էր, երբ Սավուղը, պատերազմում վիրավորվելով, մահանում է, և ամաղեկացի մի մարդ, նրա թագն ու բազկակալը (որոնք թագավորը կրում էր զարդարանքի համար) մի կերպ ձեռք բերելով, Դավթին է տանում՝ կարծելով, որ նա, Սավուղի մահվան համար ուրախանալով, իրեն մեծամեծ պարգևներ պիտի տա: Այս ակնկալիքով երկրորդ օրը Սիկիլակ գալով՝ պատերազմում Սավուղի և Հովնաթանի մահվան բոթն է հայտնում:

---

[143] Ո՞ւր է քո թագավորը…. Ո՞ւր է քո թագավորը (*Ովսե 13:10,11*):

Սակայն նենգությամբ, որպեսզի կեղծավորությունը հայտնի չդառնա, իբր թե մեծ տխրության հանդիպած մարդ, զգեստները պատռելով, գլխին մոխիր ցանած՝ ներկայանում է Դավթին: Երբ Դավիթը հարցնում է, թե որտեղից է գալիս, և Սավուղը ինչպես է մահացել, նա պատասխանում է. «Գեղբուե լեռան վրա հանդիպեցի, երբ Սավուղը ընկած էր իր նիզակի վրա և թշնամին էլ նրան շրջապատած լինելով՝ ինձ տեսնելուն պես ասաց. «Սպանի՛ր ինձ», և ես, տեսնելով, որ նրա համար այլևս կենդանի մնալու հույս չկա, նրան սպանելով թագն ու բազկակալը քեզ՝ իմ տիրոջը, բերեցի»:

Լա՛վ հիշիր. Սավուղը, ինչպես վերն է հիշատակվել, ինքնասպան է եղել, սակայն երբ հիշյալ ամաղեկացին Դավթին հաճոյանալու համար խոստովանում է, որ ինքն է նրան սպանել, արդարացիորեն դատապարտվում է մահվան: Ուստի Դավիթը նրան պատասխանում է. «Դու ինչպե՞ս չես վախեցել ձեռք բարձրացնել թագավորի վրա, ուրեմն քո արյունը՝ քո գլխին, քանի որ ինքդ խոստովանեցիր, որ թագավորին դու ես սպանել»: Եվ երբ տեսնում է, որ հիշյալ ամաղեկացին այլևս որևէ պատասխան չի կարողանում տալ, հրամայում է, որ անմիջապես սպանեն այդ անզգամ մարդուն:

Օրինա՛կ վերցրու. սույն թշվառ ամաղեկացին, Դավթին խաբելով, դրամ կորզելու նպատակ ուներ, կամ երբ նա թագավոր դառնար՝ դիրքի և փառքի հասնելու, սակայն փոխարենը իր կյանքն է տալիս. ահա այսպիսին է կեղծավոր և ստախոս մարդկանց վիճակը: Իսկապես, մասնավոր շահի համար ասված հիշյալ ստախոսությանը հակառակ՝ Սավուղի և Հովնաթանի մահը ստույգ էր, որի պատճառով էլ Դավիթը և նրա հետ բոլոր իսրայելացիները տրտմությամբ են համակվում և այդ օրը մինչև երեկո լացով և ծոմապահությամբ սուգ անում: Սրանից բացի՝ Դավիթը, երգ հորինելով, Սավուղին

և Հովնաթանին է ներբողում, ինչպես որ Սուրբ գրքում այն հայտնի է որպես պատմական բանաստեղծություն:

Դու այստեղ Դավթի առաքինությա՛նը նայիր: Իր հակառակորդի մահվան մասին լսելով, ծոմապահությամբ արտասվելուց և սգալուց բացի՝ նրա անունը ներբողական երգերով փառաբանում է: Դու նույնպես, ո՛վ ընթեցող, մի՛ ուրախացիր ոսոխիդ՝ վտանգի մեջ լինելու, վնաս կրելու և կամ մահանալու պատճառով, որպեսզի նրա նման սխալվելով՝ չմեղանչես, քանի որ ուրիշին չարիք ցանկացողը իր անձի հանդեպ է չարիք գործում (ըստ առածի՝ չարիքը խորհողի համար է չարիք): Սակայն իր անձի հանդեպ չարիք գործելը բնությանը հակառակ է, հետևաբար մարդը մինչև չի սխալվում, չի կարող հանցանք գործել: Արդ, եթե սխալվելով մեղանչել ես, ուղիղ սրտով իսկույն զղջա, որպեսզի չպատժվես, մանավանդ քո դեմ չարիք գործողի հանցանքները ների՛ր, որպեսզի քո հանցանքներն էլ ներվեն, քանի որ ուրիշի հանցանքներին թողություն տալու զլացող անձը, չի կարող թողություն գտնել հավիտյան՝ որպես թողության անարժանի անձ[144]:

Եվ քանի որ Դավիթը Սավուղի հալածանքներից խույս տալով էր Սիկիլակում բնակվում, ուստի նրա մահվան լուրը ստանալուց հետո թեև վերադառնալու ցանկություն է ունենում, սակայն միայն, ըստ իր կամքի չգործելու ցանկությամբ, քահանայի ձեռքով Աստծուն հարցնելուց հետո Աստծու հրամանով է Քեբրոն գալիս, որտեղ Հուդայի ցեղի իշխանները միավորվելով նրան թագավոր են ընտրում:

Թեպետ (տե՛ս ԺԸ հարցը) Սամվել մարգարեն նախապես Բեթղեհեմում գաղտնի օծել էր նրան՝ որպես բոլոր

---

[144] Ով վրեժ առնի, Տիրոջից վրեժխնդրություն կգտնի, և Տերը խստորեն կհաստատի նրա մեղքերը (*Միրաք 28:2*):

իսրայելացիների թագավոր լինելու նշան, և այս անգամ էլ որոշակիորեն Քեբրոնում է թագավոր ընտրվում, սակայն ոչ թե ամբողջ Իսրայելի ժողովրդին թագավորելու համար է ընտրվում, այլ միայն Հուդայի ցեղի, որից էլ ինքը սերում էր:

Հաբիսի բնակիչները թաղել էին Սավուղի և նրա որդիների մարմինները (տե՛ս ԻԵ հարցը): Երբ Դավթին պատմում են այդ դեպքը, նա, մեծապես ուրախանալով, նրանց մեծամեծների մոտ մարդ է ուղարկում՝ շնորհակալություն հայտնելու, և Հուդայի երկրում իր թագավորելը տեղեկացնելով՝ խոստանում է Սավուղին արված իրենց լավության փոխարեն առաջին իսկ պատեհ առիթով իր կողմից բարիք անել:

Հիրավի, բոլոր իսրայելացիները Դավթից գոհ էին և բացահայտորեն համաձայն էին նրա թագավորելուն: Սակայն Սավուղի զորապետ Աբենները, որը հակառակ էր Դավթին, և որի իշխանության ներքո էին իսրայելացիների զորքերը, նամանավանդ Սավուղի հորեղբոր որդին լինելու պատճառով, ազգականության նախանձախնդրությամբ Սավուղի Հեբուսթե որդուն վերցնելով, զորքի մոտ է տանում, որն այդ ժամանակ Հորդանան գետի դիմացի կողմում՝ Գաղաադի գավառում էր գտնվում:

Հեբուսթեն նախ այդտեղ եղած ժողովրդին է թագավորում, սակայն Աբենները օրըստօրե զանազան խաբեություններով և կեղծավորություններով գրավում է այլ վայրերի մարդկանց սրտերը, դրա պատճառով էլ իսրայելացիների տասնմեկ ցեղերը կամա թե ակամա, գոնե կարճատև նրա իշխանության ներքո են անցնում: Քանի որ Սամվելը կանխապես արդեն հայտնել էր, որ թագավորությունը նրանից վերցվելով՝ իսրայելացիները երկու մասին պիտի բաժանվեն[145]. ահա նրա խոսքն

---

[145] Իսրայելը երկու մասի է բաժանվելու, և Տերն իր խոսքից հետ չի դառնալու (*Ա Թագ. 15:28*):

այս ձևով է կատարվում. Դավիթը՝ Հուդայի թագավոր, իսկ Հեբուսթեն, իսրայելացիների թագավոր լինելով՝ բնականաբար ժողովուրդը երկու մասի է բաժանվում:

Սակայն պարզ է, որ մի ազգի մեջ երկու թագավոր լինելու հետևանքը վտանգավոր և տխուր պիտի լիներ, որն էլ լինում է: Քանի որ Աբենները Գաբավոն է գնում, Դավթի Հավաբ զորապետն էլ նույնպես մի գործով այնտեղ գնալու ժամանակ, Գաբավոնի աղբյուրի մոտ միմյանց պատահելով՝ նստում են դեմ դիմաց: Նախ թշնամություն ցույց չտալով՝ միմյանց որպիսությունը հարցնելուց հետո Աբենները չար դիտավությամբ Հավաբին առաջարկում է, որ երկու կողմերից մարդիկ դուրս գան ռազմական վարժանքների, և երբ նա համաձայնում է, իսկույն տասներկուական մարդ ասպարեզ գալով սկսում են մենամարտել՝ իբրև իրենց պատերազմական կատարելությունը ցույց տալու:

Քանի որ սրանք միմյանց չէին վստահում, ուստի յուրաքանչյուրը, մի ձեռքով ընկերոջ մազերը բռնելով, իսկ մյուս ձեռքով սուրը ընկերոջ կողը մտցնելով, անմիջապես մահանում են, այնպես որ այդ վայրի անունը մնում է Դավաճանների դաշտ[146]: Քանի որ այնտեղ, իբրև թե միմյանց դավաճանելու փափագով, քսանչորս մարդ է մահանում:

Սրանից բացի, երբ երկու կողմերի միջև թշնամությունը հայտնի է դառնում, սկսում են պատերազմել: Աբենների կողմը պարտվելով՝ խույս է տալիս, և փախչելու ժամանակ Աբեններին հետապնդում է Հովաբի եղբայր Ասայելը, որը արագաշարժ պատանի էր և քաջություն ցուցաբերելու եռանդով համակված՝ հետապնդում է, որպեսզի սպանելով տիրանա Աբենների զենքերին:

---

[146] Եվ այդ տեղի անունը դրեցին Դավաճանների դաշտ, որը Գաբավոնում է գտնվում (*Բ Թագ. 2:16*):

Աբենները, որը Հովաբի համար ցանկանում է խնայել նրան, ասում է. «Զորքից մեկին բռնի՛ր և նրա զենքերը վերցրո՛ւ, ինձնից հեռու մնա, որ քեզ չսպանեմ»: Այս խոսքը թեև բազմիցս է կրկնում, սակայն Ասայելը չի ցանկանում հետ կանգնել իր մտադրությունից: Ուստի Աբենները, նեղ դրության մեջ հայտնվելով, նիզակով հարվածելուն պես Ասայելը վերջին շունչն է փչում: Եվ Աբենները գնալով իր զորքով մի բլուրի վրա է կանգ առնում:

Հովաբը, որը, նրան հետապնդելով, հանդիպող ամեն մի զինվորի կոտորում էր, երբ երեկոյան հիշյալ բլուրի մոտ է հասնում, Աբեններն ասում է. «Մի՞թե բոլորին պիտի կոտորես, չգիտե՞ս, որ վերջում վատ կլինի, արդեն բավական չէ՞, մինչև երբ պիտի քո մարդկանց չասես, որ ձեռք քաշեն իրենց եղբայրներին կոտորելուց»[147]: Երբ Հովաբը լսում է սույն խոսքերը, բարկությունը մեղմանում է, և երդումով հայտնում է. «Եթե դու չլինեիր, առավոտյան նորից ամեն մեկն իր եղբորը պիտի հետապնդեր՝ որպես թշնամի»:

Արդարև, Հովաբը չէր ցանկանում, որ զորքերը միմյանց կոտորեն, քանի որ մեկ ազգ են, սակայն Աբենների կեցվածքից բարկանալով՝ հրաման է տալիս կոտորել նրա մարդկանց: Ուստի երբ նա հաղթվելով այդ խոնարհ խոսքն է ասում, Հովաբն իսկույն հետ դառնալու փողն է հնչեցնում, և երկու կողմերը, միմյանցից բաժանվելով, իրենց տեղն են վերադառնում: Եվ այն օրը Հովաբի զորքից Ասայելից բացի ևս տասնինը մարդ, իսկ Աբենների զորքից երեք հարյուր մարդ է մահանում. Ասայելին էլ թաղում են Բեթղեհեմում՝ հոր գերեզմանի մեջ:

---

[147] Աբենները ձայն տվեց Հովաբին. «Մի՞թե սուրն անդադար բնաջնջելու է.... Ե՞րբ ես հրամայելու ժողովրդին, որ իրենց եղբայրներին հալածելուց հրաժարվեն» (*Բ Թագ 2:26*):

Հարց ԻԷ: **Դավիթն ու Հեբուսթեն, բանակ կազմելով, միմյանց դե՞մ են պատերազմում:**

Պատասխան: Չեն պատերազմում, սակայն նրանց միջև միշտ անպակաս էին հակառակությունը և թշնամանքը: Մանավանդ յուրաքանչյուրը, իր բաժինը զորացնելով, շարունակաբար պատերազմի պատրաստություն էր տեսնում: Դավթի կողմն օրըստօրե զորանում էր, իսկ Հեբուսթեի կողմը, ընդհակառակը, գնալով տկարանում[148]:

Սրանից բացի՝ Հեբուսթեի կարողությունը և հմտությունը տկար էին պետական գործերը վարելու համար. ժողովրդին կառավարելը ամեն կերպ Աբենների ձեռքին էր, որն այնքան համարձակություն է ստանում, որ աներկյուղ անվայել հարաբերություն է հաստատում Սավուղի Ռեսփա անունով հարճի հետ: Երբ Հեբուսթեն նրան հանդիմանում է, թե ինչու է այդպիսի անվայել վարք դրսևորում, Աբենները, սաստիկ բարկանալով, թագավորին սպառնում է՝ ասելով. «Ես այստեղ մի՞թե շան գլուխ եմ. քո հոր տունը գթալով՝ ես Դավթին անձնատուր չեղա, իսկ դու այժմ մի կնոջ համար ինձնից վրեժ ես պահանջում՝ արհամարհելով քեզ մատուցած ծառայություններս»:

Սույն խոսքերով նրան իբրև հանցագործ մեղադրելուց բացի՝ որպես թե իր երախտիքը չգնահատելու համար երդվում է, որ նրա թագավորությունը նրանից վերցնելով՝ իսրայելացիների ողջ ազգը Դավթի իշխանությանը կենթարկեցնի: Վերոհիշյալի սպառնալից պատասխանը հզոր նետի պես վիրավորում է Հեբուսթեի սիրտը, սակայն վախից ոչինչ չի կարողանում ասել կրքոտ սպարապետին:

---

[148] Սավուղի տան ու Դավթի տան միջև սաստիկ պատերազմ եղավ: Դավթի տունը գնալով հզորանում էր, իսկ Սավուղի տունը գնալով տկարանում էր (*Բ Թագ. 3:1*):

Մինչ այդ Աբենները ինչքան բարիք արել էր Հեբուսթեին, այս դեպքում ամբողջը ոչնչացնում է, քանի որ արածն այդպես ամբարտավանորեն նրա երեսով է տալիս: Մանավանդ նրա բացահայտորեն հանցավոր, ընդհանրապես հանցանք չունեցողի նման աներկյուղ և անամոթ դիմադարձությունը՝ արդարությանը հակառակ, իսկ թագավորությունը վերցնելու նրա երդումը հավատարմությանը հակառակ գործեր են: Քանի որ ճշմարիտ բարեկամը նա է, ով մինչև իսկ բարեկամի՝ իրեն վշտացրած ժամանակ հանձն չի առնում վտանգելու նրա իրական շահերը:

Արդարև, Աբենների պահվածքից պարզորոշ երևում է, որ իր նպատակին հասնելու համար է թագավոր դարձնում Հեբուսթեին, որպեսզի նրա անվամբ ինքն իշխի, Հեբուսթեն ևս, չափազան արտոնություններ շնորհելով ծառային, նրան թույլ է տալիս իշխել տիրոջը:

Հեբուսթեի օրինակից խրա՛տ ընդունիր. ծառադ ինչքան էլ հավատարիմ և գործունյա լինի, նրան չափից ավելի արտոնություն մի՛ տուր, որպեսզի չափը կորցնելով՝ չարիքի պատճառ չդառնա, մանավանդ թող չիմանա, որ տերն իր կարիքն ունի, քանի որ եթե տերը ամեն կերպ ցույց տա ծառայի կարիքն ունենալը, այն ժամանակ նրան կառավարելը դժվար կլինի, մանավանդ եթե բնությամբ էլ չար և հպարտ է:

Շատ իշխաններ, իրենց ծառայող հպատակներին չափազանց համարձակություն տալով, նրանց անվայել գործերի հակվելու պատճառ են լինում, և այդպիսով, նրանք ևս բամբասվում են, քանի որ այդպիսի չար ծառաները, Աստծու երկյուղը չունենալով, միայն իրենց մեծավորներից են վախենում, և երբ նրանց ներողամտությունից բացարձակ առիթ են ստանում, այդ ժամանակ օրըստօրե ավելի են չարանում, մինչև որ հնազանդության շավղից դուրս գալով՝ ակամա

թշնամանում են իրենց տիրոջը, որպեսզի, եթե հնարավոր է, ընդհանրապես զերծ և ազատ լինեն պատժից:

Ահա Աբենները քեզ օրինակ, որ Հեբուսթեի բարկության պատճառով ապստամբության դրոշակ պարզելով՝ ստիպված Դավթին տեղեկացնում է, որ իր հետ դաշինք կապի կամ պայմանավորվածություն ձեռք բերի, որ բոլոր իսրայելացիներին նրա իշխանությանը հանձնի:

Դավիթը նրա հետ դաշինք կապելուն հավանություն է տալիս, բայց պայմանով, որ ամեն ինչից առաջ Աբենները իր մոտ բերի իր Մեղքող կնոջը, որին Սավուղը այլ մարդու էր կնության տվել: Այս հարցի շուրջն Աբենների հետ ունեցած բանակցությունը չբացահայտելու համար Դավիթը Հեբուսթեին էլ է տեղեկացնում, որ Մեղքողին իրեն վերադարձնի: Թեպետ Հեբուսթեին հաճելի չէր այս առաջարկը, սակայն վախից շտապով Աբեններին ուղարկում է, որ գնա նրան վերցնի և Դավթին ուղարկի:

Դրանից հետո Աբենները, ինչպես և խոստացել էր, Իսրայելի ժողովրդի բոլոր ծերերի հետ գաղտնի բանակցելով, Դավթի իշխանությանը ենթարկվելու համար ստանում է նրանց հավանությունը, ապա քսան մարդկանց հետ Քեբրոն գնալով՝ Դավթին հայտնում է ժողովրդի մտադրությունը: Նա էլ մեծ ուրախությամբ ընդունում է նրանց, և ուրախութեան խնջույք կազմակերպելուց հետո Աբենները վերադառնում է, որպեսզի Դավթի պատասխանը ժողովրդին հայտնելով՝ գործը գլուխ բերի:

Այն ժամանակ Հուդայի երկիր ասպատակներ թափանցելով՝ Հովաբը պատերազմ էր գնացել և հենց այդ պահին բազում ավարով Քեբրոն է վերադառնում: Երբ լսում է, որ Աբենները եկել և Դավթի հետ գաղտնի խորհրդակցել է, Դավթին հարցնում է. «Ինչո՞ւ թողեցիր, որ Աբենները գնա, չգիտե՞ս նրա

չար լինելը, նա քեզ խաբելու և լրտեսելու համար էր եկել»: Դավիթը Հովաբին բնավ պատասխան չի տալիս, քանի որ գիտեր, որ նա Ասայել եղբոր մահվան համար փափագում է վրեժ լուծել Աբեններից:

Երբ Հովաբը դուրս է գալիս Դավթի մոտից, գաղտնի մարդ է ուղարկում և Աբեններին հետ կանչում, որն էլ, կարծելով, որ իրեն կանչողը Դավիթն է, միամտությամբ հետ է դառնում: Հովաբը նրան իբր մի կարևոր բան հայտնելու համար մի կողմ է տանում, և երբ բավականին մոտենում են իրար, սուրը Աբենների կողը մխրճելով՝ անգթորեն սպանում է նրան:

Երբ Դավիթն իմանում է Աբենների մահվան լուրը, գոչում է. «Ես և իմ հոր տունը նրա արյան համար անմեղ ենք, թող Հովաբը և նրա սերունդները պարտական լինեն նրան, թող նրանց միջից չպակասեն սերմնակաթ ունեցողը, բորոտը, մուրացիկը, սրից և սովից մեռնողը»[149]: Բացի այս անեծքի խոսքերից, որ սրտի ցավով ասում է՝ ի լուր ժողովրդի, երբ գուժալից բոթը դեռևս նոր էր ստացել, իր որդուն՝ Սողոմոնին, մահանալիս հատկապես պատվիրում և կտակում է, որ անպատճառ սպանի Հովաբին[150]:

Մի՛ հարցրու, թե ինչու Դավիթը չի սպանում Հովաբին, այլ Սողոմոնին է հանձնարարում այն, ինչ միանգամից պիտք է արվեր: Այո՛, հիշյալն արժանի էր մահվան, քանի որ պատերազմում ընկած մի մարդու արյան համար խաղաղության

---

[149] «Ես և իմ թագավորությունը Տիրոջ առաջ հավիտյան անպարտ ենք Ների որդի Աբենների արյան համար: Թող Հովաբի և նրա հոր ամբողջ տան վրա ընկնի մեղքը, և Հովաբի տնից անպակաս լինեն սերմը ծորողը, բորոտը, ցուպով շրջող մուրացիկը, սրից ընկնողն ու սովամահը» (*Բ Թագ. 3:30.31*):

[150] Նրա ալևոր մազերը խաղաղությամբ մի՛ իջեցրու դժոխք (*Գ Թագ. 2:6*):

ժամանակ խարդախ նենգությամբ է վրեժ լուծում: Սակայն ժամանակի հանգամանքներին նայելով՝ միգուցե սրա պատճառով իր և ժողովրդի միջև հակասություն ծագի, և չար հետևանք ունենա, դրա համար էլ ինքը միառժամանակ չի ցանկանում սպանել Հովաբին:

Այսուհանդերձ, Աբենների մահվան պատճառով Դավթի սիրտն այնքան է կոտրվում, որ հագուստը պատռելով՝ սուգ է պահում, Հովաբին և նրա հետ գտնվող ժողովրդին էլ հրամայում է, որ իրենց հագուստները պատռելով՝ քուրձ հագնեն և սուգ պահեն: Երբ բոլորը, Աբենների դագաղի հետևից գնալով, նրա մարմինը Քեբրոնում են թաղում, Դավիթը, նրա մասին երգ հորինելով, ներբողում է նրան, արտասվում և հուզում է ժողովրդին, որը տեսնելով՝ դեռ երեկոյին շատ ժամանակ կա, Դավթի համար կերակուր են բերում, սակայն նա երդմամբ մերժում է՝ ասելով. «Մինչև արևը մայր չմտնի, ոչինչ չեմ ուտելու»:

Արդարև, Դավիթը, այդ օրը ծոմ պահելով, Աբենների մահվանն իր մասնակցություն չունենալը հայտնի է դարձնում ժողովրդին, որին շատ հաճելի է թվում արքայի սույն վարքը: Քանի որ մինչ այդ ամեն մեկը կարծում էր, որ Դավթի հրամանով և հորդորով է Հովաբն այդպես վայրագորեն և անգթորեն սպանել Աբեններին:

Այժմ դու տե՛ս Հեբուսթեի ողորմելի վիճակը, քանի որ նա, ում զորությունն արդեն օրըստօրե նվազում էր, Աբենների մեռնելուն պես բոլորովին հուսահատվելով, շվարում է, որովհետև պետության գործերը Աբեններն էր վարում, և ժողովրդի ծերերն էլ Աբեններին խոստացել էին, որ Դավթին կենթարկվեն, և հիշյալի մահվան պատճառով չնայած գործը մի քիչ հետաձգվում է, սակայն Հեբուսթեի ազդեցիկ հազարապետերից երկուսը՝ Բաանա և Ռիքաբ եղբայրները, չար և շահադիտական

դիտավորությամբ ցանկանում են նրան սպանել, որպեսզի հաճելի և բարեկամ երևան Դավթին, նրանից դրամ և պաշտոն ստանան, քանի որ Հեբուսթեից բացի՝ նրա թագավորության այլ ժառանգորդ չկար: Ճշմարիտ է, որ Հովնաթանը Միմփիբոսթե անունով մի որդի ուներ, սակայն Սավուղի մահվան ժամանակ նա հինգ տարեկան լինելով՝ դայակը նրան փախցրել էր, և նա փախուստի պահին ընկնելու հետևանքով կաղ էր դարձել, ուստի թագավոր լինելու համար հարմար չէր:

Վերոհիշյալ հազարապետերը մի օր կեսօրին պալատ են մտնում այն պահին, երբ Հեբուսթեն և նրա դռնապանը ննջում էին, ուստի գաղտնի նրա ննջարանը գնալով՝ գլուխը կտրում են: Անզգամները, այն Քեբրոն տանելով, ուրախությամբ ներկայացնում են Դավթին և ասում. «Ահա քո թշնամու՝ Սավուղի որդի Հեբուսթեի գլուխը, նա, ով ցանկանում էր քեզ սպանել»:

Դավիթը եղելությանը մանրամասն ծանոթանալուց հետո երդումով պատասխանում է. «Սավուղին սպանողը, երբ նրա մահվան լուրն ինձ հայտնեց, կարծում էր, թե ինձ ավետիս է տալու, սակայն պարգևի փոխարեն, որն ակնկալում էր, նրա բաժինը մահը եղավ: Արդ, դուք էլ վատ մարդիկ եք. անմեղ մարդուն իր մահճում սպանեցիք, ուստի նրա արյունը ձեզնից պիտի պահանջեմ», և իսկույն հրամայում է նրանց սպանելուց բացի, որպեսզի մյուսներին խրատ լինի, նաև նրանց ոտքերն ու ձեռքերը կտրել, քաղաքում մի հայտնի վայրում կախել: Իսկ Հեբուսթեի գլուխը թաղում է Աբենների գերեզմանում:

Արդարև, այս ձևով ոչ միայն իրեն ազատում է ժողովրդի բամբասանքից, այլև ժողովրդին՝ մեղքից, քանի որ Հեբուսթեի այսպիսի մահվան մասին լսողը, անպատճառ պիտի մտածեր, որ Դավթի մասնակցությամբ կատարված գործ է, սակայն երբ անմիջապես պատժում է այդ անզգամներին, հայտնի է

դառնում, որ ինքն անմեղ է, և ժողովուրդը շատ է ուրախանում: Այո՛, Դավիթը ցանկանում էր իշխել ամբողջ Իսրայելում, որպեսզի ժողովուրդը խաղաղությամբ կառավարվի, ոչ թե անիրավությամբ հափշտակելով, այլ Աստծու կամքին համապատասխան՝ արդարությամբ և իրավացիորեն տիրանալով, որն արդեն իսկ ի վերուստ սահմանվել էր:

Հարց ԻԸ: **Քանի՞ տարի է թագավորում Հեբուսթեն:**

Պատասխան: Յոթ տարի: Որովհետև ԻԶ հարցում հիշատակածին համապատասխան՝ նախ՝ Գաղաադի ժողովուրդն է հնազանդվում, ապա՝ տասնմեկ ցեղերը, միմյանց նայելով, հազիվ հինգ տարվա ընթացքում նրա իշխանությանն են ենթարկվում, այնուհետև՝ երկու տարի ևս թագավորելու պատճառով Սուրբ գիրքը գրում է՝ երկու տարի[151]:

Քանի որ բոլոր իսրայելացիները ցանկանում էին այլևս անցնել Դավթի իշխանության ներքո, Հեբուսթեի մեռնելուն պես տասնմեկ ցեղերից խոսքի տեր մարդիկ միավորվելով, անհամար բազմությամբ և զորքով գալիս են Քեբրոն, որպեսզի Սավուղի թագավորությունը Դավթին փոխանցելով՝ երկու մասի բաժանված ազգը նորից վերամիավորվի մեկ թագավորի իշխանության ներքո, և նրանց հակառակության ոգին իսպառ վերանալով՝ բոլորը, որպես մեկ մարմին միավորված, ի զորու լինեն դիմադրելու արտաքին թշնամուն:

Արդարև, նրանք այնպիսի սիրով և եռանդով են ձեռնամուխ լինում գործին, որ յուրաքանչյուր ցեղ իր կարողությանը համապատասխան քաջ և արի զորքերով է գալիս, որոնց թիվը հասնում է երեք հարյուր քառասունմեկ հազարի[152]:

---

[151] Նա երկու տարի թագավորեց (*Բ Թագ. 2:10*):

[152] Սրանք են զորքի այն հրամանատարների անունները, որոնք եկան Դավթի մոտ, Քեբրոն, որպեսզի, Աստծու ասածին

Այդ ժամանակ Դավիթը, չափազանց ուրախ, նրանց հետ ուխտ է կապում, որ նրանք միշտ հնազանդ լինեն, և ինքն էլ, Աստծու օրենքի համապատասխան թագավորելով, նրանց թշնամուց փրկելիս չթերանա եռանդով և պատասխանատվությամբ:

Սույն ուխտը բոլորի հավանությանն արժանանալով՝ մեծ հանդեսով և առոք-փառոք բոլոր իսրայելացիների կողմից թագավոր են հռչակում և ընդունում նրան: Քանի որ նախկինում միայն Հուդայի ցեղին իշխելու պատճառով Հուդայի թագավոր էր, այս անգամ ողջ Իսրայելը, նրա իշխանությունը ընդունելով, իրավացիորեն և արժանավորությամբ Իսրայելի թագավոր է կոչվում:

Վերոհիշյալ ահագին բազմությունը երեք օր Քեբրոնում մնալով՝ և՛ Հուդայի ցեղը, և՛ մյուս ցեղերը հարկ եղած ուտելու պաշարը առատորեն մատակարում են և մեծ հրճվանքով ուտում և խմում են՝ երջանիկ գոհունակության զգացումով համակված:

Արդ, քանի որ հին ժամանակներից Երուսաղեմում՝ Սիոն լեռան վրա, մի անառիկ ամրոց հեբուսացի կռապաշտների ձեռքին էր մնացել, և մեծապես նեղում էր քաղաքի բնակիչներին, Դավիթը բոլոր իսրայելացիների թագավոր դառնալուն պես, Երուսաղեմ գալով, կռապաշտներին հորդորում է ամրոցը խաղաղությամբ հանձնել իրեն: Սակայն նրանք, ամրոցի անառիկությանը վստահ, լուր են ուղարկում՝ ասելով, որ կույրերն ու կաղերը կդիմադրեն, և «Դավիթն այստեղ թող չմտնի»[153]:

համապատասխան, Սավուղի թագավորությունը հանձնեն նրան (*Ա Մնաց. 12:23*):

[153] Դավթին ասացին, թե՝ «Դու այստեղ չես մտնի, քանզի կույրերն ու կաղերը քեզ դեմ են կանգնել և ասում են. «Դավիթն այստեղ թող չմտնի»» (*Բ Թագ. 5:6*):

Այս պատասխաններով նրանք ցանկանում են ծաղրել Դավթին՝ կարծես ցանկանալով ասել. «Մենք ամրոցը չենք հանձնի, եթե պատերազմես, ամրոցում գտնվող կույրերն ու կաղերն էլ բավական են՝ քեզ դիմադրելու համար»: Արդարև, նրանք այնքան են հպարտանում, որ մարտիկները՝ աներկյուղ և անհոգ, միայն կույր, միաչքանի և կաղ անձինք են հսկում պարսիպը, որպեսզի Դավթի զորքերի մոտենալուն պես, վերևից քարեր նետելով, փախուստի մատնեն նրանց, քանի որ այլ կերպ անհնար էր գրավել այն՝ եթե ոչ միայն պասպով բարձրանալով:

Այս է պատճառը, որ Դավիթն իր զորքին խոստանում է, որ ով առաջինը պարսպի վրա բարձրանա, նրան սպարապետի կոչում կտա: Այդ ժամանակ Հովաբը, նաև մյուսները, նրան հետևելով, իսկույն պարսպի վրա բարձրանալով, թշնամուն կոտորում են և ամրոցը գրավում: Երբ Աստծու ողորմությամբ թշնամին հաղթվում է, Դավիթը, Սիոն լեռան շուրջն իսկույն պարիսպ կառուցելով, նաև իր համար տուն է կառուցում և այնտեղ բնակվում. վայրի անունն էլ *Դավթի քաղաք* է կոչվում:

Եվ Տերը նրա հետ լինելով, երբ այսպես օրըստօրե զորանում է[154], անունն էլ փառքով բոլոր կողմերում հռչակվում, Տյուրոսի Քիրամ թագավորը սիրո և բարեկամության դաշինքի կնքելու համար նրա մոտ մարդ է ուղարկում: Դրանից բացի՝ այդ կողմերում շինարարական նյութերն առատ լինելու պատճառով և լսելով, որ Դավիթը շենքեր է կառուցում, խոստանում է կարևոր նյութերը մատակարարել: Դավիթը սրան անչափ գոհունակությամբ իր հաճությունը տալուն պես ահագին քանակությամբ փայտ, քար, ինչպես նաև հյուսն և

---

[154] Դավիթը գնալով հզորանում էր, և ամենակալ Տերը նրա հետ էր (*Բ Թագ. 5:10*):

քարագործ արհեստավոր է ուղարկում Դավթին: Այս ամենը նա օգտագործում է իր արքայական հոյակապ պալատը կառուցելու համար:

Սակայն Դավիթը Սիոն լեռը գրավելուց հետո ձեռնարկում է ամրացնել նաև Երուսաղեմը, և ահա թշնամին, բազում զորքով հարձակվելով, գալիս, հավաքվում է Տիտանների հովտում[155]: Այն ժամանակ Դավիթը, Տիրոջ հրամանով նրանց վրա շարժվելով, այնպիսի սոսկալի ջարդ է տալիս, որ մինչև իսկ իրենց կուռքերը թողնելով՝ փախչում են, որոնք, որպես անպիտան իրեր, Դավիթը հրամայում է հրի մատնել:

Այս պատերազմում Դավիթը ծարավելով ցանկանում է Բեթղեհեմի դարպասի մոտ գտնվող ջրհորից ջուր խմել[156], նրա զորքից երեք քաջասիրտ մարդիկ՝ սրերը ձեռքներին, թշնամու բանակի միջով անցնում, գնում են և արքայի համար բերում են վերոհիշյալ ջրից: Քանի որ թշնամին Բեթղեհեմում էր գտնվում, ուրեմն բերած ջուրը նրանց արյան գնով էր, Դավիթը այն, խմելու փոխարեն գետնին ցանելով, Աստծուն է նվիրում[157]:

Երբ թշնամին կրկին հավաքվում է՝ պատերազմելու, Դավիթը նորից Աստծուն հարցնում է՝ արդյոք նրանց դեմ դուրս գա, թե ոչ, քանի որ միշտ նրա օգնությանն էր ապավինում: Այնտեղ շատ տանձենիներ կային. անտառ էր, և պատասխան է ստանում, որ թշնամու դեմ չգնա, այլ հետ դառնա ան-

---

155 Այլազգիները եկան ու հավաքվեցին Տիտանների հովիտներում (*Բ Թագ 5:18*):

156 Դավիթը ծարավը հագեցնել ցանկանալով՝ ասաց. «Ո՞վ ինձ խմելու ջուր կբերի» (*Ա Մնաց. 11:17*):

157 Դավիթը չուզեց խմել այն. նա այն Տիրոջը նվիրելով՝ ասաց.«Աստված թող ինձ ների: Ինչպե՞ս կարող եմ ես այդ բանն անել. դա պիտի նշանակեր խմել այդ մարդկանց արյունը, քանի որ իրենց կյանքի գնով բերեցին այն» (*Ա Մնաց. 11:18,19*):

տառի հետևի մասը, և եթե հովը դեռ չփչած՝ տանձենիների ճյուղերի ձայնը լսի, այն ժամանակ հարձակվի թշնամու վրա, քանի որ այդ ժամանակ Տերը նրա թշնամիներին կոտորելու համար պատերազմում նրա հետ է լինելու:

Թեև Աստված կարող էր ցանկացած ձևով պատժել հեթանոսներին, սակայն այս դեպքում պատերազմական հնարք է ուսուցանում Դավթին, որպեսզի մարդն էլ իրենից պահանջվող միջոցները զանց չառնի, և որ կողմից կարող է հաղթել թշնամուն, այն ուշադրությամբ քննի և գործադրի, և մանավանդ հայտնի դառնա, որ հաղթանակը Տիրոջ կամքից է կախված:

Արդարև. Դավիթը, ստացած հրահանգին համապատասխան թշնամու դեմ շարժվելով, Գաբավոնից մինչև Գազերա կոտորում է նրանց: Սրանից բացի, Տերը թշնամիների սրտում երկյուղ գցելով, ամենուր փառավորվում է Դավթի անունը[158]:

Եվ քանի որ մինչ այդ տապանակը Կարիաթարիմ քաղաքում՝ Ամինադաբի տանն էր գտնվում (տե՛ս ԺԴ հարցը), Դավիթը ցանկանում է այն Երուսաղեմ՝ իր տուն, տեղափոխել, ուստի հազարապետերի, հարյուրապետերի և խոսքի տեր այլ մարդկանց հետ խորհրդակցելով և նրանց բարյացակամությունը ստանալով՝ բոլոր իսրայելացիներին լուր է ուղարկում, և յոթանասուն հազարի չափ մարդ գնում է Ամինադաբի տուն, որտեղից տապանակը վերցնելով՝ նոր կառուցված մի կառքի վրա են դնում:

Դրանից հետո քահանաները, տապանակի առջևից գնալով, զանազան երաժշտական գործիքներով, Դավիթն ու ժողովուրդն էլ հանդիսավոր և պարելով առաջ են շարժվում: Սակայն երբ Ամինադաբի կալատեղ են հասնում, երինջները

---

[158] Դավթի անունն ամբողջ երկրում հռչակվեց, և Տերը նրա երկյուղը տարածեց բոլոր ազգերի վրա (*Ա Մնաց 14:17*):

տապանակը թեքում են: Այդ ժամանակ տապանակի մոտով քայլող նրա որդին՝ Ոզան, ձեռքը մեկնում է, որ տապանակը չընկնի, և այն բռնելուն պես Աստծու հրամանով իսկույն ընկնում և մեռնում է, որովհետև Աստված բարկանում է, որ տապանակը բռնելու համար համարձակությամբ մեկնում է ձեռքը:

Արդարև, այս պատժից ժողովուրդը սաստիկ վախենում և սարսափում է, նույնիսկ Դավիթն այնպիսի երկյուղ է ապրում, որ տապանակն իր տուն տանելու փոխարեն Երուսաղեմի մոտակայքում՝ Աբեդդար անունով մի մարդու տուն է ուղարկում, որտեղ էլ այն մնում է երեք ամիս: Զարմանալին, սակայն, այն է, որ Ոզան տապանակը բռնելու համար մեռնում է, իսկ Աբեդդարը, իր տանն ընդունելով, ողորմության է արժանանում, և նրա բերքն օրհնությամբ առատանում է[159]:

Թող լավ խորհեն նրանք, ովքեր հոգևոր պաշտոնյաներ են, քանի որ պարտազանցները իսկույն պատժվում են, իսկ Աստծու պատվի նախանձախնդիր պաշտոնյաները՝ օրհնվում: Դավիթը, լսելով հանուն տապանակի Աբեդդարին տրված շնորհների և բարիքների մասին, նորից է ցանկանում այն իր տուն բերել: Նախորդի նման բոլոր իսրայելացիներին լուր է ուղարկում, և այս անգամ էլ ժողովուրդն ու քահանաները միավորվելով՝ մեծ հանդիսությամբ տապանակը տանում են Աբեդդարի տնից: Դավիթը քահանաներին հրամայում է, որ, Մովսեսի պատվիրանի համաձայն, այն իրենց ուսերին տանեն, որպեսզի հիշյալ Ոզա քահանային պատահած դժբախտությունը իրենց անզգուշության պատճառով նորից չկրկնվի:

Եվ Դավիթն ինքը, անչափ ուրախ և բերկրալից խնդությամբ, զգեստների վրայից ծիրանագույն շապիկ հագած, քնար

---

[159] Տերն օրհնեց Աբեդդարին ու նրա ամբողջ տունը (*Բ Թագ. 6:11*):

նվագելով և սաղմոսելով ու պարելով, գնում է տապանակի առջևից: Նաև քահանաները կարգով և ամբողջ ժողովուրդը, երաժշական գործիքներ հնչեցնելով և մեծահանդես, տապանակը բերում են Սիոն լեռ՝ Դավթի տուն: Այնտեղ տապանակի համար հատուկ առանձին վայր էր կառուցվել, որտեղ էլ այն երկյուղածությամբ տեղավորում են:

Դրանից հետո, հանուն Աստծու զոհ մատուցելով, օրհնում է ժողովրդին և յուրաքանչյուրին՝ և՛ տղամարդկանց, և՛ կանանց, մի կտոր հաց, խորոված միս և կարկանդակ տալով, բոլորն ուրախանում են և ապա վերադառնում իրենց տները: Դավիթը ղևտացիներին հանձնարարում է, որ տապանակի մոտ միշտ Աստծու մեծությունը ու իսրայելացիների արած բարիքներն ու ողորմությունները խոստովանելով, Աստծուն գոհություն մատուցելով՝ սաղմոսերգությամբ և աղոթքներով զբաղվեն, Նրա սուրբ անունը փառաբանեն: Նաև պատվիրում է, որ առավոտյան և երեկոյան, Մովսեսի օրենքի համաձայն, Աստծուն զոհն անխափան մատուցեն[160]:

Հասկացի՛ր. նա, ով առաքինի չէ, առաքինություն գործողին անպատճառ քննադատում և պարսավում է, ինչպես Դավթի կինը՝ Մեղքողը, տապանակի առջև նրա պարելը տեսնելով, մտքում նրան արհամարհում է: Երբ Դավիթը տուն է մտնում, նրան, որպես թագավորին անվայել կեցվածք ունեցողի, շտապում է ասելու. «Այսօր քո ծառաներիդ և աղախիններիդ մոտ ինչքա՞ն էին փառավորվել»: Սակայն Դավիթը սույն ծաղրական խոսքերին պատասխանում է. «Թող ես Աստծու առջև պարեմ, Նրա անունը թող սուրբ լինի, որ քո հորից ավելին ինձ նկատեց արժանի թագավոր լինելու, ինչքան էլ քո աչքին հաճելի չթվամ, Աստծու առջև ընդունելի կլինեմ, ինչքան էլ Նրա

---

[160] *Ա Մնաց. 16*:

ներկայությամբ պարեմ»: Դավթի այս ծանր հանդիմանությունից բացի՝ Տերը նրան անպտղությամբ է պատժում, և Մեղքողն առանց զավակի է մահանում:

Հարց ԻԹ: **Քանի՞ տարի է տապանակը մնում Դավթի տանը:**

Պատասխան: Մինչև Սողոմոնի ձեռքով Երուսաղեմում կառուցվում է տաճարը: Թեև Դավիթը փափագում էր տապանակի համար մի հատուկ տաճար կառուցել, սակայն Դավիթը, այս մտադրությունը Նաթան մարգարեին հայտնելով, խորհուրդ է հարցնում, և այդ գիշեր Աստված մարգարեին հրամայում է. «Գնա,՛ իմ ծառա Դավթին ասա՛, որ ինձ համար տուն չկառուցի, այլ իր մահվանից հետո իր որդին թող կառուցի»:

Քանի որ Դավիթը միշտ պատերազմում էր, և նա շատ արյուն էր թափվել, ուստի այս է պատճառը, որ նրա ձեռքով տաճար կառուցելու արտոնություն չի տրվում: Սակայն Դավթի ցանկությունը Աստծուն ընդունելի և հաճելի լինելով՝ խոստանում է նրան պաշտպանել թշնամիներից և մանավանդ նրա և որդիների թագավորությունը հավիտյան ապահով և կանգուն պահել Տիրոջ առջև:

Աստծու սույն մխիթարիչ խոստումն ու խոսքերը Նաթանը հայտնում է թագավորին, որը, խիստ մեծ ցնծությամբ, գնում է տապանակի մոտ և ջերմագին սիրով շնորհակալություն մատուցելով Աստծուն՝ խոստովանում է Նրա ողորմությունը, ճանաչում Նրա ամենակարող զորությունը և մանավանդ խոնարհ սրտով խնդրում, որ միշտ Իր ողորմությունն ու շնորհն անպակաս անի իրենից և իր որդիներից, ինչպես մանրամասնորեն գրված է Սուրբ գրքում:

Արդ, քանի որ Աստծուց իսրայելացիներին խոստացված երկրի մի քանի քաղաքներ թշնամիները գրավել էին,

Դավիթը ցանկանում է դրանք նույնպես ձեռք բերել[161]: Ուստի մովաբացիների վրա հարձակվելով՝ քաջությամբ նվաճում է, ու քանի որ նրանց գերիների մի մասին սպանելու և մնացածին կենդանի էր թողնելու, նրանց բոլորին, գետնին պառկեցնելով, վիճակ է հանում՝ իմանալու, թե ովքեր՝ կյանքի, և ովքեր՝ մահվան են արժանի, հետո մի արտ չափելու նման, պարանով այդ մարդկային դաշտը չափելով, մահվան արժանի գերիներին սաստիկ տանջանքներով սպանում է, իսկ ապրելու համար սահմանվածներին հարկատու է դարձնում. նրանց պառկած վայրը երկուական չվանի երկարություն ուներ[162]:

Հարկ է իմանալ, որ Հեսուն Աբրահամին խոստացված վայրերը, Աստծու հրամանով իսրայելացիների տասներկու ցեղերի անուններով վիճակ հանելով, բաժանել էր, և այդ վայրերն իրավացիորեն իսրայելացիների սեփական կալվածքներն էին: Ահա սրա պատճառով Դավիթը, թշնամու ձեռքից բռնությամբ այս վայրերը վերադարձնելով, անզգամ և անիրավ թշնամուն պարանով չափելուց հետո սպանելու իրավունք էլ ուներ: Քանի որ նրանք իսրայելացիներին չափով տրված վայրերը, բոլոր օրենքներին հակառակ, հանդգնել էին գրավել:

Դարձյալ Աստծու խոստման համաձայն՝ Մուրադ գետը (Լիբանանի լեռան կողմից) իսրայելացիների համար սահման նշանակված լինելով[163]՝ Դավիթը ցանկանում է հասնել

---

[161] Տերն օրհնեց Աբեդդարին ու նրա ամբողջ տունը.... այլազգիների ձեռքից վերցրեց քաղաքին հարող տարածքները (*Բ Թագ. 8:1*):

[162] Երկու պարան չափեց սպանելու և ամեն երկու պարան՝ կենդանի թողնելու համար (*Բ Թագ. 8:2*):

[163] Այն բոլոր տեղերը, ուր ձեր ոտքերը կկոխեն, ձեզ պիտի տամ, ինչպես որ ասել եմ Մովսեսին. անապատը և Լեռնալիբանանը մինչև

մինչև այդ սահմանը, ուստի Սուբայի թագավոր Ադրաազարի դեմ շարժվելով՝ հարվածում և նվաճում է և նրա երկրից շատ պղինձ վերցնում, որը Սողոմոնը հետո տաճարի ավազանների, գերանների և այլ կարիքների համար է գործածում:

Այդ միջոցին Դամասկոսի ասորիների թագավորը, Ադրաազարին օգնելու գալու համար նրանց դեմ պատերազմելով, հաղթում է, և Ասորիքը Դավթին հարկատու լինելուց բացի՝ Դավիթը, Դամասկոսի առջև պահակակետ կառուցելով, այնտեղ զորք է պահում, որպեսզի միգուցե թշնամին զորանալով՝ իսրայելացիների սահմանը չանցնի և խաղաղ բնակչությանը տագնապ և վնաս չպատճառի: Այս նախազգուշական միջոցառումները ձեռնարկելուց հետո վերադառնում է:

Դավթի սույն հզոր դիրքին և բռնած քաղաքականությանը նայելով՝ իսրայելացիների երկրին սահմանակից բոլոր ազգերը մեծապես երկյուղում են, քանի որ Աստծու ողորմությամբ ում հետ պատերազմում էր, հաղթանակում էր: Ուստի Եկմաթի երկիրն էլ իսրայելացիներին սահմանակից լինելով՝ նրա թագավորը՝ Թովուն, վախից ցանկանում է Դավթի հետ բարեկամանալ, և այս նպատակով իր որդու հետ բազում ընծաներ՝ ոսկի, արծաթ և պղնձե թանկարժեք անոթներ, ուղարկելով՝ գոհունակություն է հայտնում Ադրաազարի նկատմամբ տարած հաղթանակի համար: Քանի որ վերջինս Թովուի ոխերիմ թշնամին էր: Դավիթը, նրա ընծաները ընդունելով, նրա հետ բարեկամություն է հաստատում:

Դու Դավթի հավատարմությունը տե՛ս: Որովհետև, ինչպես երևաց թշնամիների դեմ պատերազմում, իր հավատարիմ

Եփրատ մեծ գետը, Քետացիների ամբողջ երկիրը մինչև արևմուտքի վերջին ծովը ձեր սահմանները կլինեն (*Հետ. 1:3-5*):

սիրելի ընկերոջ՝ Հովնաթանի քաղցր հիշատակը չի մոռանում, Սավուղի մտերիմներից Սիբա անունով մի մարդու հարցնում է, թե արդյոք Սավուղի սերնդից որևէ մեկը կա, որին, հանուն Հովնաթանի սիրո, ողորմություն անի:

Երբ իմանում է, որ Հովնաթանի՝ երկու ոտքից կաղ որդին՝ Մեմփիբոսթեն, կենդանի է, իր մոտ է բերել տալիս և նրան սիրաշահ խոսքերով մխիթարելուց հետո, Սավուղի բոլոր կալվածք արտերը և ողջ ունեցվածքը նրան շնորհելով, պատվիրում է, որ այնուհետև միշտ իր արքայական սեղանից ուտի: Սակայն հիշյալը Միքա անունով մի փոքր որդի ունենալու պատճառով և՛այդ մանկան, և՛ արտերի կառավարումը վերոհիշյալ Սիբային է հանձնում, որպեսզի Մեմփիբոսթեն կարողանա Երուսաղեմում մնալ և արքունիքում, որպես արքայի որդիներից մեկը, կատարյալ հանգիստ վայելի:

Հասկացի՛ր. ինչպես, օրինակ, Հովնաթանը Դավթին է մխիթարում նրա տագնապալից վիճակում, այդպես էլ Դավիթը, նրա նվիրվածությունը չմոռանալով, նրա խեղճ որդուն, իբրև իր որդի, միշտ իր մոտ է պահում: Քանի որ հավատարիմ և առաքինի լինելով՝ նեղության մեջ իր հետ բարեկամություն անող և իրեն օգնող մարդկանց չի մոռանում, այլ փոխարենը ցանկանում է նրանց բարերարություն անել:

Ինչպես ամոնացիների Նաաս թագավորը, Դավթի հորն ու մորը Սավուղից հեռու պահելու համար միառժամանակ իր մոտ պահած լինելով, բարեկամաբար էր վարվել (տե՛ս ԻԱ հարցը), երբ Նաասը մեռնում է, նրա որդի Ամոնն է թագավորում, և Դավիթը նրան մխիթարելու և նրա գահակալությունը շնորհավորելու համար հատուկ պատվական մարդիկ է ուղարկում նրա մոտ: Սակայն Ամոնի պալատականները, Դավթի ուղարկած մարդկանց անտեղի կասկածելով, լրտես

համարելով, ածիլում են նրանց մորուքները և զգեստներն էլ գոտկատեղից վար կտրում:

Երբ այս պատվավոր դեսպանները այսպիսի անպատվաբեր վիճակում Երիքով են վերադառնում, Դավիթն իմանում է եղելությունը և պատվիրում, որ մնան Երիքովում, մինչև նրանց մորուքները երկարեն, և նոր միայն Երուսաղեմ վերադառնան: Արդ, հայտնի է՝ մի այսպիսի անիրավ վարմունքի հետևանքը պիտի պատերազմը լիներ, ուստի ամոնացիք, վերոհիշյալ ասորիների Ադրաազար թագավորին և այլոց մեծ գումար և ընծաներ խոստանալով, բոլոր կողմերից անհամար զորք են հավաքում:

Դավիթը, նրանց այս նախաձեռնության մասին իմանալով, իր սպարապետ Հովաբին նրանց դեմ է ուղարկում, որը, քաջությամբ մարտնչելով, հաղթում է, իսկ ասորիները՝ խայտառակությամբ փախչում: Երբ ամոնացիները տեսնում են ասորիների փախուստը, իրենք էլ փախչելով գալիս, պատսպարվում են քաղաքում, որպեսզի իսրայելացիների սրից ազատվեն: Եվ քանի որ թշնամին փախչում է, ուստի այս է պատճառը, որ Հովաբը վերադառնում է Երուսաղեմ:

Սակայն Ադրաազարը, որին Դավիթը, մի անգամ նվաճելով, իրեն հարկատու էր դարձրել, և որը թեև այս վերջին անգամ էլ է Հովաբից հաղթվում, հանգիստ չմնալով, իսրայելացիների վրա հարձակվելու համար ասորիներից ուրիշ զորք է հավաքում: Դավիթը սա լսելուն պես այս անգամ ժողովում է բոլոր իսրայելացիներին, և ինքն անձամբ, Հորդանանն անցնելով, պատերազմում է քաջաբար, և Աստծու օգնությամբ նրանց կոտորում է և նրանց ողջ պաշարը գրավում:

Արդարև, այս անգամ ասորիներն այնքան են ընկճվում, որ ոչ միայն վախենում են ամոնացիներին օգնություն ցույց տալուց, այլև իրենք էլ, Դավթին անձնատուր լինելով, խոստանում են նրան միշտ հնազանդ և հպատակ մնալ:

Հարց Լ.: **Դավիթը իր թագավորության ընթացքում նեղություն և տրտմություն ունենո՞ւմ է:**

Պատասխան: Ունենում է: Հիրավի, ինչքան իր թշնամիների հանդեպ հաղթող է լինում, սակայն անկարելի է՝ այս աշխարհում մարդ միշտ զերծ մնա վտանգներից և նեղություններից, և Դավիթը նույնպես, մի անգամ իր կրքերից հաղթվելով, մեղանչում է, որի պատճառով երկար ժամանակ բազում արցունքներ հեղելով՝ արտասվում է, տրտմության և անձկության մատնված՝ տառապում: Սրանից բացի՝ իր երկու որդիների անօրեն և անկարգ վարքի պատճառով բազում տագնապալից օրեր է ունենում:

Չնայած Հովաբը հաղթում է ասորիներին, սակայն, ինչպես վերը հիշատակվել է, ամոնացիները խուսափելով ապաստանում են իրենց քաղաքում, ուստի ամբողջապես ջախջախված չէին: Ահա սրա պատճառով հաջորդ տարի Հովաբը կրկին զորքով հարձակվում է նրանց վրա, որպեսզի իսրայելացիների կրած անարգանքի համար վրեժ լուծի և ծանր պատիժների ենթարկի այնպես, որ մի անգամ ևս իսրայելացիներին դիմադրելու ուժ և կարողություն չունենալով՝ ամբողջությամբ հնազանդվեն:

Այս պատերազմի ընթացքում Դավիթը, Երուսաղեմում մնալով, մի օր, քնից արթնանալով, պալատի տանիքում շրջում էր: Միևնույն ժամանակ Ուրիա անունով մի մարդու կինն էլ՝ Բերսաբեն, իր տան տանիքում լվացվում էր, որին տեսնելուն պես Դավիթն իսկույն, ցանկական կրքին անձնատուր, նրան բերել է տալիս և հետը շնության մեղք գործում, քանի որ Ուրիան Հովաբի հետ պատերազմ էր գնացել:

Երբ Բերսաբեն հղիանալով Դավթին տեղեկացնում է, սա անմիջապես, Հովաբի մոտ մարդ ուղարկելով, Ուրիային Երուսաղեմ է բերում, որպեսզի տուն գնալով՝ կնոջ հետ պառկի, և

իր շնության արարքը գաղտնի մնա: Սակայն Ուրիայի վերադառնալու ժամանակ իբր թե պատերազմից տեղեկություններ իմանալու համար է կանչել, բանակի դրության մասին հարձուփորձ անելուց հետո Դավիթն առաջարկում է տուն գնալ և հանգստանալ, նրա հետևից էլ, որպես վարձատրություն, ընծաներ է ուղարկում:

Սակայն Ուրիան, միամիտ և իր ազգին հավատարիմ, երկու գիշեր Երուսաղեմում մնալով, տուն չի մտնում: Թեև Դավիթը նորից ու նորից տուն գնալու առաջարկ է անում, սակայն նա երդումով հրաժարվում է՝ ասելով. «Տապանակն ու Իսրայելը դրսում՝ վրանի տակ են, ես ինչպե՞ս կարող եմ գնալ տուն և հանգստանալ»: Երբ Դավիթը տեսնելով, որ նա իր կնոջ մոտ չի գնում, ճարահատյալ նամակ է գրում Հովաբին, որ Ուրիային պատերազմական վտանգավոր ճակատ ուղարկի, որպեսզի զոհվի, գրած թուղթն էլ նրա հետ է ուղարկում:

Խրա՛տ ընդունիր, ո՛վ մարդ, միշտ զգո՛ւյշ եղիր, որ ցանկության հուրը սրտումդ չվառվի, և դրանով իսկ մեղանչելու առաջին քայլը չանես, որովհետև չար գործը, շղթայի նման իրար կապված, մարդու մի մեղքից մյուսի մեջ գլորվելու պատճառ է լինում: Ճշմարիտ է, որ Ուրիային սպանելը Դավթի մտքով չէր անցել, սակայն նրա պատիվը բռնաբարելով՝ մահվան վճիռ էլ է տալիս, որպեսզի չբամբասվի:

Արդարև, Հովաբը իրեն տրված հրամանի համաձայն է գործում, և Ուրիան պատերազմում վիրավորվում է և մեռնում: Սակայն նրա հետ բազում այլ ռազմիկներ էլ են մեռնում: Քանի որ Հովաբը այս անգամ մարտի ժամանակ անխոհեմ է վարվում, որպեսզի Ուրիան անպատճառ մահանա: Երբ Դավիթը լսում է, որ զորքից շատերը կոտորվել են, թեև Հովաբի ներկայությամբ բարկացկոտ կերպարանք է ցուցադրում, սակայն Ուրիայի նրանց հետ մահանալը լսելով՝ բարկությունը

մեղմանում է: Բերսաբեն Ուրիայի մահվան համար, սովորույթի համաձայն, սուգ է պահում, և սգի ու տրտմության օրերն անցնելուց հետո Դավիթը նրան կնության է վերցնում, և մեղքի պտուղ զավակն էլ, որպես Դավթին նախատինք, ժամանակից շուտ է աշխարհ գալիս:

Դու Աստծու ողորմությա՛նը նայիր, որովհետև այս դեպքում Դավիթը սաստիկ պատժի էր արժանի, սակայն Աստված, ողորմած լինելով, նրա մոտ Նաթան մարգարեին է ուղարկում, որպեսզի հանցանքը գիտակցելով՝ զղջա և գոչի՝ մեղա՛: Նաթանը մի առակով թագավորի հետ այսպես է խոսում. «Մի քաղաքում երկու մարդիկ կային, մեկը՝ հարուստ, իսկ մյուսը՝ խիստ աղքատ: Հարուստը ոչխարների շատ հոտեր և կովերի նախիրներ ուներ, սակայն աղքատը միայն մի գառ ուներ, որին իր զավակի պես սիրում էր և նրանով էր ապրում: Երբ հարուստի մոտ հյուրեր են գալիս, նա իր հոտն ափսոսալով, վերցնում է աղքատի գառը և իր հյուրին պատվելու համար հոժարակամ զոհում»:

Դավիթն առանց հասկանալու, որ այս առակը իր մասին է, բարկանալով իսկույն երդումով վճռում է. «Մահվան է արժանի նա, ով այդ անգթությունը գործեց, պիտի յոթնապատիկ հատուցի, քանի որ աղքատին անգթաբար չխնայեց»: Նաթանը այս վճիռն ստանալուն պես սկսում է խոսել. «Դո՛ւ ես այդ մարդը, տե՛ր Արքա, Աստված, քեզ Սավուղի ձեռքից փրկելով, թագավոր կարգեց, նրա տերությունն ու իսրայելացիներին քեզ տվեց, եթե նրանք քիչ են, այդքան ևս կարող է տալ, ուրեմն ինչո՞ւ Աստծու օրենքը քանդեցիր և Ուրիային ամոնացիների սրով սպանելով՝ հափշտակեցիր նրա կնոջը»:

Նաթանը, այս առակով Դավթի հանցավոր լինելը հայտնելուց բացի, նաև մանրամասնորեն նշում է հանցանքի համար տրվելիք պատիժը՝ ասելով. «Սուրը չպակասի քո տնից,

չարությունը քո տանից տալիս եմ քեզ. դու, որ ծածուկ գործեցիր, ես այդ բանը պիտի հայտնի անեմ»[164]: Հիմա խորհի՛ր. գալիք պատժի անունն ու կերպն է հայտնում, որպեսզի դա պատահելիս պատահական մի բան չհամարի, այլ Աստծու հատուկ պատիժ լինելը հայտնի դառնալով՝ ամեն մարդ, դրանից խրատվելով, չար վարքի չհետևի:

Նայի՛ր այստեղ Դավթի վիճակին. որովհետև Նաթանի խոսքերը հզոր նետերի նման նրա սրտին են դիպչում, ողջ էությամբ ցնցվում է: Ինքը, որ Աստծուց վախենում էր, ամոթխած և իրավունքը սիրելով, հանցանքն իմանալուն պես ամոթից կարկամելով, բացարձակապես անկարող է լինում պատասխան տալու:

Դավիթը, որ մեծաշուք թագավոր էր, անչափ իմաստուն և ամեն առումով պատրաստաբան, ինչպիսի՛ զարմանք, այս անգամ անկարող է լինում անգամ պատասխան տալու: Մի՛ զարմացիր, քանի որ մարդու հանցանքը նրան համր է դարձնում, պապանձեցնում: Սուրբ գրքի մեջ Դավթի աչքերը ներբողվել են որպես շատ գեղեցիկ, սակայն դրանք ինչքա՛ն են տգեղանում, երբ մի անվայել ակնարկով օտար կնոջ է նայում, քանի որ մեղքի մշուշն է նրանց պատում:

Թշնամու նետերը անկարող են լինում վիրավորելու Դավթի մարմինը, սակայն նրա աչքերը մի չար ակնարկով ի զորու են լինում թունավոր նետով վիրավորելու նրա հոգին: Դավիթը հաճախ կողոպտում էր թշնամու ունեցվածքը, այս անգամ նրա աչքերը մի պագշոտ հայացքով նրա առաքինությունն են իրենից կողոպտում:

---

[164] Արդ, սուրը հավիտյանս թող չհեռանա քո տնից.... Այսպես է ասում Տերը. «Ահա ես քո դեմ չարիք կհարուցեմ քո տնից.... Դու այդ բանը ծածուկ արեցիր, իսկ ես այն անելու եմ ամբողջ Իսրայելի աչքի առաջ, օրը ցերեկով» (*Բ Թագ. 12:10-12*):

Դավիթը միշտ սաղմոսերգություններով փառաբանում էր Աստծուն. ինչպիսի՛ անօրինակ երևույթ, որ այժմ նա Նրա օրենքներին հակառակ է գործում: Դավիթը, տավիղ նվագելով, Սավուղի ախտն էր մաքրում, սակայն Ուրիայի մահվան վճիռը գրելով՝ մեղքի ախտով է վարակվում, որը հոգու մահն է: Դավիթը միշտ արդարությամբ էր դատաստան տեսնում, ինչպե՞ս է լինում, որ անարդարությամբ հրամայում է, որ Ուրիան մեռնի: Դավիթը բոլորի համար արդարության օրինակ էր. ինչպիսի՛ տարօրինակ բան է, որ նա աշխարհի չար օրինակ լինելու մի շատ տգեղ արարք է կատարում:

Դավիթը իր թշնամուն՝ Սավուղին, սպանելու առիթն ունենալով, նրան ոչ միայն չի սպանում, այլև նույնիսկ նրա թիկնոցի քղանցքը կտրելու համար է զղջում, ուրեմն ինչո՞ւ է այս անգամ իրեն բարեկամ և հավատարիմ Ուրիայի արյունը թափում: Դավթի սուրը Աստծու օգնությամբ միշտ թշնամու պարանոցին էր, արդյոք ինչպե՞ս որոշվեց, որ սուրը հավիտյան նրա տնից անպակաս լինի: Մի՛ զարմացիր, այս աշխարհում մարդկային վիճակն այսպիսին է, որովհետև քանի դեռ հոգին մարմնի մեջ է, և քանի որ մարմինը հոգով կենդանի է, մարդը երբեք վտանգից չի կարող ազատ և զերծ լինել:

Հիմա, ո՛վ մարդ, ով էլ լինես, լսի՛ր և մի՛շտ խորհիր. մի՛ ապավինիր առաքինությանդ, գիտությանդ և մեծություններիդ, այլ վախեցի՛ր, որ սատանայի ծուղակը չընկնես: Աստծու սերը սրտիցդ մի՛ հանիր, որպեսզի քեզ պահպանի ամեն մի փորձանքից: Լա՛վ հսկիր աչքերդ, ուրիշի կնոջը ցանկական հայացքով մի՛ նայիր: Դավիթը, ընդամենը մի անգամ օտար կնոջ նայելով, ցանկության հուրը վառվում է նրա սրտում, և ամբողջ կյանքում հառաչանքերով և հեծությամբ Աստծուն աղաչում է[165], արտա-

---

[165] Ողորմի՛ր, ինձ Աստվա՛ծ.... (*Սղ. 50:1*):

սուք թափում, որ այն մարի[166]: Եթե դու էլ սխալվեցիր և մեղանչեցիր, ուղիղ սրտով, Աստծու պատիվը պահելով՝ իսկույն զոչիր՝ մեղա՛, և սրտի դառնագին հառաչանքներով արտասվի՛ր և ողբա՛, որպեսզի թողություն գտնես:

Արդարև, Աստված իր անսահման ողորմությամբ մեղավորին զղջման և ապաշխարության է հրավիրում, սակայն մարդն էլ պարտավոր է ընդունելու այդ փրկարար հրավերը և զղջալու ապաշխարելու, որպեսզի թողություն գտնի: Ինչպես Դավիթը Նաթան մարգարեի խոսքերը լսելուն պես, իսկույն սաստիկ զղջալով, արատասուքով գոչում է՝ մեղա՛[167]:

Տե՛ս, թե Աստծուն որքան ընդունելի է ուղիղ սրտով և կատարյալ հավատքով զղջումն ու մեղավորի դարձը, քանի որ Դավթի մեղայի ձայնը Նաթանի ականջին հասնելուն պես Աստծու ազդեցությամբ անմիջապես պատասխանում է. «Աստված մեղքերդ ներեց, չպիտի մահանաս»[168] (այսինքն՝ մահվամբ չպիտի պատժվես):

Թեև Դավիթը զղջումով և արտասուքներով, իր մեղքերի համար թողություն գտնելով, ազատվում է հանդերձյալ աշխարհի անվախճան տանջանքներից, սակայն մարդն այս աշխարհում իր հանցանքների համար նեղություններ և վիշտ է կրելու: Մանավանդ Ուրիայի մահվանից հետո նրա կնոջն իսկույն կնության առնելով՝ այլևս ոչ մեկը չի տարակուսում, որ եղելությունը տեղի է ունեցել Դավթի կարգադրությամբ, և սա մեծ գայթակղության և խռովության պատճառ կարող էր լինել,

---

[166] Ես հոգնեցի իմ հառաչանքներից, ամեն գիշեր հեծեծանքով լվացի մահիճն իմ և իմ արտասուքով անկողինս թրջեցի (*Սղ. 6:1*):

[167] Իմ արտասուքով անկողինս թրջեցի (*Սղ. 6:1*):

[168] Դավիթն ասաց Նաթանին. «Մեղանչել եմ Տիրոջ դեմ»: Նաթանն ասաց Դավթին. «Տերը ներեց քո մեղքը, և դու չես մեռնի….» (*Բ Թագ. 12:13*):

ուստի Նաթանը տեղեկացնում է, որ մեղքի ծնունդ մանուկը մահանալու է, որպեսզի նրա մահը բնական մահ չհամարվի, այլ Դավթի մեղքի պատճառով մի հատուկ պատիժ լինելը ողջ աշխարհը որոշակիորեն իմանա, որպեսզի բոլոր լսողները, Աստծու անունն ու արդարությունը գովելով, երկնչեն Նրա դատաստանից և ամեն կերպ հեռու մնան մեղքից:

Քանի որ Դավթի սույն հանցանքի պատճառով կռապաշտները Աստծու արդարության դեմ են խոսում, իբր թե օրենքով չէ Նրա դատաստանը, ուստի Նաթանն ասում է. «Քո այս վարմունքով Տիրոջ թշնամիներին գրգռեցիր»[169]:

Այս ծանրակշիռ կետի մասին թող լավ խորհեն և՛ հոգևոր, և՛ մարմնավոր իշխանություն ունեցողները, թե որքան մեծ մեղք է գայթակղության պատճառ լինելը: Հասարակ և ցածր աստիճանի մարդկանց հանցանքը մեծ էլ լինի, ոչ մեկը, նրանց գործերին ուշադրություն դարձելով, չի գայթակղվի, սակայն իշխանություն ունեցողը մի փոքր հանցանք էլ գործի, բոլորին գայթակղություն կպատճառի: Քանի որ ժողովուրդը միշտ իր մեծին նմանվելու ջանք և փափագ ունի, երբ մի փոքր թերություն է տեսնում, անպատճառ կա՛մ բերանն առնելով՝ նրան պիտի բամբասի, կա՛մ էլ նրա անարժան կյանքին հետևի, մանավանդ նրան չարությամբ պիտի գերազանցի: Սրանից բացի՝ ամեն մարդ միայն իր անձնական թերությունների համար է պատժվում, իսկ իշխանավորները, իրենց հպատակներին չար օրինակ տալով, նրանց հանցանքների համար էլ պիտի պատժվեն: Ուրեմն նրանք ամեն կերպ պարտավոր են հոռի վարքից զգուշանալ և ջանան՝ բոլորին առաքինության օրինակ լինելու: Ինչպես որ Դավիթը մի անգամ գայթակղության

---

[169] Բայց քանի որ դրանով թշնամիներին առիթ տվեցիր Տիրոջը հայհոյելու, քեզանից ծնվելիք որդիդ պետք է մեռնի (*Բ Թագ. 12:14*):

պատճառ լինելու վարմունք է ունենում, բայց դրանից հետո ուղիղ սրտով, ճշմարիտ և անկեղծ զղջմամբ, ինչպես նաև միշտ արտասվելով, մինչև մահ զգուշանում է ամեն տեսակի մեղքից և գայթակղություն պատճառող որևէ արարքից և, այսպիսով, իրավացիորեն արժանանում է առաքինության օրինակ լինելու աշխարհին:

Արդարև, Դավթի սխալվելն ու մեղանչելը, ինչպես նաև զղջալն ու թողություն գտնելը մեծ խրատ է մարդկությանը: Քանի որ առաքինի մարդը, նրա սխալմունքի մասին խորհելով, զգուշանում է, որպեսզի չսխալվի, նույնպես և մեղանչած մարդը, նրա արդարացումը մտաբերելով, Աստծու ողորմությունից հույսը չկտրելով, զղջում է և թողության ու ներման արժանանում:

Սակայն պետք չէ թողություն գտնելու հույսով մեղանչել, քանի որ նա, ով մեղանչում է՝ ասելով. «Աստծու ողորմությունը անչափ է, և զղջացողի հանցանքը անպատճառ կների», Աստծու ողորմությունը մեղքի պատճառ կամ գործիք դարձնող է համարվում, այս է պատճառը, որ թողության անարժան է լինում (ըստ առածի՝ հույսով մեղանչում է, անհույս՝ կորչում): Ճշմարիտ է, որ տիրոջ ողորմությունը չափ ու սահման չունի, սակայն նրա արդարությունն էլ, անչափ անսահման լինելով, միմիայն Նրա գթության վրա հույս դնելով, գիտակցված մեղանչողը, անշուշտ, Նրա արդարությունից կպատժվի:

Տարաբախտաբար, շատ շատերը չարաչար պատժվում են՝ միայն Տիրոջ գթությունը մտաբերելով, բայց երբեք չմտաբերելով նրա արդարությանը: Մանավանդ չար սատանան անմիտ մարդկանց՝ մեղքի մեջ գցելու համար միշտ հուշում է. «Աստված ողորմած է, մի՛ վախեցիր», իսկ հետո Նրա արդարությունն է հիշեցնում և երկյուղ գցում, որպեսզի Տիրոջ գթությունից հուսահատվելով՝ իր նման դատապարտվեն:

Ուրեմն, եթե չես ցանկանում դատապարտվել, նախ և առաջ Տիրոջ արդարության մասին խորհելով՝ երկյուղ ունեցիր, որպեսզի չմեղանչես, և եթե սխալվելով մեղանչել ես, Նրա գթությունն ու ողորմությունը մտաբերելով, շտապով և առանց դանդաղելու վերադարձի՛ր և զղջա՛, որպեսզի թողություն գտնես:

Երբ դրանից հետո նորածին մանուկը հիվանդանում է, Դավիթը, նրա համար ծոմ պահելով և տրտմությամբ երեսնիվայր, գետնատարած սկսում է աղաչանքներ և պաղատանքներ մատուցել: Թեև նրա ծառաները թախանձանքներով խնդրում են վեր կենալ և կերակուր ուտել, սակայն չի կանգնում և կերակուր չի ընդունում:

Յոթերորդ օրը մանուկը մահանում է, և ծառաները վախենում են Դավթին տեղեկացնել, բայց նա նրանց շարժումներից և շշունջներից է իմանում, որ մանուկը մահացել է, ուստի կանգնում է, լվացվում, և զգեստները փոխելով՝ գնում տապանակի առջև, որտեղ Աստծուն գոհություն և փառք տալով՝ երկրպագություն մատուցելուց հետո գալիս է և ճաշում:

Երբ ծառաները, Դավթի այս վարմունքից զարմանալով, հետաքրքրվելով հարցնում են պատճառը, նա պատասխանում է. «Քանի դեռ մանուկը ողջ էր, արտասվում և ծոմ էի պահում, որպեսզի թերևս Աստված ողորմի, և մանուկը չմահանա, սակայն մահանալուց հետո ինչո՞ւ ծոմ պահեմ կամ արտասվեմ, մի՞թե ես կարող եմ նրան վերադարձնել. նա ինձ մոտ չի վերադառնա. ես պետք է նրա մոտ գնամ»: Դավիթն այս խոսքերով համակերպվում է Աստծու կամքին և մխիթարվելով շտապում՝ Բերսաբեին մխիթարելու: Դրանից հետո Բերսաբեն հղիանալով մի զավակ է ծնում, որի անունը Դավիթը Սողոմոն է դնում: Աստված Սողոմոնին սիրելու համար Նաթան մարգարեի միջոցով նրա անունը Հեդիդի է կոչում, որ նշանակում է «Աստծու սիրելի»:

Հարց ԼԱ: **Ամոնացիների դեմ պատերազմող Հովաբն իր զորքով ինչքա՞ն է այնտեղ մնում:**

Պատասխան: Մոտավորապես մեկ տարի: Քանի որ երբ Հովաբը ավերում է ամոնացիների երկիրը (տե՛ս Լ հարցը), նրանց թագավորը զորքով ապաստանում է Ռաբաթ քաղաքում: Այս քաղաքը շատ ամուր լինելուց բացի՝ անթիվ զորք և առատ ջուր ուներ. այնպես որ շրջափակված լինելով ջրով լի խրամով՝ շատ դժվար էր այն գրավել: Ինչպես նաև Սուրբ գիրքն է *ջրերի քաղաք* անունով կոչում այն, որի պատճառով էլ Հովաբը հարկադրված է լինում այդքան երկար ժամանակ մնալու այնտեղ[170]:

Սակայն երբ նա, օրըստօրե քաղաքի պարսպին ավելի մոտենալով, պաշարում է գրավելիք կենտրոնը, Դավթին լուր է ուղարկում, որ անձամբ գա, որպեսզի քաղաքը գրավելու փառքն ու պատիվը Դավթինը լինեն: Այն ժամանակ Դավիթը բազմահազարանոց զորքով անձամբ գնալով, տիրում է քաղաքին և վերցնում քաղաքի թագավորի ոսկյա և գոհարազարդ թագը: Սրանից բացի, բազում ավար և կողոպուտ ձեռք գցելուց զատ, նրա բնակիչներին մի ընդարձակ կալատեղում պառկեցնելով՝ երկաթյա քերիչներով և սղոցներով չարաչար տանջանքներով սպանում է: Դավիթն այս ձևով պատժում է ամոնացիների քաղաքների ամբարիշտ բնակիչներին և ապա ուրախությամբ և հաղթական բանակով վերադառնում Երուսաղեմ:

Արդ, մի՛ կարծիր, որ Դավիթը այս պարագայում անիրավություն կամ էլ անգթություն է գործում: Իրոք, հիշյալ պատիժը անսովոր երևույթ էր, սակայն նրանք նույնպես Դավթի

---

[170] Հովաբը պատգամաբերներ ուղարկեց Դավթին՝ ասելով. «Ռաբաթի դեմ պատերազմել եմ և գրավել ջրերի քաղաքը» (*Բ Թագ. 12:27, 28*):

մարդկանց ոչ սովորական անարգանք հասցնելուց բացի՝ նրա դեմ էին գրգռել նաև Ասորեստանը և հարձակման հրահրել, որի համար էլ հարկ էր սաստկագույն պատժով կորստյան մատնել այդ անզգամներին, որպեսզի ուրիշները խրատվելով այդպիսի ապօրեն և անարդար վարմունքից հեռու մնան:

Թեև Դավիթը, թշնամուն պատժելով, ուրախանում է, սակայն մարմնական ուրախությունը մարդու համար երբեք տևական չէ, ուստի նրա ուրախությունը տրտմության է փոխվում իր անդրանիկ որդի Ամոնի մի չար արարքի պատճառով:

Որովհետև հիշյալ արքայորդի Ամոնը, սիրահարվում է Աբիսողոմի՝ Թամար անունով գեղեցկուհի քրոջը, սակայն հասկանալով, որ այսպիսի չար և անարժան արարքը հայտնապես իր հանդեպ բոլորի զզվանքն է հարուցելու, չի համարձակվում իր պիղծ նպատակն իրագործել և զգալիորեն հալվում ու մաշվում է:

Նաև այս տխուր դրությունը տեսնելով՝ Դավթի եղբորորդի Հոնադաբը, որը նրա ընկերն ու անչափ գիտուն մեկն էր, պատճառը հարցնելուց հետո իրողությանը տեղեկանալով՝ նրան մի չար խորհուրդ է տալիս՝ ասելով. «Հիվա՛նդ ձևացիր, երբ հայրդ քեզ այցելության գա, խնդրի՛ր, որ Թամարին քեզ մոտ ուղարկի, որպեսզի կերակուր պատրաստելով՝ կերակրի քեզ»: Սույն վատ խորհուրդը Ամոնին հաճելի է թվում:

Արդարև, ըստ սույն խորհրդի՝ հիվանդ ձևանալով, երբ Դավիթը լսում է և Ամոնին տեսության գալիս, նրանից աղաչանքներով խնդրում է, որ Թամարին իր մոտ ուղարկի: Նա էլ Թամարին լուր է ուղարկում, որ կերակուր պատրաստելու համար հիվանդ եղբոր տուն գնա: Աղջիկը գալով, նրա ցանկությամբ և նրա ներկայությամբ կերակուր է պատրաստում, սակայն Ամոնը չի ցանկանում ուտել, և իր մոտ գտնվող մարդկանց դուրս հանելով՝ Թամարին խնդրում է, որ կերակուրը

ներքին սենյակ տանի, և աղջիկն այն տանելով՝ անամոթ Ամոնը ձեռնարկում է իրագործել իր պիղծ մտադրությունը:

Սակայն Թամարը, որ պարկեշտ և կույս աղջիկ էր, սկսում է աղաչել, որ իր հանդեպ այդպիսի չար արարք չգործի, բայց անօգուտ. բռնությամբ իր կամքը կատարելուց հետո նրա սերն իսկույն ատելության է փոխվում, այնպես որ իսկույն անարգանքով նրան տանից հանել է տալիս, քանի որ այդպիսի անպարկեշտ և ապօրինի սիրո վախճանը սովորաբար այդպիսի թշնամության է հանգում:

Հասկացի՛ր. Ամոն արքայորդին, նախապես ապօրինաբար սիրահարվելով, և ինչքան էլ հանցանքը ծանր էր, բայց երբ իր չար կիրքը հագեցնելուց հետո աղջկան տանից դուրս է վռնդում, նրա հանցանքն ու չարությունը, առավել ևս սաստկանալով, ծանրանում են: Ինչպես որ պարկեշտ Թամարը, թեև իր կուսությունը կորցնելու համար սաստիկ ցավ է զգում, սակայն Ամոնի տանից անարգանքով վռնդվելու համար առավել ևս սգալով, չափազանց մեծ կսկիծով և գլխին մոխիր ցանելով, իր կուսության նշան համարվող ծաղկանախշ հանդերձը պատռում է, և երկու ձեռքը գլխին դրած, մահվան չափ տխուրտրտում և արտասվելով՝ Աբիսողոմի տուն է գնում:

Աբրսողոմը եղելությունն իմանալու պես քրոջը պատվիրում է, որ ոչ մեկին չպատմի: Իրոք, նա սրա համար Ամոնի դեմ անչափ բարկանում է, սակայն մտածելով, որ Դավիթը անպատճառ կպատժի նրան, ինքն ընդհանրապես ձայն չի հանում: Այո՛, Դավիթը, լսելով Ամոնի արած չարության մասին, խիստ բարկանում է, սակայն նրա սիրտը չվշտացնելու համար նույնիսկ չի հանդիմանում, քանի որ որպես անդրանիկ որդի, բնականաբար, շատ էր սիրում նրան: Երբ երեք տարի անցնելուց հետո Աբիսողոմը տեսնում է, որ Դավիթը ներողամիտ է, մտադրվում է պատեհ ժամանակ Ամոնին սպանել:

Որոշ ժամանակ անց Աբիսողոմը ոչխարները խուզելու պիտի գնար, և Դավթին խնջույքի է հրավիրում: Երբ սա հրաժարվում է, Աբիսողոմը խնդրում է, որ եթե նա չի գալու, գոնե իր եղբայր Ամոնը գա: Թեև Դավիթը սրան էլ համաձայն չէր, սակայն շատ պնդելուց հետո Ամոնին և մյուս արքայորդիներին ուղարկում է: Աբիսողոմը թագավորական ընթրիք է պատրաստում նրանց համար և արդեն իսկ իր ծառաներին պատվիրել էր, որ երբ խնջույքին Ամոնը զվարթանա, հարվածեն և սպանեն նրան, որն էլ ծառաները իսկույն կատարում են: Այս տխուր և արյունահեղ տեսարանից հուզված՝ մյուս արքայորդիները, իսկույն հեծնելով իրենց ջորիները, աճապարանքով սկսում են փախչել:

Երբ Դավիթը ստանում է սույն աղետալի միջադեպի լուրը, կարծելով, որ բոլոր արքայորդիներն են մեռել, իսկույն հանդերձը պատռելով՝ գետնին է ընկնում, նաև նրա բոլոր ծառաներն են պատռում իրենց հանդերձները: Սակայն վերոհիշյալ Հոնադաբը, որը գործին սկզբից իսկ տեղյակ էր, շտապում է հայտնելու, որ միայն Ամոնն է մեռել, և ահա նույն ժամանակ Դավթի մյուս որդիները գալով բարձրաձայն արտասվում են: Դավիթը և նրա բոլոր պալատականները անչափ շատ են արտասվում: Աբիսողոմը ապաստանում է Հորդանան գետի մյուս ափին գտնվող՝ Գեսուրի թագավոր Թողմելեմի մոտ, որն իր մոր հայրն էր:

Հիրավի, Ամոնի հանդեպ Աբիսողոմի բարկությունը հայտնի էր, սակայն նա ամբողջ երեք տարի խիստ զգուշանում էր թշնամանքի որևէ արարքից, և կարծում էին, որ նրա զայրույթն անցել է: Այդ է պատճառը, որ Դավիթն Ամոնին վստահորեն խնջույքի է ուղարկում. Ամոնն էլ, ճիշտ նույն կարծիքն ունենալով, առանց զգուշավորության և աներկյուղ գնում է:

Սակայն Աբիսողոմի բարկությունը այդ ժամանակահատվածում ոչ միայն չի նվազում, այլև Թամարի ամենօրյա լացն ու ողբը տեսնելով՝ ավելի է սաստկանում և բորբոքվում: Մանավանդ Ամոնի արարքն անչափ ծանր և զզվելի լինելով՝ Դավիթը մինչև իսկ չի ցանկանում հանդիմանել նրան, և Ամոնն էլ զղջալու փոխարեն, իբրև անմեղ, համարձակ շրջում է:

Արդարև, եթե Դավիթը մեծ կամ փոքր որևէ պատիժ կարգադրեր Ամոնի այդ անզգամ վարքի և արարքի համար, թերևս Աբիսողոմը նրա կյանքի հանդեպ ոտնձգության չաներ: Քանի որ եթե դատավորը չի շտապում՝ ըստ օրենքի պատժելու այն մարդուն, որը ուրիշին վնաս է հասցնում և վտանգավոր է, տուժածը պատեհ և հարմար առիթ գտնելուն պես ինքն է շտապում՝ իր կրած զրկանքների և կորստյան համար վրեժխնդիր լինելու իր հակառակորդից:

Դու Աստծու արդարությո՛ւնը տես. այսպիսով, ոչ միայն Ամոնն է ստանում իրեն արժանի պատիժը, այլև (Լ հարցի մեջ հիշատակված վճռին համապատասխան) սուրը, հենց Դավթի տանից դուրս գալով, սպանում է նրա որդուն, որով էլ կատարվում է Նաթան մարգարեի կանխասացությունը, և Դավիթը դառնորեն արտասվում է: Մի՛ մտածիր, թե այդչափ լացով վճռված պատիժը լիովին կատարվում է, այլ նա մի օր էլ նույն Աբիսողոմի համար է ողբալու և արտասվելու:

Խրա՛տ ընդունիր Ամոնի թշվառ վիճակից և մի՛ հետևիր կրքերիդ. եթե ցանկության հուրը սիրտդ ընկնի, առիթից փախի՛ր, որ չայրվես: Նամանավանդ մտքիցդ մի՛ հանիր Աստծու երկյուղը և մարդկային ամոթը: Ծնանալու մեղքի ցանկությունը միաժամանակ հաճելի է թվում, սակայն դրան հետևող անարգությա՛ն և վնասների՛ մասին խորհիր, քանի որ մարմնի հաճույքը շուտ է անցնում, իսկ զղջումն ու պատիժը հավիտենական են:

Երբեք մի՛ լսիր այն մարդուն, որ քեզ չար խորհուրդ է տալիս. եթե այնպիսի մեկը նույնիսկ բարեկամ լինի, դու նրան թշնամի՛ համարիր, եթե գիտուն է, հիմա՛ր համարիր, քանի որ ճշմարիտ բարեկամ և իմաստուն մարդը նա է, ով իր բարեկամին հեռու է պահում հանցանքից, ինչպես վերոհիշյալ Հոնաթաբը, թեև Ամոնի բարեկամն էր և գիտուն մեկը[171], սակայն նրան մեղք գործելուց զգուշացնելու փոխարեն, ընդհակառակը, նրան մեղանչելու գրգռելով՝ թշնամություն և հիմարություն է գործում, ասես կրակի վրա յուղ է լցնում:

Արդարև, Ամոնը երկար ժամանակ էր մտորում այդ չար դիտավորության մասին, սակայն ինչ-ինչ նկատառումներով չէր համարձակվում իրագործելու այն, ուստի երբ հիշյալ անձի սադրանքով նենգության դաս է ստանում, իրականացնում է մտադրված չարությունը, և հաստատում է բոլորին վերաբերող առածը՝ մարդն իր ընկերոջից է հրահրվում: Հոնադաբը, խելացի լինելով, կարող էր հավատարմությամբ խրատել և արգելել Ամոնին՝ չարություն գործելու, սակայն սրտում Աստծու երկյուղը չլինելու պատճառով ընկերոջը չար խրատ է տալիս և մահվան պատճառ դառնում:

Այսպիսի գիտունը ոչ միայն իրեն է վնասում, այլև իր ընկերոջը: Եթե գիտելիքը լծորդված չէ առաքինությանը, մարդու համար մեծ վտանգ է: Ճշմարտապես գիտունը նա է, ով, Աստծու երկյուղը ոչ մի վայրկյան սրտից չհանելով, բոլորի համար առաքինության օրինակ է: Այն մարդը, որն իր գիտությունը, միայն աշխարհիկ գործերում գործադրելով, հոգևոր շավիղներից հեռու է մնում, նմանվում է ջորու, որը գրքերով է բեռնավորված (ըստ առածի՝ գիտուն մոլագարը ջորի է՝ գրքերով բարձված):

---

[171] Ամոնը ուներ Հովնադաբ անունով մի ընկեր.... (*Բ Թագ. 13:3*):

Հարց ԼԲ: **Աբիսողոմը ինչքա՞ն է մնում Գեսուրում:**

Պատասխան: Երեք տարի, մինչև Դավթի բարկությունը մեղմանում է: Թեպետ Դավիթը խիստ զայրացած էր Աբիսողոմի վրա, սակայն միգուցե Ամոնին ողբալու ժամանակ նրան էլ հարկադրված լինի ողբալու պատճառաբանությամբ, նրան պատժելու ձեռնամուխ չի լինում, և երեք տարի հետո, երբ Հովաբը տեսնում է, որ նրա բարկությունը մեղմացել է, որպեսզի նրան հաճելի երևա, փափագում է Աբիսողոմին մի հնարով Երուսաղեմ բերել:

Սակայն չհամարձակվելով ուղղակի Դավթին դիմելու և հրաման ստանալու՝ մի իմաստուն կին է ուղարկում, որպեսզի նրա միջոցով անհրաժեշտ արտոնությունը ստանա: Միաժամանակ կնոջը հրահանգում է, թե ինչպես պետք է համոզի թագավորին: Հիշյալ կինը, որպես վշտակիր արտասվելով, սգո հանդերձներով Դավթի մոտ է գնում և գետնամած աղաղակում է. «Փրկի՛ր ինձ, ո՛վ արքա, երկու որդի ունեի, դաշտում իրար հետ վիճելով՝ մեկը սպանեց մյուսին, այժմ ժողովուրդ ասում է. «Մե՛զ տուր մյուսին, որ մահացածի փոխարեն սպանենք նրան»»: Դավիթը, նրա ողբին և աղաղակին նայելով, ասում է. «Տո՛ւն վերադարձիր, ես անհրաժեշտ կարգադրությունը կանեմ», և երբ կինն իր որդուն չսպանելու համար կրկին աղաչում է, Դավիթը երդվում է, որ նրա որդու մազին անգամ չեն դիպչի: Այս երդման պահին հիշյալ կինն ասում է, որ Աբիսողոմի համար է իր աղաչանքը:

Այն ժամանակ Դավիթը հարցնում է, թե արդյոք Հովաբն է ուղարկել նրան, և երբ դրական պատասխան է ստանում, կանչում է Հովաբին և ասում. «Խնդրանքդ ընդունեցի, գնա՛, բե՛ր Աբիսողոմին»: Հովաբը շնորհակալությամբ մեկնում է և գնալով Գեսուր՝ բերում Աբիսողոմին, որին Դավիթն առանց իր մոտ ընդունելու հրամայում է գնալ և իր տանը մնալ:

Այո՛, Դավիթը Աբիսողոմին Երուսաղեմ է վերադարձնում, սակայն, որպես խրատելու միջոց՝ միառժամանակ չի ցանկանում տեսնել նրան: Իսկ երբ Աբիսողոմը ցանկանում է տանից դուրս գալ և համարձակ շրջել, կանչում է Հովաբին, որպեսզի նրա միջոցով հորից հրաման ստանա, սակայն նա մերժում է գալ, ուստի Աբիսողոմը, որպեսզի ստիպի, ծառաներին հրամայում է այրել նրա գարու արտերը:

Արդարև, Հովաբը Աբիսողոմի տուն է գնում՝ գանգատվելու, թե ինչու են նրա ծառաները այրել իր արտը: Աբիսողոմը, ձևացնելով, որ բնավ տեղյակ չէ հիշյալ դեպքին, պատասխանում է. «Քեզ թագավորի մոտ ուղարկելու համար կանչեցի, եթե թագավորի դեմքը չպիտի տեսնեմ, ինչո՞ւ Գեսուրից եկա, ավելի լավ էր՝ այնտեղ մնայի, եթե որևէ հանցանք ունեմ, սպանի՛ր ինձ»:

Հովաբը ստիպված է լինում նրա աղաչանքը թագավորին հայտնելու, որը, արդեն իսկ նրա հանդեպ սեր ունենալով, իսկույն հրամայում է իր մոտ՝ արքունիք բերել: Աբիսողոմը գալով խոնարհությամբ և ամենամեծ հարգանքով ողջունում է իր թագավոր հորը, և նա էլ, ներելով նրա հանցանքը, գորովանքով համբուրում է նրան և արտոնում նախկինի պես իբրև արքայորդի արքունիք հաճախել:

Հարց ԼԳ: **Ներում ստանալուց հետո Աբիսողոմը միշտ հնազա՞նդ է մնում հորը՝ Դավթին:**

Պատասխան: Ոչ միշտ: Քանի որ թեև Աբիսողոմը, շատ գեղեցիկ էր, գլխից մինչև ոտքերը ոչ մի թերություն չուներ, թեև բոլոր իսրայելացիների մեջ նրա նման վայելչակազմ մեկը չկար, այնպես որ նրա ոսկեթել երկար մազերն անչափ առատ էին և մեծ արժեք ունեին, սակայն նա շատ հպարտ էր. որքան արտաքինից գեղեցիկ էր, այդքան էլ՝ ներքնապես տգեղ: Նա չար

սիրտ, նենգավոր միտք և հոռի կամք ուներ, որոնցով ոչ միայն անհնազանդության հանցանք է գործում, այլև իր գեղեցկությամբ այնքան գոռոզանում, որ ցանկանում է Դավթին արքայական գահից զրկել և ինքը թագավոր լինել:

Ահա, հետամուտ է լինում սույն ապօրինի նպատակին՝ նախ թագավորին վայել պերճանք և շքեղություն ցույց տալով, հատուկ կառքեր է պատրաստել տալիս իր համար և շարունակ շրջում է բազմաթիվ ծառաներով, նամանավանդ սկսում է դիմավորել բոլոր այն մարդկանց, որոնք դատով թագավորի մոտ են գալիս, նրանց սիրով հարցնում է, թե որտեղից և ինչի համար են եկել, և նրանց պատասխանը ստանալուց հետո սիրով ավելացնում է. «Դու իրավացի ես, սակայն թագավորի կողմից դատդ լսող չկա, որպեսզի արդարությամբ վճիռ արձակի»:

Այսպիսի խոսքերով ձգտում է գրավելու նրանց սրտերը, հետո ավելացնում. «Եթե ինձ դատավոր կարգեին, ես բոլորի դատաստանը արդարությամբ կանեի», միևնույն ժամանակ նրանց կարեկցանքով մոտենալով՝ հոր նման ողջագուրվում և գորովանքով համբուրում է: Այսպես չորս տարի կեղծավոր, քաղցր խոսքերով և ժպտադեմ՝ ժողովրդի սերը իր կողմը գրավելուց հետո Դավթին առաջարկում է՝ ասելով. «Թո՛ւյլ տուր ինձ Քեբրոն գնալ և զոհ մատուցել, քանի որ Գեսուրում լինելու ժամանակ ուխտել եմ, որ եթե Աստված ինձ Երուսաղեմ վերադարձնի, այնտեղ Տիրոջը երկրպագեմ և զոհ մատուցեմ»:

Դավիթը, նրա խոսքին հավատալով, թույլ է տալիս, ուստի նա այս հրահանգն ստանալուն պես, իր ծառաներից բացի, երկու հարյուր հոգի էլ է հրավիրում, որոնք առանց որևէ կասկածի, միամիտ սրտով գնում են նրա հետ: Ահա այսպիսի շքախմբով Աբիսողոմը, Քեբրոն գնալով, նախ զոհ է մատուցում Աստծուն:

Սակայն հրավիրվածների մեջ Աքիտոփել անունով մի մարդ է լինում, որը Թեկուա քաղաքից էր և ժամանակին Դավթի խորհրդակիցն էր և նրան հավատարիմ: Այս անձը շատ իմաստուն, գործունյա և բանիմաց մեկն էր, բայց այժմ Ուրիայի կնոջ՝ Բերսաբեի պատճառով թշնամացել էր Դավթին և հետամուտ էր վրեժ լուծելու նրանից, որովհետև Բերսաբեն նրա որդի Եղիաբի աղջիկն էր[172]:

Աբիսողոմն այս մարդուն իր մոտ է բերել տալիս, որպեսզի խորհրդակցեն: Նաև բոլոր իսրայելացիների մոտ մարդիկ ուղարկելով՝ պատվիրում է, որ երբ փողի ձայնը լսեն, «Աբիսողոմը թագավորեց» աղաղակելով՝ միմյանց լուր տան: Արդարև, այսպես մարդ ուղարկելով՝ փող է հնչեցնում, որով կարճ ժամանակահատվածում նրա թագավորելը հայտնի է դառնում, և ժողովրդի մի ահագին բազմություն է հավաքվում Քեբրոնում:

Այս պարագայում դու Դավթի առաքինությո՛ւնը տես, որովհետև երբ իմանում է Աբիսողոմի վարմունքի և իր հանդեպ ժողովրդի վերաբերմունքի մասին, իր ծառաներին իսկույն ասում է. «Աբիսողոմից փախչենք, գուցե հանկարծ հարձակվելով՝ չարիք հասցնի և քաղաքին հարվածի»[173]:

Դավիթն իր այս խոհեմ և հեռատես քայլով, իրեն Աստծու կամքին հանձնելուց բացի, Երուսաղեմն ու նրա բնակիչներին է փրկում: Քանի որ եթե Երուսաղեմում մնար, Աբիսողոմի մոտենալու ժամանակ հարկադրաբար պիտի պատերազմեին,

---

[172] Քետացի Ուրիա.... Հեղեղատից արաբոթացի Գադաբիելից սերված նաև ուրիշներ (*Բ Թագ. 23:38,39*):

[173] Դավիթն ասաց Երուսաղեմում իր հետ եղող ծառաներին. «Ելե՛ք փախչենք, որովհետև մեզ փրկություն չկա Աբեսողոմի ձեռքից.... որպեսզի չարիք չբերի մեր գլխին, քաղաքները սրի չքաշի» (*Բ Թագ. 15:14*):

և ժողովուրդը միմյանց կոտորեր. մինչև անգամ տունը պահպանելու համար զորք թողնելու փոխարեն իր հարճերից տասը կանանց է թողնում, իսկ ընտանիքն իր հետ վերցնելով՝ փախչում է:

Այն ժամանակ Գեթ քաղաքից Եթթի անունով մի մարդ, որ այն օրերին վեց հարյուր մարդկանցով, որպես Դավթի հյուր, Երուսաղեմում էր բնակվում, Դավթի՝ Երուսաղեմից փախչելու ժամանակ, իր մարդկանց վերցնելով, ցանկանում է նրա հետ գնալ, և թեև Դավիթը ասում է. «Դու ինչո՞ւ ես մեզ հետ գալիս, ես իմ ուր գնալը չգիտեմ, վերադարձի՛ր և թագավորի հետ քաղաքում բնակվի՛ր, դու հյուր ես, իմ պատճառով մի՛ անհանգստացիր», սակայն նա, երդմանը հավատարիմ, պատասխանում է. «Ե՛վ մահվան, և՛ կյանքի ժամանակ որտեղ տերս է, ծառադ էլ այնտեղ պիտի լինի», և բնավ չի ցանկանում բաժանվել:

Նամանավանդ Երուսաղեմի բնակիչները, բարձրաձայն արտասվելուց և ողբալուց բացի, Սադովկ քահանան և Աբիաթարն ու բոլոր ղևտացիները, տապանակը վերցնելով, ցանկանում են դուրս գալ Երուսաղեմից, որպեսզի Դավթի հետ գնան: Սակայն Դավիթը հայտնում է, որ ինքը դատաստանը Աստծու կամքին է թողնում, ինչպես Նա տնօրինի, պատրաստ է ամենայն խոնարհությամբ և հլությամբ համակերպվել և խոսքը Սադովկ քահանային ուղղելով՝ ասում է. «Հե՛տ դարձրու տապանակը, եթե Աստված ինձ ողորմի, կարող է ինձ վերադարձնել և վերստին ցույց տալ այն»[174]:

Միևնույն ժամանակ Դավիթը Սադովկ քահանային պատվիրում է, որ քաղաքում մնալով՝ իրեն հայտնի տեղի ունենալիք

---

[174] Արքան ասաց Սադոկին. «Աստծու տապանակը հե՛տ տար.... Եթե Աստծու առաջ շնորհ գտնեմ, նա ինձ հետ կդարձնի և ինձ տեսնել կտա այն» (*Բ Թագ. 15:25*):

դեպքերը: Ապա նա, Երուսաղեմի մոտ գտնող ձորն անցնելով, սկսում է Ձիթենյաց լեռը բարձրանալ, սակայն ոչ թե արքայական փառքով, այլ հետիոտն և արտասվելով, գլուխը քողով ծածկած, ոտաբուբիկ և խոր հառաչանքներով և ողբալով:

Ժողովուրդը, նրան այդպիսի ողոմելի և արհամարհելի վիճակում տեսնելով, շատ շատերը, նույնպես իրենց գլուխները ծածկած, աղիողորմ արտասուքներով և հետիոտն լեռն են բարձրանում[175]: Ահա հենց այդ ժամանակ Դավթին լուր են տալիս, որ վերոհիշյալ Աքիտոփելը միավորվել է Աբիսողոմի հետ, որի պատճառով Դավիթը ավելի է տխրում, քանի որ պարզ էր, որ հիշյալ անձը, խորագետ լինելով, Աբիսողոմին պետք է սովորեցներ նենգամիտ հնարագիտության բոլոր ճանապարհները, և դրա համար էլ Աստծուն աղաչում էր, որ ցրի Աքիտոփելի չար խորհուրդները[176]:

Դրանից հետո լեռան գագաթը բարձրանալով՝ (եբրայերեն Հռովս է կոչվում, որը նշանակում է «լեռան գագաթ»), շրջվում է դեպի Երուսաղեմ և այնտեղ Աստծուն երկրպագելով՝ ինքն իրեն ամբողջովին Նրա գթության ու ողորմությանն է հանձնում[177]: Դա այն վայրն է, որտեղից մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը փառքով երկինք է համբարձվում:

Դավթի փախուստի ժամանակ Քուսին բացակայում էր Երուսաղեմից. նրա շատ հավատարիմ ծառաներից էր: Երբ

---

175 Դավիթը բարձրանում էր Ձիթենյաց զառիվերով, բարձրանում էր ու լալիս: Նա ծածկել էր գլուխը, բոբիկ էր գնում, և ամբողջ ժողովուրդը նրա հետ էր՝ գլուխները շորով ծածկած: Բոլորը լաց լինելով բարձրանում էին (*Բ Թագ. 15:30*):

176 Դավիթն ասաց. «Տե՛ր Աստված իմ, խափանի՛ր Աքիտոփելի խորհուրդը» (*Բ Թագ. 15:31*):

177 Դավիթը հասավ Հռոս, ուր երկրպագեց Աստծուն (*Բ Թագ. 15:32*):

վերադառնալով տեղեկանում է եղելությանը, հագուստը պատռելով և գլխին մոխիր ցանելով՝ գնում է Դավթի հետևից, որ չբաժանվի նրանից, սակայն Դավիթը նրան, որպես լրտես, ուղարկում է Երուսաղեմ՝ խորհուրդ տալով, որ Աբիսողոմին ասի. «Ահա եղբայրներդ և հայրդ գնացին, ես ինչպես հորդ էի ծառայում, նույնպես քեզ կծառայեմ»:

Այսպիսով, Քուսին Աբիսողոմին պետք է ցույց տար, որ ամեն ձևով հավատարիմ է Աբիսողոմին և մնար նրա մոտ, որպեսզի հնարավորություն ունենար խափանելու Աքիտոփելի խորհուրդները: Մանավանդ հիշյալը Աբիսողոմի բոլոր քայլերի մասին պիտի տեղեկացներ Սադովկ քահանային, որպեսզի նա էլ Դավթին հայտներ: Արդարև, երբ Քուսին, Դավթից բաժանվելով, Երուսաղեմ է գալիս, Աբիսողոմը նույնպես բազմաքանակ զորքով և մեծ փառքով մտնում է Երուսաղեմ:

Հովնաթանի որդին՝ Մեմփիբոսթեն էլ, որը Դավթի հովանավորյալն էր և Երուսաղեմում էր բնակվում, թեև ցանկանում է նրա հետ խույս տալ, սակայն կաղ լինելու պատճառով իր ծառա Սիբային հրամայում է ավանակ պատրաստել, որպեսզի Դավթի հետևից գնա: Հիշյալ Սիբան հրամանը կատարելու փոխարեն Դավթին հաճոյանալու համար ինքն է նստում ավանակին և երկու ավանակի վրա ուտելիք և գինի բարձելով, որպես թե իր կողմից, տանում է Դավթին:

Դավիթը Ձիթենիների լեռան վրա հանգստանալու ժամանակ հարց է ուղղում նրան, որին Սիբան շտապով պատասխանում է, որ ավանակները իր տիրոջ համար է բերել, որ հեծնի, իսկ ուտելիքը՝ նրա ծառաների: Եվ երբ Մեմփիբոսթեի մասին է հարցնում, անզգամ ծառան պատասխանում է. «Երուսաղեմում է և հույս ունի, որ թերևս մի օր իր հոր թագավորությունը իրեն կվերադաձնեն՝ որպես իր իրավունք»:

Այս խոսքը, անշուշտ, սուտ էր և կատարյալ զրպարտություն, որ չարախոս ծառան իր տիրոջ դեմ է հորինում, ինչպես հայտնի է[178]: Քանի որ Մեմփիբոսթեն բոլոր առումներով Դավթից գոհ էր և ցանկանում էր նրա հետ Երուսաղեմից դուրս գալ, բայց դավաճան և մատնիչ Սիբայի խարդախության պատճառով իր մտադրությունն ու ցանկությունը չի կարողանում իրականացնել: Սակայն ժամանակի հանգամանքներին նայելով՝ Սիբայի զրպարտությունը խելամիտ և ճշմարտանման է թվում, ուստի Դավիթն առանց քննելու նրա ստախոսությանը հավատում է և հրամայում, որ Մեմփիբոսթեի ողջ ունեցվածքը Սիբայինը լինի, որը նա շնորհակալությամբ ընդունում է:

Երբ դրանից հետո Դավիթը գալիս է լեռան ստորոտում գտնվող Բավուրիմ կոչվող վայրը, Սավուղի ազգականներից Սիմեի անունով մի մարդ, Դավթի և նրա մարդկանց վրա քար նետելուց բացի, Դավթին անիծելով, ասում է. «Ելի՛ր, գնա՛ արյունարբու և չար մարդ, Աստված Սավուղի ընտանիքի արյունը քեզ վրա բերեց և քո թագավորությունդ Աբիսողոմին տալով՝ արածդ չարությունը քեզ ցույց տվեց»:

Հովաբի եղբայր Աբեսսան, սույն անտեղի խոսքը լսելով, թեև անմիջապես ցանկանում է սպանել նրան՝ ասելով. «Ո՞վ է այդ սատկած շունը, որ հանդգնում է անիծել թագավորին», սակայն Դավիթը, նրա անհանդուրժելի խոսքերն իր մեղքերի համար որպես ապաշխարանք ընդունելով, խոնարհությամբ համբերում է: Ուստի նրան սպանելու հավանություն չտալով՝ ասում է. «Եթե իմ որդին ցանկանում է սպանել ինձ, ապա որքան առավել Սիմեն, թողե՛ք, թող անիծի, քանի որ Աստված

[178] Մեմփիբոսթեն նրան ասաց. «Տե՛ր իմ արքա, ծառաս ինձ խաբեց, քանզի քո ծառան ասաց նրան, թե «Համետի՛ր էշը, որ հեծնեմ ու գնամ արքայի մոտ», քանի որ քո ծառան կաղ է (*Բ Թագ.19:27*):

նրան խոսք է տվել, գուցե Տերը, կրածս չարչարանքները տեսնելով, ողորմի ինձ»[179]:

Երբ Սիմեն տեսնում է, որ իրեն ոչ մեկը չի պատասխանում, չկարողանալով հաղթել իր բարկությունը՝ Է՛լ ավելի է մոտենում Դավթին և այս անգամ ոչ միայն քար է նետում, այլ նաև սկսում է փոշի և հող ցանել նրա վրա, սակայն Դավիթը, դարձյալ համբերելով, բնավ ոչ մի բառ չի արտասանում նրա դեմ, և այնտեղից գնալով Հորդանան գետի մոտ գտնվող անապատը՝ այնտեղ է իջևանում, որպեսզի տեղեկություններ ստանա Երուսաղեմից:

Հարց ԼԴ: **Աբիսողոմի՝ Երուսաղեմ գալու ժամանակ բնակիչները նրա դե՞մ են դուրս գալիս:**

Պատասխան: Երբեք: Որովհետև Դավիթը ժողովրդին չվնասելու համար հանձն է առնում փախչել, ժողովուրդն էլ ձայն չի հանում, մանավանդ որ Աբիսողոմը ժողովրդի թշնամին չէր, այլ միայն իր հոր: Ահա այն ժամանակ վերոհիշյալ Քուսին, որին Դավիթը որպես լրտես էր ուղարկել Երուսաղեմ, Աբիսողոմին ներկայանալով՝ ողջունում է՝ «կեցցե՛ թագավորը» ասելով:

Աբիսողոմը հեգնորեն հարցնում է. «Սա՞ է քո հավատարմությունը, ինչո՞ւ բարեկամիդ հետ չգնացիր», որին ի պատասխան՝ Քուսին ասում է. «Աստված և ամբողջ իսրայելացիներն ում ընտրեն, ես նրա հետ կլինեմ, ինչպես որ հորդ ծառայեցի, քեզ կծառայեմ»: Թեև Աբիսողոմը կասկածում էր նրան, սակայն խոսքերին վստահելով՝ մոտն է պահում:

Այո՛, Աբիսողոմը, հետևելով իր չար մտադրությանը, իբր թե թագավոր է դառնում, և բոլոր իսրայելացիներին գրգռելով՝

---

[179] Արքան ասաց.... Թողե՛ք նա այդպես անիծի, քանզի Տերն է ասել նրան, որ անիծի Դավթին: Ո՞վ կարող է նրան ասել, թե՝ «Ինչո՞ւ ես այդպես վարվում» (*Բ Թագ. 16:10*):

իրեն է հնազանդեցնում, դրանով էլ կարողանում է գրավել Դավթի մայրաքաղաքը, սակայն քանի դեռ Դավիթը ողջ էր, իր թագավորությունը հաստատուն չէր, որի պատճառով էլ նրա միտքը զանազան կասկածներից ծփում և տագնապում է, ուստի Աքիտոփելին հանձնարարում է, որ խորհրդակցեն և ըստ այնմ միջոցառումներ նախաձեռնեն:

Աքիտոփելը խորհուրդ է տալիս, որ նախ Դավթի թողած հարճերի հետ կենակցի, որպեսզի ժողովուրդը, տեսնելով Դավթին տրված նախատինքը և համոզվելով, որ այլևս Աբիսողոմի հաշտությունը Դավթի հետ անհնար է, և վերստին միավորվելու հույս չկա, ամբողջությամբ հնազանդվի նրան: Արդ, քանի որ Աբիսողոմը իր սրտից ամբողջությամբ հանել էր Աստծու երկյուղն ու մարդկանց հանդեպ ամոթը, Աքիտոփելի սույն պիղծ, խռովահույզ, նենգամիտ և անամոթ խորհուրդն իրագործելու համար Դավթի տան տանիքին վրան կանգնեցնելով՝ ժողովրդի առջև հիշյալ հարճերի հետ շնանում է:

Թեև այն օրերին Աքիտոփելի հնարքները և խորհուրդները և՛ Դավթին, և՛ Աբիսողոմին ասես մարգարեական պատգամներ լինեին[180], սակայն այս անգամ Դավթին թշնամի լինելով, սատանայի նման խորհելով՝ մի այնպիսի ապօրինի և անարժան խորհուրդ է տալիս, որ Աբիսողոմի հպարտությանը և ապստամբությանը մի զզվելի խարան էլ է ավելացնում՝ Աբիսողոմի ավելի վատթար վիճակի մեջ ընկնելու բացարձակ պատճառ լինելով, մանավանդ բոլոր իսրայելացիներին մեծ գայթակղություն է պատճառում, քանի որ մի այսպիսի անամոթ, մարդկությանը հակառակ արարքից բոլոր լսողները զզվանք են զգում:

---

[180] Աքիտոփելի խորհուրդը, որ նա տալիս էր այդ օրերին, այնպիսին էր, կարծես մարդ Աստծուց էր խորհուրդ հարցնում (*Բ Թագ. 16:23*):

Սրանից բացի՝ Աքիտոփելը Աբիսողոմին խորհուրդ է տալիս, որ իրեն հրամայի՝ հենց այդ գիշեր տասներկու հազար ընտիր զորքով հանկարծ հարձակվի Դավթի վրա, որն այժմ անչափ հոգնած և հուսահատ վիճակում է: Ինքն էլ կարող է զորքը ցրել և միայն Դավթին սպանելով՝ վերադառնալ. ինչպես հարսն է իր ամուսնու տուն գնում, այդպես էլ նա խոստանում է Դավթի ամբողջ զորքը բերել և հավատարմությամբ Աբիսողոմին ծառայեցնել:

Արդարև, այս կերպ կարող էր Դավթին ձեռք բերել և սպանել, սակայն քանի որ Աստված նրան պիտի պահպաներ, ուստի Աբիսողոմը ասում է. «Քուսիին կանչե՛ք, նրան էլ լսենք»: Երբ Քուսին տեղեկանում է մտադրությանը, պատասխանում է. «Դավիթը և նրա մարտիկները շատ քաջ, աներկյուղ և պատերազմող մարդիկ են, ուստի տեղին չէ, քիչ մարդկանցով հարձակվելով, կոտորվել և օտարներին մեր մասին վատ խոսելու առիթ տալ, ուրեմն հարկ է, որ ամբողջ Իսրայելը հավաքենք՝ ծովի ավազի չափ զորքով. դու նույնպես նրանց գլուխ անցած՝ կգնանք, Դավիթն ուր էլ լինի, կհասնենք նրան, և որ քաղաքն էլ մտնի, կքանդենք ու կկործանենք այն՝ քարը քարին չթողնելով, և բոլորին էլ առանց բացառության սրի կքաշենք»:

Այսպես Քուսին ապագայում մղվելիք պատերազմին հաղթական տեսք է տալիս, ամբողջ ժողովուրդն ու Աբիսողոմն իսկույն ասում են, որ Քուսիի առաջարկն ավելի լավն է, քան Աքիտոփելի կարգադրությունը: Արդարև, Աստված, ընդունելով Դավթի աղոթքը, Քուսիի միջոցով ցրում է Աքիտոփելի մտադրությունները: Քուսին, իմանալով նրա հնարամիտ չարության մասին և մտածելով, որ միգուցե Աբիսողոմի միտքը փոխելով, դեռևս Դավթին չտեղեկացրած՝ հարձակվեն նրա վրա, այս մտադրությամբ եղելությունը տեղեկացնում է Սադովկ

և Աբիաթար քահանաներին, որպեսզի Դավիթն իր տեղից առանց ժամանակ կորցնելու Հորդանանի մյուս կողմը գնա:

Լուր տանելու համար արդեն պատրաստ սպասում էին Աբիաթար քահանայ որդին՝ Հովնաթանը, և Սադովկ քահանայի որդին՝ Աքիմասը, որոնք Երուսաղեմի մերձակայքում՝ Ռովգելի աղբյուր կոչվող վայրում էին գտնվում: Քանի որ Աբիսողոմը պահակներ էր նշանակել, որպեսզի Դավթի կողմը մարդ չանցնի, այս է պատճառը, որ Սադովկը և Աբիաթարը մի ծպտյալ աղախնի միջոցով են լուրը հայտնում որդիներին: Իսկ Հովնաթանն ու Աքիմասը, մեծ դժվարություններով և վտանգների ենթարկվելով, հազիվ կարողանում են լուրը Դավթին հասցնել:

Սակայն մի պատանի, նրանց տեսնելով, իսկույն Աբիսողոմին լուր է տալիս: Նա էլ նրանց հետևից մարդիկ է ուղարկում, որ բռնեն, բայց նրանք, պատանու՝ իրենց տեսնելու մասին կասկածելով, Ձիթենյաց լեռան մոտ՝ Բավուրիմ կոչվող վայրում, Դավթի բարեկամ մարդու տուն են մտնում, որտեղ մի անջուր հորի մեջ իջնելով՝ տանտիրուհին ծածկում է հորի բերանը և վրան միրգ չորացնելով զբաղվում: Այսպիսով, հաջողվում է փարատել Աբիսողոմի մարդկանց կասկածները, որոնք երբ գալիս և հարցնում են, պատասխանում է, որ ջրի մյուս կողմն են անցել, թեև այս խոսքին հավատալով՝ գնում և փնտրում են, սակայն չգտնելով՝ ձեռնունայն վերադառնում:

Ապա Հովնաթանը և Աքիմասը, հորից դուրս գալով, շտապում են՝ եղելությունը Դավթին հայտնելու, որն իր մարդկանցով, մինչ առավոտ անցնելով Հորդանանի մյուս կողմը, հասնում է Մանայիմ, որը թարգմանվում է *բանակ*[181]: Սա այն վայրն է, որտեղ, ինչպես երրորդ դարի քսանհինգերորդ

---

[181] Հակոբը տեսնելով նրանց՝ ասաց. «Սա Աստծու բանակն է». և այդ վայրի անունը դրեց Բանակատեղի (*Ծնող. 32:2*):

գլխում է հիշատակվում, Հակոբ նահապետը, հրեշտակների բանակներ տեսնելով, այդպես է կոչում այս վայրը: Այստեղ Դավթի մի քանի բարեկամները՝ Վեսբին, Մաքիրը և Բերզելին, Դավթի փախուստի մասին իմանալով և իրենց բարեկամական զգացմունքներով շարժվելով, Դավթին և նրա մարդկանց առատ ուտելիք են բերում, նաև քնելու համար կարպետներ և խոհանոցային պարագաներ, որոնց կարիքը շատ էր զգացվում:

Այժմ հարկ է մտաբերել Աքիտոփելի թշվառ դրությունը. քանի որ ինչքան էլ ուրախանում է՝ Աբիսողոմին գրգռելով Դավթին թշվառ վիճակի մեջ գցելու համար, նույնքան էլ տխրում է, որ հենց նույն օրը նրան սպանելու դիտավորությունը անհաջողության է մատնվում: Քանի որ հասկանում է, որ ի վերջո, Աբիսողոմը, կորստյան մատնվելով, Դավիթը վերստին Երուսաղեմում իր գահին է բազմելու, ուստի այս է պատճառը, որ սարսափելի երկյուղից հուսահատության մատնված՝ գնում է տուն և ընտանիքին կտակ գրելուց հետո կախվելով չարաչար վերջ տալիս իր կյանքին:

Ընթերցո՛ղ, խրա՛տ ընդունիր Աքիտոփելի տխուր դեպքից, գիտելիքովդ մի՛ հպարտանա, սրտումդ ոխ մի՛ պահիր, մանավանդ Աստծու երկյուղը մտքիցդ երբեք մի՛ հանիր, որ չսխալվես: Ճիշտ է, վերոհիշյալ անձը աշխարհիկ գործերում շատ խոհուն և խորագետ էր, և հնարագիտության մեջ նրան նմանը չկար, սակայն աստվածային կամքով չշարժվելով և հպարտությամբ ցանկանալով վրեժխնդիր լինել՝այնքան է ընկնում, որ բնությանը հակառակ, ինքն իրեն կորստյան մատնելով՝ ամբողջ աշխարհի առջև խայտառակ և նշավակ է լինում:

Ոխակալությունը բարկություն է ծնում, բարկությունն էլ կուրացնում է մարդու միտքը. ոխակալ մարդը, անկարող զանազանելու իր օգուտն ու վնասը, անպատճառ սխալվում է:

Այսպիսի մեկը, ինչքան էլ գիտուն և իշխանության տեր լինի, դարձյալ հիմար, անճար և ապաշնորհ է համարվում: Արդարև, բարկությունը զսպել չկարողացող անձանց հատուկ է՝ սրտում քեն և ոխ պահելով հակառակորդից վրեժ առնելը, և վրեժի ծարավ մարդը միմիայն իր անկարող վիճակն է ցույց տալիս, սակայն ճշմարիտ իմաստունը, աշխարհի ընթացքին նայելով, գիտի, որ մարդու ամեն կամեցած չի կատարվում, և մարդու կամքին հակառակ վարվողներ էլ կարող են լինել: Այս է պատճառ, որ եթե տխրություն էլ է ունենում, չի բարկանում, և սիրտը հանդարտվում է (ըստ առածի՝ իմաստունն անիրավությունից բարձր է): Նա, միշտ Աստծու կամքին համակերպվելով, ոչ միայն անախորժ ստիպողականությունների չի ենթարկվում, այլև հաղթում է անգամ իրեն չարիք պատճառողներին, քանի որ եթե վշտակիր անձը չի բարկանում, նրան վիշտ պատճառողն անպատճառ զղջում է:

Եթե ցանկանում ես քաջ և իմաստուն լինել, քեզ չարիք անողին բարի՛ք արա. քանի որ չկա ավելի մեծագույն քաջություն և ազնվագույն հաղթանակ, քան մեր հակառակորդին բարությամբ և վեհանձնությամբ հաղթելը[182]: Այո՛, հանցագործին պատժելը արդարություն է, սակայն սույն պաշտոնը դատավորինը և մանավանդ Աստծունը լինելով՝ հակառակորդից կամ թշնամուց վրեժխնդիր լինող անձն անպատճառ հանցավոր է լինում:

Հարց ԼԵ: **Աբիսողոմը պատերազմո՞ւմ է Դավթի դեմ:**

Պատասխան: Այո՛. որովհետև վերոհիշյալ Քուսիի խորհրդին համապատասխան՝ բոլոր իսրայելացիներին հրավիրելով՝

---

[182] Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին: Եթե քաղցած է քո թշնամին, հա՛ց տուր նրան, և եթե՝ ծարավ, ջո՛ւր տուր նրան. այս անելով՝ կրակի կայծեր կկուտակես նրա գլխին (*Հռոմ. 12:21*):

բազում զորք գումարելուց հետո անցնում է Հորդանանը, որպեսզի Դավթին բռնելով սպանի: Եվ որովհետև Դավթի մոտ նույնպես զորք էր հավաքվել, հազարապետեր և հարյուրապետեր նշանակելով՝ ցանկանում է ինքն անձամբ առաջնորդել զորքը, սակայն Հովաբը և մյուս հարյուրապետերը չեն համաձայնում՝ ասելով. «Եթե մենք փախչելու կամ կոտորվելու լինենք, մեզ ոչինչ համարելով՝ Ձեզ կհետապնդեն, ուստի լավ է, որ քաղաքում մնաք, և Ձեր ապահովությունը տասը հազար զորքից ավելի մեծ երաշխիք է մեզ համար»:

Այս առումով Դավիթը նույնպես համոզմունք ունենալով, թեև անձամբ զորքի հետ չի գնում, սակայն մտածելով, որ միգուցե պատերազմում սպանեն Աբիսողոմին, քաղաքի դարպասների մոտ կանգնած, ոչ միայն Հովաբին, այլև բոլոր հազարապետերին բարձրաձայն պատվիրում է, որ խնայեն Աբիսողոմին, և ամբողջ զորքը լսում է այդ կարգադրությունը[183]:

Դու այստեղ հայրական սիրո մեծությո՛ւնը տես. որդին զորքերի բազմությամբ հոր դեմ է դուրս գալիս, որ սպանի նրան, սակայն հայրը հակառակն է պատվիրում, որ որդու կյանքը խնայեն, չսպանեն: Երբ կողմերը ընդհարվելով՝ պատերազմը սաստկանում է, Աբիսողոմի զորքը հաղթվում է, և նրանցից քսան հազար մարդ է կոտորվում, մանավանդ պատերազմի վայրը անտառախիտ և մացառոտ լինելով, ամեն մեկն իր փրկության համար մտահոգվելով՝ անտառում տարբեր կողմ է գնում, և փախչելու ճանապարհ չգտնելով՝ փշալից մացառներում մահացածների թիվը սրից ընկածներից շատ է լինում, և այսպիսով, պարտված կողմը նվաճվում է:

---

[183] Արքան պատվեր տվեց Հովաբին.... ասելով. «Խնայեցե՛ք իմ պատանյակ Աբեսաղոմին» (*Բ Թագ. 18:5*):

Ուշադրությո՛ւն դարձրու Աբիսողոմի թշվառ վիճակին. քանի որ հիշյալը, այս տագնապալից վիճակը տեսնելով, երբ մոտն այլևս զորք չի մնում, հորը սպանելու մտադրությամբ պատերազմի դուրս գալը մոռանալով՝ իր անձի փրկությունն է փնտրում և չի գտնում: Քանի որ անտառի դժվարանցանելի և սեպաձև տեղանքում հայտնվելով և Դավթի զորքով էլ շրջապատած լինելով, սույն դժվարին կացությունից ազատվելու համար հեծած ջորին ուժգին ասպանդակելով՝ արշավելու ժամանակ գլխի մազերը իրար հյուսված կաղնու ճյուղերին են փաթաթվում, և որովհետև մազերը խիտ և շատ երկար էին, չի կարողանում դրանք ճյուղերից ազատել, և ջորին էլ առանց կանգ առնելու սաստիկ ընթանալու պատճառով նրա տակից դուրս է պրծնում, և այսպես Աբիսողոմը, երկնքի ու երկրի միջև անօգնական, իր մազերից կախված է մնում[184]:

Այո՛, հիշյալը պատժվում է ըստ արժանվույն: Քանի որ հոր դեմ թշնամացած անձն իրավացիորեն ոչ միայն երկնքից, այլև երկրից է մերժվում: Նույն պահին զորքից մեկը, սա տեսնելով, շտապում է տեղեկացնելու Հովաբին, որն էլ հարցնում է, թե ինչու չի հարվածել նրան. ինքն այժմ նրան մի սուր և հիսուն դահեկան կպարգևեր: Սրան ի պատասխան՝ լրաբերն ասում է. «Թեկուզ հազար դահեկան էլ տաս, մենք ձեռք չենք բարձրացնի թագավորի որդու վրա, և թագավորը, դա լսելով, մեզ պատժելու ժամանակ դու միայն հանդիսատես կլինես առանձ ինձ օգնելու, քանի որ «Աբիսողոմին խնայե՛ք» կարգադրությունը բոլորս ենք լսել»:

---

[184] Աբեսաղոմը Դավթի ծառաների դեմ դուրս եկավ: Աբեսաղոմն իր ջորին էր հեծել, և ջորին մի մեծ կաղնու թավ ոստերի տակը մտավ: Նրա գլուխը կաղնու ճյուղերի մեջ խճճվեց, ու ինքը կախ ընկավ երկնքի ու երկրի միջև, իսկ ջորին նրա տակից անցավ գնաց (*Բ Թագ. 18:9*):

Սույն պատասխանից Հովաբի սիրտը նեղվում է, և զորքին հրամայում է իրեն ցույց տալ այդ վայրը, որպեսզի, ինչպես ինքն է ասում, ինքը նրանց աչքի առջև անձամբ սպանի: Եվ երբ հասնում են Աբիսողոմի կախված վայրը, Հովաբը երեք նետ է արձակում նրա սրտին հենց կախված վայրում, սակայն քանի որ նա դեռևս շնչում էր, ուստի Հովաբի զորքից տասը հոգի նրա հրամանով հարվածում և սպանում են Աբիսողոմին: Այն ժամանակ Հովաբը դադար առնելու փող է հնչեցնում և իր մոտ հավաքում բոլորին, որպեսզի այլևս իրար չկոտորեն: Իսկ Աբիսողոմի մարմինը մի խոր ձորի մեջ է գցել տալիս, զորքերն էլ ցրվում, վերադառնում են իրենց տեղերը:

Ուսանի՛ր հոր դեմ ապստամբողի սույն եղերական վախճանից: Եթե Աբիսողոմը խոնարհությամբ հնազանդվեր հորը, անտարակուսելի է, որ ամբողջ կյանքում խաղաղ և հանգիստ օրեր պիտի անցկացներ: Սակայն հպարտանալով անհնազանդության հանցանք գործելու համար՝ ոչ միայն կյանքն է կորցնում, այլև մարմինը գերեզմանի չի արժանանում: Թեև Աբիսողոմը երեք որդի ուներ, ինչպես որ գրված է Բ Թագ. 14:27-ում[185], սակայն նրանք արդեն իսկ մահացած լինելով՝ իր անունը չմոռացվելու համար Աբիսողոմը կենդանության օրոք Երուսաղեմի մերձակայքում՝ Կեդրոնի ձորում, աշտարականման մի քար է կանգնեցնում, որը մինչ այսօր մնում է՝ ի հիշատակ նրա:

Հարց ԼԶ: **Ինչպե՞ս է վարվում Դավիթը՝ լսելով Աբիսողոմի մահվան բոթը:**

Պատասխան: Սրտի սաստիկ կսկիծով և ողբաձայն հառաչանքներով լալիս և արտասվում է: Պատերազմ չգնալով, մինչ քաղաքում նստած՝ մտատանջվում է, թե միգուցե Աբիսողոմին

---

[185] Աբեսաղոմը երեք տղա և մեկ աղջիկ ունեցավ (*Բ Թագ. 14:27*):

մի փորձանք պատահի, և ահա բանակից երկու մարդ իրար հետևից շտապով գալիս և ուրախությամբ ավետում են հաղթանակը, սակայն արքան հարցնում է, թե արդյոք որդին՝ Աբիսողոմը, ողջ է[186]: Երբ լսում է մահվան մասին, այնքան է տրտմում, որ սկսում է երգ հորինել նրա համար՝ կրկնելով. «Որդյա՛կ իմ Աբիսողոմ, Աբիսողո՛մ, որդյա՛կ իմ, երանի թե ես քո փոխարեն մահացած լինեի», և այս խոսքերը լալահառաչ և հաճախակի կրկնելուց հետո մտնում է իր սենյակը և ոչ մեկին չի ցանկանում տեսնել[187]:

Այո՛, բոլոր առումներով Աբիսողոմի մահը ճիշտ էր, քանի որ որպես ապստամբ եթե ողջ մնար, անտարակույս, վտանգավոր պիտի լիներ և՛ իր հայրենակիցների, և՛ հոր համար, սակայն քանի որ ապաշխարության ժամանակ չունենալով՝ թշվառ և առանց զղջալու է մեռնում, սրա պատճառով էլ Դավիթը սրտի մորմոքով ողբում է նրան: Իսկ զորքը, որը չէր կարող ըմբռնել արքայի միտքը, լսելով Դավթի մեծ սուգի և լացի մասին, պատերազմում հաղթված և փախուստ տվածի նման քաղաք մտնել չի համարձակվում:

Թեև այս եղելության հանցանքը Հովաբինն էր, որը, չանսալով Դավթի կարգադրությանը, սպանում է Աբիսողոմին, սակայն զորքի վիատությունը և տխրությունը տեսնելով՝ Դավթին ասում է. «Զորքին ամոթով թողեցիր, նրանք քո փրկության համար իրենց վտանգեցին, դու, թշնամուդ սիրելով, հավատարիմ հպատակներիդ և ծառաներիդ ես մերժում.

---

[186] Արքան ասաց. «Ո՞ղջ է իմ երիտասարդ Աբեսաղոմը» (*Բ Թագ. 18:29*):

[187] Արքան խռովվեց, բարձրացավ դարպասի վերնատունը և ողբալով այս էր ասում. «Որդի՛ս, Աբեսաղո՛մ, Աբեսաղո՛մ, որդյա՛կ իմ, երանի՛ ես մեռնեի քո փոխարեն, ես մեռնեի քո փոխարեն: Աբեսաղո՛մ, որդյա՛կ իմ, որդյա՛կ իմ Աբեսաղոմ» (*Բ Թագ. 18:33*):

եթե այժմ Աբիսողոմը ողջ լիներ, ուրեմն մենք բոլորս մահացած պիտի լինեինք, վե՛ր կաց, զվարթությամբ խոսի՛ր զորքիդ հետ, որը երդվել է, որ այսօր դուրս չգաս, վաղը քո կողքին ոչ մեկը չի մնալու, իմացի՛ր՝ այն մինչ այժմ կրածդ նեղություններից ավելի վատ հետևանք կունենա քեզ համար»:

Թեև Հովաբի խոսքերը շատ ծանր էին, սակայն ժամանակի հանգամանքներին նայելով՝ Դավիթն առանց որևէ պատասխան տալու վեր է կենում և նստում քաղաքի դռան մոտ, ու երբ զորքը, նրա ներկայության մասին լսելով, քաղաք է մտնում, Դավիթը զվարթ դեմքով, բոլորին մեծարանքի և խնդակցության նշաններ ցույց տալով, զորքին շնորհակալ է լինում, որից նրանք անչափ ուրախանում են:

Դու հայրական սքանչելի սիրո սաստկությո՛ւնը տես. անհնազանդ որդին, հոր կյանքին սպառնալով, նրա դեմ բանակ է հանում, սակայն նրա մահվան մասին լսելով՝ հոր սիրտը չափազանց շատ է ցավում և հառանչանքներով արտասվում: Այո՛, Աբիսողոմը, հորը հակառակ լինելով, արժանի էր մահվան, ինչպես օրենքների գրքում է գրված, որ հորն ու մորն անհնազանդ որդուն քարկոծությամբ սպանեն, որպեսզի մյուսները վախենան[188], սակայն Դավիթը նրա մահը չէր ցանկանում, որ թերևս մի օր զղջալով՝ ուղիղ ճանապարհ բռնի:

Իրենց զավակներին անիծողները թող Դավթից օրինակ վերցնեն, եթե զավակդ չար ճանապարհով է ընթանում, բնավ

---

[188] «Եթե մեկն ունի անառակ ու անզգամ որդի, որն իր հորն ու մորը չի լսում, որին խրատում են, բայց նա չի անսում նրանց, ապա նրա հայրն ու մայրը նրան թող տանեն իրենց քաղաքի ծերերի մոտ, իրենց հրապարակի դարպասի առջև, և ասեն իրենց քաղաքի մարդկանց. «Մեր այս որդին անառակ է ու անզգամ. նա մեր ասածը չի լսում, որկրամոլ է ու հարբեցող»: Այն ժամանակ այդ քաղաքի մարդիկ քարկոծելով թող սպանեն նրան: Դրանով դուք չարը վերացրած կլինեք ձեր միջից (*Բ Օր. 21:18-21*):

մի՛ անիծիր, ընդհակառակը, աղոթի՛ր Աստծուն, որ նրան ուղղորդի, քանի որ անիծելով նա առավել ևս կվատթարանա, և նորից քո սիրտը ցավելու է նրա համար: Նաև իրենց հայրերին անհնազանդները, Աբիսողոմի պատմությունը կարդալով, թող խրատվեն, քանի որ հիշյալն իր անհնազանդությամբ անօրինակ սոսկալի մահվամբ է մահանում՝ աշխարհում շատ վատ անուն թողնելով, որից էլ ամեն մարդ զզվանքով պետք է զգուշանա:

Հարց ԼԷ: **Աբիսողոմի մահվանից հետո Դավիթը, անմիջապես Երուսաղեմ գնալով, բազմո՞ւմ է իր գահին:**

Պատասխան: Ո՛չ. որովհետև ժողովուրդը, մոռանալով նրա բարերարությունները, Աբիսողոմին թագավոր է հռչակում: Ուստի որպեսզի հասկանա նրանց մտադրությունը, չի շտապում և միաժամանակ Հորդանան գետի այն կողմում է մնում: Արդարև, ինչքան էլ ժողովուրդը թերանում է Դավթին հպատակվելիս և հնազանդվելիս, բայց Աբիսողոմի մահվանից հետո դարձյալ Դավթին հնազանդվելու պատրաստակամություն է հայտնում: Մանավանդ Դավիթը թշնամու ձեռքից ազատել էր իսրայելացիներին, և նրա լավությունը ժողովուրդը դեռ հիշում էր, ուստի նրա փախստական կարգավիճակը մտաբերելով՝ խղճահարվում են և միմյանց ասում. «Մենք Աբիսողոմին թագավոր դարձրինք, սակայն նա պատերազմում մահացավ, արդ, մինչև ե՞րբ թագավորին իր տեղը չպիտի վերադարձնենք»:

Իսրայելացիների տասնմեկ ցեղերը, այս մտադրությամբ միավորվելով, Դավթին տեղեկացնում են, որ իրենք պատրաստ են հնազադվելու նրան, սակայն սրա մասին Հուդայի ցեղը լռում է: Այո՛, Դավիթը Հուդայի ցեղից լինելու պատճառով

նրանք է՛լ ավելի էին հակված Դավթին, սակայն քանի որ նրանք նույնպես հպատակվել էին Աբիսողոմին, դրա համար էլ, իրենց հանցանքի ծանրությունը զգալով, խիստ ամաչում էին:

Դավիթը տեղյակ էր նրանց այս վիճակին, ուստի Սադովկ և Աբիաթար քահանաների միջոցով և սիրալիր խրախուսում է նրանց, որ մյուս ցեղերից հետ չմնան, նաև Աբիսողոմի զորավար Ամեսայիին, որն իր քեռու որդին էր, հրավիրում է առանց երկյուղի իր մոտ գալ և նրան պատիվ, պաշտոն է խոստանում: Ահա Դավթի այսպիսի հաշտարար վարմունքից անչափ ազդված՝ Հուդայի ցեղը ոչ միայն նրա մոտ պատգամաբեր է ուղարկում՝ հրավիրելով Երուսաղեմ, այլև իրենք խիստ շատ բազմությամբ բոլոր ցեղերից առաջ Գաղգաղա են գնում և սպասում Հորդանան գետի ափին:

Երբ Դավիթը գետափ է հասնում, նրան անիծող Սեմեին (տե՛ս ԼԳ հարցը), զղջալով իր արածի համար և ի պատիվ Դավթի, հազար հոգով ընդառաջ է գնում արքային: Այնտեղ է գալիս նաև Մեմփիբոսթեին ծառայության նշանակված Սիբան՝ տասնհինգ որդիներով և ծառաներով, որոնք Հուդայի ցեղի մարդկանց հետ մեծ ու փառավոր պատվով Դավթին Հորդանանի այս կողմն են տեղափոխում: Այնտեղ Սեմեին, արքայի ոտքերն ընկնելով, իր հանցանքի համար ներողություն է խնդրում, և թեև Հովաբի եղբայրը՝ Աբեսսան, նախանձախնդրորեն ցանկանում է սպանել Սեմեին արքային անիծելու հանդգնության պատճառով, սակայն Դավիթը թույլ չի տալիս՝ ասելով. «Պետք չէ, որ այսօր որևէ մեկը մահանա, քանի որ այսօր ես իսրայելացիները թագավոր եղա», և երդվում է, որ Սեմեին չպիտի սպանի:

Ինչքան Դավիթը մնում է Հորդանանի հակառակ ափին, նրա հավատարիմ բարեկամ Բերզելին (տե՛ս ԼԴ հարցը), որը շատ հարուստ մարդ էր, ոչ միայն նրա բոլոր կարիքներն է

հոգում, այլև նրան պատվով ճանապարհ դնելու համար անձամբ է գալիս այնտեղ: Դավիթը ցանկանում էր նրան իր հետ Երուսաղեմ տանել և իր մոտ պատվով պահել, սակայն նա, ութսուն տարեկան ծերունի լինելով, թագավորին խնդրում է, որ բարեհաճի իր փոխարեն որդուն՝ Քամաամին, այդ արտոնություններով պատվելու: Դավիթը սիրահոժար ընդունում է նրա խնդրանքը, ուստի ողջագուրվելով Բերզելիի հետ՝ նրան վերադարձնում է իր տեղը:

Սակայն Դավիթն առանց սպասելու մյուս ցեղերի հավաքվելուն, միայն Հուդայի ցեղի մարդկանց հետ գետն անցնելով, գալիս իջևանում է Գաղգաղայում, ուստի երբ իսրայելացիների մյուս ցեղերը, խումբ -խումբ գալով, տեսնում են, որ նա անցել է գետը, խիստ բարկանում են, թե ինչու է միայն Հուդայի ցեղին մի այդպիսի նախապատվություն տալիս: Թեպետ այս առումով իսրայելացիներն էին մեղավոր, քանի որ դանդաղել էին ժամանակին գալ, սակայն նրանք, խռովարարներ լինելով, Դավթին մի անպատշաճ եղանակով ասում են. «Ինչո՞ւ Հուդայի ցեղի մարդիկ թագավորին գողացան և Հորդանանի այս կողմն անցկացրին»:

Այս խոսքով թագավորին էլ են հանցավոր համարում, և սակայն նրանք անիրավ էին, ուստի թեև Դավիթը բնավ նրանց չի պատասխանում, սակայն Հուդայի ցեղի մարդիկ ասում են. «Թագավորը մեր ցեղից է, դուք ինչո՞ւ եք նեղանում, թագավորից ի՞նչ կերանք, կամ մի՞թե ընծաներ տվեց մեզ և կամ արտոնությունն՞ը շնորհեց»: Սրան իսրայելացիների ցեղերը պատասխանում են. «Մենք ձեզնից տասնապատիկ ավելի ենք, ինչո՞ւ եք թշնամաբար վարվում մեզ հետ. մեզ է վայել թագավորին բերելը» և այլն: Այսպիսով, երկու կողմերից էլ վեճը սաստկանում էր, այնպես որ երբ Հուդայի ցեղն իր իրավունքն էր պնդում, իսրայելացիների ցեղից Սաբեե անունով մի

չար մարդ, իսկույն փող հնչեցնելով, աղաղակում է. «Դավթից մենք բաժին չունենք, ո՛վ իսրայելացիներ, թող ամեն մարդ իր տեղը վերադառնա». սա ասելով՝ հեռանում է, և բոլոր իսրայելացիները անմտաբար հետևում են նրան:

Այսպես Դավիթը խորապես վշտանում է՝տեսնելով, որ միայն Հուդայի ցեղի հետ է մնում, քանի որ մինչ բոլոր իսրայելացիների հնազանդությանը վստահ՝ առոք-փառոք Երուսաղեմ էր մտնում, ահա ապստամբությունը նորոգվելով՝ պարտավորվում է միայն Հուդայի ցեղի մարդկանց հետ մտնելու Երուսաղեմ: Սրանից բացի, երբ տուն մտնելով՝ տեսնում է այն հարճերին (որոնց թողել էր տան պահպանության համար, և որոնց պատիվը Աբիսողոմը բռնաբարել էր. տե՛ս ԼԴ հարցը), շատ մեծ տխրությամբ է համակվում և այնուհետև նրանց այլևս չմերձենալով՝ առանձին տանն է հոգում է նրանց սնունդը, և նրանք ամենայն հնազանդությամբ մինչև մահ որբևայրի են մնում:

Վերոհիշյալ Մամփիբոսթեն, որը Դավթի փախչելու օրվանից ո՛չ եղունգներն էր կտրել, ո՛չ մորուքը սանրել և ո՛չ էլ զգեստները փոխել, միշտ սուգով և տրտմությամբ էր անցկացնում իր օրերը: Դավթի գալու ժամանակ այդ նույն սգավոր կերպարանքով էլ ընդառաջ է գալիս Դավթին: Դավիթը հարցնում է, թե ինչու իր հետ չէր գնացել: Սա մեկ առ մեկ պատմում է, թե իր խարդախ ծառա Սիբան ինչեր է արել իր մեկնումը անհնարին դարձնելու համար (տե՛ս ԼԳ հարցը), և Դավթից շնորհակալ լինելով՝ հայտարարում է. «Իմ հոր գերդաստանի մարդիկ մահապարտ են»:

Թեպետ Դավիթը եղելությունը ճիշտ է ընկալում, սակայն այդ օրը խնդիրը պարզելու պատեհ ժամանակ չունենալով՝ Սիբային պարգևած նրա կալվածքների միայն կեսն է վերադարձնում, որին Մեմփիբոսթեն պատասխանում է. «Բավական է՝ իմ տերն առողջ վերադարձավ, թող բոլոր կալվածքները նրան լինեն»: Եվ այնուհետև Դավիթը պատվով իր մոտ է

պահում նախկինի նման՝ ի պատիվ իր մտերիմ Հովնաթանի սիրո, որի հիշատակը իր սրտում միշտ քաղցրորեն էր պահում:

Հարց ԼԸ: **Ի՞նչ է լինում վերոհիշյալ Սաբեեի վախճանը, որը Դավթին չի հնազանդվում և իսրայելացիներին էլ ապստամբության է դրդում:**

Պատասխան: Շատ թշվառ եղանակով սպանվում է: Որովհետև Դավիթը զորավար Ամեսայիին հրամայում է, որ երեք օրվա ընթացքում Հուդայի ցեղից զորք հավաքելով՝ Սաբեեի դեմ շարժվի, քանի որ միգուցե նա էլ, զորք հավաքելով, ամրանա մի որևէ քաղաքում և իրենց միշտ նեղություն պատճառի: Սակայն Ամեսային երեք օրից չի վերադառնում, ուստի թագավորը Հովաբի եղբայր Աբեսային է հանձնարարում, որ թագավորական զորքով գլուխ բերի այդ գործը, և նրանց հետ Հովաբն էլ է գնում:

Հետո Ամեսային, զորք հավաքելով, նույնպես գնում է, բայց ճանապարհին Հովաբին է հանդիպում, որը, իբր թե սիրով ողջագուրվելու համար նրա մորուքից բռնելով, «ո՞ղջ ես, եղբա՛յր» ասելով, հանդերձի տակ թաքցրած սրով հարվածելով, սպանում է Ամեսայիին. նա երբեք որևէ թշնամություն չէր սպասում Հովաբից. այս երկու զորապետերն ազգականներ էին:

Սույն սպանության շարժառիթն այլ բան չէր, եթե ոչ Հովաբի նախանձը: Քանի որ թեպետ նախկինում Ամեսայիի դեմ որևէ թշնամություն չուներ, բայց որովհետև Դավիթը վերջինիս խոստացել էր բարձր աստիճան շնորհել, Հովաբը, կասկածելով, թե միգուցե նրան զորքերի ընդհանուր հրամանատար նշանակի, նախանձից այդ անգթությունն է գործում:

Այդ միջոցին Հովաբի մարդկանցից մեկը, խոսքն ուղղելով զորքին, այսպես է խոսում. «Ով որ Հովաբին և Դավթին սիրում է, թող Հովաբի և Ամեսայիի հետևից գնա», և քանի որ Ամեսայիի մարմինը դեռևս ճանապարհին արյունաշաղախ

ընկած էր, դանդաղորեն հավաքվող զորքը, դա տեսնելով, վարանում է առաջ անցնել, ուստի մեռածին ճանապարհից դուրս՝ մի արտում, թաղելուց հետո զորքը սկսում է հետևել Հովաբին:

Արդ, քանի որ Սաբեեն Աբել անունով մի քաղաքում էր ապաստանել, Հովաբը պաշարում է այն և նրա շուրջը հողաթումբ բարձրացնելով՝ պարսպանման պատնեշ է կանգնեցնում, սակայն երբ սկսում է այդ քաղաքի պարիսպը քանդել ու ավերել, այդ քաղաքից մի իմաստուն կին, պարսպին կանգնած, այսպես է խոսում պաշարող զորքի հետ. «Ինչո՞ւ է Հովաբը քանդում իսրայելացիների քաղաքներից մեկը, որը հայտնի է իր իմաստուն բնակիչներով, և որը, իսրայելացիների միջև հաշտարար դեր կատարելով, շատերի համար հաստատություն և ամրության նեցուկ է»: Հովաբը, որ ներկա էր այնտեղ, այսպես է պատասխանում. «Քա՛վ լիցի, որ մենք քաղաքը կործանելու դիտավորություն ունենանք, միայն Դավթի դեմ ապստամբող Սաբեեին մեզ հանձնեք, և մենք այստեղից կհեռանանք»: Այս խոսքերին կինը պատասխանում է. «Ուրեմն այժմ ժողովրդի հաճությամբ նրա գլուխը այս պարսպից ձեր առջև կնետվի»:

Արդարև, կինը, պարսպից իջնելով, կարողանում է քաղաքի բնակիչներին համոզել, որոնք, Սաբեեի գլուխը կտրելով, քաղաքի պարսպից վայր են նետում: Այն ժամանակ Հովաբը փող է հնչեցնում՝ որպես պատերազմական գործողության դադարի նշան, որից հետո զորքը ցրվում է, և ամեն մարդ իր տուն է վերադառնում: Հովաբը, խռովության պատճառ Սաբեեի գլուխը վերցնելով, բերում է Դավթի մոտ, որը խռովությունը դադարելու համար Աստծուց գոհանում է:

Հարց ԼԹ: **Ուրիշ ի՞նչ դեպքեր են լինում Դավթի օրոք:**

Պատասխան: Երեք տարվա ընթացքում հետզհետե սով է լինում: Սակայն որովհետև սովը միայն իսրայելացիների

քաղաքներում էր, Դավիթն Աստծուց հարցնում է սովի պատճառը և պատասխան ստանում, որ դա Սավուղի՝ գաբավոնցիներին կոտորելու պատճառով է[189]: Որովհետև Հեսուն երդվել էր, որ նրանք սրով չեն կոտորվի (տե՛ս Գ հարցը), մինչդեռ Սավուղը, առանց իրավունքի նրանց կոտորելով, պարտապան է մնում նրանց արյանը: Սակայն զարմանալին այն է, որ Սավուղի մեղքով լինելիք պատիժը Դավթի ժամանակ է տեղի ունենում, քանի որ ժամանակն անցնելով՝ իրավունքն ուժը չի կորցնում:

Այստեղ ուշադի՛ր եղիր Աստծու արդարությանը. ճշմարիտ է՝ գաբավոնացիները հեթանոսներ էին, սակայն, այսուհանդերձ, նրանց պատճառով իսրայելացիներն են պատժվում: Քանի որ բոլորի արարիչը Աստված է, ուստի ով էլ հանցավոր լինի՝ հեթանոց թե աստվածապաշտ, իրավունքն արդարությամբ պիտի իրականացվի, որպեսզի լսողները վախենան և արդարության հակառակ չգործեն: Ահա այս դեպքում երեք տարի շարունակ իսրայելացիները սովի պատճառով խիստ նեղություններ կրելուց հետո Դավիթը, նկատելով, որ արդարությունը պահանջում է որևէ ձևով գաբավոնացիների սիրտը շահել, նրանց հարցնում է, թե ինչ փոխհատուցում են ցանկանում: Նրանք պատասխանում են. «Մենք Սավուղից ոսկի և արծաթ չենք պահանջում և չենք էլ ցանկանում իսրայելացիներից որևէ մեկին սպանել, այլ ով մեզ կոտորել է, նրա մահն ենք ցանկանում, որպեսզի նրա ցեղից ոչ մեկը կենդանի չմնա»: Սույն պատասխանից ակնհայտ է դառնում, որ նրանք Սավուղի ամբողջ ցեղի բնաջնջումն են ցանկանում, սակայն, ի վերջո, բավարարվում են յոթ անձանց մահվամբ՝ պայմանով,

---

[189] Երեք տարի իրար հետևից սով եղավ Դավթի օրոք, և Դավիթը դիմեց Տիրոջը: Տերն ասաց. «Սավուղի և նրա տան արյունահեղության պատճառով է այս պատուհասը, որովհետև նա կոտորել է գաբավոնացիներին» (*Բ Թագ. 21:1*):

որ նրանք կենդանի հանձնվեն իրենց: Ուստի Դավիթը խոստանում է բավարարել նրանց ցանկությունը: Սակայն հանուն Հովնաթանի եղբայրական սիրո՝ Դավիթը նրա Մեմփիբոսթե որդուն չի հանձնում, այլ Սավուղի՝ Ռեսփա անունով հարճից ծնված երկու որդիներին և հինգ թոռներին, որ ծնվել էին նրա աղջկանից. սրանք, ըստ Աստծու հրամանի, հանձնվում են գաբավոնացիներին, որպեսզի արդարությունն իրագործվելով՝ տիրող պատուհասը դադարի: Սույն յոթ արքայազուններին տանում են Սավուղի մայրաքաղաք Գաբաա և այնտեղ՝ լեռան վրա, արեգակի առջև փայտերից կախելով, սպանում են:

Քանի որ կալի ժամանակ էր, նրանց մարմինները, մի քանի օր կախված մնալով, հոտում են: Թեև Ռեսփան, որը շատ հավատարիմ և բարեսեր էր, գիշեր ու ցերեկ առանց այնտեղից հեռանալու հսկում էր, որ թռչուններն ու կենդանիները չկարողանան մոտենալ, մինչև որ անձրևը սկսում է կաթել նրանց վրա: Դավիթը, լսելով Ռեսփայի սույն մարդասիրության մասին, ինքն անձամբ գալիս է Հաբիս քաղաք, որտեղ գտնվում էին Սավուղի և Հովնաթանի ոսկորները (տե՛ս ԻԵ հարցը): Ոսկորներն այնտեղից վերցնելով՝ Գաբաա է բերում և այնտեղ կախվածների մարմիներն էլ մեծ պատիվներով և մեծարանքներով մեկտեղ թաղում է Սավուղի հոր գերեզմանի մոտ:

Արդարև, երբ Աստվածային հրամանով արդարությունն ի կատար է ածվում, անձրև գալով[190]՝ սովը վերանում է երկրից: Սակայն այս անգամ էլ, իսրայելացիների թշնամիները, կարծելով, որ երեք տարվա անընդմեջ սովի պատճառով իսրայելացիները տկարացել են, հարմար առիթ են համարում՝ նրանց դեմ պատերազմելու: Ուստի Դավիթն անձամբ նրանց դեմ է

---

190 Եվ Աստուած դրանից հետո լսեց երկրից եկող ձայնը (*Բ Թագ. 21:14*):

դուրս գալիս, և պատերազմի ժամանակ թշնամու միջից մի քաջարի մարդ Դավթի վրա հարձակվելով՝ քիչ է մնում՝ սպանի նրան, և Հովաբի եղբայր Աբեսային, իսկույն հասնելով, սպանում է վտանգավոր թշնամուն: Իրոք, այս անգամ Դավիթը մեծ և ահավոր վտանգից է ազատվում, և թեպետ Աստված այս անգամ էլ է նրան փրկում, բայց նրա զորապետերը երդմամբ ասում են նրան. «Այլևս երբեք մի՛ գա պատերազմի դաշտ, որպեսզի Իսրայելի ճրագը չմարի»: Այս է պատճառը, որ Դավիթն այլևս պատերազմի դաշտ դուրս չի գնում, այլ ըստ անհրաժեշտության, իր զորքն է ուղարկում:

Այնուհետև թշնամիները ևս երեք անգամ հարձակվում են իսրայելացիների վրա. վերջին պատերազմում թշնամու զորքում մի մարդ է լինում, որ քաջությունից բացի՝ ձեռքերին և ոտքերին վեցական մատներ է ունենում, բայց Աստծու շնորհիվ Դավթի զորքը սրանց ևս վերջնականապես հաղթում է, այնպես որ թշնամիները, խիստ տկարանալով, այնուհետև ամենայն հնազանդությամբ հպատակվում են Դավթին: Սույն մեծ հաղթանակը աստվածային հովանավորության բացահայտ արդյունք լինելով՝ Դավիթը գոհանում է Աստծուց, ներբողում է Նրա փառավոր անունը և սաղմոսանման երգ հորինում՝ խոստովանելով Աստծու անսահման բարիքն ու ողորմությունը Իսրայելի և իր հանդեպ:

Հարց Խ: **Դավթի օրոք թշնամիները այլ հարձակումներ նախաձեռնո՞ւմ են:**

Պատասխան: Այլևս ոչ: Իրոք, իսրայելացիների թշնամիները այնպես են պատժվում և թուլանում, որ այլևս հարձակվելու զորություն և հնարավորություն չունենալով՝ վտանգավոր չեն լինում Աստծու ժողովրդին, ուստի Դավիթն ու ժողովուրդը այլևս խաղաղ և հանգիստ ապրելու հնարավորություն են

ունենում: Սակայն Աստված ժողովրդի ապօրինի վարքի պատճառով ցանկանում է նրանց մի այլ եղանակով պատժել. Դավիթը որոշում է իմանալ պատերազմելու կարող, քսան տարեկանից մեծ իսրայելացիների թիվը[191]:

Սույն ցանկությունն իրականացնելու համար Դավիթը Հովաբին հրամայում է, որ գնա և ամբողջ ժողովրդի վիճակագրություն անցկացնի: Սակայն Հովաբը, այս միտքը չհավանելով, ասում է. «Թող Աստված հարյուրապատիկ ավելացնի Իր ժողովուրդը, ինչո՞ւ ես մի այսպիսի հրաման տալիս ծառայիդ», բայց Դավիթը չի համաձայնում և Հովաբին և մյուս հազարապետերին ստիպում է, որ գնան և այդ գործը ամենայն ճշտությամբ գլուխ բերեն: Ուստի սույն պաշտոնատարները ժողովրդի քանակը գրի առնելու համար քաղաքից քաղաք են շրջում և ինն ամիս ու քսան օր հետո վերադառնում Երուսաղեմ:

Երբ Հովաբը ժողովրդի թիվը ներկայացնում է արքային, պարզվում է, որ Իսրայելի ցեղերից գրառվածների թիվը հասնում է ութ հարյուր հազարի, իսկ Հուդայի ցեղից գրանցվել էր հինգ հարյուր հազար մարդ: Սա միայն քսան տարեկանից մեծ, պատերազմելու կարող արու մարդկանց թիվն էր: Սրանից բացի՝ Ղևիի և Բենիամինի ցեղերը գրառված չէին, որովհետև մի կողմից՝ Հովաբը ձանձրացել էր դրանից, մյուս կողմից՝ մանավանդ Աստված բարկանալով սկսել էր կոտորել ժողովրդին, և Հովաբը վախից վերադառնում է Երուսաղեմ[192] առանց վիճակագրության գործն ամբողջովին գլուխ բերելու:

---

[191] Տիրոջ բարկությունը դարձյալ բորբոքվեց Իսրայելի վրա: Նա Դավթին գրգռեց նրանց դեմ՝ ասելով. «Գնա՛, հաշվառում կատարի՛ր Իսրայելում և Հուդայի երկրում» (*Բ Թագ 24:1*):

[192] Հովաբը սկսեց հաշվառման ենթարկել ժողովրդին, սակայն չավարտեց (*Ա Մնաց. 27:24*):

Խորհի՛ր մարդկային վիճակի մասին. որովհետև մարդը երբեք հաստատամիտ չէ, այլ միշտ գաղափար և միտք է փոփոխում, նույն ձևով էլ Դավիթը. ինչքան էլ ժողովրդի թիվը իմանալու համար մեծ փափագ է հայտնում և ստիպելով պնդում, նույնքան և ավելի շատ զղջում է, երբ ցուցակն իրեն են ներկայացնում: Ուստի իսկույն գոչելով՝ մեղա ՝ աղաղակում է առ Աստված, որպեսզի իր այս մեծ մեղքին և հանցանքին ներում շնորհի[193]:

Սակայն մարդն իր հանցանքի համար պարտավոր է պատիժ կրել, ուստի Գադ մարգարեն, Դավթի մոտ գալով, երեք պատիժ է թվարկում՝ ասելով. «Երեք տարի սով լինի քո երկրում, կամ երեք թշնամիներ հարձակվեն քեզ վրա, և դու փախչես, կամ էլ երեք օր մահ լինի քո երկրում. այս երեք պատիժներից որն էլ ընտրես, ինձ տեղյա՛կ պահիր, որ Ուղարկողիս պատասխան տանեմ»: Թեև սա լսելով՝ Դավիթն ասում է. «Երեքից էլ վտանգ կա ինձ»[194], սակայն Աստծու անհուն ողորմությանն ապավինելով՝ նաև ավելացնում. «Աստծուն եմ ապավինում, որի գթությունն անչափ է, որպեսզի մարդկանց ձեռքը չընկնեմ»: Սա ասելով՝ ընտրում է երեքօրյա մահը[195]: Հունձքի ժամանակն էր, և այն առավոտ Իսրայելում յոթանասուն հազար մարդ է մահանում:

Դու Աստծու ողորմությունը տե՛ս. երբ կոտորող հրեշտակը, Երուսաղեմ գալով, այնտեղ գտնվողներին ևս սկսում է կոտորել,

---

[193] Դավթի սիրտը ցավեց մարդկանց հաշվառումից հետո: Դավիթն ասաց Տիրոջը. «Մեծ մեղք գործեցի արվածի համար: Արդ, ո՛վ Տեր, ների՛ր քո ծառայի մեղքը (*Բ Թագ. 24:10*):

[194] Դավիթն ասաց Գադին. «Բոլոր կողմերից ես խիստ ծանր կացության մեջ եմ» (*Բ Թագ. 24:14*):

[195] Քանի որ շատ ու շատ են Տիրոջ ողորմածությունները, ավելի լավ է՝ ընկնեմ Տիրոջ ձեռքը, քան մարդկանց ձեռքը: Եվ Դավիթն ընտրեց մահը (*Բ Թագ. 24:14*):

հրաման է ստանում, որ բավական է, ձեռքը հեռացնի[196]: Հրեշտակը կանգ է առնում Երուսաղեմում՝ Ուռնա անունով մի մարդու կալի մոտ (այս անձը հեբուսացի հեթանոս ազգից էր, սակայն ճշմարիտ Աստծուն ճանաչելով՝ մովսիսական կրոնն էր ընդունել, և Երուսաղեմում՝ Սիոն լեռան ստորոտին, կալվածք ստանալով՝ այնտեղ էր բնակվում և այդ պահին կալում գործ էր անում): Եվ քանի որ Դավիթը Սիոն լեռան վրա էր բնակվում, հիշյալ Ուռնայի արտին նայելով՝ տեսնում է սուրը ձեռքին ժողովրդին կոտորող հրեշտակին. անմիջապես Աստծու առջև խոնարհվելով՝ աղաղակում է. «Ես մեղա՛, ես՝ ժողովրդի հովիվս, մեղք գործեցի, դրանք՝ գառները, ի՞նչ են արել, թող ինձ և իմ տան վրա ծանրանա Քո ձեռքը»[197]: Այս սրտագին խոստովանության պահին Գադ մարգարեն, Աստծու հրամանով գալով, ասում է. «Վե՛ր կաց և Ուռնայի կալում Աստծու համար սեղա՛ն կառուցիր»:

Դավիթն ըստ հրամանի շտապում է իսկույն վերոհիշյալ վայրը և Ուռնային առաջարկում է վաճառել այն. և թեպետ Ուռնան, խոնարհությամբ երկրպագելով արքային, հանձն է առնում ձրիաբար այն նվիրելու, բայց Դավիթը չի համաձայնում և արծաթ դրամով միաժամանակ գնում է նաև արտն ու եզները. սեղան կանգնեցնելով՝ ջերմ աղոթքով զոհ է մատուցում Աստծուն[198]. որպես նրա աղոթքը լսելի լինելու ապացույց՝

---

[196] Եվ ասաց (Տերը) ժողովրդին ոչնչացնող հրեշտակին. «Բավական է, ձեռքդ հե՛տ քաշիր» (*Բ Թագ. 24:16*):

[197] Ասաց Տիրոջը. «Ահավասիկ ես. ես եմ մեղավոր, ես՝ հովիվս եմ հանցավոր, այս ոչխարներն ի՞նչ են արել: Թող քո ձեռքը բարձրանա իմ ու իմ հոր տան վրա» (*Բ Թագ. 24:17*):

[198] Դավիթը Տիրոջ համար զոհասեղան շինեց այնտեղ, ողջակեզներ և փրկության զոհեր մատուցեց, Տիրոջն աղոթեց, և Տերը լսեց ու պատասխան տվեց նրան՝ երկնքից ողջակեզի զոհասեղանին կրակ իջեցնելով և ողջակեզներն այրելով (*Ա Մնաց. 21:26*):

երկնքից կրակ իջնելով՝ այրում է ողջակեզը, որից հետո աստվածային հրամանով պատուհասն իսկույն դադարում է:

Թեպետ այն ժամանակ ողջակեզների սեղանը, որը Մովսեսը կանգնեցրել էր անապատում, Գաբավոնում՝ մի բարձր լեռան գագաթին էր գտնվում, սակայն Դավիթը, կոտորող հրեշտակին տեսնելով, որը ձեռքի մերկ սուրը պարզել էր Երուսաղեմի ուղղությամբ, վախենում է և առանց Գաբավոն գնալու հիշյալ կալատեղում շտապ զոհ մատուցում[199]: Նաև Աստծուց ներշնչված՝ ազդարարում է. «Այս է Աստծու տունը, և այս սեղանը իսրայելացիների համար ընծաներ կամ ողջակեզներ մատուցելու վայր է»[200]: Արդարև, երբ թագավորում է Սողոմոնը, Դավթի հրամանով նույն վայրում կառուցում է Աստծու տաճարը, որտեղ բոլոր իսրայելացիները սկսում են զոհ մատուցել Աստծուն:

Աստծու բարեգութ մարդասիրությունը հիացմունքի է արժանի: Քանի որ պատժի արժանի հանցագործներին արդարացիորեն պատժում է՝ ըստ Իր բարձրագույն և արդար կամքի, սակայն երբ Դավիթը հանցանքի համար դատապարտվում է, մարգարեի ձեռքով հարցնում կամ առաջարկում է՝ երեք պատիժներից որն ընտրի, դրանով էլ պատժվի, ասել է՝ հանցագործի կամքին է թողնում պատժի տեսակի ընտրությունը:

Սրանով նախ՝ Աստված Իր սիրելի ծառային հատուկ շնորհ և մարդասիրություն է ցուցաբերում, ապա՝ այս պարագայում որոշակիորեն երևում են Դավթի հավատքը, գթասրտությունը և իր ազգի փառքի համար ունեցած նախանձախնդրությունը:

Որովհետև սովը չի ընտրում, քանի որ սովի ժամանակ հարուստ և հնարավորություն ունեցող մարդիկ կարող են

---

199 Տիրոջ հրեշտակի սուրը սարսափեցնում էր նրան (Դավթին) (*Ա Մնաց. 21:30*):

200 Դավիթն ասաց. «Այս է Տեր Աստծու տունը, և այս է Իսրայելի ողջակեզների զոհասեղանը» (*Ա Մնաց. 22:1*):

որևէ եղանակով հոգալ իրենց ապրուստը, մինչդեռ աղքատ ժողովուրդը հետին աստիճանի տառապանքի և չքավորության է ենթարկվում: Նաև որպեսզի իր ազգին անպատվություն չլինի, չի համաձայնում, որ թշնամու առջևից փախչելու ամոթն ունենա, և չասեն՝ թշնամի հաղթեց իսրայելացիներին, որի համար էլ ընդունում է երեքօրյա մահը, որպեսզի հայտնի դառնա, որ միայն Աստծու գթությանն ու ողորմությանն է ապավինում, և արդարև, Աստված, նրա այս հավատքը տեսնելով, երեք օրը վերածում է երեք ժամի:

Սրա մասին թող լավ խորհեն և՛ ժողովուրդը, և՛ իշխանավորները, որովհետև երբ ժողովրդի չքավորության պատճառով իշխանները այլևայլ վարք են որդեգրում, և երբ այդ վարքի հետևանքով նրանց հպատակները դարձյալ վնասվում և տուժում են, թող չզանգատվեն, որ իշխանները լկում են իրենց, և նրանց պատճառով է իրենց տառապանքը, այլ ջանան ուղղելու իրենց վարքուբարքը, քանի որ թագավորների սիրտը Աստծու ձեռքին է, և Իր կամքի համաձայն է ուղղում նրանց գործերը. մանավանդ անարժան և կեղծավոր մարդկանց բազմիցս թույլատրում է, որ իշխանության հասնեն, որպեսզի նրանց ձեռքով խրատի և կրթի ժողովրդին[201]:

Նույն ձևով էլ իշխանավորները, ժողովրդի տառապանքը տեսնելով, չպիտի ասեն, թե իրենց հանցանքի համար են պատժվում, այլ մանավանդ պիտի խորհեն, որ պատահած աղետները միգուցե հենց իրենց՝ իշխանավորների թերությունների պատճառով են տեղի ունենում, որից էլ իրենք, անհապաղ ուղղվելով, պետք է աղոթեն առ Աստված ժողովրդից աղետը վերացնելու համար, ինչպես որ Դավիթը, ժողովրդի

---

[201] Ժողովրդի խստասրտության պատճառով ազգերի ու մարդկանց վրա կեղծավորին է թագավոր կարգելու (*Հոբ 34:30*):

պատուհասը տեսնելով, իսկույն առ Աստված գոչում է՝ մեղա՛, և մահը փարատվում է:

Հարց ԽԱ: **Դավիթը ո՞ղջ էր, երբ թագավորում էր Սողոմոնը:**

Պատասխան: Ողջ էր և նրա հաճությամբ էր, որ Սողոմոնը թագավորում էր: Որովհետև Դավիթն արդեն ծերացել էր, ուստի իր մահճում մարմինը տաքացնելու համար ինչքան էլ ծածկում էին, այնուամենայնիվ, անհնար էր լինում. ուստի նրա իշխանները առաջարկում են նրա հպատակներից մի կույս աղջիկ գտնել, որը նրան ծառայի և նրա անկողնում քնելով՝ տաքացնի նրան: Իսկույն ձեռնամուխ լինելով որոնումների՝ Սովնեմ քաղաքից շատ գեղեցիկ աղջիկ են գտնում և բերում Դավթի մոտ: Թեև արքան ուժից ընկած լինելու պատճառով չէր կարող նրա հետ անկողին կիսել, սակայն աղջիկը, մշտապես նրան ծառայելով, Դավթի կինն է համարվում:

Սակայն Դավթի երրորդ որդին՝ Ադոնիան, որը մյուս եղբայրներից ամենամեծն էր, հորն այդ վիճակում տեսնելով, սկսում է հետամուտ լինել թագավորական իշխանությունը ձեռք գցելուն, որպեսզի հոր մահվանից հետո թագավորի: Դավիթը, նրա արաքների մասին իմանալով, լռում է, որից էլ նա, առավել քաջալերվելով, ասելով, որ թագավորելու հերթն իրենն է, Հովաբ և Աբիաթար քահանաների հաճությունն է գրավում: Դրանից բացի՝ Երուսաղեմի մոտակայքում զոհ մատուցելու պատրվակով մի մեծածախս խնջույք է կազմակերպում և հրավիրում եղբայրներին, Հուդայի ցեղի մեծամեծներին և Դավթի պալատականներին, միայն չի համարձակվում հրավիրելու Դավթի այն քաջ հազարապետերին, որոնք չէին հակվել իր կողմը, ինչպես Սադովկ քահանան, Նաթան մարգարեն և մանավանդ Սողոմոնը:

Թեպետ նրանք, մեծ ուրախությամբ ուտել- խմելուց հետո «կեցցե՛ Ադոնիա արքան» ասելով, շատ են զվարճանում, բայց քանի որ Աստված նախապես Դավթին հայտնել էր, որ իրենից հետո Սողոմոնը պետք է թագավորի[202], և մանավանդ Դավիթն էլ իր հերթին, նրա ներկայությամբ Բերսաբեին երդվելով, խոստացել էր Սողոմոնին թագավոր դարձնել, ուստի այս է պատճառը, որ Նաթան մարգարեն Բերսաբեին առաջարկում է գնալ և Դավթին պատմել Ադոնիայի վարքի մասին և ավելացնում է, որ ինքն էլ անձամբ կգա և ասածները կհաստատի:

Տիկին Բերսաբեն իսկույն գնում և եղելությունը պատմում է Դավթին, Նաթանը նույնպես հասնելով, Ադոնիայի կարգադրությունները ամենայն մանրամասնությամբ տեղեկացնելով՝ Դավիթը երդմամբ հրամայում է Սադովկ քահանային, Նաթան մարգարեին և Բանեա հազարապետին, որ Սողոմոնին, իր ջորուն բազմեցնելով, տանեն և Երուսաղեմի մերձակայքում գտնվող Գեհոն կոչվող վայրում պաշտոնական արարողությամբ թագավոր հռչակեն: Երբ վերոհիշյալ անձինք, ըստ արքայի հրամանի վարվելով, հնչեցնում են փողը, ամբողջ ժողովուրդը սկսում է աղաղակել՝ «Կեցցե՛ Սողոմոն թագավորը», և թագավորական հանդիսությամբ առոք-փառոք գալով՝ Սողոմոնը բազմում է թագավորական գահին:

Սակայն Ադոնիան և նրա հետևորդները, ինչպես որ վերը պատմվել է, դեռևս նոր էին ավարտել իրենց ուրախ-զվարթ խնջույքը, հանկարծ փողի և ժողովրդի ձայնը լսելով, զանազան կարծիքներ են հայտնում. մանավանդ Հովաբը տարակուսանքով և կասկածանքով սկսում է խորհել, թե դա ինչ ձայն կարող է

---

[202] Ահա դու մի որդի կունենաս, որը հանգիստ մարդ կլինի: Ես նրան հանգստություն եմ տալու շրջակա բոլոր թշնամիներից, նրա անունը Սողոմոն կլինի, և ես խաղաղություն ու հանգստություն եմ տալու Իսրայելին նրա օրերում (*Ա Մնաց. 22:9*):

լինել, և ահա այդ պահին այնտեղ է հասնում Աբիաթար քահանայի որդին՝ Հովնաթանը, որը հերթականությամբ պատմում է, թե ինչպե՛ս է Դավիթը, Սողոմոնին թագավորեցնելով, նրա առջև մեծարանքով խոնարհվել, որ ողջ ժողովուրդը նրա համար աղոթք և բարեմաղթանքներ են ձոնել առ Աստված, և որ Սողոմոնը իշխանական փառքով բազմել է հոր աթոռին. այս լուրից բոլոր հավաքվածները զարհուրած ցրվում են:

Ադոնիան նույնպես երկյուղով գնում է և Աստծու անվամբ կառուցված սեղանի անկյունից բռնում, որպեսզի գոնե մահվանից ազատվի: Երբ Սողոմոնին տեղեկացնում են, որ Ադոնիան, Սուրբ սեղանին ապավինելով, խնդրում է, որ թագավորն այսօր երդվի, որ իրեն չի սպանելու, Սողոմոնը պատասխանում է, որ եթե հավատարմությամբ հանդարտ մնա, նրա մազին անգամ չեն դիպչի, իսկ եթե չարությամբ խռովության պատճառ լինի, այն ժամանակ պիտի մեռնի, և իսկույն մարդ ուղարկելով՝ սեղանից նրան իջեցնում են, և Ադոնիան գալով ամենայն հնազանդությամբ երկրպագում է թագավորին և տուն վերադառնալու հրաման ստանում:

Ընթերցո՛ղ, խրա՛տ ընդունիր աշխարհիս անցուդարձից: Ադոնիան իր մտքում խորհում և սրտում էլ թագավորելու անչափ մեծ փափագ է ունենում, ինչպես նաև նրա հետ միաբանողները, զանազան փառքերի և դիրքերի հասնելու պատիր հույսերով, միառժամանակ ուրախության և ցնծության են անձնատուր լինում, սակայն շատ չանցած՝ նրանց ուրախությունը տրտմության է փոխվում, քանի որ առանց աստվածային կամքի ոչ մեկը չի կարող հասնել իր ցանկացածին: Փառքը քո ստվերի նման է, որի հետևից ինչքան էլ վազես, այն փախչում է, և ինչքան էլ դու խուսափես այդ փառքի ստվերից, այնչափ առավել նա շտապով կհասնի քեզ և միշտ անբաժան կմնա քեզնից:

Թեպետ Դավիթը ցանկանում էր տաճար կառուցել (տե՛ս ԻԹ հարցը), սակայն ստիպված էր մշտապես պատերազմելու և անչափ արյուն հեղելու, և Աստված Նաթան մարգարեի միջոցով նրան հայտնում է, որ տաճարը ոչ թե նա, այլ նրա որդին պետք է կառուցի: Արդարև, այս խոսքը Սողոմոնին էր վերաբերում, քանի որ *Սողոմոն* բառը նշանակում է «խաղաղություն», և Աստված ցանկանում է, որ նրա օրոք իսրայելացիները թշնամու հարձակումներից ազատ և բոլոր առումներով հանգիստ ու խաղաղ լինեն, և Սողոմոնն էլ կարողանա կառուցել տաճարը, և նրա թագավորությունը հաստատուն լինի[203]:

Ճշմարիտ է, որ տաճարի կառուցումը Սողոմոնին է տրվում, սակայն կառուցելու համար անհրաժեշտ քարը, փայտը, երկաթը և մանավանդ ոսկին, արծաթն ու մյուս անհրաժեշտ նյութերն արդեն իսկ Դավիթն առատորեն պատրաստել էր և կանչելով Սողոմոնին ու Աստծու հրամանը հայտնելով՝ պատվիրում է նրան կառուցել տաճարը: Ժողովրդի մեծամեծներին էլ պատվիրում է, որ տապանակը բերվի ի պատիվ և հանուն Աստծու կառուցված տաճար և միշտ մնա այնտեղ:

Դավիթը Աստծուն հատկապես աղաչում է, որ Սողոմոնին շնորհ և իմաստություն տա, թախանձագին խնդրում է, որ միշտ նրա հետ լինի և զորացնի: Մանավանդ Սողոմոնին պատվիրում է պահել Աստծու պատվիրանները և Մովսեսի միջոցով Իսրայելին տրված օրենքները զգուշությամբ կատարի և ոչ մեկից չվախենա: Սրանից բացի, Մովսեսի պատվիրանի համաձայն, հայտնում է նաև տաճարին անհրաժեշտ պաշտոնյաների անունները, որ շինարարությունն ավարտելուց հետո ամեն մեկն իր պաշտոնը ստանձնի:

---

[203] Նա (Սողոմոնն) է իմ անվան համար տուն շինելու, և ես նրա աթոռը կանգուն պիտի պահեմ հավիտյան (*Բ Թագ. 7:13*):

Դավիթը նաև հետևյալ կարգադրություններն է անում. Իսրայելի տասներկու ցեղերի անուններով տասներկու գնդապետեր է նշանակում, որոնցից յուրաքանչյուրի իշխանության ներքո քսանչորս հազար մարդ էր գտնվում: Սրանց ուղարկում է տասներկու ցեղերի երկրները և հրահանգում, որ անհրաժեշտության դեպքում միշտ պատրաստ լինեն: Սրանցից ամեն մեկը պարտավոր էր ամիսը մեկ անգամ Երուսաղեմ գալու և ամսվա ավարտին վերադառնալու իր տեղը, որին հաջորդում էր մյուսը:

Դավիթը նաև այլ պաշտոնյաներ և գրագիրներ է հատկացնում արքունական կալվածքների և անասունների եկամուտների համար, որպեսզի թագավորության եկամուտները մատյաններում ցուցակագրվեն առանց թերության, ամբողջությամբ: Այնուհետև կանչում է բոլոր դատավորներին, գնդապետերին, հազարապետերին և այլ պաշտոնյաների և վերը հիշատակվածի համապատասխան Աստծու օրենքները հաղորդելուց հետո ավելացնում. «Աստված աշխարհի բոլոր ազգերից իսրայելացիներին է ընտրել, իսրայելացիներից՝ Հուդայի ցեղը, Հուդայի ցեղից՝ հորս տունը, հորս որդիներից՝ ինձ, իմ որդիներից՝ Սողոմոնին է ընտրել և հրամայել, որ նա կառուցի տաճարը, և նաև ասել. «Եթե իմ պատվիրանները պահի, նրա թագավորությունը հաստատուն և անխափան կպահեմ»»:

Դավիթը, սույն վերոհիշյալ կետերը հիշեցնելուց բացի, նրանց պատվիրում է, որ խիստ մեծ զգուշությամբ կատարեն Աստծու պատվիրանները, որպեսզի Աստծու խոստման համաձայն՝ հավիտյան, սերնդեսերունդ Երուսաղեմի և նրա երկրամասերի ժառանգորդը լինեն: Ապա Սողոմոնին նորից պատվիրում է, որ ուղիղ սրտով և կատարյալ մտքով ծառայի Աստծուն: Քանի որ Աստված բոլորի սրտերն է քննում և

տեղյակ է նրանց մտքերին: «Եթե դու փնտրես Աստծուն, անշուշտ, կգտնես, իսկ եթե թողնես, նա քեզ ևս կմերժի»:

Բարեպաշտ արքան չի մոռանում Սողոմոնին տալ տաճարի և նրա մեջ կառուցվելիք սենյակների և սեղանների, ինչպես նաև անհրաժեշտ պարագաների պատկերները, որ Աստծու ներշնչանքով նախապես գծագրել էր, որպեսզի ըստ դրանց լինեն: Նաև բացի այն նյութերից, որ տաճարը կառուցելու համար էին հավաքել, իր ունեցվածքից էլ անչափ շատ ոսկի և արծաթ է նվիրում այդ նպատակի համար: Արքայի օրինակին հետևում են ներկաները, որոնք սիրահոժար բազում նվերներ են անում և ուրախությամբ և ամբողջ հոգով և սրտով ցնծում՝ խնդրի կարևորությունն ըմբռնելով:

Դավիթը, բոլորից ավելի ուրախ, սրտի անչափ մեծ գոհունակությամբ շնորհակալ է լինում և գոհանում Աստծուց՝ խոստովանելով Նրա անհուն բարությունը, դրվատելով Նրա սուրբ և փառավոր անունը և Իսրայելի ժողովրդին մինչ այդ կատարած անսահման երախտիքներն ու բարությունները: Դարձյալ Աստծուն աղաչում է, որ Սողոմոնին շնորհ և զորություն պարգևի, որպեսզի տաճարը կառուցելու կարողություն ունենա: Ապա դառնում է ժողովրդին և հրավիրում՝ անկեղծ սրտով և ջերմեռանդ հավատով այս սուրբ նպատակի հաջողության համար աղոթելու Աստծուն, և նրանք էլ աղոթելով խոնարհությամբ երկրպագում են Աստծուն:

Այն ժամանակ Դավիթը, գոհ մատուցելով, կերակուր է պատրաստում ժողովրդի համար, և այսպես բոլորն ուտում ու խմում են և արքային ամբողջ սրտով ուրախակից լինում: Այդտեղ նորից Սողոմոնին, գլխին յուղ լցնելով, թագավոր են օծում, և իսրայելացիների բոլոր ազգերը հնազանդվում են նրան[204]:

---

[204] *Ա Մնաց. 22–29*:

Այնուհետև Դավիթը, մահվան ժամը մոտ լինելով, դարձյալ Սողոմոնին պատվիրում է, որ անչափ մեծ զգուշությամբ կատարի Աստծու հրամանները, որպեսզի Աստված Իր ողորմությունները չխնայի նրա համար: Որովհետև ինչպես Դավիթն էր հավատարմությամբ կատարում Աստծու հրամանները, այնպես էլ փափագում է, որ Սողոմոնը հնազանդվի Աստծուն, որպեսզի Իսրայելի թագավորական գահը նրա ցեղից չվերցվի:

Քանի որ Դավթի զորահրամանատար Հովաբը (տե՛ս ԻԷ հարցը) անողորմաբար սպանել էր Աբեններին և նույն անգթությունն ու անիրավությունը գործել Ամեսայիի հանդեպ (տե՛ս ԼԸ հարցը), Դավիթն էլ, ժամանակի հանգամանքներից դրդված, մարդասպանին անպատիժ էր թողել, նաև Աբիսողոմից փախչելու օրերին իրեն անիծող Սեմեեի դատաստանը մինչ այն պահը դեռ չէր տեսել, այս անգամ Սողոմոնին է հանձնարարում, որ նա, իր իմաստությանը համապատասխան, այդ անիրավներին պատժելու պատեհ առիթ գտնի: Թող չհամարվի, որ վրեժխնդրության հոգով է սույն պատվերը տալիս, այլ կամենալով արդարություն գործել, որպեսզի ամեն մի մարդ, խրատվելով նրանց պատժից, հեռու մնա չարիք գործադրելուց:

Հարկ է նկատել, որ Դավիթը ոչ միայն չարերին է պատժում, այլև հավատարիմ և բարի մարդկանց վարձատրելու համար պատվերներ է տալիս իր որդուն: Քանի որ (տե՛ս ԼԷ հարցը) Դավթի հավատարիմ բարեկամ Բերզելի որդին՝ Քամաամը, Երուսաղեմում էր, ուստի Սողոմոնին հանձնարարում է նրան պատվով պահել և իր սեղանակիցներից երբեք չառանձնացնել: Այսպիսով, Դավիթն իր բոլոր հանձնարարությունները և կտակներն ավանդելուց հետո, յոթանասուն տարեկան հասակում մահանալով, թաղվում է Երուսաղեմում՝ Սիոն լեռան վրա: Երեսուն տարեկան էր, որ թագավոր է դառնում, քառասուն տարի թագավորում, որից յոթ տարին Քեբրոնում՝ միայն

Հուդայի ցեղին, և մնացած երեսուներեք տարին՝ Երուսաղեմում՝ Իսրայելի բոլոր ցեղերին, որոնց լուսատու ճրագն է լինում: Հարկ է հիանալ սույն մեծ մարդու առաքինությամբ, որը, մինչ վերջին շունչը Աստծու սուրբ անվանը և փառքին նախանձախնդիր լինելով, Սողոմոնին կրկին ու կրկին պատվիրում է, որ միշտ հնազանդությամբ և հավատարմությամբ ծառայի Աստծուն և Նրա անբիծ օրենքներն ամբողջ սրտով անթերի կատարի:

Հարց ԽԲ: **Ինչպիսի՞ն էր Սողոմոնի վիճակը Դավթի մահվանից հետո:**

Պատասխան: Աստծու ողորմությամբ օրըստօրե ավելի ևս զորանալով՝ ամբողջովին փառավորվում է: Սակայն Ադոնիան, ցանկանալով կնության առնել սովնամցի Աբիսակին (նա Դավթին ծառայելու համար հատկացված կույսն էր և Դավթի մահվանից հետո որբևայրի էր մնացել), դիմում է Սողոմոնի մորը՝ Բերսաբեին՝ ասելով. «Քեզ հայտնի է, որ թագավորությունն իմն էր, և ամբողջ Իսրայելը ինձ էր թագավոր տեսնում, սակայն Աստված թագավորությունը եղբորս տվեց, այժմ աղաչում եմ, որ եղբորս հետ խոսես, գոնե Աբիսակին ինձ կնության տա»: Բերսաբեն, ընդառաջելով նրա խնդրանքին, գնում է թագավորի մոտ. Սողոմոնը, որպես հարգանքի նշան ոտքի կանգնելով, ընդառաջ է ելնում նրան և նստեցնում իր գահի աջ կողմում:

Բերսաբեն ասում է. «Փոքր խնդրանք ունեմ քեզ և հույս ունեմ, որ կկատարես», Սողոմոնը պատասխանում է. «Խոսի՛ր, մա՛յր իմ», և երբ տեղեկանում է խնդրանքին, մորը հարցնում է. «Ինչո՞ւ ես Աբիսակին խնդրում, թագավորությո՛ւնս խնդրիր, որովհետև Ադոնիան իմ մեծ եղբայրն է, Աբիաթար քահանան և Հովաբ զորապետն արդեն նրա

բարեկամներն են», և երդվում է, որ Ադոնիան այդ խնդրանքով իրեն հակառակ է խոսել և գործել, ուստի մարդ ուղարկելով՝ իսկույն սպանել է տալիս նրան:

Մտապահի՛ր Աստծու դատաստանը. որովհետև (տե՛ս Լ հարցը) Նաթան մարգարեն արդեն իսկ վճռել էր, որ Դավթի տնից սուրը չպիտի պակասի, և ահա նրա երեք որդիները՝ նախ՝ Ամոնը, ապա՝ Աբիսողոմը, և այժմ՝ Ադոնիան, սպանվում են, և սա նրա համար, որպեսզի արդարություն իրագործվելով՝ ամեն մարդ երկյուղ ունենա:

Այս պարագայում մի՛ կարծիր, որ Սողոմոնը, իր մոր խնդրանքը չկատարելուց բացի, անիրավությամբ և անգթությամբ սպանում է իր եղբորը: Ադոնիան չար դիտավորությամբ էր մտադրվել՝ Աբիսակին կնության վերցնելու, որպեսզի այդ արարքով գրգռի ժողովրդին և Սողոմոնին թագավորական գահից գցի, սակայն Սողոմոնը, Աստծու հրամանով թագավոր լինելով, եղբորը սպանելու իրավունք ուներ, քանի որ նրա կյանքը աստվածային հրամաններին հակառակ էր:

Թեև Աբիաթար քահանան Ադոնիային օգնելու և պաշտպանելու համար արժանի էր մահվան, սակայն տապանակին ծառայելով, ժամանակին Դավթի տառապանքներին և վշտերին մասնակից լինելով, չի ցանկանում սպանել նրան, այլ քահանայությունից զրկելով՝ աքսորում է իր ազարակ՝ Անաթովթ, և նրա փոխարեն Սադովկ քահանային է կարգում իսրայելացիների քահանայապետ: Հովաբը Ադոնիայի մահվան գույժը լսելուն պես փախչելով խորան է մտնում և սեղանի անկյունին ապավինում, որպեսզի մահվան պատժից ազատվի:

Սողոմոնը, դա լսելով, Բանիա հազարապետին ուղարկում է, որ սպանի Հովաբին. հիշյալ հազարապետը գնալով հրամայում է, որ նա դուրս գա, սակայն նա չի հնազանդվում և հանձն է առնում նույն սրբավայրում մեռնել, քան

հնազանդվել: Երբ Սողոմոնը սա լսում է, հրամայում է նույն այդ սեղանի մոտ սպանել նրան՝ նրա իսկ խոսքի համաձայն, և նրա փոխարեն զորքերի հրամանատար է կարգում հիշյալ Բանիային:

Խրա՛տ ընդունիր. ինչպես Հովաբն է առանց իրավունքի սրով սպանում Աբեններին և Ամեսայիին, ինքն էլ է սրից մահանում, որպեսզի արդարություն լինի: Թեպետ Հովաբը քաջ զորավար էր և պատերազմական արվեստին անչափ հմուտ, սակայն չար վարքի տեր լինելով, անգամ խորանին ապավինելով՝ չի կարողանում մահվանից ազատվել, քանի որ չար մարդը, ուր էլ լինի և երբ էլ լինի, պատժվում է:

Դարձյալ վերոհիշյալ Սեմեեի մինչ այդ անպատիժ մնալով՝ Սողոմոնը նրան կանչում և պատվիրում է, որ Երուսաղեմում տուն կառուցի և այնտեղ բնակվի, և Աստծու անունով երդվելով՝ ավելացնում է. «Երուսաղեմից դուրս գաս, կմեռնես»: Սեմեեն նույնպես պատասխանում է. «Ինչպես որ հրամայեցիր, թող այդպես լինի», և բնակվում է Երուսաղեմ քաղաքում: Սակայն երեք տարի հետո, երբ նրա երկու ծառաները փախչում են, և նա տեղեկանում է, որ Գեթ քաղաքում են, գնում գտնում է նրանց և փախստականներին հետ բերում:

Արդ, Սողոմոնը, լսելով, որ Սեմեեն Երուսաղեմից դուրս է եկել, նրան կանչելով, հարցնում է. «Աստծու անունով երդվեցիր Երուսաղեմից դուրս չգալ, ուրեմն ինչո՞ւ ուխտադրուժ եղար: Հորս հանդեպ կատարածդ չարությունների համար Աստված քեզ հատուցեց». սա ասելով՝ իսկույն հրամայում է նրան սպանել: Թեպետ Դավթի պատվիրանի համաձայն՝ Սողոմոնը պարտավոր էր սպանել Հովաբին և Սեմեեին, սակայն, այսուհանդերձ, համբերում է և խոհեմությամբ պատեհ ժամանակի սպանում է չարագործներին:

Հարց ԽԳ: **Ամբողջ Իսրայելը հնազա՞նդ էր Սողոմոնին:**

Պատասխան: Այո՛, հնազանդ էր: Որովհետև Աստված Սողոմոնին անչափ մեծ իմաստություն, գիտելիք, խոհեմություն, հիշողություն և երկայնամտություն էր տվել, որոնցով էլ պետական գործերում արթնություն և անաչառ վարք ցույց տալով՝ ժողովուրդը ուրախ, գոհ, երջանիկ և կատարելապես հնազանդ էր: Աստծու ողորմությամբ թեև Սողոմոնի թագավորությունը հաստատուն և երանելի վիճակում էր, սակայն Երուսաղեմի և Եգիպտոսի միջև գտնվող ազգերի հանդեպ կասկածները փարատելու համար որոշում է Եգիպտոսի փարավոնի դստերը կնության առնել, որն ապագայում՝ ծերության ժամանակ, իր համար գայթակղություն է լինում:

Քանի որ նախքան տաճարը կառուցելը խորանն ու ողջակեզների սեղանը Գաբավոնում՝ մի բարձր լեռան վրա էին գտնվում, և ժողովուրդը սովոր էր այնտեղ գնալու, որ խունկ ծխի և զոհեր մատուցի: Սողոմոնը նույնպես զոհ մատուցելու փափագով Գաբավոն է գնում իր հազարապետերի, հարյուրապետերի և իսրայելացիների դատավորների ու մեծամեծների հետ և նույն այդ սեղանին Բարձրյալ Աստծուն հազար ողջակեզներ մատուցում: Այն ժամանակ Աստված, Սողոմոնին երևալով, հարցնում է. «Ի՞նչ կցանկանաս Ինձնից, որ տամ քեզ»: Սողոմոնը Աստծուց շնորհակալ է լինում նախ՝ իր հոր՝ Դավթի հանդեպ ցուցաբերած ողորմության և բարիքների համար, նաև՝ այն շնորհի համար, որով նրա փոխարեն իրեն թագավոր է կարգել, ապա՝ հայտնելով, որ ինքը դեռ պատանի է և ժողովրդին կառավարելու անհրաժեշտ ուժ ու կարողություն չունի, խնդրում է, որ իրեն իմաստություն պարգևի, հանճար և գիտություն, որպեսզի կարողանա չարն

ու բարին զանազանել և ժողովրդի դատաստանը արդարությամբ կատարել[205]:

Սողոմոնի այս անօրինակ խնդրանքն Աստծուն անչափ հաճելի լինելով՝ Աստված պատասխանում է. «Քանի որ կյանք, ունեցվածք, հզորություն և թշնամիներից վրեժխնդրություն չցանկացար, այլ ցանկացար, ըստ իրավունքի և արդարության, դատաստան տեսնելու համար իմաստություն և հանճար ստանալ, ահա փափագիդ համապատասխան՝ քեզ իմաստություն և գիտություն եմ տալիս, այնպես, որ մինչ այսօր քեզ նման ոչ մեկը չի եղել և քեզնից հետո էլ չի լինի: Իշխանություն և մեծություն չխնդրեցիր, ահա քեզ տվեցի մի այնպիսի հզոր թագավորություն, որ քեզ ժամանակակից բոլոր թագավորների մեջ քեզ նման և քեզ հավասար ոչ մեկը չի գտնվի, և եթե Իմ հրամանների և օրենքների համաձայն ընթանաս, ինչպես հայրդ՝ Դավիթն էր ընթանում, քեզ անպատճառ երկար կյանք էլ կպարգևեմ»:

Թեպետ սույն խոսքերը Սողոմոնը երազում է լսում, սակայն ասես արթուն՝ հրաշալի ձևով է պատասխանում: Երբ արթնանում է, Աստծուց գոհանալով Երուսաղեմ է վերադառնում և շտապում է՝ տապանակի առջև երկրպագություն անելու և նորից զոհեր մատուցելու, Աստծուն փառավորելով և անսահման շնորհակալություն հայտնելով՝ ողջ ներկա ժողովրդին էլ պատվում է մեծ խնջույքով, որից էլ ուրախացած՝ բոլորը ցնծալով տոնում են:

Այդ ժամանակ երկու անպատիվ կին դատի են գալիս Սողոմոնի մոտ: Նրանցից մեկն ասում է. «Մենք երկուսով մի տան մեջ էինք բնակվում. ես որդի ունեցա, և երեք օր հետո նա

---

[205] Արդ, ինձ իմաստնություն ու իմացություն տո՛ւր (*Բ Մնաց. 1:10*):

ունեցավ. տանը, երկուսիցս բացի, ոչ ոք չկար. գիշերը սրա որդին մահացավ, քանի որ պառկել էր երեխայի վրա. արդ, նույն գիշեր՝ իմ քնած ժամանակ, նա, իմ որդուն վերցնելով, իր մահճակալին է պառկեցնում և իր մեռած մանկանը դնում իմ ծոցը. երբ առավոտյան արթնացա՝ մանկանս կաթ տամ, տեսա, որ մահացած է և իմ որդին չէ»: Իսկ մյուսը պատասխանում է, որ այդպես չէ, այլ մեռածը նրանն է, իսկ կենդանին՝ իրենը:

Իրոք, այս դեպքում եղելությունը ճշտելու համար վկայի կարիք կար կամ էլ նրանց երդվեցնելու, սակայն ո՛չ վկա կար, ո՛չ էլ կարելի էր վստահել նրանց երդմանը, ուստի Սողոմոնը հրամայում է, որ սուրը բերեն և կենդանի մանկանը երկու մասի բաժանելով՝ մի կեսը մեկին տան, մյուսը՝ մյուսին: Այդ պահին մանկան իրական մայրը, իսկույն ցավագին աղաղակելով, ասում է. «Մանկանն այդ կնո՛ջը տվեք և մի՛ սպանեք»: Իսկ մյուս կինը ասում էր. «Կտրե՛ք, թող ոչ ինձ լինի, ոչ էլ նրան»:

Այն ժամանակ Սողոմոնը հրամայում է, որ մանկանը տան այն կնոջը, որը համաձայն չէր մանկան մահվանը, քանի որ նա էր մանկան իրական մայրը: Ժողովուրդը, այս դատաստանի մասին լսելով, անչափ տպավորվում և զարմանում է, ուստի սկսում են պատկառել և երկյուղել նրանից, քանի որ հասկանում են, որ այսպիսի իմաստությունը աստվածային տուրք և պարգև է:

Այնուհետև Սողոմոնը իր պալատում անհրաժեշտ ծառաներ և պաշտոնյաներ է նշանակում, և յուրաքանչյուրն իրեն հանձնարարված որոշակի գործն անթերի կատարելով՝ ժողովրդին կառավարելը մեծապես դյուրանում է, այնպես որ բոլոր իսրայելացիները, խաղաղ և հանգիստ ապրելով, սկսում են այգիներում և պարտեզներում ուտել, խմել և զվարճանքներով ժամանակ անցկացնել, առանց վտանգի և ամենափոքր երկյուղի:

Սողոմոնի անունը այնքան է փառավորվում, որ Իսրայել երկրի շրջակայքում գտնվող երկրներում՝ Եփրատից մինչև Եգիպտոս, օտար թագավորներն ու ժողովուրդները հնազանդվում են նրան, ոմանք՝ երկյուղից, ոմանք էլ՝ նրա գիտության և իմաստության համբավից պատկառելով, այնպես որ այս օտար երկրներից նրան ուղարկված ընծաներն ու տուրքերը այքան շատ ու մեծաքանակ են լինում, որ բնիկ իսրայելացիներից շատ բան պահանջելու և նեղություն տալու կարիք չի լինում: Այո՛, Սողոմոնի հարստությունը այնքան է բազմանում, որ իր պետության մեջ, ինչքի և անասունների անչափ առատությունից և բազմազանությունից բացի, ոսկին ու արծաթն էլ Երուսաղեմի բնակիչները հասարակ քարերի նման են հավաքում[206]:

Սրանից բացի՝ Սողոմոնը թագավորական գործերը կանոնավոր և գեղեցիկ վարելուց հետո մարդկանց համար օգտակար խրատական գրքեր և գիտությանը նվիրված երկեր է շարադրում, և նրա գիտելիքների հռչակն աշխարհով մեկ տարածվելով՝ բոլոր ժողովուրդներից և թագավորներներից գալիս են՝ նրա իմաստուն խոսքերը լսելու և հիացմունքի ու զարմանքի պարտքն անձամբ վճարելու:

Այսուհետև Սողոմոնը ցանկանում է Դավթի կարգադրության համախատասխան կառուցել տաճարը (տե՛ս ԽԱ հարցը), և Դավթի պատրաստած շինանյութից բացի՝ ինքն էլ իր կողմից անհրաժեշտ նյութերի պատրաստությունը տեսնելու ցանկությամբ Լիբանանի Քիրամ թագավորին տեղեկացնում է (որը Դավթի բարեկամն էր), որ անհրաժեշտ փայտանյութն ուղարկի: Հիշյալ թագավորը, այս լուրը ստանալով,

---

[206] Արքան արծաթն ու ոսկին Երուսաղեմում հասարակ քարի նման բան դարձրեց (*Գ Թագ. 10:27*):

անչափ ուրախանում է և խոստանում նրա խնդրանքը կատարել: Սողոմոնը բոլոր իսրայելացիներից երեսուն հազար մարդ է ընտրում և նրանց երեք խմբի բաժանում, որպեսզի տասը հազար մարդ, իրար փոխարինելով, կարողանան մի ամիս աշխատել և երկու ամիս տուն գնալ, այնպես որ տասը հազարը մշտապես առանց դադարի աշխատանեն:

Նաև ութսուն հազար քարտաշ, յոթանասուն հազար բեռնակիր է վերցնում և երեք հազար վեց հարյուր մարդկանց էլ պաշտոնյաներ կարգում, և սրանց բոլորին ուղարկում է Քիրամ թագավորի մոտ, որ նրա մարդկանց հետ տաճարի համար անհրաժեշտ նյութերն այնտեղ պատրաստեն, և բոլոր այս աշխատողների և վարպետների ուտելիքը Սողոմոնն է մատակարարում: Ահա այսպես երեք տարվա ընթացքում անհրաժեշտ քարը և ատաղձը պատրաստ է լինում, որը Քիրամը, ծովեզերք իջեցնելով, նավերով ուղարկում է Հոպպե, և Սողոմոնն էլ Երուսաղեմ է փոխադրել տալիս:

Հարց ԽԴ: **Սողոմոնը ե՞րբ է սկսում կառուցել տաճարը:**

Պատասխան: Դավթի մահվանից հետո՝ իր թագավորության չորրորդ տարվա երկրորդ ամսին: Դավթի պատվերի համաձայն՝ տաճարը պետք է կառուցվեր Ուռնայի կալատեղում (տե՛ս Խ հարցը), սակայն տեղը փոքր լինելու պատճառով շրջակա տարածքներն էլ է գնում և, այսպիսով, տաճարի համար ընդարձակ տարածք ունենում: Ամեն տեսակի շինանյութեր պատրաստելուց հետո վերոհիշյալ Քիրամ թագավորի խորհրդով և ճարտարապետների համաձայնությամբ է՛լ ավելի՝ պահանջվածից էլ շատ, քարտաշներ և հյուսներ բերելով և այսպիսի անչափ մեծ պատրաստությամբ Սողոմոնը ձեռնամուխ է լինում տաճարը կառուցելուն:

Դավիթը (տե՛ս ԽԱ հարցը) կառուցվելիք տաճարի և՛ արտաքին, և՛ ներքին բաժինների՝ Աստծու զորավոր ներգործությամբ գծագրած նկարները նախապես Սողոմոնին էր հանձնել. փաստացի տաճարի ճարտարապետը՝ Աստված, կառուցման վերակացուն Սողոմոնն էր, և այս էր պատճառը, որ տաճարի շենքն ու զարդարանքը անչափ զարմանահրաշ և հրաշալի ձևով կառուցվեցին. այնպես որ ամբողջ աշխարհում նմանը չկար, և բոլոր տեսնողները և լսողները հիացմունքով էին լցվում, ինչպես Սուրբ գիրքն է հայտնում:

Սակայն առավել զարմանալին այն է, որ մի այդպիսի կառույցում, ուր անթիվ աշխատողներ էին տքնում, սկզբից մինչև ավարտ երբեք մուրճի ձայն և աղմուկ չէին լսվում: Որովհետև նրա քարերը, փայտանյութը և մյուս անհրաժեշտ նյութերը նախօրոք Լիբանանում կամ այլ տեղերում գծագրությանը համապատասխան կտրվել և պատրաստվել էին, և այլևս մուրճի և սղոցի կարիք չկար. ամեն մի նյութ կարգով իր տեղն էր դրվում, մինչև իսկ գամերի տեղերն էին փորվել և պատրաստվել, որ մուրճի կարիք չլինի: Արդարև, այսպիսի մեծ ուշադրությունը Աստծու սուրբ անվան պատվի համար էր, քանի որ տաճարը կառուցվում էր Նրա փառքի համար, ուստի ոչ միայն աշխատողներն էին պարտավոր զգույշ լինել, այլև անշունչ առարկաների ձայնն անգամ չէին ցանկանում, որ լսվեր:

Դու Աստծու ողորմությա՛նը նայիր. Սողոմոնը այն ժամանակ Աստծուն հնազանդ էր, որի պատճառով էլ անդադար մեծ սեր և ուշադրություն է հատկացնում տաճարի կառուցմանը, բայց քանի որ մարդ էր և բոլոր առումներով հաջողակ և երջանիկ, որպեսզի, թերևս սխալվելով, պատվիրանին հակառակ չգործի՝ Աստված ասում է. «Այն տաճարը, որ կառուցում ես, չեմ թողնելու՝ Իսրայելի ժողովուրդն այն լքի, ինչպես

խոստացել եմ հորդ՝ Դավթին, եթե դու իմ պատվիրանների համաձայն ընթանաս և ըստ ամենայնի օրենքներս պահես»:

Ճշմարտապես, Աստծու սույն խոսքերը Նրա՝ Սողոմոնի հանդեպ սիրո և մեծ ողորմության ապացույցն էին: Քանի որ ինչքան էլ տաճարի կառուցումը Աստծուն հաճելի էր, սակայն նախօրոք հայտնում է՝ եթե Սողոմոնն օրենքին հակառակ վարք որդեգրի, Ինքը երես կդարձնի և՛ տաճարից, և՛ իսրայելացիներից, և այս ազդարարությունը նրա համար էր, որ միշտ աստվածային օրենքերին հնազանդ մնա: Եվ իրոք, երբ նրանք Աստծու օրենքներին հակառակ են գործում, Աստված միաժամանակ մերժում է և՛ տաճարը, և՛ իսրայելացիներին:

Երբ տաճարի կառուցումն ավարտվում է, Սողոմոնը և՛ Դավթի նվիրած ոսկին ու արծաթը, և՛ ողջ թանկագին հանդերձանքը տաճարի գանձանակին է նվիրում: Ապա իսրայելացիների բոլոր մեծամեծներն ու ծերերը հավաքվում են, և քահանաները փառավոր հանդիսությամբ, զանազան երաժշտական գործիքների ձայնակցությամբ և սաղմոսերգություններով, ցնծությամբ և գոհաբանական փառաբանություններով Աստծու տապանակը տեղափոխում են Սիոնից: Ե՛վ Սողոմոնը, և՛ ժողովուրդը նրա առջև անհամար կենդանիներ են զոհաբերում և տանելով այն՝ բերում են տաճարում նրա համար հատկացված *Սրբությունների Սրբություն* կոչվող վայրը և ամենայն պատվով և պատկառանքով այնտեղ դնում:

Տաճար են բերում նաև խորանը և դրան վերաբերող հանդերձանքը, որ մինչ այդ Գաբավոնում էին: Սրա փոխադրությունն էլ կատարվում է մեծ հանդիսությամբ. քահանաները տավիղներով, քնարներով և բարձրաձայն սաղմոսերգություններով Աստծուն շնորհակալություն և փառաբանություն են մատուցում Նրա անհուն ողորմության, գթության և մարդասիրության համար. ճիշտ նույն պահին հրաշալիորեն, որպես

Աստծու փառքի նշան, տաճարն ամպով է լցվում, այնպես որ քահանաները այնտեղ մնալու անկարող են լինում:

Թեպետ սույն հրաշալի երևույթի համար բոլորն ուրախանում են, սակայն առավել՝ Սողոմոնը, որ ուրախանալով կանգնում է սեղանի առջև և Աստծուն գոհություն մատուցելով, օրհնում է ներկա ժողովրդին և բոլորի համար աղոթելուց հետո ժողովրդին հայտնում, թե ինչպես էր Դավիթը ցանկանում կառուցել տաճարը, սակայն Աստված հավանություն չէր տվել՝ ասելով. «Որդիդ պետք է կառուցի», և ահա Աստծու խոսքն այդ օրը կատարվելով՝ Նրա փառքն է երևում:

Սրանից բացի՝ Սողոմոնը տաճարի բակում մի պղնձե աթոռ էր պատրաստել, որի երկարությունը և լայնությունը հինգ կանգուն էր, իսկ բարձրությունը՝ երեք կանգուն, որին ծնրադրած և բազկատարած՝ աղոթում է՝ ի լուր ժողովրդի: Նախ Սողոմոնը խոստովանում է Աստծու ողորմությունն ու մեծությունը, իր և Դավթի հանդեպ բարերարությունը և խոստումներին հավատարիմ մնալը: Հետո նա, կատարյալ հավատով և բուռն սիրով Աստծուն շնորհակալություն և երախտագիտություն հայտնելով, խնդրում է, որ, խոստմանը համապատասխան, Դավթի տանից անպակաս անի Իր ողորմությունը և իր աղոթքն ու պաղատանքներն ընդունի, ընդունի նաև նրանցը, ովքեր այս տաճարում կաղոթեն առ Աստված: Ապա ոտքի կանգնելով՝ նույն տեղում սրտագին և ջերմեռանդորեն օրհնում է ժողովրդին:

Նույն կերպ Սողոմոնը, ժողովրդին հիշեցնելով այն բոլոր բարիքները և ողորմությունները, որոնք Աստված արել է նրանց, բոլորին հորդորում է, որ զգուշությամբ ու սրտանց պահեն Նրա պատվիրանները և միշտ հնազանդ մնան Նրա սուրբ օրենքներին, և ահա մինչ նա խոսում էր, աստվածային հրաշքով երկնքից կրակ է իջնում և այրում մատուցված ընծաներն

ու զոհերը, և Աստծու տաճարը վերստին լցվում է աստվածային փառքի ամպով այնպես, որ քահանաները, սրբազան երկյուղով համակված, անկարող են լինում ներս մտնելու:

Երբ հավաքված ժողովուրդը տեսնում է սույն երկնային հրաշքը, տաճարի հրապարակում երեսնիվայր, միևնույն ժամանակ ահով և խնդությամբ գետնամած, երկրպագում է Աստծուն և ջերմեռանդ աղոթքով զոհանում Նրա անսահման բարությունից, հռչակում է Նրա ամենակարող զորությունը և փառավորում Նրա փառավոր և սուրբ անունը: Թեև նույն օրը բոլորն էլ զոհեր են մատուցում, սակայն Սողոմոնը նույնպես քսաներկու հազար առջառ և հարյուր քսան հազար ոչխար է զոհում: Ղևտացիներն էլ նույն այդ օրը իրենց պաշտամունքն են սկսում և սաղմոսերգությամբ և երաժշտական գործիքներով նվագում են՝ Աստծուն գովելով ու խոստովանելով Նրա անսահման բարությունը ու ողորմությունը:

Սակայն ողջակեզների սեղանն այդքան բազմաթիվ զոհերի համար բավարար չէր, ուստի Սողոմոնը, մաքրել տալով տաճարի հրապարակը, ժամանակավոր սեղաններ է կառուցել տալիս, որպեսզի նրանց վրա նույնպես զոհաբերություններ կատարեն: Ահա այսպիսով, տասնչորս օր անմեղ խնջույքներով և հոգևոր ուրախություններով են անցկացնում, տաճարի կառուցման առթիվ յոթ օր նավակատիքի հանդես են կատարում, իսկ մյուս յոթ օրը տաղավարահարության տոն են կատարում, քանի որ ըստ հրեաների արդեն մոտ էին այդ եկեղեցական տոնի օրերը:

Այս է պատճառը, որ բացի Երուսաղեմ եկող հրեաներից՝ Ասորեստանից մինչև Դամասկոս և մինչև եգիպտացիների Նեղոս գետն ընկած տարածքների բնակիչները, տաճարի կառուցման լուրը լսելով, անհամար բազմությամբ տեսնելու են գալիս: Արդարև, տեսնելով տաճարը, ինչպես նաև նրա ներքին

և արտաքին հարդարանքը, այլև կատարված հանդիսությունը, անչափ զարմանում են և իսրայելացիների հանդեպ Աստծու բարության պաշտպանության համար ուրախանալով, Նրա սքանչելիքները պատմելով՝ վերադառնում իրենց երկրներ:

Հարց ԽԵ: **Քանի՞ տարի է տևում տաճարի կառուցումը:**

Պատասխան: Յոթ տարի: Ճիշտ է՝ հրեաները Քրիստոսին ասում են, որ քառասունվեց տարիների ընթացքում է կառուցվել, սակայն այս խոսքը տաճարի առաջին կառուցման համար չէր ասվել, այլ իսրայելացիների՝ Բաբելոնի գերությունից վերադարձից հետո, երբ երկրորդ անգամ են վերակառուցում քանդված տաճարը և Երուսաղեմի ավերված պարիսպները. այն ժամանակ թշնամիներին հաջողվում է քանդել շինությունը և հազիվ քառասունվեց տարվա ընթացքում են կարողանում ավարտին հասցնել[207]:

Սողոմոնը տաճարը կառուցելուց հետո այլ շինություններ էլ է կառուցում: Քանի որ սեր ուներ շինարարության հանդեպ, Երուսաղեմի շուրջը պարիսպ է կառուցում: Չնայած Սիոն լեռան վրա Դավթի պալատը կար, սակայն տաճարի մոտ ինքն իր համար պալատ է կառուցում, նույն կերպ իր կնոջ՝ փարավոնի դստեր համար է առանձին տուն կառուցում: Դարձյալ Երուսաղեմի մոտ իր համար ամառանոց կառուցելուց բացի՝ մի անտառ էլ է տնկում, որը պատշաճ է համարում անվանելու *Լիբանան* կամ *Լիբանանյան անտառ*:

Երուսաղեմի և Սիոն լեռան միջև եղած ձորակը լցնել է տալիս և իսրայելացիների երկրի սահմաններում գտնվող շատ

---

[207] Այդ ժամանակ էլ խափանվեց և դադարեց Տեր Աստծու տաճարի աշխատանքը Երուսաղեմում, և այդ դադարը տևեց մինչև Պարսկաստանի Դարեհ արքայի երկրորդ տարին (*Բ Եզր. 4:23*):

քաղաքների շուրջը պարիսպներ և բերդեր է կառուցում, որպեսզի եթե թշնամիները հարձակվելու հանդգնություն ունենան, պաշտպանվելը հեշտ լինի:

Հիրավի, Սողոմոնը ինչ էլ ձեռնարկում է, Աստծուց հաջողություն է գտնում[208]: Սակայն նկատի ունենալով, որ միգուցե Սողոմոնը սխալվելով աստվածային պատվիրաններին հակառակ վարք ունենա, Աստված նորից է երևում նրան, ինչպես Գաբավոնում էր երևացել (տե՛ս ԽԳ հարցը), և հետևյալ խոսքն է ասում. «Աղոթքդ ու աղաչանքդ լսեցի, ուստի եթե հորդ՝ Դավթի նման պատվիրաներս հավատարմությամբ պահես, կհաստատեմ քո թագավորությունը, և եթե դու և քո որդիները, Ինձ հակառակ, կուռքերին ծառայեք, այն ժամանակ իսրայելացիներին մերժելով կմերժեմ և տաճարն էլ կավերեմ, որպեսզի ամբողջ աշխարհը լսելով ասի, թե սրանք Աստծուն հակառակվեցին և դրա պատճառով պատժվեցին»: Սույն խոսքերը Սողոմոնի համար մեծ և փրկարար պատվիրաններ և հատուկ ողորմություն էին, որպեսզի իր հաջողություններին և փառքին ապավինելով՝ անձնատուր չլինի աշխարհիկ զվարճությունների և Աստծու սուրբ երկյուղն էլ մտքից չհանի:

Քանի որ Սողոմոնի գանձերն ու հարստությունը չափազանց մեծ էին, և փառավորության ու շքեղության առումով նրան հավասարը չկար, նրա կամքը իսկույն կատարվում էր. օտար բոլոր ազգերի թագավորները, կա՛մ երկյուղից, կա՛մ նրան մեծարելու համար ծառայելով, հարկ էին վճարում և նրա բոլոր պահանջները բավարարելով՝ ցանկանում էին շահել նրա բարեկամությունը:

---

[208] Սողոմոնն ավարտեց Տիրոջ տան և արքունի տան կառուցումը, և ամեն ինչ, որ Սողոմոնի սիրտը կամեցել էր Տիրոջ տան և իր տան համար կատարել, հաջողվեց (*Բ Մնաց. 7:11*):

Օրինակ՝ վերոհիշյալ Քիրամ թագավորը ոչ միայն տաճարի կառուցման առթիվ շատ մեծ բարիքներ է անում թագավորին, այլ նաև մեծ քանակությամբ ոսկի և Եմաթսոբա կոչվող գավառը կամ երկիրն է նվիրում նրան: Չնայած Սողոմոնն էլ իր հերթին քսան քաղաք է նվիրում Քիրամին, սակայն սա, երբ տեսնում է այդ քաղաքները, ինքն իրեն ասում է. «Այս ի՞նչ քաղաքներ են, որ ինձ տվեցիր, եղբա՛յր», և դրանց անունը *սահման* է դնում, քանի որ անօգուտ վայրերում էին և միայն սահմանները ցույց տալուն կարող էին ծառայել, այդուհանդերձ, Սողոմոնին չվշտացնելու համար դրանից ավելի բան չի ասում: Նույն ձևով Եգիպտոսի փարավոնը, որպես իր աղջկան օժիտ, ամենայն առատաձեռնությամբ Սողոմոնին է նվիրում քանանացիներից գրաված բոլոր երկրները:

Սողոմոնը ցանկանում է տիրել նաև իր պետությանը սահմանակից ծովերին, սակայն ամբողջ Երուսաղեմում նավաստի չգտնելով՝ դարձյալ վերոհիշյալ Քիրամ թագավորին է դիմում՝ խնդրելով նավապետ և նավաստիներ տրամադրել: Քիրամի երկիրը, ծովեզրյա լինելով, բազմաթիվ փորձառու նավաստիներ ուներ, ուստի նրանց ուղարկում է Սողոմոնին, որոնց Սողոմոնը իր մարդկանց հետ Կարմիր ծովի եզերքն է ուղարկում և իր համար նավահանգիստ ընտրելով՝ բազում նավեր է կառուցում և այդ կողմերում գտնվող հայտնի Սոփեր կոչվող վայրից առատ ոսկի է բերել տալիս: Նաև Փարաշամի ծովեզերքին իր համար նավահանգիստ է ընտրում և այնտեղ բազում նավեր է կառուցել տալիս, որոնցով տարեցտարի օտար երկրներից Սողոմոնին բազում գանձեր և հարստություն են բերում:

Այսպիսով, Սողոմոնի անունն այնքան է փառավորվում, որ հեռավոր երկրների իշխաններն ու թագավորները ոչ միայն հազվագյուտ և թանկագին ընծաներ են ուղարկում նրան, այլև նրա բարեկամություն ու մտերմությունը իրենց համար փառք

ու պատիվ համարում: Ինչպես Եմենի կողմերի հարավային երկրի Սաբա թագուհին[209], որն իմաստուն և իմաստությանը սիրահար կին էր, լսելով, որ Սողոմոնը գիտությունների մեջ չափազանց առաջադեմ և կատարյալ մեկն է, անձամբ բազում զորքով Երուսաղեմ է գալիս, որպեսզի նրան փորձի: Սույն թագուհին բազում կնդրուկ և անուշահոտ խունկեր, ոսկի և գոհար է ընծայում Սողոմոնին:

Իսկ գիտությանը վերաբերող ինչ հարցեր էլ առաջարկում է, Սողոմոնն իսկույն այնպիսի ճշգրտությամբ և անսխալ բացատրություններով է գոհացնում թագուհուն, որ նա մեծապես զարմանում է նրա մեծ իմաստությունից և գիտելիքներից: Բացի դրանից՝ տեսնելով նրա բնակության պալատը և կառուցած այլ շինություններ, մասնավորապես նորակառույց տաճարը և դրանում առկա զարդերն ու կահկարասին, Աստծուն մատուցվող զոհերը և արքայական տան կարգադրությունները, ինչպես նաև ծառայող մարդկանց կանոնավոր և վայելուչ պահվածքն ու վարքը, ապշում և հիանում է այս ամենով և ստիպված խոստովանում, որ մինչ ինքը, Սողոմոնի վերաբերյալ լսածները չափազանցություն համարելով, չէր ցանկանում հավատալ, հիմա տեսնում է, որ իր լսածն անգամ տեսածի կեսն էլ չէ, ուստի երանի է տալիս նրա կանանց և ծառաներին, որոնք միշտ լսում են նրա խոսքերը և օգտվում աստվածապարգև գիտելիքներից:

Արդարև, վերոհիշյալ թագուհին, հայտնապես խոստովանելով, որ այսպիսի ընդարձակածավալ գիտելիքները և խոհեմազարդ կենցաղավարությունը Աստծու հատուկ շնորհ ու ողորմություն է, գովում և փառաբանում է Աստծուն, որ, Իսրայելը սիրելով, Սողոմոնին թագավոր է կարգել, որպեսզի

---

[209] Հարավի դշխոն (*Մտ. 12:42*):

արդարությամբ և իմաստուն թագավորությամբ ժողովրդին երջանկությանը պատրաստի: Սողոմոնը ևս հիշյալ թագուհուն, մեծ պատիվ և արքայական հյուրասեր մեծարանք ամենայն շռայլելությամբ ընծայելուց բացի, նրա ցանկության համաձայն, ամեն ինչով գոհացնում է նրան, և նա մեծ գոհունակությամբ վերադառնում է իր երկիր:

Այժմ հարկ է փոքր-ինչ խորհելու. Սողոմոնը հարստություն և մեծություն խնդրելու փոխարեն միմիայն իմաստություն է խնդրում, և հենց դրա պատճառով Աստված նրան անսովոր իմաստություն տալուց բացի՝ այնքան հարստություն և մեծություն է տալիս, որի նմանը մինչ այդ բնավ չէր եղել: Նրա պալատի ողջ սպասքն ու անոթները ոսկուց էին, նրա օրոք արծաթը անարժեք բան էր համարվում[210], և շրջակա թագավորներից առավել հանճարեղ և իմաստուն, ինչպես նաև մեծությամբ, հարստությամբ և զորությամբ փառավորված՝[211] Սողոմոնն իշխում է նրանց բոլորին, ինչպես Սուրբ գրքից է հայտնի:

Հարց ԽԶ: **Սողոմոնը միշտ հնազանդվո՞ւմ է Աստծու հրամանին:**

Պատասխան: Ո՛չ, չի հնազանդվում: Որովհետև ինչպես փարավոնի աղջկան էր կնության վերցրել, նմանապես այլ հեթանոս թագավորների հետ խնամիանալով՝ իր կռապաշտ կանանց այնքան էր սիրում, որ ծեր հասակում, անսալով նրանց՝ թույլ է տալիս կուռքերի համար տներ կառուցել, դրանք պաշտել և այսպիսով, Աստծուն անհնազանդ է լինում: Ճշմարիտ է՝ Սողոմոնը չէր հավատում կուռքերի, սակայն իր կանանց

---

[210] Արծաթե ոչինչ չկար, քանզի Սողոմոնի օրոք արծաթը հարգի չէր (*Գ Թագ. 10:21*):

[211] Սողոմոնն իր հարստությամբ ու իմաստությամբ գերազանցեց աշխարհի բոլոր թագավորներին (*Գ Թագ. 10:23*):

սիրտը չկոտրելու համար ծնրադրելով կուռքերի առջև՝ մեծապես մեղանչում է Աստծու օրենքների սրբության, արդարության և ճշմարտության հանդեպ:

Ուստի Աստված բարկանալով ուղղակի հայտարարում է. «Դու, կանանցդ համակրելով, Իմ հրամանները չես պահում. թագավորությունդ վերցնելով՝ ծառայիդ պիտի տամ»: Սակայն որքան էլ Աստված կամենում էր Սողոմոնի թագավորությունը նրա ծառային տալ, հանուն Դավթի սիրո՝ նրա օրոք սպառնալիք չի գործադրում, այլ Սողոմոնի որդի Ռոբովամի օրոք է կատարում: Նույն ձևով և՛ ի պատիվ Դավթի, և՛ Երուսաղեմը ընտրելու և Իր անվանը հատկացնելու համար ամբողջ թագավորությունը չի ջնջում, այլ կամենում է մի մասը նրա որդուն թողնել[212]:

Դու Աստծու արդարությո՛ւնը տես: Քանի դեռ Սողոմոնը հնազանդ էր Աստծու օրենքներին, բոլոր հեթանոս ազգերը հնազանդվում էին նրա իշխանությանը, սակայն երբ նա աստվածային իշխանությանը չի հնազանդվում, կռապաշտները նույնպես բացահայտորեն սկսում են չհնազանդվել նրա հրամաններին: Օրինակ՝ եդոմացիների կռապաշտ թագավորը, որի անունը Ադեր էր, Սողոմոնի իշխանության հանդեպ թշնամանալով, մեծ նեղություններ է պատճառում նրան:

Դավիթը նախկինում՝ Եդոմի երկրին տիրելուց հետո, այնտեղ բերդ է կառուցում և մշտապես զորք պահում, որպեսզի նրանք հնազանդ մնան իր իշխանությանը[213], սակայն նրանց մի կերպ հաջողվում է կոտորել Դավթի զորքը: Ուստի

---

[212] Ամբողջ թագավորությունը չեմ խլի, այլ, հանուն իմ ծառա Դավթի և իմ ընտրած Երուսաղեմ քաղաքի, մե՛կ ցեղ կհանձնեմ քո որդուն (*Գ Թագ. 11:13*):

[213] Նա Եդոմի մեջ՝ եդոմայեցիների երկրի բոլոր տեղերում բերդապահ զորքեր դրեց, և բոլոր եդոմայեցիները դարձան արքայի

նրա հրամանով Հովաբը գնում և վեց ամիս այնտեղ է մնում, ու նրանց արու մարդկանց կոտորելիս հիշյալ Ադերը, որը եդովմացիների թագավորի որդին էր և դեռ փոքր էր, հոր ծառաներից մեկի հետ կարողանում է փախչել և ապաստանել Եգիպտոսի թագավորի մոտ: Թագավորը սույն արքայազուն մանկանը թոշակ է սահմանում և տուն-տեղ նվիրում, որ հանգիստ ապրի: Սրանից բացի, երբ Ադերը մեծանում է, ամուսնանում է փարավոնի քենու հետ և, այսպիսով, որպես փարավոնի փեսա՝ Եգիպտոսում բարձր դիրք զբաղեցնում:

Թեև Ադերը հանգիստ կյանք էր վարում Եգիպտոսում, երբ լսում է Դավթի և Հովաբի մահվան մասին, փարավոնի թույլտվությամբ վերադառնում է հայրենիք՝ Եդովմ, և որպես հոր ժառանգորդ՝ թագավորում է այնտեղ և երկար տարիներ ակամա հարկատու և հնազանդ լինում Սողոմոնին: Սակայն երբ սա, Աստծուն բարկացնելով, կորցնում է նախկին փառքն ու շքեղությունը, Ադերը, իսկույն գլուխ բարձրացնելով և առանց ակնածելու նրա զորությունից, դուրս է թափում սրտում կուտակված թշնամության ու ատելության թույնը:

Նաև Դամասկոսի թագավորը՝ Ռազոն, որը հարկատու էր Սողոմոնին և նրա իշխանության հպատակն էր, այդ պահին ապստամբելով նրա դեմ և միավորվելով հիշյալ Ադերի հետ, Սողոմոնին շատ մեծ չարիք և նեղություն է պատճառում:

Սողոմոնը Երուսաղեմի և Սիոնի միջև ձորակը լցնել տալու ժամանակ (տե՛ս ԼԵ հարցը) եփրեմի ցեղից Հերոբովամ անունով ճարպիկ մի մարդու՝ աշխատողներին վերակացու էր կարգել, որոնք, քար և հող կրելով, չարաչար նեղվում էին սույն բեռնակրությունից: Հերոբովամը, որ սրանց ցեղակիցն էր,

---

հպատակները (*Բ Թագ. 8:14*): Ու հովտում բերդապահ զորք դրեց: Եդոմացիները Դավթի ծառաները դարձան (*Ա Մնաց. 18:13*):

տեսնելով նրանց չարչարանքները, բարկանում է, սակայն միառժամանակ համբերում և իր գործին հետամուտ լինելով՝ շարունակում է պաշտոնավարել:

Մի օր, երբ Հերոբովամը դուրս էր եկել Երուսաղեմից, նրան է հանդիպում Աքիրա մարգարեն և ճանապարհից շեղելով՝ դաշտ տանում, և երբ երկուսով դաշտում մենակ են մնում, Աքիրան, իր հագած նոր զգեստները պատռելով, տասներկու մասի է բաժանում, որոնցից տասը Հերոբովանին տալով՝ ասում է. «Կուռքեր երկրպագելու պատճառով Սողոմոնը բարկացրել է Աստծուն, Որը, նրա թագավորությունը բաժանելով, տասը մասը քեզ կտա, և որպեսզի Դավթի ճրագը չմարի, և Երուսաղեմը ամբողջությամբ չմերկանա իր փառքից, երկուսը կթողնի նրա որդուն, և եթե դու Աստծու պատվիրանները պահես այնպես, ինչպես Դավիթն էր պահում, Աստված հետդ կլինի, և թագավորությունդ էլ հաստատ կմնա»: Հերոբովամը, սույն խոսքերը լսելով, երբ թագավորությունը ձեռք բերելու համար քայլեր է ձեռնարկում, Սողոմոնը, նրա քայլերը չհավանելով, ցանկանում է սպանել, այն ժամանակ Հերոբովամը վախից փախչում է Եգիպտոս և մինչև Սողոմոնի մահը մնում այնտեղ:

Հարկ է նկատել, որ մինչ այդ ժամը ոչ մեկը չէր համարձակվում ընդդիմանալ Սողոմոնի կամքին, և թերևս այս է պատճառը, որ վերոհիշյալ ապստամբների խլրտումներն ու թշնամանքը ծանր են թվում Սողոմոնին և խոցում են սիրտը, սակայն անկարող է լինում պատժելու ապստամբներին: Քանի որ Աստված, բարկացած լինելով նրա վրա, թշնամիներին թույլ է տալիս, որ նեղություն և անհանգստություն պատճառեն նրան, որպեսզի նրանց միջոցով զգաստանա և առ Աստված վերադառնա և Նրա սուրբ սերն ու երկյուղը լիովին չհանի իր մտքից:

Դրանից բացի՝ ինչպես որ նրա իմաստությունը հռչակված էր ամբողջ աշխարհում, և մարդիկ փափագում էին նրան տեսնել և նրա խոսքը լսել, այդպես էլ նրա սխալների և հանցանքների մասին լսելով ու պատիժը տեսնելով՝ երկնչում են, որ Աստծուն բարկացնելով՝ Նրա բարկության սարսափելի հետևանքը, պատիժն ու պատուհասը չկրեն: Իրոք, Սողոմոնը աստվածային իրավունքին և օրենքներին հակառակ գործելու համար զղջում է (ինչպես պարզվում է ծերության ժամանակ գրած «Ժողովող» գրքից), սակայն նրա պատմությունը ողջ աշխարհում, ընդհանրապես բոլոր մարդկանց համար զարմանքի և խրատվելու նյութ է լինում, ուստի մարդիկ, քանի դեռ կենդանի են, պետք է երկյուղով և զգուշությամբ ապրեն, որպեսզի չսխալվեն ու իրենց ողջ կարողությամբ խույս տան անզգամ կանանց չար հրապուրանքներից:

Սողոմոնը քառասուն տարի թագավորում է Երուսաղեմում և տակավին վաթսուն տարեկան չդարձած վախճանվելով՝ թաղվում է Սիոնում: Ահա այսպես սույն հողագնդից հեռանում է այն տաղանդավոր և անզուգական մարդը, որը միևնույն ժամանակ ահարկու և սիրելի էր ազգերին և ժողովուրդներին, ինչպես նաև շատ թագակիր իշխանավորների, և որն իր բովանդակ կյանքով լուսավոր և պայծառորեն ցույց էր տվել, որ մարդկային կյանքն անհաստատ է, և ամեն ինչ ունայն է առանց Աստծու հատուկ պաշտպանության, ուստի միայն երկյուղն ու պատվիրանապահությունն առ Աստված կարող են երջանկացնել մարդուն:

Հարց ԽԷ: **Սողոմոնի մահվանից հետո ո՞վ է թագավորում Երուսաղեմում:**

Պատասխան: Թագավորում է նրա որդի Ռոբովամը, սակայն սա թագավորում է ոչ թե բոլոր իսրայելացիներին, այլ Հուդայի

և Բենիամինի ցեղերին: Որովհետև երբ Սողոմոնը մահանում է, իսրայելացիները հավաքվում են Եփրեմի ցեղի երկրի Սիկիմ կոչվող վայրում, որպեսզի Ռոբովամին թագավոր կարգեն: Այդ ժողովին հրավիրում են նաև Հերոբովամին, որը Սողոմոնի երկյուղից Եգիպտոս էր փախել ու ապաստանել էր փարավոնի մոտ և Սոողոմոնի մահվան մասին լսելով՝ նորից վերադարձել հայրենիք:

Արդ, Ռոբովամը նույնպես Սիկիմ է գնում, որպեսզի ժողովրդի ներկայությամբ հոր փոխարեն բոլոր իսրայելացիների թագավոր կարգվի: Սակայն ժողովրդի մեծամեծները Ռոբովամին առաջարկում են՝ ասելով. «Հայրդ մեզ վրա ծանր հարկեր էր դրել, դու թեթևացրո՛ւ, որ մենք քեզ ծառայենք»: Սա երեք օր ժամանակ է խնդրում, որպեսզի պատասխանի, և երբ հոր ծերունի խորհրդականներին է հարցնում նրանք պատասխանում են. «Միառժամանակ ժողովրդի խնդրանքը կատարի՛ր, որպեսզի միշտ քեզ ծառայեն»:

Ռոբովամը ժողովրդի այս պահանջի մասին իրեն հասակակից ընկերներից էլ է խորհուրդ հարցնում, որոնք ասում են, որ ժողովրդին պատասխանի հետևյալ կերպ. «Ճկույթս հորս մեջքից ավելի պինդ և ամուր է, եթե հայրս ձեզ վրա ծանր հարկ էր դրել, ես առավել ևս պիտի ծանրացնեմ, եթե նա ձեզ միայն գավազանով ծեծելով է կրթել, ես փշե գավազանով պիտի կրթեմ»: Երբ ժողովուրդը երրորդ օրը գալիս է Ռոբովամի մոտ, սա երիտասարդների խորհրդով խստությամբ է խոսում նրանց հետ, որոնք, արդեն իսկ դժգոհ լինելով, այսպիսի հակառակ խոսքեր լսելով, իրենց մեջ թաքցրած ապստամբությունն իսկույն բացահայտելով, ասում են. «Մենք Դավթի հետ բաժին չունենք, ուրեմն գնա՛ և Դավթի տա՛նը թագավորիր. իսրայելացինե՛ր, վերադարձե՛ք ձեր տեղը»: Այսպիսի ըմբոստ խոսքերից հետո մարդիկ ցրվում, վերադառնում են իրենց տուն:

Թեպետ Ռոբովամը ժողովրդի հետ խստությամբ խոսելու համար զղջում է, սակայն այլևս շատ առաջ գնալով՝ Ադոնիրամ անունով մի մարդու (որ պետական հարկերը հավաքող պաշտոնյան էր) ուղարկում է ժողովրդի մոտ, որ համոզիչ խոսքերով ապագա չարիքը կանխի: Սակայն նրանք, հիշյալ պաշտոնյային իսկույն քարկոծելով, սպանում են, քանի որ Ռոբովամի վրա բարկացած՝ ամբողջովին մերժում են Դավթի ցեղը: Ռոբովամը սա լսելուն պես երկյուղից խույս է տալիս Երուսաղեմ, որ իրեն էլ չսպանեն:

Այստեղ հարկ է նկատել, թե Սողոմոնը ժողովրդին կառավարելու համար որքան խոհեմ, հմուտ և հեռատես էր, նրա որդի Ռոբովամը նույնքան տգետ, ապուշ և անխոհեմ է գտնվում: Քանի որ անխոհեմ երիտասարդների խորհուրդները լսելով՝ ցանկանում է բռնապետության և հարստահարության դրություն հաստատել, որով էլ տասը ցեղերին անհնազանդության և ապստամբության է մղում, քանի որ այդ տասը ցեղերը, Հերոբովամին հրավիրելով, իրենց թագավոր են կարգում:

Այսպիսով, Ռոբովամը Երուսաղեմում թագավորում է միայն Հուդայի և Բենիամինի ցեղերի վրա: Քանի որ մի կողմից՝ Բենիամինի քաղաքները, իսկ մյուս կողմից՝ Հուդայի քաղաքները սահմանակից էին Եուսաղեմին, ուստի Բենիամինի ցեղն էլ է հնազանդվում Ռոբովամին, այսինքն՝ Դավթի տանը, որով էլ իրականանում է Աքիա մարգարեի պատգամը (տե՛ս ԽԶ հարցը), որ Հերոբովամին ասվել էր դեռ Սողոմոնի կենդանության օրոք:

Թեպետ Ռոբովամը երկու ցեղերի էր իշխում, բայց Հուդայի ցեղն անչափ մարդաշատ և զորավոր լինելու համար *Հուդայի թագավոր* է կոչվում: Այդպիսով, այնուհետև Երուսաղեմի բոլոր թագավորները նույն անունն են կրում: Նույնպես և Հերոբովամը *Իսրայելի թագավոր* է կոչվում, և այնուհետև տասը

ցեղերին իշխող թագավորները նույն անունով են ճամաչվում, որի համար էլ Հուդայի թագավորի հպատակները՝ Հուդայի ժողովուրդ, իսկ Իսրայելի թագավորի հպատակները Իսրայելի ժողովուրդ են անվանվում:

Ընթերցո՛ղ, մտապահի՛ր իսրայելացիների թշվառ վիճակը. քանի որ մեկ ազգի երկու թագավոր է իշխում, ժողովուրդն էլ երկու հակադիր մասերի է բաժանվում՝ գրեթե միշտ հակված ընդհարվելու: Ինչպես, օրինակ, Ռոբովամը Երուսաղեմում 180 հազար զորք է հավաքում, որ Հերոբովամի վրա հարձակվելով՝ իսրայելացիների ցեղերին իրեն հնազանդեցնի: Սակայն քանի որ Աստված էր հրամայել, որ Սողոմոնի թագավորությունը երկու մասի բաժանվի (տե՛ս ԽԶ հարցը), այս է պատճառը, որ պատվիրում է Սամեա մարգարեին գնալ և Ռոբովամին հայտնել, որ Իսրայելի դեմ պատերազմ չմղի՝ ասելով, որ այդ բաժանումը Իր հրամանով է տեղի ունեցել:

Ռոբովամը, Աստծու հրամանին հնազանվելով, իսկույն հրաժարվում է Իսրայելի դեմ պատերազմելու մտքից և մտադրությունից, սրանով նա թեև միայն երկու ցեղերի է իշխում, սակայն Աստծու հրամանին հնազանդվելու համար նրա թագավորությունը և՛ փառքով, և՛ ուժով օրըստօրե ծաղկում և զորանում է: Իսկ Հերոբովամը թեև Սիկիմն իր մայրաքաղաքն է դարձնում, սակայն Հուդայի թագավորից երկնչելով՝ Հորդանան գետի հակառակ ափին Փանուել բերդն է կառուցում և խիստ ամրացնում, որպեսզի անհրաժեշտության դեպքում իրեն ապաստարան լինի:

Դրանից բացի՝ Հերոբովամը, նկատի ունենալով, որ տաճարը Երուսաղեմում է կառուցվել և տապանակն էլ տաճարում է, և օրենքով զոհաբերությունների համար այլ տեղ սահմանված չէ, նաև հաշվի առնելով, որ բոլոր իսրայելացիները ըստ օրենքի պարտավոր են տարին երեք անգամ Երուսաղեմ

գնալ և տաճարում Աստծուն երկրպագել, մտածում է՝ ինչ-որ ձևով ժողովրդին արգելի Երուսաղեմ գնալ, որ Երուսաղեմ գնացող ժողովուրդը թերևս չհորդորվի հարելու Հուդայի թագավորությանը:

Ուստի հիշյալ թագավորը իր նպատակին հասնելու համար երկու ոսկյա հորթ է պատրաստել տալիս, որոնցից մեկը՝ Դանում, իսկ մյուսը Բեթելում է կանգնեցնում: Քանի որ Դանը նրա իշխանության մի սահմանում էր, իսկ Բեթելը՝ մյուս ծայրում, ուստի պատվիրում է, որ երկրպագելու համար այլևս Երուսաղեմ չգնան, այլ վերոհիշյալ հորթերին երկրպագեն և զոհաբերություններ անեն, քանի որ ասում է. «Այս Աստվածներն են, որ ձեզ հանել են Եգիպտոսից»: Այսպիսով, ամբարիշտ թագավորը, Աստծուն ուրանալուց բացի, ջանում է ժողովրդին էլ կռապաշտության մղել: Դարձյալ, քանի որ, Մովսեսի պատվիրանի համաձայն, բոլոր քահանաները և ղևտացիներն աստվածային օրենքները ժողովրդին ուսուցանելու համար իսրայելացիների բնակավայրերում իրենց բաժինն ունեին, Հերոբովամը այդ բոլոր պաշտոնյաներին արտաքսում է երկրից, որպեսզի չկարողանան ժողովրդին ուսուցանել և հաղորդել աստվածային հրամանները: Այն ժամանակ թշվառ քահանաները, անելանելի վիճակում հայտնվելով, իրենց կամքից անկախ, թողնում են հայրենի երկիրն ու ունեցվածքը և ապաստանում Հուդայի երկրում:

Հերոբովամը ոսկյա հորթերի գտնվելու վայրերում սեղաններ է կառուցում և ըստ կռապաշտների սովորության՝ բարձունքներում անտառ տնկելով՝ քահանաների և ղևտացիների փոխարեն այլ մարդիկ է կարգում, որպեսզի ժողովրդի՝ զոհ մատուցելու ժամանակ քահանայի պաշտոն կատարեն: Նույն ձևով էլ հրամայում է Հուդայի երկրի տոն օրերը, որոնք, ըստ օրենքի, Երուսաղեմում մեծ շուքով են նշվում, նույնատիպ

հանդիսությամբ տոնել ճիշտ նույն օրերին, որպեսզի Իսրայելի ժողովուրդը այդ տոների առիթով Երուսաղեմ գնալու սովորությունից բացարձակապես հրաժարվի:

Արդարև, վերը հիշատակվածի նման և իր կարգադրությանը համապատասխան՝ տոնախմբության օրերին, երբ Հերոբովամն անձամբ Բեթել է գնում և իր կառուցած սեղանին անձամբ զոհեր մատուցում, ահա Հուդայի երկրից մի մարգարե, Աստծու հրամանով գալով և դեմ հանդիման կանգնելով, ի լուր ժողովրդի՝ աներկյուղ հայտարարում է. «Սեղա՛ն, սեղա՛ն, ահա Դավթի ցեղից Հոսիա անունով մի զավակ պիտի ծնվի, որ կուռքերի քրմերին քեզ պիտի զոհաբերի և նրանց ոսկորները պիտի այրի»[214] (որոշակի ժամանակ անց սույն մարգարեությունը կատարվում է Հովսիա թագավորի ձեռքով, որը նույն այդ սեղանին այրում է կուռքերի քրմերի ոսկորները, ինչպես որ գրված է Դ Թագ. 23:15-ում[215]):

Որպես սույն մարգարեությունը կատարվելու նշան՝ մարգարեն հայտնում է. «Սեղանը պիտի պատռվի և վրան եղող զոհը թափվի»: Հերոբովամը, որ ներկա էր, սա լսելով, ձեռքը պարզում է, որ հրամայի բռնել նրան, և այդ պահին, ո՞վ հրաշք,

---

[214] Նա Տիրոջ խոսքն ուղղելով զոհասեղանին՝ ասաց. «Սեղա՛ն, ո՛վ սեղան, այսպես է ասում Տերը. «Դավթի տանը Հոսիա անունով մի որդի կծնվի, նա քեզ վրա կզոհաբերի մեհյանների քրմերին, որոնք քեզ վրա զոհ են մատուցում, և մարդկանց ոսկորները կայրի քեզ վրա» (*Գ Թագ. 13:2*):

[215] Բեթելի բարձունքում գտնվող զոհասեղանը, որ պատրաստել էր Իսրայելին մեղանչել տվող Նաբատի որդի Հերոբովամը, այս բարձր զոհասեղանը ևս կործանեց, նրա քարերը ջարդուփշուր անելով փոշու վերածեց, Աստարոթի կուռքերը այրեց: Հոսիան հայացքը շուռ տվեց ու տեսավ քաղաքում եղած գերեզմանները, մարդ ուղարկեց, գերեզմաններից ոսկորները հանեց ու զոհասեղանի վրա այրելով՝ պղծեց դրանք (*Դ Թագ. 23:15*):

ձեռքը գոսանում է, անկարող է լինում այն հետ տանելու, և սեղանն էլ ճեղքվելով՝ ամբողջ զոհը թափվում է գետնին[216]:

Դու Հերոբովամի համառությո՛ւնը տես. թեև հստակ հասկանում է, որ պատահածն իր անօրեն կյանքի համար Աստծուց պատիժ է, սակայն դրանից հրաժարվելու փոխարեն մարգարեին միայն խնդրում է, որ իր ձեռքը բուժելու համար Աստծուն աղաչի: Մարգարեն զիջում է, աղոթում Աստծուն, և թագավորի գոսացած ձեռքն իսկույն բժշկվում է: Իրոք, Հերոբովամը ոչ միայն արժանի չէր գթության, այլև առավել խիստ պատուհասի էր արժանի, սակայն Աստված նրան հայտնում է Իր զորությունն ու գթությունը, որպեսզի նա իր վարքն ուղղի:

Հարց ԽԸ: **Հերոբովամն ի վերջո արդյոք զղջո՞ւմ է:**

Պատասխան: Ամենևին ո՛չ, չի զղջում: Քանի որ հիշյալի չարությունն այնքան էր աճել, որ Աստծու գթությունն ու զորությունը չհասկանալով՝ անգամ շնորհակալ չի լինում: Նա միայն ցանկություն է ունենում հիշյալ մարգարեին իր տուն տանելու և ընծա տալու: Սակայն մարգարեն Աստծուց կարգադրություն էր ստացել այնտեղ չուտել և չխմել, այլ իսկույն վերադառնալ, ուստի թագավորին հայտնում է. «Եթե տանդ կեսն էլ ինձ տաս, հետդ ո՛չ կուտեմ, ո՛չ էլ կխմեմ»: Թեև Հերոբովամը այս պատասխանից նեղվում է, սակայն վախից չի կարողանում որևէ բան պատասխանել մարգարեին, որը շրջվում է և շարունակում իր ճանապարհը:

Սակայն Բեթելում մի ծերունի կար (Սուրբ գիրքը նրան *մարգարե* անվամբ է հիշատակում), որի որդիները ներկա էին

---

[216] Երբ Հերոբովամ արքան լսեց…. «Բռնեցե՛ք դրան», բայց դեպի նա մեկնված նրա ձեռքը չորացավ, նա չկարողացավ ձեռքն իրեն քաշել, զոհասեղանը փլվեց, իսկ դրա վրայի յուղոտված մոխիրը թափվեց (*Գ Թագ. 13:4–5*):

Հերոբովամի՝ զոհ մատուցելու ժամանակ: Նրանք վերադառնալով իրենց հորը պատմում են և՛ վերոհիշյալ հրաշքները, և՛ մարգարեի խոսքերը: Սա նախ՝ տեղեկանում է, թե որ ուղղությամբ է գնացել մարգարեն, և ապա՝ իսկույն վեր կենալով՝ գնում՝ Աստծու մարգարեին գտնելու, և արդարև, նրան գտնում է՝ մի ծառի ստվերում նստած, ու հրավիրում իր տանը հյուրընկալվելու և ճաշելու, որին մարգարեն պատասխանում է, որ հրահանգ չունի այդ կողմերում ուտելու կամ խմելու, սակայն ծերունին պնդում է՝ հայտարարելով. «Ես էլ քեզ նման մարգարե եմ, Աստծու հրեշտակն ինձ պատվիրեց քեզ տանել տունս և կերակրել»:

Ծերունու ասածը սուտ էր, քանի որ ո՛չ Աստծու հրեշտակն էր խոսել նրա հետ, ո՛չ էլ ինքը ճշմարիտ մարգարե էր, այլ Հերոբովամի կուռքերի քրմերից էր. մարգարեն առանց ուշադրությամբ քննելու սրա ասածները, նրա տուն գնալով, ուտում և խմում է: Մինչ սեղանի շուրջը նստած էին, ծերունին աստվածային ներշնչմամբ ասում է. «Քո՝ աստվածային հրամանին հակառակ այստեղ ուտելու և խմելու համար մարմինդ հորդ գերեզմանը չպիտի մտնի»:

Այո՛, ծերունու խոսքերը սուտ էին, սակայն այս վերջին մարգարեությունն իրականանում է: Քանի որ մարգարեի՝ Աստծու կամքին հակառակ այնտեղ ուտելու և խմելու համար Աստված բարկանալով հայտնում է, որ նրան պիտի պատժի: Աստված երբեմն անարժան մարդկանց էլ, ներշնչելով իր հրամանները, մարգարեական շնորհ է տալիս (տե՛ս ԻԳ հարցը):

Ճաշելուց հետո իր ավանակին նստած անապատով գնալիս՝ մարգարեին մի առյուծ է հանդիպում, որը սպանում է նրան, մարմինն էլ ճանապարհին ընկած է մնում: Զարմանալին այն է, որ ո՛չ ավանակը, ո՛չ էլ առյուծը մարմնից չեն հեռանում,

այլ այնքան են մնում այնտեղ, մինչև ճանապարհորդները, դա տեսնելով, գնում և քաղաքում պատմում են տխուր իրողությունը: Երբ վերոհիշյալ ծերունին լսում է, ասում է. «Առյուծն Աստծու մարգարեին է սպանել», ուստի գնում է և մարմինը բերելով ու իր համար նախատեսված գերեզմանում թաղելով՝ որդիներին պատվիրում է, որ մահվանից հետո իր մարմինն էլ նրա մոտ թաղեն:

Քանի որ ծերունին քաջատեղյակ էր, որ Դավթի ցեղից Հովսիա անունով մի թագավոր, ըստ մարգարեի խոսքի, Հերոբովամի կուռքերի քրմերի և սուտ մարգարեների ոսկորները պիտի այրի, ուստի փափագում է ճշմարիտ մարգարեի մոտ թաղվել, որպեսզի չկարողանալով իր ոսկորները տարբերել նրա ոսկորներից՝ այրվելու վտանգից կամ անպատվությունից զերծ մնա: Այո՛, հիշյալը, տեսնելով, որ նույնիսկ ճշմարիտ մարգարեն է մի փոքր պարտազանցության համար պատժվում, հավատում է, որ Հերոբովամը և նրա չար ճանապարհին հետևողները ևս անպատճառ պիտի պատժվեն, սակայն զարմանալի է, որ ուղղվելու փոխարեն նա համառում է իր ծուռ և մոլոր կյանքով, ինչպես նաև Հերոբովամը չզղջալով, որդու մահվամբ է պատժվում:

Որովհետև նրա Աբիա որդին նույն այդ ընթացքում հիվանդ է լինում, և մարդկանցից հույսը կտրելով՝ աստվածային օգնությանն ու գիտությանը չի դիմում, քանի որ բոլորովին ուրացել էր Աստծուն, և իր թագավորության մեջ որևէ աստվածահաճո անձ կամ մարգարե չկար, որ նրանց աղոթքներով որդին բժշկվեր, քանի որ բոլորին արտաքսել էր երկրից: Մանավանդ որպես աստվածներ ձուլած հորթերից անմտություն կլիներ որևէ օգնություն ակնկալել, ուստի ճարահատյալ ցանկանում է մարդ ուղարկել Աքիա մարգարեի մոտ (որ Հուդայի երկրում գտնվող Սելովում էր բնակվում) և հիվանդ որդու

բժշկության համար նույն ճշմարիտ մարգարեից խորհուրդ հարցնել:

Սակայն Հերոբովամը գիտեր, որ Աքիան բարկացած է, քանի որ մարգարեն նրա թագավոր լինելու լուրը նախօրոք ավետելու ժամանակ նաև պատվիրել էր, որ հոգա Աստծու օրենքների ու պատվիրանների պահպանությունը (տե՛ս ԽԶ հարցը), որի պատճառով մտածելով, որ միգուցե մարգարեից մահվան տխրառիթ և ցավագին խոսքեր լսի, չի ցանկանում օտար մեկին ուղարկել նրա մոտ, այլ աղքատի կերպարանքով և հագուստներով հենց իր կնոջը՝ թագուհուն է ուղարկում, և որպեսզի մարգարեն նրան որպես թագավորակին չճանաչի, հետն աղքատիկ նվերներ է ուղարկում, այսինքն՝ հաց, մեղր և չամիչ՝ կարծելով, որ այսպիսով իր նպատակին կհասնի:

Սակայն այսպիսի վարվեցողություն որդեգրելով՝ անարժան թագավորի հանցանքը է՛լ ավելի է ծանրանում: Քանի որ իմանալով, որ մեղավոր է, զղջալու փոխարեն նենգությամբ և խարդախությամբ ձեռնարկում է խաբել Աստծու մարգարեին, սակայն արդար Աստված բացահայտում է նրա նենգությունը, որ զգաստանա և ուղղվի:

Թեև այն ժամանակ Աքիա մարգարեն շատ ծեր էր, և աչքերն այնքան էին կուրացել, որ անկարող էր իր մոտ եկողներին ճանաչելու, այսուհանդերձ, Հերոբովամի կինը նրա տան շեմից ներս մտնելիս աստվածային հայտնությամբ արդեն գիտեր թե ո՛վ է, ինչո՛ւ է եկել, և ի՛նչ պետք է պատասխանել: Ուստի ծպտյալ թագուհին դեռ բերանը չէր բացել, մարգարեն ասում է. «Արի՛, մոտեցի՛ր Հերոբովամի կին, ինչո՞ւ ես ծպտված գալիս, Աստված ինձ հրամայեց, որ բարկությամբ խոսեմ քեզ հետ»: Իրոք, վճռականորեն հայտնում է, թե Հերոբովամ թագավորը ինչպե՛ս է Աստծու բարության փոխարեն օրինազանցությամբ և անզգամությամբ հատուցել, ուստի

նրա ցեղի մարդկանց դիակները քաղաքում՝ շները, իսկ դաշտում թռչունները պիտի ուտեն[217]:

Ապա մարգարեն, նրա որդու մասին խոսելով, ավելացնում է. «Վե՛ր կաց, գնա՛, քաղաք մտնելուդ պես նա կմահանա, և թող իսրայելացիները նրան արտասուքներով թաղեն, քանի որ Հերոբովամի ցեղից միայն նա պետք է գերեզման ունենա»: Թագուհին, այս սպառնալից խոսքերը լսելով, սաստիկ նվաղում է և անկարող լինելով որևէ պատասխան տալու՝ հեռանում: Երբ նա տուն է հասնում, ըստ աստվածային հրամանի՝ որդին նույն պահին մահանում է: Իսկ Հերոբովամը, որդու մահը տեսնելով և կնոջից գալիք սպառնալիքների մասին լսելով, դարձյալ քարասրտությամբ չի զղջում:

Մտապահի՛ր. վերոհիշյալ Աբիան, կուռքեր չերկրպագելով, այլ որպես իր հորը պատիժ՝ մահվան դառը բաժակն է ըմպում, Սուրբ գրքում գովեստով է հիշվում և փառավոր թաղման արժանանում: Աբիայից բացի՝ Հերոբովամի տան մյուս անդամները սրից են մահանում, և նրանց մարմիններն ուտում են շներն ու թռչունները:

Հարց ԽԹ: **Հուդայի Ռոբովամ թագավորը միշտ հնազանդվո՞ւմ է Աստծուն:**

Պատասխան: Չի հնազանդվում: Այո՛, հիշյալն առանց օրինազանցության երեք տարի է թագավորում: Հերոբովամի արտաքսած քահանաները և ղևտացիները նրա երկրում են ապաստան գտնում: Մանավանդ որպեսզի Իսրայելի թագավորն ու շրջակայքի կռապաշտներն իր թագավորություն չմտնեն և վնասներ չհասցնեն, ամրացնում է սահմանամերձ

[217] Հերոբովամի տնից ով քաղաքում մեռնի, շները պիտի ուտեն նրան, իսկ ով դաշտում մեռնի, երկնքի թռչունները պիտի կտցեն (*Գ Թագ. 14:11*):

քաղաքները, զենք, զինամթերք և զորք տեղակայում և օրըստօրե զորանալով՝ հպարտանում: Եվ ահա այս է պատճառը, որ Աստծու պատվիրանների ճանապարհը մոռանալով՝ սկսում է Աստծու օրենքներին հակառակ գործել, և ժողովուրդն էլ թագավորին հետևելով՝ բոլորը միասին խոտորվում են[218]:

Սակայն դու Ռոբովամի թշվառ վիճակի՛ն նայիր. որովհետև Աստծու օրենքներին հակառակ գործելուն պես Եգիպտոսի Սուսակիմ թագավորն անհամար զորքով նրա դեմ պատերազմի է դուրս գալիս և կառուցած բերդերը գրավելուց հետո պատրաստվում է Երուսաղեմն էլ գրավել: Ռոբովամը և ժողովրդի մեծամեծները, տեսնելով, որ եգիպտացիներին դիմակայելու հնարավորություն չունեն, հավաքվում են Երուսաղեմում, որպեսզի մտածեն իրենց տագնապալի վիճակի մասին: Ահա այդ ժամանակ Աստծու հրամանով գալով՝ Սամեաս մարգարեն ժողովվածներին հայտնում է. «Դուք Աստծուն թողեցիք, Աստված էլ՝ ձեզ»[219]:

Երբ արքան և հավաքված իշխանները լսում են այս խոսքերը, ամոթով լցված՝ հասկանում և խոստովանում են իրենց հանցանքները՝ ասելով. «Աստված արդար է»[220]: Քանի որ Եգիպտոսի թագավորը վաղուց էր թշնամացել Ռոբովամին և նրան պատուհասելու փափագ ուներ, սակայն Աստված թույլ

---

[218] Երբ Ռոբովամի թագավորությունը հաստատուն դարձավ ու հզորացավ, նա, նրա հետ նաև բոլոր իսրայելացիները, անտեսեց Տիրոջ պատվիրանները (*Բ Մնաց. 12:1*):

[219] Սամեաս մարգարեն եկավ.... և ասաց նրանց. «Այսպես է ասում Տերը. «Դուք ինձ լքեցիք, ուրեմն ես էլ ձեզ մատնելու եմ Սավսակիմի ձեռքը» (*Բ Մնաց. 12:5*):

[220] Իսրայելի իշխաններն ու արքան ամաչեցին և ասացին. «Արդար է Տերը» (*Բ Մնաց. 12:6*):

չէր տալիս, որ պատեհ առիթ գտնի: Բայց երբ Ռոբովամը ընթանում է օրինազանցության ճանապարհով, Աստված բարկանալով թշնամուն գրգռում է նրա դեմ, որ նա ուղղվի:

Արդ, քանի որ Ռոբովամը և ժողովրդի մեծավորները, իրենց սխալը հասկանալով, խոստովանում են Աստծու արդարությունը, նա, նույնպես ողորմած լինելով, կամենում է փրկել Իր սեփական ժողովրդին, ուստի նույն Սամեաս մարգարեին ասում է. «Քանի որ պատկառանք ունեցան, չպիտի թողնեմ, որ ամբողջությամբ կործանվեն, նրանց մի քիչ պիտի օգնեմ, որ այսուհետև իմանան Աստծուն և երկրավոր թագավորին ծառայելու տարբերությունը»:

Թեպետ Սուսակիմն անչափ հզոր և հաղթող էր և Երուսաղեմը կործանելու բուռն տենչ ուներ, սակայն Աստված, նրա միտքը փոխելով, չի թույլատրում, որ առաջին մտադրությունն իրականացնի, այլ միայն Ռոբովամի ուղղելու համար թույլ է տալիս, որ Եգիպտոսի թագավորին հպատակ և հնազանդ լինի: Ահա այսպես, առանց պատերազմելու հաշտվում են, սակայն տաճարի և Ռոբովանի պալատի գանձերը՝ ոսկյա վահաններն ու զենքերը, որոնք Սողոմոնն էր պատրաստել, Ռոբովամը ստիպված է լինում Սուսակիմին տալու, որի դիմաց սա նոր գրաված բերդերը վերադարձնում է Հուդային և վերադառնում Եգիպտոս: Հետագայում Ռոբովամը ստիպված ոսկյայի փոխարեն պղնձյա զենքեր է պատրաստել տալիս:

Նայի՛ր. Դավթի և Սողոմոնի՝ տաճարին ընծայած գանձերը Ռոբովամի մեղքի պատճառով թշնամու ձեռքն են անցնում: Նա, ով իր կամքով Աստծուն չի հնազանդվում, ստիպված է լինում թշնամուն հնազանդվելու և ոսկյա զենքերն էլ պղնձյա զենքերով փոխարինելու: Ռոբովամը քառասունմեկ տարեկան էր, երբ թագավոր է դառնում, և տասնյոթ տարի թագավորելուց հետո մահանում է և թաղվում հոր մոտ:

Այստեղ լա՛վ խորհիր Աստծուն և մարդկանց ծառայելու տարբերության մասին: Աստված, որ ոչնչի կարիք չունի, երկրի վրա Իր ծառային բոլոր կարևոր բաները շնորհելուց բացի, հանդերձյալ կյանքում նույնպես անվախաճան փառքի արժանացնելով, նրան փառավորում է: Սրան հակառակ՝ մարդը, որ բնույթով տկար է, հանդերձյալ կյանքում իր ծառային օգնել չկարողանալուց բացի, այս երկրի վրա էլ ինքը շատ բաների անկարող լինելով, իրեն անհրաժեշտ բաները ծառայից է պահանջում, սրա պատճառով էլ մարդու ծառան նեղությունից ամբողջովին ազատ լինել չի կարող: Որպես օրինակ՝ թագավորները իրենց հպատակներից դրամ և կամ այլ ծառայություններ են պահանջում:

Ուրեմն եթե ցանկանում ես երկու աշխարհներում էլ օգնություն և ողորմություն գտնել և հանգիստ ունենալ, Աստծուն հավատարմությա՛մբ ծառայիր, ինչպես որ Եսայի մարգարեն է հայտնապես խոսում և հաստատում, որ նրանք, ովքեր և՛ այս և՛ հանդերձյալ կյանքում հնազանդ են Աստծուն, ուրախ և երջանիկ պիտի լինեն, իսկ նրանք, ովքեր հնազանդ չեն աստվածային օրենքներին և պատվիրաններին և միայն իրենց աշխարհիկ և մարմնավոր շահերին են հետամուտ, անչափ մեծ թշվառության պիտի մատնվեն և անվախճան կյանքի հավիտենական հուսահատությամբ սրտի դառնագին հառաչանքներով պիտի լան ու ողբան[221]:

---

[221] Տերն այսպես է ասում. «Ահավասիկ նրանք, որ ինձ են ծառայում, պիտի ուտեն, իսկ դուք քաղցած եք մնալու. ահավասիկ նրանք, որ ինձ են ծառայում, պիտի խմեն, իսկ դուք ծարավ եք մնալու. ահավասիկ նրանք, որ ինձ են ծառայում, ուրախ պիտի լինեն, իսկ դուք ամոթով եք մնալու: Ահավասիկ նրանք, որ ինձ են ծառայում, սրտի ուրախությամբ պիտի ցնծան, իսկ դուք ձեր սրտի ցավից աղաղակելու եք, ձեր հոգու կսկծից ողբալու եք.... Քանի որ նոր երկինք ու նոր երկիր պիտի ստեղծեմ (*Ես. 65:13,17*):

Հարց Ծ: **Ռոբովամից հետո ո՞վ է լինում Հուդայի թագավոր Երուսաղեմում:**

Պատասխան: Նրա որդի Աբիասը: Իսրայելի Հերոբովամ թագավորը, մշտապես թշնամի լինելով Հուդայի թագավորությանը, ութ հարյուր հազար զորք է հավաքում՝ Աբիասի վրա հարձակվելու, վերջինս էլ չորս հարյուր հազար զորք է հավաքում Իսրայելի դեմ պատերազմելու համար, և երբ հավաքվում են Սոմորոն լեռան վրա, որի ստորոտին իսրայելացիների բանակն էր, քանի որ լեռան վերևից հնչած խոսքը ներքևում լսվում էր, ուստի Աբիասը, դեռ պատերազմը չսկսած, հակառակորդ թշնամու բանակին փորձում է համոզել, որ միմյանց չկոտորեն:

Այս նպատակով լեռան գագաթին կանգնած՝ ժողովրդին մեկ առ մեկ հայտնում է, որ նրանք Աստծու կամքին հակառակ են վարվում, որ Աստված հաստատապես խոստացել է թագավորությունը տալ Դավթի ցեղին, որ Հուդայի ցեղը Աստծու օրենքը տաճարում միշտ պահպանելու համար Աստված նրա հետ է, որ նրան ընդդիմացողն անպատճառ կպատժվի: Թեև Աբիասը այս խոսքերով ցանկանում է խրատել Հերոբովամին և Իսրայելին, որ իրենց սխալը հասկանալով՝ Աստծուց վախենան: Սակայն Հերոբովամը, Աստծու երկյուղը սրտից հանելով և մանավանդ իր զորքի բազմությանն ապավինելով, մինչ Աբիասը շարունակում էր իր խրատական խոսքը, իր զորքից մի քանի գունդ դարանակալելով՝ հանկարծ շրջապատում են Աբիասին և նրա զորքը:

Երբ սրանք իրենց շրջապատված են գտնում, թեև սաստիկ վախենում են, սակայն բոլորն էլ, ապավինելով Աստծուն, օգնություն են խնդրում, և երբ քահանաներն էլ են սկսում փողեր հնչեցնել, ահա մի հրաշքով՝ Աստծու հրամանով, Հերոբովամի զորքի սրտերը երկյուղով են լցվում, և նրանք

բոլորովին շփոթվում են[222]: Երբ առանց պատճառը հասկանալու սկսում են փախչել, Հուդայի զորքը, սրանից քաջալերվելով, սկսում է նրանց կոտորել այնպիսի սաստկությամբ, որ այդ օրը Իսրայելի թագավորությունից հինգ հարյուր հազար մարդ միանգամից զոհվում է:

Աբիասը, այս հաղթանակից հզորանալով, Հերոբովամի երկրից քաղաքներ է գրավում, քանի որ վերջինս ամբողջովին տկարացել էր: Այո՛, Աբիասը աստվածային օգնությամբ մեծ հաղթանակ է շահում, սակայն հետագայում հոր՝ Ռոբովամի վատթար վարքից չի խուսափում: Աբիասը, հազիվ երեք տարի թագավորելով, մահանում է և թաղվում Երուսաղեմում:

Հարց ԾԱ: **Ո՞վ է հաջորդում Աբիասին:**

Պատասխան: Նրա Ասա որդին: Սա հոր չար կյանքին չի հետևում և ամեն կերպ հպատակվում է աստվածային օրենքներին: Քանի որ Ռոբովամի և Աբիասի ժամանակ ժողովուրդը, բարձր լեռների վրա սեղաններ, անտառներ և տներ կառուցելով, օրենքին հակառակ, կուռքերին զոհեր և խունկ է նվիրաբերում, Ասան, այս ամենը կործանելով, վերացնում է: Մանավանդ կուռքեր երկրպագելու համար իր մորը տիկնությունից զրկում է և նրա պաշտած կուռքերն էլ փշրելով՝ Երուսաղեմի մերձակայքում գտնվող Կեդրոնի ձորում այրում, որպեսզի հեղեղը դրա փոշիներն քշել տանելով՝ հետքն էլ անգամ չմնա:

Թեև Ասան վերացնում է իր իշխանության ներքո վայրերում գտնվող բոլոր կուռքերը, սակայն մի քանի բարձրաբերձ վայրերում կառուցված սեղանները, որոնց վրա ժողովուրդը Աստծուն զոհաբերություններ էր անում, չի շտապում

[222] Նրանք աղաղակեցին Տիրոջը, քահանաները փողեր հնչեցրին…. Տերը Աբիասի ու Հուդայի երկրի մարդկանց առջև կոտորեց Հերոբովամին ու իսրայելացիներին (*Բ Մնաց. 13:14*):

վերացնելու: Սակայն տաճարից բացի՝ այլ վայրում զոհ չմատուցելու հատուկ հրաման կար, ուրեմն ժողովրդի այդ վարքը օրենքին հակառակ էր: Ինչքան էլ Ասան այդ վայրերը չի կործանում, բայց նրա սիրտն ամեն ինչով Աստծու առջև ուղիղ լինելով՝ Աստծու ողորմությամբ տասը տարի թշնամիների հարձակումներից ազատ է լինում, և այս ժամանակ, երբ բոլորովին հանգիստ էր, շատ քաղաքներ և բերդեր է ամրացնում, որպեսզի թշնամին չկարողանա հարձակվել և վնասել երկրին: Ասան Հուդայի երկրում՝ երեք հարյուր հազար, իսկ Բենիամինի հողում երկու հարյուր վաթսուն հազար զորք է պահում:

Խրա՛տ ընդունիր. Ասան չար կյանքից զգուշանում է և Աստծու կամքին հպատակվում, և նրա ժողովուրդն էլ ամեն կերպ օրենքին հնազանդ և հանգիստ է լինում, քանի որ ժողովուրդը ընդհանրապես սիրում է հարմարվել իր իշխանավորի վարքին: Ուրեմն, եթե իշխանավորները ցանկանում են ժողովրդին մոլորությունից և վնասներից հեռու պահել, նախ իրենք պետք է հեռու մնան չարությունից և առաքինություն գործեն:

Հարց ԾԲ: **Երբ Հուդայի թագավորն ու ժողովուրդը այսպես զգուշավոր էին, ինչպիսի՞ն էին Իսրայելի թագավորն ու ժողովուրդը:**

Պատասխան: Շատ վատթար և թշվառ վիճակում էին: Ինչպես քանիցս հիշատակել ենք, Հերոբովամը Աստծուն ուրացել էր, և նրա ժողովուրդն էլ դժբախտ էր: Երբ Հերոբովամը մահանում է, նրա որդի Նաբատն է թագավորում, սակայն հոր չար նկարագրին հետևելով, հազիվ երկու տարի թագավորելով՝ թշվառական մահ է ունենում: Որովհետև թշնամին Գաբաթոնը գրավել էր, և ամբողջ Իսրայելի զորքը թշնամու դեմ էր գնում, որպեսզի ողջ զորությամբ պատերազմելով՝ ազատագրի Գաբաթոնը:

Արդ, այդ նույն պահին Բասա անունով մեկը նենգաբար սպանում է թագավորին, և ինքը թագավորելով, Հերոբովամի ցեղի բոլոր մարդկանց սպանելուց բացի, մինչև իսկ անասուններին էլ է կոտորել տալիս. ահա, այսպիսով, իրականանում է նախապես Աստծու հրամանով Աքիա մարգարեի հայտնած մարգարեությունը[223]:

Ճշմարիտ է, որ Բասան, Հերոբովամի ցեղը կոտորելով, արդարություն է հաստատում, սակայն նա էլ է սրա չար կյանքին հետևում, և մանավանդ չարագույն էր, քան իր նախորդը, ուստի Աստծու հրամանով Հեու մարգարեն շտապում է հանդիմանելու նրա չարությունը և միևնույն ժամանակ հայտնում է, թե ինչ կերպ պետք է պատժվի, սակայն Բասան ուղղվելու փոխարեն շարունակում է մնալ մոլորության մեջ:

Սրանից բացի, Հուդայի Ասա թագավորի հետ թշնամանալով, Բասան ջանում է մեծ վնասներ հասցնել նրան, սակայն Աստծու ողորմությամբ Ասան զերծ է մնում նրա նյութած չարիքից: Քանի որ Բասայի դրդմամբ Եթովպիայի թագավոր Զարեհը մեկ միլիոն զորքով և երեք հարյուր մարտակառքերով շարժվում է Ասայի վրա, և Ասան էլ նրա դեմ պատերազմի է պատրաստվում, սակայն թշնամու ահագին բազմությունը տեսնելով՝ դիմում է Աստծուն՝ ասելով. «Ո՛վ մեր Տեր Աստված, մենք Քո անունով ենք եկել, մեր հույսն ու ապավենը Դու ես, Քո ծառային զորությո՛ւն տուր, մենք Քո զորությանն ենք ապավինում, Ո՛վ մեր Տեր Աստված»[224]:

Բարեպաշտ թագավորի աղոթքը լսելի է լինում, և Աստծու արհավիրքի երկյուղը պաշարում է թշնամու սիրտն այնպես,

---

223 *Գ Թագ. 14*:

224 Ասան դիմեց իր Տեր Աստծուն՝ ասելով.« Զորացրո՛ւ մեզ, Տե՛ր Աստված մեր, քանզի քեզ ենք ապավինում և քո անունով ելանք այս բազմության դեմ» (*Բ Մնաց. 14:11*):

որ շփոթված սկսում են շտապով փախչել, որոնց հետապնդելով՝ Ասայի զորքը տիրում են նրանց քաղաքներին և գյուղերին, միաժամանակ փախչողներին այնպես են կոտորում, որ ոչ մեկը ողջ չի մնում, և մեծ քանակությամբ ունեցվածքով ու անասուններով, անասելի ցնծությամբ և հաղթանակի ուրախությամբ Երուսաղեմ են վերադառնում:

Այսպիսի մեծ հաղթանակը ոչ թե մարդկային կարողության, այլ մանավանդ աստվածային օգնության արդյունք է, և սա բոլորին տեղեկացնելու համար Ազարիաս մարգարեն, թագավորին և ժողովրդին ընդառաջ դուրս գալով, ասում է. «Դուք հնազանդվեցիք Աստծուն, ձեր թշնամին պատուհասի հանդիպեց, արդ, եթե Աստծուն փնտրեք, կգտնեք, իսկ եթե Նրան թողնեք, Նա էլ ձեզ կթողնի»[225]: Այսպիսով, մարգարեն Իսրայելը ներկայացնում է որպես շոշափելի օրինակ, որն իր մեղքի համար Աստծուց լքվել է:

Արդարև, Ասան արդեն նախապես իր երկրից բոլոր կուռքերը վերացրել էր, սակայն հիշյալ մարգարեի խոսքերը վերստին ուշադրությամբ քննելով՝ մանավանդ նոր գրված երկրներում բնաջնջում է կուռքերն ու օրենքին հակառակ ամեն ինչ: Սրանից բացի՝ ավարից յոթ հարյուր արջառ և յոթ հարյուր ոչխար է տաճարում զոհաբերում Աստծուն: Ապա և՛ ժողովուրդը, և՛ թագավորը միասին ուխտ են անում, մեծ հանդես կազմակերպելով, փողեր հնչեցնելով, ամբողջ սրտով երդվում են հպատակվել Աստծու օրենքներին և որոշում են, որ օրինազանցը մահապարտ է:

Հարկ է հիշատակել, որ Իսրայել երկրից շատերը, հիշյալ հաղթանակը տեսնելով, հասկանում են, որ Աստված Ասա

---

[225] Եվ Ազարիասը.... ասաց.... Արդ, եթե դուք նրան փնտռեք, նա կհայտնվի ձեզ, և եթե լքեք նրան, նա էլ ձեզ կլքի (*Բ Մնաց. 15:2*):

թագավորի հետ է, ուստի Երուսաղեմ գալով՝ նրա իշխանությանն են հպատակվում:

Ուրեմն քա՛ջ ըմբռնիր, թե Աստծուն հավատարիմ լինելու օգուտն ինչքան մեծ է. ահա երբ Ասան ուղիղ սրտով Աստծու կամքին համապատասխան է շարժվում, Աստծու ողորմությամբ երկար տարիներ, առանց պատերազմի հանգիստ և ապահով է մնում:

Այնուհետև Իսրայելի Բաաս արքան թշնամական դիտավորությամբ Ասայի երկրի Ռամա կոչվող վայրում սկսում է բերդ կառուցել, որպեսզի Երուսաղեմ գնացողներին արգելի: Այո՛, Բաասի այս ձեռնարկը ծանր և անհանդուրժելի գործ էր, սակայն այն խոչընդոտելու համարձակություն չունենալով՝ տաճարից և պետական գանձերից ոսկի և արծաթ է որպես ընծա ուղարկում Դամասկոսի ասորի թագավորին, որպեսզի նրա միջոցով Բաասի անօրեն թշնամությունից ազատվի: Որովհետև Բաասը իր զորությամբ անկարող էր վնասելու Ասային, ուստի վերոհիշյալ ասորիների թագավորին ապավինելով՝ մի այդպիսի հանդուգն գործողության է դիմում, որի պատճառով Ասան էլ է ընծաներ ուղարկում, որ դեպի իրեն գրավի նրան:

Ուշադրության է արժանի այն, որ Բաասը և Ասան, նույն ժողովրդից և եղբայր լինելով, միայն աշխարհիկ մեծության և շահի համար այնքան են թշնամանում, որ հանուն վրեժխնդրության՝ Դամասկոսի կռապաշտ թագավորին են ապավինում և ընծաներ ուղարկելով՝ թախանձանքներով նրա պաշտպանությունը խնդրում: Նա էլ, քանի որ նրանցից և ոչ մեկին հավատարիմ բարեկամ չէր, օգնում է միայն այն կողմին, որն իրեն առավել շահավետ է թվում: Այս պարագայում Ասայի ուղարկած գումարը ավելի մեծ լինելով՝ շտապում է՝ Բաասի վրա զորք ուղարկելու և ավերելու նրա երկիրը:

Բաասը, սա տեսնելով, դադարեցնում է վերոհիշյալ բերդի կառուցումը և այնտեղից հեռանում: Այն ժամանակ Ասան քանդել է տալիս նոր կառուցած բերդը և դրա շինանյութով կառուցում է Գաբաա և Մասփա ամրոցները: Թեև Ասան, Դամասկոսի թագավորի օգնությամբ ազատվելով, շատ ուրախ էր, սակայն Անանիա մարգարեն, Աստծու հրամանով նրա մոտ գալով, հետևյալն է ասում. «Դու ասորիների թագավորին և ոչ Աստծուն հույսդ դրեցիր, եթովպացիները ահագին բազմությամբ հարձակվել էին քեզ վրա, սակայն դու Աստծու օգնությամբ հաղթեցիր նրանց, քանի որ Աստված օգնում է նրան, ով մաքուր սրտով ապավինում է Իր զորությանը, եթե դու հույսդ Աստծու վրա դնեիր, իսրայելացիների զորքը քո ձեռքից չէր կարող ազատվել, արդ, այս արարքով դու սխալվեցիր, այդ է պատճառը, որ ձեր միջև պատերազմը անպակաս պիտի լինի»[226]:

Դժբախտաբար, Ասան, սույն խրատական խոսքերը լսելով, զղջալու փոխարեն բարկանում է և բանտարկում համարձակախոս մարգարեին և խստությամբ է վարվում նրանց հետ, ովքեր սրա համար համարձակվում են մեղադրել իրեն: Թեպետ Ասան մինչ այդ պահը ապօրինի վարք չուներ, սակայն, այնուամենայնիվ, մարդ էր և այս անգամ սխալվում է և իր սխալի հետևանքները կրում երեք տարի, քանի որ ոտքերն ախտահարվելով՝ ծանր հիվանդանում է, և դարձյալ Աստծուն աղաչելու փոխարեն միայն բժիշկներից է օգնություն խնդրում: Ասան, քառասունմեկ տարի թագավորելով, մահանում է. նրան մեծ շուքով թաղում են Սիոնում՝ իր կառուցած գերեզմանում:

---

[226] Արդ, քանի որ դու այդ բանն անտեսեցիր, սրանից հետո քո երկիրը պատերազմներ է ունենալու (*Բ Մնաց. 16:9*):

Հարց ԾԳ: **Ո՞վ է հաջորդում Ասային:**

Պատասխան: Նրա Հովսափաթ որդին: Ինչպես հայրը նախապես հնազանդ էր Աստծուն, այդպես էլ Հովսափաթը կատարելապես հնազանդվում է աստվածային օրենքներին և պատվիրաններին, որի պատճառով էլ միշտ հաղթում է Իսրայելի թագավորին, այնպես որ հոր՝ Եփրեմի երկրում գրված քաղաքներում վերակացու իշխանավորներ է կարգում: Նույն ձևով իր իշխանության սահմաններում օրենքին հակառակ ոչ մի վայր չի թողնում և Հուդայի քաղաքներում քահանաներ և ղևտացիներ է նշանակում, որոնց պաշտոնը ժողովրդին Աստծու օրենքներն ուսուցանելն էր, և այս ամենը այնքան հաճելի էր բոլորին, որ սկսում են առատ ընծաներ նվիրել թագավորին:

Դու Աստծու ողորմությունը տե՛ս. որովհետև Հովսափաթը Աստծուն հնազանդ էր, Աստված շրջակա թագավորների սրտերը երկյուղ է զցում, և սրանք ոչ միայն չեն պատերազմում Հուդայի թագավորի դեմ[227], այլև ոսկի արծաթ և այլ ընծաներ են նրան ուղարկում: Օրինակ՝ արաբները Հովսափաթին տարեկան յոթ հազար յոթ հարյուր խոյ և նոխազ են նվիրում: Ուստի օրըստօրե նրա զորությունը և փառքը այնքան են աճում, որ շատ քաղաքներ է շենացնում և շինություններ կառուցում: Մանավանդ մեկ միլիոնից ավելի քաջ և ընտիր զորք է պատրաստում, որոնց զգուշության համար միշտ իր հրամանատարության ներքո է պահում: Օրինա՛կ վերցրու. Հովսափաթը, ժողովրդի ճշմարիտ բարիքին սիրահար, մեծ հետևողականությամբ նախանձախնդիր է լինում օրենքի պահպանությանը, որի համար էլ և՛ ինքն է փառավորվում, և՛ ժողովուրդն էլ վտանգից զերծ է մնում:

---

[227] Տիրոջ սարսափն էր պատել Հուդայի երկրի շուրջը գտնվող երկրների թագավորներին, ու նրանք ոչ մի պատերազմ չէին մղում Հոսափատի դեմ (*Բ Մնաց. 17:10*):

Սրան հակառակ՝ իսրայելացիների թագավորները, օրենքին հակառակ վարվելով, ոչ միայն իրենք անձնապես թշվառ և դատապարտելի են լինում, այլև իրենց պատճառով Իսրայելի ժողովուրդը շատ հաճախ վնասների և պատիժների է ենթարկվում: Քանի որ վերոհիշյալ Բաաս թագավորը քսանչորս տարի թագավորելուց հետո մահանում է, նրան հաջորդում է Էլա որդին: Սակայն հոր չար վարքին հետևելու պատճառով հազիվհազ երկու տարի է թագավորում: Քանի որ մի օր իր մայրաքաղաք Թերսայում՝ մի պաշտոնյայի տանը, կերուխումի և զվարճությունների անձնատուր եղած ժամանակ Զամբրի անունով իր պալատականներից մեկը սպանում է. վերջինս, նրա փոխարեն թագավորելով, և՛ Բաասի, և՛ Էլայի ցեղը ու նրանց ազգականներին և բարեկամներին անխնա բնաջնջում է, ոչ մեկին չի խնայում:

Այսպիսով, Բաասի ցեղի կորստյան մասին Հեռ մարգարեի վճիռը (տե՛ս Ծ հարցը) իրագործվում է Զամբրիի միջոցով: Սակայն քանի որ սա էլ իր նախորդի՝ Բաասի վարքն է որդեգրում, յոթ օր հետո կրակի մեջ այրվելով՝ մահանում է: Այն ժամանակ իսրայելացիների բանակը Գաբաթոն կոչվող վայրում պատերազմում էր թշնամու դեմ, և զորքը, լսելով Զամբրիի թագավոր լինելը, մերժում է նրան և Ամրի սպարապետին թագավոր հռչակում: Ամրի սպարապետը, անմիջապես զորք հավաքելով, Զամբրիի դեմ է շարժվում և պաշարում մայրաքաղաքը: Թշվառ Զամբրին, բոլոր կողմերից հուսահատ, հրդեհում է իր պալատը և ինքն էլ, յուրայինների հետ այրվելով, արժանի պատիժ գտնում:

Թեպետ Ամրին թագավոր է դառնում, սակայն դա ժողովրդի մեծամեծների գիտությամբ չի լինում, և նրանք Թամնի անունով մեկին են թագավոր կարգում: Այսպիսով, երկու թագավորներով սկսելով իշխանություն վարել՝ ակամա

ժողովուրդն էլ երկու կողմի է բաժանվում, որոնք սկսում են միմյանց հակառակ վարվել, սակայն Ամրիի կողմը հաղթող է դուրս գալիս, քանի որ չորս տարվա հակամարտությունից հետո Թամնին մահանում է, և ամբողջ Իսրայելի ժողովուրդը, որպեսզի էլ ավելի չվնասվի, պարտավորվում է ընդունելու Ամրիի թագավորությունը:

Ամրին, Թերսա մայրաքաղաքում վեց տարի թագավորելուց հետո ոմն Սամերից Սոմորեն լեռը գնելով և այնտեղ քաղաք կառուցելով, անունը Սամիրոն է դնում, որտեղ էլ տեղափոխում է իր թագավորական գահը, և այնուհետև Իսրայելի բոլոր թագավորները միշտ այնտեղ են բնակվում: Ամրին, տասներկու տարի թագավորելով, մահանում է և առաջին թագավորն է լինում, որ թաղվում է Սամիրոնում, որը հռչակավոր Սամարիան է:

Հարց ԾԴ: **Ամրիի փոխարեն ո՞վ է դառնում Իսրայելի թագավոր:**

Պատասխան: Նրա Աքաաբ որդին: Ինչպես որ Ամրին է հետևում Հերոբովամի ամբարիշտ կյանքին, այդպես էլ Աքաաբը, նույն չար ճանապարհը բռնելուց բացի, Է՛լ ավելի է չարանում, որովհետև Սիդոնի թագավոր Հոբաղի դստերը՝ Հեզաբելին՝ իրեն կնության առնելով, որը Բահաղ կուռքն էր պաշտում, հանուն նրա սիրո, Սամարիայում նույնպես կռատուն և սեղան կառուցելով ու անտառ տնկելով, սկսում է պաշտել Բահաղ կուռքը:

Իսրայելի առաջին թագավոր Հերոբովամը, Իսրայել երկրում կռապաշտությունն ընդհանուր դառնալու պատճառ է լինում, նրա հաջորդներն էլ, այդ վարքը շարունակելով, իրենց սոսկալի պատիժն են կրում, և Աքաաբն էլ նրանց օրինակից խրատվելու փոխարեն, նրանցից ավելի վատթար լինելով,

առավելագույն պատժի էր արժան, սակայն Աստված չի ցանկանում նրան անմիջապես պատժել, այլ ցանկանում է նրա պաշտած կուռքերի անօգուտ լինելը ցույց տալ, որպեսզի սա զղջա և իր անօգուտ ճանապարհից հետ դառնա: Այս նպատակով Եղիա մարգարեն, Աստծու հրամանով Աքաաբի մոտ գալով, հանդիմանական եղանակով է խոսում և վճիռ կայացնում՝ ասելով. «Հետագա տարիներին ո՛չ ցող և ո՛չ էլ անձրև չպիտի տեղա, այլ միայն երբ ե՛ս կամենամ»[228]:

Լա՛վ մտապահիր. Աքաաբը երկնքի և երկրի ստեղծող Աստծուն ուրանում և կուռքերն է երկրպագում, և ահա որպես պատիժ և խրատ՝ Եղիա մարգարեն արգելում է, որ անձրև գա, որպեսզի սով լինի: Սրանից բացի՝ վճռում է՝ երբ ինքը կամենա, այն ժամանակ միայն անձրև գա, որպեսզի Աքաաբն այդ ամենը բնական արհավիրք չհամարի, այլ իր մեղքերի համար Աստծուց պատիժ համարելով՝ չար ճանապարհից հետ դառնա և ապաշխարի:

Եղիան իր խոսքն ասելուց հետո գնում է Հորդանանի հակառակ ափը և թաքնվում Քոռաթի ձորում, որտեղ առատ ջուր էր հոսում: Աստծու հրամանով ագռավները Եղիային առավոտյան և երեկոյան հաց ու միս են բերում սննդի համար:

Այսպես Եղիան միառժամանակ այնտեղ է ապրում, իսկ Իսրայել երկրում անձրև չլինելու պատճառով սովը սաստկանում է, և ժողովուրդն էլ՝ խիստ տառապում: Ուստի Աստված, ժողովրդին գթալով և մանավանդ ցանկանալով հատուկ ողորմություն անել Սարեփթա քաղաքում ապրող մի որբևայրու, հանկարծ ցամաքեցնում է հեղեղատի ջուրը, և Եղիան ծարավ է մնում, և Աստված նրան ուղարկում է Սարեփթա

---

[228] Եղիա մարգարեն ասաց Աքաբին. «Կենդանի է երկնային զորությունների Տեր Աստվածը.... եթե այս տարիներին ցող իջնի կամ անձրև գա, ապա այդ կլինի միայն իմ խոսքով» (*Գ Թագ 17:1*):

քաղաքի նույն այդ այրի կնոջ մոտ, որը պետք է հյուրընկալեր մարգարեին և կերակրեր:

Անշուշտ, մարգարեն ուր էլ լիներ, Աստված կարող էր մի որևէ ձևով պահել նրան, սակայն ցանկանում է իր անհուն ողորմությունը և մարդասիրությունը տալ նրան, և սովորեցնել, որ երբ ժողովուրդը մեղանչելով պատժի է արժանի լինում, պետք չէ մեղքի մեծությանը համապատասխան խստությամբ պատժել նրան: Այս է պատճառը, որ անչափ հուսահատ վիճակում գտնվող այրի կնոջ մոտ է ուղարկում նրան, որպեսզի ժողովրդի խղճալի վիճակը տեսնելով՝ նրա մարդկային սիրտը գթությամբ լցնի:

Ըստ Աստծու հրամանի՝ Եղիա մարգարեն Սարեփթա քաղաք է գնում այն ժամանակ, երբ հիշյալ այրի կինը քաղաքի դարպասների մոտ փայտ հավաքելիս հանդիպում է մարգարեին. սա նրանից խմելու ջուր է խնդրում, և երբ կինը գնում է՝ ջուրը բերելու, հետևից ձայն է տալիս, որ մի կտոր էլ ուտելու հաց բերի: Այն ժամանակ որբևայրի կինը հայտնում է, որ ուտելիք չունի, և դա հաստատում է երդումով: Բայց նաև ավելացնում է, որ տանը մի բուռ ալյուր և մի փոքր էլ յուղ ունի և ահա փայտ է հավաքում, որ հաց թխի, իր զավակների հետ վերջին անգամ հաց ուտի և հետո մահանա:

Իրոք, քանի որ խեղճ և թշվառ կինը, մի փոքր ալյուրից և մի չնչին յուղից բացի, տանը ոչինչ չուներ և ուրիշներից էլ հույս ու ակնկալիք չէր կարող ունենալ, ուրեմն նրան զավակների հետ մնում էր սովից մահանալ: Եղիան, այս խոսքը լսելով, պատասխանում է. «Քաջալերվի՛ր կին, դու նախ՝ ինձ համար կերակո՛ւր պատրաստիր, ապա՝ քո և զավակներիդ համար, քանի որ այսպես է հրամայում Տերը, որ մինչև անձրևի գալը, ալյուրն ու յուղը երբեք չպակասեն»: Խեղճ կինը, Եղիայի խոսքին հավատալով, նրան իր տուն է տանում և նախ նրա համար

կերակուր է պատրաստում և կերակրում, որով էլ աստվածային ողորմությամբ մինչ անձրևի գալը ո՛չ այլուրն է պակասում, ո՛չ էլ յուղը, և այսպիսով հանգիստ ապրում է: Եղիան միառժամանակ մնում է այնտեղ:

Հետո մահանում է կնոջ որդիներից փոքրը, և կինը Եղիային ասում է. «Դու սուրբ մարդ ես, դրա պատճառով որդիս մահացավ»: Քանի որ մտածում էր՝ ինքը մեղավոր մեկն է, իսկ մարգարեն՝ սուրբ, և սրբությանը անարժանաբար ծառայելու համար որդու մահը պատիժ է համարում, սակայն մարգարեն, մահացած մանկանը գրկելով, իր սենյակ է տանում և այնտեղ ջերմեռանդորեն աղոթելով՝ հարություն է տալիս և հանձնում մորը:

Հիշյալ կնոջ առաքինությունից օրինա՛կ վերցրու. ճշմարիտ է, որ Աստված, նրա թշվառ վիճակը գթալով, Եղիային Սաբեփթա է ուղարկում, սակայն կինն էլ իր կատարյալ հավատքով ցույց է տալիս, որ ինքն արժանի է ոչ միայն այդ աստվածային գթությանը, քանի որ իրեն ոչ միայն հանգիստ ապրելու հնարավորություն է ընձեռվել, այլև իր որդին, որի մահը խոցել էր մայրական սիրտը, մարգարեի՝ Աստծուն խնդրանք ուղղելու արժանի աղոթքով կենդանի իրեն է վերադարձվում, որ աստվածային շնորհների մի առանձնակի պարգև և ընծա է:

Դու Աքաաբի չարությո՛ւնը տես. սրա մեղքի պատճառով է անձրևը դադարում, սակայն նա զգաստանալու և «մեղա՛» ասելու փոխարեն Եղիա մարգարեին է որոնում, որ սպանի: Երբ որոնելով չի կարողանում գտնել, կասկածելով, որ այդ կողմերի մարդիկ են թաքցրել մարգարեին, սկսում է չարչարել նրանց: Մանավանդ նրա անզգամ կինը բոլոր ճշմարիտ մարգարեներին, որոնք հայտնաբերվում են Իսրայել երկրում, կարողանում է ձերբակալել, սպանել է տալիս: Սակայն Աբդիո անունով մի բարեպաշտ մարդու միջոցով հարյուր հոգի կարողանում են ազատվել. հիսունին՝ մի քարանձավում, մյուս

հիսունին՝ մի այլ քարանձավում թաքցնելով՝այդ բարեպաշտ անձնավորությունը պահում էր նրանց: Ճշմարիտ է, որ Աքաաբ թագավորի պալատականներից էր, սակայն կուռքեր չերկրպագելով և առ Աստված ունեցած սիրուց և հնազանդությունից դրդված՝ Հեզաբելի չար և անողորմ հալածանքներից փրկում է մարգարեներին:

Այսպես երեք տարի ո՛չ ցողը, ո՛չ էլ անձրևը չեն թրջում երկիրը, սովն օրըստօրե սաստկանալով՝ ամբողջ Իսրայելը անոթի և ծարավ է դառնում: Սակայն ամբարիշտ թագավորը փոխանակ իր հպատակների սույն դառնաղետ վիճակի մասին խորհելու, իր ձիերի և ջորիների մասին է հոգում, քանի որ սրանց համար էլ խոտ և դարման չկար: Ուստի սա իր վստահությանը արժանացած վերոհիշյալ Աբդիո պալատականի հետ շրջագայության է դուրս գալիս, որ թերևս ձորերի եզերքին, հեղեղատների մոտ կամ էլ աղբյուրների ակունքներում մի քիչ խոտ և կանաչ գտնեն: Արդ, ինչպես վերը հիշատակվել է, ողորմած Աստված, ժողովրդին գթալով և ցանկանալով անձրև տալ, Եղիա մարգարեին հրամայում է գնալ և ներկայանալ թագավորին:

Երբ մարգարեն Աստծու հրամանով գնում էր Աքաաբի մոտ, հանկարծ նրա առջև է դուրս գալիս Աբդիոն, որը, թագավորից բաժանվելով, այլ վայրերում էր խոտ փնտրում, և որը մարգարեին տեսնելուն պես զետնատարած երկրպագությամբ ողջունում է Աստծու մարդուն: Եղիան ասում է. «Գնա՛, թագավորին հայտնի՛ր իմ գալուստը»: Սակայն Աբդիոն, վախենալով, որ լուրը հայտնելու համար իր բացակայելու ժամանակ թերևս Աստված Եղիային մի այլ տեղ փոխադրի, և եթե նրան չկարողանա գտնել, Աքաաբն անպատճառ իրեն մահվան կդատապարտի, չի ցանկանում գնալ:

Այն ժամանակ Եղիան երդումով հաստատում է, որ հենց այդ օրը պետք է հանդիպի թագավորին, ուստի գնալով՝

Աբդիոն Աքաաբին հայտնում է լուրը: Քանի որ թագավորն արդեն որոնում էր նրան, իսկույն ընդառաջ է դուրս գալիս, սակայն հարգանքով խոսելու փոխարեն բարկացած դեմքով ասում է. «Իսրայելը կործանողը դո՛ւ ես»: Սրան Եղիան առանց երկյուղի պատասխանում է. «Ես չեմ, այլ դու և քո հոր տունը, որ Աստծուն թողնելով՝ Բահաղի հետևից գնացիք»:

Հետո իշխանությամբ հրամայում է, որ Կարմեղոս լեռան մոտ հավաքի Իսրայելի ժողովրդին և Բահաղի բոլոր 450 մարգարեներին, անտառների 400 մարգարեներին (որոնց Հեզաբելն էր կերակրում), և ինքն էլ մեկնում է հիշյալ լեռ: Այս Կարմեղոս լեռը ԻԲ հարցում հիշատակված Կարմեղոս լեռը չէ: Եղիան և նրա Եղիսե աշակերտը ընդհանրապես այստեղ էին բնակվում. մանավանդ սույն լեռը մեծապես հռչակվում է նրանց այս լեռան վրա գործած զանազան հրաշքներով, ինչպես հայտնի է Սուրբ գրքից:

Հարց ԾԵ: **Աքաաբը բարկանո՞ւմ է Եղիա մարգարեի խոսքերի պատճառով:**

Պատասխան: Այո՛, բարկանում է, սակայն վախենալով մարգարեին որևէ վնաս չի կարողանում հասցնել: Քանի որ թագավորին ծանր է թվում նրա հրամանով Կարմեղոս լեռան մոտ ամբողջ ժողովրդին և Բահաղի սուտ մարգարեներին (որոնք Հեզաբելի պաշտպանության ներքո էին) հավաքելը, ուստի չի ցանկանում կատարել սույն հրամանը, և այս է պատճառը, որ սովը վեց ամսից ավելի է տևում, քանի որ երրորդ տարվա ավարտին պետք է անձրևեր, սակայն հետաձգվում է ևս վեց ամիս[229]:

---

[229] Արդարև, ասում եմ ձեզ, որ Եղիայի օրով Իսրայելում բազում այրիներ կային, երբ երկինքը փակվեց երեք տարի ու վեց ամիս, և ամբողջ երկրի վրա մեծ սով եղավ (*Ղուկ. Դ:25*):

Պարզ է, որ առանց Եղիայի հրամանը կատարելու անձրև չէր գալու, և Աքաաբը Իսրայելի ժողովրդին և սուտ մարգարեներին ճարահատյալ հրավիրում է՝ վերոհիշյալ լեռան մոտ հավաքվելու: Եղիան, որն արդեն իսկ այնտեղ էր, ժողովրդին իր մոտ կանչելով, ասում է. «Մինչև ե՞րբ երկու կողմի հակամետ պիտի լինեք, Ո՞վ է զորությունների Տերը, Նրա՛ն պաշտեք»[230]: Ժողովուրդը լռում է, քանի որ շատերը չէին ընդունել կուռքերի զորավոր լինելը, սակայն Աքաաբից երկյուղելով լռում են, ուստի Եղիան որոշում է բացահայտ հրաշքով ամբողջ ժողովրդին համոզել, որ կռապաշտությունից հեռու մնան, որն իսրայելացիներին ամեն կերպ վնասակար և վտանգավոր է:

Արդ, քանի որ Աստծու մարգարեներից միայն ինքը՝ Եղիան էր ներկա, և սուտ մարգարեները 850 հոգի էին, այս է պատճառը, որ ժողովրդին առաջարկում է երկու եզ բերել, և սուտ մարգարեները այդ եզներից որը ցանկանան, կտրտելով փայտերի վրա թող դնեն, իսկ ինքը մյուսը կտրտելով փայտի վրա կդնի առանց կրակի. նրանք թող իրենց աստվածների անունը կարդան, իսկ ինքն իր Աստծու անունը կկանչի, և որը երկնքից կրակ տա, նա է Աստված: Երբ ժողովուրդն ընդունում է Եղիայի սույն առաջարկը, վերջինս Բահաղի սուտ մարգարեներին ասում է. «Դուք մեծաթիվ եք. առաջինը դո՛ւք սկսեք»: Արդարև, նրանք վերոհիշյալ եղանակով ամեն ինչ պատրաստելուց հետո սկսում են Բահաղին օգնության կանչել՝ ասելով. «Լսի՛ր մեզ, ո՛վ Բահաղ, լսի՛ր ծառաներիդ»:

Սակայն երբ առավոտից մինչ կեսօր նրանց՝ սեղանի մոտ պտտվելուց հետո ոչ մի նշան չի լինում, Եղիան, նրանց

---

[230] Եղիան, մոտենալով ամբողջ ժողովրդին, ասաց. «Մինչև ե՞րբ պիտի կաղաք երկու ոտքով: Եթե Տերը Աստված է, գնացե՛ք նրա հետևից, և եթե Բահաղն է, նրա՛ հետևից գնացեք»: Ժողովուրդը պատասխան չտվեց (*Գ Թագ. 18:21*):

ծաղրելով, ասում է. «Բարձրաձա՛յն աղոթեք, որովհետև աստված է, միգուցե զբոսանքի է դուրս եկել կամ գուցե քնած է, թող արթնանա»: Թեև Եղիայի խոսքերը վիրավորական էին, այդուհանդերձ, նրանք ոչ միայն սկսում են բարձրաձայն աղոթել, այլև իրենց սովորության համաձայն՝ նիզակներով իրենց մարմինները վիրավորելով՝ ամեն մեկն այդ արյունաշաղախ, ողբալի վիճակում սուտ-սուտ մարգարեություններ է անում:

Հարկ է նկատել հիշյալ սուտ մարգարեների ծայրահեղ անմտությունը: Որովհետև օրն արդեն ավարտվել էր, երեկո էր, ու թեպետ դեռևս Բահաղից որևէ զորություն չէին տեսել, բայց և այնպես նրանք, շարունակ սեղանի շուրջը պտտվելով, բարձրաձայն աղաղակում էին, որից էլ մի կողմից, հոգեմաշ վիճակի հասնելով, չէին ցանկանում խոստովանել իրենց անկարողությունը, իսկ մյուս կողմից, ժողովրդի առջև խայտառակված և նշավակված, դեռևս սպասում էին, դեռևս հույս ունեին անշունչ և անզգա կուռքից որևէ զորության նշան գտնելու:

Այդ ժամանակ Եղիա մարգարեն նշան է անում, որ դադարեցնեն իրենց անմիտ գործողությունները, որոնցով իզուր չարչարում են իրենց անձերը, և Իսրայելի ժողովրդին հրավիրում է, որ իրեն մոտենան, ապա Աստծու կործանված սեղանը վերականգնում է տասներկու քարերով՝ Իսրայելի տասներկու ցեղերի անուններով[231] և սեղանի շուրջը ջուր լցնելու համար փոսեր է փորել տալիս, փայտը ու ողջակեզը դնելով՝ երեք անգամ չորսական սափոր ջուր է լցնել տալիս դրանց վրա, այնպես որ փայտերի և ողջակեզի վրայով ջուրն առատապես թափվելով՝ փոսերը ջրով են լցվում:

---

[231] Եղիան ասաց ժողովրդին. «Մոտեցե՛ք ինձ»: Ամբողջ ժողովուրդը մոտեցավ նրան: Նա նորոգեց Տիրոջ կործանված զոհասեղանը (*Գ Թագ. 18:30*):

Ապա Եղիայի առ Աստված ջերմեռանդորեն աղոթելուն պես, իսկույն հրաշքով երկնքից կրակ իջնելով, փայտն ու ողջակեզը այրելուց և մոխրի վերածելուց բացի, ջրով լցված փոսերն էլ չորացնում է և հողն էլ այրելով՝ այնտեղ խոնավության հետք էլ չի թողնում: Ժողովուրդը, սույն բացահայտ հրաշքը տեսնելով, երեսնիվայր ընկած նորից ու նորից խոստովանում է, որ ճշմարտապես Նա է Աստված, Ով ամեն ինչի Տերն է, այսինքն՝ Եղիայի Աստվածը, Ով երկնքի և երկրի Արարիչն է[232]:

Այստեղ անհնար է նկարագրել Բահաղ կուռքի մարգարեների թշվառ վիճակը. որովհետև Եղիան անմիջապես հրամայում է նրանց բոլորին բռնել, այնպես որ ոչ մեկը չի կարողանում փախչել, և Կարմեղոս լեռան մոտ գտնվող Գիսոնի ձորում առանց բացառության բոլորին կոտորել է տալիս: Եղիան բոլոր սուտ մարգարեներին այսպես կոտորելուց հետո Աքաաբին ասում է. «Գնա՛, հա՛ց կեր, քանի որ անձևը մոտենում է»: Երբ Աքաաբը ճաշելու համար իր վրանն է գնում, Եղիան բարձրանում է լեռան գագաթը և այնտեղ, դեմքը երկու ծնկների միջև դրած, գետնամած աղոթում է Աստծուն:

Մարգարեն, այս վիճակում աղոթելով, իր մոտ գտնվող պատանուն պատվիրում է ուղիղ դեպի ծովը նայել՝ տեսնելու, թե արդյոք ամպ երևում է, և երբ պատանին վերադառնալով ասում է, որ չկա, պատվիրում է յոթ անգամ գնալ և նայել, և ինքը շարունակում է աղոթել: Հետո, երբ հորիզոնում մարդկային ձեռքի նմանությամբ մի ամպ է երևում[233], պատանու միջոցով լուր է ուղարկում Աքաաբին՝ ասելով. «Կառքդ լծի՛ր,

---

[232] Երբ ամբողջ ժողովուրդը տեսավ դա, ընկավ երեսնիվայր և ասաց. «Արդարև, Տերն Աստված է, Տերն Աստված է» (*Գ Թագ. 18:39*):

[233] Եվ այնպես պատահեց, որ, յոթներորդ անգամը հազիվ լրացած, մարդու ձեռքի չափ մի փոքրիկ ամպ ջուր էր կաթեցնում (*Գ Թագ. 18:44*):

հնարավոր է, որ անձրևի տակ մնաս»: Աքաաբը շտապում է՝ կառքով հեռանալու, և ահա շատ չանցած՝ ամպերը փակում են երկինքը, և քամի փչելով՝ սաստիկ անձրև է գալիս:

Աքաաբը, տեսնելով անձրևը, մինչև Հեզրայել արտասվում է: Եղիան թեպետ ոտքով էր գնում, սակայն Աստծու զորությամբ Աքաաբից առաջ արդեն Հեզրայելում էր[234]: Ահա այսպես, ինչպես վերը հիշատակվել է, Աստված, գթալով Իսրայելի ժողովրդին, ցանկանում է անձրև տալ, սակայն քանի որ Եղիա մարգարեն արգելել էր անձրևը, ուստի նրա աղոթքով էլ բարեհաճում է անձրև տալ, որպեսզի փառավորի Իր հավատարիմ ծառային, և ամեն մարդ էլ հասկանա նրա պատիվը, հնազանդությամբ հետևելով տրված պատիրաններին և նրա նման հավատարմությամբ Աստծուն ծառայելով՝ պատժից զերծ մնա:

Հարց ԾԶ: **Աքաաբը, երբ պարզորոշ տեսնում է, որ Եղիայի աղոթքով է անձրև գալիս, հարգում և հնազանդվո՞ւմ է մարգարեին:**

Պատասխան: Ո՛չ միշտ: Հիրավի, հրաշքի և անձրևի հետևանքով բարկությունն անցնելով՝ զգուշանում է վնասել Եղիային, սակայն միևնույն ժամանակ չի ցանկանում հնազանդվել նրա պատվիրաններին և ոչ էլ հարգանքով ընդունել նրան, ինչպես պարտավոր էր: Մանավանդ երբ Աքաաբը Եղիայի հրամանով Բահաղի մարգարեների կոտորվելը պատմում է Հեզաբելին, անզգամ թագուհին մտադրվում է սպանել մարգարեին, սակայն ժողովրդից վախենալով՝ միառժամանակ հետաձգում է իր մտադրությունը, միայն բացահայտորեն լուր է ուղարկում, որ վաղը՝ այս ժամին, սպասելու է նրան:

---

[234] Տիրոջ ձեռքը Եղիայի վրա էր, որն իր մեջքը պինդ կապելով՝ վազեց Աքաաբի առջևից (*Գ Թագ. 18:46*):

Այս սպառնալիքից վախենալով՝ Եղիան Հուդայի երկրին պատկանող Բերսաբե կոչվող վայրն է գնում, որտեղ էլ ծառային թողնելով՝ ինքը միայնակ շարունակում է ճանապարհը դեպի անապատ և մի ամբողջ օր քայլելով՝ հոգնած հանգիստ է առնում մի ծառի տակ: Ե՛վ հոգնությունից, և՛ ժողովրդի անկարգ վարքի պատճառով սրտնեղելով՝ մարգարեն ցանկանում է մեռնել՝ ասելով. «Ո՛վ Տեր, վերցրո՛ւ հոգիս, ես իմ հայրերից լավը չեմ», և տխրությունից այնտեղ ննջում է:

Ապա նրան արթնացնում է Աստծու հրեշտակը՝ ասելով. «Վե՛ր կաց և կե՛ր», Եղիան արթնանալով տեսնում է, որ մի կտոր հաց և մի կուժ ջուր են դրված իր մոտ, ուտում և խմում է և դարձյալ ննջում: Երկրորդ անգամ հրեշտակը արթնացնում է՝ ասելով. «Վե՛ր կաց և կե՛ր, քանի որ գնալիք ճանապարհդ երկար է»: Նա էլ, ըստ հրամանի արթնանալով, ուտում և ըմպում է և ահա այդ հացի զորությամբ քառասուն օր ու քառասուն գիշեր քայլում է, մինչև Քորեբ լեռանն է հասնում և այնտեղ՝ մի քարանձավում, բնակություն հաստատում:

Մի օր Եղիան աստվածային ձայնն է լսում. «Ինչո՞ւ ես այստեղ նստել, Եղիա՛», և սա պատասխանում է. «Աստծու փառքին նախանձախնդիր եղա, քանի որ տեսա, որ Իսրայելը, Քեզ թողած, Քո սեղանները կործանեց և մարգարեներիդ կոտորեց, միայն ես մնացի, և ինձ էլ ցանկանում են սպանել»[235]: Քանի որ մարգարեն սույն պատասխանով Իսրայելի ժողովրդի չար վարքն ու դրա պատճառով իրեն համակած խոր տխրությունն է հայտնում, ուստի ամենաբարի Աստված, ցանկանալով իր հավատարիմ և եռանդուն ծառային վարձատրել և

---

[235] Եղիան ասաց. «Նախանձախնդրություն ունեցա ամենակալ Տիրոջ համար, քանզի իսրայելացիները լքեցին քեզ, քո զոհասեղանները կործանեցին և քո մարգարեներին սրակոտոր արեցին: Միայն ես եմ մնացել, և ինձ էլ փնտռում են, որ սպանեն» (*Գ Թագ. 19:10*):

մխիթարել, առաջարկում է հաջորդ օրը Քորեբ լեռ բարձրանալ, քանի որ Աստված այդտեղով պիտի անցնի:

Երբ Եղիան բարձրանում է լեռը, իսկույն աստվածային հրամանով սաստիկ հողմ է սկսում փչել, ապա երկրաշարժ է լինում, և հրե տեսարաններ են տեղի ունենում կամ ժայթքում. այս ամենից հետո մեղմ զեփյուռի ձայն է լսվում, Եղիան իսկույն հասկանում է, որ Աստված այն մեղմ քամու ձայնի հետ է, դրա պատճառով պատկառելով, կաշվե վերարկուով ծածկելով իր դեմքը՝ վերադառնում է հիշյալ քարանձավը[236]:

Պետք է նկատել, որ սաստիկ քամու, երկրաշարժի և կրակ ժայթքելու ժամանակ Եղիան վերարկուով իր դեմքը չի ծածկում, քանի որ դրանց մեջ Աստծու ներկայություն չկար, սակայն մեղմ զեփյուռի ձայնը լսելուն պես Աստված այդ ձայնի հետ լինելու պատճառով մարգարեն ծածկում է դեմքը: Այսպիսի տեսարաններից հասկացվում է, որ Աստված ցանկանում է Եղիային ցույց տալ իր զորությունը և գթությունը: Քանի որ սաստիկ հողմը, երկրաշարժը և կրակը՝ Նրա կարողությունը, իսկ մեղմ քամու ձայնը Նրա գթությունն են հայտնում: Քանի որ մեղավորին կարող է պատժել խիստ միջոցներով, ինչպիսին փոթորիկը, երկրաշարժը և հուրն են, որոնք իսկույն կործանում են:

Սակայն քանի որ Աստված ողորմած է, և համբերում է, որ մեղավորը հետ դառնա ու ապաշխարի, և թեև մեղավորի

---

[236] Տերն ասաց. «Վաղն առավոտյան կելնես ու կկանգնես լերան վրա, Տիրոջ առջև: Տերը կանցնի, մի սաստիկ հողմ կբարձրանա, Տիրոջ առաջ կխորտակի լեռները, փուլ կտա ժայռերը, սակայն Տերն այն հողմի մեջ չի լինի: Հողմից հետո երկրաշարժ կլինի, սակայն Տերը երկրաշարժի մեջ չի լինի: Երկրաշարժից հետո կրակ կթափվի, սակայն Տերը կրակի մեջ չի լինի: Կրակից հետո մեղմ օդի ձայն կլինի»: Երբ Եղիան լսեց Աստծու ասածը, իր կաշվե վերարկուով ծածկեց երեսը (*Գ Թագ. 19:11–13*):

չապաշխարելու ժամանակ իսկ պատժի, դարձյալ այդ պատժի մեջ էլ է նշմարվում նրա գթության հետքը, քանի որ այս աշխարհում տրված պատիժներն էլ առանց գթության չեն: Արդարև, վերոհիշյալ հրաշալի երևույթները Եղիային խրատ էին, որ ժողովրդի մեղանչելու ժամանակ խիստ մեծ բարկությամբ նրան պատուհասելու փոխարեն, ընդհակառակը, մեղմ և քաղցր միջոցներով ջանա նրան ուղղության վերադարձնել:

Ասուհանդերձ, որպեսզի Եղիան չմտածի, որ կուռքեր երկրպագողները պատժից ազատ պիտի լինեն, այլ ընդհակառակը, նրանք իրենց ժամանակին պիտի պատժվեն, և մինչև անգամ Աստված պիտի հայտներ, թե ում ձեռքով պիտի պատժվեն, մարգարեն նորից ձայն է լսում. «Ինչո՞ւ ես նստել այստեղ, Եղիա՛»: Եվ նա նախկինի նման գանգատվում է ժողովրդից, որին ի պատասխան՝ Աստված ասում է. «Վե՛ր կաց, այս անգամ գնա՛ Դամասկոսի անապատի կողմը և Ազայելին ասորիների թագավոր կարգի՛ր, և Հեուին՝ իսրայելացիների, նաև Եղիսեին քո փոխարեն մարգարե՛ օծիր»: Քանի որ կուռքեր երկրպագողները նախ՝ Ազայելի ձեռքով պիտի կոտորվեին, ապա՝ Հեուն և Եղիսեն սաստիկ կոտորած պիտի տային նրանց[237]: Եվ որովհետև դարձյալ ժողովրդի դեմ է գանգատվում՝ ասելով. «Քո մարգարեներին կոտորեցին, միայն ես եմ մնացել», Աստված նրան հայտնում է, որ միայն ինքը չի մնացել, այլ հենց այդ Իսրայելի ժողովրդի մեջ յոթ հազար մարգարեներ կան, որոնք կուռքերի առջև չեն ծնրադրել և չեն երկրպագել: Սույն հայտնությամբ խեղճ մարգարեն տեսնում է, որ ինքը սխալվել է և երկրպագում է Տիրոջը:

---

[237] Ազայելը հարցրեց. «Ինչո՞ւ ես լալիս, տե՛ր իմ»: Եղիսեն ասաց. «Գիտեմ, թե իսրայելացիների դեմ ինչ չարիքներ ես գործելու. նրանց ամրոցները հրով պիտի այրես, քաջ մարդկանց սրով պիտի կոտորես, նրանց տղաներին պիտի ոչնչացնես, հղիների փորը պիտի պատռես» (*Դ Թագ. 8:12*):

Այնուհետև Եղիան, ըստ աստվածային հրամանի, նախ գնում և գտնում է Եղիսեին, որը հող էր վարում՝ տասներկու եզներ լծած, ու իր մաշկեղեն վերարկուն նրա վրա է գցում: Այն ժամանակ Եղիսեն, իսկույն թողնելով իր գործը, մարգարեի հետևից է գնում, քանի որ հասկանում է, որ մարգարեի միջոցով Աստված կանչում է իրեն, որպեսզի հողագործությունը թողնի և իր անձը Եղիային ծառայելուն նվիրի: Սակայն նախ հրաման է ստանում՝ գնալու և ծնողներին վերջին ողջույնի հրաժեշտը տալու, և ապա երկու եզ մորթելով՝ իր ազգականներին և բարեկամներին պատվելուց հետո հետևում է Եղիային, որից այլևս երբեք չի բաժանվում, մինչև նրա՝ երկրից վերանալը:

Թեպետ Եղիան վերոհիշյալ երկու անձնավորություններին՝ Ազայելին և Հեուին, ինքն անձամբ թագավոր չի օծում, սակայն նրա հրամանով Եղիսեն է կատարում այդ արարողությունը[238]:

Հարց ԾԷ: **Աքաաբը հե՞տ է դառնում իր չար ճանապարհից:**

Պատասխան: Ո՛չ, հետ չի դառնում: Հիրավի, նա արժանի էր պատժի, սակայն Աստված, ողորմած լինելով, դարձյալ օգնում է այդ անուղղելի թագավորին, որպեսզի Իր աստվածային զորությունը տեսնելով՝ չար ճանապարհից հետ դառնա: Այդ ժամանակ Դամասկոսում գահակալող ասորիների թագավորը, որը հայտնի էր Ադերի որդի անվամբ, շրջակա երկրների թագավորների հետ միավորվելով, անհամար զորքով Աքաաբի դեմ է շարժվում և պաշարում Սամարիան և այսպիսի մի

[238] Եվ այս սրվակի յուղը նրա գլխին թափելով՝ ասա՛. «Այսպես է ասում Տերը. քեզ Իսրայելի թագավոր օծեցի»: Ապա դուռը բա՛ց արա, էլ մի՛ սպասիր, փախի՛ր» (*Դ Թագ. 8:13 և 9:3*):

պատգամ ուղարկում նրան. «Արծաթդ և ոսկիդ, կինդ և երեխաներդ և ամենը, ինչ ունես, ինձ է պատկանում»:

Թեև այդպիսի առաջարկ կամ պայման բացարձակապես անընդունելի և անհանդուրժելի էր, բայց քանի որ իսրայելացիների երկրում երեք և կես տարի անընդմեջ սով էր եղել, ու դրա պատճառով Աքաաբը և՛ պաշարի, և՛ զորքի առումով գրեթե ամբողջովին անպատրաստ էր, որի համար էլ թշնամին իրեն թույլ է տալիս այդպիսի հանդուգն լրբությամբ պատգամ ուղարկել: Աքաաբը, տեսնելով, որ ճարահատեալ վիճակում է և հուսալով, որ գուցե խոնարհ պատասխանով հնարավոր լինի թշնամուն հետ դարձնել, այսպես է ասում. «Ինչպես որ ասացիր, ես և իմ ունեցվածքը քեզ ենք պատկանում»: Սակայն ասորիների արքան, այս խոնարհ պատասխանից է՛լ ավելի համարձակություն ստացած, առանց պատերազմելու Սամարիան կողոպտելու տենչով, նորից պատգամաբեր է ուղարկում Աքաաբի մոտ՝ ասելով. «Վաղը մարդիկ կուղարկեմ, որ քո և հպատակներիդ տներում ինչ հավանեն, վերցնեն և ինձ բերեն»: Երբ Աքաաբը, քաղաքի ծերունիներին հավաքելով, նրանց հաղորդում է թշնամու պատգամները, նրանք պատասխանում են. «Մի՛ ընդունիր նրա առաջարկը»:

Թեև սույն ծերունիները գիտեին, որ թշնամին զորեղ է, այնուհանդերձ, առանց պատերազմի թշնամուն անձնատուր լինելը մեծ նախատինք և անպատվություն համարելով, թագավորին խորհուրդ են տալիս մերժելու այդպիսի ամոթալի պայմանը: Սակայն Աքաաբը դարձյալ խոնարհությամբ պատասխանում է. «Ինչպես նախապես խոստացել եմ, քեզ կգոհացնեմ, սակայն թույլ չեմ տա, որ քաղաքը կողոպտես»: Սույն վճռական պատասխանից ասորիների թագավորն իր կուռքերի անուններով երդվում է, որ Սամարիան կործանելու զորություն ունի, և եթե Սամարիայի ամբողջ հողերը աղյուս

և պատնեշներ լինեն, և իր զորքը ընդամենը մի- մի բուռ հող վերցնի դրանից, դարձյալ բավական չէ:

Իհարկե, սույն խոսքերով նա ցանկանում է Աքաաբին վախեցնել, սակայն սա պատասխանում է, որ դեռևս չհաղթած՝ ավելորդ է այդպես մեծաբանել: Ադերի որդին, այս պատասխանը լսելով, իսկույն հրամայում է քաղաքի շուրջը պարիսպ կանգնեցնել, թեև նույն պահին ինքը և իր հետ միավորված թագավորները կերուխումի և ժամանցի էին անձնատուր եղել: Երբ Աքաաբը տեսնում է, որ պատնեշի կառուցումն առաջ է ընթանում, և ինքն անկարող է որևէ կերպ արգելելու, սկսում է լրջորեն խորհել և անհանգստանալ իր վիճակի համար, և ահա Աստծուց մի մարգարե գալով հայտարարում է. «Մի՛ վախեցիր, այդ ամբողջ զորքի բազմությունը, որ տեսնում ես, Աստված քո ձեռքը պիտի հանձնի, որպեսզի իմանաս, որ ամեն ինչի տերը Նա է»:

Ուշադրությո՛ւն դարձրու, որ Աքաաբը չի աղոթում Աստծուն, սակայն Աստված Իր ողորմությունը և զորությունը ցույց տալու համար հատուկ մարգարե է ուղարկում, որպեսզի Իսրայելի թագավորն Իր զորությունն ու գթությունը գիտակցի: Մանավանդ թշնամին, իր զորքի բազմության վրա հույս դնելով, իր կուռքերի անուններով է երդվում, որ կարող է իր զորությամբ հաղթել, ուստի Աքաաբի ձեռքով ցանկանում է պատժել նրանց, որպեսզի իմանան Իսրայելի Աստծու զորությունը: Աքաաբը Աստծու ուղարկած մարգարեից տեղեկանում է, թե ինչպես պիտի շարժվի, որ կարողանա հաղթանակել, և Իսրայել երկրի մեծամեծները, որոնք այդ պահին Սամարիայում էին, որոշում են, որ իրենք կարող են երկու հարյուր երեսուն մարդ տալ, և իսրայելացիների միջից էլ յոթ հազար քաջասիրտ մարդկանց ընտրելով՝ կեսօրին դուրս են գալիս քաղաքից:

Երբ ասորիների զորքը տեսնում է իսրայելացիներին, տեղեկացնում են իրենց թագավորին, որն իր վրանում

հարբեցողության էր տրվել. սա հրամայում է նրանց ողջ բռնել և իր մոտ բերել՝ կարծելով, որ նրանք կա՛մ բարեկամության, կա՛մ թշնամության պատճառով են քաղաքից դուրս եկել: Սակայն երկու կողմերն իրար հանդիպելու ժամանակ իսրայելացիները հարձակվում են թշնամու վրա և սկսում հարվածել. նույն պահին Աքաաբը մի այլ յոթ հազարի հետ հանկարծ օգնության է հասնում, և ասորիները շփոթված սկսում են փախչել:

Այդ ժամանակ իսրայելացիները, նրանց հետապնդելով, այնպես են կոտորում թշնամու զորքը, որ Ադերի որդին հազիվ երեք մարդկանցով կարողանում է ազատվել: Այսպիսով, իսրայելացիները թշնամու բանակի ողջ ունեցվածքը կողոպտելուց հետո հաղթական փառքով և մեծ ուրախությամբ վերադառնում են Սամարիա: Վերոհիշյալ մարգարեն, որն Աքաաբին հաղթանակ էր խոստացել, նորից ներկայանում է Աքաաբին՝ ասելով. «Քաջալերվի՛ր և իմացի՛ր, որ Ադերի որդին մյուս տարի դարձյալ պիտի հարձակվի, ուրեմն պատրա՛ստ եղիր»:

Արդարև, ինչքան էլ ասորիները մեծ կորուստներ են ունենում, և նրանց թագավորն էլ խայտառակ վիճակում փախչելով է Դամասկոս հասնում, սակայն դարձյալ կարողանում է անհամար զորք հավաքել և հաջորդ տարի վերստին Աքաաբի վրա հարձակվել, որպեսզի անցյալ տարվա վրեժը լուծի: Քանի որ նախորդ տարվա պատերազմի վայրը լեռնային էր, այս անգամ որոշում է դաշտավայրում պատերազմել: Նաև որովհետև նրա մարդկանցից ոմանք հասկացնում են, որ իսրայելացիների Աստվածը լեռների Աստված է, դաշտերինը չէ, և եթե նրանց հետ դաշտում պատերազմեն, անպայման կհաղթեն:

Այս խոսքով նրանք Աստծու *ամենազոր*, *ամենիշխան* և *ամենուրեք* լինելն են ժխտում, որը, կարելի է ասել, Նրա գերագույն տերությանը հայհոյելն է, քանի որ հայհոյություն է ուրանալ,

ինչ Աստված ունի, և դավանել, ինչ չունի[239]: Երբ մեկ տարին լրանում է, վերը հիշատակվածի համապատասխան՝ ասորիների թագավորն իր բանակը դաշտում է տեղակայում: Թեև Աքաաբը նույնպես իր զորքը նրա հանդիման էր կանգնեցրել, սակայն յոթ օրն անցնում է առանց պատերազմի, ութերորդ օրը վերոհիշյալ մարգարեն, Աստծու հրամանով Աքաաբի մոտ գալով, ասում է. «Որովհետև ասորիները ասացին, որ իսրայելացիների Աստվածը լեռների Աստված է, դաշտերինը չէ, սրա պատճառով Աստված նրանց քո ձեռքը պիտի մատնի, որպեսզի հասկանան, որ ամեն ինչի Տերն Աստված է, ամենակարող է, Նրա իշխանությունը ամենուրեք է»:

Այդ ժամանակ Աքաաբը, հարձակվելով թշնամու վրա, Աստծու զորությամբ նրա հետևակ զորքից հարյուր հազար մարդ է կոտորում, մյուսները փախչելով գնում են և գունդգունդ ապաստանում Ափեկ քաղաքի պարիսպների ներքո, որն այդ պահին փլվելով՝ քսանյոթ հազար մարդ էլ այնտեղ է կորչում: Ասորիների թագավորը, իր բանակի այսպիսի բեկումը տեսնելով, թեև փախչում է քաղաք և ազատվում, սակայն ցանկանալով թաքնվել, երկյուղից սենյակից սենյակ է մտնում: Նրա նախարարներից ոմանք նրան ասում են. «Իսրայելի թագավորը գթառատ սիրտ ունի, եթե քուրձ հագնես, մեր պարանոցներից էլ պարաններ կապելով՝ նրա մոտ տանես, թերևս ների». որովհետև այլ կերպ նրանց փրկությունն անհնարին էր:

Արդարև, երբ նրանք կատարում են այս մտադրությունը, Աքաաբը անմտաբար հայտարարում է. «Եթե Ադերի որդին դեռևս ողջ է, իմ եղբայրն է»: Նրա այսպիսի պատասխանից հետո հայտնում են, որ ողջ է և այնտեղ է գտնվում, ուստի

---

239 Աստվածաբանների խոսքի համաձայն՝ Աստծու հատկանիշներն ուրանալը և Նրան օտար հատկանիշներ վերագրելը հայհոյություն է:

անմիջապես կանչել է տալիս և այդ անզգամ թշնամուն ընդունում է իր կառքում: Ահա այս եղանակով ազատվելով՝ ասորիների թագավորն ուրախացած խոստանում է վերադարձնել Իսրայելի քաղաքները, որ իր հայրն էր նախկինում գրավել: Նաև խոստանում է իսրայելացի վաճառականներին Դամասկոսում ազատ վաճառականության թույլտվություն շնորհել, ինչպես ասորիներն են Սամարիայում նույն արտոնությունը վայելում: Վերջապես խոստանում է այլևս իսրայելացիների դեմ չպատերազմել և միշտ բարեկամ մնալ իսրայելացիների թագավորին:

Հիրավի, հիշյալը, նեղ դրության մեջ ընկնելով, այդ խոստումներն է տալիս: Աքաաբը նույնպես իր այդ հաղթանակից հետո, թշնամուն այդպիսի նկուն վիճակում տեսնելով, և՛ իր փառքի, և՛ շահի համար հպարտ, նրան սպանելու փոխարեն ազատ է արձակում: Սակայն քանի որ Ադերի որդին նախկինում հայհոյել էր Աստծու գերագույն Տերությունը, ուստի մահվան էր արժանի, և այդ ամբարիշտ մարդուն ազատ թողնելը բացարձակապես հակառակ էր Աստծու փառքին և արդարությանը:

Իսկ Աքաաբի նպատակը ոչ թե Աստծու Փառքն ու արդարությունն էին, այլ միմիայն իր անձնական փառքն ու շահը, և դրա պատճառով Աստված բարկանալով Ադերի որդու փոխարեն Աքաաբին է մահվան դատապարտում, սակայն նախապես մարգարե ուղարկելով՝ ցանկանում է Աքաաբին հայտնել նրա հանցանքը, որպեսզի մարդիկ խրատվելով Աստծու հրամաններին հակառակ չկանգնեն: Արդ, մարգարեներից մեկը, Աստծով ներշնչված, իր ընկերներից մեկին առաջարկում է վիրավորել իրեն, և երբ նա չի համաձայնում, պատասխանում է. «Աստծու հրամանը չլսելուդ համար ինձնից բաժանվելուց հետո առյուծը սպանելու է քեզ»:

Արդարև, նրան իր մարգարե ընկերոջից հեռանալուց հետո ճանապարհին առյուծ է հանդիպում, և գազանն անմիջապես սպանում է նրան: Իսկ մարգարեն, մի այլ մարդ գտնելով, առաջարկում է վիրավորել իրեն, սա էլ, մարգարեին ապտակելով, վիրավորում է, մարգարեն, երեսը ծածկելով, կանգնում է ճանապարհին: Այդ պահին, երբ Աքաաբը, հաղթանակից ուրախ, զվարթ, Սամարիա էր վերադառնում, այդ վայրից անցնելու ժամանակ մարգարեն խոսքը թագավորին է ուղղում և բարձրաձայն ասում. «Տե՛ր իմ, ծառադ զորքի հետ պատերազմի գնաց, մեկ՝ ինձ, մեկ ուրիշի ցույց տալով, ասաց. «Այս մարդուն հսկի՛ր, եթե փախչի, նրա փոխարեն անձդ կամ քո փրկագինն եմ պահանջելու», արդ, ծառադ այլ կողմ նայելիս այդ մարդը խույս տվեց և փախավ»»:

Աքաաբը, այս պատմությունը լսելով, պատասխանում է. «Ահա հանցանքդ խոստովանելով՝ քեզ մատնեցի՛ր, քանի որ հայտնի է, որ սպանել ես նրան»: Այն ժամանակ մարգարեն, դեմքի ծածկոցը մի կողմ տանելով, հայտնում է. «Քանի որ դու Ադերի որդուն ազատ արձակեցիր, նրան, ով մահվան էր արժանի, նրա փոխարեն դու պիտի մահանաս, նրա ժողովրդի փոխարեն քո ժողովուրդը պիտի մահանա»: Աքաաբը, այս մարգարեական խոսքը լսելով, շատ է տխրում և կոտրված սրտով է Սամարիա մտնում: Քանի որ հասկանում է, որ նա մարգարե է, ուստի նրա զուշակած պատիժն ու արտասանած վճիռը, ուշ թե շուտ, անպաճառ պետք է կատարվեն:

Հարց ԾԸ: **Աքաաբը, իր պատիժը լսելով, զղջո՞ւմ է:**

Պատասխան: Չի զղջում: Ընդհակառակը, թշնամուն հաղթելուց հետո խնջույքների և զվարճանքների է տրվում: Քանի որ Հեզաբելը քաղաքի մոտ կառուցած ամառանոց, այնտեղ նաև ազարակ և կալատեղ ուներ: Այդ տեղին մոտ Նաբովթ

անունով մեկը նույնպես այգի ուներ, և Աքաաբը ցանկանում է այն գնել և իր համար բանջարանոց դարձնել, ուստի Նաբովթին առաջարկում է այդ այգին իրեն տալ, որի փոխարեն կա՛մ մի այլ այգի կտա, կա՛մ էլ գինը կվճարի:

Սակայն աստվածային պատվիրան[240] կար, ըստ որի՝ իսրայելացիները իրենց կալվածքը չեն կարող վաճառելով մեկ ուրիշին վերջնականապես փոխանցել, և քանի որ այդ այգին էլ Նաբովթի ցեղի ժառանգությունն էր, նա ստիպված է լինում մերժելու արքայի առաջարկը՝ ասելով. «Աստված մի՛ արարսցե, որ ես իմ հայրական միակ կալվածքը քեզ տամ»: Աքաաբը, սույն մերժողական պատասխանից անչափ տխրելով, տուն է վերադառնում և տխրությունից չի ցանկանում անգամ հաց ուտել, և հիվանդ տեսք ընդունելով՝ պառկում է: Նրա կին Հեզաբելը, երբ տեղեկանում է եղելությանը, Աքաաբին ասում է. «Այսպե՞ս պիտի թագավորես, վե՛ր կաց, հա՛ցդ կեր, ես Նաբովթի այգին քեզ կտամ»:

Ուշադրության է արժանի այն, որ թեև Աքաաբը Նաբովթի մերժման պատճառով շատ է տխրում, սակայն հաշվի առնելով որևէ մեկի ունեցվածքը բռնությամբ վերցնելը՝ հակառակ է արդարությանը, լավագույնը լռելն է համարում: Իսկ Հեզաբելը, որ անչափ դաժան կին էր և Աստծուց էլ չէր երկնչում, ոչ միայն ցանկանում է հափշտակել Նաբովթի այգին, այլև նրան սպանելու դիտավորությամբ և չար խորհրդածությամբ Աքաաբից մեծամեծներին հրովարտակ է ուղարկում, որով նրանց պատվիրում է ծոմ պահել և ժողովրդին ժողովել, և Նաբովթին բազմության վերևը նստեցնելով՝ երկու չար մարդկանց վկայել է տալիս, որ Նաբովթը հայհոյել է Աստծուն և թագավորին, և

---

[240] Հողը վերջնականապես չպետք է վաճառվի, քանզի հողը Իմն է, իսկ դուք Ինձ մոտ պանդուխտ ու նժդեհ եք (*Ղևտ. 25:23*):

այդ վկայությունից անմիջապես հետո քարկոծությամբ սպանում են նրան:

Արդարև, թագավորական հրովարտակին համապատասխան՝ Նաբովթին քարկոծում են, սակայն նրա մահվամբ չբավարարվելով՝ նրա երկու որդիներին էլ են սպանում, որպեսզի այգին անտեր մնալով՝ Աքաաբը կարողանա այն գրավել[241]:

Դու Հեզաբելի անգութ և անողորմ խորամանկությո՛ւնը տես. Նաբովթի հանիրավի սպանության չարագործ խաբեությունը ծածկելու համար, որ հանկարծ հայտնի դառնալով՝ ժողովուրդը չբամբասի, գործին այնպիսի տեսք է տալիս, որ կարծես թե Աստծու և թագավորի պատիվը պաշտպանելու համար է արդարությամբ այդպես վարվել, քանի որ ծոմապահությամբ և երկու մարդկանց վկայություններով են սպանել մարդուն:

Թեև սույն գաղտնիքին տեղյակ մարդիկ նրա անսիրտ վարմունքն է՛լ ավելի են տարածում, սակայն նա, ընդհանրապես հոգ չանելով, երբ ստանում է Նաբովթի մահվան լուրը, Աքաաբին ասում է. «Ելի՛ր և գրավի՛ր այգին, քանի որ Նաբովթը մահացել է»: Աքաաբը եղելությունը իմանալուն պես հագուստը պատռում է և քուրձ հագնելով՝ ասում. «Նաբովթը հանիրավի է մահացել», սակայն այսուհանդերձ ո՛չ հանդիմանում և ո՛չ էլ պատժում է չարագործին, ընդհակառակը, իբր արդեն կալվածքի տեր՝ շտապում է գրավելու այն:

Մինչ նա ճանապարհին էր, Աստծու հրամանով Եղիա մարգարեն նրա դեմ է դուրս գալիս և բարկությամբ ասում. «Այնտեղ, որտեղ շներն ու խոզերը Նաբովթի արյունը լիզեցին, նույն վայրում քո արյունը պիտի լիզեն, և ինչպես Հերոբովամի և Բաասի ցեղերը սրով սպանվեցին, այդպես էլ քո ցեղը սրի

---

[241] «Ես,– ասաց Տերը,– երեկ տեսա Նաբոթի ու նրա որդիների արյունը. դրա համար ես քեզ պիտի հատուցեմ այս ագարակում»: Արդ, վերցրո՛ւ նրան ու նետի՛ր այդ արտը, ինչպես ասել է Տերը (*Դ Թագ. 9:26*):

պիտի քաշվի, և Հեզաբելի դիակը շները պիտի ուտեն»: Թեև Աքաաբը Եղիային թշնամի էր համարում, նրա խոսերից շատ է նեղվում, սակայն միևնույն ժամանակ գիտակցելով, որ ինքը մեղավոր է, այս անգամ շտապում է զղջալու և զգեստը պատռելով, քուրձ հագնելով, արտասուքներով և ծոմապահությամբ ապաշխարում է, քանի որ գիտեր, որ Եղիայի արտասանած և վճռած պատիժը անպատճառ իրագործվելու է:

Լա՛վ ըմբռնիր, թե ինչքան օգտակար է, որ մարդ հասկանա իր հանցանքը և խոնարհ սրտով անկեղծորեն զղջա: Քանի որ Եղիայի սպառնալի պատիժը Աքաաբի օրոք պիտի գործադրվեր, սակայն հիշյալի՝ խոնարհությամբ, զղջալով և արտասուքով ու ծոմապահությամբ ապաշխարելու համար Աստված Եղիային ասում է, որ նրա օրոք չպիտի լինի պատիժը, այլ նրա որդու օրոք[242]: Հիրավի, ինչպես Աստծու օրենքներին հակառակ գործող մարդն է պատժի արժանանում, այդպես էլ խոնարհությամբ և անկեղծությամբ զղջացող մեղավորն ազատվում է պատժից:

Հարց ԾԹ: **ԾԷ հարցում հիշատակված ասորիների մեղավոր թագավորը, որին Աքաաբը չի սպանում, կատարո՞ւմ է իր խոստումը:**

Պատասխան: Չի կատարում: Որովհետև խոստացել էր վերադարձնել իսրայելացիներից գրաված և ասորիների իշխանության ներքո բոլոր քաղաքները, սակայն Ռամաթը չի վերադարձնում: Աքաաբը երեք տարի սպասում է և երբ տեսնում է, որ Ադերի որդին իր խոստումը դրժում է, սկսում է Ռամաթը

[242] Տերը Աքաաբի մասին ասաց իր ծառա Եղիային. «Տեսա՞ր, որ զղջաց իմ առջև: Եվ քանի որ ընդունեց իր մեղքերը, նրան չարիք չեմ պատճառի իր կենդանության օրոք, այլ նրա որդիների՛ օրոք կթափեմ չարիքը նրա տան վրա» (*Գ Թագ. 21:28, 29*):

գրավելու պատրաստություն տեսնել: Արդ, այդ ընթացքում Հուդայի թագավոր Հովսափաթը գալիս է Սամարիա՝ Իսրայելի թագավորին տեսակցության, որի Գոթողիա անունով աղջկան իր որդուն՝ Հովրամին, կնության էր վերցրել, ուստի նրանց միջև բարեկամություն հաստատված լինելով՝ Աքաաբը Հովսափաթին առաջարկում է միասին պատերազմել:

Թեև Հուդայի թագավորը չի հավանում այս առաջարկը, սակայն չցանկանալով կոտրել Աքաաբի սիրտը՝ ցանկություն է հայտնում նախ մարգարեի միջոցով Աստծուն հարցնելու և ապա նրա հրամանով շարժվելու: Իսրայելի թագավորը Բահաղի՝ չորս հարյուրի հասնող մարգարեներ է հավաքում, որոնք Աքաաբին միաձայն հայտնում են հետևյալը. «Գնա՛, Աստված Ռամաթը քո ձեռքը պիտի հանձնի»: Մանավանդ Սեդեկիա անունով մեկը, երկու երկաթյա եղջյուրներ պատրաստած և անվայել շարժումներով, աղաղակում է. «Այս եղջյուրներով պիտի հարվածես Ասորիքին»:

Սակայն Հովսափաթը նրանց խոսքերին չի հավատում, քանի որ հասկանում է, որ բոլորը ստախոս և շողոքորթ մարդիկ են, և դրա համար էլ հարցնում է. «Չկա՞ արդյոք այստեղ Աստծու մարգարե, որ նրան հարցնենք»: Աքաաբը պատասխանում է. «Աստծու մարգարե Միքիան այստեղ է, սակայն իմ մասին վատ արտահայտվելու համար նրան մերժել եմ»: Արդարև, Միքիա մարգարեն, Աստծու հրամանի համապատասխան, իր ճշմարիտ կանխասացություններով Աքաաբին չէր հաճոյացել, սակայն ընդառաջելով Հովսափաթ թագավորի խնդրանքին՝ մարդ է ուղարկում, որ բերեն նրան:

Պատգամավորը ճանապարհին մարգարեին պատմում է իրողությունը՝ ասելով. «Տե՛ս, որ ինչպես բոլոր մարգարենները, որոնք հաղթանակի ավետիսի խոսքեր խոսեցին, դու էլ նույնը անես»: Միքիան պատասխանում է. «Ինչ Աստված ինձ

հայտնի, այն պիտի խոսեմ»: Երբ նա ներկայանում է թագավորներին, Աքաաբը հարցնում է. «Հարձակվե՞մ Ռամաթի վրա, թե՞ ոչ»: Արդ, Միքիան հասկանում է, որ նա սուտ մարգարեների ասածը անպատճառ պետք է անի, ուստի ասում է. «Գնա՛, հաղթանակը քոնն է»:

Սակայն Աքաաբը, նրա խոսքի ոճից հասկանալով, որ բուն ասելիքն այդ չէ, երդվեցնում է նրան, որ ճշմարտությունն ասի, ահա այն ժամանակ մարգարեն պատասխանում է. «Տեսա Իսրայելը մի անհովիվ ոչխարների հոտի նման լեռների վրա ցիրուցան, և Աստված ասում է. «Սրանք տեր չունեն, թող ամեն մեկն իր տեղը վերադառնա»»: Սույն պատասխանից ենթադրվում էր, որ Աքաաբը պիտի մահանար, և իսրայելացիները, խեղճ և թշվառ վիճակում, փախուստով պիտի ազատվեին, ուստի Աքաաբը Հովսափաթին ասում է. «Ես քեզ նախապես չասացի, որ սա իմ մասին լավ բան չի ասելու»:

Դու Աքաաբի անմտությո՛ւնը տես: Քանի որ սուտ մարգարեները կեղծավորաբար նրա սրտի ցանկացածն են հայտնում, նա պահանջում է, որ Միքիան էլ սրանց նման խոսի: Սակայն նա, ճշմարիտ Աստծու մարգարեն լինելով, վերստին հայտնում է, որ նրանք սատանայի թելադրանքով սուտ են խոսում, և որ Աքաաբը, նրանց խոսքերին հավատալով, Ռամաթի վրա հարձակվելով, այնտեղ մահ պիտի գտնի: Սույն հանդուգն կամ համարձակ հայտարարությունից հետո վերոհիշյալ Սեդեկիան չի համբերում և ապտակում է մարգարեին, որը պատասխանում է. «Դու նույնպես այն օրը (պատիժ իրագործելու օրը) սենյակից սենյակ պետք է վազես և երկյուղից թաքնվելու վայր պիտի փնտրես»:

Այն ժամանակ Աքաաբը բարկությամբ հրամայում է, որ Միքիա մարգարեին բռնեն և բանտում պահեն մինչև պատերազմից իր վերադառնալը: Միքիան աներկյուղ

պատասխանում է. «Եթե պատերազմից ողջ վերադառնաս, ուրեմն Տերը ինձ հետ չի խոսել»: Դրանից բացի՝ բոլորին ցույց տալու համար, որ ինչ ասել է, անպատճառ պետք է կատարվի, բարձրաձայն խոսում է այնտեղ հավաքված զորավարների հետ, որպեսզի երբ կանխասացությունը կատարվի, գիտակցեն Աստծու զորությունը:

Հովսափաթը, լսելով Միքիա մարգարեի խոսքերը, ստուգապես հասկանում է, որ Աքաաբը պետք է պատժվի, սակայն ասածից չհրաժարվելու համար նրա հետ պատերազմ է գնում: Աքաաբն էլ, թեև չէր ցանկանում հավատալ Աստծու մարգարեի կանխասացությանը, սակայն կասկածներ ունենալով՝ շտապում է՝ իր զգեստը Հուդայի թագավորին հագցնելու, իսկ ինքը, հասարակ զինվորի զգեստներ հագնելով, կառքով է գնում պատերազմ, որպեսզի թշնամին իրեն չճանաչի: Թշվա՛ռ մարդ. գալիք պատժից խուսափելու համար վարքը փոխելու փոխարեն հագուստն է փոխում:

Երբ երկու կողմերը սկսում են պատերազմել, ասորիների զորքը, Հովսափաթին տեսնելով և նրան Իսրայելի թագավորի տեղը դնելով, հարձակվում է նրա վրա: Քանի որ ասորիների թագավորն իր զորքին պատվեր էր տվել, որ հատուկ ուշադրություն դարձնեն և իսրայելացիների թագավորին գտնելու և սպանելու համար ոչ մի ջանք չխնայեն: Հովսափաթը, այդ ճգնաժամային պահին իրողությունը հասկանալով, աղաղակում է, որ ինքն իսրայելացիների թագավորը չէ, և մանավանդ Աստծու օգնությամբ[243] թեպետ կարողանում է վերահաս վտանգից ազատվել, սակայն մահու չափ վախենում է:

---

[243] Եվ երբ մարտակառքերի հրամանատարները տեսան Հոսափատին, ասացին. «Սա է Իսրայելի արքան»: Եվ շրջապատեցին նրան, որ կռվեն նրա դեմ: Հոսափատը աղաղակեց, ու Տերը փրկեց նրան (*Բ Մնաց. 18:31*):

Պատերազմի թեժ պահին Աքաաբը վիրավորվում է արձակված նետից, ուստի նրան պատերազմի դաշտից դուրս են հանում: Նրա ստացած վերքից այնքան առատ արյուն էր հոսում, որ կառքը արյունով է լցվում, և երեկոյան իր կառքի մեջ էլ մահանում է: Իսրայելացիների թագավորի մահվան լուրը մունետիկի միջոցով զորքի մեջ տարածվելուն պես զորքն իսկույն ցրվում է, և ամեն մարդ իր տուն է վերադառնում, և Աքաաբի մարմինն էլ, Սամարիա բերելով, անշուք թաղում են:

Ահա այսպիսով, կատարվում է Միքիա մարգարեի կանխասացությունը (տե՛ս ԾԷ հարցը), նաև իրականանում է հիշյալ մարգարեի այն խոսքը կամ գործը, որն ասել էր, երբ Աքաաբը չէր ցանկացել սպանել ասորիների թագավոր Աղերի որդուն, և ահա Աքաաբը նրա փոխարեն է սպանվում: Սրանից բացի, երբ կառքում եղած հանդերձները Սամարիայի ավազանի ջրով լվանում են, խոզերն ու շները սկսում են լիզել նրա արյունը, որով էլ կատարվում է Եղիա մարգարեի կանխասացությունը (տե՛ս ԾԷ հարցը):

Հարց Կ: **Երբ Աքաաբը մահանում է, նրա զորքը՝ ցրվում, Հուդայի թագավոր Հովսափաթը վերադառնո՞ւմ է Երուսաղեմ:**

Պատասխան: Այո՛, վերադառնում է: Սակայն Աքաաբի հետ պատերազմ գնալու համար Հեու մարգարեն, նրան ընդառաջ գալով, ասում է. «Դու օգնեցիր մեղավորին և Աստծուց մերժված մարդու հետ բարեկամություն հաստատեցիր, սրա պատճառով Աստված քեզ պիտի պատժի, սակայն քանի որ սիրտդ Աստծու առջև ուղիղ է և Հուդայի երկրից ջնջեցիր կուռքերին նվիրված սեղաններն ու անտառները, այդ է պատճառը, որ ներում է քեզ և չի պատժում»: Մարգարեի սույն խոսքը հանդիմանություն էր, որ Հովսափաթը մեկ այլ անգամ մտերմություն

չհաստատի Աստծու հրամաններին ընդդիմացող մարդկանց հետ, նաև մեծ մխիթարություն էր նրա սրտին, այնպես որ այդ նույն խոսքերից քաջալերված՝ ինչպես նախկինում էր ջանացել վերացնել կուռքերին վերաբերող ամեն ինչ, այս անգամ անձամբ ինքը՝ Հովսափաթ արքան, շրջում է իր տերության տարածքով և օրենքին հակառակ ամեն ինչ վերացնելուց հետո հատուկ դատավորներ և պաշտոնյաներ է կարգում, որ ժողովրդին սովորեցնեն Աստծու օրենքը, արդարությամբ դատաստան անեն, Աստծու երկյուղը իրենց սրտերից չհանեն, որպեսզի չպատժվեն:

Արդարև, Հովսափաթը, ամեն կերպ Աստծուն հնազանդ լինելով, իր բոլոր թշնամիներին հաղթում է և մեծ փառքի արժանանում: Օրինակ՝ այդ ժամանակ ամոնացիները, մովաբացիները և այլ հեթանոս ժողովուրդներ միավորվելով անհամար զորքով նրա դեմ պատերազմելու են դուրս գալիս: Սրանց բազմությանը նայելով՝ Հովսափաթը թեև վախենում է, սակայն իր ամբողջ հույսն Աստծու վրա դրած՝ ժողովրդին կարգադրում է, որ ծոմ պահեն և անկեղծ սրտով Աստծուն աղոթեն:

Նմանապես նաև թագավորը տաճարում աղոթելիս, խոստովանում է Աստծու գերագույն կարողությունը և իսրայելացիներին արված անսահման ողորմությունները՝ աղաչելով, որ իրենց փրկի թշնամուց: Երբ ժողովուրդը՝ և՛ տղամարդիկ, և՛ կանայք իրենց մանուկներով, տաճարում աղոթում են, որպես Հովսափաթի աղոթքն ընդունելի լինելու նշան՝ Ղևի ցեղից Ոզիել անունով մի մարդ Աստծու հրամանով հայտարարում է. «Մի՛ վախեցեք, այս պատերազմը ձերը չէ, այլ Աստծունն է, դուք վաղը աներկյո՛ւղ ելեք թշնամու դեմ, քանի որ Աստված ձեզ հետ է»:

Այն ժամանակ բոլորը միասիրտ երկրպագում են Աստծուն, շնորհակալ լինում Նրա բարերար գթության համար,

և ղևտացիները նույնպես բարձրաձայն օրհնություններ են հնչեցնում Նրա սուրբ անվան համար: Ուստի առավոտյան՝ թշնամու վրա հարձակվելու պահին, Հովսափաթը ժողովրդին պատվիրում է հավատալ Աստծուն և Նրա մարգարեներին, որպեսզի Աստված իրենց փրկի վերահաս վտանգից: Արդարև, երբ բոլորը միաձայն սկսում են սաղմոսերգել և բարձրաձայն խոստովանել Աստծու գթությունն ու զորությունը, հանկարծ թշնամու մեջ անկարգություն և կռիվ է ծագում, և սկսում են միմյանց կոտորել:

Տե՛ս և մտապահի՛ր, թե Աստծուն ինչքան ընդունելի և հաճելի է, երբ ժողովուրդը ծոմ պահող շրթունքներով աղոթում է Իրեն և կատարյալ հավատով և աներկբա մտքով Իր զորությանը և օգնությանն է ապավինում: Որովհետև այդ անհամար բազմությամբ արշավող զորքի մեջ մի հրաշքով խռովություն և իրարանցում սկսելուն պես մոռանում են Հովսափաթին և իրար այնպես կոտորում, որ այդ ահավոր բազմությունից ոչ մեկը կենդանի չի մնում:

Հովսափաթ արքան և նրա հետ նաև ժողովուրդը, տեսնելով թշնամու այսպիսի ամբողջական ոչնչացումը, սկսում են կողոպտել նրանց բանակը և հազիվ երեք օրում կարողանում են հավաքել նրանց թողած ինչքն ու անասունները, իսկ չորրորդ օրը հավաքվում են մի հովտում, վերստին աղոթում առ Աստված և գոհության ու շնորհակալության երգեր երգում և այն վայրի անունը *Օրհնության հովիտ* կոչում[244]:

Հետո նրանք մեծ ուրախությամբ, քնարով ու թմբուկով Երուսաղեմ են գալիս և տաճարում վերստին գոհաբանական մաղթանքներով շնորհակալություն հայտնում Աստծուն:

---

[244] Որովհետեւ այնտեղ էին օրհնել Տիրոջը, որի համար էլ այդ տեղը կոչվեց Օրհնության հովիտ (*Բ Մնաց. 20:26*):

Շրջակայքի թագավորները, Հովսափաթի թշնամիների այս ձևով կործանվելը լսելով, մանավանդ Աստծուց նրանց սրտերում վախ ընկնելով[245], այլևս զգուշանում են Հուդայի թագավորին վնասելու որևէ գործ ձեռնարկելուց, և նա մինչ իր մահը հանգիստ և խաղաղ կյանք է ունենում իր բարեպաշտ և երկյուղած կենցաղավարությամբ, ինչպես նաև հավատարիմ և արթուն գործունեությամբ:

Սակայն, այսուհանդերձ, Հովսափաթը, իսրայելացիների Ոքոզիա[246] թագավորի հետ վաճառականությամբ համագործակցելով (որը Աքաաբի որդին էր), մեծ վնասներ է կրում, այնպես որ Աստված մարգարեի միջոցով ազդարարում է և հանդիմանական եղանակով պատվիրում զգուշություն ցուցաբերել, չար մարդկանց հետ չմիավորվել: Քանի որ Հովսափաթը իշխում էր մինչև Կարմիր ծով և հիշյալ Ոքոզիայի հետ ձեռնարկում էր նավահանգիստ և նավեր կառուցել, որպեսզի հեռավոր վայրեր նավեր ուղարկելով՝ ոսկի և այլ թանկարժեք ապրանք բերել տա:

Աստված այս ձեռնարկը չի հավանում, և այդ նավերը խորտակվում են. դրանց ոչնչանալու լուրը դեռ չհասած՝ աստվածային ներշնչանքով Եղիազար մարգարեն Հովսափաթին ասում է. «Ոքոզիայի հետ բարեկամանալուդ պատճառով Աստված ոչնչացրեց քո նավերը»: Թագավորը, այս խոսքերը լսելով, հնազանդությամբ այդ գործից հեռու է քաշվում: Իսկ Ոքոզիան, չհավատալով, որ այդ ամենը Աստծուց է եղել, նորից ձեռնամուխ է լինում նավեր կառուցելուն, սակայն Հովսափաթը այլևս չի միանում նրան, որպեսզի որևէ կերպ Աստծու հրամաններին հակառակ չընթանա:

---

245 Երբ որ երկրի բոլոր թագավորությունները լսեցին, որ Տերն է պատերազմել Իսրայելի թշնամիների դեմ, Տիրոջ վախն ընկավ նրանց վրա (*Բ Մնաց. 20:29*):

246 Ըստ Սուրբ գրքի՝ Օքոզիա:

Հարց ԿԱ: **Աքաաբի մահվանից հետո ո՞վ է դառնում Իսրայելի թագավոր:**

Պատասխան: Նրա որդին՝ Ոքոզիան: Սա նույնպես, հոր չար վարքին հետևելով, Բահաղի կուռքերն է երկրպագում և մոտ երկու տարի թագավորելով՝ ըստ իր չարության էլ մահանում, քանի որ Սամարիայի իր պալատի վերնահարկից վայր ընկնելով՝ սաստիկ վնասվում է: Ապա ցանկանալով հասկանալ իր հիվանդությունից կապաքինվի՞, թե՞ ոչ, կռապաշտների Ակկարոն քաղաք մարդ է ուղարկում, որ սա Բահաղ կուռքից տեղեկություն բերի: Եղիա մարգարեն, հրեշտակից տեղեկանալով եղելությանը, այդ պատգամաբերներին ընդառաջ է դուրս գալիս՝ ասելով. «Մի՞թե իսրայելացիների երկրում Աստված չկա, որ գալիս եք կուռքից հարցնելու», և վճռում է, որ Ոքոզիան չի բժշկվելու և մահանալու է: Թեև նրանք Եղիային չեն ճանաչում, սակայն նրա խոսքերից հասկանում են, որ մարգարե է, և հետ դառնալով այդ սպառնալի վճիռը հայտնում են թագավորին, որն էլ իմանում է, որ նրանց ընդառաջ ելնողն ու այդ սպառնալի վճիռը հայտնողը Եղիան է եղել: Ոքոզիան, գիտենալով, որ նա Կարմեղոս լեռան վրա է բնակվում, մի հիսնապետի գլխավորությամբ հիսուն մարդ է ուղարկում նրան գտնելու և իր մոտ բերելու համար:

Հիշյալ հիսնապետը, Եղիային գտնելով, իշխանաբար հրամայում է. «Աստծո՛ւ մարդ, թագավորը քեզ կանչում է, ներքև՛ իջիր այդտեղից»: Այս խոսքին Եղիան պատասխանում է. «Եթե Աստծու մարդն եմ, թող երկնքից կրակ իջնի և քեզ և քո հիսուն մարդկանց այրի», և ահա աստվածային կամքով իսկույն երկնքից կրակ է իջնում և այրում նրանց[247]: Ոքոզիան, որ նրանց

---

[247] Եղիան պատասխան տալով՝ ասաց հիսնապետին. «Եթե ես Աստծու մարդ եմ, թող երկնքից կրակ իջնի և լափի քեզ ու քո հիսուն

հետ տեղի ունեցած սույն դժբախտ պատահարին անտեղյակ էր, առանց ստուգելու, թե նրանք ինչո՞ւ չեն վերադառնում, նրան ձերբակալելու համար մի ուրիշ հիսնապետի հետ ևս հիսուն մարդ է ուղարկում: Այս երկրորդ հիսնապետն էլ գնալով միևնույն իշխանական ոճով ասում է. «Աստծո՛ւ մարդ, թագավորի հրամանն է, որ շուտափույթ այդտեղից ներքև իջնես»: Եղիա մարգարեն նախորդ հիսնապետին տված պատասխանը այս երկրորդին էլ ասելուն պես երկնքից կրակ իջնելով այրում է նրանց: Ոքոզիան երրորդ անգամ էլ է հիսնապետ ուղարկում իր մարդկանցով, սակայն սա, իրենից առաջ գնացածների կորստյան մասին իմանալով, ամենայն խոնարհությամբ մարգարեի առջև ծունր դնելով, պաղատագին խնդրում է՝ասելով. «Ո՛վ Աստծու այր, ողորմի՛ր ծառայիդ», և հրեշտակը Եղիային հայտնում է, որ նրանց հետ աներկյուղ գնա:

Այն ժամանակ Եղիան, աներկյուղ իջնելով, գնում է Ոքոզիայի մոտ, որը դեռ մի խոսք էլ չէր արտասանել, և կրկնում է նրա մարդկանց հայտնած պատիժը՝ ավելացնելով, որ կուռքերին հարցնելու համար մարդիկ ուղարկելու պատճառով առանց անկողնուց վեր կենալու պետք է մահանա: Թագավորն անկարող է լինում որևէ բան պատասխանելու, և երբ մարգարեն արքայական պալատից դուրս է գալիս, Ոքոզիան, նրա խոսքին համապատասխան, մահանում է:

Հարց ԿԲ: **Հետո ի՞նչ է լինում Եղիա մարգարեին:**

Պատասխան: Աստծու կամոքով երկինք է բարձրանում: Սակայն նրան նախապես հայտնի լինելով երկինք բարձրանալը՝ Եղիսեի հետ Գաղգաղա է գնում, որտեղ Եղիան Եղիսեին

զինվորներին»: Կրակ իջավ երկնքից և լափեց նրան ու նրա հիսուն զինվորներին (*Դ Թագ. Ա:10*):

ասում է. «Դու այստե՛ղ մնա, քանի որ Աստված ինձ Բեթել է ուղարկում»: Սակայն Եղիսեն, Աստծու շնորհիվ իրականությանը տեղյակ լինելով, չի ցանկանում բաժանվել Եղիայից, և միասին Բեթել են գնում: Այնտեղ էլ Եղիան ասում է. «Այստե՛ղ մնա, ես Երիքով ուղարկվեցի»: Եղիսեն խնդրում է նրա հետ գնալ, և միասին գնում են Երիքով: Եվ ահա Եղիան երրորդ անգամ է հայտնում, որ ինքն այս անգամ Աստծու հրամանով Հորդանան պիտի գնա, ուստի Եղիսեին պատվիրում է այնտեղ մնալ, սակայն նա հաստատուն մտադրությամբ հայտնում է, որ փափագում է միասին գնալ:

Բեթելի և Երիքովի վարժարանների ուսանողները, որոնց Սուրբ գիրքը *մարգարեների որդիներ* ընդհանուր անվամբ է հիշատակում, Եղիսեին հայտնում են, որ Եղիան նույն օրն իսկ երկինք պետք է բարձրանա, ըստ այդմ՝ նրանք ևս Աստվածային ներշնչմամբ տեղյակ էին լինելիքին, որոնց Եղիան պատասխանում է. «Ես էլ գիտեմ, դուք լո՛ւռ մնացեք»[248]: Արդ, Եղիայի և Եղիսեի միասին Հորդանան գնալու ժամանակ հիշյալ ուսանողներից հիսուն հոգի հեռվից հետևում էր նրանց, որպեսզի տեսնեն Եղիայի երկինք բարձրանալը:

Երբ Եղիան հասնում է գետին, իր մաշկեղեն վերարկուով գետի ջրերին հարվածելու պես գետը երկու մասի է բաժանվում, և նրանք ցամաքով անցնում են մյուս ափը, իսկ հիսուն ուսանողները մնում են այն կողմում: Այն ժամանակ Եղիան ասում է Եղիսեին. «Դեռևս քեզնից չբաժանված՝ խնդրի՛ր, ինչ ուզում ես»: Սրան ի պատասխան՝ նա խնդրում է, որ իրեն մարգարեական շնորհ և հրաշագործության զորություն տրվեն[249]: Սակայն մի՛ կարծիր, թե Եղիսեն իր անձնական

[248] Նա ասաց. «Գիտեմ, լո՛ւռ մնացեք» (*Դ Թագ. 2:6*):

[249] Եղիսեն ասաց. «Թող քո ոգին կրկնապատիկ չափով ինձ վրա լինի» (*Դ Թագ 2:9*):

փառքի համար է հայտնում այդ խնդրանքը, այլ Աստծու փառքի հանդեպ նախանձախնդիր լինելու և Նրա սուրբ անվան պատվի համար, որպեսզի կռապաշտներին պատժելու ժամանակ չար վարք ունեցողները իրենց մոլորությունից հետ դառնան և զղջումով ու հնազանդությամբ փրկվեն:

Քանի որ նա պիտի Եղիայի փոխարեն մարգարե լիներ, ուստի հարկ էր, որ հրաշքներ գործելու շնորհ էլ տրվեր նրան: Սակայն այդ շնորհի տվչությունը Աստծու կամքից է, ուստի Եղիան պատասխանում է. «Եթե երկինք բարձրանալս տեսնես, թող ցանկությունդ կատարվի, իսկ եթե չտեսնես, ապա ոչ»: Երբ նրանք խոսելով միասին գնում էին, ահա հանկարծ երկնքից լուսեղեն ամպի մեջ հրեղեն կառք և երիվարներ են երևում, երկուսին միմյանցից բաժանելով՝ Եղիային իսկույն երկինք տանում[250]:

Այս պարագայում հրեղեն կառքն ու երիվարները Եղիայի եռանդուն սիրո նշաններն էին: Քանի որ նրա սերը միշտ սևեռված էր Աստծուն և աստվածային փառքի նախանձախնդրությամբ վառված՝ նրա մեջ միշտ բորբոքված էր Իսրայելի ժողովրդի ուղղվելու փափագը, այնպես որ կուռքերի ծառայությանը հատկացված մարդկանց պատժում էր հրի նմանվող սաստիկ պատուհասներով, որից էլ արդարները նրա գործողություններից սփոփվում են, իսկ մեղավորները՝ սոսկում:

Արդարև, բոլորին Աստծու հրամանները հայտնելով՝ Եղիայի մեջ այնքան մեծ էին բոլորին մեղքից հեռու պահելու ցանկությունն ու եռանդը, որ կարծես բոլոր իսրայելացիներին իր մեջ էր կրում և կառավարում նրանց: Այս է պատճառը, որ Եղիսեն նրան նմանեցնում է մարտակառքի և

---

[250] Մինչ նրանք քայլում էին, մի հրեղեն կառք ու հրեղեն երիվարներ երևացին, նրանց միմյանցից բաժանեցին, և Եղիան պտտահողմի մեջ դեպի երկինք վերացավ (*Դ Թագ. 2:11*):

պատերազմող հեծելազորի՝ ասելով. «Դու էիր Իսրայելի զորությունն ու կառավարիչը»[251], մինչև որ Եղիան ամբողջովին աներևութանում է:

Երբ Եղիսեն միայնակ է մնում, տրտմությունից պատառոտում է իր հանդերձները, սակայն Եղիան իր մաշկեղեն զգեստը նրա վրա էր գցել, և Եղիսեն մեծապես մխիթարվում է այդ անգին հիշատակով, քանի որ երբ հասնում է Հորդանանի գետափ, աղոթքով նույն վերարկուով գետի ջրերին է հարվածում, և ահա գետը վերստին երկու մասի է բաժանվում, և Եղիսեն անցնում է այս ափ: Հանդիպում է վերոհիշյալ ուսանողներին, որոնք, «Եղիայի հոգին Եղիսեի վրա իջավ» ասելով, խոնարհությամբ խոնարհվում են մարգարեին[252]:

Հիրավի, նրանք գիտեին, որ Եղիան երկինք է վերացել, այսուհանդերձ, ցանկանում են մարդ ուղարկել և փնտրել նրան՝ կարծելով, որ Աստված նրան մի բլրի կամ լեռան վրա է տեղափոխել: Թեև Եղիսեն ասում է, որ փնտրելու չգնան, սակայն նրանց թախանձանքներին հավանություն է տալիս, ուստի հիսուն մարդ երեք օր փնտրում և ձեռնունայն վերադառնում են Երիքով:

Արդ, քանի որ մարգարեության և հրաշագործության շնորհ է տրվում Եղիսեին, ուստի Երիքովի բնակիչները ասում են մարգարեին. «Մեր քաղաքը լավն է, սակայն ջուրը վատն է, և մարդկանց ու կենդանիներին վնաս լինելուց բացի՝ երկրի անպտղության պատճառ է»: Եղիսեն մի նոր կուժ է պահանջում և դրա մեջ աղ լցնելով՝ ջրի ակունքի մոտ է գնում և այնտեղ աղ լցնում՝ ասելով. «Այսպես է հրամայում Աստված,

---

251 Եղիսեն նայեց ու աղաղակեց. «Հա՛յր իմ, հա՛յր իմ, Իսրայելի կառքը և նրա հեծյալը» (*Դ Թագ. 2:12*):

252 Ասացին. «Եղիայի հոգին իջել է Եղիսեի վրա»: Նրանք եկան դիմավորեցին, երկրպագեցին նրան (*Դ Թագ. 2:15*):

որ այս ջուրը լինի մաքուր և բարի», և ահա աստվածային կամքով դառը ջուրն իսկույն ամբողջությամբ քաղցրանում է:

Հարկ է նկատել, որ երբ աղը լցնում են քաղցր ջրի մեջ, ապա այն վատանում է, սակայն Եղիսեն Աստծու զորությունը ցույց տալու համար դառը ջուրը աղով քաղցրացնում է: Եղիսեն այնտեղից Բեթել պիտի գնար, սակայն այնտեղի մանուկները, որոնք շատ չար և անկիրթ էին, սկսում են նրան ծաղրել՝ *ճաղատ* կոչելով[253]: Թեև Եղիսեն չի ցանկանում նրանց պատասխանել, սակայն նրանք հետապնդելով սկսում են առավել սաստկությամբ ծաղրել, ուստի մարգարեն անիծում է նրանց, և ահա անտառից երկու արջ է դուրս գալիս և նրանցից քառասուներկուսին բզկտում: Այս պատահարը ոչ միայն Երիքովի բնակիչներին, այլև բոլոր իսրայելացիներին մեծ խրատ է լինում, որ իրենց մանուկներին լավ կրթեն և Աստծու մարգարեին հարգել իմանան: Եղիսեն այնտեղից Կարմեղոս լեռ է գնում և ապա վերադառնում Սամարիա, որտեղ հատուկ առաքելություն ուներ:

Հարց ԿԳ: **Ո՞վ է հաջորդում Ոքոզիային:**

Պատասխան: Նրա եղբայր Հովրամը: Քանի որ Ոքոզիան որդի չուներ, Աքաաբն իր կենդանության օրոք արդեն իսկ Հովրամին թագավորության տեղակալ էր կարգել: Ճշմարիտ է, որ Հովրամը, չընդունելով Բահաղ կուռքին, կործանում է կուռքին նվիրված սեղանները, որոնք Աքաաբն էր կառուցել, սակայն Աստծուն կատարյալ սրտով հնազանդություն էլ չի ցուցաբերում: Քանի որ իսրայելացիների՝ Երուսաղեմ չգնալու համար Հերոբովամի ձուլած ոսկե հորթերը չի վերացնում, որով էլ մասնակից է լինում նրա մեղքին:

---

[253] Մինչ իր ճանապարհն էր գնում, քաղաքից դուրս եկան փոքրիկ երեխաներ ու ծաղրելով նրան՝ ասում էին. «Բարձրացի՛ր, ճաղա՛տ, բարձրացի՛ր, ճաղա՛տ» (*Դ Թագ. 2:23*):

Արդ, դեռևս հնուց մովաբացիների թագավորները Իսրայելին հարկ էին վճարում՝ տարին հարյուր հազար մաքի և նույնքան էլ խոյ, սակայն Աքաաբի մահանալուց հետո ապստամբում են և սովորական հարկը չեն վճարում: Ոքոզիան էլ մահանում է՝ նրանց պատժելու ժամանակ չունենալով: Այս իսկ պատճառով Հովրամը մովաբացիների դեմ հարձակվելու պատրաստություն է տեսնում և Հուդայի Հովսափաթ թագավորին նույնպես լուր է ուղարկում, որպեսզի միասին պատերազմեն: Հովսափաթը խոստանում է միանալ նրան, քանի որ բարեկամ էին: Սրանից բացի՝ Եդոմի թագավորն էլ, որը ենթարկվում էր Հովսափաթին, դրա համար նույնպես նրանց է միանում, և երեք թագավորներով և ահագին բազմությամբ մովաբացիների դեմ են շարժվում:

Սակայն երբ յոթ օր անապատով գնալով՝ ջուր չեն կարողանում գտնել, Հովրամը սկսում է գանգատվել, թե Աստված մովաբացիների ձեռքով կոտորելու համար է իրենց առաջնորդել այդ վայրերը: Իսկ Հովսափաթը, որն իր ամբողջ հույսը Աստծու օգնության վրա էր դրել, հարցնում է, թե արդյոք Աստծու մարգարեներից որևէ մեկը չկա այդ վայրերում, որպեսզի նրա միջոցով իմանան Աստծու կամքը, և տեղեկանալով, որ Եղիսեն այդ կողմերում է, երեք թագավորներով անմիջապես նրա գտնվելու վայրն են գնում:

Երբ Եղիսեն տեսնում է Հովրամին, չի ուրախանում, քանի որ գիտեր, որ նրա սիրտն ուղիղ չէր, դրա համար էլ խոսքը նրան ուղղելով՝ ասում է. «Դու ի՞նչ գործ ունես ինձ հետ, գնա՛ հորդ և մորդ մարգարեների մոտ, եթե Հովսափաթի պատվի համար չլիներ, բնավ և երբեք քեզ չէի ընդունի», և թեպետ Եղիսեն գիտեր, թե նրանք ինչի համար են եկել, սակայն Իսրայելի թագավորին հանդիմանելով և բարկանալով՝ նրանց պատասխան տալու համար ի վերուստ չի ներշնչվում:

Այս է պատճառը, որ հրամայում է մի ղևտացի բերել, որպեսզի սաղմոսներ կարդա, և երբ ղևտացին սկսում է սաղմոսերգել, Եղիսեի բարկությունը իսկույն մեղմանում է, և Աստծուց ներշնչված՝ պատասխանում է երեք թագավորներին. «Հեղեղատում հորե՛ր փորեցեք, դեռևս հողմ չբարձրացած և անձրև չեկած՝ հեղհեղատը ջրով կլցվի»[254]:

Նաև նախապես հայտնում է թշնամու նկատմամբ նրանց հաղթանակի մասին, որպեսզի հասկանան և ճանաչեն Աստծու զորությունը: Եվ իրոք, հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, Աստծու կամքով Եդոմի կողմից մի այնպիսի հեղեղ է գալիս, որ նրանց գտնվելու վայրերը ջրի տակ է առնում:

Մովաբացիները, որ լսել էին իրենց դեմ երեք թագավորների արշավանքի մասին, մեծից փոքր հավաքվելով, ահագին բազմություն են կազմում և մի բլուրի վրա բարձրանում, որտեղից հեշտությամբ տեսանելի էր իսրայելացիների բանակը:

Ու քանի որ ջուրը հեղեղել էր շրջակայքը, առավոտյան արեգակի ճառագայթները, ջրին դիպչելով և երկրից բարձրացող գոլորշուն միախառնվելով, մովաբացիների կողմից իսրայելացիների կողմը նայելիս ջուրը արնագույն էր երևում: Եվ ուրեմն, քանի որ այնտեղ նախապես ջուր չկար և այդ ընթացքում անձրև էլ չէր եկել, պատրանքի մեջ ընկնելով՝ միմյանց ասում են. «Իսրայելացիների բանակում երեք թագավորների միջև կռիվ է եղել, և զորքը միմյանց կոտորել է, և այդ արյունն է, որ տեսնում ենք»:

Մանավանդ (տե՛ս Կ հարցը) ամոնացիները և այլ ազգեր Հովսափաթի հետ նախկինում պատերազմելիս զորքերի միջև

---

[254] Երբ քնարահարն սկսեց նվագել, Տիրոջ ձեռքը իջավ Եղիսեի վրա (*Դ Թագ. 3:15*):

կռիվ էր ծագել, և միմյանց կոտորել էին, ուստի նրանք կարծում են, որ համանման մի դեպք էլ իսրայելացիների հետ է կատարվել: Զարմանալին այն է, որ եղելությունը չճշտելով՝ միմյանց ասում են. «Մեր թշնամիները իրար կոտորելով կորան, եկե՛ք գնանք, ավար վերցնենք», և կողոպուտի բաղձանքով, պատերազմական ամեն կարգ ու կանոն թողնելով, խառնիխուռն իսրայելացիների կողմն են շտապում: Սակայն իսրայելացիները, որ բոլոր առումներով կարգապահ էին և զգուշավոր, թշնամու այս անկանոն վիճակը տեսնելով՝ իսկույն սկսում են նրանց կոտորել:

Իրոք, երբ մովաբացիները մտածում են, որ միայն մահացածների պիտի կոտորեն և ահա կենդանի զինվորների են հանդիպում, այդ է պատճառը, որ սկսում են փախչել: Սակայն իսրայելացիները, նրանց հետապնդելով, բոլորին սրի են քաշում, և նրանց քաղաքներն էլ այնպես ավերում, որ կանգուն ոչինչ չի մնում. կտրատում են բոլոր պատղատու ծառերը և աղբյուրներն էլ փակում:

Մովաբացիների թագավորը, իր զորքի այսպիսի կոտորվելը տեսնելով, որոշում է յոթ հարյուր սուսերամարտիկներով հարձակվել եդովմացիների թագավորի վրա, և երբ նրան սա էլ չի հաջողվում, այն ժամանակ ամբողջովին հուսահատվելով, իր անդրանիկ որդուն, որին արդեն իսկ իր փոխարեն թագավոր էր կարգել, իսրայելացիների աչքի առջև քաղաքի պարիսպների վրա մորթում է: Այս սարսափելի զոհաբերության տեսարանից բոլորի սիրտը կարեկցությամբ է լցվում, հեռանում են այնտեղից, և ամեն մարդ իր տուն է վերադառնում: Հուդայի Հովսափաթ արքան էլ իր տուն է վերադառնում: Սրանից հետո Հովսափաթը մահանում է և թաղվում Սիոն լեռան վրա իր թագավորության քսանհինգերորդ տարում:

Հարց ԿԴ: **Ո՞վ է հաջորդում Հովսափաթին:**

Պատասխան: Նրա անդրանիկ որդի Հովրամը (Հորամ): Թեև Հովսափաթը յոթ որդի ուներ, սակայն իր կենդանության օրոք Հովրամին թագավորեցնելով՝ մյուս որդիներին որոշ քաղաքներ և կալվածքներ է հատկացնում, որպեսզի հանգիստ ապրեն, և նրանց միջև հակասություններ չծագեն: Սակայն երբ Հովրամը բավականաչափ զորանում է, եղբայրներին սպանելով, նրանց կալվածքները գրավելուց բացի, Երուսաղեմում բնակվող իսրայելացի նշանավոր մարդկանցից մի քանիսին էլ է սպանել տալիս: Բացի դրանից՝ իր կնոջ՝ Գաթողիայի չար թելադրանքով (որ Աքաաբի դուստրն էր), Հուդայի երկրի բոլոր քաղաքներում կռատներ կանգնեցնելով, ժողովրդին Աստծու հնազանդությունից հանելով, կռապաշտության մոլորության մեջ է գցում:

Դու տե՛ս Աստծու արդարությունը. Հովրամի՝ Աստծու օրենքներին անհնազանդ լինելուն պես նրա իշխանության ներքո գտնվող եդովմացիներն անմիջապես ապստամբում են: Իսկ մինչ այդ Հուդայի թագավորն էր նրանց թագավոր կարգում, բայց այս անգամ նրա կամքին հակառակ՝ իրենք իրենց համար թագավոր կարգեցին: Թեև Հովրամը պատերազմում է եդովմացիների դեմ, սակայն հաղթանակը կատարյալ չլինելով՝ այլևս այդ ժողովուրդը դադարում է Հուդայի թագավորին հնազանդվելուց: Նույն ձևով Հովրամի դեմ ապստամբում է Լոբնա քաղաքը՝ երես շրջելով կռապաշտ թագավորից:

Եվ, իրոք, իսրայելացիներն էլ գոհ չէին Հովրամից, սակայն վախենալով նրա հայտնի անգթությունից՝ համբերում են: Մի քանի տարի առաջ երկինք վերացած Եղիա մարգարեից (որն աստվածային ներշնչմամբ տեղյակ էր Հովրամի գործերին) պատգամաբերի միջոցով հանդիմանական գրություն է ուղարկվում Հովրամին, որի մեջ մեկ առ մեկ հիշեցնելով

նրա չարագործությունները՝ անզգամ թագավորին կանխավ շտապում է հայտնելու, թե ինչ սաստիկ և մեծ պատիժներով պետք է պատժվի, որպեսզի զղջա և ուղղվի[255]:

Երբ սույն նամակից էլ թագավորն անուղղելի է մնում, Աստված նրա դեմ կռապաշտ փղշտացիներին է հանում, որոնք, վաղնջական ժամանակներից Հուդայի թագավորին հարկատու լինելով, այս անգամ մեծ բազմությամբ ոչ միայն Հուդայի երկիր են արշավում, այլև ժողովրդին մեծ նեղություններ են հասցնում, անգամ Երուսաղեմ թագավորանիստ քաղաք են մտնում, որտեղ Հովրամի պալատից բոլոր թանկագին իրերը գողանալուց բացի՝ անխնա սպանում են նրա զավակներին և դուստրերին ու կնոջը, միայն կրտսեր որդին՝ Ոքոզիան, և նրա մայր Գոթողիան մի կերպ, հնարքներով ազատվում են, և թշնամին էլ անհաշվելի ավարով, հաղթական փառքով վերադառնում է Երուսաղեմից: Թեև Հովրամի ուղղվելու համար է թույլատրվում այս ամենը, որ թշնամին պատժի նրան, սակայն նա երբեք չի ցանկանում չար ճանապարհից առ Աստված դառնալ, ուստի որպես նրա համառ անզգամության հատուկ պատիժ՝ մարմնին այնպիսի սաստիկ և զզվելի ախտ է առաջանում, որ երկու տարի անընդմեջ որովայնը ցավելով՝ աղիքները, աստիճանաբար պտտելով, դուրս են թափվում: Այսպիսով, այլևս բժշկվելու հնարավորություն չունենալով՝ Եղիայի գրածի և վճռածի համապատասխան՝ սաստիկ և անտանելի տանջանքներով չարաչար մահանում է:

---

[255] Եղիա մարգարեից նրան պատգամագիր եկավ, ուր ասված էր.... «Քանի որ չընթացար քո հոր՝ Հոսափատի ուղիով.... դրա համար էլ Տերը քո ժողովրդի ներկայությամբ քեզ, քո որդիներին, քո կանանց և քո ամբողջ ունեցվածքին մեծ հարվածներ է հասցնելու» (*Բ Մնաց. 21:13, 15*):

Հիշյալն ութ տարի թագավորում է Երուսաղեմում, և քանի որ ժողովուրդը նրա չարության պատճառով շատ նեղություններ էր կրել, ուստի ոչ միայն թագավորին հատուկ աստիճան և պատիվներ չեն ընծայվում, այլև նրա նախորդ թագավորների գերեզմանում էլ դրվելու արժանի չի համարվում, և նրան անշուք թաղում են Երուսաղեմից դուրս՝ մի հասարակ վայրում:

Բոլոր մարդիկ, որոնք Աստծու հրամաններին և օրենքներին հակառակ վարք ունենալուց հետո, փոխանակ մարդկային սխալների համար զղջալու և արցունքներով ապաշխարելու, դիվական համառությամբ պնդում են և մնում իրենց հոգեկործան վարքուբարքին, թող Հովրամին տրված պատժից օրինակ վերցնեն:

Ճշմարիտ է, որ Աստված Իր անհուն ողորմությամբ միանգամից չի պատժում Հովրամին և ցանկանում է, Եղիայի պատգամագրով հանդիմանելով, զգուշացնել նրան, մանավանդ նրա թշնամիներին գրգռելով՝ նրան բացահայտորեն հրավիրում է հետ կանգնելու իր հոռի կենցաղից, սակայն նա արհամարհում է աստվածային ողորմությունն ու հրավերը, և երբ օրըստօրե սաստկանում է նրա չարությունը, այդ ժամանակ իրավացիորեն և արդարացիորեն սաստիկ պատիժների է ենթարկվում:

Արդարև, այս պարագայում միանգամայն հայտնի են դառնում Աստծու գթությունն ու արդարությունը: Քանի որ Նա ներողամիտ լինելով մեղավորին իսկույն չի պատժում, ողորմած ու մարդասեր լինելով՝ յուրաքանչյուրին իր պատվի և դիրքի համապատասխան տարատեսակ եղանակներով ապաշխարության է կոչում, ոմանց հիվանդություններ և աղքատություն է տալիս, այլոց՝ սիրելիներին վերցնում, շատերին՝ թշնամիներ ուղարկում, վերջապես ամեն մեկին պես-պես նեղություններով հրավիրում է՝ Աստծու օգնությանն իրենց հույսը դնեն, և իրենց

չափը հասկանալով՝ ուղղվեն և զգաստության գան: Աստված արդար լինելով անուղղելիներին էլ է պատժում, որպեսզի գոնե նրանց մասին լսողները երկնչեն և ուղղվեն:

Հովրամի փոխարեն Երուսաղեմում նրա որդին՝ Ոքոզիան է թագավոր դառնում[256]: Քանի որ սրա մայրը՝ Աքաաբի դուստր Գոթողիան էր, ուստի սա ևս մոր թելադրանքով պապի չար վարքն է որդեգրում և մանավանդ Իսրայելի թագավոր Հովրամին փեսա լինելով՝ բարեկամություն է անում նրա հետ, և երկուսն էլ բարեպաշտության ճանապարհն ընտրելու փոխարեն մոլությամբ հետամուտ են լինում կռապաշտությանը և աստվածային սուրբ օրենքներին և հրամաններին հակառակ գործելով՝ մոլորեցնում են ժողովրդին և Աստծու բարկությանն արժանանում:

Հարց ԿԵ: **Ուրիշ ի՞նչ հրաշքներ է կատարում Եղիսեն:**

Պատասխան: Սամարիայում մի այրի կինոջ պարտքերի պատճառով պարտատերը դրամի փոխարեն նրա երկու որդիներին էր ցանկանում հափշտակել, քանի որ հիշյալ այրին պարտքը տալու համար դրամ չուներ: Սակայն նա իր տանը մի քիչ յուղ ուներ, որով, ըստ իրենց սովորության, օծվում էր: Խղճալի կինը ոչ մեկից օգնության հույս չուներ, չքավորությունից ստիպված՝ գնում և իր վիճակը հայտնում է Եղիսեին, որը, տեղեկանալով, որ նրա տանը մի քիչ յուղ կա, կնոջն ասում է. «Գնա՛ և հարևաններից յուղի ամաններ՝ խնդրիր, ապա դու և որդիներդ մտե՛ք տուն, դո՛ւռը փակեք և այդ յուղից ամանների մեջ լցրե՛ք»:

Արդարև, այրի կինը, ըստ մարգարեի խոսքի, հարևաններից յուղի շատ տարաններ է հավաքում: Որդիներն այս

---

256 *Բ Մնաց. 22:*

տարաները մեկ առ մեկ նրան են տալիս, և այրի կինը տան յուղից սկսում է լցնել տարաների մեջ, և Աստծու կամքով այդ յուղը չի պակասում, ապա նորից աման է ուզում, որ յուղը լցնի, և երբ որդիները պատասխանում են, որ այլևս ազատ աման չկա, յուղն իսկույն սպառվում է: Արդ, ըստ Եղիսեի կարգադրության՝ այդ այրի կինը, յուղը վաճառելով, իր պարտքերը մարելուց բացի, զավակների հետ էլ ապրում է՝ գոհանալով Աստծու բարերարությունից, որ այսպիսի հրաշքով և Նրա ճշմարիտ մարդասեր մարգարեի միջոցով բարեհաճում է իրեն և զավակներին փրկել թշնամուց:

Եղիսե մարգարեն ժողովրդին մխիթարելու համար ժամանակ առ ժամանակ շրջում է Իսրայել երկրում և հաճախ է անցնում Սովմա քաղաքով: Սովորաբար մի առաքինի կին, ի հարգանս մարգարեի սրբության և նրան կերակրելու համար, հաճախ հյուրընկալում էր նրան իր տանը: Մինչև անգամ հիշյալ կինը, իր ամուսնու հետ խորհրդակցելով, տան վերնահարկում հատկապես Եղիսեի համար անհրաժեշտ կահկարասիով մի փոքրիկ սենյակ է պատրաստում, որպեսզի մարգարեն հյուրընկալվելիս հանգիստ լինի[257]:

Երբ Եղիսեն գալով կնոջ նոր կառուցած սենյակում հանգստանում է, կնոջը որևէ բարիք անելու համար նրան հարցնում է, թե արդյոք թագավորի կամ սպարապետի մոտ որևէ խնդրանք կամ գործ չունի, որ ինքը կատարել տա, և տեղեկանալով, որ ոչնչի կարիք չունի, և ամեն առումով բարեկեցիկ վիճակում է, իր ծառային՝ Գեեզիին, հարցնում է, թե ինչ կարելի է անել

---

[257] Կինն ասաց իր ամուսնուն. «Գիտեմ, որ Աստծու մարդը սուրբ է, և նրա ճանապարհը մեր կողմով է անցնում: Ե՛կ մի փոքրիկ վերնատուն շինենք նրա համար, այնտեղ դնենք մահիճ, սեղան, աթոռ ու աշտանակ, և երբ որ մեզ մոտ գա, թող այնտեղ ապրի» (*Դ Թագ. 4:9, 10*):

նրա այդ բարության համար: Գեեզին մարգարեին հայտնում է, որ այդ կինն անզավակ է, և ամուսինն էլ երիտասարդ է. այս տեղեկությունը լսելուն պես Եղիսեն կանչում է կնոջը և ավետիս տալիս՝ ասելով. «Եկող տարի այս օրերին մի զավակ կունենաս»:

Արդարև, ըստ Եղիսեի խոսքի՝ հաջորդ տարի հիշյալ տիկինը մի արու զավակ է ունենում, որը մեծանալով մի օր հունձի ժամանակ հոր մոտ՝ դաշտ է գնում, և արեգակի սաստիկ ճառագայթումից գլուխը սկսում է ցավել. հայրը նրան մոր մոտ է ուղարկում, որի ծնկներին օրվա մնացած կեսը քնելուց հետո մահանում է:

Դու հիշյալ կնոջ հավատքի մեծությա՛նը նայիր. որովհետև առանց որևէ մեկին մանկան մահը հայտնելու, նրան իսկույն Եղիսեի սենյակն է տանում և մարգարեի մահճակալին պառկեցնելուց հետո դուռը կողպում է և ամուսնուն կանչելով՝ մարգարեի մոտ գնալու համար մի մարդ և ավանակ խնդրում: Թեև ամուսինը ցանկանում է պատճառն իմանալ, սակայն կինն առանց հայտնելու գնում է: Եղիսեն այդ ընթացքում Կարմեղոս լեռան վրա էր և հեռվից նշմարելով կնոջը՝ ծառային ասում է. «Եկողը սովմնացին է, գնա,՛ ողջունի՛ր նրան»:

Գեեզին, կնոջը դիմավորելով և նրա ու տնեցիների որպիսությունն իմանալով, փափագում է գալու նպատակն իմանալ, սակայն կինն առանց ծառային հայտնելու ուղղակի մարգարեի ոտքերն է ընկնում: Ծառան ցանկանում է արգելել նրան, սակայն Եղիսեն կանխում է՝ ասելով. «Թո՛ղ, նա վիշտ ունի, և Աստված ինձ չհայտնեց դրա մասին»: Ապա կինն արտասվելով և հառաչանքներով աղաղակում է. «Մի՞թե ես քեզնից մանուկ խնդրեցի»: Այս սրտահույզ աղաղակից մարգարեն հասկանում է, որ մանուկը մահացել է:

Այն ժամանակ մարգարեն, Աստծուց ներշնչված, պատվիրում է Գեեզիին գոտին կապել և իր գավազանը տանել ու

մանկան վրա դնել և ճանապարհին էլ ոչ մեկին չողջունել և ողջույն չառնել: Այս պատվերն է տալիս, որպեսզի ճանապարհին որևէ մեկի հետ խոսքի բռնվելով՝ ժամանակ չկորցնի: Թեև Գեեզին մարգարեի գավազանով է գնում, սակայն սովմնացին երդվում է, որ Եղիսեից չի հեռանալու, ուստի մարգարեն էլ է Գեեզիի հետևից գնում: Գեեզին գնալով գավազանը մանուկի վրա է դնում, սակայն ոչ մի հրաշք կամ նշան չի կատարվում: Այն ժամանակ Եղիսեն էլ, սենյակ մտնելով, դուռը կողպում է: Նա աղոթում է Աստծուն և խոնարհվում մանկան վրա, այնպես որ աչքը աչքին, ձեռքը ձեռքին դնելով՝ ջերմացնում է մանկան դիակը, ապա սենյակում այս ու այն կողմ քայլելով՝ աղոթում է Աստծուն և իր մարմնով նորից փակում է մանկան դիակը. այս գործողությունները յոթ անգամ կրկնելուց հետո Աստծու կամքով ահա մանուկը կենդանանում է, որին անմիջապես հանձնում է մորը:

Եղիսեի՝ այսպիսի գործողություններով մանկանը հարություն տալը հոգևոր առումով Աստծու Բանի մարմնանալու և մարդկային ազգը մեղքից փրկելու օրինակ է. այսպես են ըմբռնել շատ բարեպաշտ մարդիկ:

Սրանից բացի՝ Եղիսեին ասվել էր, որ Իսրայել երկրում սով պիտի լինի, ուստի հիշյալ կնոջը խորհուրդ է տալիս այլ երկիր գնալ[258]: Արդարև, հիշյալ կինը, նրա կանխասացությանը հավատալով, իր ողջ ունեցվածքով և մարդկանցով ամբողջ յոթ տարի բնակվում է կռապաշտների երկրում, և երբ սովն անցնելուց հետո Սամարիա է վերադառնում, տեսնում է, որ իր տունն ու արտն այլ մարդիկ են գրավել, որի համար բողոքում է թագավորին: Գեեզին նախապես թագավորին պատմել էր, թե ինչպես է Եղիսեն կենդանացրել այդ կնոջ որդուն, ուստի

---

258 *Դ Թագ. 8*:

թագավորը հատուկ պաշտոնյա է ուղարկում, որ նրա տունն ու արտերը հետ վերցնելուց բացի, յոթ տարվա արդյունքն էլ վերցնելով՝ կնոջը հանձնեն:

Օրինա՛կ վերցրու. հիշյալ սովմնացին Աստծու մարգարեին հյուրասիրությամբ մեծարելով, նրան իր տանը ընդունելու և կերակրելու փոխարեն մեծագույն բարիք է վայելում, նախ՝ զավակ է ունենում, ապա՝ երբ զավակը մահանում է, մարգարեի աղոթքով կենդանանում է, և մանավանդ այդ նույն մարգարեի խորհրդով սովի ժամանակ օտար երկիր գնալով՝ հանգիստ ապրելու է արժանանում:

Այնուհետև Եղիսեն Գաղգաղա է գալիս, որտեղ նույնպես սով էր, և երբ *մարգարեների որդիներ* կոչվող ուսանողները հավաքվում են նրա շուրջը, ծառային հրամայում է, որ նրանց համար կերակուր պատրաստի: Սակայն այգիներում ուտելի կանաչեղեն չգտնելով՝ գնում է դաշտ և չիմանալով այնտեղից թունավոր խոտաբույսեր և պատուղներ է հավաքում և պատրաստում: Հյուրերն անմիջապե սկսում են ուտել, և այն այնքան դառն է լինում, որ նրանք աղաղակում են. «Մահ կա սրա մեջ»[259]: Սակայն երբ Եղիսեի հրամանով մի փոքր ալյուր են լցնում այն թասի մեջ, որում եփվել էր կերակուրը, կերակուրն իսկույն Աստծու շնորհով անվնաս է դառնում:

Դարձյալ. մի մարդ իր արտի առաջին արդյունքից Եղիսեին մի քանի գարեհաց և մի պարկ թզի չիր է ընծայում: Այդ պահին ծերերից հարյուր հոգի են գտնվում նրանց մոտ, և Եղիան ծառային հրամայում է, որ այդ հացերն ու թուզը ժողովրդին բաժանի, որպեսզի ուտեն, իսկ ծառան առարկում է՝ ասելով, թե ինչպես այդքանը հարյուր մարդու կբավականացնի, որին

---

[259] Աղմուկ բարձրացնելով՝ ասացին. «Մահ կա կաթսայի մեջ, ո՛վ Աստծու մարդ» (*Դ Թագ. 4:40*):

ի պատասխան՝ Եղիսեն ասում է. «Տո՛ւր, թող ուտեն, քանի որ Աստված այսպես է ասում՝ պիտի բոլորը ուտեն, և պիտի ավելանա»: Արդարև, Եղիսեի խոսքին համապատասխան՝ ամբողջ ժողովուրդն ուտում է այդ հացից, և նաև ավելանում է:

Ասորիների Նեեման անունով զորավարը վարակվել էր բորոտությամբ. սա շատ քաջ, խոհեմ և թագավորին շատ հարգելի անձնավորություն էր, և մանավանդ Աստված ասորիների տկարացած տերությունը նրա ձեռքով զորացրած լինելով՝ թագավորը շատ էր ցանկանում իր զորավարին առողջ տեսնել: Ասորիները, իսրայելացիներից մի փոքրիկ աղջնակ գերեվարելով, նույն այդ զորավարի կնոջն են վաճառում:

Արդ, այդ աղջիկը, Եղիսեի գործած հրաշքների պատմությունները լսած լինելով, իր տիկնոջն ասում է. «Եթե պարոն զորավարը գնա Սամարիա՝ Աստծու մարգարեի մոտ, անպատճառ կբժշկվի»: Նեեմանն այս խոսքը լսելուն պես հայտնում է թագավորին և նրա հրամանով, մեծ պատրաստություններով և ընծաներով գալիս է Սամարիա՝ Իսրայելի թագավոր Հովրամի մոտ: Երբ Հովրամը տեղեկանում է նրա գալու դրդապատճառներին, թշնամություն կարծելով՝ պատասխանում է. «Մի՞թե ես Աստված եմ, որ կյանք և մահ տալու իշխանություն ունենամ», և որպես տխրության նշան՝ պատռում է զգեստը, քանի որ ասորիների թագավորն իշխանաբար նամակով գրել էր. «Ահա Նեեմանին քո մոտ եմ ուղարկում, երբ գա, բուժես նրան»:

Եղիսե մարգարեն լսում է Հովրամի վարքի մասին և լուր է ուղարկում՝ ասելով. «Ինչո՞ւ ես հագուստդ պատռում, Նեեմանը թող ինձ մոտ գա և իմանա, որ Իսրայելում մարգարե կա»: Երբ Նեեմանն իր ամբողջ շքախմբով մարգարեի տան մոտ է հասնում, Եղիսեն առանց տնից դուրս գալու մարդ է ուղարկում՝ զորապետին հայտնելու, որ բժշկվելու համար գնա և յոթ

անգամ լվացվի Հորդանան գետում: Նեեմանը, սույն պատվերը լսելով, սրտնեղում է և ցանկանում է հետ դառնալ, քանի որ հույս ուներ, որ Աստծու մարգարեն դուրս գալով, Աստծու անունով ձեռք դնելով՝ կբժշկեր իրեն:

Այս է պատճառը, որ պատասխանում է. «Դամասկոսի ջրերը իսրայելացիների բոլոր ջրերից լավագույնն են, կգնամ և այն պատվական ջրերում լվացվելով կբժշկվեմ»: Սակայն նրա ծառաները առարկում են. «Եթե մարգարեն նույնիսկ մի դժվար բան առաջարկած լիներ, դարձյալ պիտի կատարեիր, քանի որ այժմ միայն առաջարկում է լվացվել և առողջանալ, ուրեմն պետք է նրա այս դյուրին առաջարկը կատարել»: Նեեմանը, իր բարեկամ ծառաների հորդորանքներին հետևելով, գնում և յոթ անգամ լվացվում է Հորդանանում, որից հետո ամբողջովին բժշկվում է՝ առանց հիվանդության հետքն անգամ մարմնին մնալու, ուստի իր անկեղծ շնորհակալությունը մարգարեին ասելու համար վերադառնում է և խոստովանում, որ իսրայելացիների Աստծուց բացի՝ ամբողջ աշխարհում այլ Աստված չկա:

Եվ քանի որ հիշյալ զորականը բազում ինչքեր էր բերել և տասը կտոր հագուստ՝ որպես ընծա մարգարեին, այս ամենը ցանկանում է Եղիսեին նվիրել, սակայն նա ոչինչ չի ընդունում: Այստեղ հարկ է նկատել, որ Նեեմանը, ճշմարիտ Աստծուն ճանաչելով, այլևս չի ցանկանում կուռքեր երկրպագել, ուստի խնդրում է մարգարեին, որ նրա հաճությամբ Իսրայելից երկու ջորաբեռ հող վերցնի և Դամասկոս տանելով՝ սեղան կանգնեցնի և վրան զոհեր մատուցի Աստծուն:

Դրանից բացի՝ քանի որ հանդիսավոր արարողությունների ժամանակ թագավորը հենվում էր իր ձեռքին, և Դամասկոսում ինքը պարտավոր էր ասորիների թագավորին երկրպագելու ժամանակ կուռքերին գլուխ տալ, ուստի աղաչում է, որ

Աստված ների նրա այդ ակամա հանցանքը: Մարգարեն, նրա սրտի և հավատի մեծությանը նայելով, պատասխանում է. «Գնա՛ խաղաղությամբ», և նոր միայն Նեեմանն անպատմելի ուրախությամբ վերադառնում է իր երկիր՝ Դամասկոս:

Սակայն Եղիսեի Գեեզի ծառան, որն ագահ մարդ էր, տեսնելով, որ Եղիսեն Նեեմանից ոչինչ չի վերցնում, որոշում է ինքը վերցնել, ուստի մարգարեից գաղտնի գնում և, որպես թե իրեն Եղիսեն է ուղարկել, ասում է. «Մարգարեների որդիներից երկու հոգի եկան, որոնց համար մարգարեն մի քսակ դրամ և երկու կտոր հագուստ է խնդրում տալ»: Զորավարը, այս խոսքերը լսելով, ուրախությամբ իջնում է կառքից և երեք քսակ դրամ ու երկու ձեռք զգեստ հանձնելով իր ծառաներին՝ անմիջապես Գեեզիի հետ ուղարկում է:

Սակայն Գեեզին իր նենգությունը ծածկելու համար ճանապարհին դանդաղում է, մինչև որ մութը ընկնի, և երբ մթնում է, դրամն ու զգեստները իր տուն է տանում և Նեեմանի ծառաներին հետ ուղարկելով՝ ներկայանում է մարգարեին: Մարգարեն հարցնում է, թե որտեղից է գալիս, որին ամենայն հանդգնությամբ պատասխանում է. «Ծառադ ոչ մի տեղ չէր գնացել»:

Դու ագահ Գեեզիի թշվառ դրությա՛նը նայիր. նա, ով միշտ ծառայում էր Եղիսեին և նրա գործած հրաշքներն իր աչքով էր տեսել, իր խարդախությունը ի հայտ չգալու համար խաբելով ստում է նրան: Բայց թե ինչ նպատակով էր նա Նեեմանից գումար և հագուստներ վերցրել, արդեն ի վերուստ Եղիսեին հայտնի էր, ուստի նա պատասխանում է. «Քանի որ ասորիների զորավարից ունեցվածք և հանդերձներ վերցրիր, որպեսզի այգի, եզ, ոչխար և աղախին գնես, դրա պատճառով Նեեմանի բորոտությունը հավիտյան քեզ և զավակներիդ վրա գա»: Մարգարեի սույն խոսքից հետո Գեեզին իսկույն բորոտած դուրս է գալիս:

Թող Գեեզիի այս դառնաղետ և ծանր պատժից օրինակ վերցնեն նրանք, ովքեր ագահ և ստախոս են: Գեեզին, ընչասիրությունից դրդված, ստում է և այնպիսի արարք է գործում, որը կարող էր անպատվություն բերել Եղիսե մարգարեին, և այդ արաքը ոչ միայն իր անձի, այլև իր ամբողջ ընտանիքի բորոտության պատճառ է դառնում:

Եղիսեի՝ Երիքով գալու ժամանակ այնտեղի *մարգարեների որդիները* նրա ուշադրությունն իրենց բնակարանների անհարմարությանը են հրավիրում և ցանկություն հայտնում գնալու Հորդանանի կողմերը և այնտեղ փայտ կտրելով՝ իրենց համար ընդարձակ բնակարաններ կառուցելու. Եղիսեն հավանություն է տալիս նրանց մտադրությանը, և ինքն էլ հետները գնում է: Արդ, նրանցից մեկը կացնով գործ անելիս կացնի գլուխը, պոչից դուրս գալով, գետն է ընկնում: Այդ աշակերտն էլ, խիստ աղքատ լինելով, այդ կացինը ուրիշից փոխ էր վերցրել, ուստի ցավագին աղաղակները լսելուն պես Եղիսեն, մի փայտ ճեղքելով, ուղիղ կացնի ընկած տեղն է գցում, և ահա հրաշքով կացինը փայտի հետ ջրի երես է բարձրանում, և հիշյալ ուսանողը ուրախ և զվարթ նորից կացինը հետ է ստանում:

Ասորիների վերոհիշյալ թագավորը թշնամի էր իսրայելացիների թագավոր Հովրամին և շարունակաբար Իսրայել երկրին վնասներ հասցնելուց բացի՝ երբեմն-երբեմն զորք էր ուղարկում, որ դարան մտնեն և Հովրամի՝ Սամարիայից դուրս գալու ժամանակ նրան գերեն: Սակայն Աստծու ազդեցությամբ Եղիսե մարգարեն, իմանալով նրա բոլոր կարգադրությունները և լրտեսների թաքստոցների տեղերը, հայտնում է թագավոր Հովրամին, որն էլ եղելությունը ճշտելով՝ խուսափում էր գերվելուց: Ադերի որդին բարկացած հանդիմանում է իր հպատակներին՝ ասելով. «Իմ գաղտնիքը ո՞վ է հայտնում Իսրայելի թագավորին, որն էլ այդպես փրկվում է իմ ձեռքից»:

Քանի որ նա բազմիցս էր մարդկանց ուղարկել՝ դարանակալելու, և իր կարգադրություններն ապարդյուն էին եղել, ուստի կարծում է, որ իր գաղտնիքին տեղյակ մարդկանցից մեկն է մատնում իրեն: Սակայն թիկնապահներից մեկը հայտնում է. «Ոչ ոք չի կարող Իսրայելի թագավորին հայտնել Ձեր խորհուրդները՝ բացի Եղիսե մարգարեից, որը ննջարանում Ձեր խոսածն անգամ լսում և հայտնում է Ձեր թշնամուն»: Ասորիների թագավորը, սա լսելով և տեղեկանալով, որ Եղիսեն Դովթայիմ քաղաքում է, նրան ձերբակալելու համար զորք է ուղարկում:

Արդարև, զորքը, գիշերը գալով, շրջապատում է քաղաքը, որպեսզի Եղիսեն չփախչի: Եվ երբ առավոտյան մարգարեի ծառան տեսնում է զորքը և հասկանում նրանց գալու նպատակը, երկյուղով հարցնում է, թե ինչ պիտի անեն, մարգարեն պատասխանում է. «Մի՛ վախեցիր, մեզ հետ եղողներն ավելի շատ են», քանի որ Տիրոջ կողմից հրեշտակներ էին ուղարկվել, որպեսզի թշնամուց պաշտպանեն Եղիսեին, սակայն ծառան չէր կարող տեսնել նրանց, ուստի մարգարեն աղոթում է Աստծուն և խնդրում, որ նրա աչքերը բացվեն. Աստված ընդունում է մարգարեի խնդրանքը, և ծառան նույնպես, հրեշտակներին տեսնելով, քաջալերվում է:

Երբ զորքը քաղաք պիտի մտներ, Եղիսեն, որպեսզի նրանց հայտնի դառնա Աստծու զորությունը, աղոթում է, որ Աստված շլացնի նրանց աչքերը, և սրանք անկարող լինեն ըմբռնելու իրենց տեսածը[260]: Ահա Աստծու կամքով նրանք բոլորը աննախադեպ շլություն են ունենում, այնպես որ բաց աչքով արդեն իսկ իրենց հայտնի տեղերն ու մարդկանց անկարող են լինում ճանաչելու և հասկանալու, թե ովքեր են և ուր են:

---

[260] Եղիսեն սկսեց աղոթել Տիրոջն՝ ասելով. «Հարվածի՛ր այս ազգին, որ շիլ դառնա»: Եվ Տերը, ինչպես ասել էր Եղիսեն, հարվածեց նրանց ու շիլ դարձրեց (*Դ Թագ. Զ 18*):

Ապա Եղիսեն քաղաքից դուրս գալու ժամանակ նրան հարցնում են, թե որտեղ է Եղիսեն: Այս հարցին ի պատասխան՝ ասում է. «Ձեր փնտրած տեղը սա չէ, իմ հետևի՛ց եկեք, որ ձեզ տանեմ ձեր փնտրած մարդու մոտ», և նրանց առաջնորդելով՝ տանում է Սամարիա և նորից աղաչում Աստծուն, որ նրանց աչքերը բացի: Երբ Աստծու կամքով փարատվում է նրանց աչքերի շլությունը, նկատում են, որ Սամարիա մայրաքաղաքում են, և դրանից վախն ու շփոթությունը տիրում է նրանց սրտերին, այդպես շվարած մնում են:

Իսրայելի թագավորը, եղելությանը տեղեկանալով, թեև ցանկանում է կոտորել նրանց, սակայն Եղիսեն թույլ չի տալիս՝ ասելով. «Պատերազմում գերեվարած գերիների՛դ կոտորիր, իսկ սրանց կերակո՛ւր տուր, որ ուտեն և վերադառնան իրենց տները»: Ուստի Հովրամը, ըստ մարգարեի խոսքի, կերակրում է թշնամուն և չվնասելով թողնում է, որ իրենց երկիր գնան:

Հարց ԿԶ: **Ասորիների թագավորը դարձյալ թշնամությո՞ւն է անում Հովրամի դեմ:**

Պատասխան: Այո՛, նա դարձյալ շարունակում է թշնամությունը Իսրայելի թագավորի դեմ: Ճշմարիտ է, որ ասորիները այլևս զգուշանում են իսրայելացիների երկրներ մտնելուց և վնասներ հասցնելուց, քանի որ վերոհիշյալ հրաշքների տպավորության ներքո էին, բայց նրանց թագավորը չի կամենում ընդունել, որ այդ հրաշքները Աստծու զորությամբ են, և մանավանդ վրեժխնդրությամբ լցվելով Հովրամի հանդեպ՝ պատեհ առիթ է փնտրում, որ իրագործի իր նպատակը:

Եղիսե մարգարեն արդեն հայտնել էր, որ Իսրայել երկրում սով պետք է լինի (տե՛ս ԿԵ հարցը), և սովն օրըստօրե սաստկանալով՝ ամբողջ Իսրայելի ժողովուրդն ու մասնավորապես սամարացիները վերին աստիճանի նեղությունների

պիտի ենթարկվեն և թշվառ վիճակի հասնեն: Ասորիների թագավորը, այս առիթը հարմարագույնը նկատելով, զորքի ահագին բազմությամբ գալիս և պաշարում է Սամարիան, սակայն հարձակում չի նախատեսում՝ մտածելով, որ ժողովուրդը, սովից նվաղած և ընկճված, շուտով անձնատուր կլինի, և կոտորածի կարիք էլ չի լինի: Անզգամ թագավորը մոռացել էր Եղիսե մարգարեին, որի աղոթքով այս անգամ էլ չպիտի կարողանար նպատակին հասնել:

Հովրամն ընդհարապես չի կարողանում նրա դեմ դուրս գալ և մնում է քաղաքում՝ ասես բանտում կալանավորված: Սովն այնքան է սաստկանում, որ բնակիչները, իրենց բնությանը հակառակ, անսուրբ անասուններին ուտելուց բացի, անգամ մարդկային միս են սկսում ուտել: Ինչպես, օրինակ, երբ թագավորը շրջում էր քաղաքի պարսպի վրա, մի կին, մի այլ կնոջ դեմ գանգատվելով, այսպես է ասում. «Փրկի՛ր ինձ, տե՛ր արքա»: Արքան նեղսրտած, բարկությամբ պատասխանում է. «Եթե Տերը չի փրկում, ինչո՞վ կարող եմ ես փրկել քեզ՝ կալո՞վ, թե՞ հնձանով»: Ապա ասածի համար զղջալով՝ հարցնում է, թե նրան ինչ է պետք[261]: Գանգատվող կինը թագավորին պատմում է. «Այս կինը ինձ ասել էր, որ այսօր իմ զավակին ուտենք, վաղն էլ իրենը կուտեք, ուստի իմ զավակին եփելով կերանք, իսկ երբ երկրորդ օրն ասացի, որ որդուն բերի, որ նրան էլ ուտենք, նա թաքցրեց նրան». սա լսելով՝ թագավորը սրտի ցավից պատռում է հագուստը:

Այսպիսի սովի աստվածային պատիժ լինելն անկասկած էր, ուստի Հովրամը մերկ մարմնին քուրձ էր հագել և երբ պատռում է զգեստները, ժողովուրդը տեսնում է նրա՝ քուրձ հագած

---

[261] Արքան ասաց. «Եթե Տերը չի փրկում, ինչո՞վ կարող եմ ես փրկել քեզ, կալո՞վ, թե՞ հնձանով» (*Դ Թագ. 6:27*):

լինելը: Թեև այս պարագայում թագավորը պարտավոր էր սպանել երկու կանանց էլ, քանի որ նրանց արարքը ոչ միայն հակառակ էր Աստծու օրենքներին և հրամաններին, այլև դուրս էր բնական օրենքներից, սակայն նա, ոչինչ չասելով, բարկությունից չհասկանալով ինչ անել, երդվում է մարդ ուղարկել և Եղիսեի գլուխը կտրել: Արդարև, մարդ է ուղարկում, ապա ինքն էլ նրանց հետևից է գնում, որպեսզի նրան սպանելու փոխարեն ժողովրդի ծայրահեղ վիճակի պատճառն իմանա:

Քանի որ մինչ այդ օրերը Եղիսեի միջոցով շատ հրաշքներ էին տեղի ունեցել, ուստի հույս է տածում, որ եթե նա աղոթի Աստծուն, և՛ թշնամուց, և՛ սովից կազատվեն: Արդ, այդ պահին Եղիսեն իր տանն էր, և ժողովրդի ծերերն էլ նրա մոտ էին, թագավորի վարմունքն ու որոշումը ի վերուստ իրեն հայտնված լինելով՝ ասում է. «Մարդասպանի որդին գլուխս կտրելու համար մարդ է ուղարկել, այդ մարդը հենց գա, բռնե՛ք նրան, քանի որ նրա հետևից թագավորն էլ պիտի գա» (Աքաաբը անօրենությամբ Նաբովթին սպանելու պատճառով *մարդասպան* է կոչվում, և Հովրամը, որ նրա որդին էր, *մարդասպանի որդի* է անվանվում): Մինչ Եղիսեն խոսում էր, ներս է մտնում Հովրամի ուղարկած մարդը, և նույն պահին էլ ինքը՝ թագավորը, մի քանի պալատականների հետ դառն իրականության մասին խոսելով, հասնում է այնտեղ, որտեղ Եղիսեն էր:

Թեև Հովրամն այնտեղ խոստովանում է, որ իր կրած չարչարանքները Աստծուց իրեն տրված պատիժ են, սակայն միևնույն ժամանակ երբեք Աստծու ողորմության վրա հույս չդնելով՝ այնպես է խոսում, կարծես ազատվելու միջոց գտնելն ընդհանրապես անհնար է: Եղիսեն նրա հուսահատ խոսքերը լսելուն պես իսկույն դուրս է գալիս և Աստծով ներշնչված՝ խոսում. «Վաղը՝ այս ժամին, Սամարիայի դռան մոտ մի գրիվ

(9կգ և 792գ) մաքուր ալյուրը՝ մեկ դահեկան, և երկու գրիվ գարին մեկ դահեկանով պիտի վաճառվի (դահեկան = 4,53 գրամ ոսկի կամ արծաթ)»:

Թագավորի զինակիրը, որի թևին էր հենվում թագավորը, այդ խոսքերը լսելով, չի ցանկանում հավատալ և իր թերահավատությունն է հայտնում. «Եթե Աստված երկնքից գարի և ալյուր էլ բերի, մի՞թե քո ասածը հնարավոր է»: Այո՛, մարգարեի ասածը մարդկայնորեն անհնարին էր թվում, սակայն Աստծու կարողությանը անկարելի բան չկար, ուստի հաջորդ օրն այնպիսի առատություն է լինում, որ Եղիսեի խոսքերը կետ առ կետ կատարվում են:

Քանի որ բորոտությամբ վարակված չորս աղքատ մարդ, որոնք քաղաքից դուրս էին բնակվում, երբ իրենց ուտելիքն ամբողջությամբ սպառում են, միմյանց այսպես են ասում. «Եթե այստեղ մնանք, սովից կմահանանք, քաղաք էլ գնանք, նույնպես սովից պիտի մահանանք, քանի որ սովն ահավոր սաստիկ է, գոնե ասորիների բանակ գնանք, որտեղ գուցե մեզ կերակուր տան, իսկ եթե սպանեն էլ, կազատվենք այս ամենից»:

Նրանք այս մտադրությամբ առավոտ վաղ ասորիների բանակ են գնում, որտեղ ոչ մեկին չեն գտնում: Քանի որ այն գիշեր երկնային նախախնամությամբ նրանց բանակում բազմաթիվ պատերազմող զորքերի ձայներ են լսվում[262], այնպես որ ասորիների ամբողջ զորքը սարսափած միմյանց հետևյալն է ասում. «Իսրայելացիների արքան, գումարով իր հետ միավորել է քետացիների և եգիպտացիների արքաներին, և մեր դեմ է արշավում»: Այս գաղափարը բոլորի սրտերում այնպիսի ահ է գցում, որ թողնելով իրենց անասունները, վրաններն

---

[262] Տերն ասորիների բանակատեղիում մարտակառքերի աղմուկ և մեծ զորքի աղաղակ լսել տվեց (*Դ Թագ. 7:6*):

ու ամբողջ գույքը, հետիոտն և շտապ խույս տալու մասին են մտածում, իբր թշնամիները արդեն եկել հասել են:

Դրանից բացի՝ գիշերը փախչելու ժամանակ, իբր թշնամին իրենց հետևից չհասնելու համար, ճանապարհին հագուստներն ու զենքերն էլ են թողնում, միայն իրենց անձերն ազատելու տենչով՝ փախչում են Իսրայել երկրից: Երբ վերոհիշյալ չորս աղքատները շրջում են լքված բանակատեղի չորսբոլորը և ոչ մեկին չեն գտնում, շատ են զարմանում: Ու քանի որ անոթի էին, մի վրանում ուտելիք գտնելով՝ մինչև հագենալը ուտելուց հետո այնտեղ եղած արծաթից, ոսկուց և այլ թանկարժեք իրերից վերցնելով՝ թաքցնում են, ապա մի այլ վրան մտնելով՝ այնտեղ եղածը վերցնելու համար պիտանի բաները թաքցնելուց հետո խորհում են, որ առանց ժամանակ կորցնելու պարտավոր են թագավորին հայտնել:

Ուստի շտապում են գալու և եղելությունը տեղեկացնելու պահապաններին, որոնք էլ անհրաժեշտ մարդկանց ծանուցելով՝ վերջապես թագավորը տեղեկանում է և կասկածելով ասում. «Միգուցե ասորիները նենգությամբ մի հեռու վայրում թաքնվել են, որ մենք կարծենք, թե փախել են, և քաղաքից դուրս գանք, և իրենք էլ կարողանան հեշտությամբ տիրանալ քաղաքին»: Այն ժամանակ պալատականներից մեկը եղելությունը քննելու և ստուգելու համար առաջարկում է մարդ ուղարկել:

Սակայն հետախուզության նպատակով գիշերը մի այդպիսի տեղ գնալու համար շատ մեծ համարձակություն էր անհրաժեշտ, ուստի որոշում են ձիավորներ ուղարկել, սակայն ամբողջ քաղաքում հինգ ձիուց ավելի չեն կարողանում գտնել, քանի որ սովի պատճառով այդ պիտանի կենդանիներին էլ մորթել ու կերել էին, և քանի որ չգիտեին, թե իրենց նախաձեռնությունը ինչով կավարտվի և չկամենալով ամբողջը վտանգել,

որոշում են միայն երկու ձիավորի ուղարկել, որոնք ստույգ տեղեկություններ կբերեն ասորիների բանակի մասին:

Արդ, երկու ձիավորները գնում են մինչև Հորդանան, բանակի բոլոր անկյունները հետազոտում և տեսնում են, որ մարդ չկա, ու մանավանդ ճանապարհին փախստականների թողած գույքը տեսնելով՝ իսկույն վերադառնում են և պատմում այն ամենը, ինչ տեսել են, ուստի ամբողջ ժողովուրդը, միասին դուրս գալով, ավերում է ասորիների բանակը: Զարմանալին այն է, որ ասորիների բանակում այնքան շատ պաշար և ուտելիք են գտնում, որ ասորիների թողած սայլերով և անասուններով փոխադրում են Սամարիա, և հենց նույն օրն էլ քաղաքի դռների առջև մի գրիվ մաքուր ալյուրը և երկու գրիվ գարին մեկ դահեկանով են վաճառվում: Ու քանի որ ժողովուրդը խռնվել էր, ուստի վեճ և կռիվ չլինելու համար թագավորը իր վերոհիշյալ զինակրին (որը չէր հավատացել Եղիսեի մարգարեությանը) նրանց հսկիչ և կառավարիչ է կարգում, որպեսզի խաղաղությամբ և հավասար բաշխի եղածը:

Ահա բազմությունը, անասունների հետ խռնվելով, այդ պաշտոնին կարգվածին, ոտքերի տակ ոտնակոխ անելով, սպանում է, որով էլ կատարվում է մարգարեի խոսքը, որ ուտելիքը տեսավ, սակայն դրանից ուտելուն չարժանացավ:

Հարց ԿԷ: **Հովրամն այսպիսի հրաշքով սովից և թշնամուց ազատվելուց հետո հնազանդվո՞ւմ է Աստծուն:**

Պատասխան: Չի հնազանդվում, որի պատճառով մահանում է անչափ թշվառ վիճակում:

Երբ ասորիների թագավորը հիվանդ էր, Եղիսեն գնում է Դամասկոս: Թագավորը, լսելով Եղիսեի գալու մասին, Ազայել անունով նախարարին քառասուն ուղտաբեռ ընծաներով

ուղարկում է նրան ընդառաջ, որպեսզի սա հարցնի, թե արդյոք արքան կապաքինվի իր հիվանդությունից: Հիշյալ նախարարի հարցին նախ՝ Եղիսեն պատասխանում է, որ կապաքինվի, իսկ հետո՝ հավելում. «Սակայն Աստված ինձ հայտնեց, որ նա մահանալու է»:

Քանի որ Եղիսեն գիտեր, որ Ազայելը չպիտի հայտներ, որ թագավորը մահանալու է, նախ՝ ասելով՝ պիտի ապրի, Ազայելի մտադրությունն է հայտնում: Ուստի նախարարը, լսելով այս խոսքը, պատկառում է մարգարեից, քանի որ մինչ թագավորի առողջանալու լուրին էր սպասում, տեղեկանում է, որ պիտի մահանա, իսկ նա սրան պատրաստ չէր:

Սակայն քանի որ Աստված նախապես Եղիա մարգարեին հայտնել էր, որ հիշյալ Ազայելին ասորիների թագավոր պիտի կարգի (տե՛ս ԾԴ հարցը), ուստի նրա պատվերով Եղիսեն նրան թագավոր պիտի հռչակեր, և Աստված այս թագավորի ձեռքով իսրայելացիներին պետք է պատժեր, որն իմանալով՝ մարգարեն սկսում է արտասվել: Ազայելը, նրա արտասվելը տեսնելով, հարցնում է. «Ինչո՞ւ ես արտասվում, ա՛յր», և հարցին ի պատասխան՝ Եղիսեն ասում է. «Գիտեմ, որ Իսրայելի ամուր քաղաքները պիտի այրես, պատվավոր մարդկանց, մանուկներին և հղիներին պիտի կոտորես»: Եվ այս ամենը նախօրոք է ասում, որպեսզի երբ դա կատարվի, չկարծի, թե ինքն իր սեփական հզորությամբ է կարողացել չարիք հասցնել իսրայելացիներին, այլ աստվածային բարկությունն է, որ պատուհասում է ապերախտ ազգին:

Ազայելը այսպիսի խոսքեր լսելուց հետո պատասխանում է. «Ո՞ւմ շունն է ծառադ, որ այդպիսի բաներ անի», և Եղիսեն պատասխանում է. «Տերն ինձ հայտնեց, որ դու ասորիների թագավոր պիտի դառնաս», և Տիրոջ հրամանով նրան այնտեղ թագավոր է կարգում:

Ազայելը վերադառնալով թագավորին հայտնում է, որ չպիտի մահանա, սակայն հաջորդ օրը մի թաց թաշկինակ դեմքին դնելուց հետո այլևս չի շնչում, և նրա փոխարեն, ըստ Եղիսեի խոսքի, հենց ինքը՝ Ազայելն է թագավորում:

Երբ Հովրամը լսում է, որ Ազայելը դարձել է ասորիների թագավոր, մտադրվում է ասորիներից ազատել Ռամաթ քաղաքը, որն իսրայելացիներին էր պատկանում (տե՛ս ԾԹ հարցը), ու քանի որ Հուդայի Ոքոզիա թագավորը փեսայանալով նրան՝ բարեկամներ էին դարձել, դրա համար էլ լուր է ուղարկում, և առանց Տիրոջ կամքը հարցնելու համատեղ պատերազմելու են գնում:

Ազայելը, Հովրամի առաջխաղացման մասին տեղեկանալով, ինքն էլ զորքով շարժվում է դեպի Ռամաթ, և երկու զորքերի միջև սաստիկ պատերազմ է տեղի ունենում, որում թեև Հովրամին հաջողվում է հաղթել և Ռամաթ քաղաքը գրավել, սակայն նա չարաչար վիրավորվում է, ուստի զորքը և քաղաքի կառավարումը հանձնելով իր Հեու զորապետին՝ ինքը Հեզրայել է վերադառնում բժիշկների ձեռքով բուժվելու նպատակով: Հուդայի Ոքոզիա թագավորն էլ է այնտեղ գնում, որպեսզի հարցնի թագավորի որպիսության մասին:

Արդ, քանի որ հիշյալ Հեուն, Աստծու հրամանով իսրայելացիներին թագավորելով, կոտորելու էր Աքաաբի ցեղը (տե՛ս ԾԶ հարցը), ուստի Եղիսեն իր մոտ գտնվող *մարգարեների որդիներից* մեկին ուղարկում է Ռամաթ, որպեսզի Հեու զորավարին թագավոր կարգի: Մինչ Հեուն այլ զորավարների հետ նստած էր, հիշյալ մարգարեն գալով հայտնում է, որ նրան ասելիք ունի և նրան մի այլ սենյակ տանելով՝ Եղիսեի պատվերին համապատասխան՝ օծում է նրան՝ ասելով. «Աստված քեզ Իսրայելի ժողովրդի թագավոր կարգեց, որպեսզի Աքաաբի ցեղը կոտորես, և Աստծու մարգարեների վրեժն առնես Հեզաբելից,

որի մարմինը շները պիտի ուտեն»: Մարգարեն իր հանձնարարությունը հավատարմությամբ կատարելուց և Աստծու հրամանը Հեու զորավարին հաղորդելուց հետո սենյակից իսկույն դուրս է գալիս և ճողոպրում, այնպես որ հիշյալ զորավարները նրան պակասամիտ են համարում և նրա գալու պատճառը Հեուից են հարցնում:

Սա ցանկանում է եղելությունը գաղտնի պահել, սակայն երբ շատ են ստիպում, այն ժամանակ ճշգրտությամբ պատմում է: Հազարապետերը, լսելով Աստծու հրամանը, իսկույն ոտքի են կանգնում և, կամենալով թագավորին պատվել, հանում են իրենց բաճկոնները և Հեուին դրանց վրա բազմեցնում: Ապա փողեր հնչեցնելով՝ նրան թագավոր են հռչակում: Սակայն որպեսզի որևէ մեկը Հովրամին նախապես չզգուշացնի, փակել են տալիս քաղաքի դռները և շտապով զորք հավաքելով՝ Հեզրայելի վրա արշավում:

Արդ, քանի որ Հովրամը քաղաքի աշտարակի վրա ժամապահ էր նշանակել, որպեսզի եթե բանակից որևէ մեկը գա, իսկույն իրեն տեղյակ պահեն, ուստի ժամապահը, Հեուի զորքի արագ արշավանքից բարձրացած փոշին տեսնելով, իսկույն հայտնում է Հովրամին, որը մի ձիավոր է ուղարկում՝ եղելությունը պարզելու, սակայն Հեուն չի թողնում, որ ձիավորը վերադառնա, ուստի Հովրամը մի հեծյալ էլ է ուղարկում, որին նույնպես Հեուն արգելում է հետ դառնալ:

Դետը տեսնում է, որ սուրհանդակները չեն վերադառնում, և Հովրամին տեղեկացնում է այս իրողությունը, որից Հովրամը, զանազան կասկածների մեջ ընկնելով, ինքն անձամբ է ցանկանում գնալ և իմանալ, թե ովքեր են եկողները և ինչ նպատակ ունեն: Երբ անմիջապես կառք նստելով՝ գնում է, Հուդայի թագավոր Ոքոզիան էլ, որ այնտեղ էր, նրա հետևից մի այլ կառք նստելով, հետևում է նրան, և երբ

հասնում են քարկոծությամբ սպանված Նաբովթի մահվան վայրը, Հեուն էլ հասնելով, հենց այդ վայրում հանդիպում են միմյանց:

Հովրամը Հեուին տեսնելուն պես հարցնում է. «Գալդ խաղաղությա՞մբ է», Հեուն պատասխանում է. «Քեզ հետ ի՛նչ խաղաղություն, Հեզաբելի չարությունը անչափ շատ է»: Հովրամը, սույն խոսքերը լսելով, հասկանում է, որ խոսքի մեջ թշնամություն կա, ուստի ձայնում է. «Որոգա՛յթ է»: Ցանկանում է Ոքոզիայի հետ ազատվել, սակայն Հեուն, անմիջապես նետ արձակելով, սպանում է և դիակը Նաբովթի քարկոծության տեղն է գցել տալիս: Նաև փախած Ոքոզիայի հետևից զորք ուղարկելով՝ սպանում է նրան, սակայն նա, միայն վիրավորելով, փախչում է Մակեդդով: Մյուս օրը Հեուն, գտնելով նրա եղբայրներին, բոլորին կոտորում է[263]: Ճիշտ է՝ նրա եղբայրները արդեն փղշտացիների ձեռքով Երուսաղեմում սպանվել էին (տե՛ս ԿԴ հարցը), սակայն նրանց որդիները, որոնք ծառայում էին Ոքոզիային, որպես մերձավոր ազգական՝ մեռնելու արժանի են համարվում:

Ապա Մակեդդով քաղաքում ապաստանած Ոքոզիա թագավորին էլ բերել տալով սպանում են, սակայն Ոքոզիան, Հուդայի Հովսափաթ թագավորի թոռը լինելով, այդ բարեպաշտ արքայի հիշատակի համար, թույլատրում է նրա մարմինը տանել և Երուսաղեմում թաղել[264]: Իսկ ինքը՝ Ոքոզիան, որ մոր խորհրդով կռապաշտությանն էր հակված, այսպես

---

[263] Երբ Հեուն վրեժ էր լուծում Աքաաբի տնից, տեսավ, որ Հուդայի իշխանները՝ Օքոզիասի եղբորորդիները, ծառայում էին Օքոզիասին, ուստի կոտորեց նրանց (*Բ Մնաց. 22:8*):

[264] Օքոզիասը թագավոր դարձավ, երբ քսաներկու տարեկան էր: Նա մեկ տարի թագավորեց Երուսաղեմում: Նրա մոր անունը Գոթողիա էր: Սա Ամրիի դուստրն էր (*Բ Մնաց. 22:2*):

չարաչար պատժվում է մյուսներին խրատ և զգուշացում լինելու համար[265]:

Հեուն շտապում է գալու Հեզրայել քաղաք, որպեսզի Հեզաբելին էլ սպանի. այս թագուհին, աչքերը սուրմա քսած և ճոխ զգեստներ հագած, պատուհանից Հեուին տեսնելով, ասում է. «Խաղաղությա՞մբ ես եկել, տիրասպա՛ն Զամբրի»: Հեուն վեր նայելով պատասխանում է. «Ո՞վ ես դու, իջի՛ր ինձ մոտ», ապա նկատելով պատուհանից ներքև նայող երկու նեքինիներին՝ հրամայում է, որ այդ անզգամ կնոջը վայր նետեն, նրանք էլ հնազանդվելով այդ ահարկու թագուհուն իսկույն ներքև են գցում, որը, գետնին ընկնելով, ամենաթշվառ ձևով ոտնակոխ է լինում և այդպես իր արժանի պատիժը գտնում:

Թեև Հեուն այդ կնոջը անեծքի արժանի էր համարում, սակայն քանի որ թագուհու աղջիկ էր, երբ ճաշի էր նստած՝ հրամայում է, որ գնան և թաղեն նրա մարմինը: Սակայն մինչ այդ շներն արդեն կերել էին նրա մեծ մասը, ուստի միայն նրա գանգը, երկու ձեռքերը և երկու ոտքերն են գտնում բզկտված: Ահա այսպիսով կատարվում է Եղիայի մարգարեությունը (տե՛ս ԾԸ հարցը), որ Նաբովթի կալվածքում շներն ուտելու են Հեզաբելի մարմինը:

Քանի որ Հեուն պիտի ջնջեր Աքաաբի ամբողջ ցեղը, իմանալով, որ Սամարիայում նրա որդիներն ու թոռները յոթանասունհինգ հոգի են, քաղաքի ազդեցիկ մարդկանց գրում է, որ այդ արքայազուն իշխաններից հարմարագույնին թագավոր կարգելով՝ պատրաստ լինեն հանուն նրա պատերազմելու: Հեուն այս ձևով ցանկանում է փորձել Սամարիայի բնակիչներին, որպեսզի նրանց դիտավորություններն իմանալով՝ ըստ այդմ շարժվի և պատրաստվի: Արդարև, Հեուն իր առջև

---

[265] Տիրոջ պատուհասը իջավ Օքոզիասի գլխին այն ժամանակ, երբ սա գնացել էր Հորամի մոտ (*Բ Մնաց. 22:7*):

դրված նպատակին առանց պատերազմելու է հասնում, քանի որ Սամարիայի մեծամեծները, Հեուի հրովարտակը ստանալով և հասկանալով գրվածը, սկսում են սաստիկ վախենալ և միմյանց ասում են. «Երկու թագավորները չկարողացան նրան դիմադրել, մենք ինչպե՞ս պիտի դիմադրենք»:

Հեուն սպասում է պատասխանին, որը չի ուշանում, և որով Սամարիայի բնակիչները խոնարհությամբ հայտնում են, որ իրենք ամեն կերպ հնազանդվում են նրա կամքին և հպատակվում նրա իշխանությանը: Հեուն նրանց երկրորդ անգամ է գրում. «Եթե հնազանդ եք ինձ, ապա Աքաաբի որդիների գլուխները կտրելով՝ վաղը՝ այս ժամին, ինձ մոտ կբերեք»: Արդարև, ըստ նրա հրամանի՝ արքայազուն իշխանները սպանվում են, և նրանց գլուխները Հեուին են ուղարկվում:

Հեուն այդ գլուխներից Հեզաբելի տան մուտքի դրսի մասում երկու աշտարակաձև բլուրներ է դիզում, և առավոտյան ինքն էլ այնտեղ գնալով, երբ ժողովուրդը սարսափով և ապշահար այդ մարդկային գլուխներով կառուցված աշտարակներին էր նայում, Հեուն, ցանկանալով ցույց տալ, որ ո՛չ ինքը, ո՛չ էլ Սամարիայի մեծամեծները մեղավոր չեն, ժողովրդի հետ այսպես է խոսում. «Դուք արդար եք, ես սպանեցի իմ թագավորին, սակայն սրանց ո՞վ սպանեց: Արդ, մի՛ մտածեք, որ ինչ ասում եմ, անգթություն է, այլ Աստծու՝ Աքաաբի տանը վերաբերող հրամանն ենք կատարել, այն հրամանը, որ Եղիայի միջոցով հայտարարվեց»:

Երբ Հեուն Աքաաբի ցեղից Հեզրայելում գտնվող բոլոր մարդկանց սպանելուց հետո Սամարիա էր գնում, Բեդակադ կոչվող վայրում Հուդայի թագավորի՝ Ոքոզիայի եղբայրներից կամ ազգականներից քառասուն մարդու է հանդիպում, որոնք Երուսաղեմում պատվավոր և ազդեցիկ մարդիկ էին, և լսելով Իսրայելի թագավոր Հովրամի մահվան բոթը՝ որպես նրան

ազգական և բարեկամ՝ նրա որդիներին մխիթարելու են գալիս: Հեուն նրանց ո՛վ լինելը և ինչի՛ համար գնալն իմանալուց հետո բոլորին սպանել է տալիս:

Մինչ Հեուն շարունակում էր իր ընթացքը Սամարիա, հանդիպում է իր հին բարեկամներից Հովնադաբին, և երբ տեղեկանում է, որ նրա բարեկամությունը նախկինի նման հաստատուն է, իր կառքն է ընդունում նրան և հայտնում, որ ինքն Աստծու փառքի նախանձախնդիրն է և նույն եռանդով և ոգով էլ գործում է: Երբ Սամարիա է մտնում, Տիրոջ հրամանը կատարելու համար Աքաաբի ցեղից դեռևս կենդանի և նրա հետ կապ ունեցող բոլոր մարդկանց կոտորել է տալիս:

Այնուհետև Հեուն Իսրայելի բոլոր բնակավայրերում հրավերի կոչ է անում և Սամարիայում է հավաքում Բահաղի բոլոր մարգարեներին և նրան ծառայող բոլոր մարդկանց՝ իբր թե հիշյալ կուռքին մի մեծ ընծա մատուցելու և Աքաաբից էլ ավելի նվիրված ծառայելու համար, և միաժամանակ հայտարարում է, որ ով այս հրավերը չընդունի, անպատճառ պիտի մահանա: Նրանք, այս հրավերը իրական համարելով, բոլորն էլ ուրախությամբ գալիս են և մտնում Բահաղի տուն, այնպես որ դրսում ոչ ոք չի մնում:

Հեուն իր տան վերակացուին պատվիրում է նրանց զգեստներ տալ և ստուգել, որ նրանց մեջ Աստծու մարգարեներից չլինի: Կռատան դրսում և ներսում զորք է կանգնեցնում, որ ոչ մեկը չփախչի, երբ ներս մտնելով սկսում են խունկ ծխել և զոհ մատուցել, զորքին հրամայում է նրանց բոլորին անխնա և առանց բացառության կոտորել: Երբ բոլորին կոտորում են, Բահաղի տունը և նրա անունով կառուցված բոլոր վայրերը կործանելուց հետո նրան հետևողներին էլ ավելի նախատելու համար պատվիրում է տան տեղը աղբանոց և արտաքնոց կառուցել:

Նաև Իսրայել երկրում, որտեղ Բահաղ կուռք կամ կռատուն կար, որոնց պատճառը Հեզաբելի դրդմամբ Աքաաբն էր, բոլորն էլ կործանելով և ոչնչացնելով՝ երկիրն ազատում է հիշյալ կուռքերի գարշելիությունից: Մինչ այդ պահը Հեուն Աստծու կամքին համապատասխան գործելով՝ Աստված նրան խոստանում է՝ սերնդեսերունդ՝ մինչև չորրորդ սերունդը, իսրայելացիների թագավորներ լինեն:

Հիրավի, Հեուն Աքաաբի տան նկատմամբ կատարում է աստվածային հրամանը, սակայն Հերոբովամի կանգնեցրած ոսկեղեն հորթերը չոչնչացնելու համար Աստված նրա դեմ է ուղարկում վերոհիշյալ ասորիների թագավոր Ազայելին: Սա, Հորդանանի մյուս ափին գտնվող՝ իսրայելացիների քաղաքների վրա հարձակվելով, շատ քաղաքներ է կործանում և շատերին կոտորում, ինչպես գուշակել էր Եղիսե մարգարեն, որի մասին արդեն վերը մանրամասնորեն պատմվել է: Հեուն քսանութ տարի իսրայելացիներին թագավորելուց հետո մահանում է և թաղվում Սամարիայում: Ահա այսպես իր մահկանացուն է կնքում այն մարդը, որը թեև Աստծու փառքի համար նախանձախնդրություն է ցուցաբերում, սակայն կատարյալ հնազանդություն չունենալով, ցավոք սրտի, տեսնում է իր անհնազանդության դառը պտուղները:

Հարց ԿԸ: **Ո՞վ է հաջորդում Հուդայի թագավոր Ոքոզիային:**

Պատասխան: Նրա մայրը՝ Գոթողիան: Քանի որ սա Աքաաբի դուստրն էր, իր որդու՝ Ոքոզիայի սպանվելուն պես սպանել է տալիս նրա որդիներին, որպեսզի Հուդայի թագավորական ցեղից մարդ չմնալով՝ ինքը կարողանա թագավորել: Սակայն Ոքոզիայի քույրը՝ Հոսաբեն, Ոքոզիայի մեկ տարեկան փոքր որդուն՝ Հովասին, տաճար փախցնելով,

թաքցնում է: Նա Հովիադա քահանայապետի կինն էր, որը, առանց որևէ մեկին հայտնելու մանուկ Հովասին վեց տարի տաճարում թաքցնելուց բացի, չի թերանում արքայազնին հատուկ կրթություն տալուց:

Արդ՝ անգութ Գոթողիան, կարծելով, որ Հուդայի արքայական ցեղից այլևս ոչ ոք չի մնացել, իշխում է Երուսաղեմում, և բացի վերոհիշյալ անգութ արարքից՝ նա, Բահաղ կուռքը պաշտելով, ժողովրդին էլ կռապաշտության մոլորության մեջ է գցում: Ամբողջ վեց տարի ժողովուրդն այս թշվառ վիճակում է մնում, սակայն երբ Հովասը յոթ տարեկան է դառնում, Հովիադա քահանայապետը ցանկանում է նրան թագադրել և ժողովրդին ազատել անգութ և անօրեն Գոթողիայից:

Այս ծրագրի մասին կարևոր և ազդեցիկ մարդկանց հետ խորհրդակցելով՝ Աստծու անունով պայման կնքելուց հետո նրանց է ներկայացնում Հովասին և գործի հաջողության համար անհրաժեշտ որոշումներն ու կարգադրություններն անում: Ու քանի որ ըստ վաղնջական սովորության՝ տաճարում ծառայող ղևտացիները շաբաթը մեկ անգամ փոխվում էին, Հովիադայի կարգադրությամբ իրենց պաշտամունքն ավարտած ղևտացիները տուն գնալու փոխարեն տաճարում են մնում և նրանց փոխարեն նորերը գալով՝ հետզհետե տաճարում ահագին ղևտացիներ են հավաքվում առանց Գոթողիային ամենափոքր կասկած տալու: Արդեն Դավթի ժամանակներից տաճարում բազում զենքեր կային, որոնք հավաքված բազմությանը բաժանելով՝ Հովիադան տաճարի դռների մոտ հսկողություն է նշանակում և, այնտեղ Հովասին թագավորեցնելով, գլխին թագ դնելուց բացի, տաճարի բակում գահ պատրաստելով, մեծ ու փառավոր հանդիսությամբ մանուկ արքային վրան բազմեցնում:

Այն ժամանակ զինյալ բազմությունը, նրան շրջապատելով, գոչում է. «Կեցցե՛ արքան», և այդպիսով, ժողովուրդը

տեղեկանում է և Արարչից գոհանալով՝ մեծ ուրախությամբ տաճար շտապում: Գոթողիան նույնպես, անտեղյակ եղելությանը, հարցուփորձ է անում, թե այնտեղ ինչ է կատարվում, և ինքն էլ, տաճար գալով, տեսնում է, որ Հովասը թագադրված է, և նրա շուրջը փողեր հնչեցնելով՝ ժողովուրդը ցնծությամբ տոնում է. սա տեսնելով, «դա՛վ կա, դա՛վ կա» բարձրաձայն աղաղակելով՝ իսկույն պատռում է հանդերձները[266]:

Թեև զորքը ցանկանում է անմիջապես սպանել անողորմ թագուհուն, սակայն Հովիադայի հրամանով տաճարից դուրս են հանում և արքայական պալատի դարպասների մոտ չարաչար սպանում: Դու Աստծու արդարությո՛ւնը տես. ինչպես անգութ Գոթողիան ինքն էր վարվել իր հպատակների հետ, նրանք նույնպես, այդ անգթությանը համապատասխան, անողորմաբար են վարվում, և այս ձևով իր արժանի պատիժն է գտնում. շատ մեծ խայտառակությամբ և անարգ ձևով վերջ են տալիս նրա կյանքին:

Այնուհետև Հովիադա քահանայապետը ուխտ և պայման է դնում, որ ժողովուրդն ու թագավորը հնազանդվեն Աստծու օրենքներին և Նրա բարերար կամքին: Արդարև, ամբողջ ժողովուրդն անչափ ուրախացել էր, ուստի շտապում են Բահաղի կռատուն, որպեսզի նրա սեղանները և պատկերը ավերեն և բոլոր քրմերին կոտորեն: Հովիադան, զորք հատկացնելով, արքային մի քանի օր պահում է տաճարում և ապա առոք- փառոք, մեծ բազմությամբ տաճարից արքայական պալատ տանում և այնտեղ բազմեցնում է արքայական գահին:

Այո՛, Հովասը յոթ տարեկանում թագավոր է դառնում: Քանի դեռ Հովիադա քահանայապետը ողջ էր, նրա խոհեմ

---

266 Գոթողիան պատառոտեց իր հագուստները և աղաղակեց՝ ասելով. «Դա՛վ է, դա՛վ» (*Դ Թագ. 11:14*):

հորդորներով էր գործում և ամեն ինչով հնազանդ էր Աստծու կամքին: Սակայն չի վերացնում բարձր լեռներում գտնվող սեղանները, որոնց վրա ժողովուրդը զոհեր էր մատուցում Աստծուն, մինչդեռ տաճարից բացի՝ այլ տեղ զոհ չմատուցելու պատվիրան կար, ուստի ժողովրդի այս վարքը Աստծու պատվիրանին հայտնապես հակառակ էր:

Ապա ցանկանում է նորոգել տաճարը և քահանաներին հրամայում է, որ այդ նպատակի համար ժողովրդից գումար հավաքեն, բայց երբ գումարը հավաքվում է, նորոգումը օրըստօրե հետաձգելով՝ չի թույլատրում, որ գործը ձեռնարկեն: Նա, մի տապանակ պատրաստելով, ժողովրդին պատվիրում է, որ իրենք անձամբ տանեն և իրենց նվերները այնտեղ գցեն, որը թեև փակ էր, սակայն դրամ գցելու համար վրան հատուկ տեղ կար:

Այս սնդուկը հսկող մի հատուկ պաշտոնյա էլ է կարգում, որը պարտավոր էր լցվելուց հետո այն դատարկելու և նորից տեղը դնելու: Ահա այս եղանակով շատ մեծ գումար է հավաքում, որով ըստ արժանվույն տաճարը նորոգելուց բացի՝ ամբողջովին պատրաստում է նաև անհրաժեշտ հարդարանքը, քանի որ Գոթողիան և նախորդ այն թագավորները, որոնք կռապաշտության էին հակվել, հանդգնել էին տաճարի մի շարք իրեր կուռքերին նվիրել: Հովիադա քահանայապետը, խորին ծերության հասնելով, հարյուր երեսուն տարեկան հասակում մահանում է. որպես նրա երախտիքների հատուցում՝ նրան հուղարկավորում են Երուսաղեմում՝ թագավորների գերեզմանում:

Այստեղ արժանի է նկատել Հովաս թագավորի թշվառ վիճակը: Քանի դեռ ողջ էր Հովիադա քահանայապետը, Աստծու օրենքներին հակառակ վարք չուներ, սակայն նրա մահանալուն պես ժողովրդի մեծամեծները, որոնք կռապաշտության էին

հակված, հարմար առիթ գտնելով, փոխում են նաև արքայի միտքը, և արքան ամենայն հանդգնությամբ սկսում է Աստծու հրամանին հակառակ գործել:

Երբ բոլորը միավորվելով կռապաշտությանն են հետևում, Աստված բարկանում է նրանց դեմ: Սակայն ողորմած լինելով՝ Նա նրանց ուղղվելու և վերադառնալու համար նախ՝ մարգարե է ուղարկում նրանց մոտ, որի քարոզին ականջալուր չեն լինում: Սրանից բացի՝ Հովիադա քահանայապետի որդին՝ Ազարասը, Աստծու ազդեցությամբ, ժողովրդի մեջ կանգնելով, այսպես է խոսում. «Ինչո՞ւ արհամարհեցիք Տիրոջ պատվիրանները, իմացե՛ք, որ ձեր նախաձեռնությունները չեն հաջողելու, քանի որ եթե դուք թողնեք Աստծուն, Նա էլ ձեզ կթողնի»: Ժողովուրդը, լսելով այս խոսքերը, Հովասի հրամանով հարձակվում է նրա վրա և տաճարի բակում քարկոծում նրան:

Ազարիասը, որ ամենևին մեղավոր չէր, մահանալիս գոչում է. «Թող Տե՛րը տեսնի և դատի»[267]: Իսկ Հովասը, որ Աստծուն անհնազանդ լինելով, իր բարերարի՝ Հովիադա քահանայապետի որդուն՝ Ազարիասին, հանիրավի սպանել է տալիս, հաջորդ տարի իր արժանի պատիժն է կրում. քանի որ ասորիների Ազայել թագավորը, բազում զորքով նրա երկիրը մտնելով, պատերազմով գրավում է Գեթ քաղաքը, որը հենց ինքը՝ Դավիթն էր գրավել կռապաշտներից: Ապա Երուսաղեմ քաղաք արշավելով՝ կոտորում է իր դեմ դուրս եկած Հուդայի մեծամեծ մարդկանց:

Այո՛, Հովասի զորքերն ասորիների զորքից ավելի բազմաթիվ էին, սակայն քանի որ Աստծու հրամաններին հակառակ վարք ունեին, Աստված ասորիների ձեռքով պատժում է

---

[267] Իր մահվան ժամանակ Ազարիասն ասաց. «Տե՛ր թող տեսնի ու դատի» (*Բ Մնաց. 24:22*):

նրանց, որպեսզի հանցանքը խոստովանելով՝ դարձի գան և ապաշխարեն[268]: Սակայն Հովասը չար ճանապարհից հետ դառնալու փոխարեն, երբ նեղ դրության մեջ է ընկնում, այն ժամանակ տաճարում և արքայական պալատում գտնվող ողջ ոսկին, արծաթն ու կահկարասին ասորիների թագավորին է ուղարկում, որպեսզի նա իր զորքը Երուսաղեմ չմտցնի:

Արդարև, Ազայելը համաձայնելով իր զորքը հետ է դարձնում, սակայն Հովասը տրտմությունից ծանր հիվանդանում է: Երբ նրա ծառաները վերոհիշյալ Ազարիասի վրեժը լուծելու համար սպանում են նրան, նրա մարմինը թագավորական գերեզմանում թաղելու փոխարեն, որպես իր չարության անարգանք, Երուսաղեմի մի այլ վայրում են թաղում:

Լա՛վ մտապահիր, Հովասը թագադրվում է յոթ տարեկանում և թագավորում քառասուն տարի, սակայն Հովիադայի մահվանից հետո չար մարդկանց դրդմամբ ինքը ևս, չար վարքի հետևելով, չարաչար մահանում է:

Հարց ԿԹ: **Ո՞վ է հաջորդում Իսրայելի թագավոր Հեուին:**

Պատասխան: Նրա Հովաքազ որդին: Թեպետ սա Բահաղ կուռքը չի պաշտում, սակայն Աստված, բարկանալով Հերոբովամի ոսկե հորթերը չվերացնելու համար, ասորիների Ազայել թագավորի ձեռքով պատժում է նրան: Քանի որ վերջինիս զորքերը ներխուժում են Իսրայելի տարածք և ավերում սահմանամերձ շատ քաղաքներ: Հովաքազը, համարձակվելով պատերազմել նրա դեմ, պարտվում է և այնպիսի սոսկալի

---

[268] Թեև Ասորիքի զորքը սակավամարդ էր, բայց Աստված նրանց ձեռքը չափազանց շատ զորք մատնեց, քանի որ իսրայելացիները լքել էին իրենց հայրերի Տեր Աստծուն: Եվ Ասորիքի զորքը Հովասի նկատմամբ դատաստան տեսավ (*Բ Մնաց. 24:24*):

կորուստ ունենում, որ իր զորքից հազիվ հիսուն ձիավոր, տասը ռազմական կառք և տասը հազար հետևակ են կարողանում մազապուրծ ազատվել: Սակայն երբ ճարահատյալ դիմում է Աստծուն, Աստված բարեհաճում է ընդունելու նրա աղոթքը և նրա որդու՝ Հովասի միջոցով փրկում իսրայելացիներին: Հովաքազը տասնյոթ տարի թագավորելուց հետո մահանում է և թաղվում Սամարիայում:

Նրա որդի Հովասը հաջորդում է նրան և թեև տասներկու տարի է թագավորում, սակայն Հերոբովամի ոսկե հորթերը չվերացնելու պատճառով նրա վարքը Աստծու հրամանին հակառակ է լինում: Այդ ժամանակ Եղիսե մարգարեն Սամարիայում հիվանդ լինելով՝ Հովասը գնում է նրա որպիսությունը հարցնելու, քանի որ որպես հայր պատվում էր նրան: Թագավորը, մարգարեին այդ վիճակում տեսնելով, արտասվում է՝ ասելով. «Ո՛վ հայր, դո՛ւ էիր Իսրայելի զորությունն ու օգնությունը»[269]:

Ինչպես արդեն վերը հիշատակվել է, ասորիները Հովասի ձեռքով պիտի պատժվեին, ուստի Աստված դա հայտնում է Եղիսեին, որն էլ հայտնի օրինակով մխիթարության համար տեղեկացնում է Հովասին: Քանի որ Հովասի ձեռքին աղեղ կար, Եղիսեն, իր սենյակի արևելյան կողմը նայող պատուհանը բացել տալով և իր ձեռքը Հովասի ձեռքին դնելով, նետ է արձակել տալիս դեպի Ափեկ քաղաք. սա նշան էր, որ Աստծու օգնությամբ Ասորիքը մինչև այդ քաղաքը պիտի նվաճի:

Եվ դարձյալ մարգարեն ասում է թագավորին. «Վերցրո՛ւ աղեղդ և նետե՛ր արձակիր հողի մեջ», սակայն չի ասում,

---

[269] Եղիսեն ծանր հիվանդացավ, որից և մեռավ: Իսրայելի արքա Հովասը մինչ այդ եկել էր նրա մոտ, լաց եղել նրա մոտ՝ ասելով. «Հա՛յր, հա՛յր, դու Իսրայելի մարտակառքն էիր և նրա հեծելազորը» (*Դ Թագ. 13:14*):

թե քանի անգամ: Երբ Հովասը երեք անգամ նետ արձակելուց հետո դադարում է, Եղիսեն տխուր ասում է. «Եթե հինգ կամ վեց անգամ արձակեիր, Ասորիքն ամբողջությամբ պիտի ընկճեիր, սակայն այժմ երեք անգամ միայն պիտի հարվածես, այսինքն՝ երեք անգամ պիտի հաղթես նրանց»: Ապա Եղիսեն վախճանվում է և թաղվում Սամարիայի մոտ մի գերեզմանոցում:

Հաջորդ տարի Եղիսե մարգարեի գերեզմանի մոտ մի ննջեցյալ թաղելիս, երբ երևում են մովաբացի ասպատակները, մասնակիցները վախենալով ննջեցյալին Եղիսեի շիրիմի վրա են թողնում և փախչում: Եվ ահա աստվածային տնօրինությամբ ննջեցյալը, Եղիսեի ոսկորներին դիպչելով, կենդանանում է և ոտքի կանգնում՝ ի հարգանք մարգարեի[270]: Աստված այսպես աշխարհի առջև փառավորում է Իր հավատարիմ ծառային: Եղիսեն արդեն իսկ իր կենդանության օրոք շատ հրաշքներ էր գործել, սակայն Աստված նրա ոսկորներին էլ այնպիսի զորություն է շնորհում, որ մահացածը կենդանանում է:

Այդ ընթացքում մահանում է ասորիների թագավորը, և նրան հաջորդում է որդին՝ Բենադադը, ցեղն էլ կոչվում է *Ադեր որդի*: Հովասը, Բենադադի դեմ պատերազմելով, երեք անգամ հաղթում է, ինչպես որ հայտնել էր Եղիսեն: Հովասը հետ է վերցնում բոլոր այն քաղաքները, որոնք գրավել էր Ազայելը, և իսրայելացիներին ասորիների բռնությունից ազատելով՝ բավականին ժամանակ հանգիստ ապրելու արժանանում:

---

[270] Այդ ժամանակ մի մարդու էին թաղում: Երբ թաղողները տեսան Մովաբի կողոպտիչ զորքին, այդ մեռած մարդուն շտապ գցեցին գերեզմանը: Այդ մեռած մարդու դիակը Եղիսեի ոսկորներին դիպչելուն պես հանգուցյալը կենդանացավ ու կանգնեց իր ոտքերի վրա (*Դ Թագ. 13:21*):

Հարց Հ: **Ո՞վ է հաջորդում Հուդայի թագավոր Հովասին:**

Պատասխան: Նրա Ամասիա որդին, որը թեև թագավորելիս հակված չի լինում կռապաշտության, սակայն նրա սիրտը կատարելապես ուղիղ չէր, քանի որ բարձրադիր վայրերի սեղանները չի կործանում: Սա, մի քիչ զորանալով, բռնում և սպանում է այն մարդկանց, որոնք սպանել էին Հովասին՝ իր հորը (տե՛ս ԿԸ հարցը):

Դավթի ժամանակներից՝ եդովմացի կռապաշտները ենթարկվում էին Հուդայի թագավորին, ապա ապստամբում են (տե՛ս ԽՁ հարցը): Այս է պատճառը, որ Ամասիան ցանկանում է նորից իրեն ենթարկել այդ ազգը: Հրամայում է հաշվառել իր հպատակների մեջ քսան տարեկանից մեծ բոլոր երիտասարդներին, և թեև երեք հարյուր հազար մարդ է հավաքվում, սակայն այդ քանակը քիչ համարելով՝ հարյուր հազար էլ Իսրայելից է բերել տալիս:

Սակայն Աստծու մարգարեներից մեկը, գալով Ամասիայի մոտ, հայտնում է, որ Իսրայելի զորքը նրանց հետ պատերազմելու չպիտի գնա, քանի որ Տերը նրանց հետ չէ, և որ հաղթանակը կամ պարտությունը ոչ թե զորքի բազմությունից է, այլ Աստծուց[271]: Սակայն թագավորը, որ արդեն վճարել էր այդքան զորքին, հարցնում է մարգարեին. «Ուրեմն այդքան գումարն ի՞նչ պիտի լինի»: Մարգարեն պատասխանում է. «Աստված դրանից շատ կտա քեզ»: Ամասիան հնազանդվելով իսրայելացիների զորքը հետ է ուղարկում:

Սրանք, սաստիկ բարկացած, վերադառնալիս Հուդայի երկրին շատ վնասներ պատճառելուց բացի, սպանում են նաև

---

[271] Քանզի Տերն է թե՛ հաղթանակ պարգևողը և թե՛ պարտության մատնողը (*Բ Մնաց. 25:8*):

երեք հազար մարդու: Իսկ Ամասիան, միայն իր մարդկանցով հարձակվելով եդովմացիների վրա, տասը հազար մարդ է սպանում և տասը հազարին էլ մի բարձր ժայռից քարընկեց անում:

Այո՛, Ամասիան, հնազանդվելով Աստծու մարգարեի խոսքին, մեծ հաղթանակ է տանում եդովմացիների նկատմամբ, որոնց իրեն է ենթարկում և շատ մեծ ավարով և ուրախությամբ Երուսաղեմ վերադառնում, սակայն եդովմացիների կուռքերը հետը բերելով՝ սկսում է անմտաբար երկրպագել և զոհեր մատուցել՝ որպես աստվածների:

Վերոհիշյալի այս անօրեն արարքի համար բարկանալով՝ Աստված ցանկանում է պատժել նրան, սակայն նախ՝ ցանկանում է մարգարե ուղարկել, որ նրա զորավոր ներգործությամբ զղջա և չար ճանապարհից հետ դառնա: Մարգարեն գալով թագավորին հայտնում է. «Ինչո՞ւ ծառայեցիր եդովմացիների կուռքերին, որոնք իրենց ժողովրդին չկարողացան ազատել քո ձեռքից», մոլորյալ արքան պատասխանում է. «Քեզ խորհրդատո՞ւ են կարգել ինձ, զգուշացի՛ր, եթե ոչ, քեզ կչարչարեմ»: Մարգարեն թեև չի ցանկանում այլևս խոսել, սակայն իմանալով, որ նա կպատժվի, միայն ասում է. «Քանի որ չանսացիր իմ խրատին, գիտեմ, որ Տերը կպատժի քեզ»:

Դու Ամասիայի թշվառ դրությո՛ւնը տես. որովհետև եդովմացիների նկատմամբ տարած հաղթանակը նրան հպարտացրել էր, մանավանդ Տիրոջ մարգարեի խոսքերը չլսելով՝ արժանի էր պատժի: Այն ժամանակ Իսրայելի թագավորին՝ Հովասին, լուր է ուղարկում, որ ցանկանում է պատերազմել նրա դեմ, որպեսզի վերոհիշյալ երեք հազար մարդկանց վրեժը լուծի:

Սակայն պարզ էր, որ պատերազմի շարժառիթը դա չէր, այլ նրա անմիտ փառասիրությունը և հպարտությունը: Հովասը, ցանկանալով մի առակով նրան խրատել, որ սա իր չափը ճանաչի, ասում է. «Դաշտի փուշը, ցանկացավ Լիբանանի

եղևնափայտի աղջկան իրեն հարս բերել, և անապատի գազաններն անցնելով ոտնակոխ արեցին նրան»:

Սույն առակով Հովասը Ամասիային նմանեցնում է դաշտի փշի, և իրեն՝ լեռնային եղևնափայտի, ինչպես նաև իսրայելացիների զորքը՝ հոշոտող գազանների, սրանով ցանկանալով ցույց տալ ոչ միայն նրա տկարությունը, այլև նրա ուսերին ծանրացնելով պատերազմի ահավոր չարիքների պատասխանատվությունը: Հովասը, Հուդայի տան ավերումն էլ նրա աչքի առջև դնելով, անխոհեմ թագավորին նախազգուշացնում է, որ չվրդովի երկու ժողովուրդների խաղաղությունը և իր իսկ անձնական հանգիստը:

Սակայն Ամասիան, որը Աստծուց հեռացած լինելու համար պիտի պատժվեր Հովասի ձեռքով[272], չի համաձայնում նրա հորդորական առաջարկներին, և երկու բանակները Բեթսամյուս կոչվող վայրում պատերազմում են: Ամասիան հաղթվելով գերի է ընկնում Հովասի ձեռքը, որը նրան Երուսաղեմ է բերում և քաղաքի պարսպից չորս հարյուր կանգուն քանդելուց և տաճարի ու արքունիքի ամբողջ ոսկյա և արծաթյա իրերն ու հարստությունը կողոպտելուց հետո Ամասիայի ծառաներին որպես պատանդ Սամարիա է տանում, որպեսզի նա իրեն միշտ հնազանդ լինի: Պատանդ տարվածների հայրերը կամ մայրերը կռապաշտներ էին[273]:

Այնուհետև իսրայելացիների թագավոր Հովասը մահանում և թաղվում է Սամարիայում: Թեև նրա մահից հետո Ամասիան տասնհինգ տարի էլ է ապրում, սակայն նրա օրինազանց վարքի պատճառով զորքը ցանկանում է սպանել նրան:

---

[272] Քանզի Տերը որոշել էր նրան մատնել Հովասի ձեռքը (*Բ Մնաց. 25:20*):

[273] Ու ապօրինածին մարդկանց և վերադարձավ Սամարիա (*Բ Մնաց. 25:24*):

Նա, անկարող նրանց զսպելու, վախից Լաքիս քաղաք է փախչում, սակայն դարձյալ չի կարողանում ազատվել նրանցից: Քանի որ նրա հետևից մարդ ուղարկելով՝ Լաքիսում սպանում են և մարմինը Երուսաղեմ բերելով՝ թաղում:

Խրա՛տ ընդունիր Ամասիայի սույն եղերական վախճանից, որը թեև Երուսաղեմում թագավորում է քսանինը տարի, սակայն աստվածային օրենքներին հակառակ կյանք ունենալով՝ անչափ թշվառ մահանում:

Հարց ՀԱ: **Ո՞վ է հաջորդում Իսրայելի թագավոր Հովասին:**

Պատասխան: Նրա Հերոբովամ որդին: Այս երկրորդ Հերոբովամը թագավորում է քառասունմեկ տարի: Թեև սրա թագավորության սկզբում իսրայելացիները շատ տկար էին, և թշնամին ծանր վնասներ էր պատճառում երկրին, սակայն Աստված, գթալով ժողովրդին, ցանկանում է Հերոբովամի ձեռքով նրանց ազատել թշնամուց, ինչպես հայտնել էր Հովնան մարգարեն: Արդարև, Հերոբովամը Տիրոջ ողորմությամբ հաղթանակներ է տանում Դամասկոսում, Եմաթում և այն վայրերում, որոնք թշնամիները գրավել էին Իսրայելից, և ազատագրելով ժողովրդին՝փրկում թշնամու բռնություններից:

Սակայն այս երկրորդ Հերոբովամն էլ չի վերացնում առաջին Հերոբովամի կառուցած ոսկե հորթերը, Աստծու հրամանին հակառակ է գործում ու մահանալով թաղվում նախորդ թագավորների կողքին:

Իսկ վերոհիշյալ Հուդայի թագավոր Ամասիայի մահանալուց հետո նրա որդին՝ Ոզիան է թագավորում Երուսաղեմում: Սա տասնվեց տարեկան էր, երբ գահակալում է և թագավորում է հիսուներկու տարի: Ոզիան նաև կոչվում է Ազարիա, ինչպես հայտնի է Սուրբ գրքից: Սրա ժամանակ Զաքարիա

անունով իմաստուն և աստվածավախ մի մարդ է լինում, քանի որ Ոզիան նրա խորհրդով է գործում և լսում է նրա խրատները, Աստծու պատվիրաններին հնազանդվելով՝ օրըստօրե Աստծու օգնությամբ մեծ փառք և զորություն է ստանում և թշնամիների դեմ պատերազմելով՝ բոլոր ճակատամարտերում հաղթանակում է և նրանց բազում ամուր քաղաքների պարիսպները կործանելով՝ իրեն հնազանդեցնում:

Ապա կառուցում է Իսրայելի՝ Հովաս թագավորի քանդած Երուսաղեմի պարիսպը: Նաև շատ անասուններ՝ կով, ոչխար, պահելով՝ հողագործությանն էլ է հետամուտ լինում, որպեսզի այդպիսով եկամուտի աղբյուր ունենալով՝ ժողովրդի վրա շատ չծանրանա և անասունների համար դաշտում ջրհորներ փորելով՝ դրանց մոտ աշտարակներ է կանգնեցնում: Ոզիան երկու հազար վեց հարյուր զորավար և երեք հարյուր յոթ հազարանոց պատրաստ զորք է ունենում, որոնց զենքն ինքն էր հատկացնում:

Նաև զանազան պատերազմի գործիքներ պատրաստել տալով՝ Երուսաղեմի պարսպին և աշտարակներին է տեղադրում, որպեսզի ըստ անհրաժեշտության՝ թշնամու վրա նետեր արձակեն և զանազան մեծ քարերի տարափ թափեն: Սակայն երբ նրա այսպիսի ակտիվ գործունեությունը և հաղթանակները մինչև հեռու երկրներ են հասնում, և նրա անունը անչափ փառավորվում է, նա էլ բոլոր առումներով հանգիստ էր և երջանիկ, սիրտը հպարտանում է և օրենքին հակառակ գործելու համարձակություն ստանում[274]:

Քանի որ բուրվառ վերցնելով՝ տաճար է մտնում, որպեսզի սեղանի մոտ խնկարկի, սակայն այդ պաշտոնը քահանաներին

---

[274] Երբ Օզիասը զորացավ, այնքան մեծամտացավ, որ անխուսափելի դարձավ նրա կործանումը: Նա անիրավություն գործեց իր Տեր Աստծու դեմ (*Բ Մնաց. 26:16*):

հատկացված լինելով՝ նրա արարքը Աստծու պատվիրանին հակառակ էր: Այս առիթով Ազարիաս քահանան այլ ութսուն քահանաների հետ թագավորին ասում է. «Դա քահանաների պաշտոնն է, դո՛ւրս արի, քանի որ ապստամբեցիր Աստծու դեմ, քեզ այդ արարքը փառք չի բերում»:

Սակայն Ոզիան հպարտությամբ չի ցանկանում զիջել և երբ ցանկանում է իրականացնել իր մտադրությունը, նրա ճակատին բորոտություն է առաջանում: Այն ժամանակ քահանաներն իսկույն նրան տաճարից դուրս են հանում, և ինքն էլ, հասկանալով, որ Աստծուն բարկացրել է, շտապում է դուրս գալու: Բորոտությունը մինչ մահ չի անցնում, և սրա պատճառով մի այլ տան մեջ է բնակվում, և պետական գործերը նրա որդին՝ Հովնաթամն է վարում: Ոզիան բորոտ էլ մահանում է, և նրան թագավորներին հատկացված գերեզմանում թաղելու փոխարեն այլ տեղում են թաղում:

Ոզիայի պատուհասից թող օրինակ վերցնեն իշխանավորները և թագավորները: Քանի որ հիշյալը, իր սահմանները չճանաչելով, հանդգնում է քահանաներին հատուկ հոգևոր արարողություն կատարելու և դրա համար պատժվում է. ոչ միայն ճակատի բորոտությունը չի անցնում մինչև մահ, այլև Եսայի մարգարեն, որ այդ ժամանակ մարգարեանում էր Երուսաղեմում, այս դեպքից հետո երկար ժամանակ ոչինչ չի ասում:

Որովհետև Աստված, Ոզիայի անպատշաճ վարքից բարկացած, մինչև թագավորի մահն արգելում է կամ չի տալիս մարգարեական շնորհ: Իսկ թագավորի մահվանից հետո դարձյալ պարգևում է այդ շնորհը, ինչպես հայտնի է Սուրբ գրքից[275]:

---

[275] Այն տարին, երբ մեռավ Օզիա արքան, տեսավ Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին (*Ես. 6:1*):

Հարց ՀԲ: **Ո՞վ է հաջորդում Իսրայելի թագավոր Հերոբովամ Երկրորդին:**

Պատասխան: Նրա Զաքարիա որդին: Սույն Զաքարիայի օրոք է կատարվում Աստծու՝ Հեուին խոստացած այն խոսքը, որ նրա ցեղից մինչև չորրորդ սերունդ իսրայելացիների թագավոր պիտի լինեն (տե՛ս ԿԷ հարցը): Զաքարիան հազիվ վեց ամիս էր թագավորել, երբ Սելում անունով մի մարդ, նրան սպանելով, ինքն է թագավոր դառնում: Սա էլ մի ամիս է թագավորում, քանի որ թերսիլացի Մանայիմ անունով մեկը, սրան սպանելով, ինքն է հաջորդում: Սակայն սա, չար մարդ լինելով, երբ իր քաղաք՝ Թերսիլա է գնում, քաղաքի բնակիչները, նրան չընդունելով, չեն բացում քաղաքի դարպասները: Ուստի քաղաքը պատերազմով գրավելու ժամանակ սրի է քաշում քաղաքի բոլոր բնակիչներին, անգամ հղիներին: Քանի որ անգութ էր և անիրավությամբ էր թագավորում, ուստի ասորիների Փուա թագավորին շատ գումար է տալիս, որպեսզի նրա օգնությամբ իր թագավորությունը հաստատուն մնա:

Այս է պատճառը, որ ասորիների թագավորը, բազմաքանակ զորքով մտնելով Իսրայել երկիր, թեև հնազանդեցնում է ժողովրդին, սակայն Մանայիմը պարտավորվում է, ազգի մեծամեծներից դրամ հավաքելով, վճարել Փուային, որպեսզի նրա զորքը երկրից հեռանա: Մանայիմը տասը տարի թագավորելուց հետո մահանում է, և նրան հաջորդում է որդին՝ Փակեեն: Սա նույնպես թագավորում է կարճ՝ մոտ երկու տարի, քանի որ իր զորավարի որդին՝ նույնպես Փակեե անվամբ ուրիշ մի մարդ, նրան սպանելով, թագավորում է բռնանությամբ:

Այստեղ հարկ է նկատել Իսրայելի թագավորների թշվառ վիճակը: Քանի որ նրանք, Աստծու օրենքներին հակառակ լինելով, միմյանց ձեռքով պատժվելուց բացի, նաև ժողովրդի օրըստօրե տկարանալու և թշվառանալու պատճառ են լինում:

Հարց ՀԳ: **Ո՞վ է հաջորդում Հուդայի Ոզիա թագավորին:**

Պատասխան: Նրա Հովաթամ որդին: Սա ևս, թեև հնազանդ էր Աստծուն, սակայն չի ոչնչացնում բարձրադիր վայրերում կառուցված սեղանները, որ օրենքին հակառակ էին: Հովաթամը կառուցում է Ոփղա աշտարակը, որը տաճարի արևելյան դռան և Երուսաղեմի պարսպի վրա էր գտնվում: Այս թագավորը, կառուցելու սեր ունենալով, բազմաթիվ դղյակներ և աշտարակներ է կառուցում ու անտառներ տնկում: Պատերազմում է ամոնացի կռապաշտների դեմ և հաղթում նրանց, և ամոնացիների թագավորը պարտավորվում է, տարին տասը հազարական քոռ[276] ցորեն և գարի տալուց բացի, երեք տարի էլ բազում մթերքներ մատակարարել:

Հովաթամը տասնվեց տարի թագավորելուց հետո մահանում է և թաղվում Երուսաղեմում: Նրան հաջորդում է որդին՝ Աքազը, որն այնքան չար է լինում, որ իր անօրինություններով և անզգամ վարքով գերազանցում է իրեն նախորդած և կռապաշտության հակված Հուդայի բոլոր թագավորներին: Ասորիների և Իսրայելի բոլոր կուռքերը բերում է Երուսաղեմ և պաշտում, ու ամբողջ Հուդայի երկիրը վարակվում է այդ մոլորությամբ:

Նա, ըստ կռապաշտների սովորության, զոհեր էր մատուցում Երուսաղեմի մոտ՝ Ձիթենյաց լեռան ստորոտում գտնվող Բեննում անունը կրող վայրում, բարձր բլուրների վրա և անտառներում, և ի պատիվ կուռքերի՝ իր որդուն կրակի միջով է անցկացնում՝ որպես թե կուռքին նվեր, ուստի Աստված բարկանում է, և ասորիների Ռասոն թագավորը և Իսրայելի Փակեե արքան միավորվելով հարձակվում են նրա վրա, քանի որ Աքազը նրանց կուռքերն է պաշտում, ուստի

---

[276] 1 քոռ = 12,4 կգ

Աստված էլ ցանկանում է նրանց ձեռքով պատժել ամբարիշտ թագավորին: Նախ՝ ասորիները ահագին զորքով հարձակվում են Աքազի վրա և սաստիկ հարվածներ հասցնում ու շատ գերիների տանում Դամասկոս, ապա՝ Իսրայելի թագավորը հարձակվելով Աքազի զորքից մի օրում հարյուր քսան հազար մարդ է կոտորում: Այս պատերազմում զոհվում են Հուդայի թագավորի որդին՝ Ամասիասը, և պալատական երկու մեծանուն իշխան: Սրանցից բացի՝ գերեվարվում է երեք հարյուր հազար մարդ:

Դու Աստծու ողորմությո՛ւնը տես. թեև Աքազի վրա բարկանալով՝ պատժում է նրա ժողովրդին, սակայն նաև գթալով՝ ցանկանում է այդ բոլոր մարդկանց ազատել գերությունից: Ուստի այդ նպատակով Ովդեդ անունով մի մարգարե Տիրոջ հրամանով դուրս է գալիս իսրայելացիների զորքին ընդառաջ և նրանց հրամանատարների հետ այսպես խոսում. «Աստված նրանց վրա բարկացած լինելու պատճառով դուք կարողացաք հաղթել նրանց, կոտորել և տկարներին գերեվարել, այժմ նրանց բա՛ց թողեք, եթե չթողնեք, Տիրոջ բարկությունը ձեզ վրա կլինի»:

Մարգարեի խոսքից ոչ միայն նրանք են համոզվում, այլև մյուսներին էլ համոզելով՝ բոլորը միասին, գերիներին գթալով, ազատ են արձակում: Սրանից բացի՝ մերկ գերիներին իրենց ավարից հագուստ են տալիս և կերակրելուց հետո քայլելու կարողություն չունեցողներին, գրաստների նստեցնելով, տանում են Հուդայի թագավորության Երիքով քաղաք, որպեսզի այնտեղից ամեն մեկն իր տուն վերադառնա: Թեև Աստծու ողորմությամբ գերիներն այս անգամ ազատվում են, սակայն քիչ հետո կռապաշտ եդոմացիները և այլ կռապաշտներ, հարձակվելով Աքազի վրա, շատ քաղաքներ ավերելուց բացի, ժողովրդին էլ գերեվարում են:

Այստեղ հարկ է ուշադիր լինել. Աքազի մեղքի պատճառով ժողովուրդն է պատժվում[277]: Արդարև, Աստված այդ չար թագավորի դեմ թշնամիներ է ուղարկում, որ արդարությունն իրագործվի, և Աքազը զոջա ու ապաշխարի: Սակայն վերոհիշյալ Ռասոն և Փակեե թագավորները, կարծելով, որ իրենց անձնական կարողությամբ են հաղթել և պատժել Աքազին, հպարտանում են և Աստծու կամքից դուրս, թշնամական դիտավորությամբ խորհում Աքազին գահընկեց անել և նրա փոխարեն Տաբելի որդի կոչվող մեկին թագավորեցնել:

Այս նպատակով որոշում են ահագին բազմությամբ հարձակվել Երուսաղեմի վրա: Աքազը, իմանալով նրանց դիտավորությունը, մեծ մտատանջության և սրտաբեկության է մատնվում, քանի որ նրանց դիմակայելու զորություն չի ունենում, մանավանդ Աստծուն ուրացած լինելով՝ Նրանից օգնություն ստանալու հույսն ամբողջովին կորցրել էր: Ուստի ասորիների Թգլատպալասար թագավորին խնդրում է, որ գա և իրեն ազատի իր երկու ահեղ թշնամիներից: Դու Աստծու ողորմությա՛նը նայիր. թեև Աքազը հաղթանակի համար աղոթքով Աստծուն չի դիմում, սակայն Աստված նրան իր զորությունը և ողորմությունը ցույց տալու համար Եսայի մարգարեին է ուղարկում, որպեսզի Աքազը չվախենա և քաջալերվի և Թգլատպալասարի օգնության վրա էլ հույս չդնի, քանի որ Նա կարող է արգելել թշնամուն, որ չկարողանա գործադրել իր չար մտադրությունը[278]:

Հիրավի, վերոհիշյալ Ռասոն և Փակեե թագավորները արշավում են Երուսաղեմ, բայց անկարող պատերազմելու՝

---

[277] Տերը ընկճել էր Հուդայի երկիրը Հուդայի արքա Աքազի պատճառով, որը, անհավատարիմ լինելով, հեռացել էր Տիրոջից (*Բ Մնաց. 28:19*):

[278] *Ես. 7,8*:

ամոթով հետ դառնում[279]: Իսկ Աքազը, մարգարեի պատգամը չընդունելով, ժողովում է տաճարի, պալատի, ինչպես նաև իր պալատականների տների ամբողջ ոսկին և արծաթը և Թգլատպալասարին ուղարկելով՝ աղաչում, որ իրեն ազատի թշնամուց և ստորանում՝ իրեն նրա որդի և ծառա կոչելով:

Ուստի Ասորեստանի թագավորը, Իսրայել երկրի վրա հարձակվելով, բազմաթիվ քաղաքներ է գրավում և, նրանց բնակիչներին Ասորեստանի քաղաքներ տանելով, այնտեղ է բնակեցնում[280]: Հետո Դամասկոս է արշավում, որը գրավելով կողոպտում է, սպանում Ռասոն թագավորին և քաղաքի բնակիչներին Կյուրեն տանելով՝ բնակեցնում:

Այդ ժամանակ Ովսեե[281] անունով մեկը, սպանելով Իսրայելի Փակեե թագավորին, նրա փոխարեն է թագավորում[282]: Այսպիսով, Աքազի թշնամիները մահանալով՝ նա ազատվում է նրանց բռնություններից, սակայն Աստծուն շնորհակալություն հայտնելու փոխարեն նա անձամբ Դամասկոս է գնում՝ Թգլատպալասարին շնորհակալություն հայտնելու:

Դրանից բացի՝ Դամասկոսում կուռքերի սեղանները տեսնելով՝ դրանց գծագրերը Ուրիա քահանային է ուղարկում, որպեսզի նույն գծագրերով տաճարում մի սեղան կառուցել տա: Արքայական սույն հրամանին համապատասխան՝ սեղան է

---

279 Այն ժամանակ ասորիների արքա Ռասոնը և Ռոմելիայի որդի Իսրայելի թագավոր Փակեեն ելան Աքազի դեմ պատերազմի ու պաշարեցին Երուսաղեմը, սակայն պատերազմը շարունակել չկարողացան (*Դ Թագ. 16:5*):

280 Սեմեի, Բաաղ, Բեեղա, որին գերեց Ասորեստանի Թագղաթփաղասար արքան (*Ա Մնաց. 5:26*):

281 Ըստ Սուրբ գրքի՝ Օսեե:

282 Եղայի որդի Օսեեն դավադրություն կազմակերպեց Ռոմելիայի որդի Փակեեի դեմ, խփեց ու սպանեց նրան, և նրա փոխարեն ինքը թագավորեց (*Դ Թագ. 15:30*):

կառուցվում: Թեև Աքազը շատ դրամ էր տվել Թգլատպալասարին, սակայն սա, ահագին զորքով նրա երկիր մտնելով, առանց թշնամության հասկացնում է Աքազին, որ այդքանը բավական չէ, ուստի Աքազը շատ նեղություն է կրում, և նրա ամբողջ ծախսը հոգալուց բացի՝ պարտավորվում է բավարարել նրա ցանկությունը և հետ ուղարկել:

Աքազը, Դամասկոսից հետ վերադառնալով, տաճարում կառուցված սեղանի վրա սկսում է կռապաշտներին հատուկ արարողակարգով զոհեր մատուցել և Ուրիային ևս կարգադրում զոհաբերությունները նույն սեղանի վրա անել: Տաճարի հարդարանքը կամ կահկարասին, որ Սողոմոնի օրոք էին պատրաստվել, սկսում է իր ցանկությամբ փոխել: Աքազը նույնիսկ համարձակվում է փակել տաճարի դռները, և Երուսաղեմի բոլոր անկյուններում կուռքերին նվիրված սեղաններ կանգնեցնել, այնպես որ ժողովուրդը, դա տեսնելով, բոլոր քաղաքներում կուռքեր պաշտելու սովորությունն ընդհանրացնում է:

Դու Աքազի թանձր հիմարությո՛ւնը տես. նա ուրանում է Աստծուն, Աստված էլ նրան կռապաշտների ձեռքով է պատժում, որպեսզի ուղղվի, սակայն նա, կարծելով՝ կուռքերն են իրեն պատժում, և ավելի ջերմեռանդորեն է հարում կռապաշտությանը նրանց չարիքից զերծ լինելու համար: Զարմանալին այն է, որ ինչքան օգնության հույսը դրանց հետ է կապում, այնքան չարիքն ավելանում է, մինչև որ չարագույն վիճակում թշվառ ձևով մահանում է, և թագավորների գերեզմանում թաղվելու փոխարեն մի այլ վայրում թաղվում:

Հարց ՀԴ: **Ի՞նչ է լինում Իսրայելի վերոհիշյալ Ովսեե թագավորը:**

Պատասխան: Շատ թշվառ վիճակ է ունենում: Որովհետև և՛ ինքը, և՛ իր ժողովուրդը գերեվարվելով՝ նրա օրոք վերանում է

Իսրայելի թագավորությունը: Թեև Ովսեեն, ինը տարի թագավորելով, իր նախորդների նման կռապաշտության հակված չի լինում, սակայն նաև կուռքերը չվերացնելով՝ նրանց չար կյանքին է հետևում, և Ասորեստանի Սալմանասար թագավորը, որը Նինվեում հաջորդել էր Թգլատպալասարին, հարձակվում է նրա վրա և իր միահեծան իշխանության ներքո առնում նրան:

Ովսեեն ճարահատյալ խոստանում է տարեկան հարկ վճարել Սալմանասարին և այս պայմանով վերադառնում իր երկիր: Սակայն Ովսեեն չի ցանկանում հավատարիմ մնալ իր խոսքին և քանի որ Ասորեստանի թագավորին դիմադրելու հնարավորություն էլ չի ունենում, մարդ է ուղարկում Եգիպտոսի Սովա թագավորի մոտ՝ փափագելով նրա հետ դաշինք կապել, որպեսզի հարկ չվճարի, և նույն տարվա հարկը չի վճարում: Երբ Սալմանասարը լսում է դրա մասին, մեծ զորքով հարձակվում է Իսրայելի վրա և պաշարում Սամարիա մայրաքաղաքը:

Հիրավի, Ովսեեն երեք տարի դիմանում է պաշարմանը, սակայն երբ Եգիպտոսի թագավորից կամ մի այլ տեղից օգնություն չի լինում, վերջապես Սամարիան գրավում են, և ոչ միայն Ովսեեին, այլև մայրաքաղաքի և արվարձանների բոլոր բնակիչներին գերեվարում Ասորեստան՝ բնակեցնելով Աղատ ու Աբովք քաղաքներում, ինչպես նաև Քրդստանի լեռնային վայրերում:

Դրանից բացի, որպեսզի Իսրայելի քաղաքները ամբողջությամբ չավերվեն և չվերանան, Սալմանասարը Ասորեստանից, Բաղդադից և այլ վայրերից կռապաշտ ժողովուրդներ է բերել տալիս և բնակեցնում է Սամարիայում և Իսրայելի այլևայլ քաղաքներում: Երբ սրանք, իրենց կուռքերն իրենց հետ բերելով, ըստ իրենց սովորության, սկսում են պաշտել դրանք, Աստծու կամքով առյուծներ են հայտնվում և շատերին հոշոտում,

այնպես որ մինչև անգամ առյուծերի վախից անկարող են լինում դուրս գալու քաղաքներից և իրենց գործերով զբաղվելու:

Երբ Սալմանասարը, լսելով այդ դեպքի մասին, հարցնում է պատճառը, պատասխանում են. «Այն երկիր ուղարկածդ մարդիկ չեն ճանաչում իսրայելացիների Աստծուն, և Նրա օրենքը չիմանալու և չկատարելու պատճառով առյուծները Աստծու կողմից պատիժ են ուղարկված»: Սրա պատճառով Սալմանասարի հրամանով գերեվարված քահանաներից մեկը գնալով բնակվում է Բեթելում և փորձում ժողովրդին ծանոթացնել Իսրայելի Աստծուն և սովորեցնել Նրա օրենքները:

Թեև նրանք շարունակում էին պաշտել իրենց կուռքերը, սակայն երբ սկսում են երկնչել Իսրայելի Աստծուց, առյուծները հեռանում են և այլևս չեն երևում:

Արդ, մինչ այժմ պատմածից հայտնի է դառնում, որ Իսրայելի առաջին թագավոր Հերոբովամից մինչև Ովսեեն քսան թագավորներ երկու հարյուր հիսուն տարի թագավորում են տասը ցեղերին, սակայն բոլորն էլ, Աստծու պատվիրաններին և օրենքներին հակառակ ընթանալով, ոչ միայն իրենք են վտանգավոր և տագնապալից օրեր ունենում, այլև իրենց թագավորության վերանալու և բնակիչների գերեվարվելու պատճառ են դառնում:

Դու Աստծու արդարությո՛ւնը տես. նրանք կուռքեր են երկրպագում և կռապաշտների ձեռքով էլ պատժվում են, ինչպես որ նրանց հանցանքի մասին որոշակիորեն խոսվում է Սուրբ գրքում:

Հարց ՀԵ: **Ո՞վ է հաջորդում Հուդայի վերոհիշյալ Աքազ թագավորին:**

Պատասխան: Նրա որդին՝ Եզեկիան, որը քսանինը տարի է թագավորում: Նա, Աստծու օրենքներին և պատվիրաններին

համապատասխան գործելով, բացում է տաճարի դուռը, որը Աքազը փակել էր: Եզեկիան, ժողովելով ղևտացիներին և քահանաներին, մաքրել է տալիս տաճարը և նախկինի նման դասավորել տալիս հարդարանքն ու կահկարասին: Ապա մեծամեծների հետ տաճար գնալով, ըստ Դավիթ և Գադ մարգարեների պատվիրանների՝ սաղմոս երգելով և փողահարությամբ ու նվագարաններ հնչեցնելով, մեծ տոն են կատարում, ինչպես նաև աղոթքներով և մեծ փառաբանություններով զոհ մատուցում Աստծու սեղանին: Մանավանդ թագավորը կարգադրում է, որ այսուհետև ով ցանկանա, կարող է նվեր և ընծա բերել Աստծուն, ուստի ժողովուրդը, շատ արջառներ, խոյեր և գառներ բերելով, զոհաբերում է, և այսպիսով, աստվածային պաշտամունքը ժողովրդի ցնծությամբ վերահաստատվում է:

Հետո Եզեկիան հրովարտակ է արձակում, որ և՛ իր ժողովուրդը, և՛ Իսրայել երկրում գտնվող ցեղերը բաղարջակերաց տոնը կատարելու համար միասին Երուսաղեմ գան և միշտ հնազանդ լինեն Աստծուն, որպեսզի Աստված նրանց փրկի թշնամիներից: Թեև իսրայելացիներից ոմանք, լսելով բարեպաշտ թագավորի սույն հրովարտակը, սկսում են ծաղրել, բայց Ասերի, Մանասեի և Զաբուղոնի ցեղերը սիրահոժար ընդունում են այդ զովելի առաջարկությունը, քանի որ գիտեին, որ Եզեկիայի հրավերը օգտակար է իրենց, ուստի ընդունելով գալիս են Երուսաղեմ, և Հուդայի ցեղն էլ գալով մեծ բազմություն է հավաքվում:

Այն ժամանակ և՛ Եզեկիան, և՛ ամբողջ ժողովուրդը յոթ օր ուրախությամբ տոնում են: Եզեկիան ժողովրդին հազար ցուլ և յոթ հազար ոչխար է ընծայում, նրա իշխանավորներն էլ հազար նոխազ և տասը հազար ոչխար են պարգևում, որոնցով, յոթ օր ևս տոնելով, ուտում և խնում են, և այնպիսի

ուրախություն է լինում, որ Սողոմոնի ժամանակներից մինչ այդ օրերը այդպիսի ցնծություն չէր եղել:

Սրանք սկսում են ավերել և բնաջնջել կուռքերի բոլոր սեղանները, անտառները և կուռքերին առնչվող իրերը, որոնք գտնվում էին Հուդայի և Իսրայելի երկրներում, և ապա բոլորն իրենց տներ են վերադառնում: Եզեկիան բարձրադիր վայրերում գտնվող զոհասեղաններն էլ է ավերում, որոնց վրա թեև Աստծուն էին զոհ մատուցում, սակայն դա օրենքին հակառակ էր, քանի որ տաճարից դուրս որևէ վայրում և որևէ պարագայում զոհաբերություն անելու հրաման չկար: Բարեպաշտ թագավորը մինչև անգամ անապատում Մովսեսի պատրաստած օձն էլ է կոտրում, որն անգետ ժողովուրդը մինչ այդ օրերը պաշտում էր: Եզեկիան քահանաներ և ղևտացիներ է հատկացնում տաճարին, որ ըստ օրենքի՝ անխափան կատարեն պաշտամունքը, և ժողովրդին էլ հրահանգում է, որ ըստ պատվիրանի՝ ամեն մեկն իր վաստակից բաժին հանի քահանաներին և ղևտացիներին, կամ որ նույնն է իրենց վաստակի տասանորդը, որպեսզի տաճարի ծառայողները, հանգիստ ապրելով, միշտ հոգևոր պաշտամունքով զբաղվեն: Այն ժամանակ ժողովուրդը ցորեն, գինի, ձեթ և այլ ապրանքներ է բերում այնքան առատ, որ այդ ամենը տեղավորելու համար նոր շտեմարաններ են կառուցում:

Լա՛վ հասկացիր. Եզեկիան ուղիղ սրտով, կատարելապես Աստծուն հնազանդ լինելով՝ Աստված էլ նրա հետ է լինում, և նրա բոլոր գործերը հաջողվում են, և թշնամիներից ազատվում է[283]:

Ինչպես, օրինակ, Ասորեստանի Թգլատպալասար թագավորը Աքազից ամեն տարի հարկ էր ստանում, իսկ Եզեկիան չի

---

[283] Տերը նրա հետ էր, և Եզեկիան ինչ որ անում էր, խելամտորեն էր անում (*Դ Թագ. 18:7*):

տալիս այդ հարկը: Նաև պատերազմում է փղշտացիների դեմ և հաղթում նրանց: Աքազի օրոք նրանք գրավում են Հուդայի թագավորության բազմաթիվ քաղաքներ, և այդ քաղաքները հետ գրավելուց բացի՝ նրանց այլ քաղաքներ էլ կործանելով՝ ահագին ավարով վերադառնում:

Այս ընթացքում ասորիների Սենեքերիմ թագավորը, որը Նինվեում էր նստում, ցանկանալով իրեն ենթարկեցնել Եզեկիային, անթիվ զորքով մտնում է Հուդայի երկիր և սահմանամերձ շրջանները գրավելով՝ հասնում մինչև Լաքիս քաղաք: Եզեկիան հասկանում է, որ նրա դիտավորությունը Երուսաղեմը գրավելն է, ուստի մարդ է ուղարկում և խոնարհությամբ խոստանում բավարարել նրա պահանջները, եթե հետ դառնա. նա էլ շատ ոսկի և արծաթ է պահանջում: Եզեկիան ստիպված է լինում ոչ միայն իր պալատի և տաճարի ամբողջ ոսկին և արծաթը, այլև տաճարի դռներն ու սեմերը, որոնք ոսկով էր պատել, կոտրելու և թշնամուն տալու:

Սակայն ինչքան էլ հանձն է առնում ահագին գումար տալ Սենեքերիմին, որպեսզի կանխի Երուսաղեմը գրավելը, այսուհանդերձ նաև անհրաժեշտ պատրաստություն էլ է տեսնում: Քանի որ ժողովրդի ծերերի և ազդեցիկ մարդկանց հետ խորհրդակցելով՝ շատ զորք է հավաքում և Երուսաղեմի պարսպից դուրս գտնվող աղբյուրներն ու ջրհորները փակում, որպեսզի թշնամին գալով ջուր չգտնի:

Քանի որ մինչ այդ թվականը քաղաքի մոտ գտնվող Ռովգել աղբյուրը և Սելովեն հասած ջրերը միանալով հեղեղանման հոսում էին Կեդրոնի ձորով: Նաև Երուսաղեմի պարիսպներն ու աշտարակները ամրացնելով՝ շատ պաշար և զինամթերք է հավաքում և զորահրամանատարներ կարգում:

Թեև մարդկայնորեն կարևոր համարվող զգուշավորության բոլոր միջոցները ձեռնարկում է, սակայն դարձյալ իր

ամբողջ հույսը Աստծու օգնության վրա դնելով՝ ժողովրդին քաջալերում է, որ թշնամուց ընդհանրապես չվախենա, քանի որ Աստված իրենց հետ է:

Հարց ՀԶ: **Սենեքերիմը, Եզեկիայից մեծ գումար ստանալով, բավարարվում և հե՞տ է դառնում:**

Պատասխան: Ո՛չ, հետ չի դառնում: Ընդհակառակը, ցանկանալով նրան անպատճառ իրեն ենթարկեցնել, Ռափսակ անունով մի զորավարի և մի քանի մարդու ուղարկում է Եզեկիայի մոտ, որ սա հնազանդվելով, առանց ավերելու հանձնի Երուսաղեմը: Հիշյալ զորավարը, մոտենալով քաղաքին, Եզեկիայի հետ խոսելու ցանկություն է հայտնում, որը նրա մոտ երեք մարդ է ուղարկում՝ նրա ցանկությունն իմանալու և իրեն տեղեկություն բերելու:

Ռափսակը Եզեկիայի ուղարկած պատգամավորների հետ այսպես է խոսում. «Ո՞ւմ վրա եք հույս դրել՝ Սենեքերիմին անձնատուր չեք լինում. Եզեկիան չի կարող ձեզ փրկել: Եթե հույսը դրել է Եգիպտոսի թագավորի վրա, ապա նա եղեգնյա գավազանի նման է, որին հենվողը շուտով կործանվելու է, և եթե Աստծու վրա է հույս դրել, Նա չի փրկի նրան, քանի որ քանդել է նրա սեղանները, և մանավանդ ո՞ր աստվածն է կարողացել իր ժողովրդին փրկել Սենեքերիմից, որ ձեր Աստվածը կարողանա: Մի՛ հետևեք Եզեկիայի խորհուրդներին, նա ձեզ խաբում է, և սովից ու ծարավից իզուր պիտի մեռնեք»:

Քանի որ Ռափսակն այս խոսքերը բարձրաձայն և եբրայերեն է ասում, որպեսզի պարսպին գտնվող զորքը լսելով հանձնի Երուսաղեմը, ուստի Եզեկիայի զորավարները, ասորերեն իմանալով, առաջարկում են ասորերեն խոսել, բայց նա, ձայնն ավելի բարձրացնելով, եբրայերեն շատ բաներ է ասում ընդդեմ Աստծու և թագավորի, ինչպես գրված է Սուրբ գրքում:

Հիրավի, Ռափսակի խոսքերն Աստծու կարողության դեմ էին և անհանդուրժելի, սակայն քանի որ Եզեկիան պատվիրել էր, որ ընդհանրապես չպատասխանեն, ուստի պատգամավորները առանց որևէ պատասխան տալու, իրենց հագուստները պատռելով, գալիս պատմում են թագավորին: Նա ևս պատռում է իր հագուստը և քուրձ հագնելով, հույսը Աստծուց չկտրելով՝ գալիս է տաճար՝ աղոթելու և նրա օգնությունը խնդրելու:

Սրանից բացի՝ մարդ է ուղարկում Եսայի մարգարեի մոտ և հայտնում, որ ինքը շատ տագնապալի վիճակում է և խնդրում է, որ ազգի փրկության համար աղոթի Աստծուն: Այն ժամանակ Եսային իր մոտ գնացածներին պատասխանում է. «Եզեկիային հայտնե՛ք, որ չվախենա, քանի որ Սենեքերիմը տխուր լուրեր է ստացել և պիտի վերադառնա և երբ վերադառնա, սրով պիտի սպանվի»:

Արդարև, Եսայի մարգարեի մարգարեության համաձայն, Սենեքերիմը տեղեկանում է, որ Եթովպիայի Թարակ թագավորը մեծ բանակով պատերազմի է ելել իր դեմ, ուստի իր բանակը Լաքիսից վերցնելով՝ շարժվում է Լոբնա և փորձում գրավել այն, որպեսզի Թարակ թագավորի գալու ժամանակ ինքը կարողանա դիմագրավել նրան: Հիշյալ Ռափսակը, տեղեկանալով, որ Սենեքերիմը գնացել է Լոբնա, ինքն էլ է Երուսաղեմից Լոբնա գնում:

Թեև Սենեքերիմը ցանկանում էր օր առաջ գրավել Երուսաղեմը, սակայն վերոհիշյալ պատճառներով ստիպված էր վերադառնալու և միաժամանակ հետաձգելու գրավումը, ուստի Լոբնայից նամակ է ուղարկում Եզեկիային, որով առաջարկում է անձնատուր լինել: Ինչ Ռափսակն էր ասել, նույնն էլ Սենեքերիմն է կրկնում՝ Իսրայելի Աստծուն կուռքերի հետ համեմատելով և ասելով, որ Նա չի կարող նրան իր ձեռքից ազատել,

և նմանատիպ խոսքերով աստվածային կարողության դեմ մի շարք հայհոյանքներ է գրում:

Եզեկիան, նամակը կարդալով, իսկույն տաճար է գնում և այն սեղանի առջև դնելով՝ սկսում է սրտահույզ հառաչանքներով պաղատել Աստծուն և խնդրել, որ իրեն ազատի անզգամ թշնամուց և աշխարհին ցույց տա Իր աստվածային զորությունը: Այստեղ հարկ է նկատի առնել, թե աղոթքով և պաղատանքներով Աստծու օգնությանը հույս դնողը ինչպե՛ս է ազատվում ահավոր թշնամու սպառնալիքից: Քանի որ Եզեկիան դեռ աղոթում էր տաճարում, ահա Եսայի մարգարեն Աստծու հրամանով հայտնում է նրան. «Աստված ընդունեց քո աղաչանքները, մի՛ վախեցիր, քանի որ Սենեքերիմն անկարող է Երուսաղեմ մտնելու, նույնիսկ անկարող պիտի լինի այն պաշարելու և եկած ճանապարհով պիտի վերադառնա, քանի որ Տեր Աստված այսպես է ասում. «Ինձ և Իմ ծառա Դավթի անվան համար պիտի պահեմ սուրբ քաղաքը»»[284]:

Արդարև, այն գիշեր Աստծու հրեշտակը Սենեքերիմի բանակից հարյուր ութսունհինգ հազար մարդ է կոտորում: Հիշյալը, իր զորքի այսպիսի սաստիկ կոտորածը տեսնելով, երկյուղից Նինվե է փախչում. Սենեքերիմն իր անձն ազատելու համար պաշտած կուռքերի սեղանի առջև շնորհակալություն հայտնելու ժամանակ նրա երկու որդիները՝ Ադրամելեքը և Սարասարը, սրով հարվածում և սպանում են նրան, և իրենք էլ փախչելով գնում և ապաստանում են Հայաստանի Արարատյան գավառում[285]: Սպանվածի երրորդ որդին՝ Ասորդանը, հաջորդում է հորը Նինվեում:

---

[284] Այս քաղաքը պիտի հովանավորեմ, որպեսզի այն ազատեմ ինձ ու իմ ծառայ Դավթի համար (*Դ Թագ. 19:34*):

[285] Եվ մինչ նա իր Նասրաք աստծու տաճարի մեջ երկրպագում էր իր կուռքին, նրա որդիները՝ Ադրամելեքը և Սարասարը, սրով

Այն ընթացքում, երբ վերոհիշյալ Սենեքերիմը, Հուդայի երկիր մտնելով, ցանկանում է գրավել Երուսաղեմը, ինչպես հիշատակվել է, Եզեկիան հիվանդանում է մահաբեր հիվանդությամբ: Եսայի մարգարեն, գալով հիվանդ թագավորի մոտ, ասում է. «Պատրաստի՛ր կտակդ, քանի որ պիտի մահանաս»[286]: Եզեկիան իսկույն դեմքը տաճարի կողմն է դարձնում և սրտաճմլիկ հառաչանքներով արտասվելով՝ խնդրում է Աստծուն, որ գթությամբ և ողորմությամբ իրեն առողջություն պարգևի:

Աստված նրա ջերմեռանդ աղոթքն ընդունելով՝ Եսային, դեռևս պալատից դուրս չեկած, նորից ի վերուստ ազդվում է՝ վերադառնալով թագավորին հայտնի, որ երեք օրից առողջանալով՝ տաճար պիտի գնա և տասհինգ տարի էլ պիտի թագավորի և Ասորեստանի թագավորի բռնություններից պիտի ազատվի և, վերջապես, առողջանալու համար պետք է վերքերին թուզ դնի: Եսային, ըստ աստվածային հրամանի հետ դառնալով, թագավորին հայտնում է ուրախալի լուրը, և թեև Եզեկիան ուրախանում է դրանից, սակայն նշան է խնդրում, որպեսզի բոլորին հայտնի լինի, որ իր բժշկվելը Աստծու հատուկ ողորմության արդյունք է, և որ ամբողջ աշխարհի առջև ապացուցվի Նրա գթությունն ու մեծ զորությունը:

Արդ, քանի որ պալատի պատին արևի ժամացույց կար, որը Աքազ թագավորն էր կառուցել տվել, և որը երևում էր Եզեկիայի պառկած տեղից, Եսային պատասխանում է. «ժամացույցի սլաքի ստվերը տասն աստիճան իսկույն առաջ կշարժվի»: Եզեկիան պատասխանում է. «Դա բնական է, դրա

սպանեցին նրան և իրենք փախստական գնացին Հայաստան (*Ես. 37:38*):

[286] Ամոսի որդի Եսային եկավ նրա մոտ ու ասաց. «Այսպես է ասում Տերը. «Պատվե՛ր տուր տանդ համար, որովհետև մեռնելու ես, չես ապրելու»» (*Ես. 38:1*):

փոխարեն ստվերը տասն աստիճան հետ թող դառնա»: Եզեկիայի ցանկությունն արեգակի ընթացքին հակառակ էր, քանի որ ստվերի տասն աստիճան հետ դառնալն արեգակի հետ գնալուց էր կախված, սակայն Եսայի մարգարեի ասածն արեգակի առաջ գնալով պիտի լիներ: Աստված ամենակարող լինելով՝ Եսայու աղոթելուն պես, աստվածային կամքով արևը սովորականի պես առաջ գնալու փոխարեն հետ է գնում[287]:

Այն ժամանակ հիշյալ ժամացույցի սլաքի ստվերն էլ ի՛նչ աստիճանի վրա գտնվում էր, տասն աստիճան հետ է գնում, և կատարվում է բարեպաշտ արքայի խնդրանքը, և արևը սովորականի նման շարունակում է իր ընթացքը. միայն թե այդ օրը սովորականից ավելի է երկարում:

Հիրավի, Աստված կարող էր որևէ կերպ Եզեկիային բժշկել, սակայն այս պարագայում, ցանկանալով նրան է՛լ ավելի փառավորել, որպես նրա բժշկվելու նշան կամ ապացույց, որ նա պիտի բժշկվի և մանավանդ տասհինգ տարի էլ պիտի թագավորի, արեգակի ընթացքը հետ է շրջում, որպեսզի նրա առաքինությունն աշխարհին հայտնի լինի, և ամեն մարդ, օրինակ վերցնելով, հավատարմությամբ ծառայի Աստծուն, ինչ վիճակում էլ լինի:

Քանի որ այս հրաշքը զարմանքի և հիացմունքի նյութ է դառնում ոչ միայն Երուսաղեմում, այլև ամբողջ աշխարհում, ինչպես, օրինակ, Բաղդադի Մարովդակ թագավորը, իմանալով այս հրաշքի մասին և միաժամանակ իմանալով, որ այդ հրաշքը Հուդայի Եզեկիա թագավորի բժշկության համար է տեղի ունեցել, ցանկանում է բարեկամանալ նրա հետ և բազում ընծաներով մարդ է ուղարկում նրա մոտ:

---

[287] Եսայի մարգարեն դիմեց Տիրոջը, և ստվերը տասն աստիճան հետ դարձավ Աքազի արևի ժամացույցի աստիճանով (*Դ Թագ. 20:11*):

Եզեկիան ոչ միայն սիրով և ուրախությամբ է ընդունում հյուրերին, այլև իր զորությունն ու հարստությունը նրանց ցույց տալու փափագով, ինչ որ կար գանձարանում, ամբողջն անխոհեմությամբ ցույց է տալիս:

Մարովդակ թագավորի մարդկանց գնալուց հետո Եսայի մարգարեն Եզեկիային հարցնում է. «Ո՞վ էին այդ մարդիկ, և ինչե՞ր տեսան քո պալատում», թագավորը ստիպված հայտնում է, թե ովքեր էին և ինչու էին եկել, և ինչ որ իր պալատում կար, ամբողջը տեսան. այդ ժամանակ Եսային Աստծու հրամանով հայտնում է. «Բոլոր ցույց տվածներդ մի օր Բաբելոն (Բաղդադ) կտարվեն, և որդիներդ էլ անպատճառ Բաբելոնի թագավորին պետք է ծառայեն»:

Սույն խոսքերը Եզեկիայի համար պատիժ և հանդիմանություն էին, քանի որ անխոհեմությամբ և մանավանդ հպարտությամբ իր ողջ հարստությունը Բաբելոնից եկած մարդկանց էր ցույց տվել, սակայն հանցանքն ընդունելով, առանց հուսահատվելու հնազանդությամբ խոնարհվում է Աստծու կամքի առջև: Արդարև, մարգարեի վճռի համաձայն, միաժամանակ անց Բաբելոնի արքան Եզեկիայի տան բոլոր թանկագին իրերը Բաբելոն է տանում, բայց ոչ թե նրա, այլ որդու իշխանության օրոք, ինչպես որ այսուհետև պիտի պատմվի հաջորդաբար՝ ըստ Սուրբ գրքի պատմության: Այնուհետև, երբ Եզեկիան մահանում է, անչափ մեծ պատվով թաղում են Երուսաղեմում՝ արքաներին հատուկ մասնավոր գերեզմանում:

Ընթերցո՛ղ, օրինա՛կ վերցրու բարեպաշտ Եզեկիա թագավորից, որը երբ արտասվելով աղոթում է Աստծուն և իր ամբողջ հույսը Նրա ամենազոր օգնության վրա դնում, ոչ միայն բժշկվում է հիվանդությունից, այլև ազատվում է թշնամու անարգ բռնություններից և սպառնալիքներից և միաժամանակ երկար ապրելու էլ արժանանում: Աստվածասեր

թագավորը, առանձնակի ջերմեռանդորեն աղոթելուց բացի, խոնարհություն է ունենում Եսայի սուրբ մարգարեի ընդունելի աղոթքի օժանդակությանը դիմելու՝ իմանալով և համոզված, որ Աստված անպատճառ լսում է Իր հավատարիմ ծառայի աղոթքները. արդ, եթե դու էլ ցանկանում ես բոլոր վնասներից և պատիժներից զերծ լինել, մի՛շտ աղոթիր և միևնույն ժամանակ խնդրի՛ր նաև արժանիների աղոթքը, որպեսզի քեզ համար բարեխոս լինեն առ Աստված:

Հարց Հէ: **Ո՞վ է հաջորդում Եզեկիային:**

Պատասխան: Նրա Մանասե որդին: Սա տասներկու տարեկան էր, երբ թագավոր է դառնում, և թագավորում է հիսունհինգ տարի: Սակայն կռապաշտ լինելով՝ վերակառուցում է Եզեկիայի քանդած կուռքերի սեղանները և նորից անտառներ տնկելով՝ կուռքեր պաշտում և ժողովրդին էլ խրախուսում: Սրանից բացի, երկնքի աստղերի անուններով կուռքեր կառուցել տալով, երկրպագում է դրանք՝ որպես աստվածներ: Մանասեն մինչև անգամ տաճարում շատ կուռքեր է դնում և, Աստծու համար պատրաստվածը կուռքերին հատկացնելով, իր որդիներին, ի պատիվ նրանց, կրակի միջով է անցկացնում՝ ասես նրանց ընծայելով, և զոհեր է մատուցում:

Այս ամբարիշտ արքան, թողնելով Աստծու մարգարեներին, պատվում էր կախարդներին և հավատում նրանց, թեև ճշմարիտ մարգարեները Աստծու հրամանով շատ են խրատում և հորդորում, սակայն լսելու փոխարեն շատերին սպանում է, մանավանդ Եսայի մարգարեին սպանում է՝ սղոցով երկու մասի բաժանելով, մինչ նա Աստծու հրամանն էր հաղորդում թագավորին: Նա այնքան է չարանում, որ իր անզգամությամբ գերազանցում է Աստծու հրամանների դեմ գնացող Իսրայելի և Հուդայի բոլոր թագավորներին:

Այս է պատճառը, որ Աստված բարկանալով ասորիների թագավորի ձեռքով պատժում է նրան, որ զղջա և ապաշխարի: Ասորեստանի թագավորի կարգադրությամբ զորքերի հրամանատարները, գալով Երուսաղեմ, կարողանում են բռնել Մանասե թագավորին և Բաբելոն են տանում՝ կապկպված, նրա ձեռքերն ու ոտքերը շղթաներ անցկացնելով, ինչպես նաև պարանոցը շղթայելով՝բանտարկում:

Դու Մանասեի թշվառությո՛ւնը տես. նա, որ Հուդայի թագավոր լինելու ժամանակ Աստծուն ուրանալով, մարգարեներին սպանել է տալիս, սակայն, երբ բանտարկվում է, ոչ միայն զղջում է իր արածների համար, այլև սրտամորմոք հառաչանքներով սկսում է արտասվել և, ուղիղ սրտով Աստծու անհուն ողորմությունը հուսալով, պաղատանքներով աղոթքներ է ուղղում առ Աստված[288]: Ու քանի որ Աստված ողորմած և բարեգութ է, ընդունելով նրա աղոթքները, նրան ազատում է դառնաղետ գերության վիճակից: Քանի որ Աստված Բաբելոնի արքայի սրտում գութ է դնում առ Մանասե թագավոր, և նա, ազատելով նրան, Երուսաղեմ է ուղարկում: Երբ նա վերստին բազմում է իր գահին, իր զղջումի համաձայն՝ մինչ մահ հնազանդ և հավատարիմ է լինում Աստծուն, Երուսաղեմից և Հուդայից վերացնում է բոլոր կուռքերը և կուռքերին վերաբերող իրերը, որոնք նախկինում ինքն էր պատրաստել:

Դրանից բացի, մաքրել տալով տաճարը, հրամայում է ըստ օրենքի սովորական զոհեր մատուցել Աստծուն: Նաև կարգադրում է, որ ժողովուրդը ոչ միայն հրաժարվի կուռքերից, այլև կատարելապես հնազանդվի Աստծուն և միայն Նրան ծառայի: Երուսաղեմի և մանավանդ Սիոնի պարիսպը դարձյալ

---

288 Երբ նա նեղության մեջ ընկավ, փնտռեց իր Տեր Աստծու ներկայությունը և խիստ նվաստացավ իր նախնիների Աստծու առջև (*Բ Մնաց. 33:12*):

կառուցելով՝ ամրացնում է և հզոր քաղաքներում զորք և զորավարներ տեղակայում: Ապա երբ Մանասեն մահանում է, նրան, մի յուրահատուկ շուքով, թաղում են իր պարտեզում:

Մանասեի պատմությունը մեծ հույս և մխիթարություն է մեղավորներին, թե ինչպես նրա նման կատարելապես զղջան և ապաշխարեն՝ օրինակ ունենալով նրա աղոթքն ու պաղատանքը, որը Մեծ պահքի ժամանակ կարդացվում է Սուրբ Եկեղեցում[289]: Մանասեին հաջորդում է նրա Ամոն որդին, որը, հետևելով հոր սկզբնական չար վարքին, նորից վերականգնում է նրա վերացրած կուռքերը և երկրպագում դրանք: Ամոնը հակված էր հոր վատ օրինակին, սակայն նրա նման զղջալով ուղղվելու և ապաշխարելու ժամանակ չի ունենում, քանի որ նրա ծառաները միավորվելով հենց իր պալատում սպանում են նրան: Թեև ժողովուրդը, դա իմանալով, վրեժխնդիր է լինում՝ պատժելով այդ մարդկանց, սակայն թշվառ Ամոնը միայն երկու տարի թագավորելուց հետո իր անօրեն վարքի մեջ էլ մահանում է:

Այստեղ հարկ է նկատել, թե ինչպես մեղավորները, Մանասե թագավորի կյանքի օրինակն աչքի առջև ունենալով, կարող են մեծապես մխիթարվել և ամեն պարագայում Աստծու անսահման ողորմությանը և գթությանն ապավինելու համարձակություն ունենալ, նույն ձևով էլ նաև Ամոնի վիճակի և նրա թշվառ վախճանի մասին խորհելով՝ պարտավոր են երկնչել, որ միգուցե նրա նման զղջալու ժամանակ չգտնելով՝ մեղքի մեջ մահանան:

Հարց ՀԸ: **Ո՞վ է հաջորդում Ամոնին:**

Պատասխան: Նրա Հովսիա որդին: Սա ութ տարեկան էր, երբ թագավոր է դառնում և երեսունմեկ տարի թագավորում:

---

[289] Տե՛ր ամենակալ, Աստված Աբրահամի և Հակոբի... (*Ժամագիրք*):

Հովսիան, դաստիրակված լինելով առաքինի և իմաստուն մարդու ձեռքով, Աստծու ողորմությամբ ամեն կերպ հնազանդ էր Աստծու սուրբ օրենքներին և կամքին, և երբ քսան տարեկան է դառնում, անձամբ գնալով իր իշխանության ներքո վայրերը՝ ինչքան կուռքեր և կուռքերին վերաբերող առարկաներ են լինում, որոնք նրա հայրը՝ Ամոնն էր կանգնեցրել, բոլորն էլ անհետ վերացնում է, այսքանով չբավարարվելով՝ վերացնում է նաև Իսրայելի բոլոր կռատները և կոտորում կուռքերին ծառայողներին:

Աստծու ժողովուրդը սովորություն ուներ, Աստծու օրենքին հակառակ, Աստծուն զոհեր մատուցելու բարձրադիր վայրերում, որոնք Հովսիան նույնպես ամբողջությամբ արգելում է՝ ավերելով և վերացնելով այդ տեղերը: Դրանից բացի՝ Իսրայելի առաջին թագավոր Հերոբովամի՝ Բեթելում կառուցած սեղանին Բահաղ կուռքին զոհ մատուցած բոլոր քրմերի ոսկորները հանելով նրանց գերեզմանից՝ այրում է և սեղանը կործանելով՝ անգամ քարերն է փոշիացնում՝ բացի Բեթելի այն սուտ մարգարեի ոսկորներից, որն Աստծու մարգարեի հետ նույն գերեզմանում էր թաղված, և որի ոսկորները մյուսի ոսկորներից անկարող լինելով զանազանելու՝ չի դիպչում նրա գերեզմանին: Հովսիա թագավորի սույն արարքով կատարվում է Աստծու մարգարեի այն խոսքը, որն ասել էր վերոհիշյալ Հերոբովամին (տե՛ս ԽԷ հարցը):

Քանի որ կռապաշտության հակված թագավորները անփույթ էին տաճարը նորոգելիս և բարեկարգելիս, ուստի Հովսիան, ցանկանալով նորոգել այն, Քեղկիա քահանայապետին պատվիրում է, որ նորոգելու համար հավաքի տաճարի եկամուտները. այդ նորոգման ժամանակ հիշյալ քահանայապետը Մովսես տաճարից մարգարեի ձեռքով գրված մի օրենքի գիրք է գտնում, որը կարդալով ուղարկում է թագավորին,

և երբ սա ևս կարդում է, մեծ տրտմությամբ և արտասվելով պատռում է հագուստն ու ասում. «Աստված սաստիկ բարկացել է մեզ վրա, քանի որ գիտեմ, որ մեր հայրերը այս գրքում գրված պատվիրաններին չեն հնազանդվել, և անշուշտ, մեզ վրա մեծ չարիքներ պիտի գան»:

Այդ ժամանակ Հովսիան երկյուղից Երուսաղեմում ապրող Ոզդա անունով մի կին մարգարեի մոտ մարդիկ է ուղարկում, որ նրա միջոցով իմանա Աստծու կամքը: Կին մարգարեն աստվածային ներշնչումով թագավորի մարդկանց պատասխանում է. «Հովսիային ասացե՛ք, որ այդ գրքում գրված պատիժները պիտի գան Երուսաղեմի և նրա բնակիչների վրա, քանի որ նրանք բարկացրել են Աստծուն, սակայն Աստծուց պատկառելով հագուստը պատռելու և արտասվելու համար բոլոր այդ չարիքները, որոնք գալու են, իր աչքով չի տեսնելու»:

Հովսիան, լսելով այս խոսքերը, ժողովում է քահանաներին, ղևտացիներին, Երուսաղեմի բնակիչներին և Բենիամինի ցեղից նրանց, ովքեր Երուսաղեմում էին ապրում, և գնալով տաճար հիշյալ գրքերն է կարդում և բարձրանալով Սողոմոնի պատրաստած պղնձե ամբիոնին՝ ուխտ և դաշինք դնում, որ միշտ հնազանդվեն Աստծուն և կատարեն Նրա պատվիրանները:

Հետո ըստ օրենքի մեծ շուքով բաղարջակերաց տոնն են անում: Նրա իշխանության ներքո գտնվող բոլոր ժողովուրդները, այդ տոնի առիթով Երուսաղեմ գալով, նախադեպը չունեցող շքեղությամբ նշում են բաղարջակերաց տոնը: Մանավանդ Հովսիան քահանաներին և ղևտացիներին պատվիրում է, որ կանոնավորապես պաշտամունքի մեջ լինեն, ճիշտ ինչպես Սողոմոնի և Դավթի ժամանակ է եղել:

Հովսիան շտապում է՝ Աստծու տապանակն էլ հատուկ տեղում տեղադրելու, քանի որ շատ թագավորներ տապանակը,

իր տեղից վերցնելով, այլ տեղ էին դնել տալիս: Բարեպաշտ արքան այդ առիթով երեսուն հազար խոյ, զվարակ, գառ և այծ է պարգևում ժողովրդին, նույն ձևով էլ նվերներ են տալիս իշխանները և քահանաները, այնպես որ անպատմելի ուրախությամբ յոթ օր Աստծուն զոհեր մատուցելով՝ ամբողջ ժողովուրդն ուրախանում է:

Այնուհետև, երբ Եգիպտոսի Նեքավով թագավորն Ասորեստանի թագավորի դեմ է պատերազմում, Հովսիան նրա դեմ է դուրս գալիս և ցանկանում է արգելել, քանի որ գուցե իր երկրով անցնելով՝ վնաս պատճառեր: Թեև հիշյալ Նեքավովը նրան հայտնում է, որ ինքն Աստծու հրամանով է Ասորեստանի դեմ պատերազմում և նրան վնասելու մտադրություն չունի, նաև Երեմիա մարգարեն է Հովսիային հորդորում՝ դեմ դուրս չգա[290], սակայն նա չի համոզվում, իսկույն պատերազմում է, նետից ծանրորեն վիրավորվում, և նրա թիկնապահներն իսկույն պատերազմի դաշտից նրան տանում են Երուսաղեմ, որտեղ էլ մահանում է:

Ե՛վ Երուսաղեմի բնակիչները, և՛ Հուդայի ցեղը մեծապես սգում և ողբում են սույն բարեպաշտ արքային, որին թաղում են իր հայրերի մոտ: Երեմիա մարգարեն նրա համար դամբանական երգ է հորինում, որ ամբողջ ժողովուրդը երգելով լացում է, և այս սովորությունը մնում է Հուդայի ցեղի մեջ:

Հարց ՀԹ: **Ո՞վ է հաջորդում Հովսիային:**

Պատասխան: Նրա որդին՝ Հովաքազը: Սա իր հոր շավղով չի գնում, այլ չար վարքի հակված լինելով՝ հազիվ երեք ամիս է թագավորում: Քանի որ Եգիպտոսի վերոհիշյալ Նեքավով

---

[290] Բայց Հոսիան հետ չդարձրեց իր մարտակառքը, այլ ձեռնամուխ եղավ նրա դեմ պատերազմելու, չլսեց Երեմիա մարգարեի խոսքերը, որ նա ասում էր նրան Տիրոջ բերանով (*Ա Եզր. 1:28*):

թագավորը, հարձակվելով Երուսաղեմի վրա, նրան բռնելով, շղթայակապ Եգիպտոս է տանում: Հովաքազը Եգիպտոսում գերության մեջ մահանում է, նրա եղբայրը՝ Եղիակիմը, Եգիպտոսի Նեքավով թագավորի հաճությամբ թագավորում է Երուսաղեմում:

Նեքավովը ծանր հարկ է դնում Հուդայի թագավորի վրա, որը, ամեն տարի ժողովրդից հավաքելով, վճարում է: Նրա անունն էլ փոխելով՝ Հովակիմ է դնում, որպեսզի նրա վրա իր իշխանությունը հայտնի լինի: Այս ձևով Հովակիմը թագավորում է տասնմեկ տարի, սակայն իր եղբոր նման հակվում է չար ընթացքի և Աստծու օրենքներին հակառակ գործում:

Դու Հովակիմի թշվառ վիճա՛կը տես. քանի որ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքան, Եգիպտոսի դեմ պատերազմելով, հաղթում է և Եգիպտոսից մինչև Եփրատ գետը գրավելուց բացի՝ Հուդայի երկիրն էլ է վերցնում իր իշխանության ներքո, և Հովակիմը ստիպված է լինում Եգիպտոսի թագավորին վճարելիք հարկը Նաբուգոդոնոսորին տալու և Աստծու անունով երդվելով՝ հաստատում է այս ուխտը:

Հովակիմը երեք տարի հավատարիմ է մնում իր ուխտին, ապա դրժում է, որի պատճառով Նաբուգոդոնոսորը, գալով Երուսաղեմ, բռնում է նրան և շղթայակապ տանում Բաբելոն: Նաև տաճարի ոսկյա և արծաթյա անոթների մի մասն իր հետ առնելով՝ իր կուռքերի տաճարներում է դնում: Դրանից բացի՝ Երուսաղեմի պատվավոր և ազդեցիկ բնակիչներից շատերին գերեվարելով՝ Բաբելոն է տանում և զանազան արտոնություններ տալով՝ բնակեցնում այնտեղ:

Սակայն երբ Հովակիմ թագավորը կրկին ու կրկին խոստանում է կատարել Նաբուգոդոնոսորի պահանջը, այսինքն՝ նախկինի նման վճարել հարկը, նորից Երուսաղեմ է վերադառնում և որոշ ժամանակ հետո դրժում իր խոստումը:

Աստված, նրա այս անհավատարիմ վարմունքից բարկանալով, այլ թշնամիներ է ուղարկում: Քանի որ քաղդեացի, ասորեստանցի, մովաբացի, ամոնացի և սամարացի ասպատակները, նրա երկիր մտնելով, կողոպտում են և ամենուրեք սպառնում ավերումով:

Թեև Հովակիմն այսպիսով պատժվում է, սակայն զգաստանալու փոխարեն այնքան է չարանում, այնպես թշնամանում ժողովրդին, որ մահանալուց հետո ժողովուրդը, նրա մարմինը գերեզմանից հանելով, Երուսաղեմից դուրս մի դաշտ է նետում, որպեսզի թռչուններին և գազաններին կերակուր դառնա, ինչպես որ Երեմիա մարգարեն էր նախապես մարգարեացել[291]:

Այնուհետև Երուսաղեմում թագավորում է նրա որդին՝ Հեքոնիան, սակայն ընդամենը երեք ամիս և տասն օր, քանի որ սա էլ էր չար, Նաբուգոդոնոսորը զորք է ուղարկում և պաշարում Երուսաղեմը: Այն ժամանակ Հեքոնիան, նեղ դրության մեջ ընկնելով, մոր և պալատականների հետ անձնատուր է լինում և Երուսաղեմն էլ հանձնում Նաբուգոդոնոսորին:

Այս անգամ վերջինս, տաճարում և Հեքոնիայի պալատում ոսկյա և արծաթյա ամեն ինչ գրավելուց բացի, Բաբելոն է տանում նաև Երուսաղեմի մեծամեծներին, զորքը և արհեստավորներին, այնպես որ Երուսաղեմում միայն աղքատներն են մնում: Հեքոնիայի փոխարեն նրա հորեղբորը՝ Մեթթանին է թագադրում և անունն էլ փոխելով՝ Սեդեկիա է կոչում:

---

291 Դրա համար էլ Տերը Հուդայի երկրի թագավոր Հոսիայի որդի Հովակիմի մասին այսպես է ասում. «Թող այդ մարդու վրա չողբան և չասեն՝ վա՛յ, վա՛յ եղբայր, թող չկոծեն ու չասեն՝ վա՛յ, վա՛յ տեր, վա՛յ, վա՛յ սիրելի: Թող նա էշի թաղումով թաղվի, թող նեխվի ու գցվի Երուսաղեմի դարպասից այն կողմ» (*Երեմ. 22:18,19*):

Հարց Զ: **Քանի՞ տարի է թագավորում Սեդեկիան:**

Պատասխան: Տասնմեկ տարի: Սա նույնպես Աստծու կամքին հակառակ վարք ունենալու պատճառով Երուսաղեմի մյուս բնակիչների, մեծամեծների և քահանաների վիճակն օրըստօրե վատթարանում է: Սրանից բացի՝ թագադրվելուց հետո երդումով խոստանում է հնազանդ լինել Նաբուգոդոնոսորին, սակայն երդմանն անհնազանդ՝ հույսը դնում է Եգիպտոսի թագավորի վրա և նրա հետ միավորվելով՝ ցանկանում է ապստամբել և խոստացած տուրքը չվճարել Բաբելոնի թագավորին, որից ընդունել էր թագավորությունը:

Հիրավի, սրանց մեղքի չափը լրացած լինելով՝ պիտի պատժվեին, և նրանց պատճառով Երուսաղեմ քաղաքն ու տաճարն էլ պիտի ավերվեին, սակայն Աստված, ողորմած լինելով, Երեմիա մարգարեի միջոցով Իր հրամաններն է հաղորդում նրանց, որպեսզի ուղղելով իրենց վարքը՝ վերահաս պատուհասից հեռու և ազատ լինեն: Քանի որ հենց նույն ժամանակ Երեմիան, Երուսաղեմում լինելով, քարոզում էր. «Հնազանդվեցե՛ք Բաբելոնի թագավորին, որպեսզի չպատժվեք»:

Սակայն ինչպես անցյալում իրենց հայրերը մարգարեների խրատներին հետևելու փոխարեն ոմանց ծաղրում էին, ոմանց էլ՝ սպանում, այս անգամ էլ նախատում են Երեմիա մարգարեին և անխղճորեն վարվում նրա հետ, որի պատմությունը մանրամասն կարող ես կարդալ մարգարեի գրքում: Միևնույն ժամանակ Եզեկիել մարգարեն, որը բնակվում էր Բաբելոնին սահմանակից Քոբար գետի մոտ, Աստծու հրամանով և զանազան օրինակներով որոշակիորեն հայտնում է, որ ժողովրդի մեղքի պատճառով Երուսաղեմն ու տաճարը պիտի կործանվեն, ինչպես որոշակիորեն կարդում ենք նրա գրած գրքում:

Զարմանալին այն է, որ Բաբելոնում բնակվող իսրայելացիները, Եզեկիել մարգարեի խոսքերին ու գործերին

հավատալով, շտապում են հայտնելու Երուսաղեմի ժողովրդին, որ նրանք զգուշավոր լինեն կամ զգաստանան և փոխեն իրենց վարքն ու ուղղությունը, սակայն նրանք սարսափելի համառությամբ երբեք չեն ցանկանում հետ դառնալ չար ճանապարհից: Նրանք, չցանկանալով խրատվել անցյալի օրինակներից, մտքի մի տարօրինակ կուրությամբ իրենց անձերն ու միաժամանակ ամբողջ ազգն անխուսափելի չարիքի են մատնում: Այժմ դառնանք մեր պատմությանը և տեսնենք նրանց վարքի հետևանքը:

Արդ, երբ Նաբուգոդոնոսորը լսում է, որ Սեդեկիան, միավորվելով Եգիպտոսի թագավորի հետ, այլևս չի ցանկանում հնազանդվել իրեն, ահագին զորքով շարժվում է Երուսաղեմ և պաշարում է այն: Ու քանի որ Եգիպտոսի թագավորը զորքով Սեդեկիային օգնության է շտապում, Նաբուգոդոնոսորը, թողնելով պաշարումը, նրա դեմ է գնում, որպեսզի նախ՝ նրան պատժի, ապա՝ Սեդեկիային:

Թեև Սեդեկիան ուրախանում է պաշարումից ազատվելու համար, սակայն սույն ուրախությունը կարճ է տևում՝ փոխվելով մեծ տրտմության: Քանի որ Նաբուգոդոնոսորը, հաղթելով Եգիպտոսի թագավորին և նրան փախուստի մատնելով, վերստին պաշարում է Երուսաղեմը: Այդ ժամանակ քաղաքում սննդի պաշար էլ չի լինում, և մանավանդ Նաբուգոդոնոսորի զորքը քանդում է պարսպի մի հատվածը: Սեդեկիան, բոլորովին հուսահատված, ստիպված է լինում փախչելու, սակայն նրան հետապնդելով՝ բռնում են:

Նույն ժամանակ Նաբուգոդոնոսորը Թեփղաթում էր, երբ նրա առջև են բերում կալանավոր Սեդեկիա թագավորին: Ատյան է հրավիրում, որտեղ օրինավոր քննությամբ հաստատվում է նրա հանցանքը, որից հետո Սեդեկիայի աչքի առջև նրա որդիներին և ժողովրդի մեծամեծներին սպանելով՝

հրամայում է կուրացնել նրան և այդպես կույր, շղթայակապ Բաբելոն է տանում և բանտարկում, որտեղ էլ որոշ ժամանակ հետո թշվառորեն մահանում է:

Այստեղ հարկ է նկատի առնել Երուսաղեմի ողորմելի վիճակը. Մեդեկիայի փախչելուն պես նրա զորքերն էլ են ցրվում, և Նաբուգոդոնոսորի զորքը, Երուսաղեմ մտնելով, բնակիչներին կոտորելուց բացի, չկողոպտված անկյուն անգամ չի թողնում: Մանավանդ Նաբուգոդոնոսորը, իր Նաբուզարդան զորապետին նորից ուղարկելով, տաճարում և արքունական պալատում գտվող ամբողջ ոսկին, արծաթը և կահկարասին Բաբելոն է փոխադրում, և մնացած իրերը, որոնք փոխադրելը դժվար էր, կոտրում և այրում են: Դրանից բացի, Երուսաղեմի պարիսպը քանդելով, բոլոր մեծամեծների ապարանքներն ու տները անխնա և առանց բացառության հիմնահատակ քանդել և ավերել է տալիս: Նաբուգոդոնոսորը հրեաներին էլ գերեվարում և բնակեցնում է Բաբելոնում, Պարսկաստանում և Քրդստանում, սակայն որպեսզի Իսրայել երկիրն էլ ամբողջովին անմշակ չմնա, այնտեղ է թողնում աղքատ մարդկանց, որպեսզի հողագործությամբ զբաղվեն: Թեև Երուսաղեմն ու տաճարը ավերակ դառնալով՝ ժողովուրդն էլ գերեվարվում է, սակայն Նաբուգոդոնոսորը Գոթողիա անունով մեկին Հուդայի երկրի վերակացու է կարգում, որպեսզի կառավարի այնտեղ մնացած աղքատ ժողովրդին:

Այս պաշտոնյան, քանի որ Երուսաղեմն ավերված էր, իր բնակության համար հարմար շինություն չգտնելով, Մասեփա քաղաքում է հաստատվում: Սկսելով ժողովրդին մխիթարել բարվոք կառավարությամբ՝ շատերը, որոնք պաշարման ժամանակ և դրանից առաջ երկյուղից խույս էին տվել շրջակա հեթանոս ազգերի քաղաքներ, նորից վերադառնում են և հնազանդվում Գոթողիային, որն էլ բոլորին արտոնում է առանց

երկյուղի գնալ և բնակվել իրենց նախկին վայրերում՝ պայմանով, որ պիտի հպատակվեն Նաբուգոդոնոսորի հրամաններին և իշխանությանը: Արդարև, շատ մարդիկ, Մասեփա գալով, իրենց ցեղակից թագավորների ժամանակներից Է՛լ ավելի հանգիստ և ապահով են սկսում ապրել՝ առանց որևէ մեկից վախ ունենալու: Արդ, Սեդեկիա թագավորի զորավարներից Իսմայել անունով մեկը, որը, պատերազմի ժամանակ ապստամբելով, բազմաքանակ զորքի հետ ամոնացիների թագավորի մոտ էր փախել, նորից իր զորքով վերադառնալով, Մասեփա է գալիս: Նրա հետ՝ նաև այլ զորավարներ՝ իրենց զորքով, որոնց Գոթողիան պատվով և սիրով ընդունում է և միաժամանակ երդումով վստահեցնում, որ հանգիստ և ապահով կարող են աներկյուղ ապրել:

Սակայն վերոհիշյալ Իսմայելը, իր ազգին թշնամի և անագորույն անձ լինելով, դաշնակցում է ամոնացիների կռապաշտ Բարելիս թագավորի հետ և ցանկանում է սպանել Գոթողիային, ուրպեսզի մնացած ժողովրդին էլ ամոնացիների երկիր գերի տանի, և ինքն էլ այդպիսի ազգադավ կեցվածքով առավել պատվի և աստիճանի արժանանա: Թեև մյուս զորավարները, իմանալով նրա չար դիտավորության մասին, տեղեկացնում են Գոթողիային, սակայն նա չի հավատում: Այդ զորավարներից մեկը, որի անունը Հովնան էր, իր ազգին հավատարիմ լինելով՝ մտադրվում է գաղտնի սպանել Իսմայելին, սակայն Գոթողիան հավանություն չի տալիս՝ կարծելով, թե զրպարտություն է, քանի որ Իսմայելից որևէ չարություն չէր սպասում: Եվ այսպես, Իսմայելը իր տասը մարդկանցով գալիս է Գոթողիայի մոտ, և մինչ ճաշկերույթը չէր ավարտվել, և բոլորն էլ ուրախ ու զվարթ էին, Իսմայելը և նրա մարդիկ, իսկույն հարձակվելով, սպանում են խեղճ Գոթողիային:

Դրանից բացի՝ նոր ընկերների օգնությամբ կոտորում է Գոթողիայի մարդկանց և տանը գտնվող ռազմիկ հրեաներին,

որպեսզի իրեն դիմադրող անձ չմնա, և այդ օրը Գոթողիայի մահվան լուրը չտարածվի: Հաջորդ օրը ութսուն հրեա, տաճարի ավերման համար ողբալով, իրենց հագուստները պատռտած և մորուքները սափրած, Մասեփա են գալիս՝ Աստծուն ընծաներ մատուցելու, քանի որ լսել էին, որ ժողովուրդը այնտեղ է հավաքվել և Աստծու համար սեղան կառուցել:

Իսմայելը, այդ մարդկանց տեսնելով, կեղծավորություն է անում և ինքն էլ արտասվելով այդ մարդկանց առաջարկում է գնալ Գոթողիայի մոտ, և երբ քաղաք են մտնում, իսկույն սպանել է տալիս և մարմինները մի ցամաքած ջրհորի մեջ գցում. միայն տասը հոգի է ազատվում բռնակալից՝ մեծ գումար խոստանալով: Ապա գրավելով քաղաքը՝ պատրաստվում է նրա բնակիչներին և Սեդեկիա թագավորի աղջիկներին (որոնց գթալով՝ Նաբուգոդոնոսորը Գոթողիայի մոտ էր թողել) գերեվարելով ամոնացիների թագավորի մոտ տանել:

Սակայն վերոհիշյալ Հովնանը և մյուս զորավարները, եղելությունն իմանալով, հասնում են նրա հետևից և ազատում ժողովրդին. միայն Իսմայելին իր ութ մարդկանցով հաջողվում է փախչել ամոնացիների երկիր: Թեև Հովնանը և նրա ընկերները ժողովրդին փրկում են անզգամ բռնակալից, սակայն այլևս չեն ցանկանում մնալ Հուդայի երկրում, այլ որոշում են գնալ Եգիպտոս և ժողովրդին էլ իրենց հետ տանել՝ վախենալով, որ Նաբուգոդոնոսորը, լսելով Գոթողիայի մահվան մասին, կհրամայի կոտորել իրենց: Եվ քանի որ Երեմիա մարգարեն Նաբուգոդոնոսորի հրամանով մնացել էր Հուդայի երկրում, որ մխիթարի ժողովրդին, ուստի Հովնանը իր ընկերների հետ աղաչում է նրան, որ աղոթի և իրենց մասին Աստծու կամքը իմանա, որպեսզի ըստ դրա շարժվեն: Մարգարեն աղոթելով աստվածային ներշնչմամբ նրանց հայտնում է. «Մի՛ գնացեք Եգիպտոս, Աստված կարող է ձեզ այստեղ պահպանել, իսկ

եթե գնաք, սրով և սովով պիտի կոտորվեք»: Սակայն նրանք, դժբախտաբար, չեն ցանկանում հավատալ Երեմիա մարգարեի կանխասացությանը և իրենց որոշումը պնդելով՝ ոչ միայն իրենք են անպատճառ ցանկանում գնալ Եգիպտոս, այլև նույնիսկ Երեմիա մարգարեին են իրենց հետ տանում[292]:

Խորին կարեկցանքի է արժանի Հուդայի ժողովրդի դժբախտ վիճակը, որովհետև Աստծու օրենքին հակառակ գործելով, մարգարեի խրատները չանսալով և չար ճանապարհի դառնալով՝ զոջալ և ապաշխարել չցանկանալու համար մի մասը՝ Բաբելոն, մյուս մասը՝ Պարսկաստան, շատերը՝ Քրդստան, և ուրիշներն էլ Եգիպտոս են տարագրվում և այդ տեղերում էլ հանգիստ և խաղաղություն չգտնելով՝ դատապարտվում են վշտի ու տառապանքի, այնպես որ բոլոր տեղերում էլ աստվածային պատուհասից զերծ չեն մնում:

Ահա այսպես, ինչպես որ դրանից առաջ Իսրայելի թագավորությունն է վերանում, այս անգամ էլ Հուդայի թագավորությունը ջնջվելով՝ ամբողջ հրեա ազգը կռապաշտ ժողովուրդների լծի և իշխանության ներքո գերի և ստրուկ է դառնում, քանի որ չի ցանկանում հպատակվել Աստծու օրենքներին և կամքին:

Հարց ՁԱ: **Երուսաղեմի և տաճարի ավերվելուց հետո ի՞նչ է լինում տապանակը:**

Պատասխան: Երեմիա մարգարեն աստվածային ներգործող զորությամբ թաքցնում է այն, ինչպես նաև թաքցնում է վկայության խորանը և այն ոսկե սեղանը, որի վրա Աստծուն խունկ էին ծխում, քանի որ նա, ստույգ իմանալով Երուսաղեմի մոտալուտ կործանման մասին, այդ սրբությունները, թշնամու ձեռքը չընկնելու համար տաճարից հանելով, Հորդանանի

---

[292] *Երեմ. 40, 41, 42, 43*:

գետի մյուս կողմն է տանում և այնտեղ՝ լեռան վրա՝ անտառում գտնվող մի քարանձավում, թաքցում[293]:

Մարգարեի հետ եղած մարդիկ ցանկանում են իմանալ քարանձավի տեղը, սակայն չեն կարողանում գտնել, քանի որ Աստված ցանկանում է մարդկանցից թաքցնել այդ տեղը, մինչև որ Ինքը կամենա հայտնել: Նույն ձևով էլ քահանաները Երեմիայի հրամանով վերցնում են ողջակեզի սեղանի կրակը (այն, որ հրաշքով էր վառվել) և Երուսաղեմի մոտ գտնվող մի անջուր ջրհորում թաքցնում: Հետագայում, երբ ժողովուրդն ազատվում է գերությունից, Նեեմիի միջոցով գտնում են այն, սակայն կրակն այլևս մարել և տղմոտ մի զանգվածի էր վերածվել: Այդ տիղմը բերելով ողջակեզի սեղանին են դնում, և երբ արեգակի ճառագայթները դիպչում են դրան, այն հրաշքով իսկույն նորից վառվում է[294]: Սույն հրաշալի իրողությունը տեսնելով՝ ամբողջ ժողովուրդը միաձայն և միահամուռ գոհություններ և փառք են մատուցում բարձրյալ Աստծուն, Որը բազում տառապանքներից հետո ցանկանում է մխիթարել Իր ժողովրդին:

ՎԵՐՋ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐԻ

---

[293] Երբ Երեմիա մարգարեն եկավ հասավ այդ վայրը, այնտեղ գտավ անտառապատ ամուր քարանձավներ. վկայության խորանը, կտակարանների տապանակը, խնկերի սեղանը նա տարավ դրեց ներս և փակեց մուտքը (*Բ Մակ. 2:5*):

[294] Դրանից հետո նա նրանց հրաման տվեց գնալ, հավաքել ջուրն ու բերել: Երբ հասավ ողջակեզներ մատուցելու ժամանակը, Նեեմի քահանայապետը հրաման տվեց, որ այդ ջուրը շաղ տան փայտերի ու ողջակեզների վրա: Երբ դա արեցին, անցավ մի փոքր ժամանակ, արեգակը շառագույն շողեր արձակեց դրա վրա, և կրակի բոցեր ելան սեղանի վրայի փայտերից ու լափեցին ողջակեզները, այնպես որ բոլորը սքանչացան (*Բ Մակ. Ա:22, 23*):

ՀՌՈՒԹ[295*]

Հարց ՁԲ: **Ո՞վ էր Հռութը:**

Պատասխան: Մովաբացի կռապաշտ մի աղջիկ էր, որը, թողնելով կռապաշտությունը, ընդունում է Իսրայելի Աստծուն և Նրա օրենքները: Որովհետև Իսրայելի դատավորների օրոք մադիամացի կռապաշտները, յոթ տարի շարունակ մտնելով իսրայելացիների բնակավայրերը, փչացնում էին արտերի բերքը: Այս է պատճառը, որ սաստիկ սով է սկսում (տե՛ս Ը հարցը), և այդ սովի պատճառով Հուդայի ցեղից բեթղեհեմցի մի պատվավոր մարդ, որի անունը Եղիմելեք էր, իր ընտանիքով մովաբացիների երկիր է գաղթում:

Եղիմելեքը Նոեմի անունով մի կին ուներ և երկու որդի, որոնց անունները Մաաղոն և Քեեղոն էին: Արդ, Եղիմելեքի մահվանից հետո որդիներն ամուսնանում են մովաբացի աղջիկների հետ. Մաաղոնի կնոջ անունը Հռութ էր, իսկ Քեեղոնի կնոջ անունը՝ Որփա: Սրանք տասը տարի այն երկրում բնակվելով՝ Մաաղոնն ու Քեեղոնն օտարության մեջ անզավակ մահանում են: Եվ քանի որ սովը վերջացել էր, Նոեմին իր բնիկ երկիր՝

295 * Չորրորդ դարից հետո հարկ ենք համարում ներկայացնելու Հռութի, Տովբիթի, Հուդիթի և Եսթերի պատմությունները:

Բեթղեհեմ, վերադառնալու ցանկություն է հայտնում: Նրա հարսներն էլ արտասվելով չեն ցանկանում բաժանվել իրենց սկեսուրից: Նոեմին, օրհնելով իր հարսներին, քանիցս նրանց առաջարկում է իրենց հոր տուն վերադառնալ, և թեև Որփան գնում է, սակայն Հռութը պատասխանում է Նոեմիին. «Քո ժողովուրդը թող իմ ժողովուրդն էլ լինի, և քո Աստվածը՝ իմը, մինչև մահ չեմ բաժանվի քեզնից»: Բարեպաշտ կինը, լսելով Հռութի սույն խոսքերը, այլևս չի ընդդիմանում: Գալիս են Բեթղեհեմ, որի բնակիչները, նրանց վերադարձի մասին իմանալով, ուրախությամբ շտապում են տեսակցության և խնդակցության:

Բեթղեհեմ քաղաքում Բոոս անունով հարուստ և պատվավոր մի մարդ, որը Եղիմելեքի ազգականն էր, Նոեմիին բնակության համար տուն է տալիս. եղանակն էլ գարի հնձելու ժամանակն էր: Հռութը Նոեմիից թույլտվություն ստանալուց հետո հասկ ժողովելու համար արտ է գնում: Նախախնամության տնօրինությամբ հասկեր հավաքելու ժամանակ Բոոսի արտը մտնելով՝ Բոոսը տեսնում է նրան և հարցնում, թե ով է, և երբ իմանում է, որ Նոեմիի հարսն է, պատվիրում է, որ այլ տեղ հասկ հավաքելու չգնա և օրհնելով մխիթարական խոսքեր է ասում նրան, քանի որ լսել էր նրա հավատարմության մասին, մանավանդ հորը և մորը թողել էր և հույս դրել Իսրայելի Աստծու վրա: Ուստի ծառաներին պատվիրում է օգնել Հռութին և երբեք չնեղել: Հռութը, Բոոսի մարդասիրության համար անչափ շնորհակալ լինելով, խոնարհությամբ երկրպագում է նրա առջև և հավաքած գարին, ինչպես նաև այնտեղ կերած հացից երեկոյան տանում է Նոեմինին:

Քանի որ Բոոսը հիշյալ Եղիմելեքի ազգականն էր, Նոեմին մտադրվում է Հռութին ամուսնացնել նրա հետ: Հռութը Նոեմիի կարգադրությամբ և խորհրդով հագուստները փոխելուց հետո գիշերը գնում է Բոոսի ննջած վայրը և գիշերում նրա

ոտքերի մոտ: Թեև Բոոսը նրա ներկայությունից շփոթվում և վախենում է, սակայն երբ իմանում է նրա մտադրությունը, քաջալերում և մխիթարական խոսքեր ասելուց հետո վեց բաժին գարի տալով և օրհնելով՝ հետ է ուղարկում:

Երբ Հռութը Բոոսի խոսքերն և հուսադրող վարվելաձևը պատմում է Նոեմիին, սա պատասխանում է. «Այժմ հանգի՛ստ նստիր, Բոոսն ինչ խոստացել է, անպատճառ կանի»: Արդ, թեև Բոոսը ցանկանում է ըստ օրենքի Հռութին կնության առնել, սակայն Եղիմելեքի մերձավորագույն մի բարեկամ էլ կար. այս է պատճառը, որ Բոոսը, ժողովելով ժողովրդի ծերերին, նրանց ներկայությամբ այդ մերձավոր ազգականին առաջարկում է ըստ օրենքի Հռութի հետ ամուսնանալ, սակայն նա հոժարակամ հրաժարվում է իր օրինական իրավունքից, ուստի Բոոսը բոլորի գիտությամբ և օրենքով ամուսնանում է Հռութի հետ:

Այն ժամանակ վերոհիշյալ ծերերը ուրախությամբ իրենց սրտագին մաղթանքներն և խնդակցական օրհնություններն են նվիրում այդ պատվական ամոլին: Սույն ամուսնությունից մի զավակ է ծնվում, որի անունը Ովբեդ[296] են դնում, սույն Ովբեդից ծնվում է Հեսսեն՝ Դավթի հայրը[297]:

Հարց ՁԳ: **Ո՞վ էր Տովբիթը:**

Պատասխան: Նեփթաղիմի ցեղից մի առաքինի մարդ էր, որի կնոջ անունը Աննա էր, իսկ որդու անունը՝ Տուբիա: Տովբիթը, ոչ միայն կատարելապես հնազանդ էր Աստծուն, այլև միշտ օգնում և նեցուկ էր լինում աղքատներին: Երբ ասորիների Սալմանասար թագավորը, գրավելով Իսրայելը, բնակիչներին Նինվե է

---

[296] Ըստ Սուրբ գրքի՝ Օբեդ:

[297] Սաղմոնը ծնեց Բոոսին՝ Ռաքաբից. Բոոսը ծնեց Օբեդին՝ Հռութից. Օբեդը ծնեց Հեսսեին (*Մտ. Ա:5*):

գերեվարում, Տովբիթն էլ է գերեվարվում, սակայն Աստծու երկյուղը սրտից չհանելով, օրենքին հակառակ վարք չորդեգրելուց բացի՝ իր ազգականներին միշտ օգնում է և բարիք անում, մանավանդ ուրիշ հրեաներ առանց խտրության ուտում էին կուռքերին զոհաբերված կերակուրներից, նա ամենայն զգուշությամբ սոսկում էր այդ օրինազանցությունից: Աստծու ողորմությամբ Տովբիթը ծառայության է անցնում Սալմանասարի մոտ և վաճառականության համար գնում մարերի երկիր[298], որտեղ Հառագա քաղաքում բնակվող իր ազգականներից Գաբայել անունով մի հրեայի մուրհակով տասը քսակ գումար է տալիս, որպեսզի նա վաճառականությամբ զբաղվի, քանի որ արդեն իսկ վաճառական էր, ինքն էլ գերեվարվածներից էր:

Հետո Սալմանասարը մահանում է, և որդին՝ Սենեքերիմն է հաջորդում հորը: Երբ սա Հուդայի Եզեկիա թագավորի դեմ պատերազմելու է գնում, և նրա զորքից հրեշտակի ձեռքով հարյուր ութսունհինգ հազար զինվորական է մահանում (տե՛ս ՀԶ հարցը), և ինքն էլ խույս տալով Նինվե է հասնում. Նինվեում եղող իսրայելացիներից շատերին վրեժխնդրությունից սպանելուց բացի, որպես նախատինք, չի թույլատրում, որ նրանց մարմինները թաղեն, այլ հրամայում է՝ այդպես գցած թողնեն փողոցներում և հրապարակներում, այս է պատճառը, որ Տովբիթը գիշերը մի հնարքով առիթ է գտնում թաղելու այդ մեռելները: Սենեքերիմը, սա լսելով, որոշում է սպանել նրան, և երբ Տովբիթը վախից փախչում է, նրա ամբողջ ունեցվածքն արքունի գանձարան է տանում:

Սակայն Սենեքերիմը իր չար գործերին համապատասխան է պատիժ գտնում, քանի որ, հիսուն օր չանցած, նրա որդիները սպանում են նրան, և նրա երրորդ որդին՝ Ասորդանը,

---

298 *Մարաստան*՝ հնագույն պետություն Իրանական սարահարթում:

հոր փոխարեն թագավորելով, Աստծու տնօրենությամբ Տովբիթի եղբոր որդուն՝ Աքիաքարոս անունով մի անձնավորության, իր բոլոր նախարարների վրա իշխան է կարգում, և նրա միջնորդությամբ Տովբիթը տուն է վերադառնում:

Մի տոնախմբության ժամանակ Տովբիթը որդուն առաջարկում է գնալ և ճաշի հրավիրել ազգակից աղքատներին, և գնալու ժամանակ նա փողոցում մի մահացած իսրայելացի է տեսնում, որին սպանելով թողել էին հրապարակում, իսկույն վերադառնալով՝ հորը հայտնում է եղելությունը: Տովբիթը ննջեցյալին բերել է տալիս իր տուն, որպեսզի գիշերը թաղի նրան:

Նրա ազգակիցները, սա տեսնելով, սկսում են իրար հետ խոսել, որ այդ մարդը ընդհանրապես չի վախենում մահվանից. դրա պատճառով էր փախել քաղաքից և հիմա եկել է և նորից չի զգուշանում մեռելներ թաղելուց: Ու քանի որ ըստ օրենքի մեռելին մոտեցողը մինչև երեկո անմաքուր էր համարվում, ուստի սրա պատճառով Տովբիթը, մեռելին թաղելով, տուն չի մտնում, այլ տան պատի արտաքին կողմում է պառկում, և երբ վերև՝ երկնքին է նայում, պատի քիվից մի ծիտ ծրտում է աչքերին, և նա իսկույն կուրանում է:

Հիրավի, Տովբիթի աչքերը կուրանում են, սակայն երբևէ իր վիճակից չի դժգոհում, այլ նորից փառք է տալիս Աստծուն: Ճշմարիտ է, որ մարդը պարտավոր է անհրաժեշտ միջոցները ձեռնարկել, ուստի նա ևս բժիշկների օգնությանն է դիմում, սակայն անհնար է լինում բուժել նրան, և այս է պատճառը, որ հետին աղքատության է մատնվում: Վերոհիշյալ Աքիաքարոս ազգականն է հոգում նրա ապրուստը, ինչպես նաև կինը՝ Աննան, որը մանում էր և ձեռագործով փոքր-ինչ վաստակում:

Քանի որ նրանք հարուստ էին, բայց աղքատացել էին, ուստի մանած դերձանի տերերը գթալով ավելի շատ գումար են տալիս, մինչև իսկ մեկը մի փոքրիկ ուլիկ է տալիս Տովբիթի

կնոջը, որը երբ այն տուն է բերում, այրը կարծում է, որ գողացած ապրանք է: Թեև Աննան ասում է, որ ընծա է, սակայն Տովբիթը չի հավատում և իրենն է պնդում, որ գողացած որևէ բան չարժե ուտել, և պետք է այն վերադարձնել: Այդ ժամանակ Աննան սրտի ցավով պատասխանում է իր ամուսնում. «Դու այդքան ողորմություն արեցիր, սակայն Աստծու մոտ այն անընդունելի էր, քանի որ միտքդ ուղիղ չէր»:

Թեև Տովբիթը, իր կնոջից այսպիսի ծանր և վիրավորական խոսքեր լսելով, ոչինչ չի պատասխանում, սակայն սիրտն այնպես է կոտրվում, որ արտասվելով սկսում է Աստծուն խնդրել, որ կյանքը վերցնելով՝ ազատություն շնորհի իրեն: Սակայն մի՛ կարծիր, թե Տովբիթը հույսը կտրում է Աստծուց, ո՛չ, երբեք. այլ իր կնոջ անարժան խոսքերը չհանդուրժելով է այսպիսի խնդրանք ուղղում Աստծուն, որը կյանքի և մահվան Տերն է: Աղոթքի ժամանակ նախ՝ գոհանում է Աստծուց և գովում Նրա դատաստանները, և միևնույն ժամանակ՝ խոստովանում, որ ինքն ու իր հայրերը մեղավոր են, և բոլոր դեպքում Աստծու գթությանն ու ողորմությանն է ապավինում:

Լա՛վ հասկացիր. Տովբիթը Աստծուն հաճելի անձնավորություն էր, սակայն Աստված նրան միառժամանակ նեղության մեջ է գցում, որպեսզի հետո, երբ նրան ազատի, Աստծու գթությունը և Տովբիթի առաքինությունը մարդկանց հայտնելով՝ օրինակ վերցնեն, և եթե աշխարհում երբևէ նեղության հանդիպեն առանց հուսահատվելու ապավինեն Աստծուն, աղոթքով և հաստատուն հույսով իրենք իրենց Նրա զորության, բարության և ամենագութ կամքին հանձնեն: Ահա մի փաստ ևս:

Տովբիթի հորեղբորորդի Հռագուելը (որ բնակվում էր մարերի Եկբատան քաղաքում) Սառա անունով մի աղջիկ է ունենում, որին յոթ անգամ նշանում է, և յոթ փեսան էլ առագաստի գիշերը դիվահար սպանվում են: Այսպիսով, աղջիկը, յոթ

անգամ ամուսնանալով, կույս է մնում, քանի որ դևը չի թողնում, որ որևէ մեկը նրան մոտենա. սա էր և՛ Սառայի, և՛ ծնողները խիստ մտատանջության պատճառը:

Մի օր Սառայի՝ աղախիններին հանդիմանելու ժամանակ նրան հանդգնությամբ պատասխանում են. «Յոթ մարդ առար, յոթին էլ սպանեցիր, և դու էլ չմեռար, այդքանից հետո դեռ մեզ նեղություն ես տալիս»: Այս անվայել խոսքերը լսելով՝ թեև ամոթխած Սառայի սիրտը խորապես կոտրվում է, բայց Սառան առանց Աստծուց հույսը կտրելու, իրեն Նրա գթությանը և պաշտպանությանը հանձնելով, տան վերևի հարկ է բարձրանում և պատուհանը բացելով, դեպի Երուսաղեմ նայելով, սրտառուչ հառաչանքներով սկսում է արտասվել և աղոթքով իր դժբախտ վիճակն Աստծուն հայտնել:

Սակայն զարմանալին այն է, որ երբ Տովբիթը, իր կնոջ անպատշաճ խոսքերից վիրավորվելով, ի սրտե աղերսում է Աստծուն, հենց նույն օրը՝ նույն ժամին էլ Սառան է աղոթում: Աստված երկուսի աղոթքն էլ լսում է և ցանկանում է Ռաֆայել հրեշտակի միջոցով նրանց օգնել, որպեսզի նրանց երկուսի տրտմությունն էլ ուրախության փոխվի, և նրանց վարձատրի իրենց առաքինի համբերության համար: Մինչև իսկ խորհելու արժանի է նրանց օգնություն առաքելու ձևը:

Տովբիթն անձնական տխուր վիճակի մասին խորհելիս որոշում է իր որդուն՝ Տուբիային, վերոհիշյալ Գաբայելի մոտ ուղարկել, որ պարտքով տված գումարը հետ վերցնի: Որդուն անմիջապես կանչելով՝ հետևյալ խրատն է տալիս՝ որպես կտակ, որ իր մահվանից հետո միշտ հարգի մորը և նրա սիրտը երբեք չվշտացնի, մանավանդ միշտ հնազանդ լինի Աստծու օրենքներին և երբեք Նրա պատվիրաններին չընդդիմանա, ողորմի աղքատին և տկարին ու անօգնականին նեցուկ և պաշտպան լինի, հեռու մնա մեղքից:

Իրոք, Տուբիան, լսելով հոր պատվիրանները, խոստանում է ամբողջը կատարել, սակայն երիտասարդ լինելով և Գաբայելին անձամբ չճանաչելով՝ Տովբիթն առաջարկում է՝ իրեն ճանապարհի ընկեր ընտրի, և Գաբայելի տված մուրհակն էլ հանձնում է որդուն: Երբ Տուբիան գնում է՝ ուղեկից ընկեր փնտրելու, Ռաֆայել հրեշտակը՝ ճանապարհորդի զգեստներով, իսկույն նրա առջև է ելնում, և Տուբիան, կարծելով, որ նա ճանապարհորդ է, հարցնում է. «Ցանկանո՞ւմ ես ինձ ընկերակցել մարերի Հառագա քաղաք գնալու համար»: Հրեշտակը պատասխանում է, որ պատրաստ է նրան ընկերակցելու. և՛ Գաբայելին է ճանաչում, և՛ ճանապարհը գիտի: Երբ Տուբիան նրան իր հոր մոտ է տանում, սա հարցնում է հրեշտակին, թե նա ո՛ւմ ցեղից է, որպեսզի իմանա նրա ո՛վ լինելը: Հրեշտակը պատասխանում է. «Դու իմ ցեղի մասին ես մտահոգվում, թե՞ որդուդ համար ճանապարհի ընկեր ես փնտրում», Տովբիթը պատասխանում է, որ միաժամանակ նրա ցեղն ու անուն էլ է ցանկանում իմանալ: Այն ժամանակ հրեշտակը պարտավորվում է հայտնելու, որ անունն Ազարիա է, և հոր անունն էլ՝ Անանիա:

Այս դեպքում հրեշտակը չի ցանկանում հայտնել, թե ո՛վ է ինքը, որպեսզի չվախենան, քանի որ եթե իմանային, որ ինքն Աստծու հրեշտակն է, պիտի վախենային, ուստի այլաբանորեն է պատասխանում, քանի որ *Ազարիա* նշանակում է «Աստծու օգնություն», իսկ *Անանիա* նշանակում է «Աստծու ողորմություն»: Արդարև, Աստված ողորմելու էր Տովբիթին և վերոհիշյալ Սառային, ուստի հրեշտակն ուղարկվել էր, որպեսզի օգնի, ինչպես որ հետագայում ինքն էլ հայտնում է[299]:

Տովբիթն ուրախանում է հրեշտակի պատասխանից, քանի որ մինչև գերվելը ճանաչում էր Անանիա անունով մեկին, որը

---

[299] *Տովբ. 12*:

աստվածավախ և պատվավոր անձնավորություն էր, և որի հետ մտերիմ բարեկամներ լինելով՝ բազմիցս միասին Երուսաղեմ էին գնացել՝ զոհ մատուցելու, և կարծում է, որ նրա որդին է՝ Ազարիան, և օրը մեկ դահեկան վարձ պայմանավորվելով՝ խոստանում է, որ վերադարձին էլ ընծաներ կտա նրան: Այս պայմանավորվածությունից հետո Տուբիան ճանապարհի պատրաստություն է տեսնում և հոր օրհնությունը ստանալուց հետո Ազարիայի հետ ճանապարհ ընկնում:

Սակայն Տովբիթի կինը՝ Աննան, չի ցանկանում՝ որդի գնա, ուստի արտասվելով ասում է ամուսնուն. «Ինչո՞ւ փողի համար մեր որդուն մեզնից հեռացրիր, Աստված ինչ տվել է, դրանով կբավարարվեինք»: Տովբիթը, նրան մխիթարելով, պատասխանում է. «Մի՛ տխրիր, նորից անվտանգ կվերադառնա, քանի որ Աստծու հրեշտակն է առաջնորդում մեր որդուն»: Այն երեկո Տուբիան և Ազարիան իջևանում են Տիգրիս գետի ափին, երբ Տուբիան լվացվում էր գետի ափին, մի մեծ ձուկ է նրա վրա հարձակվում, որպեսզի կուլ տա, և Ազարիան ասում է, որ Տուբիան բռնի նրան: Տուբիայի՝ ձուկը բռնելուց և գետից հանելուց հետո դարձյալ Ազարիայի խորհրդով ձկան սիրտը, լյարդը և շնչառական օրգանները հանում, պահում է, իսկ ձուկը խորովելով ուտում են: Երբ Տուբիան հարցնում է, թե ինչու պահեցին ձկան ներքին օրգանները, Ազարիան պատասխանում է. «Ով դև ունի իր մեջ, այդ ձկան սիրտն ու լյարդը ծխեցնելուն պես դևը կգնա, իսկ լեղին վարագուրված աչքերին քսելուն պես դրանք իսկույն կբժշկվեն»:

Հետո նրանք, շարունակելով իրենց ճանապարհը, մոտենում են Եկբատան քաղաքին, որտեղ բնակվում էր Հռագուելը: Ազարիան իր ընկերոջն ասում է. «Դու պետք է ըստ օրենքի կնության առնես Հռագուելի աղջկան՝ Սառային, քանի որ ազգական եք, աղջիկն էլ իմաստուն է և բարի»: Սակայն Տուբիան,

լսած լինելով, որ նա խնդիր ունի, և որ նրա հետ ամուսնացած անձինք առագաստի գիշերն իսկ մահացել են, երկյուղում է, թե միգուցե իր հետ էլ մի այդպիսի փորձանք պատահի: Ազարիան շտապում է քաջալերելու՝ ասելով. «Մի՛ վախեցիր, ամուսնական գիշերը բռնածդ ձկան սիրտն ու լյարդը, որ պահեցիր, դի՛ր կրակին և ծխեցրու, որից չար դևը անդառնալիորեն կհեռանա, և դուք էլ աղոթե՛ք Աստծուն, Նա էլ ձեզ գթությամբ կպահի»: Տուբիան, լսելով այս խոսքերը, համաձայնում է ամուսնանալ Սառայի հետ և հավանում է նրան: Երբ Եկբատան գնալով՝ Հռագուելի տուն են մտնում, Սառան, նրանց դիմավորելով, ներս է տանում:

Հռագուելը Տուբիային տեսնելուն պես կնոջն ասում է. «Այս տղան եղբորս որդու՝ Տովբիթի նման է», և երբ տեղեկանում է, որ Նինվեից են գալիս հարցնում է. «Տովբիթին ճանաչո՞ւմ եք, արդյո՞ք ողջ է»: Տուբիան պատասխանում է, որ ողջ է և իր հայրն է: Այն ժամանակ Հռագուելը, իսկույն վեր կենալով, համբուրում է նրան՝ արտասուքն աչքերին գովելով Տովբիթին և Տուբիային: Թեև իմանալով Տովբիթի աչքերի կուրության մասին՝ մեծ տխրությամբ է համակվում, բայց և այնպես մեծ պատվով ընդունելով՝ կերակրում է նրանց:

Քանի որ Տուբիան սեր է տածում Սառայի հանդեպ, դեռ ճաշի չնստած՝ Ազարիային հիշեցնում է ճանապարհին իրեն առաջարկածը և խնդրում, որ այդ առաջարկը ներկայացնի աղջկա ծնողներին, որպեսզի կատարվի իր ցանկությունը: Ազարիան խնդրանքը ներկայացնում է Հռագուելին, որը համաձայնում է՝ աղջկան կնության տալու, սակայն միևնույն ժամանակ հայտնում է, որ նրա փեսայացուները առագաստի գիշերն իսկ մահանում են, ուստի չի ցանկանում վերջնական համաձայնություն տալ, որպեսզի միգուցե Տուբիան էլ չմահանա, և ապա ավելացնում է. «Այժմ հա՛ց կեր և ուրախացի՛ր»:

Տուբիան պատասխանում է Հռագուելին, որ ինքը ոչինչ չի ուտի, մինչև իր գործը չկարգավորի: Այն ժամանակ ըստ օրենքի Հռագուելը Սառային կնության է տալիս Տուբիային և նրանց օրհնելով՝ գրավոր թղթով խոստանում իր ունեցվածքի կեսը նրանց ընծայել: Հետո ուրախ-զվարթ ճաշելուց հետո իր կնոջն ասում է. «Շուտով մի սենյակ պատրաստի՛ր և մեր անբախտ աղջկան քաջալերող խոսքերով այնտե՛ղ առաջնորդիր». կինն էլ ամենայն ճշգրտությամբ և խնամքով կատարում է:

Մինչ Սառան առագաստի սենյակ էր առաջնորդվում՝ նախկինում պատահած տխուր դեպքերը մտաբերելով, սրտատանջ անձկությամբ և հոգեմաշ թախիծով սկսում է արտասվել, սակայն մայրը, նրա արցունքը սրբելով, սկսում է հուսադրել և քաջալերել նրան՝ միաժամանակ Աստծուն աղաչելով, որ Իր գթառատ մարդասիրությամբ և անասելի ողորմությամբ նրա խորին վիշտն ու տրտմությունն ուրախության և ցնծության փոխի:

Երբ Տուբիային էլ առաջնորդում են առագաստի սենյակ՝ Սառայի մոտ, ըստ Ազարիայի պատվիրանի վերոհիշյալ ձկան սիրտը և լյարդը ծխեցնելով՝ պիղծ դևը խույս տալով եգիպտական երկրի վերին կողմերն է փախչում, և հրեշտակն այնտեղ կապում է նրան: Տուբիան Սառայի հետ Աստծուն աղոթելուց հետո միասին ննջում են: Սակայն Հռագուելը կասկածելով և վախենալով գերեզման է փորել տալիս, որ եթե հանկարծ Տուբիան մահանա, առանց որևէ մեկի իմանալու նրան թաղի, ինչպես թաղել էր մյուս փեսաներին:

Երբ առավոտյան տեղեկանում է, որ նա ողջ է, գոհություն և փառք է տալիս Աստծուն, օրհնում և գովաբանում է Նրա սուրբ և օրհնյալ անունը, Նրա մեծ և անասելի մարդասիրությունը և ողորմությունը: Ապա բացած գերեզմանը փակելով, միաձայն շնորհակալ լինելով Աստծուց՝ բոլորը սրտով և հոգով

ուրախանում են: Տուբիան ցանկանում է գնալ և Գաբայելից դրամը վերցնելով՝ վերադառնալ, սակայն երբ Հռագուելը երդումներով և թախանձելով թույլ չի տալիս, ստիպված պարտավորվում է Ազարիային ուղարկելու, որ գնա, գումարը բերի և Գաբայելին էլ հարսանիքի հրավիրի:

Ազայելը գնալով բերում է գումարը, միաժամանակ նաև Գաբայելին, ուստի տասնչորս օր մեծ ցնծությամբ հարսանիք են անում: Իրոք, այս պարագայում Տուբիան շատ ուրախ էր, սակայն փափագում էր օր առաջ Նինվե վերադառնալ, որպեսզի հայրն իր համար չմտատանջվի, քանի որ հարսանիքի պատճառով հապաղելու համար հայրն արդեն իսկ սկսել էր մտահոգվել, մանավանդ մայրն էլ, Տովբիայի մխիթարական խոսքերին ուշադրություն չդարձնելով, որոնցով նա ջանում էր ապացուցել՝ որդին կենդանի է, արտասվում և սգում էր նրան. կինը, տխրությունից անգամ հաց չուտելով, որդու գնացած ճանապարհին նայելով, արցունքներով էր ժամանակն անցկացնում:

Ահա այս է պատճառը, որ Տուբիան պնդում էր՝ շուտ գնան, իսկ Հռագուելը պատասխանում էր, որ մարդ կուղարկի հոր մոտ, որպեսզի հայրը չանհանգստանա, և թող նա միաժամանակ իրենց մոտ մնա, սակայն երբ տեսնում է, որ Տուբիան չի ցանկանում մնալ, Սառային է հանձնում նրան և պատվիրում, որ ամուսնուն միշտ հնազանդ լինի, և ունեցվածքի կեսը, նաև ծառաներ ու աղախիններ տալով՝ մեծ և սրտաբուխ օրհնություններով ճանապարհ է դնում նրանց:

Երբ Տուբիան, Աստծուց շնորհակալ լինելով, Նինվեին է մոտենում, Ազարիայի հետ առաջ է ընկնում, որ ընտանիքի համար տեղ պատրաստեն: Ինչպես վերը հիշատակվել է, Աննան դարձյալ ճամփին էր նայում, հեռվից որդուն տեսնելուն պես իսկույն գնում է՝ Տովբիթին լուր տալու, որը թեև ցանկանում էր

որդուն ընդառաջ ելնել, սակայն կուրության պատճառով ընկնելու երկյուղից կարիք ուներ պատերին հենվելով առաջ գնալու, սակայն, այնուամենայնիվ, գայթում է և ընկնում:

Վերջապես Տուբիան հասնում է հորը, և միմյանց փաթաթվելով՝ ուրախանում են և արտասվում: Տուբիան շտապում է, ըստ Ազարիայի պատվիրանի, իր մոտ եղած ձկան լեղին քսելու հոր կուրացած աչքերին, և Աստծու ողորմությամբ աչքերի վարագույրը իսկույն ցրվելով՝ սկսում է տեսնել:

Այժմ ո՞վ կարող է բացատրել Տովբիթի տան ուրախությունը. մարդկային մտքից վեր այն շնորհը, որ Աստված պարգևում է կույր Տովբիթին: Տուբիան հորը պատմում է այն ողորմությունը, որը Աստված էր արել իրեն: Հենց այդ պահին էլ հասնում է Սառան աղախնի և ծառայի հետ, ամբողջ ինչքով և մեծաքանակ գումարով: Տովբիթն ընդառաջ ելնելով մեծ ուրախությամբ և պատվով ընդունում է նրան և աղոթքներով և օրհնություններով գոհանում Աստծուց բոլոր բարերարությունների համար:

Խորին ուշադրության է արժանի և միաժամանակ օրինակելի Տովբիթի դրության այսպիսի փոփոխությունը, քանի որ նա կորցնում է իր ողջ ունեցվածքը և ութ տարի էլ կույր մնում, սակայն երբեք առ Աստված ունեցած նրա հավատքը չի խախտվում, և առաքինական կյանքն էլ բնավ երբեք չի փոխվում, և անսպառ համբերությամբ արժանանում է այն շնորհին, որով Աստված ոչ միայն նրա աչքերն է բժշկում, այլև մեծ հարստություն պարգևում նրան:

Հետո Տովբիթը ցանկանում է վճարել Ազարիայի վարձը, և Տուբիայի հետ խորհրդակցելով՝ որոշում են բերած ստացվածքի և հարստության կեսը նրան տալ, և երբ նրան կանչելով հայտնում են իրենց որոշումը, Ազարիան պատասխանում է, որ ինքն Աստծու հրեշտակն է, Նրա հրամանով է եկել՝ օգնելու,

և նրանց պատվիրում է սույն բարերարության համար, որ նրանց հանդեպ է կատարվել, փառք տան Աստծուն, և նրանց ասում է. «Դու և քո հարս Սառան, երբ աղոթելու կանգնեցիք, ես էի, որ դրանք Աստծու մոտ բարձրացրի, և երբ դու թաղում էիր մահացածներին, ես մոտդ էի, Աստված ինձ ուղարկեց՝ քեզ բժշկելու. ես Ռաֆայել հրեշտակն եմ»:

Երբ Տովբիթն ու Տուբիան լսում են այս խոսքերը, զարհուրելով երեսնիվայր ընկնում են, և հրեշտակը նրանց ասում է. «Մի՛ վախեցեք, այլ աղոթեցե՛ք, քանի որ ոչ թե ես իմ կամքով եկա, այլ ձեր Աստծու հրամանով. ես այժմ գնում եմ Նրա մոտ, Ով ինձ ուղարկեց, դուք միայն գրի՛ առեք, ինչ պատահել է ձեզ հետ»: Հրեշտակն այս խոսքերն ասելուց հետո անմիջապես աներևութանում է. նրանք երկար ժամանակ երկյուղով են համակվում, հետո ոտքի կանգնելով՝ գոհությամբ փառաբանում են Աստծուն:

Այդ ժամանակ Տովբիթը, նորից աղոթելով, խոստովանում է Աստծու արդարությունը, ողորմությունն ու բարությունը, մանավանդ աստվածային ներշնչմամբ հայտնում է, որ Երուսաղեմն ու տաճարը պիտի ավերվեն, և ժողովուրդն էլ գերի պիտի տարվի, և ապա ազատվելով պիտի վերաշինեն Երուսաղեմը, ինչպես գրված է նրա գրքում: Տովբիթի այս խոսքերը, այլաբանորեն ընկալվելով, այսպես են հասկացվում. Քրիստոս պիտի աշխարհ գա, և կռապաշտները պիտի հավատան Նրան, և Սուրբ Եկեղեցու ու արքայության փառքն ու թագավորությունը պիտի անվախճան լինեն:

Այնուհետև խիստ ծերացած Տովբիթը կանչում է Տուբիային և նրա յոթ որդիներին և պատվիրում միշտ հնազանդվել Աստծուն, արդարությամբ գործել և աղքատներին ողորմել, որդուն էլ պատվիրում է, որ Նինվեում չմնա, այլ գնա և մարերի երկրում բնակվի, քանի որ Նինվեն պիտի կործանվի, ինչպես

ավելի առաջ գուշակել էր Հովնան մարգարեն[300], որի խոսքն էլ, ուշ թե շուտ, անպատճառ պետք է կատարվի:

Երբ Տովբիթը մահանում է, որդին՝ Տուբիան, թաղում է նրան, ապա մահանում է մայրը, և հոր մոտ թաղելուց հետո ինքը՝ Տուբիան, գաղթելով գնում է աներոջ՝ Հռագվելի մոտ: Հռագվելն ու նրա կինն էլ մահանում են խոր ծերության հասակում, որոնց էլ Տուբիան թաղում է, և ժառանգում նրանց ամբողջ հարստությունն ու ունեցվածքը: Տուբիան դեռ ողջ էր, երբ լսում է Նինվեն կործանվելու լուրը, և փառք տալիս Աստծուն, որ ինքն այնտեղ չէ:

Տովբիթին արժանի որդին՝ Տուբիան էլ երկար տարիներ առաքինությամբ, բարեպաշտությամբ և կատարյալ օրինապահությամբ կենցաղավարելուց հետո սրբությամբ և բարի մահվամբ կնքում է իր մահկանացուն:

Հարց ԶԴ: **Ո՞վ էր Հուդիթը:**

Պատասխան: Իսրայելի Բեթիզվա քաղաքից իմաստուն, ազնվազարմ, առաքինի և հարուստ կին էր, որի ամուսինը՝ Մանասեն, մահացել էր, ինքը՝ այրիացել, սակայն Աստծու օրենքներին կատարելապես հնազանդ լինելով՝ ժողովրդի մեջ փառավոր անուն և համբավ էր ձեռք բերել:

Նինվեում գահակալող ասորիների թագավորը պատերազմով ավելի վաղ գրավել էր մարերի երկիրն ու իր իշխանության ներքո առել: Սակայն երբ Սենեքերիմի օրոք Երուսաղեմ արշավելիս հրեշտակը նրա զորքից հարյուր ութսունհինգ հազար մարդ է կոտորում (տե՛ս ՀԶ հարցը),

---

[300] Հովնանն սկսեց մուտք գործել քաղաք: Երբ մեկ օրվա ճանապարհ անցավ, քարոզեց և ասաց. «Եվս երեք օր և Նինվեն պիտի կործանվի» (*Հովն. 3:4*):

ասորիները միաժամանակ կորցնում են իրենց հզորությունը և չեն կարողանում պատերազմել:

Արդ, Սենեքերիմի թոռը՝ Նաբուգոդոնոսորը, հորից՝ Ասորդանից հետո Նինվեում թագավորելիս Մարաստանի ժողովուրդը, պատեհ առիթ համարելով, ապստամբում է, և Արփաքսաթ անունով մի մարդ, նրանց թագավորելով, օրըստօրե զորանում և հռչակավոր է դառնում և Եկբատան քաղաքն ամեն կերպ ամրացնելու ջանք և զոհողություն չի խնայում: Նաբուգոդոնոսորը, չհանդուրժելով նրա այսքան զորանալը, անհամար զորքով Արփաքսադի դեմ պատերազմելու է դուրս գալիս և նրան սպանելուց հետո մարերի երկիրն իրեն է ենթարկում և Եկբատան քաղաքն էլ հիմնահատակ ավերում:

Այս հաղթանակից հպարտանալով՝ Նաբուգոդոնոսորը ցանկանում է աշխարհի բոլոր թագավորներին հպատակեցնել, այն է՝ Պարսկաստան, արևմուտք, Թերսիս, Դամասկոս, Լիբանան, Բարաշամի ամբողջ եզերքը և Հրեաստանը գրավելու ցանկությամբ, ինչպես նաև Եգիպտոս, և անապատի ազգերին առանձին-առանձին մարդիկ է ուղարկում, որ հնազանդվեն իրեն և հարկեր վճարեն: Սակայն նրա մարդիկ ուր էլ գնում են, մերժողական պատասխաններ են ստանում և ստիպված են լինում անարգանքով վերադառնալու:

Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը բարկացած երդվում է իր թագավորությամբ, որ նրանց բոլորին էլ սրի է քաշելու, և մանավանդ երբ իր զորքի հրամանատարներին հավաքելով՝ հայտնում է իր մտադրությունը, բոլորն էլ միաձայն հայտարարում են. «Թող կորչեն բոլոր նրանք, ովքեր թագավորի հրամանին դեմ դուրս կգան»: Որոշում կայացնելուց հետո հրամայում է իր զորքերի հրամանատար Հողեփեռնեսին, որ զորքերը հավաքելով՝ գնա և իր կամքին դեմ ըմբոստ ժողովուրդներին կոտորի և մյուսներին էլ ենթարկեցնի:

Թեև միայն հարյուր քսան հազար հետևակ և նույնքան էլ հեծելազոր են պատրաստ լինում, սակայն Նաբուգոդոնոսորին հպատակվող երկրամասերից էլ զորք հավաքելով՝ ծովի ավազի նման անհամար զորք է հավաքվում: Սրանց բոլորին անհրաժեշտ պաշարը, գումարն ու ինչքը պատրաստելով՝ փողերը հնչելուն պես դուրս են գալիս Նինվեից: Նրանց զորագլուխը՝ Հողեփեռնեսը, անխնա կոտորում է այն բոլոր ժողովուրդներին, որոնք չեն հնազանդվում և հպատակվում Նաբուգոդոնոսորին, և որպեսզի ահ և երկյուղ սփռի աշխարհի բոլոր ազգերի սրտերում և նրանց ստիպի հնազանդվելու Նաբուգոդոնոսորին, ավերում է նրանց քաղաքներն ու տները և անխնա կողոպտում:

Արդարև, հիշյալ զորավարի վարքի և արաքների մասին լսող ժողովուրդները, երկյուղից և ի նշան հնազանդության, մարդիկ են ուղարկում նրա մոտ և անձնատուր լինում, և երբ նա նրանց մոտ է գալիս, ընդառաջ են ելնում մեծահանդես բազմությամբ և նվագարաններով, և այսպիսով իր գնացած վայրերը գրավելով՝ պահապան զորքեր է նշանակում:

Դրանից բացի, ըստ Նաբուգոդոնոսորի պատվիրանի, ոչնչացնում և քանդելով բնաջնջում է բոլոր կուռքերի կռատները և նրանց նվիրված անտառները, որպեսզի կուռքեր չպաշտեն, այլ Նաբուգոդոնոսորին ընդունեն և միայն նրան պաշտեն՝ որպես աստծու: Ուստի երբ Հողեփեռնեսը, բոլոր վայրերում իշխելով, գրավում է նաև Իսրայելի շրջակայքում գտնվող կռապաշտ քաղաքները, բոլոր իսրայելացիները, մեծ երկյուղ և սարսափ կրելուց բացի, առավել մտատանջվում են Երուսաղեմի և տաճարի համար:

Ճշմարիտ է՝ Սալմանասար թագավորի օրոք իսրայելացիները գերեվարվել էին, սակայն այդ ընթացքում մի հնարով նոր էին վերադարձել և օրենքին հակառակ վարք չունեին:

Ուստի թեև Մանասեն թագավորում է Երուսաղեմում, սակայն այդ ժամանակ փոքր լինելով՝ դեռևս չէր հակվել կռապաշտության, պետության գործերն էլ Հովակիմ քահանային էին հանձնվել, և՛ Երուսաղեմի բնակիչները, և՛ Հուդայի ողջ ժողովուրդը ամեն կերպ հնազանդ էին Աստծու օրենքներին, սակայն անկարող լինելով թշնամուն դիմադրելու՝ միայն Աստծու վրա էին դրել իրենց հույսը: Հովակիմ քահանան և ժողովրդի ծերերը հրահանգում են ճանապարհին մոտ բնակավայրերում, կիրճերում հսկողներ դնել և միշտ աղոթել Աստծուն, որ պահպանի թշնամուց:

Ուստի ամբողջ ժողովուրդը՝ այր և կին՝ իրենց մանուկների հետ, Երուսաղեմում և այլ բնակավայրերում մեծ սուգով, քուրձ հագած, խոնարհվում են և աղոթում: Հովակիմ քահանան և մյուս ղևտացիները, քուրձ հագնելով, իրենց գլխին մոխիր են ցանում և տաճարում ծնրադրած՝ սրտագին հառաչանքներով և պաղատանքներով զոհեր մատուցում:

Քանի որ Հողեփեռնեսը ուր էլ արշավում էր, կոտորած և ավեր էր սփռում, շատերը, երկյուղից անձնատուր լինելով, հնազանդվում են, ուստի նա հույս ուներ, որ հրեաներն էլ անձնատուր պիտի լինեն: Եվ իսրայելացիների գործողությունների մասին լսելով՝ մեծապես բարկանում է և իսրայելացիների երկրի շրջակայքում բնակվող ժողովուրդների մեծամեծներին կանչելով՝ ցանկանում է տեղեկանալ և ճշտել, թե ովքեր են իսրայելացիները, որոնք են նրանց քաղաքները և մեծամեծները, և թե ինչի կամ ում վրա են իրենց հույսը դրել:

Այն ժամանակ կռապաշտ ամոնացիների Աքիովր անունով իշխանը, որը բոլոր առումներով քաջատեղյակ էր Իսրայելի ժողովրդի վիճակին և ներքին հանգամանքներին, մանավանդ նաև իմաստուն, հավատարիմ, անկեղծ և պարզ սրտով մարդ էր, պատասխանում է. «Ինչ վերաբերում է այդ

ժողովրդին, ծառադ ճշմարտությունը կհայտնի քեզ», և իսրայելացիների ծագումից սկսելով՝ հայտնում է, թե ինչպես են նրանք բազմանալով գրավում քանանացիների երկիրը, և, ի վերջո, եզրակացնում է. «Նրանց Աստվածը մերժում է չարը, եթե նրանք հնազանդվեն իրենց Աստծուն, ոչ ոք չի կարող հաղթել նրանք, քանի որ Աստված է պատերազմում նրանց թշնամիների դեմ, իսկ եթե մեղանչելով բարկացնեն Աստծուն, այն ժամանակ կհաղթվեն իրենց թշնամուց»:

Հիշյալ օտարականը, այսպես խոսելով, վերջիվերջո ասորիների գոռոզ զորավարին առաջարկում է. «Մի քիչ համբերե՛ք, որպեսզի իմանաք, թե արդյոք նրանք այժմ մեղանչե՞լ են իրենց Աստծու դեմ, նոր միայն պատերազմեք, իսկ եթե ներկայումս հաշտ են Աստծու հետ և չեն մեղանչել Նրա օրենքների դեմ, երբեք չպատերազմեք այդ ժողովրդի դեմ, քանի որ միգուցե Աստված նրանց օգնական լինի և մեզ էլ անարգ վիճակի մեջ գցի»:

Թեև իսրայելացիների վերաբերյալ Աքիովրի խոսքերը ճշմարիտ էին, սակայն հավաքվածներից մի քանիսը, որպես թե նա հայհոյել էր Նաբուգոդոնոսորին, ցանկանում են սպանել Աքիովրին՝ ասելով. «Մենք չենք վախենում իսրայելացիներից, քանի որ նրանք մեր դեմ պատերազմելու զորություն չունեն, գնանք, հարվածենք այդ ապստամբ ժողովրդին»: Հոդեփեռնեսը, նույնպես զայրանալով, հետևյալն է ասում այդ հանդուգն օտարական իշխանին, որը համարձակվել էր պարզ և աներկյուղ հայտնելու ճշմարտությունը. «Ո՞վ ես դու, որ Իսրայելի Աստծուն Նաբուգոդոնոսորից զորավոր ես համարում, ո՞վ է աստված՝ բացի Նաբուգոդոնոսորից»:

Այսպիսի հպարտ և հանդուգն խոսքեր ասելով՝ հրամայում է կապել Աքիովրին և Բեթիզվա տանելով՝ հանձնել իսրայելացիներին, որ երբ նրանց կոտորի, նրան էլ նրանց հետ

սպանի: Արդարև, երբ այդ մարդուն մոտեցնում են քաղաքին, բնակիչները, որոնք լեռներում էին պատսպարվել, հարձակվում են՝ պարսատիկներով քարեր նետելով: Այդ ժամանակ Աքիովրին բերողները, նրան մի ծառից կապելով, թողնում և փախչում են: Իսրայելացիները, լեռներից իջնելով, ազատում են նրան և Բեթիզվա տանում: Նրան հարցնում են այդպես բերելու պատճառը, և նա էլ պատմում է՝ ինչ է ասել ատյանում, նաև Հողեփեռնեսի մտադրությունը:

Այն ժամանակ ամբողջ ժողովուրդը, Աստծուն երկրպագելով, ծնրադրում է, որ ազատվի բռնակալից, և Աքիովրը, նրանց մխիթարելով, գովում է: Մանավանդ քաղաքի իշխանը, որի անունը Ոզիա էր, իր տուն տանելով և հրավիրելով քաղաքի քահանաներին և ծերերին՝ մեծ խնջույք է կազմակերպում, ապա բոլորն էլ մինչ լուսաբաց սրտագին հառաչանքներով իրենց փրկության համար աղաչանքներ և պաղատանքներ են մատուցում Աստծուն:

Նկատի՛ր. իսրայելացիների ազատությունը մարդկային որևէ միջոցով անհնարին լինելով՝ միայն Աստծու ողորմությանն են ապավինում, իսկ Հողեփեռնեսը, հույսը սեփական զորության վրա դրած, հաջորդ օրը, զորքն ամբողջովին սպառազինելով, պաշարում է Բեթիզվա քաղաքը: Սակայն ամոնացիների, մովաբացիների և ծովեզերքի ազգերի խորամանկ իշխանները, որոնք քաջատեղյակ էին այդ տարածքներին, պատերազմելու փոխարեն առաջարկում են մի փոքր համբերել, որ զորքի կորուստ չունենան, և բեթիզվացիների աղբյուրների ակունքները փակելով՝ ցանկանում են նրանց ստիպել անձնատուր լինելու, քանի որ ջրի պակասությունից կհանձնվեին: Խորամանկ զորավարը հավանություն է տալիս այս առաջարկին և երեսունչորս օր առանց ընդհարումների շարունակում է պաշարումը:

Այս է պատճառը, որ քաղաքում ջուրը հետզհետե պակասելով՝ սկսում են ջուրը չափով բաժանել, մինչև հազիվ մի օրվա ջուր է մնում: Բնակիչները, ծարավից մահվան շեմին հասնելով, այնքան են տկարանում, որ ընկնում են փողոցներում, և քանի որ ոչ մեկից օգնության հույս չեն ունենում, հարձակվում են Ոզիայի և քաղաքի ծերերի վրա՝ ասելով. «Թող Աստվա՛ծ ձեզ դատի, մեզ կոտորելո՞ւ եք, ինչո՞ւ չհնազանդվեցիք ասորեստանցիներին, ոչ մեկը մեզ չի փրկելու, և Աստված էլ մեզ նրանց ձեռքը մատնեց, որ կորչենք, հանձնե՛ք քաղաքը, գերի ընկնելը մահանալուց լավ է»:

Երբ ժողովուրդն այսպիսի հուսահատական խոսքեր ասելուց հետո սկսում է սաստիկ լացուկոծը, ծերերն աղաչում և պաղատում են Աստծուն, և Ոզիան էլ ճարահատյալ հանձն է առնում հանձնել քաղաքը, եթե հինգ օր ևս համբերեն, և Աստծու գթությանը վստահ՝ այսպիսի խոստումով բաց է թողնում ժողովրդին: Իրոք, նա առանց Աստծուց հույսը կտրելու քաղաքի պարսպին և աշտարակներին մարդիկ է նշանակում, որպեսզի հարկ եղած դեպքում դիմադրեն թշնամուն, այսպիսով, անորոշ մի հույս ոգևորում է բարեպաշտ իշխանին:

Այսուհանդերձ, մարդկայնորեն մտածելով՝պարզ էր, որ ոչ մի հնար չէր կարող լինել, ուստի և՛ Ոզիան, և՛ ծերերը բոլոր առումներով մտատանջության են մատնվում, շվարում՝ չիմանալով, թե ի՛նչ պետք է անեն փրկության համար: Արդ, վերոհիշյալ այրի կինը՝ Հուդիթը, իրավիճակին ամբողջովին տեղեկանալուց հետո, կանչելով Ոզիային և ծերերին, այսպես է խոսում. «Լավ չարեցիք, որ ժողովրդին խոստացաք, որ եթե հինգ օրվա ընթացքում օգնություն չլինի, քաղաքը կհանձնեք, քանի որ այսպիսի պայմանը նշանակում է Աստծուն փորձել, սակայն ո՞վ կարող է տեղյակ լինել նրա խորհուրդներին, եթե ցանկանա, կարող է փրկել, դուք Նրա կամքին չափ

և սահման մի՛ դրեք, միայն աղոթե՛ք, աղաչե՛ք և Նրա գթությո՛ւնը հայցեք»:

Երբ Հուդիթն այսպիսի շատ խոսքեր է ասում ծերերին, նրան շատ են հավանում և միևնույն ժամանակ նրանից խնդրում են, որ նա էլ Աստծուն աղոթի և աղաչի ազգի փրկության համար: Հուդիթը նրանց պատասխանում է. «Դուք քաղաքի դարպասների պահապաններին պատվիրե՛ք, որ այս գիշեր քաղաքից իմ դուրս գալու ժամանակ պատրաստ լինեն բացելու դարպասները, և ինձ ընդհանրապես մի՛ հարցրեք, թե ինչ պիտի անեմ»: Քանի որ քաջասիրտ կինը, Աստծու վրա հույս դնելով, մտադրություն և ցանկություն ուներ գնալու Հոլոֆեռնեսի մոտ և մի հնարքով նրան սպանելու, սակայն իր մտադրությունը չի ցանկանում որևէ մեկին հայտնել, մինչև Աստծու ողորմությամբ այն իրականացնի:

Նրանք, իմանալով, որ նա իմաստուն և սուրբ կին է, պատասխանում են. «Բարի՛, գնա՛ խաղաղությամբ և Իսրայելի Աստվածը թող հետդ լինի»: Այս ամենով հանդերձ իրենք էլ ամենայն արթնությամբ հոգում են պարսպի հսկողությունը:

Այստեղ հարկ է նկատի ունենալ Հուդիթի մեծ հավատքը, քանի որ երբ ծերերը գնում են, խարազանազգեստ հագնելով՝ գետնամած խոնարհվում է Աստծու մեծության առջև և գլխին մոխիր ցանելով՝ սրտագին պաղատանքներով և աղոթքներով դիմում Աստծուն՝ խնդրելով, որ իսրայելացիներին գթալով՝ զորություն պարգևի, որպեսզի մտադրությունն իրագործելով՝ Աստծու զորությունը և Իսրայելի հանդեպ ունեցած բարությունը աշխարհին հայտնի լինեն:

Երբ Հուդիթն աղոթում է Բեթիզվա քաղաքում, միևնույն ժամին Աստծու քահանաները Երուսաղեմի տաճարում խնկարկություն են անում: Աղոթքն ավարտելուց հետո կանչում է իր աղախնին և ըստ իրենց սովորության՝ լվացվելով

օծվում է անուշահոտ յուղերով և տոնական զգեստներ է հագնում ու զարդարվում՝ ինքն էլ երիտասարդ և անչափ գեղեցիկ լինելով, այնպես որ նրան տեսնող որևէ մեկը չէր կարող չհիանալ նրա գեղեցկությամբ, և մի քանի օրվա համար հաց, գինի և այլ անհրաժեշտ բաներ պայուսակը դնելով՝ աղախնի հետ քաղաքի դարպասների կողմն է քայլում:

Ոգիան և ժողովրդի ծերերը, որոնք այնտեղ էին, նրա հրապուրիչ գեղեցկությունն ու զարդարանքները տեսնելով՝ զարմանքից ապշում են, քանի որ այդ երկյուղած կնոջը երբեք այդպիսի կերպարանքով չէին տեսել և նրան օրհնելով՝ բացում են դուռը, և նա ամենայն զգուշությամբ աղախնի հետ դեպի ասորիների բանակն է քայլում:

Քանի որ գիշեր էր, ուստի հանդիպում է պահակներին, որոնք հարցնում են, թե ո՛վ է և ո՛ւր է գնում: Հուդիթը շտապում է պատասխանելու, որ ինքն իսրայելացի է և որ իսրայելացիների ձեռքից փախել է և Հողեփեռնեսի մոտ պիտի գնա, որպեսզի քաղաքը գրավելու մի հեշտ ճանապարհ ցույց տա:

Այդ ժամանակ պահակները նրան պատվով տանում են Հողեփեռնեսի վրանը, որը տեսնելով նրա հրաշալի գեղեցկությունը՝ զարմանում և ասում է. «Մի՛ վախեցիր. ով հնազանդվում է Նաբուգոդոնոսորին, ոչ մի չարիք կամ վնաս չենք պատճառում նրան», և երբ հարցնում է նրա գալու պատճառը, Հուդիթը, երեսնիվայր խոնարհությամբ ողջունելով նրան, Հողեփեռնեսի սրտին հաճելի խոսքերով սկսում է գովել Նաբուգոդոնոսորին և միաժամանակ հայտնում՝ ինքը գիտի այն, ինչ որ նրան Աքիորը է ասել իսրայելացիների մասին, և հաստատում է նրա խոսքերը, որոնք կատարյալ ճշմարտություն են: Իսրայելի Աստծու զորությունն ու արդարությունը հայտնապես խոստովանելուց հետո շարունակում է. «Իսրայելացիները մինչև չմեղանչեն Աստծու դեմ, ոչ մեկը չի կարող վնասել նրանց, քանի

որ Աստված պահպանում է նրանց, իսկ եթե Աստծու հրամաններին դեմ են լինում, Աստված արդարությունը գործադրելու համար թշնամու ձեռքով պատժում է նրանց»:

Հետո Հուդիթն ավելացնում է. «Այժմ Իսրայելը մեղանչել է, քանի որ քաղաքում խմելու ջուր և ուտելու կերակուր չի մնացել, և անտանելի նեղության մեջ են: Պարզ է, որ պիտի պատժվեն, քանի որ Աստված ինձ ուղարկել է, որ քեզ հետ մի մեծ գործ կատարեմ, այնպիսին, որ լսողն ապուշ կտրի, որովհետև աղախինդ միշտ Աստծուն աղոթում է և խնդրում թույլ տալ այստեղ մնալու և աղոթելու. Աստված ինձ կհայտնի իսրայելացիների մեղանչելու մասին, և ես էլ իմ հերթին, քեզ տեղեկացնելով, քեզ կառաջնորդեմ Իսրայելի երկրները, մինչև իսկ՝ Երուսաղեմ, որպեսզի այն գրավես, և ոչ մեկը չկարողանա դիմադրել քեզ»:

Արդարև, Հուդիթի այսպիսի խոսքերը Հողեփեռնեսին և նրան շրջապատող մարդկանց շատ հաճելի են թվում, նրանք գովում են նրա գեղեցկությունն ու իմաստությունը և հայտարարում, որ նրա նման կին աշխարհում չկա: Մանավանդ անմիտ զորահրամանատարը, բոլորից ավելի հավանելով և սիրելով այդ խոսքերը, խոստանում է ընդունել Հուդիթի աստծուն, երբ նրա բոլոր ասածները կետ առ կետ կատարվեն: Ապա իր վրանի մոտ նրա համար հատուկ տեղ պատրաստելով՝ հրամայում է նաև կերակուր տալ նրան, սակայն Հուդիթը, նրա հյուրասիրությունից չօգտվելով, միայն իր ուտելիքից է օգտվում, որպեսզի օրենքի դեմ չմեղանչի:

Այսպիսով, Հուդիթը երեք օր մնում է այնտեղ, գիշերները բանակից դուրս գալով Բեթիզվայի մոտ մի ջրի աղբյուր է գտնում և ըստ սովորության՝ այնտեղ լվացվում և աղոթում և ապա վերադառնում է, և ոչ մեկը նրան չի արգելում, քանի որ նրա խնդրանքով Հողեփեռնեսը պատվիրել էր, որ նրա

ելումուտին արգելք չլինեն: Չորրորդ օրը զորավարը մեծ խնջույք է տալիս իր հրամանատարներին, որին Հուդիթն էլ է հրավիրվում. թեև նա ուրախությամբ է գնում խնջույքին, սակայն իր կերակուրից է ուտում:

Այստեղ ուշադրության է արժանի Հողեփեռնեսի ողորմելի վիճակը. քանի որ անմիտը, սիրահարված լինելով եբրայեցի կնոջը, այնքան է խմում, որ ամբողջ կյանքում այդքան խմելու սովոր չէր: Գիշերն ընկնելուն պես հրավիրվածները վրանից կամաց- կամաց դուրս են գալիս, քանի որ նրանք նույնպես արբել էին և անկարող էին մնալու, ուստի վրանում մնում են միայն Հողեփեռնեսը և Հուդիթը. մեկը՝ հարբած, իսկ մյուսը՝ ամբողջությամբ սթափ: Վրանի դռնապանն էլ շտապում է՝ դուռը նրանց վրա փակելու, ինչպես որ նախապես հրաման էր ստացել իր տիրոջից:

Սակայն, բարեբախտաբար, Հողեփեռնեսն էլ անկարող էր այլևս արթուն մնալու, և հենց իր գահավորակին խոր քուն մտնելուն պես Հուդիթը պատվիրում է իր նաժիշտին դրսում սպասել և ինքը, նորից աղոթելով, Աստծուց զորություն է խնդրում և անմիջապես վերցնում է Հողեփեռնեսի դաշույնը և կտրելով նրա գլուխը՝ մարմինը գահավորակից վայր է գցնում: Մի ժամ հետո վրանից դուրս գալու համար զորավարի գլուխը դնում է պայուսակի մեջ և վրանի դուռն էլ փակելով՝ նախորդ գիշերների նման կարծես թե աղոթելու է գնում, աղախնի հետ դուրս է գալիս բանակից, և ոչ մեկը նրանց չի արգելում:

Երբ Հուդիթը լեռան ստորոտից քաղաքին է մոտենում, հեռվից «Բացե՛ք դուռը, Աստված մեզ հետ է» ձայն տալուն պես[301] դռնապանները նրա գալու մասին քահանաներին և քա-

[301] Եվ եկան քաղաքի դարպասների մոտ: Հուդիթը դարպասների պահապաններին ասաց հեռվից. «Բացե՛ք, բացե՛ք դարպասները, մեզ հետ է մեր Տեր Աստվածը» (*Հուդիթ 13:13*):

ղաքի ծերերին են հայտնում, Հուդիթին տեսնելու համար բոլոր բնակիչները լապտերներով և ճրագներով իսկույն դուրս են գալիս իրենց տներից և շատ են զարմանում նրա վերադարձից: Այսպիսով, դարպասները բացում են, և Հուդիթը ներս մտնելով ասում է. «Օրհնեցե՛ք Աստծուն, որ չխնայեց Իր ողորմությունը իսրայելացիների համար»[302], մանավանդ Հողեփեռնեսի գլուխը պայուսակից հանելով՝ բոլորին ցույց տալուց հետո նրանք ուրախությամբ, Աստծուն օրհնելով, շնորհակալ են լինում: Այն ժամանակ Ոզիան էլ, օրհնելով Հուդիթին, գովում է նրա հավատքն ու քաջությունը, և ամբողջ ժողովուրդը միաձայն աղաղակում է՝ *ամեն*:

Ապա Հուդիթը կանչում է վերոհիշյալ Աքիովրին, և երբ ցույց է տալիս Հողեփեռնեսի գլուխը, հիշյալը երկյուղից ուշագնաց է լինում: Երբ ուշքի է գալիս, երկրպագում է Հուդիթին և գովում նրա: Հուդիթը մեկ առ մեկ պատմում է, թե ինչպես է Աստծու օգնությամբ գործը գլուխ բերել, ամբողջ ժողովուրդը բարձրաձայն փառաբանում է Աստծուն, հիշյալ Աքիովրն էլ, ի սրտե հավատալով Աստծուն, ընդունում է իսրայելացիների օրենքները: Հուդիթի կարգադրությամբ առավոտյան Հողեփեռնեսի գլուխը կախում են քաղաքի պարսպի աշտարակից, և միաժամանակ զինված ժողովուրդը հարձակման է անցնում: Ասորիները, սա տեսնելով, գնում են Հողեփեռնեսի վրան՝ նրան տեղեկացնելու, և դուռը փակ գտնելով՝կարծում են, որ Հուդիթի հետ քնած է:

Հետո ձայն են տալիս, և երբ ներսից պատասխան չեն լսում, դռնապանը, համարձակություն առնելով, ներս է մտնում և Հողեփեռնեսի արյունաշաղախ դիակը գետնին փռված և գլուխը

---

[302] Հուդիթը բարձր ձայնով ասաց. «Ո՛վ իսրայելացիներ, օրհնեցե՛ք Աստծուն, որ իր ողորմությունը չհեռացրեց Իսրայելի տնից» (*Հուդիթ 13:17*):

կտրած տեսնելուն պես պատռում է իր հագուստը, սկսում է իրեն հարվածել և ողբալ: Մանավանդ Հուդիթի վրանն էլ գնալով՝ այնտեղ նրան չեն գտնում, ուստի ինքնաբերաբար գործի էությունը հասկանալով՝ Հողեփեռնեսի հրամանատարները երկյուղից պատռում են իրենց զգեստները:

Նմանապես ամբողջ զորքին այնպիսի երկյուղ է պաշարում, որ շփոթված և շվարած, չիմանալով ինչ անել, թողնում են ամեն ինչ, և բանակն ու ամեն մեկը մի-մի կողմ են փախչում, և իսրայելացիները, ընկնելով նրանց հետևից, սկսում են կոտորել: Այն ժամանակ Ոզիան Իսրայելի բոլոր քաղաքները մարդ է ուղարկում, որ շտապեն և զինվեն, ուստի նրանք էլ դիմավորելով փախչող ասորեստանցիներին, այնպես են կոտորում և հալածում նրանց, որ Իսրայելում մի թշնամի անգամ չի մնում: Բեթիզվա քաղաքի բնակիչները թշնամու բանակը կողոպտելու ընթացքում այնքան ունեցվածք և կենդանիներ են գտնում, որ երեսուն օրում հազիվհազ կարողանում են ավարառությունն ավարտել:

Վերոհիշյալ Հովակիմ քահանան և ժողովրդի ծերերը, հատկապես Հուդիթին տեսնելու համար Երուսաղեմից Բեթիզվա գալով, գովում և օրհնում են քաջասիրտ կնոջը և շնորհակալություն հայտնում Աստծուն: Նաև իսրայելացիների բոլոր քաղաքներից պատվարժան մարդիկ՝ տղամարդիկ և կանայք, խումբ-խումբ Բեթիզվա գալով, անպատմելի ցնծությամբ և գոհաբանական երգերով օրհնում և փառավորում են Աստծուն: Հուդիթը նրանց բոլորին նվիրում է արմավենու ոստեր, ձիթենու ճյուղեր և ծաղիկներ: Նրանք էլ իրենց հերթին Հուդիթին են նվիրում Հողեփեռնեսի ամբողջ ունեցվածքը՝ վրանը, կահկարասին, ոսկեղեն և արծաթեղեն անոթները ու գանձերը, որոնք էլ բարեպաշտ կինն իր հերթին նվիրում է տաճարին: Ապա Երուսաղեմ գնալով՝ տաճարում ամենայն

երախտագիտությամբ երկրպագում են Աստծուն և զոհեր մատուցում:

Այնուհետև Հուդիթը ծերանալով արձակում է իր նաժիշտին և, ողջ հարստությունը ամուսնուն՝ Մանասեին, և իր ազգականներին բաժանելով, մահանում հարյուր հինգ տարեկան հասակում, և բոլոր իսրայելացիները յոթ օր սուգ են պահում նրա մահվան համար: Հուդիթի այս քաջարի գործը հայտնի է դառնում ամբողջ աշխարհում, և՛ նրա կենդանության, և՛ նրա մահվանից հետո երկար ժամանակ թշնամիներ չեն երևում, և իսրայելացիները հանգիստ ապրում են:

Հարց ՁԵ: **Ո՞վ էր Եսթերը:**

Պատասխան: Բենիամինի ցեղից առաքինի մի աղջիկ էր, որը, որբ մնալով, հորեղբոր՝ Մուրթքեի խնամակալության ներքո էր կրթվում և բոլոր առումներով Աստծուն հնազանդ էր[303]: Սակայն երբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքան Երուսաղեմ է արշավում, Հեքոնիա թագավորի և ժողովրդի հետ Մուրթքեն և Եսթերն էլ են գերեվարվում Պարսկաստանի Սուսիա քաղաք (տե՛ս ՀԹ հարցը):

Մուրթքեն երազում, աղմուկի և ժխորի ձայներ լսելով, տեսնում է, որ երկու մեծ վիշապ միմյանց դեմ են պատերազմում, նրանց ձայնից բոլոր ազգերը միավորվում են մի արդար ժողովրդի կորստյան մատնելու համար, և հիշյալ ժողովուրդը, իր առջև ծառացող վտանգը գուշակելով, աղոթում է Աստծուն և օգնություն խնդրում: Եվ ահա մի փոքր աղբյուրից մի մեծ գետ է առաջանում, և արեգակն էլ ծագելով խոնարհները և ամոթխածները զորանում են, և հզորներին ու ազդեցիկներին կլանում:

---

[303] Նա դաստիարակել էր մի մանկան՝ իր հորեղբայր Ամինադաբի դստերը, որի անունը Եսթեր էր: Նրան վերցնելով իր հորից ու մորից՝ Մուրթքեն ուզում էր իրեն կնության առնել (*Եսթ. 2:7*):

Այսպիսի մի երազով Աստված Մուրթքեին հայտնում է, որ Իսրայելի ժողովուրդը մեծ նեղության և վտանգի պետք է ենթարկվի, ապա պիտի ազատի նրանց, որպեսզի իսրայելացիների հանդեպ Աստծու բարությունը հայտնի դառնալով՝ վտանգի կամ նեղության ժամանակ առանց հուսահատվելու բոլորն էլ ուղիղ սրտով միշտ աղոթեն՝ Աստծու ողորմությամբ ազատվելու: Մուրթքեն հենց այսպես էլ մեկնում է իր երազը, երբ իրապես տեղի են ունենում դեպքերը[304]:

Քանի որ պարսիկների և մարերի Արտաշես թագավորը (ոմանց կարծիքով սա ոչ թե Արտաշես Երկայնաբազուկն է, այլ Արտաշես Ուժեղը), որն այն ժամանակ այնքան էր հզորացել, որ մինչև Հնդկաստան հարյուր քսան ազգերի էր գերել և իր մայրաքաղաքն էլ տեղափոխել Սուսիս: Սույն թագավորը, անչափ հարստության և գանձերի տիրանալով, ցանկանում է իր փառքն ու շքեղությունը ցուցադրել իր բոլոր հպատակներին և մասնավորաբար նախարարներին և մեծամեծ իշխաններին: Այս է պատճառը. որ իր իշխանությանը ենթակա և իրեն ծառայող դատավորներին և կառավարիչ իշխանավորներին մի մեծ խնջույքի է հրավիրում, որի նմանը մինչ այդ ոչ մեկը չէր տեսել, և որը վեց ամիս է տևում:

Մանավանդ խնջույքի սրահը զարդարում է ոսկով, արծաթով, մարգարիտով և այլ թանկարժեք գոհարներով: Նմանապես Սուսիս քաղաքի բոլոր բնակիչներին՝ մեծից փոքր, հրավիրում է իր խնջույքին, որ վեց օր է տևևում, նույն ձևով էլ նրա թագուհին՝ Ասթինեն, կանանց է հրավիրում խնջույքի: Յոթերորդ օրը, երբ Արտաշեսը քիչ ավելի էր արբած, Ասթինե թագուհուն լուր է ուղարկում, որ անձամբ ներկայանա խնջույքին,

---

[304] «Աստծուց եղավ այս բանը»՝ հիշելով այս դեպքերի մասին իր տեսած երազը, քանի որ դրանից մի բան անգամ զանց չեղավ (*Եսթ. 10:5*):

քանի որ թագուհին անչափ գեղեցիկ էր, և ցանկանում է նրան բազմությանը ցուցադրել, իբր թե իրեն է՛լ ավելի փառք ու պարծանք լինի, սակայն թագուհին, չհավանելով սույն անպատշաճ հրավերը, մերժում է ամուսնու հրավերը:

Իրոք, Արտաշեսի այս հրամանը անպատշաճ էր, սակայն մարդը հարբած ժամանակ անկարող է իրեն պատշաճ պահելու, ուստի երբ Ասթինեն չի գալիս, բարկանում է և տրտմում: Դու աշխարհիկ և մարմնավոր ուրախության վախճա՛նը տես. որովհետև թագավորի խնջույքը, որի ընթացքում այդքան փառք ու շքեղություն է ցուցադրվում, տխուր վերջաբան է ունենում, քանի որ բազմությունը ցրվելուց անմիջապես հետո Արտաշեսն իր նախարարների առաջարկում է դատաստան անել, թե Ասթինե թագուհու՝ իր թագավոր ամուսնու հանդեպ ցույց տված այդ անհնազանդության փոխարեն ինչ է անհրաժեշտ անել, և նրանք պատասխանում են, որ եթե թագուհին անպատիժ մնա, բոլոր կանայք, հետևելով նրա օրինակին, այսուհետև կհանդգնեն իրենց տղամարդկանց չհնազանդվել:

Ուստի այնժամ Արտաշես թագավորը Ասթինե թագուհուն տիկնությունից զրկելուց հետո ամենուրեք հրահանգում է, որ այսուհետև բոլոր կանայք անպատճառ հնազանդ լինեն իրենց ամուսիններին: Ապա նորից նույն նախարարների խորհրդով հրամայում է գեղեցիկ աղջիկների հավաքել, որպեսզի նրանց միջից ում հավանի, Ասթինեի փոխարեն թագուհի կարգի: Աստծու տնօրինությամբ վերոհիշյալ Եսթերն էլ, որ Մուրթքեի մոտ էր բնակվում, ընդգրկվում է ընտրված աղջիկների մեջ. ըստ սովորության՝ տեղ և պաշտոնյա են հատկացնում, որ մեկ տարվա ընթացքում անհրաժեշտ կրթությունն էլ տրվի:

Դարձալ Աստծու ողորմածությամբ Եսթերը, կատարելությամբ և գեղեցկությամբ գերազանցելով մյուս աղջիկներին, բոլորի համար պատվելի և ընդունելի լինելուց բացի,

Արտաշեսին էլ է դուր գալիս, և կնության առնելով՝ թագուհի է հռչակում նրան: Արդարև, այս առիթով թագավորն այնպես է ուրախանում, որ իր բոլոր պալատականներին և զինվորներին հրավիրելով, յոթ օր մեծ ցնծությամբ հարսանիք անելուց բացի, բոլոր հպատակների ուրախության համար հրամայում է թեթևացնել բարձր հարկերը:

Նկատի՛ր. Եսթերը՝ որբ և գերի աղջիկ, թեև թագուհի է դառնում, սակայն իր առաքինի վարքը չի փոխում և նախկինի նման խոնարհությամբ միշտ հնազանդ է լինում Աստծու օրենքներին, միայն թագավորին չի հայտնում, որ ինքն իսրայելացի է և Մուրթքեի ազգականը, ինչպես որ վերջինս խորհուրդ էր տվել: Մուրթքեն էլ նրա մասին տեղեկություն իմանալու համար հաճախակի պալատ է գալիս, թագուհուն հավատարիմ և մտերիմ Առնաթև անունով մեկից միշտ տեղեկություններ իմանալով և իր վիճակն էլ հայտնելով՝ բոլոր առումներով հանգիստ են լինում:

Այդ ընթացքում արքունի պալատական պահապաններից երկուսը, որոնց անուններն էին Դավիթ և Թարրա, Արտաշես թագավորի հանդեպ ոխակալություն ունենալով, սպանելու մտադրությամբ համաձայնության են գալիս: Մուրթքեն, մի հնարով նրանց մտադրությունն իմանալով, Եսթերի միջոցով տեղեկացնում է թագավորին, որն էլ քննելուց և նրանց խոստովանությունը լսելուց հետո կախել է տալիս նրանց: Այսպիսով, Մուրթքեի հավատարմությունը պարզ դառնալով՝ արքունական մատյանում արձանագրում են, որպեսզի նրա լավությունը անմոռաց մնա:

Արտաշեսը Համան անունով մի նախարար է ունենում, որն ամաղեկացի էր, և արքունի պալատականների և նախարարների մեջ շատ նշանավոր լինելով՝ թագավորը նրա փառքն ու պատիվը բարձրացնելու համար հրամայում է, որ նրա բոլոր

հպատակները նրա առջև հարգանքով խոնարհվեն և երկրպագեն, սակայն Մուրթքեն չի երկրպագում, քանի որ սովոր էր միայն Աստծուն երկրպագելու. միևնույն պատիվը մարդկանց տալ, իրավացիորեն, անպատշաճ և մեղք էր համարում:

Սակայն Համանը, անչափ հպարտ և ինքնահավան անձ լինելով, մեծապես բարկանում է, և Մուրթքեի պատճառով որոշում, որ Արտաշեսին ենթակա բոլոր հրեաներին կոտորի և նրանց ունեցվածքն էլ արքունի գանձարան վերցնի: Եվ քանի որ թագավորը, Համանին վստահելով, անձնատուր էր եղել նրան, ուստի հրեաների մասին նրա բոլոր չարախոսություններին հավատալով՝ հրամայում է, նրա կամքի համաձայն, բոլոր իսրայելացիներին կոտորել: Թեև Համանի խոստացած տասը հազար քսակ դրամը մերժվում է, սակայն հրովարտակով որոշված օրը բոլոր հրեաներին՝ տղամարդ, կին և մանուկ, բոլորն էլ կոտորվում են, նրանց ունեցվածքն էլ գրավվում:

Արդարև, հիշյալ հրամանը, որ ուղղված էր գավառապետերին, ամեն կողմ տարածվելով, բոլորին հայտնի է դառնում, և որոշված օրվան են սպասում՝ հրամանը կատարելու: Ամենուր լսվում են հրեա ժողովրդի ողբալի աղաղակներն ու հառաչանքները, որոնք, երկինք բարձրանալով, հասնում են Աստծուն՝ շարժելով Նրա գութն ու ողորմությունը: Քանի որ այս պարագայում նրանք, հանցավոր չլինելով, հանիրավի այսպիսի բարբարոս հրաման և իրենց կոտորածի վճիռը լսելուն պես, զգեստները պատռելով և քուրձեր հագնելով, իրենց գլխին մոխիր լցնելով, սուգ են անում:

Նույն ձևով էլ Սուսիս քաղաքում հրովարտակը կարդալուց հետո Մուրթքեն, հանդերձը պատռելով, քուրձ է հագնում և գլխին մոխիր ցանելով՝ քաղաքում բարձրաձայն աղաղակում է. «Ինչո՞ւ եք անիրավացիորեն ցանկանում կոտորել իմ ազգը, որը ընդհանրապես հանցանք չունի»: Այսպիսի սգավորի

հանդերձանքով և մեծ տրտմությամբ արքունական պալատի դրսի կողմում, կանանց դռան մոտ է քայլում, որպեսզի իր ողբն ու հեծեծանքը լսողները թագուհուն տեղեկացնեն, քանի որ թագավորական պալատ սգազգեստ մտնելը սովորություն չէր:

Արդարև, Եսթերն իմանում է Մուրթքեի տրտմաթախիծ վիճակի մասին և շատ է տխրում, ուստի վերոհիշյալ Առնաթևին ուղարկում է, որ եղելությունը ստույգ հասկանա, միևնույն ժամանակ հագուստներ էլ է ուղարկում, որպեսզի սգավորի հագուստներով չշրջի, սակայն Մուրթքեն չի համաձայնում: Ապա մեկ առ մեկ բացատրելով Համանի չար մտքերն ու նպատակը՝ հրովարտակի օրինակն էլ է տալիս, որ տա Եսթերին, և պատվիրում է, որ բարեխոս լինի իր ազգի փրկության համար և մանավանդ աղոթքով Աստծուն աղաչի:

Երբ Առնաթևը Մուրթքեի խնդրանքն ու պատվերը և բոլոր խոսքերը հայտնում է Եսթերին, նա ցանկանում է ամեն զնով ազատել իր ժողովրդին: Սակայն օրենք կար, որ եթե այր կամ կին առանց հրաման ստանալու թագավորի սենյակ մտնեն, մահվան պիտի ենթարկվեն, և միայն այն մարդն էր փրկվում, որին թագավորը պարզում էր իր ոսկյա գավազանը: Եսթերը, երեսուն օր շարունակ թագավորի մոտ կանչված չլինելով, երկյուղում է գնալ, և այս երկյուղի մասին հայտնում է Մուրթքեին: Մուրթքեն պատասխանում է. «Միայն քո փրկության մասին մի՛ մտածիր, այլ մանավանդ ազգիդ ազատության մասի՛ն խորհիր. գուցե Աստված այսօրվա համար է քեզ թագուհի դարձրել»:

Երբ Եսթերը սույն պատասխանն է ստանում, լուր է ուղարկում, որ ժողովրդին պատվիրի՝ երեք օր ու գիշեր ծոմապահությամբ Աստծուն աղոթք-աղաչանքներ մատուցեն: Ինքն էլ իր նաժիշտի հետ ծոմապահությամբ Աստծու օգնությունը աղաչելուց հետո խոստանում է ներկայանալ թագավորին:

Հիրավի, Մուրթքեի պատվերի համաձայն՝ Սուսիս քաղաքի բոլոր հրեաները ծոմապահությամբ աղաչում են Աստծուն, սակայն թագուհին էլ, իր հերթին աղոթքի կանգնելով, խոստովանում է մինչ այդ օրերը Աստծու՝ իսրայելացիների հանդեպ կատարած բարությունները և ողորմությունը, մանավանդ որ միայն Նա է ամենակալ, և բոլորը Նրա հրամաններին են սպասում, ամեն ինչ հայտնի է Նրան, և ոչ մեկը չի կարող Նրա հրամաններին ընդդիմանալ. այս ամենը մեկ առ մեկ խոստովանելով՝ սրտահույզ հառաչանքներով աղոթում և խնդրում է Աստծուն, որ ժողովրդի հանցանքները ներելով՝ ազատի թշնամուց և նրանց տրտմությունը ուրախության վերածի:

Հետո Եսթերը, հանդերձը հանելով, քուրձ է հագնում և գլխին մոխիր և աղբ ցանելով՝ դարձյալ արտասուքներով և թախանձագին պաղատանքներով Աստծու օգնությունն է հայցում, և շատ ու շատ է աղերսում, որ չխնայի Իր ողորմությունը և փրկի Իր ժողովրդին ներկա տագնապալից և անհուսալի վիճակից, ինչպես մանրամասնորեն պարզաբանված է Սուրբ գրքում:

Երրորդ օրը թագուհու զգեստները հագնելով և բոլոր զարդարանքները դնելով՝ անասելի շքեղ տեսք է ստանում և Աստծու ողորմությանն ապավինելով՝ երկու աղախիններ-ի հետ շարժվում է թագավորական պալատ: Նաժիշտներից մեկը նրա զգեստների քղանցքն էր բռնել, իսկ մյուսի ձեռքին ինքը՝ թագուհին էր հենվել: Եվ քանի որ գործող օրենքի հակառակ է գնում թագավորի մոտ, այնտեղ հասնելուն պես երկյուղից սփրթնում է, և աղախնին հենվելով՝ոտքի վրա մնալու ուժը նվազում:

Թագավորը նրան տեսնելուն պես թեև մի բարկացկոտ շարժում է անում, սակայն Աստված իսկույն սանձահարում է

նրա բարկությունը[305], թագավորը, հեզությամբ իջնելով աթոռից, բռնում է նրան, որ վայր չընկնի: Ապա թագավորը սկսում է աղաչանքներով և հուսադրող խոսքերով խոսել և մխիթարել նրան՝ ասելով. «Ի՞նչ եղավ քեզ, Եսթե՛ր, ես քո եղբայրն եմ, համարձա՛կ եղիր, չես մահանա, քանի որ երկուսիս հրամանն էլ մեկ է», և ոսկե գավազանը պարզելով՝ համբուրում է նրան:

Այն ժամանակ Եսթերը, մի քիչ ուշքի գալով, ասում է. «Քեզ Աստծու հրեշտակի նմանեցնելով՝ վախեցա», և նորից ընկնում է: Թագավորը, նորից աղաչելով, ասում է. «Ասա՛, Եսթե՛ր, ի՞նչ ես խնդրում, մինչև իսկ թագավորությանս կեսը կտամ քեզ», և կրկնում է: Նույն պահին Արտաշեսի պալատականներն էլ են ներս գալիս, և նրանք էլ են խնդրում՝ ասելով. «Խոսի՛ր, մի՛ վախեցիր»: Եսթերը պատասխանում է. «Այսօր ինձ համար նշանավոր օր է, եթե իմ թագավոր տիրոջը հաճելի է, այսօր թող Համանի հետ միասին հրավերս ընդունի»: Թագավորը, իսկույն կանչելով Համանին, խնջույքի է գնում: Ուտել–խմելուց հետո Արտաշեսը թագուհուն ասում է. «Խնդրի՛ր, ինչ որ ուզում ես»: Թագուհին դարձյալ աղաչում է, որ հաջորդ օրը նորից Համանի հետ իրեն պատիվ անի և գա հյուրասիրության:

Դու Համանի չարությո՛ւնը տես. նա, ով արդեն իսկ հպարտ էր, այժմ առավել ևս հպարտացած, թագուհու խնջույքից դուրս գալով, Մուրթքեին տեսնելուն պես չափազանց զայրանում է: Տուն գնալով՝ կանչում է կնոջն ու սիրելիներին և նրանց պատմում, որ թագուհու հյուրասիրությունից է վերադառնում, և որ մանավանդ վաղն էլ է հրավիրված, և թագուհին, իրենից և թագավորից բացի, ոչ մեկին չի կանչել, և սնափառությամբ ինքն իրեն գովելուց հետո ավելացնում է. «Այս

[305] Աստված թագավորի հոգին շրջեց դեպի հեզություն (*Եսթ. 15:14*):

բոլոր պատիվները ինձ հաճելի չեն, քանզի Մուրթքեին եմ միշտ տեսնում պալատում»:

Ներկաները, նրա զայրույթը ավելի ևս գրգռելով, ասում են. «Հրամայի՛ր, որ հիսուն կանգուն երկարությամբ մի կախաղան պատրաստեն և վաղը թագավորից խնդրի՛ր, որ Մուրթքեն կախվի այդ փայտից, և դու էլ գնա խնջույքին և ուրախացի՛ր»: Արդարև, այս առաջարկը Համանին հաճելի է թվում և ըստ այդմ իսկույն պատրաստել է տալիս: Սակայն դու Աստծու արդարությո՛ւնը տես. Համանն անօրինաբար է հաջորդ օրը Մուրթքեին կախաղան հանելու ցանկություն ունենում, Աստծու դատաստանով և վճռով Մուրթքեն ազատվելով՝ հենց ինքը՝ Համանն է այդ նույն կաղախանից կախվում: Աստվածային կարգադրությամբ հենց այդ գիշեր թագավորի քունը փախչում է, և ժամանակ անցկացնելու համար ատենադպրին կարդալ է տալիս արքունական արձանագրությունների մատյանը: Ատենադպիրը զուգադիպությամբ կարդում է այն հատվածը, որում Մուրթքեի հավատարմության և նրա կյանքի դեմ դավադրության մասին էր գրված, ինչպես վերը հիշատակվել է:

Այն ժամանակ թագավորը հարցնում է. «Մենք Մուրթքեին ի՞նչ բարիք արեցինք՝ իր հավատարմության փոխարեն», ներկա ծառաները պատասխանում են. «Նրա հավատարմությունը քեզ հայտնի դարձավ, սակայն դեռևս բարիք չես արել նրան»: Արտաշեսը մտադրվում է Մուրթքեին դիրքի կամ պատվի արժանացնել, սակայն դրա վերաբերյալ ցանկանում է իր խորհրդական նախարարներից էլ խորհուրդ հարցնել, որպեսզի ըստ արժանվույն փառավորի նրան:

Երբ առավոտ կանուխ Համանը արքունիք է գալիս, որպեսզի Մուրթքեին կախաղան հանելու հրաման ստանա, թագավորը, տեղեկանալով նրա գալստյան մասին, կանչել է տալիս և հարցնում. «Ի՞նչ պետք է անել այն մարդուն, որին ցանկանում

եմ մեծարել»: Համանը, որ շատ հպարտ էր և բոլոր պալատականներից ավելի պատիվ ուներ, կարծելով, որ խոսքն իրեն է վերաբերում, շտապում է պատասխանելու. «Այն մարդուն, որին թագավորը ցանկանում է փառավորել, պետք է թագավորի զգեստ հագցնել և բազմեցնել թագավորի նժույգին, մի մեծ նախարար էլ, սանձից բռնած, պիտի քայլի քաղաքով, և միևնույն ժամանակ մունետիկը ձայնի. «Թագավորն այսպես է փառավորում այն անձնավորությանը, որին սիրում է»»: Արտաշեսն այդ առաջարկը լսելուն պես պատասխանում է. «Լա՛վ ասացիր, գնա՛ և ինչպես ասացիր, այդպես էլ արա՛ իմ հավատարիմ ծառա հրեա Մուրթքեին»:

Այստեղ կարելի է պատկերացնել Համանի թշվառ վիճակը. նա, ով Մուրթքեի մահն էր տենչում, ստիպված է լինում ժամանակավորապես ձիապանի նման նրա առջևով գնալու, քանի որ խոսքը հետ վերցնել չկարողանալով՝ կամա թե ակամա հանձն է առնում Մուրթքեի առջևից գնալ և մեծ փառքով քաղաքում շրջեցնելուց հետո պարտավոր է լինում նորից արքունիք բերել և ձիուց իջեցնել ու կոտրված սրտով և թախծոտ հոգով տուն վերադառնալ: Երբ տխուր դեպքը պատմում է կնոջն ու սիրելիներին, նրանք, որ նախապես տրամադրել էին Համանին, որ Մուրթքեին կախաղան հանի, այս անգամ ասում են. «Քանի որ Մուրթքեն այսպիսի աստիճանի և պատվի հասավ, պետք է հնազանդվես նրան, քանի որ Աստված նրա հետ է»: Մինչ նրանք խոսում էին, թագավորի կողմից երկու մարդ է գալիս՝ նրան թագուհու ընթրիքին կանչելու: Թեև Մուրթքեի փառավորվելու համար Համանի սիրտը կոտրված էր, բայց և այնպես թագավորի հետ միայնակ Եսթերի հրավերքին ներկա լինելը մի փոքր մխիթարում է նրան:

Ուստի փութաջանորեն շտապում է՝ ուրախ դեմքով ներկայանալու թագավորին, և երբ հյուրասիրության ժամանակ

ուտում, խմում և զվարթանում են, թագավորը կրկին ու կրկին Եսթերին առաջարկում է խնդրել, ինչ ցանկանա: Այն ժամանակ թագուհին սրտառուչ եղանակով պատասխանում է. «Եթե Ձերդ ողորմածությունը կկամենա, ազատի՛ր ինձ և իմ ազգին»: Այո՛, մինչ այժմ չէր հայտնել, որ ինքը հրեա է, սակայն այժմ հարկադրված խոստովանում է:

Քանի որ հրեաները մահվան էին դատապարտվել, ուստի ինքն էլ ցանկանում է հասկացնել, որ ինքն էլ, նույն ցեղից լինելով, մահվան է պարտական, որպեսզի իր պատճառով ազգին էլ ազատագրի: Երբ թագավորը, այդ խոսքերից զարմացած, հարցնում է. «Ո՞վ է, որ մի այդպիսի բան է հանդգնել անելու»: Եսթերը Համանի երեսին ասում է. «Ահա այս թշնամին և այս չար Համանն է հանդգնել խորհելու»: Թագավորը, իսկույն փոխելով դեմքի արտահայտությունը, մի զայրալից ակնարկ ուղղելով Համանին, դուրս է գալիս խնջույքից. մերձակայքում մի ծաղկած բուրաստան է լինում, և նա շտապում է՝ այնտեղ մտնելու և սրտի բարկությունը մեղմելու:

Երբ թշվառ Համանը, թագուհու ոտքերն ընկած, իր ազատություն էր խնդրում, թագավորը նորից ներս է մտնում և, Համանին Եսթերի մոտ տեսնելով, բարկությամբ գոչում է. «Այնքան ես առաջ գնացել, որ իմ կնոջ վրա էլ ես համարձակվում բռնանալ»: Համանը, թագավորի ահեղ բարկությունից շվարելով և ոտքի վրա մնալու կարողությունը կորցնելով, անմիջապես ընկնում է երեսնիվայր: Այն ժամանակ թագավորի սպասավորներից մեկն ասում է. «Համանը հիսում կանգուն երկարությամբ մի փայտ է տնկել իր այգում, որպեսզի թագավորի հրամանով Մուրթքեին այդտեղից կախել տա»:

Արտաշես թագավորը սույն խոսքերը լսելուն պես հրամայում է, որ Համանին իսկույն կախեն, և իսկույն կախում են նույն այն փայտից, որը պատրաստել էր Մուրթքեի համար:

Ահա այսպես է վերջանում նախանձ մարդու կյանքը, ինչպես գրված է. «Ոսկի տառերով թող ամեն ոք գրի սա. ամեն ոք ինքն է ընկնում, եթե այլոց համար է փոս փորում»:

Երբ ամբարտավան և անգութ Համանը ոչնչանում է, թագավորի բարկությունն անցնելով՝ Համանի ողջ ունեցվածքը Եսթերին է պարգևում, մանավանդ իմանալով, որ Մուրթքեն Եսթերի ազգականն է, թագավորական կնիքը նրան է հանձնում, ինչպես նախկինում Համանին էր հանձնել: Եսթերն էլ իր ունեցվածքի վերակացու նրան է կարգում և Համանի ունեցվածքի եկամուտների կառավարումն էլ նրան հանձնում:

Հետո հրեաների ազատության համար Եսթերը նորից է խնդրում արքային, որը հրամայում է, որ Եսթերն ու Մուրթքեն ինչ հրաման ցանկանում են, արձակեն: Արդարև, նրանց խնդրանքի համաձայն, բոլոր գավառների կառավարիչներին հրամաններ են ուղարկվում՝ հետևյալ բովանդակությամբ. «Հրեա ժողովրդին պատժելու համար սրանից առաջ գրված հրամանը ջնջված է. այսուհետև ոչ մեկը նրանց չվնասի և նրանց ունեցվածքին չմոտենա. նրանք ամեն ինչով ազատ պիտի լինեն, ընդհակառակը, նրանց թշնամիները թող ոչնչանան Համանի նման, որն անհավատարիմ էր թագավորին և հրեաներին էլ թշնամի էր. նա մեր հրամանով կորավ, և Եսթեր թագուհու և Մուրթքեի հավատարմությունն էլ հայտնի դարձավ»: Սույն հրամանը Սուսիս քաղաքում էլ կարդացվելով՝ հրեաները, հրովարտակի համաձայն, կոտորում են իրենց թշնամիներին, որոնց մեջ էին նաև Համանի բոլոր որդիներին:

Ուշադրությո՛ւն դարձրու. իսրայելացիները նախապես ինչքան տրտմում են, սակայն այս անգամ ստույգ մահվանից և բոլոր վտանգներից ազատվելով՝ է՛լ ավելի են ուրախանում և Աստծու մարդասիրությունը չմոռանալու համար իրենց ազատվելու օրը ամեն տարի տոնում են մինչև այսօր: Ահա

այսպես կատարվում է Մուրթքեի երազը, որովհետև վերոհիշյալ երկու վիշապները խորհրդանշում էին Համանին և Մուրթքեին, փոքրիկ աղբյուրը Եսթերն էր, քանի որ նա, գերի աղջիկ լինելով, թագավորի կին և թագուհի է դառնում, մի մեծ գետի նման մեծ զորություն ձեռք բերելով՝ նրա միջոցով հրեաները հաղթում են իրենց ոխերիմ թշնամուն:

Արդ. մինչ այժմ պատմածներից պարզ է դառնում, որ Եսթերը, Մուրթքեն և բոլոր հրեաները, Աստծու ողորմությունը հուսալով, սուգ պահելով և ծոմապահությամբ քուրձ հագնելով և սրտագին հառաչանքներով և արտասվալից աղոթելով, ոչ միայն մահվանից են ազատվում են, այլև մեծ պատիվ և փառք են ձեռք բերում:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐ

Հարց Ա: **Հինգերորդ դարն ինչո՞վ է տարբերվում չորրորդից:**

Պատասխան: Հուդայի ցեղից թագավորության վերանալով, ժողովրդի՝ Բաբելոն գերեվարվելով և մանավանդ, մարդկությանը մեղքից փրկելու համար Մեսիայի աշխարհ գալու ժամանակների և հանգամանքների հայտնությամբ: Թեև Երեմիա մարգարեն նախապես հայտնել էր, որ ժողովուրդը պիտի գերեվարվի և յոթանասուն տարի մնա Բաբելոնում, ապա ազատվի[306], սակայն Դանիել մարգարեն էլ, որը ժողովրդի հետ գերի էր Բաբելոնում, ժողովրդի փրկության, Երուսաղեմն ազատագրելու և տաճարը վերաշինելու համար միշտ աղոթում էր Աստծուն: Սրա մասին ոչ միայն Դանիելը, այլև Իսրայելի ժողովրդի իշխան Միքայել հրեշտակապետն էլ, ինչպես Զաքարիա մարգարեն է գրում, յոթանասուն տարի հետո խնդրում են Աստծուն, որ գթա Երուսաղեմի և Հուդայի քաղաքները[307]: Ճիշտ է՝ Աստված հավատարիմ է իր խոստմանը, որով որոշված ժամանակը լրանալուց հետո ժողովուրդը պետք է ազատվեր գերությունից, սակայն աստվածային խոստումն իրականանալու համար մարդիկ պարտավոր են կատարյալ հավատով խնդրել և աղոթել (տե՛ս Երրորդ դար, Ի հարցը), ուստի երբ յոթանասուն տարին լրանում է, Դանիելը ծոմապահությամբ քուրձ է հագնում և սրտաբուխ հառաչաքներով անընդհատ աղոթում՝ հայցելով Աստծու գթությունը:

Աստծու հրամանով նրա մոտ է ուղարկվում Գաբրիել հրեշտակապետը՝ հայտնելու, որ ժողովուրդը ոչ միայն Բաբելոնի

---

306 Այդ ողջ երկիրը կվերածվի ավերի ու ապականության, նրա բնակիչները յոթանասուն տարի կծառայեն այդ ցեղերին և բաբելացիների արքային (*Երեմ. 25:11*):

307 Պատասխանեց Հրեշտակը և ասաց. «Տե՛ր Ամենակալ, մինչև ե՞րբ չես ողորմելու Երուսաղեմին…. որոնց այս յոթանասուն տարի է, ինչ անտես ես արել» (*Զաք. 1:12*):

մարմնավոր գերությունից պիտի ազատագրվի, այլև 490 տարի հետո Մեսիան պիտի ծնվի և նրա մահվամբ մարդկային ազգի մեղքերին քավություն պիտի լինի, որպեսզի նրա գալստյան ժամանակ, հանգամանքները քննելով, մարդիկ հավատան նրան[308]:

Ճշմարիտ է, որ Դանիելը Աստծուց ժողովրդի մարմնավոր գերությունից ազատություն է խնդրում, սակայն Աստված մարգարեին հայտնում է, որ մարդկությունը նաև հոգևոր գերությունից էլ պիտի ազատվի, որպեսզի սրանով Էլ ավելի մխիթարի մարգարեին: Քանի որ նա փափագում էր, որ Մեսիան աշխարհ գա և մարդուն ազատի մեղքից, ինչպես որ նրա սրտի այս սուրբ ցանկության մասին հայտնում է հրեշտակը[309]: Հիրավի, Սուրբ գրվածքներից հայտնի է, որ Մեսիան հայր Աբրահամի ցեղից կամ սերնդից պիտի ծնվի[310], ծնվի Բեթղեհեմում[311], ապա Երուսաղեմ գալով[312]՝ այնտեղ մարդկության փրկության համար պիտի չարչարվի և մահանա[313], սակայն գալու ժամանակը չէր հայտնվել:

---

[308] Մեկ յոթանասունյոթնյակ է սահմանված քո ժողովրդի և սուրբ քաղաքի վրա, որպեսզի վերջ գտնեն մեղքերը…. և գա հավիտենական արդարությունը (*Դան. 9:24*):

[309] Քանի որ դու սիրելի մարդ ես (*Դան. 9:23*):

[310] Քո սերնդի շնորհիվ պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ազգեր (*Ծնող. 22:24*):

[311] «Եվ դու, Բեթղեհե՛մ, Եփրաթայի սակավամա՛րդ տուն, կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ, քեզնից պիտի ելնի ինձ համար Իսրայելի մի իշխան, և նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է» (*Միք. 5:2*):

[312] Ահա թե ինչ ազդարարեց Տերը մինչե երկրի ծագերը. «Ասացե՛ք Սիոնի դստերը. ահավասիկ գալիս է քո Փրկիչը, և իր վարձն իր հետ է, գործը՝ իր աչքի առաջ» (*Ես. 62:11*, *Զաք. 9:9*):

[313] Նա մեր մեղքերն էր վերցնում և մեզ համար չարչարվում, սակայն մենք նրա ցավերը, հարվածներն ու չարչարանքները համարեցինք իբրև Աստծուց եկած բան (*Ես. 53:4*):

Վերոհիշյալ 490 տարվա սկիզբը Կյուրոս թագավորի հրամանով հաշվվում է հրեաների գերությունից ազատվելու տարվանից:

Հարց Բ: **Բաբելոնյան գերության յոթանասունամյա ժամանակամիջոցում Հուդայի ժողովուրդն ինչպե՞ս է կառավարվում:**

Պատասխան: Աստվածային հատուկ ողորմությամբ բարվոք է կառավարվում, որովհետև Աստված կռապաշտների սրտերում գթություն և կարեկցություն է դնում[314], և նրանց վնաս կամ նեղություն չեն տալիս, ուստի կարողանում են բացահայտորեն օրենքը պահպանել, սակայն չեն կարողանում զոհեր մատուցել, որովհետև տաճարից բացի՝ այլ տեղ զոհ մատուցելն օրենքին հակառակ էր:

Մանավանդ դատավորն իրենց միջից էր ընտրվում, և իրենք քննելով ժողովրդի մեջ ծագած խնդիրները՝ իրենք էլ պատժում էին հանցավորներին, մինչև իսկ օրենքի համաձայն՝ մահապարտին քարկոծությամբ սպանելու արտոնություն ունեին: Սրանից բացի՝ Դանիելն ու նրա ընկերները՝ Ազարիան, Անանիան և Միսայելը (երեք մանուկներ), որոնք նախկինում՝ իրենց մանուկ տարիքում էին գերեվարվել, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորի առջև մեծ պատվի արժանանալով՝ իրենց ժողովրդին փառք և մեծ պարծանք են լինում:

Հիրավի, յոթանասուն տարվա ընթացքում Բաբելոնում Հուդայի ժողովրդի պատմությունը թագավորների պատմության գրքում չի գրվել, սակայն Դանիելի մարգարեությունների գրքում կարող ենք կարդալ, որոնց համառոտ

---

314 Նրանց գթության արժանացրեց իրենց բոլոր գերեվարողների դիմաց (*Սղ. 105:46*):

բովանդակությունը հարկ համարեցինք ներկայացնելու՝ ի գիտություն ընթերցողի:

13 Գլուխ

Հովակիմ անունով շատ հարուստ և պատվական մի մարդ է լինում Բաբելոնում, որն իր տան մոտ մի այգի է ունենում, որտեղ նրա կինը ժամանակ առ ժամանակ զբոսնում էր: Ժողովրդի ծերերը միշտ նրանց տուն էին գալիս, և նրանց միջից երկուսը (որոնք նույն տարի դատավոր էին կարգվել) հաճախ տեսնում էին Շուշանին, և թեև իրենց սրտերում չար ցանկության միտք էր ծնվել, սակայն ամաչում էին իրենց սրտերի գաղտնիքը միմյանց հայտնելուց, բայց և պատեհ առիթ էին որոնում՝ իրենց չար կամքը կատարելու:

Մի օր երկուսն էլ, Հովակիմի տանը լինելով, իբր թե ճաշելու նպատակով իրարից բաժանվում են և վերստին վերադառնում Հովակիմի տուն և երբ միմյանց հարցնում են անմիջապես վերադառնալու պատճառը, հարկադրված խոստովանում են, որ Շուշանի հանդեպ պիղծ ցանկությունն է իրենց վերադառնալու պատճառը: Թեև նրանք նախկինում միմյանցից գաղտնի էին պահում իրենց ցանկությունը, սակայն այս անգամ Շուշանին առանձին գտնելու և իրենց պիղծ ցանկությունը կատարելու գաղափարի շուրջը համաձայնության են գալիս և պատեհ առիթի սպասելու որոշում կայացնում:

Մի օր եղանակն անչափ տաք լինելով՝ Շուշանը, ըստ սովորության, երկու նաժիշտների հետ կեսօրին ավազանում զովանալու համար, պարտեզ է իջնում: Հիշյալ ծերունիները, մի հնարով այգի մտնելով, թաքնվում են: Ամոթխած Շուշանը աղախիններին ուղարկում է՝ օճառ բերելու և կողպելու այգու դարպասը: Երբ նրանց գնալուց հետո Շուշանը միայնակ է

մնում, ծերունիները, իսկույն հայտնվելով, իրենց չար ցանկությունը հայտնում են Շուշանին՝ ասելով. «Եթե մեր կամքը կատարես, լա՛վ, եթե ո՛չ, մենք վկայություն կտանք, որ այստեղ մի երիտասարդի հետ էիր, ուստի և նաժիշտներիդ հեռացրիր քեզնից»:

Եվ քանի որ Շուշանը խիստ պարկեշտ և աստվածավախ կին էր, բարձրաձայն աղաղակում է՝ ասելով. «Ամեն կերպ նեղված եմ, մահապարտ կլինեմ, եթե ձեր կամքը կատարեմ, եթե չկատարեմ, չեմ կարող ազատվել ձեր ձեռքից, ավելի լավ է մահանալ, քան Աստծու առջև մեղք գործել»[315]:

Շուշանի հետ ծերերն էլ են սկսում աղաղակել, և նրանցից մեկը գնում բացում է դարպասը: Երբ նրանց աղաղակներից նաժիշտները վերադառնում են, չար ծերունիները սուտ զրպարտում են Շուշանին: Մինչ այդ նրա մասին այդպիսի չարություն չէր լսվել, և նրանք մեծապես շփոթվում են: Հաջորդ օրը մարդիկ են հավաքվում, որպեսզի դատեն Շուշանին, որին իրենց մոտ են բերել տալիս, ու քանի որ շատ գեղեցիկ է լինում, դեմքը քողով ծածկում են: Անօրենները հրամայում են մի կողմ տանել քողը, որպեսզի նրա գեղեցկությունը դիտելով՝ հաճույք զգան:

Մի քիչ խորհի՛ր. Աստված երկրում դատավորներ է կարգում, որպեսզի ատյան հրավիրվի, և հանցավորներին արդարությամբ պատժելու համար արդար դատաստան լինի, և մյուսներն էլ խրատվելով իրենց չար ճանապարհից հետ դառնան: Սակայն սույն ատյանը հրավիրող դատավորները իրենք ինքնին հանցավոր էին և պատժի արժանի, բայց քանի

---

[315] Շուշանը հոգոց հանեց և ասաց. «Տագնապ է պատել ինձ չորս կողմից. եթե այդպես վարվեմ, այդ մահ է ինձ համար, իսկ եթե այդպես չանեմ, չեմ փրկվի ձեր ձեռքից: Բայց ավելի լավ է, որ ես այդպես չանեմ և չընկնեմ ձեր ձեռքը, քան թե մեղք գործեմ Տիրոջ առաջ» (*Դան. 13:22, 23*):

որ նրանց հանցավոր լինելը մինչ այժմ ոչ մեկին հայտնի չէր, և միայն Շուշանը գիտեր դա, ուստի նա էլ, որպես հանցագործ, պատժվում է: Այսպիսով, նա, հույսը բոլորովին կտրելով մարդկանցից, արտասվալից աչքերը երկինք է բարձրացնում, որպեսզի Աստված, նրան ողորմելով, դատի իր դատավորներին, քանի որ նա անկարող է ապացուցելու իր անմեղությունը:

Թեև Շուշանը, Աստծուն հուսալով, իր դատաստանը Աստծուն է հանձնում, սակայն հիշյալ ծերունիները, Աստծու երկյուղը իրենց սրտերից վանելով, իսկույն ոտքի են ելնում, նրա գլխավերևում կանգնելով՝ վկայում՝ ասելով. «Պարտեզում մեկի հետ սրա մեղանչելը տեսանք և չկարողացանք բռնել նրան, որովհետև մեզնից ավելի ուժեղ էր, և մեր հարցին, թե ով է, չպատասխանեց»: Ճիշտ է, նրանց ասածները սուտ էին, սակայն նրանք դատավոր լինելով՝ ներկաները հավատում են նրանց, և անմեղ կնոջը հանգիստ խղճով մահվան դատապարտում:

Այն ժամանակ Շուշանը նորից է աղաչում Աստծուն՝ ասելով. «Ո՛վ Տեր, Քեզ ամեն ինչ հայտնի է, գիտե՛ս, որ սրանք սուտ վկայություն են տալիս իմ դեմ, և այժմ պիտի մահանամ», այս խոսքերը բարձրաձայն հառաչանքով են արտասանվում, և Աստված լսում է նրա աղոթքը[316]: Որովհետև ժողովուրդը նրան տանում էր՝ մահապատիժն իրականացնելու, Դանիելը, որ այդ ժամանակ տասներկու տարեկան մանուկ էր (ինչպես ոմանք են կարծում), Աստծու ներգործող զորությամբ աղաղակում է. «Ես անպարտ եմ այս կնոջ արյան մեղքից»[317]:

---

[316] Շուշանը բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Ո՛վ դու հավիտենական, ծածկագե՛տ Աստված, որ գիտես ամեն ինչ՝ նախքան դրանց տեղի ունենալը: Դու գիտես, որ սուտ են վկայում իմ մասին» (*Դան. 13:42, 43*):

[317] Մինչ նրան տանում էին սպանելու, Աստված Սուրբ Հոգին արթնացրեց մի պատանու մեջ, որի անունն էր Դանիել: Սա բարձր

Ժողովուրդը լսում է Դանիելի աղաղակը, և շտապում է հարցնելու, թե ինչ է ցանկանում ասել, և նա պատասխանում է, «Այդքան անմի՞տ եք, որ առանց գործը քննելու Իսրայելի դստերը մահվան եք դատապարտում, վերադարձե՛ք դատաստանի ատյան, քանի որ նրանք սուտ վկայություն են տվել»: Ժողովուրդը, այսպիսի խոսքեր լսելով, հասկանում է, որ Աստված է նրան խոսեցնում, ուստի հետ դառնալով դատը Դանիելին են հանձնում, որն էլ անիրավ ծերերին, առանձին -առանձին կանչելով, սկսում է հարցաքննել, և նրանց վկայությունները միմյանց հակառակ լինելով՝ հաստատվում է, որ նրանք սուտ վկայություն են տվել: Ամբողջ ժողովուրդը փառք է տալիս Աստծուն, քանի որ Նրան հուսացողին ազատում է[318], և հիշյալ չար ծերերին, օրենքի համաձայն, սպանում են:

Այս դեպքում ոչ միայն Շուշանի հայրն ու մայրը, ամուսինը՝ Հովակիմը, և ազգականներն են ուրախանում, այլև ամբողջ ժողովուրդն է ցնծում և բերկրում, մանավանդ Դանիելն էլ ժողովրդի մեջ մեծ հարգանք և պատիվ է վաստակում:

Օրինա՛կ վերցրու և խրա՛տ ընդունիր. Շուշանը համաձայնում է մահանալ մարմնով, որպեսզի մեղանչելով չմեռնի հոգով: Նա, Աստծուն հուսալով, ազատվում է և փառավորվում, սակայն անգութ ծերունիները, հետևելով իրենց չար ցանկությանը, ստում են և ոչ միայն այս աշխարհում խայտառակ մահով են մահանում, այլև հանդերձյալ կյանքում դժոխքի՝ վերջ չունեցող տանջանքների արժանանում:

Ուրեմն, ո՛վ մարդ, մեծ ուշադրությա՛մբ երկյուղիր՝ չլինի թե մեղքի ցանկությունը տիրի սրտիդ, քանի որ չար գործերը,

---

ձայնով աղաղակեց և ասաց. «Ես անպարտ եմ դրա արյան մեղքից» (*Դան. 13:45,46*):

[318] Ամբողջ ժողովուրդը աղաղակեց բարձր ձայնով, օրհնեց Աստծուն, որ փրկում է իր վրա հույս դնողներին (*Դան. 13:60*):

միշտ իրար հաջորդելով, ի վերջո, մարդու կորստյան պատճառ են լինում: Օրինակ՝ վերոհիշյալ ծերունիները, որոնք հետամուտ են լինում իրենց չար կիրքը բավարարելուն, սակայն երբ տեսնում են, որ չեն կարող իրենց չար նպատակին հասնել, ձեռնամուխ են լինում է՛լ ավելի վատթար գործի՝ Շուշանին սպանելու չափ առաջ են գնում և, ի վերջո, իրենց մահվան պատճառ դառնում (հմմտ.՝ Չորրորդ դար, Լ հարցը):

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորը Երուսաղեմ արշավելու ժամանակ Հուդայի Հովակիմ թագավորին գերեվարում է Բաբելոն (տե՛ս Չորրորդ դար, ՀԹ հարցը), դրանից հետո գերեվարում է նաև Երուսաղեմի բնակիչներին. սրանց մեջ են լինում երեք մանուկները՝ Անանիան, Ազարիան և Միսայելը, ինչպես նաև Դանիելը: Ապա Հովակիմ թագավորը ազատվելով նորից վերադառնում է Երուսաղեմ, սակայն երեք մանուկները Դանիելի հետ, որպես պատանդ, մնում են Բաբելոնում: Նաբուգոդոնոսորը իր պալատի՝ Ասփանեզ անունով վերակացուին հրամայում է գերի մանուկների միջից ընտրել գեղեցիկ, ուշիմ, արթնամիտ և համարձակ պատանիների, որոնց, երեք տարի կրթելով, վարժեցնի, որպեսզի թագավորին ծառայեն, և իր սեղանից կերակուր և գինի տա նրանց: Ասփանեզը, ըստ արքունի հրամանի, այլ մանուկների հետ ընտրում է նաև Դանիելին, Անանիային, Ազարիային և Միսայելին, որոնք էլ սկսում են ուսումով և գիտություններով զբաղվել (համարվում է, որ այս պատանիները հազիվ քսան տարեկան են լինում): Նրանց անունները Ասփանեզը փոխում է. Դանիելի անունը Բաղդասար է դնում, Անանիային Սեդրակ է անվանում, Միսայելին՝ Միսաք, և Ազարիային՝ Աբեթնագով:

Դու այդ ընտրյալ մանուկների առաքինությո՛ւնը տես. հիրավի, նրանք գերի էին, սակայն իսրայելացիներին կռապաշտների կերակուրներից ուտել արգելված էր, և Դանիելը խընդրում է, որ իրենց միայն ընդեղեն ու ջուր տան: Ասփանեզը պատասխանում է, թե ինքը երկյուղ ունի, որ միգուցե այլ կերակուրներ ուտելով՝ նրանք դժգունեն, և ինքը թագավորի առջև մեղավոր լինի: Եվ որովհետև նա էլ իր կողմից Մաղասադ անունով մի պաշտոնյա էր կարգել պատանիների վրա, Դանիելը վերջինին առաջարկում է տասն օր փորձել իրենց:

Մաղասադն ընդունում է Դանիելի առաջարկը, և տասն օր միայն ընդեղեն (լոբի, սիսեռ և այլն) են ուտում. տասն օր հետո Աստծու ողորմությամբ նրանց տեսքը մյուս պատանիների տեսքից (որոնք օգտվում էին թագավորի սեղանից) ավելի կայտառ, գեղեցիկ և ուժեղ է լինում[319], ուստի հիշյալ պաշտոնյան թագավորի հատկացրած սնունդը ինքն է վերցնում և Դանիելի ցանկության համաձայն՝ նրանց ընդեղեն և պարզ ջուր էր տալիս:

Այս պարագայում Դանիելի և նրա ընկերների հավատքը պարզորեն հայտնի է դառնում, որովհետև թեև բավարարվում են միայն պահքի կերակուրներով և պարզ ջրով, սակայն Աստծու ողորմությամբ ոչ միայն նրանց մարմինները չեն տկարանում, այլև ուրիշներից առավել առաջադեմ են գտնվում ուսման և իմաստության մեջ:

Երբ որոշված ժամանակը վերջանում է, թագավորն այդ պատանիներին իր մոտ է կանչում. և հանդիսավոր

---

[319] Աստված այնպես արեց, որ Դանիելը գութ և շնորհ գտավ ներքինապետի մոտ…. անսաց նրանց ու փորձեց նրանց տասն օր: Երբ վերջացան տասը օրերը, նրանց դեմքերը նրան ավելի լավ երևացին, իսկ նրանք մարմնով ավելի հզոր, քան բոլոր այն մանուկները, որոնք ուտում էին թագավորի սեղանից (*Դան. 1:9,14,15*):

հարցաքննությամբ նրանք գիտությունների բոլոր ճյուղերի մեջ տասնապատիկ ավելի առաջադեմ են գտնվում, քան Բաբելոնի բոլոր իմաստունները[320], ուստի ընդունվում են թագավորին ծառայության և մնում արքունիքում: Թող Դանիելից և նրա ընկերներից օրինակ վերցնեն այն մարդիկ, որոնք իրենց իբր թե նեղություն չտալու համար, Սուրբ Եկեղեցու պատվիրաններին հակառակ, իրենք իրենց անխնա կերուխումի են տալիս՝ առանց նկատի ունենալու, որ մարդը միայն կերակուրով չի ապրում:

Արդարև, մարդն ինչքան կերակուրի, այսինքն՝ մարմնավոր սննդի կարիք ունի, սակայն ոչ թե համադամ կերակուրներով է սնվում և ապրում, այլ Աստծու զորությամբ և կամքով, քանի որ համադամ կերակուր ուտողներն էլ են մահանում, մանավանդ այդպես սնվող մարդիկ հենց այդ կերակուրների պատճառով անմտաբար բազմիցս զանազան հիվանդություններ են ունենում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Նաբուգոդոնոսոր թագավորը մի երազ է տեսնում և չի կարողանում մտապահել, երբ արթնանում է, կանչել է տալիս Բաբելոնի իմաստուններին և մոգության հմուտ մարդկանց և պահանջում, որ իր տեսած երազը և միաժամանակ բացատրությունը իրեն պատմեն: Նրանք անզոր են լինում դա անելու, քանի որ միայն Աստված կարող է հայտնել անիմանալին, ուստի թագավորին պատասխանում են, որ ինչ որ տեսել է,

---

[320] Եվ նրանք կանգնեցին թագավորի առաջ: Իմաստության ու գիտության այն բոլոր բաների մասին, որ թագավորը հարցնում էր նրանց, այդ բոլորի մեջ նրանց գտնում էր տասնապատիկ առավել, քան բոլոր գիտուններին ու մոգերին, որ նրա թագավորութեան մեջ էին (*Դան. 1:20*):

պատմի իրենց, իրենք էլ մեկնությունը կտան: Սակայն թագավորը պատասխանում է, որ մոռացել է և ավելացնում է. «Եթե երազս և դրա մեկնությունը ինձ հայտնեք, բազում ընծաների և պատիվների կարժանանաք, սակայն եթե չհայտնեք, դուք էլ կկորչեք, և ձեր տներն ու ունեցվածքներն էլ կկողոպվեն»:

Սակայն բոլոր իմաստունները և քաղդեացիները[321] պատասխանում են. «Արքա՛, մարդը չի կարող քո երազը հասկանալ. դա միայն Աստծուն է հայտնի», և թեև բազմիցս են կրկնում ու հայտնում, որ մարդկային կարողությունից վեր է այն, ինչ թագավորն է պահանջում, սակայն նա, չհամոզվելով և շատ զայրացած, հրամայում է, որ բոլորին կոտորեն: Երբ սկսում են մոգերին և գիտնականներին կոտորել, սկսում են փնտրել Դանիելին և նրա ընկերներին, որ որպես գիտունների՝ նրանց էլ սպանեն: Այս անարդար հրամանը կատարելու համար Արիովք անունով մի դահճապետ են նշանակում: Դանիելը, այդ մարդուց եղելությունը իմանալով, մեկ օր ժամանակ է խնդրում, որպեսզի թագավորին հայտնի և՛ երազը, և՛ մեկնությունը:

Երբ Դանիելը, տուն վերադառնալով, իրողությունը պատմում է Անանիային, Ազարիային և Միսայելին, Աստծուց միաձայն օգնություն են խնդրում, որպեսզի մարդիկ իզուր չկոտորվեն: Աստված, նրանց աղաչանքներն ընդունելով, նույն գիշերը Դանիելին հայտնում է թագավորի երազը և միաժամանակ նաև մեկնությունը: Այդ ժամանակ Դանիելն արթնանալով գոհություն և փառք է տալիս Աստծուն և օրհնաբանում Նրա սուրբ և փառավորյալ անունը[322]:

---

321 Ներկայիս Իրաքի բնիկ քրիստոնյաները:

322 Այն ժամանակ գաղտնիքը Դանիելին հայտնվեց գիշերային տեսիլքում: Դանիելը օրհնեց երկնքի Աստծուն և ասաց. «Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը հավիտյանս հավիտենից, որովհետև նրանն է իմաստությունը, հանճարը և զորությունը (*Դան. 2:19, 20*):

Առավոտյան Դանիելն ասում է Արիովք դահճապետին. «Իզուր մի՛ կոտորիր իմաստուններին, ինձ թագավորի մո՛տ տար»: Երբ թագավորին է ներկայանում, թագավորը հարցնում է, թե արդյոք կարող է պատմել իր տեսած երազը և դրա մեկնությունը: Դանիելը պատասխանում է. «Ո՛վ արքա, հարցդ իմաստունների գիտենալու բանը չէ, միայն Աստված կարող է այդ հայտնել: Դու, ո՛վ արքա, մահճումդ խորհում էիր, թե թագավորությունդ քեզնից հետո ինչ պիտի լինի, ուստի Աստված էլ քեզ հայտնեց, թե ինչ պիտի լինի հետո»: Սա ասելով՝ Դանիելը ստուգությամբ պատմում է և՛ երազը, և՛ մանավանդ դրա ստույգ մեկնությունը, որ հետևյալն է:

Նաբուգոդոնոսորը երազում մեծ և ահավոր մի պատկեր է տեսնում, որի գլուխը ամբողջությամբ ոսկուց էր, կուրծքը, բազուկներն ու ձեռքերը արծաթից, մեջքից մինչև ծնկները՝ արույրից, ծնկներից ներքև մինչև սրունքները՝ երկաթից, իսկ ոտքերի կեսը՝ երկաթից, կեսը կավից էր պատրաստված: Թագավորն այդ պատկերին էր նայում, և ահա լեռան բարձունքից առանց ձեռք դիպչելու ապառաժ քար է գլորվում և ոտքերին հարվածելով՝ իսկույն փշրում, և ապա առհասարակ կավը, երկաթը, արույրը, արծաթն ու ոսկին փշրվելով փոշիանում են, և սաստիկ քամուց քշվելով՝ հետքն էլ չի մնում: Այդ ապառաժն էլ, որ առանց ձեռք դիպչելու բարձունքից պոկվել և հարվածել էր արձանին, մի մեծ լեռ դառնալով՝ լցնում է ամբողջ աշխարհը[323]: Այսպիսով, երազը պատմելուց հետո Դանիելը նրա մեկնությունն էլ է տալիս՝ ասելով. «Դու ես արձանի գլուխը, որ թագավորների թագավորն ես, Աստված քեզ հզոր թագավորություն է տվել, որ բոլորին իշխես:

---

[323] Դանիելը պատասխանեց թագավորին և ասաց… «Դու, արքա՛, ահա թե ինչ էիր տեսնում. քո առաջ կանգնած էր մի արձան, մի վիթխարի արձան, և նրա կերպարանքն ու տեսքը ահավոր էր: Այդ արձանը շատ սարսափազդու էր» (*Դան. 2:27, 31*):

Քեզնից հետո եկող թագավորությունն արույրի նման ավելի նվաստ պիտի լինի, քան ոսկունն ու արծաթինը, չորրորդն ավելի նվաստ պիտի լինի, ինչպես երկաթը՝ արույրից, սակայն երկաթի նման ամուր պիտի լինի և բոլորին հաղթելով՝ պատժի նրանց: Ինչպես որ արձանի ոտքի կեսը՝ երկաթից, և մյուս կեսը կավից էր, նույնպես էլ չորրորդ թագավորության մի մասը՝ զորավոր, իսկ մյուս մասը տկար պիտի լինի, և ինչպես երկաթն ու կավն իրար չեն միանում, այդպես էլ այդ թագավորությունը, անմիաբանությամբ երկու մասի բաժանված, հետզհետե պիտի տկարանա, և նրանց օրոք Աստված երկնային թագավորություն պիտի հաստատի, որը հավիտենական լինելով երբեք չպիտի տկարանա. Նրա թագավորությունը, ոչ մի ազգի չպատկանելով, բոլորին պիտի հաղթի և հավիտյան մնա այն վեմի նման, որը, առանց ձեռք դիպչելու պոկվելով, կավը, երկաթը, արույրը, արծաթն ու ոսկին փշրեց և լեռ դառնալով՝ լցրեց ամբողջ տիեզերքը»:

Երբ Նաբուգոդոնոսորը լսում է այս խոսքերը, իր երազը հիշելով՝ հասկանում է, որ Դանիելի խոսքերը ճշմարիտ են, իսկույն գետնամած երկրպագում է Դանիելին և հրամայում՝ նրա առջև խունկ ծխեն և զոհաբերություններ անեն: Սակայն զոհ մատուցելը և խունկ ծխելը Աստծուն հատկացվող պատիվ լինելով՝ Դանիելն արգելում է, որովհետև նույն հարգանքը մարդկանց չի մատուցվում: Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը ասում է. «Ճշմարիտ է, որ ձեր Աստվածն է աստվածների Աստվածը, տերերի Տերը և թագավորների Թագավորը, որը հայտնում է գաղտնիքները, և դու կարողացար այս գաղտնիքը պարզել»[324]:

Արդարև, Նաբուգոդոնոսորը, հայտնապես խոստովանելով Իսրայելի Աստծու մեծությունը և զորությունը, այնքան է

[324] Թագավորն ասաց Դանիելին. «Արդարև, ձեր Աստվածը աստվածների Աստվածն է, տերերի Տերը և թագավորների Թագավորը, որ բացահայտում է գաղտնիքները» (*Դան. 2:47*):

ուրախանում, որ Դանիելին անչափ շատ և մեծամեծ պարգևներ տալով, նրան Բաբելոնի բոլոր նախարարների և իմաստունների վրա իշխանություն տալուց բացի, նրա խնդրանքով Սեդրակին, Միսաքին և Աբեթնագովին նույնպես պաշտոններ տալով Բաբելոնում՝ այս արժանավոր անձնավորություններին շքեղ փառքի և պատվի է արժանացնում:

Այստեղ լա՛վ մտապահիր, թե աստված ինչպես է փառավորում իրեն հավատարիմ ծառաներին: Այո՛, Դանիելն ու նրա ընկերները գերիներ էին, սակայն միշտ Աստծուն հնազանդ և ամեն ինչով Աստծու սուրբ օրենքների պահպանման նախանձախնդրություն ունենալով, թագավորի առջև մեծ հարգանք վայելելուց բացի՝ մեծամեծ պաշտոններ էլ են ստանում, քանի որ ոչ թե Նաբուգոդոնոսորն ինքնաբերաբար կամ բնականորեն է մոռանում երազը, այլ մի խորհրդավոր տնօրինությամբ է դա լինում, որպեսզի Դանիելը և նրա ընկերներն ավելի փառավորվեն, և մանավանդ Իսրայելի Աստծու մեծությունն ու զորությունը բոլորին հայտնի դառնան:

Վերոհիշյալ չորս թագավորությունները, որոնք նմանեցվել էին ոսկու, արծաթի, արույրի երկաթի և կավի, խորհրդանշում են հետևյալ երկրների թագավորություններ. առաջինը՝ Բաբելոնի, երկրորդը՝ Պարսկաստանի, երրորդը՝ Հունաստանի, չորրորդը՝ հռոմեացիների, և ապա Հիսուս Քրիստոսի և Սուրբ Եկեղեցու հոգևոր իշխանությունը, հավիտյան տիրելով, մշտապես իշխում է բոլոր թագավորություններին:

Արդարև, հիշյալ չորս թագավորությունները, իրար հաջորդելով, հետզհետե զորանում են, սակայն նույն ձևով էլ միմյանց հաղթելով՝ կործանվում, քանի որ պարսիկները ջնջում են Բաբելոնի թագավորությունը, հույները՝ կործանում են պարսկական հզոր տերությունը, հռոմեացիներն էլ՝ հույներինը, ապա աշխարհ է գալիս Հիսուս Մեսիան, քանի որ վերոհիշյալ

լեռը՝ Ս. Աստվածածնի, և ձեռք չդիպած քարը մեր Փրկչի օրինակներն են[325]:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Իրոք, ինչպես վերոհիշյալ պատմությունից է երևում, Նաբուգոդոնոսորի համար մեծ փառք է լինում այն, որ ինքը բոլոր թագավորներից հզոր և փառավոր լինելով՝ Դանիելը նրան ոսկյա գլխի է նմանեցնում: Սակայն երազում տեսածը միայն ոսկի չէր, այլ արծաթ, պղինձ, երկաթ և կավ, և մանավանդ լեռն ի վայր գլորվող վեմից ջախջախված և փշրված լինելով՝ հայտնի է դառնում, որ որոշ ժամանակ հետո իր թագավորությունն էլ պիտի վերանա: Սրանից բացի, Դանիելին պատվելով և նրան բոլոր նախարարների և պետության մեծամեծների իշխան կարգելով՝ ժողովրդից բամբասվում է, թե հրեաների կրոնն է ընդունել:

Այս է պատճառը, որ տեսած երազի և հրեաների կրոնին հակառակ՝ իր թագավորության տասնութերորդ տարում վաթսուն կանգուն երկարությամբ և վեց կանգուն լայնությամբ (= 27,36/2,4 մ), զուտ ոսկուց արձան է պատրաստել տալիս, կանգնեցնում է Բաբելոնի Դեերա դաշտում[326] և իր իշխանության ներքո զորավարներին, կուսակալներին և բոլոր իշխաններին և մեծամեծներին հրամայում է գալ և երկրպագել հիշյալ պատկերը: Այդ նույն վայրում նաև մի հնոց է

---

[325] Լեռից առանց ձեռք դիպչելու վեմը կտրվեց, Դանիելը գուշակեց քո անսերմ հղացումը երկնավոր հարս, մայր և ծնունդից հետո էլ կույս (*Շարական*):

[326] Իր թագավորության տասնութերորդ տարում Նաբուքոդոնոսոր արքան պատրաստեց մի ոսկյա արձան, որի բարձրությունը վաթսուն կանգուն էր, լայնությունը՝ վեց, և այն կանգնեցրեց բաբելացիների երկրում, Դեերա դաշտում (*Դան. 3:1*):

պատրաստել տալիս, որ եթե գտնվեն այնպիսիք, որ չեն կամենա երկրպագել արձանը, որպես պատիժ այդ հնոցի մեջ նետվելով՝ այրվեն: Արդարև, բոլոր կողմերից ամեն տեսակի մարդիկ են հավաքվում այնտեղ և զանազան երաժշտական գործիքներով երաժիշտներ պատրաստ կանգնում, այնպես որ մունետիկը ազդարարում է, որ բոլորը թմբուկի, քնարի, տավիղի և այլ նվագարանների ձայնը լսելուն պես, առանց բացառության շտապեն՝ Նաբուգոդոնոսոր արքայի կանգնեցրած արձանը երկրպագելու: Թեև բոլորը հնազանդվում են այդ անօրեն հրամանին և երկրպագում, սակայն Դանիելի ընկերները՝ Սեդրակը, Միսաքը և Աբեթնագովը, այդ բազմության մեջ բացառություն են լինում. սրանք հանձն չեն առնում երկրպագելու այդ անարգ իրը:

Թագավորի պաշտոնյաների մեջ սովորական բան են նախանձն ու թշնամությունը, ուստի բաբելոնացի այն պաշտոնակիցները, որոնք արդեն իսկ նախանձում էին երեք մանուկների առաջընթացին, այս անգամ պատեհ առիթ են գտնում՝ դուրս թափելու իրենց թշնամության թույնը, և Նաբուգոդոնոսորին ասում են. «Տե՛ր արքա, դու հրամայեցիր, որ բոլորը երկրպագեն քո կանգնեցրած կուռքը, սակայն Սեդրակը, Միսաքը և Աբեթնագովը, որոնց մեծ պաշտոնների ես կարգել, չերկրպագեցին արձանը. նրանք չկամեցան հնազանդվել քո վեհաշուք հրամանին»:

Դու նախանձ մարդկանց չարությա՛նը նայիր. այս ձևով ցանկանում են Նաբուգոդոնոսորին մեղադրել, որպեսզի նրա բարկությունը է՛լ ավելի բորբոքեն Սեդրակի, Միսաքի և Աբեթնագովի նկատմամբ, և նրանց իսկույն հնոցի մեջ նետել տան: Թեև թագավորը նրանց գրգռող խոսքերից անմիջապես կրակը գցելու հրաման չի արձակում, սակայն իր մոտ կանչելով նրանց՝ բարկությամբ հարցնում է. «Ճի՞շտ է, որ իմ կանգնեցրած կուռքը չեք երկրպագել». սրանով ուզում էր ասել, որ եթե

մինչ այժմ հրամանին չեն եթարկվել, այժմ պատրաստ լինեն, որ երաժշտական գործիքների ձայներ լսելուն պես երկրպագեն և եթե նորից չհնազանդվեն, իսկույն բորբոքված հնոցը կնետվեն, և ավելացնում. «Ո՞վ է այն Աստվածը, որ կարողանա ձեզ ազատել իմ ձեռքից»[327]:

Դու Նաբուգոդոնոսորի հպարտությո՛ւնը տես. նախապես Իսրայելի Աստծուն գովելով՝ Նրա մեծությունն ու զորությունը խոստովանողն այժմ ուրանում է Նրա զորությունը: Արդ, Սեդրակը, Միսաքը և Աբեթնագովը, նրա այս հայհոյիչ խոսքերը լսելով, առանց վախենալու և միանգամայն համարձակ պատասխանում են. «Դրա մասին քեզ պետք չէ պատասխանել, քանի որի մեր Աստվածը կարող է մեզ ազատել և՛ բորբոքված հնոցից, և՛ քո ձեռքից, իսկ եթե նույնիսկ չազատի էլ, թող քեզ հայտնի լինի, որ մենք քո կանգնեցրած կուռքը չենք երկրպագելու»[328]:

Նրանք այս պատասխանով նախ խոստովանում են Աստծու ամենակարող զորությունն ու այն, որ մարդու միտքը անկարող է տեղյակ լինելու Նրա գաղտնի խորհուրդներին և դատաստաններին, և երկրորդ՝ իրենց անձը հանձնում են Նրա սուրբ և բարերար կամքին: Քանի որ նրանք գիտեին, որ եթե ամենակարող Աստված կամենա, կարող է փրկել իրենց, իսկ եթե անհայտ որևէ պատճառով չկամենա փրկել իրենց, Նա դարձյալ նույն ամենակարող Աստվածն է,

---

[327] Ո՞վ է այն Աստվածը, որ կփրկի ձեզ իմ ձեռքից (*Դան. 3:15*):

[328] Սեդրակը, Միսակը և Աբեդնագովը պատասխանեցին Նաբուքոդոնոսոր արքային և ասացին. «Հարկ չկա քեզ պատասխանել այդ բանի համար, արքա՛, որովհետև մեր Աստվածը, որին մենք պաշտում ենք, երկնքում է, կարող է փրկել մեզ բորբոքված կրակի հնոցից և ազատել մեզ քո ձեռքից: Իսկ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, արքա՛, որ քո աստվածները մենք չենք պաշտում և չենք երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկե արձանին (*Դան. 3:16-18*):

և մարդը պարտավոր է ամեն կերպ և բոլոր պարագաներում Նրան սիրելու և պաշտելու և կատարյալ հնազանդությամբ երբեք պատճառը չհարցնելու: Ճշմարիտ հավատացյալն ընդհանրապես չպետք է կասկածի Աստծու մարդասիրությանը, գթությանը և մանավանդ Նրա արդարությանը, ինչպես՝ երեք մանուկները:

Արդարև, այս պարագայում նրանց առ Աստված հավատն ու սերը արեգակի պես փայլեցին, քանի որ ոչ թե ազատվելու համար էին հնազանդվում Աստծուն, այլ Նրա մեծությունն իմանալով՝ պատիվը պահպանելու համար հանձն են առնում նույնիսկ մահանալ. մանավանդ մի այսպիսի մերժողական պատասխան թագավորին մեծ անարգանք և նախատինք էր, կարծես ուզում էին ասել. «Այդ քո հրամանը ապօրինի է և անիմաստ, ուստի արժանի չէ պատասխանի, քանի որ նա, ով ճշմարիտ անհրաժեշտությանը կասկածելով՝ հարց է ուղղում, արժանի չէ պատասխան ստանալու»[329]:

Այդ ժամանակ Նաբուգոդոնոսորը, սաստիկ բարկանալով, կատաղած հրաման է արձակում, որ յոթնապատիկ ավելի սաստիկ տաքացնեն հնոցը և նրանց անմիջապես կրակի մեջ գցեն: Հինգ քաջ մարդիկ կապում են Սեդրակին և նրա ընկերներին, գցում հնոցը[330]: Հարկ է նկատել, որ նրանք, ինչպես դեռևս կրակը չգցված, թագավորից և կրակից չվախենալով են համարձակությամբ պատասխանում, նույն ձևով էլ կապված՝ կրակի մեջ գցվելուց հետո երբեք և ոչ մի վայրկյան վախեցած տեսք չեն ունենում: Թեև գիտեին, որ բնականաբար հուրն իրենց պիտի այրի, սակայն հանձն են առնում այրվելու,

---

[329] Առածի համաձայն՝ ով անհրաժեշտի մասին որպես կասկածելի է հարցնում, արժանի չէ պատասխանի:

[330] Իսկ նրանք երեքը՝ Սեդրակը, Միսակը և Աբեդնագովը, կապված ընկան հնոցի մեջ (*Դան. 3:23*):

որպեսզի Աստծու հրամանին չընդդիմանան, քանի որ նա, ով, նյութական կրակից և մարմնավոր թագավորից վախենալով, մեղք է գործում, Աստծուց պատիժ է կրում դժոխքի անշեջ կրակներում:

Արդ, լսեցիր երեք մանուկների հաստատուն և աներկբա հավատքի մասին. այժմ լսի՛ր նաև Աստծու նրանց հանդեպ ցուցաբերած ողորմության ու պաշտպանության մասին և խրա՛տ ընդունիր, որ երկրի վրա ինչ դժբախտության և ցավի էլ ենթարկվես, թող անխախտ և անսասան մնա քո հավատքը, երբեք Աստծու սերն ու երկյուղը մտքիցդ չհանես, և Նրա զորությանը, ողորմությանը և պաշտպանությանն աներկբա՛ հանձնվիր: Քանի որ վստահ պիտի լինես, որ եթե Նա կամենա, քեզ կարող է փրկել ամեն մի վտանգից և փորձանքից:

Ահա երեք մանուկները՝ քեզ օրինակ, որոնք, հնոցի մեջ լինելով, Աստծու ողորմությամբ նրանց ձեռքերի և ոտքերի կապանքներն իսկույն քանդվում են, և հնոցի մեջ առանց կապանքների և համարձակ քայլում և աղոթում են. նախ՝ օրհնում և փառաբանում են Աստծու սուրբ և փառավորյալ անունը[331], ապա՝ խոստովանում, որ Նրա դատաստաններն արդար, ճշմարիտ և ուղիղ են, և որ իրենք օրինազանց լինելով, իրավացիորեն բռնակալի ձեռքով պատժվում են, և որ ազգովի մեծ տառապանքի մեջ են և խնդրում են, որ Նա իր անսահման ողորմությամբ իրենց փրկի, որպեսզի Նրա աստվածային գթությունը և զորությունն ամբողջ աշխարհի առջև հայտնի դառնան, և միշտ Նրա սուրբ և օրհնյալ անունը փառավորվի: Այդ աղոթքն ամեն օր կարդացվում է Սուրբ Եկեղեցում[332]:

---

[331] Նրանք քայլում էին կրակի մեջ, օրհնում և գովում էին Տեր Աստծուն (*Դան. 3:24*):

[332] Օրհնյալ ես, Տե՛ր, մեր հայրերի՛ Աստված, հավիտյանս գովյալ և փառավորյալ է քո անունը (*Դան. 3:26*):

Մինչ երեք մանուկները, Աստվածային անհուն զորությանը և ողորմությանն ապավինած, նույն հնոցում աղոթում էին, միևնույն ժամանակ Դանիելն էլ էր աղոթում նրանց փրկության համար[333]: Ճշմարիտ է՝ նրանք ոչ միայն կրակի մեջ են անվնաս մնում, այլև ուրախ ու զվարթ են լինում, և թագավորի մարդիկ հնոցը բորբոքելու համար շարունակ հնոցի մեջ նավթ կամ ձյութ, վուշ և որթի ճյուղեր են ավելացնում, սակայն զարմանալին այն է, որ հնոցը բաց լինելով, բոցը քառասունինը կանգուն (= 22,3 մ) բարձրանալով՝ այրում է շուրջը եղողներին:

Տեսա՞ր Աստծու արդարությունը. հնոցում գտնվողները չեն այրվում, սակայն դրսում գտնվողներն այրվում են, քանի որ Աստծու հրեշտակը, իջնելով հնոցի բոցերի մեջ, ընկերանում է երեք մանուկներին՝ արգելելով, որ բոցը մոտենա հավատարիմ ծառաներին: Սրանից բացի՝ կրակի մեջ առավոտյան զով հովի նմանվող օդ են շնչում, որն անկարող է լինում նրանց նեղություն պատճառելու[334]: Այնպես որ նրանք, Աստծուն գովելուց և օրհնելուց բացի, երկինք ու երկիր և նրանցում գտնվող բոլոր արարածներին նույնպես հրավիրում են՝ Աստծու սուրբ և օրհնյալ անունը փառավորելու[335]:

Թագավորը, այնտեղ նստած, սաստիկ ապշում է և իսկույն ուշադրությամբ նայելով՝ տեսնում, որ երեքի փոխարեն չորս հոգի համարձակ քայլում են հնոցում: Նա, սաստիկ

---

333 Դանիել մարգարեն աղոթում էր Տեր Աստծուն փրկելու երեք մանուկներին Բաբելոնի հնոցում (*Շարական*):

334 Բայց Աստծու Հրեշտակը իջավ կանգնեց հնոցի մեջ, Ազարիայի կողքին, կրակի բոցը թոթափեց հնոցից և հնոցի մեջ դարձրեց այնպիսի հողմ, որ ցող է բերում, և կրակը ամենևին չէր մոտենում նրանց, չէր տանջում և չէր նեղում նրանց (*Դան. 3:49*):

335 Օրհնեցե՛ք Տիրոջ բոլոր գործերը, օրհնեցե՛ք և պանծացրե՛ք նրան հավիտյան (*Դան. 3:57*):

զարմացած, իր նախարարներին այսպես է ասում. «Մենք երեք մարդ գցեցինք հնոցը, սակայն ես այժմ չորս մարդ եմ տեսնում, և չորրորդը նման է Աստծու Որդուն»[336]: Նաբուգոդոնոսորը ինչքան էլ հպարտ էր, սակայն այսպիսի հրաշք տեսնելով՝ հասկանում է, որ Աստված պահպանում է այդ երեք իսրայելացիներին: Ուստի հնոցի դռանը մոտենալով՝ նրանց, իրենց անուններով բարձրաձայն կանչելով, ասում է. «Ո՛վ ամենազոր Աստծու ծառաներ, շտապ դո՛ւրս եկեք»:

Երբ նրանք դուրս են գալիս, բոլոր նախարարները, սպարապետները և գավառների իշխանները, որոնք հավաքվել էին, տեսնում են, որ կրակը նրանց երբեք չի դիպել, քանի որ նրանց գլխի մազերն անգամ չեն խանձվել, զգեստների գույնն անգամ չի փոխվել, ոչ մի կերպ նրանցից այրվածի հոտ չի գալիս: Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը, Աստծուն երկրպագելով, ասում է. «Օրհնյալ է Սեդրակի, Միսաքի, Աբեթնագովի Աստված, Որ, Իր հրեշտակին ուղարկելով, փրկեց Իր հավատարիմ ծառաներին, քանի որ Նրա պաշտպանությանն ապավինելով՝ մերժեցին թագավորի հրամանը և միայն իրենց Աստծուն երկրպագելու համար բորբոքված հնոց նետվելը հանձն առան»:

Հարկ է նկատել, որ Նաբուգոդոնոսորը նախկինում ասել էր, թե ով է այն Աստվածը, որ նրանց կարողանա ազատել իր ձեռքից, և այդ նույն ամբարտավան թագավորը, որ մոռացել էր Աստծու զորությունը, այս անգամ ոչ միայն Աստծուն երկրպագելով՝ գովում և փառավորում է Նրան, այլև

---

[336] Նաբուքոդոնոսորը երբ լսեց նրանց օրհնությունը, զարմացավ.... և ասաց իր մեծամեծներին. «Մի՞թե մենք կապված երեք մարդ չնետեցի՞նք կրակի մեջ: ....Բայց ես տեսնում եմ կապերից արձակված չորս մարդ, որոնք քայլում են կրակի մեջ, որևէ վնաս չեն կրել, իսկ չորրորդի տեսքը Աստծու որդու նման է» (*Դան. 3:91–94*):

Նրա մեծ զորությունը բոլորին հայտնի դարձնելու համար իր իշխանությանը ենթակա բոլոր ցեղերին հրովարտակ է ուղարկում՝ հրամայելով, որ Սեդրակի, Միսաքի, Աբեթնագոովի Աստծուն ընդդիմացողները կորչեն, և տներն էլ կողոպուտի բաժին դառնան, քանի որ Նրանից բացի՝ այլ Աստված չկա, որ կարողանա Իր ծառաներին փրկել: Բացի դրանից, նրանց մեծ պաշտոններ և պատիվներ տալով՝ խնդրում է, որ իր իշխանությանը ենթակա բոլոր իսրայելացիներին կառավարեն և իշխեն:

Դու Աստծու արդարությո՛ւնը տես. վերոհիշյալ նախանձները, որոնք երեք մանուկներին կրակի մեջ գցելու պատճառ են լինում, երբ նրանք, Աստծու ողորմությամբ ազատվելով, առավել փառքի են արժանանում, բնականաբար անչափ խայտառակվում են և նշավակ լինում, քանի որ նրանց չար դիտավորությունը Աստված իր ծառաների համար բարության է փոխում: Ահա այսպիսին է նախանձ մարդու վիճակը. ում նախանձում է, նրա փառքը մեծացնում է, և ինքն էլ, այս աշխարհում խայտառակվելով, հանդերձյալ կյանքում էլ արդարացիորեն հավիտենական պատժի է արժանանում:

Այստեղ լա՛վ մտապահիր Աստծու գաղտնի դատաստանները: Նաբուգոդոնոսորը, իսրայելացիների օրենքներին հակառակ, արձան է կանգնեցնում, որպեսզի չասեն, թե նա իսրայելացիների կրոնն է ընդունել, սակայն Աստված գործին այնպիսի ընթացք է տալիս, որ և՛ Նաբուգոդոնոսորը, և՛ նրան բամբասողները հարկադրված են լինում աշխարհին հայտնելու Աստծու զորությունը:

Օրինա՛կ վերցրու երեք մանուկների առաքինություններից. հավատարմությամբ միշտ Աստծուն ծառայելով՝ նրա սուրբ օրենքների՛ն հպատակվիր, որպեսզի երկու աշխարհներում էլ երջանիկ և փառավոր լինես:

Ճիշտ է՝ Սեդրակը, Միսաքը և Աբեթնագովը Սուրբ գրքում *մանուկներ* բառով են հիշատակվում, սակայն հարկ է իմանալ, որ հնոց գցվելու ժամանակ մանուկ չեն լինում, այլ մանուկ տարիքում գերված լինելով են *մանուկ* կոչվում Սուրբ գրքում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Առավել ուշադրության է արժանի Նաբուգոդոնոսորի վիճակը. ճշմարիտ է, որ նա, նախապես ինքնահավան և ամբարտավան անձնավորություն լինելով, չի ճանաչում Աստծու գերագույն զորությունը, սակայն վերոհիշյալ հրաշքներից հետո ստիպված է լինում բացահայտորեն խոստովանելու Նրա ամենակարողությունը և զորությունը, և թեև որոշակի ժամանակ խոնարհությամբ իր չափը ճանաչում է, սակայն Տյուրոսի, Սիդոնի և Եգիպտոսի թագավորների դեմ պատերազմելուց և հաղթանակելուց հետո, դարձյալ չափն ու դիրքը մոռանալով, հիմարաբար սկսում է անչափ հպարտանալ:

Այս պարագայում ուշադրությամբ պիտի խորհել Աստծու արդարության մասին. որովհետև Երուսաղեմի բնակիչների վրա օրենքին հակառակ վարք ունենալու պատճառով բարկացած լինելով՝ Աստված Նաբուգոդոնոսորի ձեռքով այդ քաղաքը կործանելու և ժողովրդին գերությամբ պատժելու ժամանակ Տյուրոսի և Սիդոնի թագավորը կարեկցելու փոխարեն, ընդհակառակը, հեգնում և ծաղրում է նրանց թշվառությունը[337] և մանավանդ իր զորության և տերության ամրության և զորեղ վիճակին նայելով՝ շատ հպարտանում:

---

[337] Տյուրոսը չարախնդաց Երուսաղեմի վրա ու ասաց. «Վա՛շ-վա՛շ, քանի որ կոտրվեց, կորավ Երուսաղեմը» (*Եզեկ. 26:2*):

Ահա այս է պատճառը, որ Աստված Բաբելոնի թագավորին նրա դեմ է հանում, որպեսզի իր չափն իմանա, և նրա պատիժն ու կործանումը լսողները ապշահար սգան և ողբան[338]: Ու քանի որ Տյուրոս քաղաքը շատ ամուր է լինում, Նաբուգոդոնոսորը այն գրավելու համար շատ է մտահոգվում, և Աստված, ի վարձատրություն նրա կրած նեղությունների, նրան ուղարկում է Եգիպտոսի փարավոնի դեմ, քանի որ սա նույնպես, իր զորության և իշխանության վրա հույս դնելով, չափազանց հպարտացած է լինում[339], ինչպես որ այս պատմությունը հիշատակվում է Եզեկիել մարգարեի գրքում՝ քսանվեցերորդ գլխից մինչև երեսուներկուերորդ գլուխներում:

Արդարև, այս պարագայում Նաբուգոդոնոսորը Աստծու կամքն ու հրամանն է կատարում, սակայն, դժբախտաբար, վերոհիշյալ թագավորների պատժից չխրատվելով, կարծելով, որ այդպիսի մեծամեծ հաղթանակները իր բազկի զորությամբ են լինում, այդ պարտված թագավորներից առավել է գոռոզանում, ուստի նրան պատժելու հարկ է լինում:

Սակայն Աստված Իր ողորմությամբ նախ ցանկանում է նրան երազում հայտնել, թե ինչ պատիժ պիտի տա, որ իր չափը հասկանալով՝ չհպարտանա: Արդ, Նաբուգոդոնոսորը երազում մի մեծ և ահագին ծառ է տեսնում, որի բարձրությունը ասես մինչև երկինք է հասնում, և լայնությունը՝ աշխարհի չորս կողմերը տարածված, տերևները՝ գեղեցիկ, պտուղները՝

---

[338] Ծովագնաց ազգերի բոլոր իշխանները…. տագնապելով տագնապելու են, ողբալու և ասելու են. « Ինչո՞ւ կորստյան մատնվեցիր, քանդվեցիր ծովի մեջ, ո՛վ հոյակապ քաղաք» (*Եզեկ. 26:16,17*):

[339] Այսպես է ասում Ամենակալ Տերը. «Խորտակվելու են եգիպտացիների պահապանները, իջնելու է նրանց ամբարտավան զորությունը…. Եգիպտացիների զորքերը կորստյան եմ մատնելու բաբելացիների արքա Նաբուքոդոնոսորի ձեռքով» (*Եզեկ. 30:6, 10*):

անչափ առատ, վայրի գազանները՝նրա ստվերի ներքո, իսկ երկնքի թռչունները նրա ոստերին են բնակվում, և բոլորն էլ, նրա պտուղներից ուտելով, ապրում են:

Եվ ահա երկնքից մի հրեշտակ իջնելով՝ բարձրաձայն աղաղակում է. «Կտրե՛ք այդ ծառը, կտրատե՛ք նրա ճյուղերը, թոթափե՛ք դրա տերևները և ցրե՛ք դրա պտուղները, որպեսզի բոլոր գազանները և թռչունները փախչեն, միայն արմատը թող մնա, այն երկաթյա և պղնձյա շղթաներով շղթայե՛ք, թող նա գազանների հետ միասին խոտերի վրա՝ բացօթյա, բնակվի, մարդկային սիրտը նրանից խլվելով՝ գազանի սիրտ տրվի նրան, մինչև որ յոթ ժամանակներ անցնեն նրա վրայով»: Այսպես է խոսում Աստծու հրեշտակը:

«Բայց ի՞նչ պատճառ և նպատակ ունի այսպիսի պատիժը, որ Նաբուգոդոնոսորին է տրվելու»,- հարցնում են հրեշտակները վերոհիշյալ վճիռն արձակող հրեշտակին, և նա պատասխանում է. «Որպեսզի մարդիկ իմանան, որ Բարձյալն Աստված տիրում է բոլոր թագավորներին և պարգևատրում, ում կամենում է»[340]: Երբ Նաբուգոդոնոսորը տեսնում է այս երազը, անչափ մեծ երկյուղով լցված՝ հավաքում է Բաբելոնի իմաստուններին և ցանկանում է լսել երազի մեկնությունը, բայց նրանցից ոչ մեկը չի կարողանում մեկնել երազը, ուստի կանչել է տալիս Դանիելին և նրան պատմում իր երազը:

Արդ, Դանիելը, իմանալով, որ այդ երազի մեկնությունը Նաբուգոդոնոսորի կրելիք պատիժն է ցույց տալիս, մոտ մեկ ժամ առանց պատասխան տալու տագնապալի վիճակում է

---

[340] Իմ խոսքը Հրեշտակի կողմից տրված խոսք է, և իմ հարցումը՝ սրբերի պատգամ, որպեսզի ապրողները իմանան, թե Բարձրյալն է տիրում մարդկանց թագավորության վրա, այն տալիս է, ում որ կամենա, և մարդկանցից ամենաանարգին բարձրացնում է դրա վրա (*Դան. 4:14*):

լինում, որից թագավորը հասկանում է, որ իր մասին մի տխուր բան պիտի հայտնի, և հենց դա է Դանիելի լռության պատճառը: Ուստի շտապում է՝ նրան վստահեցնելու, որ առանց երկմտելու հայտնի երազի մեկնությունը: Այն ժամանակ Դանիելը համարձակվում է պատասխանել թագավորին. «Ո՛վ արքա, տեսածդ երազը և նրա մեկնությունը թող թշնամիներիդ համար կատարվի: Քանի որ տեսածդ ծառը դու ես, որ շատ մեծ զորության և փառքի ես հասել, մեծությունդ և իշխանությունդ մինչև երկինք են հասնում և ամբողջ աշխարհը լցնում: Աստված քեզ համար վճռել է, որ գազանի կերպարանք ստանաս, քեզ մարդկանց միջից պետք է արտաքսեն, վայրի գազանների հետ ամայի անտառում և անտառում բնակվես, եզան պես խոտ ուտելով՝ յոթ տարի ցողի ու անձրևի տակ պիտի ապրես, մինչև հասկանաս, որ Բարձյալն է տիրում բոլոր թագավորություններին և տալիս նրան, ում կամենում է»:

Եվ Դանիելը հավելում է՝ ասելով. «Իսկ հրեշտակի այն խոսքը, որ ծառի արմատը մնա հողում, ցույց է տալիս, որ երբ Աստծու ամենակարողությունը ընդունես, թագավորությունդ նորից քեզ պիտի վերադարձվի»: Ահա այսպես Դանիելն Աստծու շնորհիվ վերոհիշյալ երազը մեկնելուց հետո՝ տեսնելով, որ թագավորը անպատճառ պիտի պատժվի, կարեկցելով մի խրատ էլ է տալիս՝ ասելով. «Տե՛ր արքա, թող քեզ հաճելի թվա ծառայիդ խորհուրդը, ողորմությո՛ւն տուր աղքատներին և օգնի՛ր տնանկներին, թերևս Աստված բարեմիտ լինի հանցանքներիդ հանդեպ»[341]: Թեև թագավորը, ընդունելով Դանիելի խորհուրդը, միաժամանակ աղքատներին և տնանկներին

[341] Դրա համար, արքա՛, թող իմ խորհուրդը հաճելի թվա քեզ, քո մեղքերը քավի՛ր ողորմությամբ, և քո անօրենությունները՝ աղքատներին գթալով, թերևս Աստված համբերատար լինի քո հանցանքների նկատմամբ (*Դան. 4:24*):

ողորմություն է տալիս, սակայն հպարտությունից չհրաժարվելով՝ երբեմն խորհում է, որ պիտի պատժվի և մտատանջվում: Այսպես անցնում է մեկ տարի, և երբ պալատի վերնահարկում զբոսնելիս է լինում, քաղաքի ահագին մեծությունն ու ամրությունը տեսնելով՝ նորից սկսում է գոռոզանալ և ինքն իրեն ասել. «Այս այն մեծ Բաբելոնը չէ՞, որը ես իմ հզոր զորությամբ կառուցեցի իմ փառքի և անվան համար»:

Դու հիշյալի ամբարտավանությո՛ւնը տես. որովհետև Բաբելոնի հիմնադիրը Նեբրովթն էր (տե՛ս Երկրորդ դար, Զ հարցը). Նաբուգոդոնոսորն այն միայն առավել ամրացնում է, և այժմ այն հիմքից կառուցելն իրեն վերագրելը պարզապես հպարտություն և ինքնագովություն է լինում: Եվ կրկին այս խոսքերով ցանկանում է փարատել սրտի նեղությունը և ինքն իրեն մխիթարելու փափագով ցանկանում է ասել. «Ո՞վ կարող է ինձ արտաքսել այս քաղաքից, որ ես ինքս եմ կառուցել և ամրացրել»:

Արդ, տե՛ս, թե գոռոզությամբ իր զորության վրա հույս դնելը ինչպիսի մեծ հանցանք է, քանի որ նա, այս խոսքերով Աստծու մեծ զորությունը և իր հանդեպ արված ողորմությունը ուրանալուց բացի, Դանիելի՝ երազի մեկնությունն էլ, սուտ և անհնար մի բան կարծելով, առավել է ծանրացնում իր հանցանքը, ուստի այս է պատճառը, որ դեռ խոսքը բերանում՝ երկնքից ձայն է լսում, որն ասում է. «Քեզ կասեմ, ո՛վ Նաբուգոդոնոսոր, թագավորությունդ վերցվում է քեզնից. քեզ մարդկային միջավայրից հեռու կտանեն, անապատում գազանների հետ բնակվելով՝ յոթը տարի եզան նման խոտ կուտես, մինչև հասկանաս, որ Աստված է իշխում բոլոր թագավորությունների վրա, որ պարգևում է, ում ցանկանում է»[342]:

---

[342] Մինչ խոսքը թագավորի բերանում էր, երկնքից ձայն լսվեց և ասաց. «Քեզ եմ ասում, ո՛վ Նաբուքոդոնոսոր արքա, քո թագավորությունը խլված է քեզանից: Մարդկանց միջից պիտի հալածեն ու

Լա՛վ մտապահիր ինքնահավան և հպարտ Նաբուգոդոնոսորի թշվառ և հալածված վիճակն ու դրությունը. որովհետև երկնքից ձայն գալուն պես ժողովուրդը ապստամբելու մտադրություն ունենալով՝ կամաց-կամաց մեծ խռովության աղմկալից ձայներ են լսվում, որից նրա սրտում մի տարօրինակ և մեծ երկյուղ է առաջանում և մտածելով, որ միգուցե պալատի վրա հարձակվելով՝ իրեն սպանեն, ստիպված է լինում, խելագարի նման փախչելով, ամայի և վայրի անտառներում ապաստանելու և այնտեղ անասունների նման խոտ ուտելու, գիշեր-ցերեկ ցողի և անձրևի ներքո մնալու, մազերն ու եղունգներն էլ երկարելով՝ անասնական կերպարանք է ստանում:

Ահա սույն թշվառ և եղկելի վիճակում յոթ տարի բնակակից է լինում գազաններին, այնպես որ զգեստներն էլ մաշվելով՝ մերկ է շրջում, և մաշկը՝ գազանների կաշվի է նմանվում, և դեմքն անչափ այլանդակվում է և անվայել կերպարանք ստանում, սակայն Աստծու կամքով կենդանի է մնում, և նույնիսկ վայրի գազանները չեն կարողանում որևէ վնաս պատճառել նրան: Արդարև, նրա կրած տառապանքներն անտանելի են լինում, քանի որ մանկությունից փափկության և զվարճանքների մեջ էր մեծացել և սնվել. մանավանդ թագավորական վիճակից անասունի աստիճանի իջնել, կերակուրը՝ խոտ, մարմինը՝ մերկ, մահճակալը՝ հող՝ անձրևի և ցողի ներքո, գազանների ընկերակցությամբ, ոչ մի տեղից մխիթարություն չունենալով՝ միշտ երկնչել, թե միգուցե մարդկանցից սպանվի կամ գազաններից հոշոտվի. ահա, սա էր Նաբուգոդոնոսորի անտանելի

վտարեն քեզ: Դու պիտի բնակվես անապատի գազանների հետ, և որպես արջառի՝ խոտով պիտի կերակրեն քեզ: Յոթը ժամանակներ պիտի անցնեն քո վրայից, մինչև ճանաչես, որ Բարձրյալն է տիրում մարդկանց թագավորությանը և այն պիտի տա, ում որ կամենա» (*Դան. 4:28*):

վիճակն ամբողջ յոթ տարի՝ ըստ աստվածային վճռի և ըստ մեկնության:

Ինչպես վերը հիշատակվել է, որովհետև վերստին իր թագավորությանը պիտի արժանանար, ուստի Աստված սրա պատճառով է նրան պահպանում, որ ուսանի և չափը ճանաչի ու խոստովանի, որ Աստված է ամեն ինչի Տերը: Արդարև, հիշյալը, մի այսպիսի անօրինակ պատժի ենթարկվելով, գիտեր, որ ինքը մարդ է և թագավոր, քանի որ ոչ թե իր մարդկային բնությունը անասնականի էր վերափոխվել, այլ հասկանում էր, որ ինքը մարդ է: Նրա համար վճռվել էր նաև, որ շղթայակապ լինի, սակայն այս խոսքը այլաբանորեն պիտի հասկանալ, քանի որ ոչ թե մարդկանց կողմից պետք է կապվի, այլ պետք է հասկանալ, որ Աստծու արդար դատաստանի զորության կնիքն ուներ, որովհետև եթե նյութական շղթաներով կապվելու լիներ, նա չէր կարողանա անտառ փախչել. սրա մասին կարող ես դիմել մեկնողական գրականությանը: Երբ լրանում է յոթ տարին, դեմքը բնական տեսք է ստանում, նաև խելքը գլուխն է գալիս, և հասկանալով, որ կրած բոլոր նեղությունները իր հպարտության համար պատիժ էին, սկսում է գովել և փառավորել Աստծուն և խոստովանել, որ Նրա իշխանությունը հավիտենական է և անվախճան[343]:

Այն ժամանակ Դանիելի հրահանգով Բաբելոնի նախարարներն ու մեծամեծները, անտառում որոնելով, գտնում են նրան, և մեծ հանդիսությամբ բերում և նախկինի նման ար-

---

[343] «Այդ օրերից հետո, ես՝ Նաբուքոդոնոսորս, իմ աչքերը բարձրացրի դեպի երկինք, իմ միտքը վերադարձավ ինձ, օրհնեցի Բարձրյալին, գովեցի և փառավորեցի հավիտենապես կենդանի Աստծուն, որովհետև նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է.... Այդ նույն ժամանակ.... ես վերադարձա իմ թագավորական պատվին, իմ կերպարանքը վերադարձավ ինձ» (*Դան. 4:31*):

քայական գահին են բազմեցնում, և բոլորն էլ հնազանդվում են նրա իշխանությանը: Կարծում են, որ Նաբուգոդոնոսորի փախուստից մինչև վերադարձը նրա որդի Եղմարովդաքն է զբաղվում թագավորական գործերով:

Դու տե՛ս հաջողության և անհաջողության տարբերությունը. անհաջողությունը Նաբուգոդոնոսորին, զրկելով արքայական գահից, զազաններին է հավասարեցնում, իսկ հաջողությունը՝ նորից թագավորական գահին բարձրացնում: Իրոք, հիշյալը որքան նախկինում ամբարտավան էր, նույնքան էլ դժբախտությունից հետո կատարելապես զգաստանալով՝ խոնարհ սրտով փառավորում է Աստծուն և բովանդակ աշխարհի առջև բացահայտորեն խոստովանում Նրա արդարությունը և զորությունը[344]: Այնուհետև տասը տարվա չափ փառավորապես թագավորելով՝ մահանում է. նրա մահվանից հետո Բաբելոնում գահ է բարձրանում որդին կամ թոռը՝ Բաղդասարը: Քանի որ կարծիք կա, որ վերոհիշյալ Եղմարովդաքն այդ ժամանակ արդեն մահացել էր, և նրա որդի Բաղդասարն է թագավորում:

Հարկ է հիշյալ թագավորների աղետալի դիպվածներից խրատվել. մի՛ հպարտացիր քո գիտությամբ, հարստությամբ և իշխանությամբ, այլ Աստծու երկյուղը միշտ և շարունակ սրտիցդ չհանելով՝ խոնարհությամբ հնազանդվի՛ր Նրա պատվիրաններին[345], որպեսզի նեղության կամ պատիժ կրելու

---

[344] Արդ, ես՝ Նաբուքոդոնոսորս, օրհնում եմ, փառավորում և առավել պանծացնում երկնքի արքային, որովհետեւև նրա բոլոր գործերը ճշմարիտ են, նրա ուղիները՝ արդար, և բոլորին, ովքեր կամբարտավանանան, նա կարող է խոնարհեցնել (*Դան. 4:34*):

[345] Ո՛չ իմաստունը թող պարծենա իր իմաստությամբ, ո՛չ հզորն իր զորությամբ, ո՛չ էլ մեծատունն իր հարստությամբ: Պարծեցողը պետք է պարծենա նրանով, որ իմանում ու ճանաչում է Տիրոջը (*Ա Թագ. 2:9*):

չդատապարտվես: Բարերար Աստված Իր անսահման ողորմությամբ ոմանց առավել հանճար և իմաստություն է պարգևում, որպեսզի բարվոք առաջնորդեն և ուսուցանեն նրանց, որոնք ի բնե զուրկ են հանճարից: Նույն ձևով էլ մյուսներին հարստություն և ճոխություն է տալիս, որպեսզի կարոտյալ և չքավոր մարդկանց ձեռք մեկնեն և օգնական լինեն, իշխանություն է շնորհում, որպեսզի անարժան և մոլի մարդկանց պատժելով՝ արդարությունն իրագործեն: Ուրեմն, եթե գիտուն, հարուստ կամ իշխանություն ունենալու համար մարդը գոռոզանա, Աստծու շնորհն ու պարգևը մեղքի գործիք դարձրած կլինի, և այս է պատճառը, որ, անշուշտ, սաստիկ պատժի կարժանանա:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վերոհիշյալ Բաղդասար թագավորի օրոք պարսիկների և մարերի Դարեհ թագավորը (Մար) գալիս է և պաշարում է Բաբելոնն այն գրավելու նպատակով: Սակայն քաղաքը, անչափ ամուր լինելով, շատ դժվար էր գրավել, ուստի Բաղդասարը, բոլորովին չվախենալով, թշնամուն հալածելու համար չի էլ մտահոգվում: Սրանից բացի՝ բնակիչների սրտերն էլ ամրացնելու համար, որ չվախենան, հազար մարդկանց, որոնք իր նախարարներն ու մեծամեծներն էին, մի մեծ խնջույքի է հրավիրում:

Եվ երբ նրա կանայք և հարճերն էլ սեղանի շուրջն են լինում՝ անձնատուր ուտել-խմելուն, տաճարի ոսկյա և արծաթյա անոթներն էլ (բաժակները) բերել տալով, որոնք Նաբուգոդոնոսորը, Երուսաղեմից ավար բերելով, կռատանն էր պահում, սկսում են դրանցով գինի խմել և գովել իրենց կուռքերը, որոնք ոսկուց, արծաթից, պղնձից և փայտից էին պատրաստված, և

երկնքի ճշմարիտ Աստծուն չեն գովում և չեն օրհնում[346]: Այսպես նրանք, կերուխումով զբաղված, ուրախ- զվարթ զվարճանում են, ահա հրաշքով մի մարդկային ձեռք է երևում, որը պատին ինչ-որ բառեր է գրում:

Թագավորը, սա տեսնելով, երկյուղից դեմքի գույնը գցում է և մտատանջվում, մկանները թուլանում են, ծնկները սկսում են դողալ: Անմիջապես բոլոր իմաստուններին կանչելով՝ նրանց խոստանում է, որ ով այդ գրությունը կարողանա կարդալ և բացատրել, մեծ պաշտոն և պարգևներ կստանա: Երբ նրանք անկարող են լինում կարդալու և մանավանդ իմաստը հասկանալու, թագավորն ու նախարարները, գիտակցելով, որ այս երևույթը իրենց համար վատ հետևանք կարող է ունենալ, ակամա ավելի ծանր մտատանջության են մատնվում:

Եվ քանի որ նախկինում Դանիելը մեկնել էր Նաբուգոնոսորի երազները, և թագավորի մայրը՝ թագուհին, գիտեր, որ նա այդպիսի գաղտնիքները պարզաբանելու հմուտ է, իսկույն հայտնում է իր որդուն, որն էլ, Դանիելին կանչելով, ասում է. «Եթե այս գրությունը կարդալով բացատրես, քեզ մեծ պատվի կարժանացնեմ»: Դանիելը, մերժելով թագավորի խոստումները, պատասխանում է. «Քո պարգևներ թող քեզ մնան, շնորհելիք աստիճանն էլ ուրիշի՛ն տուր, սակայն ես կկարդամ և կմեկնեմ գրությունը»:

Դանիելը նախ և առաջ նրա հանցանքն է ներկայացնում, որ երբ պատժվի, հասկանալի լինի, որ Աստծուց հատուկ պատիժ է, և մարդիկ էլ խրատվեն: Այս է պատճառ, որ նրա հոր՝ Նաբուգոդոնոսորի հետ կատարվածները մեկ առ

---

[346] Գինի էին խմում և օրհնում էին ոսկյա, արծաթյա, պղնձյա, երկաթյա, փայտե և քարե աստվածներին, իսկ հավիտենական Աստծուն, որ իշխանություն ուներ նրանց հոգիների վրա, չօրհնեցին (*Դան. 5:4*):

մեկ հիշատակելով՝ ավելացնում է. «Դու այդ եղելություններից չես խրատվել, և Աստծու տաճարի սպասքներով հանդգնել ես գինի խմել, և մանավանդ փոխանակ Աստծուն օրհնելու ձեր կուռքերն ես օրհնել և գովել, որոնք ո՛չ տեսնում, ո՛չ լսում և ո՛չ էլ հասկանում են: Այո՛, չես օրհնել այն Աստծուն, որի ձեռքին են քո կյանքն ու շունչը, սրա պատճառով նա այս ձեռքն է ուղարկել»[347], և ապա պատին գրվածը կարդալով՝ բացահայտորեն ասում է, որ թագավորությունը, նրանից վերցվելով, ուրիշին պիտի տրվի:

Պատին երեք բառ էր գրված՝ *մանե*, *թեկեղ*, *փարես*: Սրանց մեկնությունը տալով՝ ասում է. «*Մանե* բառը նշանակում է, որ Աստված չափել է թագավորությունդ և վերջացրել, *թեկեղ* նշանակում է, որ նժարին դնելով՝ այն պակաս է գտնվել, *փարես* բառի նշանակությունն այն է, որ թագավորությունը պարսիկներին և մարերին է տրվել»[348]: Հիրավի, հայտնի է դառնում, որ Բաղդասար թագավորը պիտի պատժվի, այսուհանդերձ նա, հպարտությունը թողնելով, չի զղջում, և նրա հրամանով միայն Դանիելին նախարարական ծիրանի զգեստ են հագցնում, և պարանոցին ոսկի մանյակ գցելով՝ մունետիկը նրա առջևից

---

[347] Եվ Դանիելն ասաց թագավորի առաջ. «....քո սիրտը չխոնարհեցրիր Աստծու առաջ, երկնքի Աստծու դեմ գոռոզացար, նրա Տան սպասքը բերին քո առջև, և դու, քո մեծամեծները, քո հարճերն ու քո կանայք գինի էիք խմում դրանցով, օրհնում էիր.... աստվածներին, որոնք ո՛չ տեսնում են, ո՛չ լսում և ո՛չ էլ կարող էին հասկանալ իսկ Աստծուն, որի ձեռքում են քո շունչը.... Այդ պատճառով էլ նրա կողմից ուղարկվեց ձեռքի թաթը և գրեց այդ գրությունը» (*Դան. 5:17,22-25*):

[348] Եվ սա է այդ բանի մեկնությունը. ՄԱՆԵ՝ Աստված չափեց քո թագավորությունը և վերջ տվեց դրան. ԹԵԿԵՂ՝ կշեռքով կշռվեց և պակաս եղավ. ՓԱՐԵՍ՝ քո թագավորությունը բաժանվեց և տրվեց մարերին ու պարսիկներին (*Դան. 5:26-28*):

քայլում է՝ հայտարարելով, որ Դանիելը թագավորության երրորդ մասի իշխան է կարգվում: Դարեհը, արդեն Բաբելոնը պաշարած լինելով, նույն գիշեր ներխուժում և սպանում է Բաղդասարին, և նրա թագավորությունը վերանում է:

Խրա՛տ ընդունիր. Նաբուգոդոնոսորը հպարտության համար է պատժվում, սակայն զղջալով Աստծու մեծությունը և զորությունը հասկանալու համար թողություն է գտնում և նորից թագավորում: Իսկ Բաղդասարը, հպարտությունից բացի ինքն իրեն զեխության տալով, չի ցանկանում հարգել Աստծու պատիվը, քանի որ հանդգնում է նրա անունով պատրաստված սպասքով գինի խմելու, և առանց թողություն ստանալու պատժվում է: Արդ, մի՛ կարծիր, որ հիշյալ երեք բառերը միայն Բաղդասարին են վերաբերում, այլ բոլոր հպարտ և օրինազանց մարդկանց նկատմամբ միշտ դատաստանով վճիռ է արձակվում, քանի որ երբ մարդու մեղքի չափը լրանում է, Աստված անպատճառ նրան արդարությամբ պատժում է:

Թեև շատ իշխանավորներ և հարուստ մարդիկ, հաճախ Աստծու օրենքներին հակառակ վարք ունենալով, անշուշտ պատժվում են, սակայն չկարողանալով կամ չցանկանալով իմանալ, որ իրենց կրած պատիժն իրենց մեղքերի համար է, ուղղվելու փոխարեն այլոց դեմ սկսում են զանգատվել՝ ջանալով այլևայլ դատարկ և անհաջող պատրվակներ որոնել:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերոհիշյալ Դարեհ թագավորը, գրավելով Բաբելոնը, իր իշխանության տարածքներում հարյուր քսան կառավարիչ նախարարներ է կարգում, և որպեսզի ինքը նեղություն չկրի, նրանց էլ վերահսկող երեք պաշտոնյաներ հատկացնում, որոնցից մեկը Դանիելն էր: Սակայն Դանիելն ավելի հավատարիմ

և իմաստուն լինելով՝ թագավորը նրան բոլորի վերատեսուչ է նշանակում, նրանք էլ նեղվելով և նախանձելով պատճառ են որոնում Դանիելին հանցավոր ցույց տալու թագավորի աչքին:

Սակայն Դանիելն ամեն կերպ հավատարիմ լինելով՝ ոչինչ չեն կարողանում գտնել, ուստի միմյանց հետ խոսում են՝ ասելով. «Այլ ձևով թերություն չպիտի կարողանանք գտնել Դանիելի հանդեպ, եթե ոչ իր Աստծու օրենքներին վերաբերող խնդիրներում», քանի որ գիտեին, որ Դանիելը երբեք օրենքին հակառակ չի վարվի: Այս է պատճառը, որ բոլորն էլ, համաձայնության գալով, թագավորին ասում են. «Տե՛ր արքա, իշխանությանդ ենթակա բոլոր նախարարները, իշխանները, կուսակալները և դատավորները խորհրդակցելով որոշել են, որ մեկ ամիս ժամանակահատվածում ոչ մեկը ինչ խնդրանք կամ փափագ էլ ունենա, մարդկանցից կամ Աստծուց ոչինչ չխնդրի, այլ միայն թագավորից, իսկ եթե մեկը թագավորից չխնդրի, այլ ուրիշ մեկից, առյուծների գուբը նետվի»: Թագավորը, հավանություն տալով նրանց որոշմանը, իսկույն կնքում է հրամանը:

Դու Դանիելի հավա՛տը տես. սույն հրամանը և կարգադրությունը լսելով՝ թեպետ հասկանում է, որ դրանով իր հանդեպ թակարդ է լարվում, սակայն ինչպես նախկինում սովորություն ուներ՝ օրը երեք անգամ իր տան վերնահարկում՝ Երուսաղեմ նայող պատուհանի առջև, աղոթելու, դարձյալ առանց երկյուղի նորից շարունակում է աղոթել Աստծուն[349]: Պատուհանը բաց լինելով՝ հիշյալ նախանձողները անմիջապես տեսնում և լսում են նրա աղոթքը ու գանգատվում թագավորին, որ Դանիելն ընդդիմանում է արքայական հրամաններին, և իսկույն

---

[349] Դանիելը երբ իմացավ, որ հրաման է եղել, մտավ իր տունը, իսկ նրա վերնատան պատուհանները բացված էին դեպի Երուսաղեմ: Օրական երեք անգամ նա ծնրադրում էր և աղոթում, գոհություն էր հայտնում իր Աստծուն, ինչպես առաջ էր անում (*Դան. 6:10*):

թագավորից պահանջում են, վերոհիշյալ վճռին համապատասխան, առյուծների գուբը նետել նրան:

Թեև թագավորը, այս ամենից անչափ տրտմելով, ցանկանում է Դանիելին մի կերպ ազատել, սակայն նրանք պատասխանում են. «Պարսիկների և մարերի որոշումը, որը թագավորը հաստատել է, անհնար է փոփոխել»: Թեև այս պարագայում թագավորը, ակամա համակերպվելով, Դանիելին բերել է տալիս գուբը նետելու համար, սակայն նրան կարեկցելով՝ ասում է. « Թող Աստված քեզ ազատի», և այդ ժամանակ Դանիելին նախանձողները նրան գցում են առյուծների գուբը[350]: Թագավորը հույս ուներ, որ Աստված կպահպանի նրան, քանի որ գիտեր, որ Դանիելը միշտ հավատում է և հարատև աղոթում: Հենց սրա պատճառով գուբի վրա մի քար դնելով՝ մատանիով կնքում է՝ մտածելով, որ թշնամիները կարող են սպանել նրան: Դանիելին նախանձողներն էլ են կնքում՝ մտածելով, որ միգուցե թագավորը հրամայի նրան հանել գուբից:

Ուշադրության է արժանի այն, որ Դարեհ թագավորը այնքան էլ չէր երկյուղում առյուծների՝ Դանիելին հոշոտելուց, սակայն կարծում էր, որ մարդիկ կգան և կսպանեն նրան, քանի որ գիտեր նրանց թշնամաբար գործելը, ուստի տուն գնալով՝ այն գիշեր նույնիսկ կերակուր չի ուտում և չի կարողանում քնել: Վաղ առավոտյան թագավորը շտապում է՝ քարը գուբի վրայից վերցնելու, և շատերի ներկայությամբ բարձրաձայն կանչում է՝ ասելով. «Ո՛վ Դանիել, արդյոք Աստված, որին դու միշտ աղոթում էիր, քեզ ազատե՞ց. եթե ողջ ես, անմիջապես պատասխանի՛ր»:

---

[350] Այն ժամանակ թագավորը հրամայեց, և Դանիելին բերին ու նրան նետեցին առյուծների գուբը (*Դան. 6:16*):

Արդարև, Դանիելը թագավորին պատասխանում է. «Արքա՛, հավիտյան կենդանի՛ եղիր, իմ Աստվածն Իր հրեշտակին ուղարկել է, որ փակի առյուծների բերանը՝ ինձ չվնասեն, Նրա հանդեպ իմ հավատարմությունը հայտնի դարձավ, և քո առջև նույնպես, արքա՛, հանցանք չունեմ»[351]: Այն ժամանակ արքան, սաստիկ ուրախացած, Դանիելին հանել է տալիս առյուծների գուբից, և նա, Աստծու ողորմությամբ, ընդհանրապես չէր վնասվել, քանի որ կատարյալ հավատով Նրա ողորմությանն ու պաշտպանությանն էր ապավինել:

Այժմ պատկերացրո՛ւ նախանձների թշվառ և արհամարհելի վիճակը. որովհետև երբ հայտնի է դառնում, որ Դանիելը կատարյալ անմեղ է, նրանք իրենց ընտանիքներով և զավակներով թագավորի հրամանով գուբն են նետվում, որտեղ էլ, դեռ հատակին չհասած, առյուծները հարձակվում են նրանց վրա և հոշոտում, նույնիսկ առանձնակի ուրախությամբ նրանց ոսկորները ջարդուփշուր անում:

Սրանից Դարեհը, չափազանց ուրախ և գոհ, շտապում է՝ իր թագավորության բոլոր գավառներին հատուկ հրովարտակ ուղարկելու և պատվիրելու, որ բոլորն էլ վախենան Դանիելի Աստծուց, և խոստովանելով, որ միայն Նա է հավիտենական և հրաշագործ Աստված, նաև հայտնում է, թե ինչպես է Դանիելը ողջ մնացել առյուծների գուբում:

Օրինա՛կ վերցրու. Դանիելը, նախանձ մարդկանց սպառնալիքներից չվախենալով, իր մշտական աղոթքն անխափան կատարելով, ազատվում է վերահաս և անխուսափելի մահվան

---

[351] Եվ Դանիելը ասաց արքային. «Արքա՛, թող կյանքդ հավիտյան լինի. իմ Աստվածն ուղարկեց իր Հրեշտակին և փակեց այս առյուծների բերանները, և նրանք չհոշոտեցին ինձ, որովհետև ես արդար գտնվեցի նրա առաջ, իսկ քո հանդեպ, արքա՛, ոչ մի մեղք չեմ գործել» (*Դան. 6:21,22*):

ճիրաններից, և ընդհակառակը, նրա նախանձոտ և ոխերիմ թշնամիները իրենց լարած որոգայթում հենց իրենք էլ չարաչար մահանում են:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Վերոհիշյալ Դարեհ թագավորի մահանալուց հետո նրա թոռը՝ Կյուրոսը, որը պարսիկների թագավորն էր, գրավում է նաև Բաբելոնի թագավորությունը: Դանիելը, ինչպես սիրված էր նախկին թագավորներից և մեծամեծ պատիվների և պաշտոնների էր արժանացել, նաև Կյուրոսի օրոք է լիակատար փառքի հասնում[352]: Սակայն Բաբելոնում Բել անունով մի կուռք է լինում, որին օրը տասներկու քոռ մաքուր ալյուր (2640 լ), քառասուն ոչխար և վեց մար (132 լ) գինի էր հատկացվում, նույնիսկ թագավորն էր այն պաշտում և մինչև իսկ երկրպագություն էր մատուցում այդ Բել չաստծուն:

Քանի որ Դանիելը կուռքեր չէր երկրպագում, այլ միայն ճշմարիտ Աստծուն, թագավորը հարցնում է Դանիելին, թե ինչու Բել չաստծուն չի երկրպագում, որին ի պատասխան՝ Դանիելը ասում է, թե ինքը ձեռքով պատրաստված աստվածներ չի երկրպագում, այլ երկրպագում է երկինքն ու երկիրը ստեղծող կենդանի Աստծուն, Որն իշխում է բոլորին[353]: Թագավորը

---

[352] Դանիելը թագավորի կյանքի ընկերն էր և ավելի փառք էր վայելում, քան նրա բոլոր բարեկամները (*Դան. 14:1*):

[353] Բաբելացիները Բել անունով մի կուռք ունեին.... Բայց Դանիելը իր Աստծուն էր երկրպագում: Թագավորն ասաց նրան. «Դու ինչո՞ւ չես երկրպագում Բելին»: Դանիելն ասաց. «Որովհետև ձեռակերտ կուռքեր չեմ պաշտում, այլ կենդանի Աստծուն, երկնքի և երկրի Արարչին, որ իշխանություն ունի բոլոր մարմնավոր էակների վրա» (*Դան. 14:2,5*):

հարցնում է. «Մի՞թե Բելը կենդանի չէ, չե՞ս տեսնում ինչքան է ուտում և խնում»: Այդ ժամանակ Դանիելը ծիծաղելով պատասխանում է. «Մի՛ խաբվիր, տե՛ր արքա, քանի որ նրա ներսը հող է, իսկ դուրսը՝ պղինձ, և հավիտյան ոչ կերել է և ոչ էլ խմել»:

Այս պատասխանից թագավորը բարկացած իսկույն կանչում է կռատան քրմերին և ասում. «Եթե ինձ չասեք, թե Բելի համար հատկացվող սնունդը ո՞վ է ուտում, իսկույն կմահանաք, իսկ եթե Բելն է ուտում, Դանիելը կմահանա, քանի որ հայհոյել է Բելին»: Հիշյալ քրմերը, չհաշված իրենց կանանց և որդիներին, յոթանասուն հոգի են լինում, որոնք սովորաբար այդ սնունդն են ուտում, և մինչ այդ դեպքը իրենց խորամանկ հնարքը չբացահայտվելու համար թագավորին հետևյալն են առաջարկում. «Մենք բոլորս էլ մեհյանից դուրս կգանք, դու, կերակուրը Բելի առջև դնելով, դուռը կնքի՛ր, առավոտյան արի տե՛ս, եթե Բելը կերած չի լինի, մենք մահանանք, իսկ եթե կերած լինի՝ Դանիելը»:

Քանի որ նրանք գետնի տակով մինչև սեղանի անկյունը գաղտնի ճանապարհ էին բացել և այդ ճանապարհով գնալով՝ Բելի առջևի դրված կերակուրը վերցնում էին: Այս է պատճառը, որ համարձակվում են այսպիսի պայման առաջարկելու, որին Դանիելն էլ հավանություն տալով՝ թագավորն անձամբ կերակուրը Բելի առջև է դնում, և երբ քրմերը դուրս են գալիս, Դանիելը իր մարդկանց միջոցով մոխիր է բերել տալիս և մեհյանի հատակին ցանում և թագավորի՝ կնիքով դուռը կնքելուց հետո հեռանում է:

Քրմերը, ինչպես նախկինում սովոր էին, այս անգամ էլ գաղտնի ճանապարհով իրենց կանանց և երեխաների հետ մեհյան մտնելով, կերակուրն ուտում են և գինին խմում առանց որևէ բան թողնելու: Առավոտյան թագավորը,Դանիելի հետ գալով, բացում է դուռը և սեղանին ոչինչ չտեսնելով՝

բարձրաձայն գոչում. «Ո՛վ Բել, դու մեծ ես և քո մեջ նենգություն չկա», քանի որ կարծում է, որ կերակուրն ուտողը Բելն է: Սակայն տակավին ներս չմտած՝ Դանիելը ծիծաղելով ասում է թագավորին. «Հատակի՛ն նայիր, ո՞ւմ են պատկանում այս հետքերը»: Նա, հայացքը հատակին դարձնելով, տեսնում է տղամարդկանց, կանանց և երեխաների ոտնահետքեր և հասկանալով կատարված խարդախությունը՝ իսկույն բոլոր քրմերին բռնել է տալիս: Սրանք, տեսնելով, որ իրենց նենգությունը բացահայտվել է, ստիպված են լինում թագավորին հայտնելու նաև գաղտնի դռան տեղը:

Այն ժամանակ Կյուրոս թագավորը, սաստիկ բարկանալով, բոլոր քրմերին, նրանց կանանց և երեխաներին կոտորելուց հետո Բելին էլ հանձնում է Դանիելին, որը փշրում է այն և կռատունն էլ հիմանահատակ կործանում: Այո՛, Դանիելի խոսքերը հաստատվելով՝ թագավորն ամոթով է մնում, սակայն այդ շրջանում Բաբելոնում մի մեծ վիշապ օձ է լինում, որին քաղաքի բնակիչները պաշտում են՝ որպես աստծու, ու քանի որ Բելի մասին Դանիելն ասել էր, որ պղնձից է և երբեք ոչ կերել է և ոչ էլ խմել, ուստի թագավորը նրան ասում է. «Վիշապի համա՞ր էլ կարող ես ասել, թե պղնձից է և աստված չէ, ահա կենդանի է, ուտում է և խմում, արի՛, երկրպագությո՛ւն մատուցիր կենդանի աստծուն»:

Դանիելը վճռականորեն պատասխանում է. «Ես իմ Տեր Աստծուն եմ միայն երկրպագում», և կամենալով ցույց տալ, որ սա էլ աստված չէ, ավելացնում է. «Եթե ինձ արտոնես, ես այս վիշապին առանց սրի և գավազանի կսպանեմ»: Թագավորը հրաման է տալիս, քանի որ չէր հավատում, որ կարող է սպանել: Արդ, Դանիելը, որոշ քանակությամբ յուղ, ձյութ, ճարպ և մազ վերցնելով, իրար խառնելով, եփում է, ապա մի գունդ պատրաստելով՝ գցում վիշապի երախը: Վիշապը, այս գունդը

ուտելով, այլևս չի կարողանում շնչել, ուռչելով պայթում է և սատկում. Դանիելը իրավունք է ստանում ասելու. «Այժմ տեսաք ձեր պաշտածի զորությունը»:

Թեև այս դեպքում էլ թագավորը չի բարկանում Դանիելի վրա, սակայն Բաբելոնի բնակիչները չափազանց զայրացած սկսում են քրթմնջալ, թե թագավորը հրեա է դարձել, քանի որ Բելին կործանել է, վիշապին՝ սպանել, կռատան քրմերին՝ սրի քաշել, և բոլորը միահամուռ հարձակվում են պալատի վրա և պահանջում Դանիելին իրենց հանձնել, իսկ եթե՝ ոչ, կսպանեն թագավորին էլ, նրա սերունդներին էլ: Թագավորը ճարահատյալ հանձնում է Դանիելին, որին, իսկույն տանելով, առյուծների գուբն են նետում[354]:

Այս անգամ Դանիելը վեց օր մնում է գուբում, որտեղ յոթ առյուծ է լինում: Սրանց ամեն օր երկու մարդկային մարմին և երկու ոչխար են տալիս որպես կերակուր, սակայն այլևս ուտելիք չեն տալիս, որպեսզի առյուծները, սոված մնալով, հոշոտեն Դանիելին: Այժմ տե՛ս, թե Աստված ինչպես է պահում Իր հավատարիմ ծառային: Ինչքան էլ առյուծները Դանիելի՝ գուբում եղած ժամանակ սոված են լինում, սակայն որպես հյուր են ընդունում Դանիելին և երբեք չեն վնասում, նույնիսկ չեն էլ դիպչում նրան:

Այսպիսի մեծ հրաշքը և մանավանդ Աստծուց Դանիել մարգարեի հանդեպ ցույց տված ողորմությունը ամբողջ աշխարհին, նաև Երուսաղեմի շրջակայքում բնակվող իսրայելացիներին հայտնի դարձնելու համար Հրեաստանից Ամբակում մարգարեի ձեռքով կերակուր է ուղարկվում Դանիելին. քանի որ Ամբակումն ապուր էր եփել և մեջը հաց բրդելով՝ դաշտ էր տանում, և

[354] Երբ թագավորը տեսավ, թե շատ են տագնապեցնում իրեն, ստիպված Դանիելին տվեց նրանց ձեռքը: Եվ նրանք նրան նետեցին առյուծների փոսը. Դանիելն այնտեղ մնաց վեց օր (*Դան. 14:29, 30*):

Աստծու հրեշտակը, նրան հանդիպելով, ասում է. «Այդ կերակուրը Բաբելոն Դանիելի՛ն տար, որն առյուծների գուբում է»:

Ամբակումը պատասխանում է, որ ինքը Բաբելոնը չի տեսել և չգիտի էլ, թե որտեղ է գտնվում գուբը: Այն ժամանակ Աստծու կամքով հրեշտակը Ամբակումին, մազերից բռնելով, Բաբելոն է փոխադրում և կանգնեցնում է հենց այն գուբի մոտ, որի մեջ Դանիելն էր[355]: Ամբակումը բարձրաձայն կանչում է Դանիելին. «Դանիե՛լ, Դանիե՛լ, վե՛ր կաց, վերցրո՛ւ կերակուրը, որը Աստված քեզ է ուղարկել»: Այն ժամանակ Դանիելը, Աստծուն գոհություն և փառք տալով, վերցնում և ուտում է կերակուրը, և հրեշտակը Ամբակումին անմիջապես նորից իր տեղն է վերադարձնում[356]:

Այստեղ հարկ է պատկերացնել նախանձողների ողորմելի վիճակը. որովհետև թեև շատ են ուրախանում՝ Դանիելին առյուծների գուբը գցելով, սակայն երբ թագավորը, որը կարեկցում էր Դանիելին, յոթերորդ օրը գուբի մոտ է գալիս՝ Դանիելին ողբալու, և տեսնում է, որ Դանիելը գուբում անվնաս նստած է, բարձրաձայն աղաղակում է. «Մեծ ես Դու, Ո՛վ Աստված Դանիելի, Քեզնից բացի՝ այլ Աստված չկա»[357]: Ապա շտապում է հանելու Դանիելին և փոխարենը նրա թշնամիներին գուբը նետելու, որոնց առյուծներն իսկույն հոշոտում են,

---

[355] Հրեշտակը ձեռքը գցեց նրա գագաթին, բռնեց նրա գլխի մազերից և իր հոգու ամբողջ ուժով նրան տարավ Բաբելոն, դրեց փոսի վրա (*Դան. 14:35*):

[356] Դանիելը վեր կացավ և կերավ: Եվ Աստծու հրեշտակը նույն ժամին Ամբակումին նորից տարավ իր տեղը (*Դան. 14:38*):

[357] Թագավորը յոթներորդ օրը եկավ ողբալու Դանիելի վրա. և երբ եկավ փոսի բերանի մոտ, նայեց և տեսավ, որ Դանիելը նստած էր. աղաղակեց բարձր ձայնով և ասաց. «Մեծ ես, Դանիելի Տե՛ր Աստված, և չկա այլ աստված քեզանից բացի» (*Դան. 14:39,40*):

այնպես որ թագավորը կրկնում է, որ ամբողջ աշխարհի բնակիչները պարտավոր են երկնչել Դանիելի Աստծուց, քանի որ նա է Փրկիչ և հրաշագործ Աստված, Որը Դանիելին փրկել է առյուծների գուբից[358]:

Ոմանք կարծում են, որ այս դեպքը Նաբուգոդոնոսորի օրոք է տեղի ունեցել, սակայն երբ էլ տեղի ունեցած լինի, դրանով հայտնվել և փառավորվել է Աստծու ամենակարող լինելը, Նրա օրհնյալ և ամենասուրբ անունը: Մանավանդ Դանիելի և բոլոր իսրայելացիների համար ուրախության պատճառ լինելուց բացի՝ ողջ մարդկությանը խրատվելու մեծ օրինակ է, որ իրենց ունեցվածքի կամ փառասիրության համար չձգտեն միմյանց խաբելու:

Մինչև այստեղ, ջանացինք ներկայացնել Դանիել մարգարեի ժամանակ Բաբելոնում տեղի ունեցած դեպքերի համառոտակի պատմությունը, իսկ նրա գրքի յոթերորդ գլխից մինչև տասներկուերորդ գլխի ավարտը գրված մարգարեությունները ապագայում կատարվելիք բաներ են, որոնք պիտի տեղի ունենան Բաբելոնում, Պարսկաստանում, Մարաստանում, Հունաստանում, Ասորեստանում, Եգիպտոսում և այլ թագավորների օրոք, մանավանդ, առաջին հարցում հիշատակվածի համաձայն, Մեսիայի գալստյան ժամանակը, ապա աշխարհի ավարտին նեռի գալու կերպը և երեքուկես տարի տևելուց հետո նրա իշխանության վերանալու մանրամասները և ապա երկնային արքայությունը, կամ որ նույնն է, Մեսիայի հոգևոր իշխանության հավիտենական և անփոփոխ լինելով, մշտնջենապես լինելը, և այս ամենը Աստծու ողորմությամբ որպես

---

[358] Այն ժամանակ արքան ասաց. «Երկրի բոլոր բնակիչներ միաբան, թող երկրպագեն Դանիելի Աստծուն, քանզի Նա է սքանչելիքներ և հրաշքներ կատարող աշխարհի Փրկիչը, Որը Դանիելին փրկեց առյուծների գբից» (*Դան. 14:42*):

իրականություն հայտնվել է Դանիել մարգարեին, ինչպես գրված է նրա գրքում և մանրամասնորեն ներկայացված նաև մեկնողական գրականության մեջ:

Վերոհիշյալ կետերը, որոնք Աստված հայտնում է Դանիելին, իրենց ժամանակին թողնելով, առայժմ համառոտակի պատմենք, թե իսրայելացիները ինչպես են ազատվում Բաբելոնի գերությունից:

Հարց Գ: **Ո՞ր թագավորի օրոք են իսրայելացիները ազատվում Բաբելոնի գերությունից:**

Պատասխան: Կյուրոս թագավորի օրոք: Քանի որ (ինչպես Դանիելի տասնչորսերորդ գլխում է հիշատակվել) Բաբելոնի իշխանությունը Կյուրոսին անցնելու առաջին իսկ տարում Իսրայելի ժողովուրդը ազատվում է գերությունից: Սակայն ոչ թե Կյուրոսն իր կամքով է այսպիսի բարիք գործում հրեաների հանդեպ, այլ աստվածային կամքով և ողորմությամբ է լինում այս շնորհը, քանի որ դեռևս հիշյալի՝ աշխարհ գալուց երկու հարյուր տարի առաջ Եսայի մարգարեն է գրել, որ Կյուրոս թագավորի ձեռքով պիտի հրեաներն ազատվեն գերությունից[359]:

Այս է պատճառը, որ Կյուրոսն իր իշխանությանը ենթակա բոլոր հրեաների համար հրովարտակ է արձակում, որ վերադառնան Իսրայել և Աստծու տաճարը վերակառուցեն, իսկ նրանք, ովքեր չեն կամենա գնալ, տաճարը կառուցելուն անհրաժեշտ ոսկի, արծաթ և անհրաժեշտ պարագաները հոգան:

Թեև ոմանք, իրենց գերության վայրում կալվածքներ, տուն և ապրելու այլ միջոցներ ձեռք բերած լինելով, Երուսաղեմ չեն գնում, սակայն, այնուամենայնիվ, նպաստում են

[359] Այսպես է ասում Տեր Աստված իր օծյալ Կյուրոսին. «Ես բռնեցի քո աջ ձեռքը.... նա կկառուցի իմ քաղաքը և իմ գերված ժողովրդին հետ կբերի» (*Ես. 45:1, 13*):

տաճարը կառուցելուն: Նաև Կյուրոսը տաճարի ոսկյա, արծաթյա սպասքները (որոնք Նաբուգոդոնոսորը գերեվարել էր Երուսաղեմից և մեհյանում դրել (տե՛ս ՀԹ հարցը), հանձնում է հրեաներին, որ Երուսաղեմ տանեն:

Երբ իսրայելացիները Աստծու ողորմությամբ այսպիսի արտոնություն են ստանում, ծառաներից, աղախիններից և մանուկներից բացի, քառասուներկու հազար երեք հարյուր վաթսուներկու հոգի հավաքվում են, և մեծ ուրախությամբ Երուսաղեմի գավառ գալով՝ ամեն մարդ իր տարածքի և կալվածքի տերն է դառնում: Ապա ցանկանում են վերադարձողների ցեղերը ճշտել, և քահանաներից ոմանք չեն կարողանում ապացուցել իրենց ցեղային պատկանելությունը, ուստի մինչև ապացուցելը զրկվում են քահանայությունից:

Ապա բոլորը հավաքվում են Երուսաղեմում, որտեղ հովսեդիկացի Հեսուն, սաղաթիելցի Զորաբաբելը[360] և նրանց եղբայրները, տաճարում կառուցելով սեղանը, Մովսեսի օրենքի համաձայն, ամենայն պատկառանքով և երկյուղածությամբ, ավանդական զոհեր են մատուցում: Մանավանդ Սիդոնի կողմերից կառուցելու համար անհրաժեշտ նյութեր բերել տալով՝ աշխատողներ և վերակացուներ են ընտրում, և երբ տաճարի հիմն են դնում, փողեր հնչեցնելով՝ սաղմոսերգություններով և գոհաբանական մաղթանքներով մեծ հանդես են կատարում[361]:

Թեև նրանք, ովքեր նախկինում տաճարը չէին տեսել, մեծապես ի սրտե ցնծում են, սակայն տաճարն ավերվելուց առաջ

---

[360] Ըստ Սուրբ գրքի՝ Զորոբաբել:

[361] Եվ ընկերն ընկերոջն ասում էր. «Օրհնաբանենք և գոհություն մատուցենք Տիրոջը, քանզի քաղցր է նրա ողորմածությունը Իսրայելի վրա»: Եվ ամբողջ ժողովուրդը բարձրաձայն օրհնում էր Իսրայելի Տեր Աստծուն, քանզի արդեն զցել էին Տիրոջ տան հիմքերը (*Բ Եզր. 3:11*):

այն տեսնողները դառնապես արտասվում են, քանի որ հույս չեն ունենում, որ կկարողանան նախկին շքեղությամբ վերաշինել, և երկու կողմի ձայները միախառնվելով՝ հեռուներն էր հասնում:

Հարց Դ: **Տաճարի վերակառուցումն արգելող թշնամիներ լինո՞ւմ են:**

Պատասխան: Այո,՛ լինում են: Քանի որ Սամարիայի բնակիչները (Ասորեստանի Սալմանասար թագավորը Սամարիան այլ ցեղերով էր բնակեցրել), Երուսաղեմ գալով, ցանկանում են մասնակցել կառուցմանը, սակայն նրանք, վաղնջական ժամանակներից Հուդայի և Բենիամինի ցեղերին թշնամի լինելով, վերոհիշյալ Զորաբաբելը, Հեսուն մյուսները, նրանց չընդունելով, առարկում են, որովհետև Կյուրոս թագավորն իրենց էր հանձնարարել կառուցումը, և քանի որ գիտեին, որ նրանց դիտավորությունը քանդելն է կամ էլ արգելելը:

Արդարև, այս պատասխանը ստանալուց հետո նրանք ցույց են տալիս իրենց սրտերում պահած թշնամությունը և զանազան նեղություններ պատճառելուց բացի՝ ի վերջո կառուցումը խափանվելու պատճառ լինում: Քանի որ նույն ժամանակ Կյուրոսը մահանում է, և նրա փոխարեն Արտաշես անունով մի մարդ է թագավորում: Վերոհիշյալ սամարացիները, որոնք ընդդիմանում են տաճարի շինությանը, Արտաշեսին հրեաների մասին շատ ստեր են գրում, գանգատվում, որ Բաբելոնի գերությունից Իսրայել գալով՝ սկսում են կառուցել Երուսաղեմ քաղաքը, սակայն այդ քաղաքը և դրա թագավորները հենց սկզբից ապստամբներ են եղել. թերևս հենց կառուցվի, այլևս չեն հնազանդվի:

Արտաշեսը, չքննելով սույն գործը և միայն վերոհիշյալ քսու մարդկանց խոսքերին հավատալով, հրամայում է, որ

կառուցումը դադարեցնեն, և կառուցումը տասներկու տարի ընդմիջվում է, և երբ Արտաշեսին սպանում են, և նրան հաջորդում է Դարեհ անունով մի ուրիշ անձ, սրա հրամանով նոր միայն իսրայելացիները ձեռնամուխ են լինում կառուցումը շարունակելուն:

Հարց Ե: **Հրեաներն ո՞ւմ միջոցով են արտոնություն ստանում Դարեհից:**

Պատասխան: Վերոհիշյալ Զորաբաբելի միջոցով: Որովհետև համարվում է, որ նա, Դարեհի հետ վաղեմի մտերիմ լինելով, Երուսաղեմը և տաճարը միաժամանակ կառուցելու հրաման ձեռք բերելու համար ուղղակի նրա մոտ է գնում: Աստծու ողորմությամբ Դարեհը նրան պատվելով այլ երկու մարդկանց հետ իր ննջարանի պահապաններ է նշանակում:

Ապա Դարեհը մի մեծ խնջույք է տալիս իր հարյուր քսանյոթ պարսիկ և մար իշխանների համար, որոնք իր նախարաներն էին, և ուտել- խմելուց և զվարճանալուց հետո, երբ բոլորը ցրվում են, Դարեհն էլ, իր ննջասենյակ մտնելով, ննջում է, մնում են միայն վերոհիշյալ երեք մարդիկ, որոնք, սովորության համաձայն, արքայի ննջարանը պահպանելու համար արթուն հսկում են: Միմյանց հետ զրուցելու ժամանակ պայմանավորվում են, որ ամեն մեկը մի խոսք ասի և գրի, ում խոսքն ավելի իմաստուն ու զորավոր լինի, թագավորը նրան մեծամեծ պարգևներով վարձատրի, մինչև իսկ թագավորի երկրորդ գահին նստելով՝ թագավորի ազգական կոչվի:

Այսպես որոշելուց հետո երեք սենեկապետերից մեկը գրում է. «Հաղթող և զորավոր է գինին», երկրորդը գրում է. «Թագավորն է բոլորից զորավոր», իսկ երրորդը, որ Զորաբաբելն էր, գրում է. «Զորավոր են կանայք, իսկ ճշմարտությունը բոլորից զորավոր է»: Սրանք, իրենց գրածները կնքելով,

թագավորի բարձի տակ են դնում: Երբ թագավորը արթնանալուց հետո կարդում է նրանց գրվածքները, շատ է հավանում և իսկույն կանչելով վերոհիշյալ նախարարներին՝ ատյան է գումարում, հրավիրում է երեք սենեկապետերին՝ իրենց գրվածքների բացատրությունները տալու: Ուստի նա, ով գովաբանել էր գինու զորությունը, հայտնում է, որ մարդիկ գինու զորությամբ համարձակություն են ստանում՝ զանազան՝ և՛ բարի, և՛ չար, գործեր կատարելու, ուրեմն գինին ամեն ինչից զորավոր է:

Նույն ձևով էլ նա, ով թագավորի մասին էր գրել, իր գրածն ապացուցելու համար թագավորի ազդեցությունն ու զորությունն է ներկայացնում. նրան բոլորը հնազանդվում են՝ մեծ թե փոքր, նրա բարեկամության և պաշտպանության կարիքն ունեն և այլն, ուրեմն բոլորից հզորը թագավորն է: Իսկ Զորաբաբելը, որ կանանց և ճշմարտության մասին էր գրել, նախ՝ փաստերով հաստատում է, որ կանայք շատ զորավոր են, քանի որ կանանց սերն իրենց տղամարդիկ ընդունել և ստուգել են, և ապա ավելացնում է. «Ամեն ինչից զորավորագույնը ճշմարտությունն է, որ բոլորին հաղթում է, և ոչ մեկը չի կարող դրան ընդդիմանալ. դա հավիտյան կա, և բոլոր արարածները դրա վրա են իրենց հույսը դնում, դրա մեջ անիրավություն չկա, դրա տերն Աստված է, և Ինքն իսկ Աստված Ճշմարտություն է»:

Երբ ներկաները լսում են ճշմարտության մասին Զորաբաբելի խոսքերը, բոլորը միահամուռ և միաձայն բարձրաձայն հայտարարում են. «Արդարև, մեծ և հզորագույնը ճշմարտությունն է, որը բոլորին հաղթող է»[362]: Այն ժամանակ թագավորն էլ, Զորաբաբելի խոսքերն անչափ հավանելով, նրան առաջարկում է խնդրել, ինչ ուզում է, քանի որ նա ընկերներից

---

[362] Այդ ժամանակ բոլոր հավաքվածները բարձրաձայն աղաղակեցին և ասացին. «Մեծ է ճշմարտությունը, և՛ հաղթող, և՛ զորավոր» (*Ա Եզր. 4:41*):

ավելի իմաստուն է գտնվել, և թագավորի երկրորդ գահին նստելով՝ իր իմաստության համար թագավորի ազգական պիտի կոչվի:

Սակայն Զորաբաբելը, որ եկել էր՝ հատկապես Երուսաղեմի և տաճարի կառուցման համար թույլտվություն ստանալու, Աստծու ողորմությամբ այսպիսի պատեհ առիթ ստանալով, ուրիշ բան չի ցանկանում, այլ միայն Երուսաղեմի և տաճարի կառուցումը: Մանավանդ ինչպես Կյուրոս թագավորն էր մտադրվել կառուցել տաճարը, նմանապես Դարեհ թագավորն էլ է նախապես այդպիսի մտադրություն ունենում, ուստի Զորաբաբելը շտապում է ասելու. «Տե՛ր արքա, ինչպես ուխտել ես Աստծուն, այդպես էլ շտապի՛ր՝ ուխտդ կատարելու»:

Այս բանավոր խնդրանքը լսելով՝ Դարեհը նստած տեղից ոտքի է կանգնում, շտապում է համբուրելու իմաստուն պաշտոնյային և անմիջապես զորեղ հրաման է արձակում գավառապետերին, որ Զորաբաբելին և նրա հետ Երուսաղեմ գնացող հրեաներին ամեն կերպ աջակցեն և դյուրին դարձնեն ճանապարհները, և ոչ մեկը չհամարձակվի հարկերի կամ տուրքերի պատճառով նրանց երթը խոչընդոտելու, ընդհակառակը, պետք է նրանց օգնեն: Ուստի տնօրինվում է Լիբանանի անտառներից տաճարի կառուցման համար անհրաժեշտ փայտանյութ ուղարկել, և ովքեր գրավել են նրանց տարածքները, նրանց վերադարձին անպատճառ վերադարձնեն: Երբ Զորաբաբելը, Աստծու ողորմությամբ այդ հրամանը վերցնելով, դուրս է գալիս, Երուսաղեմի կողմը շրջվելով՝ բազկատարած շնորհակալություն է հայտնում Աստծուն բարերարության համար[363]:

---

[363] Երբ Զորոբաբելը դուրս եկավ թագավորի մոտից, ձեռքերը բարձրացրեց դեպի երկինք, դեպի Երուսաղեմի կողմը, օրհնեց

Ապա, երբ Զորաբաբելը, Բաբելոն գալով, տեղի իսրայելացիներին պատմում է եղելությունը, նրանք էլ, Աստծուն օրհնելով, շնորհակալ են լինում և յոթ օր ուրախության հանդես կատարում: Ուստի ովքեր փափագում են Զորաբաբելի հետ մեկնել, ճանապարհ են ընկնում և ուրախությամբ Երուսաղեմ հասնելուց հետո այս էլ երկրորդ անգամ սկսում են կառուցել տաճարը: Նույն պահին Անգե և Զաքարիա մարգարեները, Երուսաղեմում լինելով, տաճարի կառուցման մասին մարգարեական պատգամով քաջալերում են ժողովրդին, ինչպես գրված է նրանց գրքերում:

Արդարև, այս առումով իսրայելացիները չափազանց ուրախ են լինում: Երուսաղեմի շրջակայքում Դարեհի նշանակած պաշտոնյաները, շինարարության մասին լսելով, Երուսաղեմ են գալիս՝ հետաքրքրվելով՝ ում հրամանով են կառուցում, միաժամանակ ցանկանում են տեղեկանալ, թե ովքեր են շինարարներից ազդեցիկ մարդիկ, որպեսզի իրենց պարտավորությունները կատարելով և հանցավոր չհամարվելու համար Դարեհին տեղեկացնեն. ըստ որում՝ չեն էլ իմանում, որ նրա հրամանով է կառուցվում:

Զորաբաբելը պատասխանում է, որ Կյուրոս թագավորն է հրամայել կառուցել, և այն ժամանակներից կառուցումը շարունակելով՝ դեռ չեն վերջացրել: Այս պարագայում նա Դարեհի անունը չի նշում, որպեսզի նրանք գրեն Դարեհին և տեղեկանան հանգամանքներին: Հիրավի, նրանք գրում են, ինչ կամենում են, սակայն ինչպես որ Դարեհը վճռականորեն հրաման էր արձակել, այս անգամ էլ ստացած տեղեկությամբ Կյուրոսի օրոք տրված հրովարտակի արձանագրությունը որոնել, գտնել է տալիս և նորից հրամանագիր է ուղարկում, որ ոչ մեկն արգելք չլինի տաճարը

երկնքի Տեր թագավորին և ասաց.«Քեզանից է հաղթությունը, քեզանից է իմաստությունը և քեզ է վայել փառքը» (*Ա Եզր. 4:58,59*):

կառուցելուն, և ընդհակառակը, ամեն ինչով օգնեն հրեաներին, և ովքեր սույն հրամանին հակառակ վարվեն, պատժվեն, և նրանց ունեցվածքը արքունական գանձանակին տրվի:

Երբ վերոհիշյալ իշխանները կարդում են Դարեհի հրամանը, ուրախանալով իրենք էլ իրենց նպաստներով և այլ միջոցներով սկսում են օգնել տաճարը կառուցելուն: Այսպես աստվածային հատուկ ողորմությամբ և հզոր պաշտպանությամբ վերջապես տաճարի կառուցումը ավարտելուց հետո, Աստծու պատվիրանի համաձայն, ինչպես Հնգամատյանում պատգամվում էր, մեծ ուրախությամբ, փառավորությամբ, մեծ հանդիսությամբ և շքեղությամբ յոթ օր բաղարջակերաց տոն են կատարում՝ սաղմոսերգելով և Աստծուն գոհություններ մատուցելով: Նրա՝ իսրայելացիների հանդեպ ունեցած գութ ու սերը միշտ անպակաս են եղել, և խոստովանում են ինչպես իրենց մեղքերն ու հանցանքները, որոնցով Աստծու բարկությունը իրենց վրա են բարդել, այնպես էլ նրա բարությունը, գթությունը և ողորմությունը, որոնցով օգնել է իրենց նեղության և տառապանքների ժամանակ, և բազմաթիվ զոհեր մատուցելով՝ ուրախ սրտով շարունակում են հանդիսությունը, մինչև տոնական օրերն ավարտվում են:

Հարց Զ: **Հրեաները տաճարը կառուցելուց հետո միշտ հնազա՞նդ են լինում Աստծուն:**

Պատասխան: Ո՛չ, չեն լինում: Քանի որ մինչ այժմ պատմածներից պարզ է դառնում, որ երբ նրանք անվրդով են լինում, հակվում են Աստծու հրամաններին և օրենքներին հակառակ գործելու: Նաև այս դեպքում օրենքին հակառակ այլևայլ անվայել վարք են ունենում: Մանավանդ շրջակայքում ապրող կռապաշտների աղջիկներին իրենց կին առնելով՝ նրանց հետ խնամիություն և մտերմություն են հաստատում:

Այն ժամանակ Բաբելոնում քահանաների ցեղից Եզրաս անունով սուրբ և իմաստուն մի անձնավորություն, որը կատարելապես հմուտ էր օրենքներին, լսելով Երուսաղեմի հրեաների անպատկառ վարքի մասին, իր սրտում մտահղանում է ազդու միջոցներ ձեռնարկել նրանց ուղղվելու համար: Սակայն այն ժամանակ Դարեհը մահացել էր, և նրան հաջորդել էր Արտաշես Երկրորդը: Այս թագավորն էլ համակրում և պաշտպանում էր հրեաներին, և Եզրասը թագավորից հրաման է խնդրում՝ Երուսաղեմ գնալու և տեղի հրեաներին կառավարելու և կրթությանը հոգ տանելու:

Արտաշեսը ազդեցիկ հրովարտակով հրամայում է, որ ով ցանկություն ունի, Եզրասի հետ առանց արգելքի կարող է Երուսաղեմ գնալ: Մանավանդ Եզրասը կարող է, զոհաբերության համար Բաբելոնի բնակիչներից ոսկի և արծաթ հավաքելով, տանել նաև քահանաներին: Արտաշեսը և նրա խորհրդականները, ոսկի և արծաթ տալուց բացի, Երուսաղեմի կողմերում պաշտոնակալներին հրաման են տալիս՝ արքունի միջոցներից առանց խափանման որպես ընծա՝առատորեն դրամ, ցորեն, գինի և ձեթ հատկացնելու:

Նաև տաճարի բոլոր ծառայողներին, հարկերից ազատելով, խստիվ հրամայում է, որ ով ընդդիմանա Աստծու և թագավորի հրամաններին, Եզրասն իրավունք ունի նրանց պատժելու և մինչև իսկ մահվան արժանի անձանց՝ սպանելու: Ահա այսպիսի արքայական հրամանը ձեռքին, Աստծուն օրհնելով, որ իրեն հաջողվել է թագավորի սրտում գութ շարժել առ իր տարաբախտ ժողովուրդ՝ Եզրասը պատրաստվում է մեկնել: Իր հետ գնալու ցանկություն հայտնած պատվարժան մարդիկ մեծ խմբով ուրախությամբ ճանապարհ են ընկնում, և քանի որ ճանապարհն ապահով չէր, աղոթում են և ծոմ են պահում, որ ճանապարհին Աստված իրենց պաշտպանի: Աստծու

ողորմությամբ անվտանգ հասնելով Երուսաղեմ՝ իրենց բերած ողջ գումարը հանձնում են տաճարում ծառայող քահանաներին և զոհաբերությամբ փառք տալիս Աստծուն:

Շտապում են՝ թագավորի հրամանի գրությունը ցույց տալու այն տարածքների պաշտոնյաներին, սրանք էլ հարգանքով ընդունում են և մեծ պատվի արժանացնում նրանց, միաժամանակ նաև տաճարը, որին էլ ընծայվում են անհրաժեշտ նվիրատվությունները: Այս պարագաներով կռապաշտների շրջանում բարձրանում է հրեաների հարգանքն ու պատիվը, և բոլորն էլ զգուշանում են այդ ժողովրդին բացահայտ նեղություն տալուց:

Ապա Եզրասը փափագում է ուշադրություն դարձնել ժողովրդի ներքին կյանքին և երբ լսում է, որ օրենքին հակառակ՝ կռապաշտների հետ մտերմիկ հարաբերություններ են հաստատել և նրանց աղջիկներին կնության առել, հանդերձը պատռում, փետում է մորուքը և գլխի մազերը, լացուկոծով մինչև երեկոյան զոհի ժամանակը տրտմությունից անկարող է լինում բերանը բացելու և խոսելու, ապա հուսալով Աստծու ողորմությունը, տաճարի առջև ծնկի գալով՝ խոսում է, որ ժողովուրդը ծանրորեն մեղանչել է, և որ Աստված տակավին մեծ համբերությամբ և ներողամիտ աչքով է նայում իր ժողովրդին:

Հարց է: **Երբ Եզրասը ժողովրդի վարքն ուղղելու համար եռանդով տքնում է, ժողովուրդը հնազանդվո՞ւմ է նրան:**

Պատասխան: Հնազանդվում է: Որովհետև իմանալով, որ Եզրասի գործադրած ջանքերը իրենց ամեն կերպ օգտակար և փրկարար են, այր ու կին, մեծ ու փոքր, արտասուքներով և հեծեծանքով այնպիսի սուգի և տրտմության են մատնվում, որ իրենք էլ խոսելու անկարող են լինում: Հետո Հեքոնիա

անունով մեկը Եզրասին ասում է. «Աստծու օրենքների դեմ մեղանչել ենք, այժմ բոլորս էլ Աստծու առջև երդվենք մեր տներից դուրս հանել և՛ կռապաշտներից կնության առած կանանց, և՛ նրանցից ծնված երեխաներին, ուրեմն վե՛ր կաց, գործադրի՛ր, ինչ օրենքն է հրամայում, քանի որ մենք քեզ հետ միախորհուրդ ենք. ինչ հրամայես, կատարյալ հնազանդությամբ պատրաստ ենք կատարելու»:

Եզրասը, այս խոսքերը լսելով, քահանաների և ղևտացիների մեծերին երդվեցնելով, որ Աստծու օրենքները անթերի գործադրեն, Ելիսուբի որդի Հովհան քահանայի տուն է գնում, որտեղ տրտմությունից ո՛չ հաց է ուտում և ո՛չ էլ ջուր խմում, այլ արտասվելով ողբում է ժողովրդի մեղքը: Բայց այնուհետև իսրայելացիների բոլոր քաղաքները մարդիկ ուղարկելով՝ պատվիրում է, որ գերությունից վերադարձած ամբողջ ժողովուրդը երեք օրվա ընթացքում Երուսաղեմում հավաքվի, իսկ ով չգա, նրանց ստացվածքը գրավվի, և իրենք էլ աքսորվեն: Այն ժամանակ Հուդայի և Բենիամինի ցեղերը հնազանդվելով գալիս են Երուսաղեմ, և երբ բոլորը հավաքվում են տաճարի բակում, Եզրասը, Աստծու օրենքները ժողովրդին պատգամելով, պատվիրում է, որ կռապաշտներից կնության առած կանանց և նրանց երեխաներին դուրս հանեն իրենց տներից և իրենց երկրից:

Թեև ժողովուրդը միաձայն խոստանում է հնազանդվել Եզրասի այս խոսքին, սակայն եղանակը ձմեռային լինելով՝ անձրևի և ցրտի պատճառով ժողովուրդը դողում է՝ մանավանդ տեսնելով, որ այդ գործը մեկ կամ երկու օրվա կատարելիք չէ, Եզրասից խնդրում են, որ նախ՝ իրենց տները վերադառնան, հետո՝ թող հետևող պաշտոնյաներ կարգվեն, և ուր որ կռապաշտ կանայք կան, երկրից անպատճառ հեռացնելու աստվածային օրենքի համաձայն՝ ամենայն ճշմարտությամբ իրականացեն:

Սույն առաջարկն ընդունելով՝ Եզրասը հատուկ նշանակված մարդկանց միջոցով օրենքին հակառակ կնության վերցված կանանց և նրանց երեխաներին իսրայելացիների տներից և երկրից վտարել է տալիս: Հետո բոլորը հավաքվում են տաճարի դռան մոտ, և ի լուր բոլորի՝ Եզրասը կարդում է Հնգամատյանը, որն ուշադրությամբ ունկնդրելուց հետո երկրպագում են Աստծուն: Եվ քանի որ օրենքին հնազանդվելով՝ թողնում են իրենց չար գործերը, այդ օրը սրբությամբ պահելով՝ հանդես են կատարում Երուսաղեմում, որտեղ հարուստ և կարողություն ունեցող մարդիկ առատ նպաստներով օգնում են աղքատներին, այսպիսով, բոլորը միասին հոգևոր և մարմնավոր անմեղ ուրախությամբ և խնդությամբ ուտում-խմում և զվարճանում են:

Իրոք, սրա համար Եզրասը և ամբողջ ժողովուրդը ուրախանում են, քանի որ Աստծու ողորմությամբ տաճարը կառուցել վերջացրել էին. Մովսեսի օրենքներին համապատասխան՝ զոհաբերություններ են լինում, քահանաները և ղևտացիները հատկացվում են տաճարի ծառայությանը, և ժողովուրդն էլ օրենքին հակառակ վարքից հետ է դառնում, սակայն շրջակա հեթանոսները, հեթանոս կանանց և երեխաներին վռնդելն իրենց հասցված ծանր նախատինք և անպատվություն համարելով, մանավանդ նրանք դեռ հին ժամանակներից թշնամի էին իսրայելացիների, այս անգամ առավել ևս թշնամանալով՝ սկսում են սաստիկ նեղել և անհանգստացնել իսրայելացիներին:

Արդարև թագավորից վախենալով՝ բացահայտորեն պատերազմելու համարձակություն չեն ունենում: Սակայն գիշերը գաղտնի գալով՝ կոտրում են Երուսաղեմի դարպասները և այրում, քանի որ քաղաքի պարիսպը դեռ ամբողջությամբ կառուցված չէր: Արդ, նույն այդ ժամանակահատվածում

Արտաշես թագավորը Շոշ քաղաքում էր գտնվում: Նա Նեեմի անունով մի տակառապետ ուներ, որը, հավատարիմ և խոհեմ մարդ լինելով, վայելում էր Արտաշեսի հարգանքն ու պատիվը:

Նեեմին, լսելով, որ Երուսաղեմում հրեաները հարստահարվում են և նեղություն կրում, մանավանդ, որ քաղաքի պարիսպն էլ ամբողջությամբ դեռ կառուցված չէ, շատ է տխրում և սուգ պահելով՝ արտասուքով դիմում է Աստծուն, որ Երուսաղեմն ազատի թշնամուց: Մի օր էլ երբ Արտաշեսին գինի էր տալիս, արքան նկատում է նրա տխուր դեմքը և քաղցրությամբ հարցնում պատճառը, որին ի պատասխան՝ Նեեմին խոնարհաբար ասում է, որ Երուսաղեմն ու իր հայրենիքը նեղության մեջ են, և բնական է, ինքն էլ չի կարող ուրախ լինել, ուստի աղաչում է թագավորին, որ բարեհաճի իրեն Երուսաղեմ ուղարկել քաղաքի պարիսպը կառուցելու համար:

Արտաշեսն Աստծու ողորմությամբ հավանություն է տալիս Նեեմիի խնդրանքին և անհրաժեշտ հրամաններ տալիս, սակայն պայմանով, որ գործը վերջացնելուց հետո նորից վերադառնա, որին Նեեմին հոժարակամ համաձայնում է: Նաև գրություններ է հղում կարևոր պետական պաշտոնյաներին, որպեսզի Նեեմին ապահովությամբ Երուսաղեմ հասնի:

Նեեմին, Երուսաղեմ հասնելով, անձամբ շրջում է Երուսաղեմի պարսպի շուրջը և տեղեկանում վիճակին, ապա քահանաներին և ազդեցիկ մարդկանց հայտնում է իր գալու նպատակը, որից քաջալերված՝ նրանք սկսում են եռանդով և ոգևորությամբ ձեռնամուխ լինել պարսպի կառուցմանը: Կառուցումը շտապ ավարտելու համար աշխատողները խմբերի են բաժանվում և վերակացուներ կարգելով՝ ամեն մի խմբի կառուցվելիք հատվածները որոշում, որպեսզի յուրաքանչյուրը, իր կառուցելու տեղն իմանալով, եռանդորեն առաջ տանի գործը, քանի որ թշնամիները ջանք չէին խնայում՝

խոչընդոտելու կառուցումը: Ոմանք, նրանց ծաղրելով, ասում էին, թե դրանց կառուցած պարսպին աղվեսն էլ բարձրանա, իսկույն կքանդվի:

Թեև Նեեմին և բոլոր հրեաները կատարյալ հավատով են խնդրում Աստծու օգնությունը, սակայն մարդկայնորեն իրենց ձեռքից եկածն էլ գործադրում են, ուստի աշխատողներին զինված ջոկատներ էլ են հատկացվում, որպեսզի եթե թշնամին հանկարծ հարձակվի, կարողանան դիմադրել: Արդարև, նրանք այնպիսի եռանդով և ոգևորությամբ են գործում, որ մի ձեռքում՝ զենքը, մյուս ձեռքով էլ աշխատողներին օգնելու համար անհրաժեշտ քար ու հող են տալիս, մինչև իսկ աշխատողներն էլ իրենց հետ զենք են ունենում, որ անհրաժեշտության դեպքում գործադրեն:

Սրանից բացի, քանի որ պարիսպը շատ մեծ էր, տեղ-տեղ փողհարներ են նշանակում, որ թշնամու գալու ժամանակ ազդանշանով տեղեկացնեն և միավորված դիմակայեն նրան: Նաև աշխատողների մի մասը՝ առավոտյան, մի մասը գիշերն է աշխատում, որպեսզի շինարարությունն օր առաջ ավարտվի, այնպես որ Աստծու ողորմությամբ հիսուն օր հետո ամբողջ պարիսպը հաջողությամբ կառուցում, վերջացնում են:

Սակայն մինչ ժողովուրդը, այսպիսի նեղությունների ենթարկվելով, մտահոգվում է ապրուստի մասին, ահա պետական տուրքը գանձող պաշտոնյաները գալով սկսում են բավական նեղություն պատճառել, այնպես որ նրանց ցավագին աղաղակները, ավելի են սաստկանում, և Նեեմին ստիպված բոլոր կառավարիչներին մեկտեղ է հավաքում և անիրավների ձեռքից պաշտոնները վերցնելով՝ ինքը ոչ միայն ոչ մեկից բռնությամբ բան չի պահանջում, այլև շատերին ինքն է ապրուստ տալիս:

Հարց Ը: **Նեեմիի ջանքերին ընդդիմացող մարդիկ լինո՞ւմ են:**

Պատասխան: Լինում են: Որովհետև Երուսաղեմը կառուցել չցանկացողները, չկարողանալով բացահայտորեն խոչընդոտել, Սանաբաղատ և Տուբիա անուններով երկու անձանց միջոցով, որոնք արդեն իսկ անչափ չար մարդիկ էին, և որոնց հետ նույնիսկ որոշ իսրայելացիներ էին միավորվել, նենգությամբ ցանկանում են սպանել Նեեմիին, սակայն իրենց նենգությունը քողարկելու համար բազմիցս մարդիկ ուղարկելով՝ նրան հրավիրում են խորհրդակցության, նա էլ, իմանալով նրանց չար մտադրությունը, մերժում է հրավերները:

Սակայն Սանաբաղատը չհանգստանալով, նրան վախեցնելու համար նորից լուր է ուղարկում՝ ասելով. «Քո մասին լսել ենք, որ թագավոր պիտի դառնաս, ուստի քանի դեռ այս լուրը թագավորին չի հասել արի՛՝ խորհրդակցենք»: Այդուհանդերձ, Նեեմին քաջությամբ պատասխանում է, որ այդ լուրերը հնարողը հենց նա է, և նրա մոտ չգնալով՝ նորից նրա խորամանկ մտադրությունն ի դերև է ելնում, և անզգամ մարդը ճարահատյալ մի սուտ մարգարե է կաշառում դրամով, որ նրա թելադրանքով Նեեմիի տաճարում ապաստանի, և այդպիսով, պետության դեմ մեղավոր համարվի: Սակայն Նեեմին, Աստծուն ապավինելով և իմանալով Սանաբաղատի խոսքերի ստությունը, երբեք չի վախենում, ուստի թշնամիները, տեսնելով նրա քաջասրտությունը, սկսում են ակնածել և վախենալ նրանից, քանի որ հասկանում են, որ Աստված օգնում է Իր հավատարիմ և ողջամիտ ծառային:

Հետո Նեեմին պարսպի դարպասների մոտ պահապաններ է կարգում, որ, արևը չծագած, դարպասները չբացեն, քանի որ դեռևս տներն ամբողջությամբ չէին կառուցվել, և քիչ բնակչություն կար քաղաքում: Նաև որպեսզի Նեեմին իմանա,

թե որքան է Բաբելոնից Զորաբաբելի և Հեսուի հետ եկած ժողովրդի քանակը, հավաքում է տաճարում, որպեսզի մատյանում արձանագրվի, և այս մարդահամարը կազմելիս նրան օգնում են քահանաները:

Այն ժամանակ Եզրասը խուռներամ բազմության ներկայությամբ վերստին կարդում է Հնգամատյանը, և ժողովուրդը, ուշադրությամբ ունկնդրելով, ամենայն հնազանդությամբ ապաշխարում է և չար գործերից հետ դառնալուց բացի, քուրձ հագնելով՝ իրենց գլխին մոխիր են լցնում և աղոթելով խոստովանում ոչ միայն իսրայելացիների հանդեպ Աստծու ողորմությունը, այլև իրենց հաճախակի օրինազանցությունները և ուխտում են այսուհետև միշտ հավատարիմ և հնազանդ մնալ Աստծուն:

Ինչ բանավոր ուխտում են և խոստովանում, թղթին են հանձնում, որը ժողովրդի մեծամեծները կնքում են, որպեսզի որոշակի ժամանակ հետո չմեղանչեն, մանավանդ վճռում են, որ անիծյալ է այն մարդը, որն օրենքին հակառակ է գործում: Դարձյալ ուխտում են ողորմություն տալ աղքատներին և տաճարին, նաև քահանաներին վճարվելիք տուրքը այսուհետև անխափան հատուցել: Նեեմին նաև համոզում է ժողովրդի մեծամեծներին, որ Երուսաղեմում բնակվեն, և ժողովրդից էլ տասից մեկին այնտեղ է բնակեցնում, որպեսզի Երուսաղեմը օրըստօրե շենանա և ծաղկի, իսկ մնացած ժողովրդին հրաման է տալիս, որ ամեն մարդ իր քաղաք գնա և կառավարվի:

Այսպիսով, Նեեմին, տասներկու տարի Երուսաղեմում մնալով, շատ օգտակար է լինում ժողովրդին և բազում բարեկարգություններ մտցնում նրանց կենցաղում: Ապա, ինչպես խոստացել էր Արտաշես թագավորին, գնում է նրա մոտ և միառժամանակ մնալուց հետո դարձյալ թագավորի հրամանով Երուսաղեմ գալիս: Սակայն փոխանակ ժողովրդին իր թողած

վիճակում տեսնելու, չար վարքուբարքով տեսնելով՝ սաստիկ տրտմում է:

Քանի որ Նեեմիի՝ Երուսաղեմից մեկնելուց հետո ժողովուրդը դարձյալ սկսել էր հեթանոսներից կին առնել՝ օրենքին հակառակ: Մանավանդ Եղիասիբ քահանայապետը, որ վերոհիշյալ Տուբիայի բարեկամն էր, այդ անզգամ մարդում տաճարում տուն-տեղ էր տվել: Նաև տաճարում բնակվող քահանայապետերն ու ղևտացիները, ապրուստի միջոց չունենալով, ստիպված էին հողագործությամբ ապրելու: Դարձյալ, Նեեմիին սպանել ցանկացող վերոհիշյալ Սանաբաղատը, Երուսաղեմում բնակվելով, ժողովրդին այլևայլ վնասներ և չարիք պատճառելուց բացի, շաբաթը չպահելու պատճառ է լինում:

Նեեմին ջանում է վերացնել այս բոլոր անարժան ու վատ սովորություններն ու անկարգությունները, որոնք դեմ էին օրենքին, և այդ անկարգությունների և զեղծարարությունների հեղինակներին, Երուսաղեմից արտաքսելով, պատժում է: Քահանաներին և ղևտացիներին կանչելով՝ նախկինի նման տաճարի ծառայությանն է հատկացնում, և կանոնավորում նրանց ապրելու համար անհրաժեշտ միջոցները, որպեսզի առանց աշխարհիկ գործերի և զբաղմունքների միշտ տաճարի ծառայությամբ զբաղվեն, ինչպես վայելում է Ամենասուրբ Աստծու պաշտոնյաներին, և ինչպես Մովսեսի միջոցով տրված աստվածային օրենքն է խստիվ պահանջում:

Հարկ է օրինակ վերցնել Նեեմիի հազվագյուտ և չքնաղ առաքինությունից. որովհետև մինչ նա թագավորական պալատում ճոխ և հանգիստ կյանք էր վարում, ազգի հանդեպ ունեցած անձնվեր սիրո պատճառով արհամարհում է ամեն աշխարհիկ զվարճություն, պատիվ և դիրք և իր բուն հայրենիքի օգուտի համար հանձն է առնում թողնել իր հանգիստը, միայն օրենքի և ազգի սիրույն նախանձախնդրությամբ լցված,

կամավոր ամեն տեսակ նեղությունների և վտանգների ենթարկվելով՝ երկու անգամ Պարսկաստանից Երուսաղեմ է ճանապարհորդում: Մանավանդ Երուսաղեմ քաղաքի չար և ամբարիշտ մարդկանցից կրած նեղությունը, տառապանքն ու չարչարանքներն անտանելի էին:

Սակայն Նեեմին, հույսը Աստծու ամենակալ զորությանը և Նրա անսպառ ողորմությանը դնելով, ապավինելով Նրա աստվածային օգնությանը և պաշտպանությանը, հաղթահարում է ամեն դժվարություն, իր բարեմիտ համբերությամբ բոլոր անհաղթահարելի համարվող խոչընդոտներն ու խնդիրները և իր սիրելի ազգին մեծամեծ և փրկարար ծառայություններ մատուցելով՝ ինքն էլ փառավոր և մեծահամբավ անուն է թողնում երկրում:

Արդ, մինչ այժմ ներկայացված պատմությունից հայտնի է, որ Պարսկաստանի թագավորը ինչքան իշխում է Հրեաստանում, հրեաները հանգիստ և խաղաղ են ապրում, որոնց պատմությունները, Դանիելի մարգարեի և Եզրասի գրքերից քաղելով, համառոտեցինք, իսկ այսուհետև Մակաբայեցիների գրքից քաղված համառոտ պատմություններից կերևա, թե հրեաները ինչքան նեղություն և հալածանք են կրում այն ազգերից և թագավորներից, որոնց իշխանությանը հպատակվում են պարսկական բարեբեր հպատակությունից հետո:

Հարց Թ: **Պարսիկ թագավորներից հետո ո՞վ է իշխում Հրեաստանում:**

Պատասխան: Երբեմն Եգիպտոսի և երբեմն ասորիների թագավորները: Որովհետև Արտաշեսի մահանալով՝ Դարեհ անունով մեկ ուրիշն է թագավորում Պարսկաստանում, որին հաղթելով՝ Ալեքսանդր Մեծը այնքան է հզորանում, որ տասներկու տարի եթե ոչ ամբողջ աշխարհին, ապա գոնե նրա մեծ

մասին է տիրում և թագավորում, ապա սույն աշխարհակալ թագավորը մահանում է:

Սակայն նա որդի չի ունենում, ուստի նրա թագավորությունը բաժանվում է իր սիրելի չորս իշխանների միջև, որոնք մանկությունից նրա հետ էին սնվում և մեծանում[364]: Այս իշխաններից մեկը՝ Եգիպտոսի, մյուսը՝ Ասորեստանի, երրորդը՝ Ռումելի կողմերում, իսկ չորրորդը՝ Փոքր Ասիայի թագավոր է լինում:

Հարկ է իմանալ, որ սրանց հաջորդների և սերունդների միջև անպակաս էին պատերազմներն ու թշնամանքը. բազմիցս միմյանց դեմ պատերազմելուց բացի՝ օրըստօրե առավել չարանում և անզգամանում են[365]:

Հրեաստանը սահմանակից լինելով Եգիպտոսին և Ասորեստանին, երբ այդ երկու ազգերը պատերազմում են միմյանց դեմ, իսրայելացիները մեծ վնասներ են կրում, մանավանդ Իսրայելը թագավորություն չլինելով՝ ո՛ր թագավորը հաղթում է, տիրում է Իսրայելին, իսրայելացիներն էլ ստիպված հնազանդվում են նրան և տիրող թագավորին հարկեր վճարում, այսուհանդերձ հնարավորինս իրենք իրենց կառավարելով՝ տոկում են այդ արտաքին չարիքին, քանի դեռ ոչ մեկը չի բռնանում նրանց օրենքներին:

Երկար ժամանակ այսպես են կառավարվում, սակայն Ալեքսանդրի իշխանների հաջորդներից Պտղոմեոս Փիլոպատովրի[366]՝ Եգիպտոսի թագավոր լինելու ժամանակ մեծ

---

[364] (Ալեքսանդրը) երբ տեսավ, որ մեռնում է, կանչեց մանկուց իր հետ սնված-դաստիարակված ծառաներին՝ իր կողմից փառքի արժանացած իր չորս կաթնեղբայրներին, ու քանի դեռ կենդանի էր, իր թագավորությունը բաժանեց և տվեց նրանց (*Ա Մակ. 1:7*):

[365] *Դան. 8 և 11 գլուխներ*:

[366] Պտղոմեոս Դ Փիլոպատոր (Սիրող հայր, գահակալել է 221–204 թթ. Ք. Ծ. ա.:

Անտիոքոսի իշխանությունը տարածվում է նաև Ասորեստանում: Սրանք, միմյանց հակառակորդ և թշնամի լինելով, պատերազմում են Եգիպտոսի և Գազա քաղաքի միջև գտնվող Հռափա կոչվող վայրում, և Անտիոքոսը, պարտություն կրելով, փախչում է: Հաղթանակից հետո Պտղոմեոսը սկսում է այցելել շրջակա երկրներ և տեսակ-տեսակ պարգևներով գրավել նրանց սրտերը, իսկ Իսրայելի ցեղերի ծերերը երկյուղից իրենք են ընծաներ ուղարկում նրան:

Երբ Պտղոմեոսը Երուսաղեմ էլ է այցելում, տաճար մտնելով, նրա ճարտարապետությամբ և կահավորանքով հիանալով, ցանկանում է Սրբությունների Սրբոց մտնել: Սակայն քանի որ Աստծու պատվիրանի համաձայն՝ միայն տարին մեկ անգամ միայն քահանայապետը կարող էր մտնել, և ուրիշ ոչ մեկը (տե՛ս Չորրորդ դար, Ժ հարցը), այս է պատճառը, որ բոլոր քահանաները աղաչում և խոնարհաբար թագավորին հայտնում են, որ նրա այնտեղ մտնելն իրենց օրենքներին հակառակ է, քաղաքի բնակիչներն էլ՝ այր ու կին, միաձայն աղաղակ բարձրացնելուց բացի, պատերազմելու պատրաստություն են տեսնում, քանի որ սրբավայրը պղծելը տեսնելու փոխարեն ավելի լավ են համարում մահանալ: Ծերունիները հազիվհազ հանգստացնում են ժողովրդին, իսկ հպարտ և համառ Պտղոմեոսը ոչ մի կերպ չի համոզվում:

Այնժամ ամբողջ ժողովուրդը, աստվածային օգնությանն ապավինելով, խնդրում է Աստծուն, որ թույլ չտա՝ օրենքը ոտնակոխ լինի, և այնպիսի սրտահույզ հառաչանքներով են աղաղակ բարձրացնում, որ թվում է, թե քաղաքի պարիսպներն անգամ աղաղակում են այս անօրեն ոտնահարության դեմ և բողոքում թագավորի ամբարիշտ մտադրության և ոտնձգության դեմ: Նաև քահանաներն են աղոթում և Աստծու՝ իսրայելացիներին ցուցաբերած բարություններն ու շնորհները

խոստովանելով՝ խնդրում են, որ այս անգամ էլ Իր գթառատ ողորմությունը չխնայի իրենց համար:

Ամենակարող Աստված լսում է նրանց աղոթքներն ու հառաչանքների ձայները և ահա Պտղոմեոսը, որ մինչ այդ պահը հաղթողի հպարտությամբ համառում էր մտնել Սրբությունների Սրբոց, հանկարծ մի հրաշքով գետնին ընկնելով՝ մահու չափ տկարանում է[367], այնպես որ նույնիսկ շարժվելու կարողություն չունենալով՝ նրա թիկնապահը ստիպված է լինում նրան դուրս հանելու, և միառժամանակ այդպես ուշաթափված մնալուց հետո հազիվ գիտակցության է գալիս:

Հարց Ժ: **Պտղոմեոսը տաճարում Տիրոջ կողմից պատժվելուց հետո հրեաներին նեղո՞ւմ է:**

Պատասխան: Այո՛: Ճշմարիտ է, որ հենց այդ պահին երկյուղից ոչ մեկին չի վնասում, սակայն արարքի համար չզղջալով, երբ հասնում է Եգիպտոս, չկարողանալով հաղթահարել բարկությունը և իսրայելացիներից վրեժխնդիր լինելու փափագով՝ իր իշխանությանը ենթակա շրջաններ հրովարտակ է ուղարկում, որով հրեաների հասցեին զանազան հայհոյական և գանգատական խոսքեր ասելուց հետո հրամայում է, որ իրենց օրենքը թողնելով՝ կուռք պաշտեն և անհնազանդներն առանց բացառության ենթարկվեն սաստիկ պատիժների:

Սակայն բոլորի համար ատելի չլինելու մտահոգությամբ արտոնում է, որ հրովարտակին հնազանդվողները

---

367 Ամենազոր, Ամենակալ Աստվածը, որ սուրբ է և բնակվում է սրբերի մեջ, լսեց ժողովրդի այս օրինավոր խնդրանքն ու աղոթքը: Մինչև վերջ ամբարտավան, մեծ գոռոզությամբ նրանց վրա հանդգնորեն հոխորտացող այդ մարդուն նա սաստիկ հարվածներով պատժեց: Նրան այնպես էր տանում ու բերում, ինչպես եղեգն է տարուբերվում քամուց: Ապա գետին զարկեց նրան (*Գ Մակ. 2:10*):

պատիվների արժանանան և Ալեքսանդրիայի քաղաքացի համարվեն: Իսրայելացիներից շատերը, որոնց միտքն արդեն իսկ ուղիղ չէր, հնազանդվելով թագավորի հրամանին, թողնում են օրենքը: Իսկ ովքեր չեն հնազանդվում, նրանց առաջարկում են իրենց փրկության համար տուգանք վճարել, սակայն թագավորը լսելով բարկանում է և հրամայում, որ Երուսաղեմում և բոլոր վայրերում գտնվող իսրայելացիներն Ալեքսանդրիա բերվեն և տանջանքներով սպանվեն:

Եվ քանի որ նրանք քաղաքական կամ, այսպես ասած, աշխարհիկ հարցերում կատարելապես հնազանդ են լինում, և միայն իրենց օրենքի պահպանության համար են այսպիսի տագնապալի վիճակի և տանջալի տառապանքների ենթարկվում, ուստի հեթանոսներից շատերը նրանց կարեկցում են, սակայն թագավորից երկյուղելով՝ ոչ մեկը չի կարողանում օգնել, այլ միայն քաջալերող խոսքերով են մխիթարում՝ ասելով. «Նրանց Աստվածը թույլ չի տա, որ այսքան ժողովուրդ իզուր ոչնչանա և կորստյան մատնվի հանիրավի»:

Իսկ գոռոզ Պտղոմեոսը, չմտաբերելով Աստծու զորությունը, կարծում է, որ միշտ կարող է գործադրել իր հրամանները ու իշխանությունը և գավառապետերին ուղղված մի հրովարտակում խոսելով հրեաների մասին՝ բոլորին ապերախտ, ապստամբ և թշնամի է կոչում, ուստի պատրվակ գտնելով, թե թշնամու հարձակվելու ժամանակ միգուցե նրանք նույնպես ներսից թշնամուն օգնեն, կրկին հրամայում է բոլորին իրենց կանանցով և զավակներով շղթայակապ և պահապանների ուղեկցությամբ իր մոտ ուղարկել, և եթե որևէ մեկը մի հրեայի թաքցնի, նրա ունեցվածքը տան այն մարդուն, որը կհայտնի, թաքցնողի տունն էլ քանդվի:

Անկարելի է երևակայել խեղճ հրեաների թշվառ և արգահատելի վիճակը. որովհետև այն քաղաքներում, որտեղ

կարդացվում է սույն հրովարտակը, հեթանոսները, խումբ-խումբ հավաքվելով, ուրախ ցույցերով սկսում են բացահայել իրենց սրտերում թաքցրած թշնամանքը: Ողորմելի հրեաները մղկտագին հեծեծանքներով լացում և ողբում են, և մարդկային սիրտն անկարող է լինում դիմանալու նրանց սրտակեզ հառաչանքների ձայներին, որովհետև ամենուրեք լացի և ողբի աղաղակներ են լսվում:

Քանի որ ամեն մի քաղաքի և շրջանի անգութ պաշտոնյաները, չխնայելով ո՛չ երիտասարդի, ո՛չ ծերի, ո՛չ մանուկի, առհասարակ բոլորին շղթայում են և բազում նեղությամբ և չարչարանքներով ծովեզր տանելով՝ նավերն են փոխադրում: Մեկի ձեռքը մյուսի ոտքին են կապում, որպեսզի դիմադրություն կամ թշնամություն ցույց տալու միտք իսկ չունենա: Ահա այսպիսի չարչարանքներով Ալեքսանդրիա հասնելով, ի տես ժողովրդի՝ թշվառներին հավաքում են քաղաքից դուրս՝ մի հարթավայրում: Հրեաները, ծածուկ այնտեղ գալով, ցավակցում են նրանց, սակայն թագավորի հրամանով կարեկցող հրեաներն էլ են ձերբակալվում և նույն պատժին արժանանում: Մինչ հրեաներն այսպիսի աննախադեպ անտանելի տառապանքների են ենթարկվում, թագավորն իր նախարարների և մեծավորների հետ մեհյանում արտասվոր ուրախ իր պաշտած կուռքին նվերներ է ընծայում և գովաբանում է այդ անշունչ կուռքերի զորությունը:

Թագավորի հրամանով գրագիրներ են կարգվում՝ ցուցակագրելու դատապարտված հրեաների անունները, նրանք էլ գալով աղաչում են թագավորին, որ իրենք անկարող են բոլորի անունները գրի առնելու, քանի որ անչափ շատ են, և թուղթը վերջացել է, գրիչները՝ մաշվել, խնդրում են, որ այդ բանը զանց առնվի: Սակայն թագավորը բարկանալով գրագիրներին էլ է պատժում՝ մտածելով, որ իսրայելացիներից կաշառք են վերցրել, որ ազատ արձակեն:

Նույն բարկությամբ կանչել է տալիս փղերի՝ Հերմոն անունով պահապանին և պատվիրում հինգ հարյուր փիղ այլևայլ նյութերով կատաղեցնել և պատրաստել հաջորդ օրվա համար, և ինքը նախարարների հետ նորից կերուխումի և զվարճանքների է տրվում: Փղերի պաշտոնյան, հրամանի համաձայն, պատրաստում է փղերին. հրեաների ձեռքերն ու ոտքերը կապելով՝ այդ գիշեր պահակների հսկողությամբ են պահում, որպեսզի առավոտյան բոլորին, փղերի առջև գցելով, ոտնակոխ անեն և, այսպիսով, ջնջեն ու անհետացնեն նրանց սերունդը:

Հարց ԺԱ: **Երբ հրեաները մահվան աստիճանի են հասնում, օգնություն խնդրո՞ւմ են մարդկանցից:**

Պատասխան: Ո՛չ, չեն խնդրում: Որովհետև թագավորն ու նախարարները (այս վերջիններն առավել թշնամի էին) նրանց դեմ էին, և ոչ մեկը չէր կարող օգնության հասնել նրանց: Թեև մարդկանցից օգնության ոչ մի հույս չեն ունենում, սակայն Աստծու ողորմությունից հույսը չեն կտրում, և բոլորը միահամուռ, արտասուքներով, սրտագին պաղատանքներով դիմում են Նրա անբավ ողորմությանը, որ Աստված փոխի թագավորի միտքը և փրկության մի որևէ ճար ու հնար հասցնի:

Արդարև, քանի որ նրանք, աստվածային օրենքներին հավատարիմ լինելով, այս տագնապալի կացության մեջ են ընկնում, Աստված էլ Իր անսահման ողորմությունը հայտնելու համար, երբ հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, փղերի պատասխանատուն գնում է թագավորի մոտ՝ ողորմելի հրեաներին սպանելու հրաման ստանալու, Տիրոջ կողմից թագավորի վրա ծանր և միաժամանակ քաղցր քուն է իջնում, որի հետևանքով հատկացված ժամանակն անցնում է, և հրեաները, այդ օրը չմահանալով, փառք են տալիս Աստծուն:

Աստծու ողորմությամբ ինչպես այս, այդպես էլ մի քանի անգամ, երբ փղերին պատրաստում են, թագավորը որևէ պատճառով հրամանն ուշացնում է, և այդպիսով, հրեաներն ազատվում են: Թեև նրանք Աստծու այսպիսի հատուկ տնօրինությամբ քանիցս ազատվում են, սակայն նախարարների դրդմամբ թագավորը, նորից զայրանալով, վերջնական հրաման է արձակում, որ օր առաջ սպանեն հրեաներին: Ո՞վ կարող է պատկերացնել ողորմելի հրեաների սրտաճմլիկ և աղիողորմ վիճակը, երբ զինված զորքը հավաքվում է քաղաքի դարպասների մոտ:

Այդքան մեծ բազմության գոչյուններն ու ժխորը նրանց հայտնում են, որ իրենց վերջը եկել է, որից էլ նրանց սաստիկ հեծեծանքների և ողբագին մղկտանքների ձայները երկինք են բարձրանում: Մանավանդ հայրը՝ որդու, մայրը՝ մանկան, եղբայրը՝ քրոջ, բարեկամը՝ բարեկամի պարանոցին փարված՝ տագնապի մեջ էին: Այլևս զորքը զինված էր և պաշարել էր նրանց չորսբոլորը, փղերը կատաղած էին, և ոչ մի մարդ չէր կարող նրանց ոգեշնչող խոսքեր ասել: Ահա այս ճգնաժամին, երբ մահվան ժանտ տեսիլը գրավում է նրանց մտքերը, հանկարծ բոլորը միաբան ծնրադրում են և գետնամած երկրպագությամբ թախանձում Աստծուն և Նրա բարությունն են աղերսում, որ օգնության հասնի:

Եվ այդ պահին Եղիազար անունով առաքինի և իմաստուն մի ծեր քահանա, այդ բազմության մեջ աղոթելով, խոստովանում է Աստծու կատարած հրաշքները և նախկինում իսրայելացիներին ցույց տված մարդասիրությունն ու օգնությունը, և ահա, ո՞վ հրաշք, նույն պահին երկնքից երկու հրեշտակ իջնելով՝ փղերի ու հեթանոսների մեջ այնպիսի շփոթություն են գցում, որ բոլորը երկյուղով համակված իրար են անցնում:

Փղերը շրջվում են և սկսում են հեթանոսներին ոտնակոխ անել, սակայն զարմանալին այն է, որ հրեշտակները միայն հրեաներին են երևում[368]: Թագավորը, որ ներկա էր, խելքից-մտքից դուրս մի այսպիսի հրաշք տեսնելով, անչափ սարսափած, սկսում է մարմնով դողալ, մանավանդ հրեաների բարձրաձայն աղաղակները և ուրախության գոչյունները կարծես նրա միտքը քնից արթնացնում են, և Աստված էլ նրա սիրտը շրջելով՝ հանկարծ զգում է իր գործած սխալի ահավորությունը, աչքերը արտասուքով են լցվում և գթությամբ համակվելով՝ շրջվում է և խստագույնս հանդիմանում իր նախարարներին՝ ասելով. «Անարժան բռնության գործ էր, որն ինձ դրդեցիք անելու, մեր տերությանը՝ անօգուտ և վնասակար»:

Ապա սկսում է գովել հրեաներին, և խոստովանելով, որ նրանք միշտ հավատարիմ են եղել թագավորությանը, հրամայում է անմիջապես ազատել նրանց և, մանավանդ, նույն վայրում մեծ պատվով յոթ օր նրանց համար խնջույք է կազմակերպում, ապա ճանապարհածախս և նվերներ տալով՝ ոչ միայն նրանց արտոնում է վերադառնալ հայրենիք, այլև հատուկ հրովարտակով հայտարարում է, որ նրանց ազատությունը Աստծու օգնությամբ է եղել: Այդ հրովարտակով խստորեն հրամայում է իր իշխանությանը ենթակա պաշտոնյաներին և գավառապետերին. «Ով իսրայելացիներից որևէ բան է վերցրել, պարտավոր է այն վերադարձնել տիրոջը, քանի որ նրանց չարիք պատճառողը ոչ թե մարդկանցից, այլ Բարձյալ Աստծուց անպատճառ չարաչար կպատժվի»:

---

[368] Այդ ժամին Բարձրյալը՝ փառավոր, մեծապատիվ, ամենակալ, ճշմարիտ Աստված, ցույց տվեց իր երեսը: Նա բաց արեց երկնքի դռները, որտեղից եկան իջան երկու ահեղ, փառավոր ու աներևույթ հրեշտակներ, որոնք, բացի հրեաներից, ոչ ոքի չէին երևում (*Գ Մակ. 6:14*):

Թեև հրեաները շատ են ուրախանում այսպիսի հրովարտակից, սակայն այլոց օրինակ և խրատ լինելու համար որոշում են սպանել բոլոր այն հրեաներին, որոնք հոժարակամ հրաժարվել են հայրենի օրենքից ու կրոնից: Ուստի գնալով թագավորի մոտ նրան երկար կյանք մաղթելուց հետո ավելացնում են. «Տե՛ր արքա, այն մարդիկ, որոնք իրենց որկորի համար թողնում են հայրենի օրենքները, չեն կարող հավատարմությամբ ծառայել թագավորին», և նրանց սպանելու հրաման են խնդրում:

Արդարև, երբ մարդը հոգևոր հարցերում հավատարիմ չէ իր կոչմանը և պարտականությանը, մարմնավորի դեպքում էլ չի կարող հավատարիմ լինել[369]: Այս է պատճառը, որ թագավորը, նրանց իշխանություն տալով, հրամայում է կոտորել իր իշխանությանը ենթակա բոլոր այն իսրայելացիներին, որոնք հոժարակամ հրաժարվել են իրենց ազգային կրոնից, և այդպիսով, մեկ օրվա ընթացքում քսան հազար երեք հարյուրից ավելի մարդ է սպանվում: Սակայն մի՛ կարծիր, որ այս պարագայում անիրավություն է լինում, ո՛չ, ընդհակառակը, արդարություն է իրագործվում: Քանի որ այն անձինք, որոնք, ուրանալով օրենքներն ու պատվիրանները, չեն պահում Աստծու պատիվը, իհարկե, արժանի են ամեն պատժի:

Այժմ ուշադրությո՛ւն դարձրու կատարված փոփոխությանը. որովհետև Պտղոմեոս թագավորը, որը նախկինում հրեաներին անիրավաբար զրկանքներ և չարիքներ էր պատճառում և նրանց տանջանքներով և չարչարանքներով ստիպում արտասվելու, ի վերջո, ինքն է արտասվում և սարսափում: Նա, ով նախկինում

---

[369] Նաև ասացին. «Եթե կան մարդիկ, որոնք իրենց կյանքից վախենալով կամ որկրամոլությունից դրդված՝ հրաժարվել են իրենց նախնիների օրենքներից, արքունի դատարանում իրենց հոժարության համար արդարանալ երբեք չեն կարող» (*Գ Մակ. 7:7*):

հրեաների մասին չարությամբ էր խոսում և զրպարտում նրանց, հետագայում գովում է: Նա, ով նախկինում անտանելի նեղությամբ նրանց Ալեքսանդրիա է բերում, որ սպանի, վերջում մեծ հարգանքով և անկեղծ հրճվանքով իրենց երկիրն է ուղարկում: Վերջապես նա, ով հրամայում է սպանել օրենքը չուրացողներին, հետո հրամայում է սպանել նրանց, ովքեր կամովին ուրացել էին այն: Ուշադրության արժանի ինչպիսի հակապատկեր: Ուրեմն եթե մի արդար մարդ հանիրավի հարստահարվի, և Աստված անիրավություն անողին չպատժի, մի՛ մտածիր, որ արդար դատաստանը հապաղում է, այլ Աստված Իր զորությունը և արդարի առաքինությունն ամբողջ աշխարհին հայտնելու համար միառժամանակ համբերում է, որպեսզի արդարին ազատելու ժամանակ անիրավությունը պատժելով՝ ամեն մարդ տեսնելով վախենա և ուրիշին չարիք չանի, մանավանդ հանիրավի պատժվողը թող Աստծու ողորմությունից հույսը չկտրի, քանի որ, ուշ թե շուտ, արդարությունը պիտի իրագործվի:

Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել մարդկային զվարճությունների և վշտերի տարբերությանը. որովհետև թեև և՛ զվարճությունները, և՛ նեղությունները հավասարապես անցնում են, սակայն ուրախության ավարտը նեղություն և վիշտ է, իսկ նեղության վախճանը՝ ուրախություն և հանգիստ: Օրինակ՝ այս պարագայում մարմնավոր ուրախության և հանգստի համար ուրացողները և օրինազանցները պատժվում են, իսկ օրինասերները և նախանձախնդիրները, միառժամանակ նեղություններ կրելուց ազատվելով, ուրախ և անվրդով են լինում, և Աստծուց գոհանալով՝ ամեն մարդ փառքով վերադառնում է իր տեղը:

Ուրեմն թող այս եղելության մասին լավ մտածեն այն (քրիստոնյա) մարդիկ, որոնք հանուն մարմնավոր շահի՝ օտար ազգերի ներկայությամբ իրենց ազգային օրենքներին և

սովորություններին, ուստի և Աստծու հրամանին, հակառակ վարք են դրսևորում: Այսպիսիք ոչ միայն հանցավոր են Աստծու առջև և պատժի արժանի, այլև մարդկանց աչքին չար ու կեղծավոր են համարվում և, ի վերջո, անպատճառ խայտառակ և նշավակ լինում:

Մանավանդ պետք է նկատել, որ սեփական կրոնը և ազգն անպատվող անձնավորություններից բոլորն անվստահությամբ խուսափում են: Քանի որ ով Աստծու և իր ազգի օրենքներին և սովորույթներին հավատարմությամբ չի ծառայում, պարզ է՝ նա չի կարող հավատարմությամբ ծառայել որևէ մարդու և որևէ ազգի կամ պետության:

Հարց ԺԲ: **Վերոհիշյալ հրաշքից հետո Պտղոմեոսը նորից նեղո՞ւմ է իսրայելացիներին:**

Պատասխան: Չի նեղում. որովհետև տեսնելով, որ Աստված բացահայտորեն օգնում է նրանց, ինքն էլ մինչև մահ սիրով և համակրանքով է վարվում նրանց հետ: Երբ նա մահանում է, ասորիների թագավորը՝ Մեծն Անտիոքոսը (տե՛ս Թ հարցը), տիրելով Եգիպտոսին, Հրեաստանն էլ է ընդգրկում իր իշխանության ներքո, և նրա օրոք հրեաները հնարավորինս հանգիստ և խաղաղ կյանք են վարում:

Անտիոքոսի մահից հետո նրան հաջորդում է որդին՝ Սելևկիոսը, որ նույնպես իշխում է հրեաներին: Այն ժամանակ ամբողջ Իսրայելը հաջողությամբ կառավարում էր Ոնիա[370] քահանայապետը, որն առաքինի և բոլոր առումներով հավատարիմ անձնավորություն էր: Սիմոն անունով մի չար մարդ, որը նույնպես ծառայում էր տաճարում, իր չարության և անիրավ գործերի պատճառով հանդիմանվում է վերոհիշյալ քահանայապետից, որպեսզի ուղղվի:

---

[370] Ըստ Սուրբ գրքի՝ Օնիա:

Այդ ժամանակ անիրավ Սիմոնը, զայրացած քահանայապետի վրա, վրեժխնդրությամբ է լցվում, ու քանի որ որևէ կերպ չէր կարող իրագործել իր մտադրությունը, գնում է Ապողինոսի մոտ (թագավորի կողմից կարգված իշխան Բարաղամի ծովեզերքում գտնվող քաղաքներում) և զրպարտելով հայտնում, որ տաճարում անհամար գանձեր կան, և պատշաճ է, որ թագավորը գրավի դրանք: Նա էլ իր հերթին տեղեկացնում է թագավորին, որն ուրախանալով իր նախարարներից Հեղիոդորոս անունով մեկին հրովարտակով ուղարկում է Երուսաղեմ, որպեսզի Ոնիա քահանայապետից պահանջի հիշյալ գանձերը և անպատճառ ստանա:

Երբ Հեղիոդորոսը գալիս է Երուսաղեմ, բնակիչները մեծ պատվով են ընդունում: Ոնիա քահանայապետը, նրա գալու նպատակն իմանալով, պատասխանում է. «Արդարև, տաճարում գանձ կա, սակայն իրականությունը Սիմոնի ասածի նման չէ, այլ քանի որ տաճարը սուրբ և ապահով վայր է, ոմանք ավանդ են թողել դրանք, ոմանք աղքատների և որբերի համար են տվել, որով կկարողանան ապրել, ուստի անհնար է, որ մեկին այդ գանձից մի բան տրվի»:

Սակայն եկած պաշտոնյան պնդում է, որ հարկ է կատարել թագավորի կամքը, ուստի քահանաները, սեղանի առջև երեսնիվայր, գետնամած սկսում են սրտագին պաղատանքներով աղաչել Աստծուն, մանավանդ քաղաքի բնակիչներն էլ լսելով՝ քաղաքում մեծ իրարանցում է լինում: Այր, կին և մանուկ, ձեռքերը երկինք բարձրացրած, մեծ ողբուկականով, հառաչանքներով և արտասուքներով բարերար Արարչից խնդրում են, որ այս վտանգն անցնի, և ողորմի:

Արդարև, քանի որ նրանք անկեղծ գթասիրությամբ, հույսով ակնկալում են Աստծու բարությունը և օգնությունը, Աստված էլ սրբավայրի պատիվն ամբողջ աշխարհին հայտնելու

համար ցանկանում է այնտեղ ցույց տալ Իր մեծ զորությունը: Երբ Հեղիոդորոսը, իր մարդկանց հետ տաճար մտնելով, շրջում է գանձարանում, Աստծու հրամանով հանկարծ ոսկյա զրահներով մի ահազդու հեծյալ է երևում, որի առջև՝ երկու փառավոր երիտասարդներ: Նրանք Հեղիոդորոսին այնպես են ապտակում, որ կիսամեռ գետնին է ընկնում ուշաթափ, նրա ընկերները նույնպես վախից անկարող են լինում որևէ շարժում անելու: Այն ժամանակ ներկաները շտապում են՝ պաշտոնյային դուրս հանելու, քանի որ մահամերձն անկարող էր մինչև անգամ շնչելու[371]: Այս հրաշալի դեպքերին համընթաց՝ Ոնիան և բոլոր հրեաները ուրախանալով գոհանում են Աստծուց և փառաբանում նրան, որ փառավորում է Իր սրբավայրը[372]: Սակայն որպեսզի թագավորին այլ ձևով չներկայացվի, Ոնիան փափագում է Հեղիոդորոսի առողջանալը, որպեսզի նա գնա և թագավորին ստուգությամբ պատմի եղելությունը: Մինչ նա այս հարցի մասին էր մտածում, Հեղիոդորոսի մարդիկ, նրա ոտքերին փարվելով, աղաչում են, որ Աստծուն աղոթի իրենց առաջնորդի բժշկության համար, որպեսզի նա չմահանա: Ոնիան աղոթելով զոհ է մատուցում, որի ժամանակ այդ երիտասարդները, նորից երևալով, Հեղիոդորոսին ասում են. «Շնորհակա՛լ եղիր Ոնիա քահանայապետին, որի պատվին Աստված խնայել է քո կյանքը, բոլորին պատմի՛ր Աստծու կարողությունը», և այս խոսքերն ասելով՝ աներևութանում են, քանի որ հրեշտակներ էին[373]:

---

[371] Նրանց հանկարծ երևաց մի փառահեղ ձի հեծյալի հետ, որն ուներ ոսկեզարդ հանդերձանք (*Բ Մակ. 3:25*):

[372] Ինչ վերաբերում է Օնիայի շուրջը գտնվողներին, ապա սրանք օրհնում էին Տիրոջը, որն ամեն ինչով փառավորում էր իր սրբավայրը (*Բ Մակ. 3:30*):

[373] Երբ քահանայապետը մատուցեց քավութեան զոհերը, նույն երիտասարդները, նույն շքեղ զգեստները հագած, անմիջապես

Կազդուրվելուց հետո այս պաշտոնյան Աստծուն գոհությամբ զոհ է մատուցում և Ոնիա քահանայապետին էլ մեծ պատիվներ և պարգևներ տալով՝ գնում է և թագավորին ու մյուսներին պատմում իր հետ կատարվածը: Թեև թագավորը հավատում է նրա խոսքերի ճշմարտությանը, սակայն ագահության պատճառով ցանկանում է մի այլ պաշտոնյայի ուղարկել, այդ ժամանակ Հեղիոդորոսը առարկում է. «Եթե մի թշնամի ունես, որը վնաս է տալիս քո գործին կամ շահին, նրա՛ն ուղարկիր, որ իր պատիժը ստանա, քանի որ Աստված Իր կարողությունը հայտնում է այնտեղ, և ով թշնամությամբ է մոտենում այդ սրբավայրին, պատժվում է»: Երբ թագավորը նորից է լսում այդ խոսքերը, այլևս հրաժարվում է Երուսաղեմի բնակիչներին վնասելու մտքից:

Սակայն վերոհիշյալ Սիմոնը, չհրաժարվելով իր չար դիտավորությունից, դարձյալ գնում է Ապողոնիոսի մոտ և նրա դրդմամբ Երուսաղեմի բնակիչներին շատ չարիքներ պատճառում, մինչև որ ճշմարտությանը տեղեկանալով՝ քահանայապետը թագավորին հայտնում է բուն իրողության բոլոր մանրամասները, և այսպես հաջողվում է չեզոքացնել այն բոլոր վնասները, որոնք առաջանում են այս երկու չարապարտ անձնավորությունների չարագրգիռ սադրանքներից և ատելի շահախնդրությունից:

Հարց ԺԳ: **Հետո հրեաները ի՞նչ վիճակում են լինում:**

Պատասխան: Անչափ խեղճ և թշվառ վիճակում: Որովհետև վերոհիշյալ Մեծն Անտիոքոսը մի որդի ուներ, որը նրա կենդանության օրոք որպես պատանդ Հռոմ էր տարվել, և որը

իջան ու եկան Հելիոդորոսի առաջ և ասացին. «Դու Օնիա քահանայապետից շատ շնորհակալ եղիր, որովհետև նրա միջոցով Տերը քեզ կյանք շնորհեց» (*Բ Մակ. 3:33*):

կոչվում էր Հռչակավոր Անտիոքոս: Սա, լսելով, որ հայրը մահացել է, և եղբայր Սելևկիոսն է թագավորում, մի կերպ ազատվելով՝ Հռոմից գալիս է և եղբորը թունավորելով՝ ինքն է թագավորում Ասորեստանում[374]:

Արդ, վերոհիշյալ Ոնիա քահանայապետի եղբայր Յասոնը, որը շատ չար անձնավորություն էր, Անտիոքոսին վաթսուն քսակ գումար խոստանալով՝ ցանկանում է եղբորից հափշտակել քահանայապետությունը: Դրանից բացի՝ խոստանում է ևս հարյուր քսակ այն պայմանով, որ հեթանոսների սովորությամբ Երուսաղեմում մի խաղարան բացելով՝ լկտի և անբարոյական միջոցներով դրամ աշխատի: Չար ու ագահ թագավորից համապատասխան հրաման ստանալով, քահանայապետ լինելուց բացի՝ ձեռնամուխ է լինում հեթանոսական չար սովորությունն իրագործելուն:

Մոլի մարդիկ, որոնք Յասոնի օգնականներն էին, Անտիոքոսից մովսիսական օրենքը թողնելու և կռապաշտ դառնալու թույլտվություն են խնդրում, և այդպիսով, քահանաներն էլ են հրաժարվում տաճարին ծառայելուց: Ոնիան, որն առաքինի անձնավորություն էր, չկարողանալով հանդուրժել եղբոր սույն անկարգ և մոլոր վարքը, նաև անկարող արգելելու, նրա բռնի և խռովահույզ չարությունից զերծ մնալու համար Երուսաղեմից հեռանում է Անտիոքի մերձակայքում գտնվող Դափնա կոչվող վայրի բերդ և այնտեղ բնակություն հաստատում:

Այն օրերին հեթանոսները, ըստ իրենց սովորության, հինգ տարին մեկ անգամ Սուր քաղաքում մեծ հանդիսությամբ զոհեր են մատուցում իրենց կուռքերին: Անտիոքոսը ևս այնտեղ

---

[374] Սրանցից է սերում չարիքի արմատ, դառնության շառավիղ, անօրեն Անտիոքոսը՝ Անտիոքոս արքայի որդին, որ պատանդ էր մնացել Հռոմ քաղաքում: Նա թագավորեց հույների թագավորության հարյուր երեսունյոթերորդ տարում (*Ա Մակ. 1:11*):

գտնվելով՝ հիշյալ Յասոնը թագավորին ավելի հաճոյանալու համար գումար է ուղարկում՝ որպես զոհ, սակայն քանի որ այդ գումարը Երուսաղեմի բնակիչներից էր վերցրել, տանողները չեն ցանկանում, որ այն կուռքերին զոհաբերվի, և արքային խնդրում են մի այլ նպատակի համար գործածել: Այս է պատճառը, որ թագավորը հրամայում է այդ դրամը տրամադրել պետական նավատորմի ծախսերին:

Երբ մահանում է Եգիպտոսի Պտղոմեոս 4-րդ թագավորը, երկու երիտասարդ որդիներ է թողնում, որոնց մայրը Երևելի Անտիոքոսի քույրն էր: Այս երկու եղբայրների միջև թշնամություն է ծագում, և Անտիոքոսը մտադրվում է նրանցից հափշտակել Եգիպտոսը, սակայն որպեսզի թշնամության կասկածի տեղիք չտա, իր քեռորդիների խնդրանքով իբրև բարեկամ գնում է Եգիպտոս և Եգիպտոսին մոտենալիս մարդ է ուղարկում, որ իր գալստյան մասին տեղեկացնեն, որպեսզի չմտածեն, որ թշնամությամբ է եկել: Բայց մինչ այդ երկու եղբայրները հաշտվել էին, և ժողովրդի մեջ էլ համաձայնություն էր գոյացել: Այս է պատճառը, որ Անտիոքոսը հասկանալով, որ չի կարողանալու իրականացնել իր մտադրությունը, վերադառնում է, և երբ Հոպպեի կողմից է մոտենում Երուսաղեմին, Երուսաղեմի բնակչությունը, նրան ընդառաջ գնալով, մեծ հանդիսությամբ և պատիվներով ընդունում է նրան:

Հարց ԺԴ: **Անտիոքոսը, Երուսաղեմ գալով, հրեաներին նեղո՞ւմ է:**

Պատասխան: Ո՛չ: Թեպետ նրա միտքը միշտ չար էր, սակայն այս անգամ իր չարությունը գաղտնի պահելով՝ վերադառնում է Ծուրի և Սիդոնի կողմերը: Բայց երեք տարի հետո վերոհիշյալ Յասոնն իր գործերի համար Անտիոքոսի մոտ է

ուղարկում Մենեղավոս անունով մի մարդու՝ նրան հանձնելով նաև արքունի գանձը, որ տանի թագավորին:

Մենեղավոսը, իմանալով ասորիների թագավորի ագահությունը, երեք հարյուր քսակ գումար է խոստանում և Յասոնից առնելով քահանայապետությունը՝ արքայի հրամանով Երուսաղեմ է վերադառնում, որից վախենալով՝ Յասոնը ստիպված է լինում փախչելու կռապաշտ ամոնացիների երկիրը:

Դու Աստծու արդարությո՛ւնը տես. ինչպես որ ինքը՝ Յասոնն է հասնում իր նպատակին՝ անիրավությամբ եղբորը՝ Ոնիային, զրկելով քահանայապետությունից, նույնպես և ինքը, Մենեղավոսի ձեռքով զրկվելով, ստիպված է լինում կամա թե ակամա փախուստով ապաստանելու օտար երկրում: Սակայն Մենեղավոսը, իր տված խոստումին համապատասխան անկարող լինելով այդ գումարը վճարելու, նույնպես զրկվում է քահանայապետությունից:

Քանի որ արքունի գանձատան պաշտոնյան՝ Սուստրատոս հազարապետը (որը Երուսաղեմի բերդի պահապան զորքերի գլխավորն էր), չի թույլատրում, որ Մենեղավոսը քաղաքի բնակիչներից դրամ հավաքի, թագավորը, լսելով սրանց վեճի մասին, երկուսին էլ իր մոտ է կանչում, և Սուստրատոսին Կիպրոսի կառավարիչ կարգելուց հետո Մենեղավոսին զրկում է քահանայապետությունից և նրա փոխարեն քահանայապետ է կարգում նրա եղբորը՝ Լյուսիմաքոսին: Այսպիսով, խայտառակվում է այն անարժան անձնավորությունը, որը կաշառքով էր ստացել այդ սուրբ պաշտոնը, սակայն, այսուհանդերձ, նա դարձյալ չի խրատվում: Որովհետև այն ժամանակ Անտիոքոսը Թերսիս և Մալո քաղաքների հարկերը իր հարճերից մեկի ծախսերի համար հատկացրած լինելով՝ բնակիչների մեջ վեճ է առաջանում, և երբ նա անձամբ է գնում այնտեղ, իր սիրելի Անդրոնիկոս նախարարին է հանձնում ժողովրդին կառավարելը:

Ուստի Մենեղավոսը, որը, պաշտոնի համար իր ամբողջ հարստությունը վատնելուց բացի, խայտառակությամբ պաշտոնանկ էր եղել, մի կերպ գողանալով տաճարի ոսկյա անոթները, մի քանիսը հիշյալ Անդրոնիկոսին է տալիս նրա պաշտպանությունը շահելու նպատակով, իսկ մնացածը գումարի է վերածում:

Իսկ Ոնիա քահանայապետը, որը, եղբորից՝ Յասոնից, փախչելով, ապաստանում է Դափնա դղյակում, լսելով, որ Մենեղավոսը իրեր է գողացել տաճարից, խիստ հանդիմանության գիր է հղում նրան, որն էլ բարկանալով Անդրոնիկոսից խնդրում է սպանել քահանայապետին: Անխիղճ պաշտոնյան սուտ երդումով վստահեցնելով՝ Ոնիային դղյակից դուրս է հանում և անիրավորեն սպանում:

Քանի որ Ոնիան իմաստուն և առաքինի մարդ էր և մանավանդ ամբողջ ժողովրդի մեջ հարգանք և պատիվ էր վայելում, ուստի Անտիոքի բնակիչները շատ են տխրում նրա մահվան համար: Նույնիսկ թագավորը Թերսիսից վերադառնալիս, լսելով Ոնիա քահանայապետի անիրավ մահվան մասին, ոչ միայն ողբում է նրան, այլև անագորույն Անդրոնիկոսին քաղաքի փողոցներով անարգված շրջեցնելուց հետո, Ոնիայի սպանության վայրում չարաչար տանջելով, սպանել է տալիս: Թեև Անտիոքոս թագավորն էլ բարի պտուղ չէր, սակայն այս դեպքում արդարություն է իրականացնում:

Երբ անգութ Անդրոնիկոսը մահանում է, Մենեղավոսը, նեղ վիճակի մեջ ընկնելով, միավորվում է եղբոր՝ Լյուսիմաքոսի հետ և սկսում տաճարից գողություններ անել: Ժողովուրդն իմանալով հարձակվում է Լյուսիմաքոսի վրա, որը, երեք հազար ավազակների գլուխ անցած, կռվում է ժողովրդի դեմ: Թեև այդ պահին ժողովուրդը զինված չէր, սակայն ինչով պատահի՝ քարերով, փայտերով, մի մասն էլ հող և ավազ նետելով,

վերջապես նրանց հաջողվում է Լյուսիմաքոսին ոտնատակ անելով սպանել: Այդ դեպքը թագավորին հայտնելու համար երեք մարդ են ուղարկում, և թագավորը, Մենեղավոսին մեղավոր ճանաչելով հանդերձ, նրանից գումար վերցնելով, արդարացնում է և, անշուշտ, նրա գիտությամբ այդ երեք մարդկանց սպանում: Այս մարդկանց մահը հանիրավի էր, և ժողովուրդը պատվով թաղում է նրանց, իսկ Մենեղավոսը, նորից իր պաշտոնը ստանձնելով, գալիս է Երուսաղեմ:

Ինչպես վերը հիշատակվել է, Անտիոքոսը փափագում էր տիրանալ Եգիպտոսին. այս է պատճառը, որ ճանապարհ է ընկնում և՛ ծովային, և՛ ցամաքային բազում զորքով, շատերին կոտորելուց հետո թագավորին էլ փախուստի է մատնում և տիրանում Եգիպտոսին[375]:

Մինչ նա Եգիպտոսում էր, Աստծու կամքով Երուսաղեմի երկնակամարում անհամար ահարկու և սպառազեն զորքեր են երևում, որոնք և՛ հետևակ, և՛ հեծելազոր, ոսկյա զրահներով են զարդարված լինում, և որոնք կարծես միմյանց դեմ են պատերազմում, և մեծ աղմուկ ու այլ որոտանման և շռնդալից ձայներ են լսվում երկնքից: Այս երևույթը քառասուն օր է տևում, և բոլոր բնակիչներն էլ տեսնում են, և ամեն մեկը մեկնաբանելով աղոթքներ և աղաչանքներ է մատուցում, որպեսզի Աստված բարին կատարի, քանի որ կասկած չկար, որ Երուսաղեմի վրա մի մեծ և սոսկալի պատիժ էր գալու:

Այդ ժամանակ, երբ ամբողջ ժողովուրդը երկյուղով էր համակվել և խորին թախծի մատնվել, ժողովրդի մեջ կեղծ լուր է տարածվում, թե Անտիոքոս թագավորը

---

[375] Նա մեծ զորքով, ռազմակառքերով, փղերով ու բազում նավերով արշավեց Եգիպտացիների երկրի վրա, որպեսզի պատերազմի Եգիպտոսի Պտղոմեոս թագավորի դեմ: Պտղոմեոսը պարտություն կրեց նրանից ու փախուստի դիմեց (*Ա Մակ. 1:18,19*):

մահացել է: Ենթադրվում է, որ հենց քաղաքի մեծամեծներն են այդ սուտ լուրերը տարածում ժողովրդի վախը ցրելու համար, սակայն նրանք, իրենց չարության փոխարեն, շուտով պատժվում են, քանի որ վերոհիշյալ Յասոնը, որն ապաստանել էր ամոնացիների երկրում, թագավորի մահվան սուտ լուրի պատճառով հազար մարդասպան ավազակներ հավաքելով, հանկարծ հարձակվում է Երուսաղեմի վրա: Մենեղավոսը փախուստով ապաստանում է բերդում, և անգութ Յասոնը, քաղաքն անտեր գտնելով, շատ մարդկանց է կոտորում, բայց, ի վերջո, քաղաքացիները միավորվելով կոտորում են նրա մարդկանց և նրան էլ փախուստի մատնում, ուստի անզգամը նորից ամոնացիների թագավորին է ապավինում:

Սակայն այնտեղ էլ հանգիստ չմնալով՝ արաբների Արետտա թագավորի նկատմամբ հանցանք է գործում և վախը սրտում՝ ստիպված է լինում քաղաքից քաղաք փախչելու: Այնպես որ մի ամայի վայրում մահանալով՝ անգամ գերեզմանի էլ չի արժանանում:

Խրա՛տ ընդունիր. ահա այսպիսի խայտառակ և անհայտ մահ է ունենում այն մարդը, որը, իր վիճակից գոհ չլինելով, ավելի մեծ պատվի և փառքի հասնելու համար անիրավություն է գործում:

Հարց ԺԵ: **Անտիոքոսը, Երուսաղեմի բնակիչների խռովությունների մասին լսելով, նեղո՞ւմ է նրանց:**

Պատասխան: Նեղում է: Որովհետև Եգիպտոսից վերադառնալիս՝ ասելով, որ երուսաղեմացիները ապստամբել են, գալիս է Երուսաղեմ և առանց ծեր ու մանուկ, այր ու կին հաշվի առնելու երեք օրում ութսուն հազար մարդ է կոտորում, ևս քառասուն հազարին էլ գերեվարելով վաճառում է և քանդում Երուսաղեմի պարիսպը: Սրանից բացի՝ Մենեղավոսի

դրդմամբ մտնում է տաճար և ինչքան ոսկյա և արծաթյա անոթներ և զարդարանք է գտնում, բոլորը վերցնում է:

Հետո Փիլիպպոս անունով մեկին թողնում է Երուսաղեմում, որ կառավարի մնացած ժողովրդին: Սակայն սա, տիրոջից առավել չարագույն լինելով, էլ ավելի չարիքներ է պատճառում: Մենեղավոսն էլ ցանկություն է հայտնում նախկին իր պաշտոնին վերադառնալու, սակայն Անտիոքոսը պատշաճ չի համարում, քանի որ նա, ով դավաճանում է իր ազգին և կրոնին, չի կարող հավատարմությամբ ծառայել ուրիշի, ուստի քահանայապետությունը նրանից վերցնելով՝ Գարիզինի կառավարիչ է կարգում՝ օգնական նշանակելով Անդրոնիկոս անունով մի ուրիշ անձի: Այնուհետև թագավորը Ապողոնիոս անունով գազանաբարո մի մարդու քսան հազար զորքով ուղարկում է Երուսաղեմ՝ հրամայելով, որ կոտորի բոլոր տղամարդկանց և կանանց ու երեխաներին էլ գերեվարելով՝ վաճառի: Երբ վերջինս գալիս է Երուսաղեմ, նախապես իր նպատակը գաղտնի է պահում և մի շաբաթ օր իր զորքին զորավարժության է հանում, և երբ բնակչությունը խմբվում է, որ դիտի, հրամայում է կոտորել բոլորին, զորքի մի մասն էլ, քաղաքում ցրվելով, ճանապարհին հանդիպող մարդկանց է կոտորում:

Հրեաների այսպիսի դառնաղետ վիճակի ենթարկվելուց հետո երկար ժամանակ է անցնում, և ահա Անտիոքոսը Աթենորիոս անունով մի անձնավորության ուղարկում է Երուսաղեմ՝ խստիվ պատվիրելով, որ բոլոր հրեաները թողնեն իրենց կրոնն ու օրենքները և կուռքեր երկրպագեն, իսկ անհնազանդները՝ անխնա և առանց բացառության կոտորվեն: Հանդգնություն է ունենում նաև տաճարի զոհասեղանին կուռք դնելով՝ այն մեհյանի վերածելու, ավելին՝ բոլոր քաղաքներում և գավառներում թագավորի հրամանով կուռքերին նվիրված մեհյաններ և զոհասեղաններ է կառուցում:

Երբ մի այսպիսի անօրեն հրաման է արձակվում, շատերը, որոնք արդեն իսկ վաղուց վատ և չար սրտի ու մտքի տեր մարդիկ էին, հնազանդվելով թագավորական հրամանին, ուրանում են իրենց օրենքը և սկսում են հեթանոսական անառակ սովորություններով ապրել: Սակայն լինում են նաև այնպիսիք, որոնք, իրենց Արարչի հրամանները պահելով, Նրա սուրբ օրենքների պահպանության նախանձախնդրությամբ լցված, ամայի տեղեր են փախչում, մյուսները, քաջությամբ դիմանալով զանազան տանջանքների, հանձն են առնում մահանալ՝ ի սեր հայրենի օրենքների:

Քանի որ թագավորի հրամանով կարգված պաշտոնյաները ժամանակ առ ժամանակ խուզարկություններ են կատարում, այնպես որ ոչ ոք չի համարձակվում շաբաթ օրը սրբությամբ պահել կամ տոն օրերը ըստ կարգի անցկացնել և երեխաներին բացահայտ թլփատել և մանավանդ հրեա անվանվել: Բոլոր վայրերում պաշտոնյաներ են նշանակվում, որ ստիպեն կուռքերին զոհաբերություններ անել, իսկ ովքեր հանձն չեն առնում, անխնա սրի են քաշում:

Այդ օրերին երկու մայրեր գաղտնի թլփատում են իրենց զավակներին, և երբ նրանցից գանգատվում են իշխանություններին, այս երկուսը ատյան են կանչվում. երեխաներին նրանց ստինքներից կախած, քաղաքի հրապարակում անպատվությամբ շրջեցնելով, այնուհետև պարսպից վայր նետելով՝ սպանել են տալիս: Ոմանք շաբաթը պահելու նպատակով քաղաքի մերձակայքում գտնվող քարանձավներում են թաքնվում, և եթե նրանց գտնում են, բոլորին միասին այրում են:

Այսպիսով, թեև շատերը, Աստծու երկյուղը իրենց սրտերից հանելով, ուրանում են իրենց հայրենական կրոնը, սակայն շատերն էլ, Աստծուց երկյուղելով, սիրահոժար հանձն են առնում, օրենքին չընդդիմանալով, նահատակվել: Օրինակ՝

Անտիոք քաղաքում ապրող Եղիազար անունով իննսունամյա իմաստուն և մեծապատիվ մի մարդու բերանին սանձ դնելով՝ ստիպում են օրենքին հակառակ խոզի միս ուտել, որպեսզի երիտասարդները տեսնելով միանգամից թողնեն օրենքը:

Սակայն երբ տեսնում են, որ նա օրինազանց չլինելու համար պատրաստ է ենթարկվել բոլոր տանջանքներին և մեռնել, առաջարկում են. «Ձևականորեն ենթարկվի՛ր թագավորի հրամանին, սակայն մենք քեզ այլ միս կտանք, որ ուտես, որպեսզի ազատվես տանջալից մահվանից»: Այո՛, նրա տարիքը հաշվի առանելով՝ այսպիսի առաջարկ են անում, սակայն նա պատասխանում է. «Իմ աստիճանին պատշաճ չէ կեղծավորաբար վարվել օրենքին վերաբերող խնդիրներում և թույլ տալ, որ ասեն, թե Եղիազարն իննսուն տարեկան հասակում կռապաշտ դարձավ. դա անհնարին է, եթե նույնիսկ դրանից հետո էլ մարդկանցից նեղություն չկրելով՝ մի այսքան էլ ապրեմ, Աստծու դատաստանից, այնուամենայնիվ, չեմ կարող ազատվել»[376]:

Դու Եղիազարի առաքինությո՛ւնը տես. որովհետև նա, օրինազանց լինելով, լավ կյանքով ապրելուց ավելի լավ է համարում չարչարվել և քաջությամբ մահանալ, միայն թե սերունդներին առաքինության բարի օրինակ թողնի, որ նրանք էլ, մահվանից և տանջանքներից չերկնչելով, սիրով պահեն աստվածային օրենքները: Երբ հեթանոսները լսում են նրա համարձակ խոսքերը, կատաղի բարկությամբ սաստիկ տանջանքներից հետո սպանում են երանելի քահանային:

Այնուհետև ձերբակալում են մի առաքինի կնոջ[377] իր երիտասարդ յոթ զավակներով և տանում Անտիոքոսի մոտ, որը

---

[376] Ո՛չ արժան է, ո՛չ էլ պատշաճ, որ այս տարիքի հասած մարդը կեղծավորություն անելով մտնի սուրբ դատաստան…. և աշխարհում վատ ծերունու անուն կթողնեմ (*Բ Մակ. 6:24,25*):

[377] Ավանդության համաձայն՝ նրա անունը Շամունա էր:

նրանց ստիպում է խոզի միս ուտել, այլապես անասելի չարչարանքների պատրաստվեն: Այժմ հարկ է նկատի առնել արիական քաջությունը. որովհետև վերոհիշյալ Եիազար քահանայի նման մարմնական մահվանից երբեք չվախենալով՝ յոթ եղբայրն էլ միահամուռ և միահոգի արհամարհում են բռնությունները, և նրանցից մեկը արիաբար հարցնում է. «Ի՞նչ եք կանգնել և անիմաստ հարցաքննում, մենք պատրաստ ենք մահանալու, սակայն երբեք չենք ուրանա մեր հայրենի օրենքները»:

Այս պատասխանից կատաղած՝ Անտիոքոսը հրամայում է պատրաստել տանջանքների գործիքները: Խոսողի լեզուն կտրելուց բացի՝ գլխի մաշկն էլ ծոծրակից քերելով դեմքի վրա են շրջում, ապա ոտքի և ձեռքի մատների ծայրերը կտրել է հրամայում և եռացող յուղի թավայում այրելով՝ սպանում է նրան: Խստասիրտ Անտիոքոսը այսպիսի սոսկալի տանջանքների է ենթարկում առաջինին՝ մտածելով, որ մյուսները տեսնելով կվախենան և կհրաժարվեն իրենց օրենքներից: Սակայն նրանք, Աստծուն հուսալով, սկսում են Է՛լ ավելի մխիթարել և քաջալերել միմյանց՝ ասելով. «Քաջությամբ մեռնելով փրկենք մեր հոգիները, քանի որ Աստծու առջև մեր կրած չարչարանքներն անտեսված չեն»[378]:

Երբ երկրորդին են բերում տանջանքների վայր և հարցնում, թե հոժարակամ պատրաստ է օրենքներից հրաժարվելու և ազատվելու չարչարանքներից, պատասխանում է. «Երբեք իմ հայրենի օրենքները չեմ թողնի», երկրորդին էլ են սկսում միևնույն տանջանքներով չարչարել և նեղել, սակայն նա համարձակությամբ թագավորին ուղղելով իր խոսքը՝ ասում է.

---

[378] Եղբայրներն իրենց մորն ու միմյանց սկսեցին մխիթարել ու ասել. «Քաջությամբ մեռնենք և անուն ու հոգի ժառանգենք» (*Բ Մակ. 7:5*):

«Ո՛վ ամբարտավան, կարծում ես, որ դու ես մեզ սպանողը, իմացի՛ր, որ մենք մեր հոժար կամքով ենք մահանում, որպեսզի հանդերձյալ կյանքում հավիտենապես ապրենք. դու դա չես հասկանա»:

Այնուհետև երրորդին բերելով՝ հրամայում են, որ լեզուն դուրս հանի, իսկ նա քաջությամբ ոչ միայն լեզուն է հանում, այլև ձեռքերն է պարզում է, որ կտրեն: Թեև Անտիոքոսը հիանում է նրա քաջությամբ, սակայն իր մտադրությունից հետ չի դառնում: Այսպիսով, անտանելի չարչարանքներով խոշտանգելուց հետո սպանում են վեց եղբայրներին: Իսկ յոթերորդին, որն ամենափոքրն էր, երբ տանջանքների վայր են բերում, թագավորը նրա հետ շատ մխիթարական խոսքերով խոսում և խոստանում է, որ եթե հնազանդվի և հրաժարվի օրենքներից, զանազան մեծամեծ պատիվների կարժանացնի: Նրա բացասական պատասխաններից հետո ստիպում է մորը, որ համոզի մանկանը: Սակայն մայրը, ինչպես այն վեց եղբայրերին էր հորդորել և խրատել, որ առանց տանջանքներից և մահվանից վախենալու, ի սեր Աստծու՝ մահանան, նաև այս փոքր որդուն է հույս և եռանդ հաղորդում՝ ասելով. «Որդյա՛կս, ընդհանրապես մի՛ վախենա տանջանքներից, միտքդ Աստծո՛ւն ուղղիր և եղբայրներիցդ հետ մի՛ մնա»:

Այն ժամանակ մանուկը դահիճներին պատասխանում է. «Ո՞ւմ եք սպասում դանդաղելով. թագավորի հրամանը չպիտի կատարեմ, այլ հնազանդ պիտի մնամ հայրենի օրենքներին»: Սրանից բացի, դառնալով Անտիոքոսին, ասում է. «Դու, չար և ամբարտավա՛ն մարդ, այս չարությանդ համար չես կարողանալու ազատվել Աստծու ձեռքից, մենք մի փոքր կհամբերենք և հավիտենական կյանքին կհասնենք, քանի որ հույսներս Աստված է, Որը մեզ հավիտենական կյանք է խոստացել»: Թեև այս խոսքերից թագավորի սիրտը կոտրվում է, սակայն

յոթ եղբայրներից էլ իր խոսքը ոտնակոխ անելու պատճառով բարկացած՝ հրամայում է ավելի սաստիկ տանջանքներով սպանել նրան: Նրանց մայրն էլ, նույն չարչարանքները կրելով, մահանում է:

Այստեղ լա՛վ խորհիր Աստվածային անպարտելի զորության մասին. քանի որ Աստված այնպիսի զորություն և արիություն է տալիս տկար մարդկանց, որոնք, անհողդողդ մնալով անասելի ցավերի և տանջանքների մեջ, ոչ միայն ազատվելու համար աղաչական խոսք չեն ասում, այլև թագավորի թվարկած պատիվները մերժելով՝ համարձակվում են դեմ առ դեմ հանդիմանական և կշտամբանքի խոսքեր ասելու, մանավանդ խոստովանելով Աստծու ողորմությունն ու արդարությունը՝ հանդերձյալ կյանքում անվախճան կյանքի իրենց հույսն են հայտնում:

Արդարև, Աստվածաշունչը, վերոհիշյալ յոթ եղբայրների քաջությունն ու առաքինությունը գովելով, առավել գովում է նրանց մոր հավատն ու քաջությունը՝ նրան անվանելով *սքանչելի մայր*[379]: Քանի որ որդիներին առաքինության շավղի մեջ կրթելուց բացի՝ գոհանալով մեկ օրում յոթին էլ Աստծուն է ընծայում: Մահվանից չվախենալու նրանց տված հորդորն ինքն էլ գործնականորեն ցույց է տալիս, որ մահից չի վախենում և պատրաստ է հանուն օրենքի մահանալ: Այսպիսով, նրանք, օրենքի ճշմարտությունն ապացուցելու համար տանջալից մահը հանձն առնելով, *նահատակ* են անվանվում, և Եկեղեցին նրանց փառավոր հիշատակը ամեն տարի անխափան տոնում է:

Օրինա՛կ վերցրու հիշյալ յոթ եղբայրների առաքինությունից, և եթե Աստծու օրհնյալ և սուրբ անվան համար հարկ

---

[379] Առավել ևս բարի հիշատակի էր արժանի սքանչելի մայրը: Նա Աստծու հույսին ապավինելով՝ այսպիսի յոթը որդի էր կորցնում մեկ օրում, նույն ժամին (*Բ Մակ. 7:20*):

լինի մեռնելու չափ ծանր չարչարանքներ կրել, ընդհանրապես մի՛ երկնչիր, և հավատքդ երբեք թող չտկարանա, այլ Աստծու կարողությանը հուսալով՝ աղոթի՛ր, որ Նա զորացնի քեզ: Ճշմարիտ է՝ մարդկային բնությունը տկար է և վախենում է տանջանքներից, սակայն երբ կատարյալ հավատով և սիրով Աստծուն ես ապավինում, Աստծու ողորմությամբ բնությունը հաղթվում է, և որքան էլ նեղությունների ենթարկվի, կարող է աներկյուղ տոկալ, ինչպես որ շատ շատերը, արյուն հեղելով, Հիսուս Քրիստոսի համար են նահատակվել և արքայության անվախճան փառքին հասել:

Հարց ԺԶ: **Հրեաները, որ այնքան նեղություն են կրում Անտիոքոսից, Աստծուն աղաչելով, արժանանո՞ւմ են գթության:**

Պատասխան: Այո՛: Դու Աստծու ողորմածությա՛նը նայիր. որովհետև ինչքան էլ այս աշխարհում մեկի վրա բարկանա և պատժի, դարձյալ իր ողորմությունը նրա հանդեպ չի խնայում, ուստի վշտակրին կարեկցություն ցույց չտվող և նրա վիշտը բազմապատկել ցանկացող մարդն Աստծուց անպատճառ պատժվում է: Օրինակ՝ Աստված, հրեաների անկարգ վարքի պատճառով բարկանալով, Անտիոքոսի ձեռքով պատժում է ապերախտ ժողովրդին, սակայն Անտիոքոսն ուրախանալով կարծում է, որ իր անձնական հզորությամբ է կարողանում պատժել նրանց. մանավանդ անիրավության հակվելու ժամանակ արդարության չափն անցնելով՝ Աստված օգնում է հրեաներին, և թագավորը, իր հզորությունը կորցնելով, վերջապես տանջանքների է մատնվում և գնում- կորչում է վայրի անապատում:

Այդ ընթացքում Ղևի ցեղից Մատաթի անունով մեկը, որը հինգ որդի ուներ՝ Հովհաննես, Շմավոն, Հուդա, Եղիազար և

Հովնաթան, չկարողանալով Երուսաղեմում հանդուրժել և՛ հեթանոսների, և՛ օրինազանց հրեաների վարքը, իր զավակներով գնում է Մովդիմ քաղաք և բնակվում այնտեղ: Սակայն իր ազգի թշվառ վիճակի, տաճարի և Երուսաղեմի համար, որ թշնամու ձեռքն էր անցել, քուրձ է հագնում՝ օձիքը պատռելով, ողբալով և սաստիկ տրտմությամբ: Անտիոքոսի մարդիկ նույնպես, այդ քաղաք գնալով, նախապատրաստվում են՝ զոհ մատուցելու, ուստի Մատաթիին ասում են. «Հնազանդվելով թագավորի հրամանին՝ զո՛հ մատուցիր, որպեսզի մնացածն էլ քեզնից օրինակ վերցնեն, ինչպես Հուդայի մնացյալ գավառներում և Երուսաղեմում են զոհում», և խոստանում են նրան շատ ունեցվածք և պատիվ տալ:

Այն ժամանակ Մատաթին, բարձրաձայն մերժողական պատասխան տալով, այսպես է ասում. «Թեև նրանք թողել են օրենքը, սակայն, քա՛վ լիցի, որ ես, որդիներս և եղբայրներս թողնենք այն»: Խոսքը դեռ բերանում էր, երբ առաջ է գալիս մի հրեա, որ զոհաբերություն անի: Դու Մատաթիի առաքինությո՛ւնը տես. քանի որ երբ Աստծու օրենքին հակառակ արարք է տեսնում, սաստիկ զայրացած՝ բարկությունից սկսում է ամբողջ մարմնով դողալ և չկարողանալով հանդուրժել, հիշյալ հրեային իսկույն ոտքերի տակ գցելով՝ սպանում է, ինչպես նաև սպանում է թագավորի ուղարկած մարդուն, փշրում է կուռքը և աներկյուղ կործանում կռատունը[380]:

Այն ժամանակ Մատաթին բոլորին կոչ է անում՝ ասելով. «Ով ցանկանում է պահել օրենքը, թող հետևի ինձ», և թողնելով իրենց ունեցվածքը՝ փախչում են ու ապաստանում անապատում: Երբ օրենքի նախանձախնդրությամբ նրա սույն կյանքը հայտնի է դառնում, շատ հրեաներ են իրենց

[380] Հազիվ էր նա այս խոսքերն ասել, որ հրեաներից մի մարդ…. (*Ա Մակ. Բ 23*):

ընտանիքներով և ունեցվածքով միանում նրանց, շատերն էլ, նրանց օրինակին հետևելով, բռնությունից փախչելով, թողնում են իրենց բնակավայրերը և ապաստան գտնում այլ անապատներում:

Թագավորի՝ կառավարիչ կարգած պաշտոնյան, որ Երուսաղեմում էր նստում, և այլ հեթանոսներ, լսելով վերոհիշյալ փախստականների սույն շարժման մասին, նախ ներողություն հայցելու առաջարկով և այսուհետև թագավորին հնազանդվելու պայմանով պատգամավորներ են ուղարկում, և երբ նրանք չեն հնազանդվում, ուրիշ օր նրանց վրա հարձակվել չհամարձակվելով՝ շաբաթ օրը հանկարծ հարձակվում են նրանց վրա և մեկ օրում հազար հոգու կոտորում և շատերին էլ գերի են վերցնում և անասուններն էլ գերեվարում: Քանի որ հրեաները շաբաթ օրը չպղծելու համար չեն պատերազմում, այլ միայն իրար քաջալերելով են բավականանում:

Վերոհիշյալ Մատաթին և նրա ընկերները, ժողովրդի սույն դժբախտությանը տեղեկանալով, խորհրդակցում և որոշում են, որ այսուհետև շաբաթ օրերը իրենք չեն հարձակվելու թշնամու վրա, սակայն եթե թշնամին հարձակվի, իրենք ևս հետ չկանգնելով պատերազմեն, որպեսզի ժողովուրդն իզուր չկոտորվի: Մատաթիի քաջասրտությունը բոլոր հրեաներին հայտնի դառնալուց հետո շատերը, որոնք նախանձախնդիր էին Աստծու փառքին և օրինապահությանը, միանում են նրան, և նա, մարդկանց առաջնորդելով, բոլորն էլ միաբան, իրենց հույսը Աստծու ողորմության և օգնության վրա դնելով, մեծ քաջությամբ հարձակվում են թշնամու վրա և շատերին կոտորելով՝ մնացածին էլ ամոթալի փախուստի մատնում:

Այսպիսով, Մատաթին, պատժելով թշնամուն, կոտրատում է կուռքերը, քանդում մեհյանները և բոլոր վայրերում ապահովելով օրենքն իրագործելը՝ խափանում թագավորի հրամանի

իրագործումը: Քանի որ նա, ով, միշտ Աստծու պատիվը պահելով, փնտրում է նրա սուրբ օրենքի պահպանությունը, Աստված էլ, այդ բարեպաշտ և աստվածասեր մարդուն չխնայելով Իր օգնությունը, օրըստօրե թշնամուն տկարացնում է նրա օրոք:

Մատաթիա, ինչպես կենդանության ժամանակ էր միշտ Աստծու փառքի նախանձախնդիր և երբեք ու ոչ մի պարագայում չէր խնայում իր անձը, մահանալու ժամանակ էլ, կանչելով իր հինգ զավակներին, պատվիրում է, որ ի սեր ազգի և կրոնի՝ առանց անձնական հանգիստ որոնելու, միշտ քաջությամբ դիմակայեն թշնամուն, որպեսզի հանդերձյալ կյանքում մշտնջենավոր կյանքի արժանանան: Այս առիթով սկսելով Աբրահամի օրերից Աստծու սուրբ օրենքների պահպանության համար իրենց հայրերի ցուցաբերած քաջությունն ու եռանդը մեկ առ մեկ հայտնելով՝ հորդորում է, որ նրանց նման արիասիրտ լինեն և չվախենան թշնամուց: Աստծու օգնության և ողորմության վրա դնեն իրենց ողջ հույսը, որը երբեք չի զլանա տալու, եթե հավատարմությամբ ծառայեն Նրա սուրբ և պաշտելի կամքին:

Հետո իր երկրորդ որդուն՝ Շմավոնին, որը շատ խոհեմ անձնավորություն էր, որպես հայր ավագ է կարգում՝ պատվիրելով, որ հնազանդվեն նրան, նաև երրորդ որդուն՝ Հուդային, զորավարի պաշտոն է տալիս, քանի որ սա էր քաջասիրտն ու արին, ուստի *Մակաբե* է կոչվում, որ նշանակում է «մարտիկ», ապա բոլորին օրհնելով՝ վախճանվում է ու թաղվում Մովդիմ քաղաքում, և բոլոր իսրայելացիները ողբում են նրա մահը: Քանի որ ինչպես երևաց, այն ժամանակ թշնամին, շատ զորեղ և հաղթող լինելուց բացի, նույնիսկ հենց հրեաներից ոմանք՝ չար մարդիկ, ժողովրդի մեջ խռովություններ են հարուցում, ամբողջ ազգը մի այնպիսի թշվառ և ողորմելի վիճակի է հասնում, որ թշնամու երկյուղից ոչ մեկը չի համարձակվում՝ օրենքը հայտնապես գործադրելու:

Սակայն Մատաթին, ազգի և կրոնի սիրով այրված, միայն Աստծուն ապավինելով, հաղթում է թշնամուն, և հրեաները կարողանում են կատարել օրենքների պատգամները:

Հարց ԺԷ: **Հրեաները հնազանդվո՞ւմ են զորավար դարձած Հուդա Մակաբայեցուն:**

Պատասխան: Հնազանդվում են: Արդարև, Մատաթիի մահվան համար ժողովուրդը սգում և արտասվում է, սակայն Աստծու ողորմությամբ Հուդան, հորից շատ ավելի քաջ և արիասիրտ լինելով, միշտ հաղթանակներ տանելով և միշտ հսկայական հարվածներ հասցնելով թշնամուն, իսրայելացիները մեծապես մխիթարվում են և շունչ առնում:

Երբ եղբայրները և մյուս հրեաները, որոնք միշտ օրենքի նախանձախնդիր են լինում, մոտ վեց հազար մարդ համերաշխաբար նրա մոտ են հավաքվում, Հուդան, Աստծու օգնությանն ապավինելով, առանց ցերեկ կամ գիշեր հաշվի առնելու, աներկյուղ հարձակվում է թշնամիների վրա և բոլորին էլ կոտորելով՝ սպանում է, քանդում և կործանում է նրանց քաղաքները և, վերջապես, հարստահարվածին ազատում է հարստահարողի ձեռքից:

Ապողոնիոսը, որին թագավորը Սամարիայում էր նշանակել, լսելով Հուդայի այսպիսի քաջությունների մասին, բազմաքանակ զորք հավաքելով, պատրաստվում է՝ նրա վրա հարձակվելու, երբ Հուդան, իսկույն նրա վրա հարձակվելով, սպանում է նրան և զորքը կոտորելուց հետո կողոպտում է և Ապողոնիոսի սուրն էլ վերցնելով՝ այնուհետև այդ սրով էլ կոտորում թշնամիներին: Վերոհիշյալի նման ասորիների զորահրամանատար Սրեն էլ բազում զորք է ժողովում, որպեսզի իսրայելացիներից վրեժ առնելով՝ թագավորից ավելի փառք ու պատիվ ստանա:

Թեև այդ ընթացքում Հուդայի զորքի մեծ մասը, խմբերի բաժանված, դուրս էր եկել՝ շրջակա բնակավայրերն ասպատակելու, և նրա մոտ մնացած զորքն էլ հոգնած էր և խիստ սակավաթիվ, այս է պատճառը, որ երկյուղում են, սակայն Հուդան, նրանց քաջալերելով, ասում է. «Աստված կարող է քիչ մարդկանցով շատերին հաղթել, քանի որ հաղթանակը ոչ թե շատ զորքով է լինում, այլ Աստծու զորությամբ: Նրանք մեզ վրա են գալիս հպարտությամբ և անիրավությամբ՝ մեզ կոտորելու և մեր որդիներին և ընտանիքները գերեվարելու, մի՛ վախեցեք. Աստված կարող է բոլորին էլ երկրի երեսից ջնջել և հաղթանակը փոքրաթիվ զորքին տալ»[381]:

Այսպիսի խրախուսող խոսքերից հետո Աստծուն ապավինելով՝ իսկույն հարձակվում են թշնամու վրա և կարողանում ցիրուցան անելով փախուստի մատնել և նրանց հետապնդելով՝ նույն օրը ութ հարյուր մարդ կոտորել: Այս անգամ Հուդայի քաջությունը այնքան հայտնի է դառնում, որ բոլորը սկսում են նրա անունից վախենալ, քանի որ բոլորի համար նա առյուծի նման ահարկու է դառնում, և Սուրբ գիրքն է նրան *առյուծի* նմանեցնում[382]:

Հարց ԺԸ: **Անգութ Անտիոքոսը, տեղեկանալով Հուդայի գործերին, նեղո՞ւմ է իսրայելացիներին:**

Պատասխան: Այո՛, նեղում է: Մանավանդ որոշում է, բոլորին կոտորելով, հրեա ազգի անունն անգամ աշխարհից վերացնել:

---

[381] Հուդան սկսեց նրանց քաջալերել ու ասաց. «Աստծու համար դյուրին գործ է շատ մարդկանց մատնել քչերի ձեռքը…. որովհետև հաղթանակը ձեռք է բերվում ոչ թե շատ զորքով, այլ այն զորությամբ, որ երկնքից է գալիս» (*Ա Մակ. 3:18, 19*):

[382] Իր գործերով նա նմանվեց առյուծի ու որսի վրա մռնչացող առյուծի ձագի (*Ա Մակ. 3:4*):

Քանի որ անմիտ թագավորն այնպես է բարկանում, որ իր իշխանությանը ենթակա քաղաքներից զորք հավաքելով՝ բոլորին այնքան առատորեն է պարգևատրում, որ արքունի գանձարանը ամենևին դատարկվում է: Սրանից բացի՝ Հրեաստանը գրեթե ավերակ էր դարձել, արքունական տուրքերը խիստ նվազել էին, և մտածելով, որ միգուցե զորքի կարիքները հոգալու համար գումար պահանջվի, սկսում է լրջորեն մտատանջվել:

Այս է պատճառը, որ Լուսիաս անունով մեկին իր փոխարեն թողնելով՝ զորքի մի մասը նրան է տալիս, իսկ մյուս մասին ինքն անձամբ առաջնորդելով՝ Պարսկաստանի կողմերն է գնում, որպեսզի այնտեղից անհրաժեշտ գումարը հավաքելով՝ Հրեաստանի վրա հարձակվի: Արդեն իսկ Լյուսիասին պատվիրել էր, որ նախքան իր հարձակումը նա հարձակվի այդ ապստամբ երկրի վրա և բոլորին սրի քաշի, իր որդուն էլ հանձնել էր Լյուսիասի խնամակալությանը (որդին էլ էր Անտիոքոս կոչվում):

Սակայն Լյուսիասն էլ իր հերթին իրեն հանձնված զորքը հանձնում է Պտղոմեոս անունով մեկին և նրան օգնական կարգում երկու նշանավոր նախարարների՝ Նիկանորին և Գորգիասին, որ գնան և ըստ թագավորի հրամանի՝ կոտորեն հրեաներին: Սրանք դեռևս անհրաժեշտ պատրաստությունն են տեսնում, երբ Պտղոմեոսը Երուսաղեմում թագավորի՝ կառավարիչ կարգած Փիլիպպոսից (տե՛ս ԺԵ հարցը) լուր է ստանում, որ օր առաջ այնտեղ գտնվող հեթանոսներին օգնության հասնի, քանի որ Հուդան նրանց կոտորում է: Պտղոմեոսը, այս լուրը ստանալով, իսկույն վերոհիշյալ Նիկանոր և Գորգիոս նախարարների հետ քառասուն հազար զորք է ուղարկում Իսրայել երկիր, որ թագավորի հրամանը կատարեն:

Դու Նիկանորի հպարտությո՛ւնը տես. որովհետև հույսն իր զորքի հզորության վրա դրած, իբր թե արդեն կատարելապես հաղթանակած և հրեաներին էլ գերած՝ ինքնագլուխ

որոշում է իննսուն հրեայի մեկ քսակ գումարով վաճառել և հարյուր քսակ գումարը վճարել, որն ամեն տարի Անտիոքոսը վճարում էր հռոմեացիներին: Ուստի շրջակա քաղաքներ լուր է ուղարկում, որ վաճառականները մեծ գումարով բանակ գան՝ գերիներ գնելու:

Այս լուրը տարածվելով՝ հազար վաճառական, մեծամեծ գումարներով իրենց շահի համար բանակ գնալուց բացի, նրանց հետ շատ այլ մարդիկ էլ են գնում, և մեծ բազմություն է հավաքվում: Հուդան, որ բոլոր վայրերում լրտեսներ ուներ, շուտով տեղեկանում է Նիկանորի գալու մասին: Զորքի մեծ մասը երկյուղից փախել էր, և միայն վեց հազար մարդ էր մնացել նրա հետ, այսուհանդերձ, Աստծու զորությանն ապավինելով՝ քաջալերում է մնացած զորքին, որ ընդհանրապես չվախենան. նրանց հիշեցնում է Աստծու՝ մինչ այդ իսրայելացիներին արած օգնությունը և հորդորում, որ երբեք չհուսահատվեն: Բացի սրանից՝ ծոմ են պահում, քուրձ են հագնում և ջերմագին աղոթք և պաղատանք անելուց հետո, երբ երկու բանակները ճակատամարտում են, Հուդան, Աստծու ողորմությամբ հաղթելով, փախուստի է մատնում թշնամու զորքը:

Թեև Նիկանորը պարտություն է կրում, սակայն նրա օգնականները, հեթանոսներից զորք հավաքելով, կրկին հարձակվում են Հուդայի վրա, որը նորից կոտորում է նրանց և կողոպտելով բանակը՝ անչափ ինչքի տիրանում: Գերիներ գնելու եկած վաճառականների գումարներն էլ է հափշտակում: Իրենց բազում ավարից բաժին են հանում որբևայրի կանանց, որբերին և տնանկներին և ցնծությամբ Երուսաղեմ գալով՝ իրենց երախտագիտությունը հայտնում Աստծուն, որ մարդասիրությամբ օգնել է իրենց:

Ճշմարիտ է՝Երուսաղեմում թագավորական զորք կար, սակայն նրանք վախեցած փակվում են բերդում և չեն համար-

ձակվում դուրս գալու: Միայն Կալիսթինե անունով մի մարդու իր մարդկանց հետ բռնելով՝ Հուդայի հրամանով այրում են ողջ-ողջ, քանի որ սրանք այրել էին տաճարի դուռը: Ահա այսպես Աստված օգնում է ուղիղ սրտով Իրեն ապավինողներին: Երբ Հուդայի շնորհից այսպիսի մեծամեծ հաղթանակներ են լինում, շրջակա բոլոր հեթանոսները սկսում են երկյուղից դողալ և նրա անունից սարսափել:

Նաև Նիկանորը, որը, իր զորքի վրա հույս դրած, ցանկանում էր իննսուն հրեայի մեկ քսակ գումարով վաճառել, զորքի կորստից բացի, այնպիսի երկյուղով է համակվում, որ մինչև իսկ աղքատի և մուրացկանի կերպարանքով և մեծ տխրությամբ Անտիոք է փախչում, որտեղ Աստծու զորությունը խոստովանելով՝ ասում է. «Քանի որ իսրայելացիների ազգն օրինապահ է, անպարտելի է»: Մասնավորապես, թագավորի փոխանորդը՝ վերոհիշյալ Լյուսիասը, որը Անտիոքում էր նստում, լսելով Հուդայի քաջությունների մասին, անչափ հուսալքվում է, քանի որ դեպքերը թագավորի և իր կամքին հակառակ են լինում:

Այնուամենայնիվ, Լյուսիասը, հաջորդ տարի վաթսուն հազար հետևակ և հինգ հազար հեծյալ զորք ժողովելով, վրեժխնդիր լինելու նպատակով Հուդայի դեմ է արշավում: Հուդան միայն տասնմեկ հազար մարդկանցով, նախ՝ աղոթքով և խնդրանքներով Աստծու կամքն է հայցում, հետո՝ երկուստեք պատերազմի են դուս գալիս, որտեղ Լյուսիասը, հաղթվելով, իր զորքից հինգ հազար կորցնելով, հասկանում է, որ Հուդան և նրա զորքը ընդհանրապես չեն վախենում մահվանից: Թեև նա իր զորքի բազմության վրա էր հույսը դրել, և հրեաներից վրեժխնդիր լինելու, անպատճառ հաղթելու բաղձանքն այրում և տոչորում էր նրան, սակայն այս անգամ հասկանալով, որ չի կարողանալու իր բաղձանքն իրականացնել, վերադառնում է

Անտիոք և նորից պատերազմի պատրաստություն տեսնում, որպեսզի դարձյալ հարձակվի և անպատճառ նվաճի Հրեաստանը:

Հարց ԺԹ.: **Այս հաղթանակներից հետո Հուդան ամրացնո՞ւմ է Երուսաղեմը:**

Պատասխան: Այո,՛ ամրացնում է: Քանի որ Աստծու ողորմությամբ թշնամիները հետզհետե տկարանում են, և Հուդան, մեծամեծների հետ խորհրդակցելով, գալիս է Երուսաղեմ՝ տաճարը մաքրելու և Աստծուն զոհ մատուցելով, նախկինի նման տաճարում օրինականություն հաստատելու համար: Սակայն մինչ այդ Երուսաղեմի բերդը թշնամիների ձեռքին էր: Հուդան բերդի շուրջը զորք է տեղակայում, որպեսզի թշնամին չկարողանա դուրս գալ և վնասել: Եվ երբ Սիոն լեռը բարձրանալով և տաճար հասնելով՝ սրբավայրերն ավերված են տեսնում, մեծապես սգում, ողբում են, արտասվելով քուրձ հագնում և գլխներին մոխիր լցրում, բարձրաձայն աղաղակներով երեսնիվայր ընկնում և աղաչում են Աստծուն, որ նեցուկ լինի իրենց:

Քանի որ երկար ժամանակ տաճարը թշնամիների ձեռքին էր եղել, շատ տեղեր քանդել էին, և սեղանի վրա էլ, ըստ հեթանոսական սովորության, կուռքերին զոհ էին մատուցել: Այդ է պատճառը, որ այդ սեղանի վրա զոհ մատուցելն այլևս անհնարին համարելով՝ քանդում են, քարերը պահում, մինչև որ մարգարեի միջոցով հայտնվեր, թե ինչ պիտի անեն: Հետո տաճարը մաքրելով, ըստ օրենքի, սովորական արարողություններ են կատարում. զոհեր մատուցելով աղոթք անելուց հետո ութ օր ուրախության խնջույք են կազմակերպում, և տաճարի բոլոր դռները, որ թշնամին այրել էր, վերականգնում:

Արդարև, տաճարը մաքրելով՝ նախկինի պես սկսում են պահել օրենքը, սակայն Երուսաղեմի բերդը թշնամու ձեռքին

լինելու և քաղաքում էլ քիչ մարդ լինելու պատճառով մտածելով, որ միգուցե թշնամին նորից կարողանա վնասել տաճարը, Սիոնից սկսած՝ տաճարի շուրջը ամուր պարիսպ և աշտարակներ են կառուցում: Ապա ամրացնելով Բեթսուրա քաղաքը՝ զորք են հատկացնում, որ եդովմացի կռապաշտներից որևէ հարձակում լինելու դեպքում, դիմագրավեն:

Ծրջակայքում բնակվող հեթանոս ազգերը, տեսնելով և լսելով, թե Հուդան ինչպիսի նախանձելի եռանդ և անսովոր փութաջանություն է ցուցաբերում՝ պաշտպանելու տաճարը և Երուսաղեմը, զարմանալի համառությամբ միավորվելով, շրջապատում են իրենց երկրներում բնակվող իսրայելացիներին և իրենց նեղսրտության և զայրույթի ողջ թույնը նրանց վրա թափելով՝ ցանկանում են իրենց երկրներից իսրայելացիների անունն անգամ ջնջել:

Սակայն երբ Հուդան լսում է այդ սոսկալի որոշման մասին, առանց նրանց ժամանակ տալու, որ իրականացնեն իրենց արյունարբու դիտավորությունը և իրենց չար նպատակին հասնելու ժամանակ չունենան, իսկույն իր անպարտելի քաջերով հարձակվում է նրանց վրա և Աստծու ողորմությամբ և պաշտպանությամբ կարողանում է շատերին կոտորել և կողոպտել նրանց ունեցվածքը, ու թեև ամուր քաղաքներ և վայրեր փախչողներ էլ են լինում, սակայն դրանց վրա էլ հարձակվելով՝ գրավում է և այլ շատ քաղաքներ էլ թշնամու ձեռքից վերցնելով՝ ուրախությամբ և հաղթական փառքով վերադառնում է Հրեաստան:

Հարց Դ: **Վերոհիշյալ հեթանոս ազգերը իսրայելացիներին նորից նեղությո՞ւն են տալիս:**

Պատասխան: Տալիս են: Իրոք, թեև այս անգամ թշնամին շատ խիստ է պատժվում, սակայն դարձյալ հանգիստ չմնալով՝

հարձակվում է Գաղաադում գտնվող հրեաների վրա: Նրանք փախչում և ապաստանում են Դովդայիմ կոչվող անառիկ բերդում, և երբ թշնամին այլ տեղերի բնակիչների գերեվարելուց հետո հիշյալ բերդն էլ է պաշարում, նամակ են ուղարկում Հուդային, որ իրենց ազատի թշնամու բռնություններից: Հուդան նրանց նամակը կարդալու ժամանակ Գալիլիայի շրջակայքում ապրող հրեաներից էլ է բոթ գալիս, որ թշնամին, Աքիայի, Ծուրի և Սիդոնի կողմերից գալով, ցանկանում է կոտորել իրենց, ժամ առաջ օգնության հասնի:

Դու իսրայելացիների ճարահատյալ դրությո՛ւնը տես. որովհետև բոլորն էլ, բռնակալ թշնամու ճանկն ընկնելով, բոլոր առումներով անտեր և անպաշտպան մնալով և ուրիշ ոչ մի տեղից օգնություն չսպասելով, միայն Հուդայի օգնությանն են ապավինում: Նա էլ, Աստծուն ապավինելով, շտապում է ազատելու նրանց: Քանի որ երբ ստանում է ժողովրդի այսպիսի նեղությունների և տառապանքների լուրը, իսկույն երեք հազար զորքով իր եղբորը՝ Շմավոնին, Գալիլիա է ուղարկում, և ինքն էլ ութ հազար զորքով վստահությամբ Գաղաադի կողմերը շարժվում: Նաև Հովսեփոս և Ազարիա հազարապետերի մոտ զորք է թողնում, որ պահպանեն Հրեաստանը՝ պատվիրելով, որ մինչև ինքը չվերադառնա, թշնամու դեմ չպատերազմեն:

Արդ, Շմավոնը, գնալով Գալիլիայի կողմերը, Աստծու ողորմությամբ հաղթում է թշնամուն և շատ կողոպուտ և ավար վերցնում: Սակայն թշնամիները՝ շատ, երկիրն էլ հարթավայրային լինելու պատճառով խորհում է, որ ավելի լավ կլինի ժողովրդին կրկին չվնասելու համար այնտեղ գտնվող իսրայելացիներին Հրեաստան փոխադրել: Եվ քանի որ Հուդան Գաղաադի կողմերում էր, նրան տեղեկացնում է իր գործողությունների արդյունքների մասին: Հուդան, Հորդանանն անցնելով, երեք օր անապատով ճանապարհ գնալուց հետո

տեղեկանում է, որ թշնամին իսրայելացիներից շատերին սպանել, կողոպտել է, և այդ պահին Բոսոր քաղաքում է, որպեսզի պատրաստություն տեսնի, և որտեղ իսրայելացի կա, բոլորին կոտորի: Այս է պատճառը, որ Հուդան շտապում է՝ նրանց վրա հարձակվելու, և բոլորին կոտորելուց հետո քաղաքն էլ կողոպտելով այրում է:

Սրանից բացի, ինչպես վերը հիշատակվել է, թշնամին պաշարում է հրեաների ապաստանած բերդը և մտադրվում է հաջորդ օրը վերջապես կործանել այն և կոտորել բոլոր իսրայելացիներին: Ուստի Հուդան նույն այդ գիշերը շարժվում է բերդի ուղղությամբ: Առավոտյան տեսնում է, որ թշնամին անթիվ բազմությամբ և զանազան գործիքներով պատրաստվում է կործանելու պարիսները: Այն ժամանակ Հուդան ժողովրդին քաջալերելուց հետո փող է հնչեցնում, և բոլորը միաձայն սկսում են աղաղակել. թշնամին էլ է վախից աղաղակում, նաև պաշարված հրեաներն էլ են վախից սկսում աղաղակել, և այսպիսով, երկու կողմերի աղաղակները երկինք են բարձրանում: Աստծու ողորմությամբ թշնամին այնքան է շփոթվում, որ իր բերած բոլոր գործիքները թողնելով՝ սկսում է փախչել:

Հուդան, նրանց հետապնդելով, ութ հազար մարդ է կոտորում և մտնելով նրանց քաղաքները՝ սրի քաշում բոլոր արուներին և նրանց ունեցվածքը կողոպտելուց հետո այրում է բնակավայրերը: Հիրավի, Աստծու ողորմությամբ թշնամին սաստիկ պատժվում է, սակայն ամոնացիների կռապաշտ ազգի զորագլուխ Տիմոթեոսը, Հուդայից վրեժխնդիր լինելու նպատակով բազմաքանակ զորք հավաքած, գալիս և Ռափոն գետի մոտ բանակ է դնում: Երբ Հուդան լսում է նրա գալու մասին, անմիջապես գետն անցնելով՝ հանկարծ հարձակվում է նրա վրա, և զորքի մեջ մի այնպիսի շփոթություն է ընկնում, որ նույնիսկ զենքերը ճանապարհին թողնելով՝ փախչում են

Կառնային քաղաք: Սակայն Հուդան, այդ քաղաքն էլ գրավելով, բոլորին անխնա կոտորում է: Ապա այն կողմերում գտնվող հրեաներին փոխադրում կամ գաղթել է տալիս Հրեաստան, որպեսզի զերծ լինեն թշնամու բռնություններից:

Այսպիսով, ահագին բազմություն ճանապարհին ստիպված է լինում Եփրոն քաղաքով անցնելու, քանի որ այլ հարմար ճանապարհ չկար, սակայն բնակիչները, փակելով քաղաքի դռները, ճանապարհ չեն տալիս: Հուդան խոնարհությամբ լուր է ուղարկում, որ իրենք նրանց որևէ վնաս չեն տալու, այլ միայն պիտի անցնեն և գնան, սակայն երբ չհամոզվելով դարձայլ ճանապարհ չեն տալիս, հարձակվում է քաղաքի վրա և այն գրավելով, բոլոր արու բնակիչներին կոտորելով՝ զորքին թույլ է տալիս, որ քաղաքն էլ կողոպտեն և դիակների վրայով քայլելով՝ մեծ ուրախությամբ Երուսաղեմ են գալիս և տաճարում զոհ մատուցելով՝ Աստծուն շնորհակալություն հայտնում:

Եվ այսպիսի մեծ պատերազմներ մղելով՝ Աստծու ողորմությամբ զորքից ոչ մեկը չի սպանվում: Սակայն վերոհիշյալ Հովսեփոսի և Ազարիայի պատճառով Իսրայելի ժողովուրդը մեծ տխրություն է ունենում, քանի որ սրանք, նախանձելով Հուդայի և նրա եղբայր Շմավոնի քաջագործություններին և փառքին, փառք վաստակելու փափագով և Հուդայի որոշ կարգադրություններին հակառակ՝ հարձակվում են թշնամու վրա և պարտվելով, երկու հազար մարդ կորցնելով՝ ամոթապարտ և սարսափով փախչում են:

Խրա՛տ ընդունիր. Հուդան և Շմավոնը, աստվածային ողորմությանը և օգնությանն ապավինելով, ուր էլ գնում են, թշնամու նկատմամբ կատարյալ հաղթանակ են տանում, իսկ Հովսեփոսն ու Ազարիան, իրենց անձնական փառքին հետամուտ, անարգանքով փախչում են թշնամու առջևից և, մանավանդ, իսրայելացիների ազգին անարգանք բերում: Որովհետև

հաղթանակն աստվածային հատուկ օրհնությամբ է ձեռք բերվում, և հպարտությամբ միայն իրենց անձնական հզորության վրա հույս դնողները և, մանավանդ, անձնական փառք որոնողները, ի վերջո, անպատճառ խայտառակվում են:

Մասնավորապես օրինակելի է Հուդայի բարեպաշտությունը. քանի որ նա, միշտ իր ամբողջ հույսը Աստծու օգնության վրա դնելով, այլ թշնամիների դեմ էլ է պատերազմում և կատարյալ հաղթանակներով նրանց քաղաքները ավերելուց բացի՝ մանավանդ ջանում է նրանց կուռքերը և մեհյանները կործանել և ջնջել, ինչպես որ իր տեղում սրա մասին մանրամասնորեն ներկայացվում է:

Հարց ԻԱ: **Ինչպիսի՞ն է լինում անագորույն Անտիոքոսի վախճանը, որը հարստություն դիզելու համար Պարսկաստան է գնում:**

Պատասխան: Շատ վատ վախճան է ունենում: Քանի որ որտեղ էլ անիրավացիորեն ունեցվածք է պահանջում, ապստամբում են, ուստի ոչինչ էլ չի կարողանում ստանալ: Հիրավի, այս նախաձեռնությունը մեծ անպատվություն է լինում նրան, սակայն անկարող վրեժ լուծելու, երկյուղից Բաբելոնի կողմերը գնալիս լսելով Հրեաստանի վերոհիշյալ անցքերի և իր զորքի պարտության մասին, սաստիկ բարկանալով՝ հաստատապես որոշում է ժամ առաջ Երուսաղեմ գնալ և բոլոր իսրայելացիներին կոտորելուց բացի՝ տաճարն ու Երուսաղեմը հիմնահատակ ավերել, սակայն կառքով ընթանալու ժամանակ, անչափ բարկացած, կառապանին պատվիրում է արագացնել կառքի ընթացքը:

Այս պարագայում դու Աստծու արդարությո՛ւնը տես. հպարտ Անտիոքոսը իսրայելացիներին կոտորելու և Երուսաղեմն ու տաճարը հիմնահատակ ավերելու անօրեն տենչով

սրարշավ ընթանալիս հանկարծ մարմնի բոլոր անդամներում անտանելի ցավ է զգում, և առանց հասկանալու, որ դա աստվածային պատիժ է, կարծում է, որ մարմնի բնական ցավ է, ուստի հրամայում է էլ ավելի արագ ընթանալ. ի վերջո, կառքը շրջվելով տապալվում է, և բոլոր ոսկորները կոտրվելով խախտվում են այնպես, որ այլևս անկարող ոտքի վրա մնալու՝ նրան սայլակին են դնում:

Սրանից բացի՝ վերքերը սկսում են այնքան հոտել և որդնել, որ նրա աչքերից ու բերանից որդեր թափվելուց բացի՝ գարշահոտության պատճառով, ոչ մեկը չէր կարողանում նրան մոտենալ[383], անգամ ինքն է սկսում զզվել իր գարշելի հոտից, և համբերությունն էլ սպառվում է: Ահա այսպիսի անտանելի տանջանքների մատնվելուց հետո խելքը գլուխն է գալիս, և հասկանում է, որ հրեաներին հասցրած չարիքների համար է կրում այդ սարսափելի պատիժը:

Հարկ է խրատվել անգութ և անխիղճ Անտիոքոսի թշվառ վիճակից. ծովի և ցամաքի վրա իշխելու տենչանքով զբաղված, անգամ լեռները տակնուվրա անելով՝ հանկարծակի իրեն հասած պատուհասից և ընդունած հարվածի սաստկությունից ստիպված է լինում խոստովանելու, որ մարդ պետք է հետ կանգնի հպարտությունից և խոնարհությամբ Աստծու կամքին հնազանդվի: Այդ վիճակում նաև խոստանում է հրեաների հետ քաղցրությամբ վարվել և տաճարից հափշտակած անոթները վերադարձնելուց բացի՝ նորանոր անոթներ և գույք է

---

[383] Ամենակալ Բարձրյալը՝ Իսրայելի Տեր Աստվածը, սակայն, նրան պատուհասեց աներևույթ հարվածներով. հազիվ էր նա ասել այս խոսքերը, որ անասելի սուր ցավերով բռնվեցին նրա ոսկորները, տանջող խիթեր սկսվեցին որովայնում…. Այդ անօրենի աչքերից վխտալով որդեր էին բխում ու թափվում դուրս…. մարմնի նեխահոտից ամբողջ բանակն սկսեց նեղվել (*Բ Մակ. 9:5,9*):

նվիրում տաճարին և արքունի գանձարանից գումար ծախսելով՝ ամեն կերպ զարդարում է տաճարը, մանավանդ ինքն էլ, հրեաների կրոնն ընդունելով, սկսում է բոլորին պատմել Աստծու կարողության մասին:

Հարց ԻԲ: **Անտիոքոսն իր խոստովանության և խոստումների համար արժանանո՞ւմ է թողության:**

Պատասխան: Չի արժանանում: Որովհետև ոչ թե ուղիղ սրտով, այլ ստիպված և ճարահատյալ է անում. առերես զղջում է, սակայն մտադրությունը չար լինելու համար թողության չի արժանանում[384], դրա համար էլ նրա մարմնի և մանավանդ որովայնի ցավերն օրըստօրե սաստկանում են, և երբ առողջանալու հույսը կտրում է, օրինաթող հրեաների համար հրաման է արձակում, որ ենթարկվեն իրեն:

Նա Անտիոքոս անունով մի որդի է ունենում, որին Պարսկաստան գալու ժամանակ իր փոխարքա Լուսիասի մոտ էր թողել (տե՛ս ԺԵ հարցը)՝ կամենալով իր փոխարեն նրան թագավոր հռչակել: Փիլիպպոս անունով իր թիկնապահներից մեկին հանձնում է արքայական թագը, զգեստն ու կնիքը, որպեսզի դրանք Անտիոք տանելով՝ իր որդուն թագավոր դարձնի, իսկ ինքը սաստիկ տանջանքներով այդ ամայի վայրում թշվառության մեջ մահանում է: Ահա սա է անօրեն և հպարտ մարդու դառը վախճանը, որը կարող է խրատ լինել ամեն մարդու:

Թեև Փիլիպպոսը, վերցնելով իրեն հանձնված արքայական թագը, զգեստներն ու մատանին կամ կնիքը, Անտիոք տանելու փոխարեն գնում է Եգիպտոս, սակայն Անտիոքոսը, լսելով հոր մահվան մասին, նրա փոխարեն թագավորում է Անտիոքում

---

[384] Աղաչում էր Նրան (Անտիոքոսը), որ սուրբ քաղաքը հիմնահատակ կործանելու և ամայի դարձնելու սպառնալիքի համար այլևս չէր գթալու իրեն (*Բ Մակ. 9:13*):

և վերոհիշյալ Լուսիասին կառավարիչ է կարգում Բարաղամում և դրա մերձակա գավառներում: Այդ ժամանակ Հուդան, դարձյալ Աստծու օգնությանն ապավինելով, իսրայելացիների փրկության համար հեթանոսների հետ պատերազմներ է մղում և նրանց քաղաքները կործանելով՝ ավերակ դարձնում:

Հարց ԻԳ: **Հուդան, գրաված քաղաքներում զորք տեղակայելով, իշխո՞ւմ է այնտեղ:**

Պատասխան: Ո՛չ, երբեք: Քանի որ որտեղ հրեաներին նեղում են, այնտեղ գնալով պատժում է հանցավորներին և իսկույն մի այլ տեղ է շտապում, և քիչ ժամանակում շատ քաղաքներ է ավերում, հետևաբար գրաված երկրները մշտապես իր իշխանության ներքո պահելու համար զորքերի կարիք է ունենում: Թեև այսպիսով թշնամին շատ է տկարանում, սակայն ամոնացիների Տիմոթեոս թագավորը, որին նախկինում արդեն պատժել էր (տե՛ս Ի հարցը), կրկին բազմաքանակ զորք է հավաքում և հրեաներից վրեժխնդիր լինելու նպատակով քաղաքներ քանդում, կողոպտում և ժողովրդին գերեվարում:

Երբ Հուդան տեղեկանում է նրա պատրաստության և զորքերի շարժման մասին, իր ամբողջ զորքով տաճարում սեղանի առջև աղոթքով Աստծուն են դիմում՝ քուրձ հագնելով և գլխներին հող ցանելով, Նրա հզոր օգնությունը պաղատանքներով հայցելուց հետո քաղաքից դուրս են գալիս և երբ պատրաստ են լինում պատերազմելու, ահա մի հրաշքով երկնքից հինգ ձիավոր են իջնում, որոնք Աստծու հրեշտակներն են լինում և ոսկյա զենք ու զրահներ են ունենում, և օգնության են հասնում Հուդային[385]:

---

[385] Այն պահին, երբ պատերազմի անաչառ, անողորմ ձեռքը իր գործն էր անում, երկնքից երևացին սպառազեն հինգ հեծյալներ (*Բ Մակ. 10:29*):

Երբ թշնամին Հուդայի ուղղությամբ նետ է արձակում, չի կարողանում վնասել, քանի որ հրեշտակները պաշտպանում են նրան, և իրենք էլ, իրենց հերթին թշնամու վրա նետեր արձակելով, այնպես են շփոթեցնում, որ այդ օրը քսան հազար հինգ հարյուր մարդ կոտորելուց հետո նրանց զորավարը փախչում է մի ամուր քաղաք, որը, սակայն, Հուդան գրավում և կողոպտում է, մանավանդ ջրհորում թաքնված թշվառ Տիմոթեոս զորավարին էլ բռնելով՝ սպանում:

Հետո Լուսիասը (տե՛ս ԺԸ հարցը), որը զորք էր պատրաստում Հրեաստանի դեմ արշավելու համար, ութսուն հազար զորքով Երուսաղեմ է շարժվում, որպեսզի այն գրավելով՝ հեթանոսներով բնակեցնի, և տաճարն ու քահանայապետերին հարկերի ենթարկի: Երուսաղեմի մոտակայքում գտնվող Բեթսուրա քաղաքը պաշարելու ժամանակ Հուդան և ամբողջ ժողովուրդը արտասուքով աղաչում և պաղատում են Աստծուն, որ իրենց ազատի: Երբ պատրաստվում են թշնամու վրա հարձակվելու, աստվածային կամքով իսկույն մի հրեշտակ՝ պատերազմող մարտիկի կերպարանքով, զորշ ձիով, ոսկյա զենքերով և ձեռքին նիզակ, նրանց առջևից է ընթանում[386], որին տեսնելով՝ խրախուսվում են և գոհանալով զորություն և համարձակություն ստանում:

Այնուհետև առյուծի նման հարձակվելով թշնամու վրա՝ կարճ ժամանակահատվածում տասնմեկ հազար և վեց հարյուր մարդ են կոտորում, շատերն էլ վիրավորվում են, մնացյալը՝ ճողոպրում և այնպիսի երկյուղի մատնվում, որ մինչև

---

[386] Այդ ժամանակ նրանք միաբան, միահամուռ սպառազինվելով՝ առաջ գնացին: Երբ նրանք հասան Երուսաղեմ քաղաքի մերձակայքը, նրանց առաջ եկավ իջավ ոսկե զենքերով սպառազինված, սպիտակ ձի հեծած մի մարդ: Նա նիզակ էր ճոճում ու պատրաստվում էր հարձակում գործել (*Բ Մակ. 11:8*):

իսկ իրենց հագուստներն ու զենքերը ճանապարհներին թողնելով՝ մերկամարմին փախչում են: Վերոհիշյալ Լյուսիասը, ամենայն խայտառակությամբ հազիվհազ ինքն իրեն ազատելով, սկսում է մտածել, որ անկարելի է հաղթել հրեաներին, քանի որ Աստված օգնում է նրանց: Այս է պատճառը, որ մարդիկ է ուղարկում Հուդայի մոտ և խնդրում հաշտություն կնքել: Սրանից բացի՝ խոստանում է թագավորին համոզել, որ նա կատարի Հուդայի բոլոր պահանջները:

Հարց ԻԴ: **Հուդան, ընդունելով Լուսիասի առաջարկը, հաշտվո՞ւմ է նրա հետ:**

Պատասխան: Հաշտվում է: Ճշմարիտ է՝ Հուդան չի վախենում Լուսիասից, սակայն ժողովրդի շահի համար հավանություն է տալիս այդ պայմանին, ուստի Լուսիասը, իր խոստման համաձայն, հայտնում է թագավորին, ինչ անհրաժեշտ էր, և թագավորն էլ իր հերթին հրովարտակ է արձակում, որ հրեաներին այլևս թույլատրվում է իրենց օրենքն ազատորեն գործադրել, և ոչ մեկը չի կարող արգելք լինել: Այդ ժամանակ թագավորի մոտ Հռոմից երկու ազդեցիկ անձնավորություններ են լինում, նրանք էլ են տեղեկանում եղելություններին և իրենց հերթին նամակներ են ուղարկում Հուդային:

Թեև թագավորի հրամանով հաշտություն կնքելուց հետո հրեաները սկսում են իրենց սովորական գործերով զբաղվել, սակայն շրջակայքում բնակվող հեթանոսները դարձյալ սկսում են նեղել ժողովրդին: Հուդան ստիպված է լինում նորից պատերազմելու նրանց դեմ: Օրինակ՝ Հոպպեի նավահանգստում ծովայինները, շահելով իսրայելացի երկու հարյուր տղամարդկանց, կանանց, մանուկների և ծերերի վստահությունը, քանի որ հրամանից հետո հրեաները սկսել էին վստահել հեթանոսներին, նավով այլ տեղ տանելու պատրվակով

դուրս են գալիս բաց ծով և, երբ ափն արդեն բավականին հեռու էր, ջրասույզ են անում նրանց:

Հուդան այս անգթության լուրը ստանալուն պես Աստծու օգնությունը խնդրելուց հետո՝ գիշերը, նրանց վրա հարձակվելով, նավերն ու նավահանգիստը հրի ճարակ է դարձնում և այնտեղ գտնվողներին կոտորելուց հետո, որպեսզի մյուսներին էլ խրատ լինի, Հոպպեի բնակիչներին էլ ստիպում է իր սրի տակով անցնել: Նաև Հոպպեի մոտ գտնվող մի այլ նավահանգստի ծովայիններն էլ են կյանքով հատուցում, և նավերն էլ հրի են մատնվում, երբ Հուդան տեղեկանում է, որ սրանք էլ են համաձայնության եկել Հոպպեի ծովայինների հետ. այս վերջին հրդեհն այնքան մեծ է լինում, որ լույսը մինչև իսկ Երուսաղեմից է տեսանելի լինում:

Սրանից բացի՝ մի ուրիշ թշնամու դեմ արշավելու ժամանակ պատահաբար նրանց դեմ են դուրս գալիս հինգ հազար արաբ հեծյալներ, և սրանց հետ էլ կռվի բռնվելով՝ երբ հաղթում է նրանց, սրանք առաջարկում են՝ իրենց կոտորելու փոխարեն հպատակվեն նրան և հնազանդվելով ամեն տարի հարկ վճարեն: Հուդան հավանություն է տալիս առաջարկին և թույլ տալիս, որ վերադառնան իրենց բնակավայրերը, և ինքն էլ, այլ թշնամիների վրա հարձակվելով, Աստծու ողորմությամբ բոլորին հաղթում է, ինչպես գրված է Սուրբ գրքում:

Հետո նրանք գալիս են Սկյութիպոլիս քաղաք, որը ցանկանում են գրավել, բայց որովհետև քաղաքի բնակիչները մինչ այդ հրեաներին բարեկամաբար են վերաբերվում, ինչպես հաստատում են այնտեղ բնակվող հրեաները, ուստի առանց վնասելու հեռանում են՝ պատվիրելով, որ միշտ իսրայելացիներին պաշտպան կանգնեն: Իրենք էլ գնում են Երուսաղեմ, որովհետև մոտենում էր Պենտեկոստեի տոնը, որը հրեաները իրենց լեզվով *վարդի տոն* են կոչում:

Տոն օրերը վերջանալուց հետո Հուդան եդովմացիների կռապաշտ իշխան Գորգիի դեմ է արշավում, որը երեսուն հազար հետևակ և չորս հազար հեծյալ զորքով նրա դեմ է դուրս գալիս, և այս անգամ պատերազմելով՝ Հուդայի զորքից մի քանի մարդ է սպանվում. մինչ այդ օրը նրանցից ոչ մեկը պատերազմում չէր մահացել: Սակայն Հուդան և նրա զորքը, Աստծուն ապավինելով, նորից հարձակվում են և հաղթում թշնամուն. այնպիսի հաղթանակ են տանում, որ Գորգին ստիպված մազապուրծ փախչում է: Հաջորդ օրը շաբաթ լինելով՝ Հուդան իր զորքով Եդողամ քաղաք է գնում շաբաթն օրենքով պահելու համար և երբ հաջորդ օրը պատերազմի դաշտ է գալիս՝ սպանվածներին թաղելու, տեսնում է, որ նրանց թևատակերին հմայիլներ են կախված, որոնք կրում էին իբր թե նրանց զորությամբ անվնաս մնալու համար՝ ըստ հեթանոսական սովորության:

Աստվածային պատվիրան կար, որ այսպիսի արարքը, կուռքերին և կախարդներին հատուկ լինելով, ընդհանրապես իրենց միջավայրում չհարգվի և չլինի[387], ուստի պատերազմի դաշտում ընկածների մարմիններին դրանք տեսնելով՝ հասկանում են, որ իրենց մեղքի պատճառով են պատժի արժանացել, ուստի Աստծուն օրհնելով՝ փառավորում են և գովում են Նրա արդարությունը, որ ցույց է տալիս նրանց գաղտնի հանցանքը ուրիշներին խրատ լինելու համար: Հուդան զորքին նաև պատվիրում է, որ երբեք օրենքին հակառակ վարք չունենան: Հետո գումար է հավաքում Երուսաղեմ ուղարկելու համար, որ մահացածների հոգիների համար Երուսաղեմում աղոթք և

387 Նրանց կռածո աստվածները կայրես հրով: Դրանց վրա եղած արծաթի ու ոսկու վրա աչք չունենաս, չվերցնես դրանք, որպեսզի դրանով մեղք գործած չլինես. դա քո Տեր Աստծու համար գարշելի է (*Բ Օր. 7:25*):

պատարագ (զոհ) մատուցվեն, որպեսզի Աստված ների նրանց մեղքերը:

Հարկ է այստեղ նկատի առնել, թե ինչքան մեծ մեղք է կախարդությունը, ինչպես նաև սնահավատությունը, քանի որ այդպիսի բաները, սատանայական հնարք և հեթանոսական սովորություն լինելով, բացարձակապես հակառակ են Աստծու օրենքին:

Հարց ԻԵ: **Անտիոքոս թագավորը, Հուդայի հետ հաշտություն կնքելով, իր խոստմանը միշտ հավատարի՞մ է մնում:**

Պատասխան: Ո՛չ, չի մնում: Որովհետև ինչպես նախկինում է նշվել, Երուսաղեմի բերդը թշնամու ձեռքին էր և վտանգավոր էր ժողովրդին: Այս է պատճառը, որ Հուդան ցանկանում է, այն գրավելով, թշնամուն ընդհանրապես դուրս վռնդել Երուսաղեմից, և երբ պաշարում է բերդը, պահակազորի պետը, մի կերպ բերդից մարդ հանելով, թագավորի մոտ ուղարկելու հնար է գտնում. այդ ժամանակ նաև մի քանի դավաճան հրեաներ, միավորվելով նրանց հետ, թագավորի մոտ են գնում՝ Հուդային վատաբանելու:

Այն ժամանակ թագավորը բարկանալով խորհրդակցում է իր նախարարների հետ և հարյուր հազար հետևակ, քսան հազար հեծյալ և երեսուներկու մարտական փիղ և այդ փղերի հետ էլ հատուկ մարդկանց է տրամադրում, որպեսզի զանազան պատերազմական գործիքներով ուղարկի Հրեաստան: Տասնչորսերորդ հարցում հիշատակված անօրեն Մենեղավոսին, որը նախկինում զանազան անկարգությունների պատճառ էր եղել, Երևելի Անտիոքոսը Գարիզինի կառավարիչ է նշանակում (տե՛ս ԺԵ հարցը): Սա, միանալով Հուդայից զանգատվողներին, էլ ավելի է գրգռում Անտիոքոսին, որպեսզի

նրան հաճոյանալով՝ նորից ձեռք գցի քահանայապետությունը, սակայն նա իր արած չարության փոխարեն պիտի պատիժ գտներ:

Քանի որ թագավորը նրա մասին հարցնում է Լուսիասին, որն էլ որոշակիորեն վկայում է, որ նա չարագործ մարդ է և բոլոր առումներով վնասել է իր ազգին և թագավորությանը: Այնտեղ հիսուն կանգուն բարձրությամբ մի աշտարակ է լինում (1 կանգունը = 0,76704 մ), որի մեջ մոխիր է լցված լինում, և մահապարտներին այնտեղ են գցում, անօրեն Մենելավոսին էլ, այնտեղ նետելով, խեղդում են[388]:

Ահա այսպես է գործադրվում Աստծու արդարությունը Մենեղավոսի նկատմամբ, որը մի այդպիսի անօրինակ պատժով վերանում է աշխարհից: Թեև այս առումով Անտիոքոսը արդարություն է գործում, սակայն միևնույն ժամանակ հավաքած ամբողջ զորքով և փղերով գալիս է Հրեաստան, որպեսզի կոտորելով պատժի իսրայելացիներին: Հուդան, լսելով նրա արշավանքի մասին, ժողովրդին պատվիրում է երեք օր ծոմապահությամբ և արցունքներով աղոթել Աստծուն և Նրա օգնությունը հայցել: Ինքն էլ, ապավինելով Աստծու զորությանը, գիշերը հարձակվում է թագավորի զորքի վրա և չորս հազար զինվոր կոտորելուց հետո, մի փիղ էլ սպանելով, վերադառնում է:

Իրոք, թշնամու զորքը, Հուդայի քաջասրտությունը և համարձակությունը տեսնելով, սկսում է սաստիկ երկյուղից դողալ: Սակայն թագավորը հաջորդ օրը, զորքը կանոնավոր խմբերի

---

388 Հրամայեցին այսպիսի պատժով մեջտեղից վերացնել անօրեն Շմավոն (Մելենավոսին), որ երկրի վրա արժանի չլինի հողի ու պատանքի: Քանի որ նա բազում չարիքներ էր գործել այն սեղանի հանդեպ, ուր պահվում էին սուրբ կրակն ու աճյունը, դրա համար էլ նա մոխրահեղձ մահով գտավ իր վախճանը (*Բ Մակ. 13:7,8*):

բաժանելով, փղերին սև խաղողի գինի տալով, այդ ահարկու կենդանիներին սաստիկ կատաղեցնում է, որպեսզի սրանք էլ ավելի ուժգնությամբ հարձակվեն իսրայելացիների զորքի վրա, և իրենք հեշտությամբ կարողանան հաղթել նրանց: Սակայն երբ այսպիսի ահռելի պատրաստվածությամբ Հուդայի վրա են հարձակվում, անպարտելի Հուդան խիզախությամբ անմիջապես վեց հարյուր զինվոր է կոտորում, իսկ Հուդայի եղբայրը՝ Եղիազարը, զինավառ մի փիղ տեսնելով և մտածելով, որ թագավորը նրա վրա է, ուղղվում է նրա կողմը՝ կոտորելով շրջակա զինվորներին, մտնում է փղի տակ և սրով ճեղքելով կենդանու որովայնը՝ սպանում նրան, սակայն ինքն էլ, նրա տակ մնալով, զոհվում է:

Ինչքան էլ Հուդան և նրա զորքը ցավում են Եղիազարի մահվան համար, այսուհանդերձ, թշնամին էլ, տեսնելով նրա քաջությունը, այնպես է վախենում, որ այլևս չի համարձակվում հարձակվել Հուդայի վրա: Հուդան նույնպես, չցանկանալով այլևս պատերազմել, այլ կողմ է շրջվում, սակայն ճանապարհին որտեղ էլ թագավորական զորք է հանդիպում, անխնա կոտորում է նրանց: Քանի որ Անտիոքոսը չի կարողանում հաղթել Հուդային, բարկությունից պաշարում է Բեթսոր քաղաքը: Թեև քաղաքը շատ ամուր է լինում, և բնակիչներն էլ քաջասրտությամբ պայքարում են, սակայն պաշարումն օրըստօրե երկարելով՝ պաշարվածները պարենի սակավության պատճառով շատ են նեղվում:

Ճշմարիտ է, որ Հուդան նրանց պաշար է ուղարկում, սակայն այն բավական չէր, քանի որ օրենքը պատվիրում էր վեց տարի վարուցանք անել և յոթերորդ տարին չցանել ու բավականանալ նրանով, ինչ հողը ինքնաբերաբար կպարգևի[389]: Այդ

[389] Վեց տարի կմշակես քո հողը և կհավաքես դրա բերքը: Յոթներորդ տարում չես մշակի այն և կթողնես, որ հանգստանա (*Ելք 23:10,11*):

տարին հողի հանգստի (շաբաթանալու) տարին էր, և երկրում բավականաչափ բերք չկար, սրանից բացի՝ թշնամու զորքն էլ էր բավականին նեղություն պատճառում: Թագավորը սրա մասին տեղեկություն չուներ և միայն իր զորքի հետզհետե նվազումը տեսնելով՝ ցանկանում է վերադառնալ իր երկիր, սակայն երբ Ռոդոկ անունով մի հրեա դավաճան թագավորին հայտնում է հրեաների ծանր վիճակը, թագավորը մտափոխվում է և պաշարումն ավելի սաստկացնում: Բնակչությունը, չդիմանալով պաշարմանը, քաղաքը լքելու թույտվություն են խնդրում թագավորից. սրան հավանություն է տալիս Անտիոքոսը և, այսպիսով, կարողանում է գրավել քաղաքը: Սակայն վերոհիշյալ Ռոդոկը, որը, իր ազգին դավաճանելով, քաղաքի կործանման պատճառ է դառնում, հետագայում Հուդայի ձեռքն ընկնելով՝ իր արժանի պատիժն է գտնում և չարաչար մահվան արժանանում: Եվ քանի որ Երուսաղեմի բերդը մինչ այդ ժամանակ թշնամու ձեռքին էր, Հուդան Սիոնի վրա մի այլ ամուր բերդ է կառուցում (տե՛ս ԺԹ հարցը): Երբ թագավորը, Բեթսորից մեկնելով, գալիս է Երուսաղեմ, թեև ճակատ առ ճակատ պատերազմում են, սակայն չեն կարողանում միմյանց հաղթել:

Այո՛, բերդն ամուր է լինում, պատերազմողներն էլ՝ քաջ, սակայն պարենի սակավության պատճառով զորքի մեջ դասալքություն է նկատվում, նաև թագավորի զորքը նույն պատճառով խիստ նեղություններ է կրում, ուստի երկու կողմերն էլ հակվում են հաշտություն կնքելու: Մանավանդ Երևելի Անտիոքոսը Բաբելոնի ճանապարհին մահանում է և ոմն Փիլիպպոսի հետ իր թագը, զգեստները և կնիքը՝ մատանին, Անտիոք է ուղարկում, որպեսզի իր որդուն՝ Անտիոքոսին, թագավորեցնեն, սակայն հիշյալն այդ ժամանակ Անտիոք գնալու փոխարեն Եգիպտոս է շարժվում (տե՛ս ԻԲ հարցը), պատերազմում է Անտիոքի դեմ և գրավում այն:

Արդ, թագավորն ու նախարարները, այս տխուր լուրը ստանալով, Լուսիասի հորդորներն ընդունելով, վերջապես որոշում են հաշտվել Հուդայի հետ և օր առաջ Փիլիպպոսի դեմ արշավելուն պատրաստվում: Սրա մասին տեղեկացնում են Հուդային, որն էլ իր հերթին է հավանություն տալիս: Թագավորն ու նախարարները երդումով պայման են կապում, որ հրեաները նախկինի նման բոլոր առումներով ազատ են, և այսպիսով, Հուդան և ժողովուրդը վստահորեն բերդից դուրս են գալիս:

Հետո թագավորը, տաճար մտնելով, զարմացած դիտում է կառույցները և զարդարանքները և սիրելով զոհաբերություն է անում և ընծաներով պատվում տաճարը, սակայն Հուդայի բերդի ամրությունը տեսնելով՝ զղջում է իր արաքի համար: Այս է պատճառը, որ քանդել է տալիս շրջակա պարիսպը: Այսուհանդերձ, Հուդային է՛լ ավելի պատվելով՝ Աքիայի կողմերից մինչև Գերարա գավառների զորքերի հրամանատար է կարգում, և թեև այս ընտրությունը Աքիայի բնակիչների սրտով չի լինում, սակայն Լուսիասը իր քաղցր խոսքերով համոզում է նրանց: Ապա թագավորը, Երուսաղեմից Անտիոք մեկնելով, պատերազմում է Փիլիպպոսի դեմ, որը հանիրավի գրավել էր այդ քաղաքը, և հափշտակողից վերստին գրավում է այն:

Օրինա՛կ վերցրու Հուդայի վարքից, որը կատարյալ հավատքով, ծոմապահությամբ և արտասուքներով աղոթում է Աստծուն և Նրա օգնությանը ապավինելով՝ պատերազմում թշնամու դեմ, և ոչ միայն իր թշնամիներին է հաղթում, այլև փառավորվում է և մեծ պատվի արժանանում: Քանի որ ինչպես վերը հիշատակվել է, Անտիոքոսը, որը անհամար զորքով Հուդային պատժելու համար նրա դեմ էր դուրս եկել, ստիպված է լինում նրան փառքով և կոչումով պատվելու: Առաքինի մարդը, ուշ թե շուտ, վարձատրվում է և արժանի լինում

ամեն հարգանքի. աստվածային օրենքների հանդեպ նախանձախնդրություն ունեցող մարդուց ակնածում է ամբողջ աշխարհը, մինչև իսկ անդրդվելի մարդիկ էլ ստիպված են լինում խոնարհվելու առաքինության առջև:

Հարց ԻԶ: **Հետագայում ի՞նչ են լինում վերոհիշյալ Անտիոքոսը և Լուսիաս նախարարը:**

Պատասխան: Երկուսն էլ Դեմետր թագավորի հրամանով չարաչար մահվան են դատապարտվում: Քանի որ հիշյալ Դեմետրը ԺԲ հարցում հիշատակված Սելևկիոս թագավորի որդին էր, մանկությունից պատանդ էր Հռոմում, և ապա մի հնար գտնելով՝ ազատվում է և մեծ զորքով Անտիոք արշավում ու այն գրավելով՝ գերի է վերցնում Անտիոքոսին և Լուսիասին ու մինչև իսկ առանց իր մոտ բերել տալու սպանել է տալիս և ինքը թագավորում:

Այդ Անտիոքոսի հայրը Երևելի Անտիոքոսն է, որը Սելևկիոսի եղբայրն է լինում, և երկուսն էլ Հռոմում պատանդ են լինում: Երբ մահանում է Մեծն Անտիոքոսը, թեև Սելևկիոսը թագավորում է որոշակի ժամանակաշրջան, սակայն Երևելի Անտիոքոսը, փախչելով Հռոմից և գալով, թունավորում է Սելևկիոսին (տե՛ս ԺԳ հարցը) և նրա փոխարեն ինքը թագավորում. ահա այս է պատճառը, որ Դեմետրն էլ նրա որդուն՝ Անտիոքոսին է սպանել տալիս:

Այստեղ ուշադրության է արժանի Երուսաղեմի դժբախտ ժողովրդի վիճակը, քանի որ Դեմետրիոսի թագավորելուն պես Իսրայելից չարիք նյութող և խռովություններ սադրող մի քանի մարդիկ են գալիս թագավորի մոտ և չակնածելով Հուդայի հայրենասիրությունից և քաջագործություններից՝ գանգատվում նրանից: Նրանց է միանում Հակիմոս անունով մի չարագույն մարդ (սա նախկինում Երուսաղեմում քահանայապետ էր եղել

և իր գործած չարիքների համար պաշտոնանկ արվել): Սա դարձյալ քահանայապետությունը ձեռք գցելու համար մեծամեծ նվերներ և ընծաներ է տալիս Դեմետրիոսին, և բոլորը միաբան անխնորեն գանգատվում են Հուդայից:

Երբ թագավորը, մասնավորաբար Հակիմոսին կանչելով, Հրեաստանի մասին տեղեկություն է հարցնում, վերջինս, չցանկանալով առիթը բաց թողնել, բոլոր չարիքների համար Հուդային է մեղադրում և կեղծավորաբար թագավորին առաջարկում, որ մարդ ուղարկի՝ իր ասածը ստուգելու, և խնդրում է վերստին իրեն վերադարձնել քահանայապետությունը: Թեև թագավորը, սրան հավատալով, քահանայապետություն է շնորհում, սակայն իր հերթին իր հավատարիմ և պատվավոր մարդկանցից Բաքիմ անունով մեկին ուղարկում է, որ նա իբր թե վերահասու լինի իրավիճակին և տեղեկացնի իրեն:

Հիշյալ Բաքիդը, Հակիմոսի հետ բազում զորքով Երուսաղեմ գալով, Հուդային կասկածի տեղիք չտալու համար մարդ է ուղարկում և բարեկամաբար տեղեկացնում է իր գալստյան մասին: Սակայն Հուդան, հասկանալով, որ նա չար դիտավորությամբ է եկել, վստահ չլինելով, զգուշությունը կրկնապատկում է: Այնուամենայնիվ, մի քանի պարզամիտ հրեաներ, որոնք Հակիմոսից չարություն չեն սպասում (քանի որ քահանա էր և Ահարոնի ցեղից), նրա մոտ են գնում, որպեսզի շնորհավորեն կամ բարի գալուստ մաղթեն: Թեև Բաքիդը նախ պատվով ընդունում է նրանց՝ հայտնելով, որ վնաս պատճառելու ոչ մի մտադրություն չունի, և երբ սրանք, հավատալով նրա խոսքերին, անհոգ էին, նույն օրը վաթսուն մարդ կոտորելով՝ մարմինները մի անջրդի հորի մեջ է գցել տալիս:

Երբ ժողովուրդը տեսնում է նրա այս անգթությունը, սկսում է ավելի զգուշավոր լինել: Ապա Բաքիդը, մտնելով Երուսաղեմ, Հակիմոսին քահանայապետ է կարգում, և ապա

պաշարելով Բերայեթ քաղաքը, և՛ իր զորքի փախստականներին, և՛ բնակիչներից շատերին կոտորելով՝ նրանց դիակները հորն է նետել տալիս:

Բաքիդը, Հակիմոսի տրամադրության ներքո բազում զորք թողնելով, ամբողջ Հրեաստանի կառավարիչ է կարգում, իսկ ինքը վերադառնում է թագավորի մոտ՝ իրավիճակի մասին տեղեկություն տալու:

Հարց ԻԷ: **Երբ անօրեն Հակիմոսը[390] իշխան է կարգվում, ինչպիսի՞ն է լինում ժողովրդի վիճակը:**

Պատասխան: Ժողովուրդը շատ թշվառ վիճակում է հայտնվում: Որովհետև բազում չար մարդիկ, հավաքվելով Հակիմոսի շուրջը, հետամուտ են լինում՝ երկիրն ավերելու, ժողովրդին հարստահարելու, կեղեքելու և պատժելու:

Հուդան, տեսնելով ժողովրդի կրած նեղությունները, չկարողանալով հանդուրժել, Հրեաստանի շրջակայքում շրջելով, կոտորում է բոլոր այն հրեաներին, որոնք, թողնելով իրենց հայրենի օրենքները, հեթանոսություն են ընդունում, այնպես որ նրանք սկսում են այնքան վախենալ, որ այլևս Հրեաստան չեն գալիս:

Դու Հակիմոսի չարությա՛նը նայիր. թեև երկրի կառավարիչը է դառնում, սակայն տեսնելով, որ չի կարողանում հաղթել Հուդային, դարձյալ Անտիոք է գնում՝ գանգատվելու թագավորին: Այնտեղ զանազան զրպարտություններ ներկայացնելուց հետո եզրակացնում է, որ քանի դեռ Հուդան ողջ է, Հրեաստանում խաղաղությունն անհնար է: Թագավորի պալատական ծառաները, որոնք վաղուց Հուդայի թշնամիներն էին, թագավորին է՛լ ավելի գրգռելով, վերջապես հրաման են ստանում, որ

---

390 Ըստ Սուրբ գրքի՝ Աղկիմոս:

Նիկանոր նախարարը, Հրեաստան գնալով, ժողովրդին կոտորելով և բոլոր միջոցները ձեռնարկելով, բռնի Հուդային:

Նիկանորը անհամար զորքով Հրեաստան գալուն պես չարասիրտ բազմաթիվ հրեաներ, որոնք Հուդայի երեսից փախստական էին դարձել, միանում են Նիկանորի զորքին: Սակայն ժողովուրդը, լսելով Նիկանորի գալու մասին, թեև շատ է վախենում, սակայն արտասվալից աղոթքներով դիմում է Աստծուն: Արդ, Նիկանորը զորք է ուղարկում Դեսայոմ գյուղ: Հուդայի Շմավոն եղբայրը, որը նախկինում չէր վախենում Նիկանորից, այս անգամ մի փոքր պատերազմելուց հետո սկսում է վախենալ, Նիկանորը նույնպես, իմանալով, որ իսրայելացիների զորքն անչափ քաջ և համարձակ է, պատերազմելու համարձակություն չունենալով, Հուդայի մոտ մարդ է ուղարկում և առաջարկում հաշտվել:

Ճիշտ է՝ նրա միտքը չար էր, սակայն Հուդայից վախենալով՝ նման նենգ միջոցի է դիմում, որպեսզի մի հնարով նրան իր ձեռքը գցի: Հուդան, ընդունելով նրա պատգամաբերին, խորհրդակցում է կարևոր մարդկանց հետ, և երբ բոլորն էլ հավանություն են տալիս, Նիկանորը Երուսաղեմ է գալիս: Թեև այնտեղ հաշտության պայմանագիր են կնքում, սակայն Հուդան, բոլոր առումներով զգուշանալով, իր զորքը միշտ պատրաստ է պահում, որ միգուցե հանկարծ թշնամություն առաջանա, և թշնամին դրժի իր խոստումը:

Հիրավի, Նիկանորի մտադրությունը Հուդային բռնելով թագավորին հանձնելն էր, սակայն նրան տեսնելով՝ այնքան է հիանում նրանով, որ նրան սիրով պատվելուց հետո Երուսաղեմի բնակիչներին էլ ոչ մի վնաս չի տալիս, այլև իր զորքերն էլ ցրելով՝ խնդրում է Հուդային, որ իրենց միջև խնամիություն հաստատվի, և որ իրենց սիրո և բարեկամության կապն ավելի ամուր և տևական լինի: Այս առաջարկին Հուդան էլ հավանություն

տալով՝ խնամիական կապով ամրապնդում են իրենց բարեկամությունը, որը, դժբախտաբար, երկար չի տևում:

Քանի որ Հակիմոս քահանայապետը այնքան է դժկամում, զայրանում նրանց այսպիսի հաշտության և բարեկամության համար, որ վերստին անձամբ գնալով թագավորի մոտ՝ գանգատվում է նաև Նիկանորից[391]՝ ասելով. «Նիկանորը բարեկամացել է թշնամուդ հետ, և ազգականներ են դարձել»: Թագավորը բարկանալով իսկույն հրովարտակ է հղում, որով Նիկանորին հրամայում է իսկույն Հուդային, ձերբակալելով, ոտքերն ու ձեռքերը շղթայած, ամեն տեսակի անարգանքների ենթարկելով, Անտիոք բերել: Թեև այս առումով Նիկանորը անչափ տխրում է, քանի որ գիտեր, որ Հուդան հանցավոր չէ, և չի ցանկանում, որ նա պատժվի, սակայն նաև երկնչում է բացահայտորեն ընդդիմանալ թագավորի հրամանին, ուստի մտադրվում է բռնել Հուդային և թագավորի մոտ տանել: Ճշմարիտ է, որ Նիկանորը ոչ մեկին ոչինչ չի ասում, սակայն մյուս կողմից անկարող սրտի մտադրությունը ամբողջովին ծածուկ պահելու, երբ դեմքը փոքր-ինչ խոժոռվում է, Հուդան հասկանում է, որ սրտի խորքում իր դեմ անպատճառ թշնամություն է պահում, ուստի սրա պատճառով նրա մոտից հեռանալով՝ այլ տեղ է գնում, որպեսզի իրենից խռովության պատճառ չլինի:

Նիկանորը, տեսնելով, որ իր գաղտնի նպատակը չի հաջողվում, սրտում պահած թշնամությունը դուրս հանելով, տաճար է մտնում և քահանաներին ստիպում, որ Հուդային իրեն հանձնեն, քանի որ կարծում է, որ այնտեղ է ապաստանել: Քահանաները, որոնք այդ պահին Աստծուն զոհ մատուցելիս են լինում, երդումով հաստատում են, որ չեն տեսել Հուդային, սակայն հիշյալ անզգամ զորավարը չի ցանկանում հավատալ և ձեռքը

---

391 Ըստ Սուրբ գրքի՝ Նիկանովը:

դեպի տաճար պարզելով՝ սպառնում է. «Եթե Հուդայի ձեռքն ու ոտքը կապած՝ ինձ չտաք, տաճարը և զոհասեղանը հիմնահատակ քանդելով՝ մեհյան կկառուցեմ»: Սա ասելով՝ երդվում է, և այս սպառնալիքներից քահանաները, ձեռքները երկինք բարձրացնելով, սկսում են աղաչել Աստծուն, որ իրենց պահպանի:

Այդ պահին Հռաքս անունով մի պատվավոր մարդ է լինում հրեաների մեջ, որը միշտ Աստծուն հաճելի վարքի տեր էր և որպես հայր խնամք էր տանում իր ազգին: Նիկանորը, հինգ հարյուր մարդ ուղարկելով, պաշարում է նրա տունը, որ բռնելով սպանի: Հռաքսն անձնատուր չի լինում և դիմադրում է, և երբ թշնամին ցանկանում է հրկիզել նրա տան դուռը, նա թշնամու ձեռքը չընկնելու համար իսկույն սուրն իր որովայնն է մտցնում ինքնասպան լինելու նպատակով, սակայն շտապելուց սուրը, ուղղակի չմտնելով, մի քիչ շեղվում է, և անմիջապես չի մահանում, ինչպես ինքն էր ցանկանում, և այս դեպքը, վիատեցնելու փոխարեն, նրան մի նոր և ավելի հանդուգն քայլի է դրդում:

Քանի որ երբ տեսնում է, որ իր նպատակից վրիպել է, տան պարսպից ինքն իրեն թշնամու վրա է գցում և ընկնելուց բազմաթիվ վերքերից հեղեղի նման արյունը սկսում է հոսել: Այսուհանդերձ դարձյալ ճիգ գործադրելով՝ ցրում է թշնամուն և այնտեղ մի ժայռի բարձրանալով՝ դուրս թափված փորոտիքը դեպի երկինք է բարձրացնում և Աստծուն խնդրում, որ իր բաղձանքի համաձայն՝ հատուցի և ողորմի իրեն ու իր ազգին, և այս ձևով հայրենասեր մարդը մահանում է թշնամու ահաբեկված աչքերի առջև:

Հարց ԻԸ: **Այսպիսի անգթություն գործած Նիկանորը հարձակվո՞ւմ է Հուդայի վրա:**

Պատասխան: Հարձակվում է, սակայն զորքը, խայտառակ պարտություն կրելով, անմիջապես փախչում է: Որովհետև

այն ժամանակ Հուդան Փարսաղայում էր, որի մասին լսելով՝ Նիկանովրը ամբողջ զորքով շտապում է այնտեղ, և սկսում են պատերազմել: Աստծու ողորմությամբ հաղթելով՝ Հուդան Նիկանովրի զորքից հինգ հարյուր մարդ է կոտորում, իսկ մնացյալին փախուստի է մատնում, Նիկանովրն էլ փախչելով գալիս է Երուսաղեմ:

Խեղճ քահանաները երկուղից նրան պատվով են ընդունում և շտապում են տեղեկացնելու, որ թագավորի կյանքի համար զոհեր են մատուցում: Նա, չընդունելով նրանց զոհը, ծիծաղելով ծաղրում է նրանց, սրանից բացի՝ անչափ հպարտությամբ նորից սպառնում է քահանաներին՝ ասելով, որ եթե Հուդային և նրա զորքն իրեն չհանձնեն, հրի կմատնի տաճարը և նրանցից էլ վրեժխնդիր կլինի. սա ասելով՝ բարկությամբ դուրս է գալիս:

Դու հիշյալի կատաղությո՛ւնը տես. նախկինում քահանաներին ստիպում էր, որ միայն Հուդային իրեն հանձնեն, իսկ այս անգամ՝ պարտվելուց հետո, երբ դեռ նոր-նոր է մազապուրծ եղել Հուդայի ձեռքից, պահանջում և ստիպում է, որ Հուդային իր զորքի հետ բռնեն, բերեն: Այսպիսի պահանջ ներկայացնելը մեծ նախատինք էր նրան, քանի որ զորք և զենք ունենալով՝ անկարող է լինում բռնելու Հուդային և խեղճ քահանաների դասից է հիմարաբար պահանջում, որ բռնեն նրան, այլապես սպառնում է պատժել: Քահանաները, որոնք գիտեին նրա չար մտադրության մասին, նախկինի նման այս անգամ էլ սեղանի մոտ աղոթքով դիմում են Աստծուն, որ տաճարն ազատի բռնակալից:

Հետո, երբ Հուդան երեք հազար զորքով Սամարիայի կողմերն է գալիս, Նիկանովրը, այլևայլ տեղերից անչափ շատ զորք բերել տալով, նորից է պատրաստվում հարձակվելու Հուդայի վրա, բայց այս անգամ, մեկ այլ օր պատերազմելու

համարձակություն չունենալով, որոշում է շաբաթ օրը հարձակվել: Քանի որ բազում հրեաներ են լինում իր իշխանության ներքո, նրանց ևս ցանկանում է հետը տանել, սակայն նրանք աղաչում են՝ ասելով. «Այդպիսի բռնություն մի՛ գործադրիր, պիտի պատվել շաբաթ օրը, քանի որ Ամենակալ Աստծու հանգստանալու պատվին պետք է՝ մարդն էլ այդ օրը հանգստանա»: Նա պատասխանում է. «Մի՞թե ամենակարող Աստված կա, որ այս պատվիրանը տվել է ձեզ», և թեև նրանք հաստատական պատասխան են տալիս, սակայն անզգամ մարդը պատասխանում է. «Աշխարհի վրա զորավորը նա է, ով սրով իշխում է և թագավորի հրամանը գործադրում»:

Նիկանովրը, որի հիշյալ պատասխանը ծանր հայհոյություն էր առ Աստված, պատերազմում ընկնում է՝ չարաչար խողխողվելով: Քանի որ երբ Հուդան լսում է նրա՝ պատերազմի պատրաստվելու մասին, Աստծու ամենակարող զորությանն ապավինելով, իր զորքին էլ քաջալերում է, որ չվախենան, մանավանդ երազ էլ է տեսնում և դա պատմում է զորքին, որից էլ բոլորը սրտապնդվում են: Քանի որ իր երազում տեսել էր Ոնիա քահանայապետին[392], որն Աստծուն աղաչում էր ժողովրդի համար, ինչպես նաև տեսել էր շատ փառահեղ մեկին, որի մասին Ոնիան Հուդային ասել էր՝ Երեմիա մարգարեն է, որը միշտ Աստծուն բարեխոսում է ժողովրդի փրկության համար, և որը, Հուդային մի ոսկեզարդ սուսեր տալով, ասում է. «Առ՛ այս սուրբ սուսերը՝ որպես Աստծուց պարգև, որով պիտի ջնջես բոլոր թշնամիներին»[393]:

---

[392] Ոնիան այն քահանայապետն է, որին սպանել էր անօրեն Անդրոնիկոսը (տե՛ս ԺԴ հարցը):

[393] Այդտեղ խոսել սկսեց Օնիան ու ասաց. «Սա մեր եղբայրասեր ծերունին է, որ միշտ ու հաճախ աղոթք է մատուցում Աստծուն»: Դա Աստծու մարգարե Երեմիան էր: Երեմիան իր աջ ձեռքը մեկնելով՝

Արդարև, Հուդայի այս երազը բոլորի համար մխիթարություն է լինում, այնպես որ որոշում են քաջաբար պատերազմել: Երբ երկու կողմերը սկսում են պատերազմել, Հուդան, նորից աստվածային օգնությունը խնդրելով, առյուծաբար հարձակվում է թշնամու վրա և մեկ օրում թշնամու զորքից երեսունհինգ հոգու կոտորում: Մանավանդ Նիկանովրի ընկնելուց հետո զորքն այնքան է երկյուղում, որ մինչև իսկ իրենց զենքերը թողած՝ փախչում են: Հուդան իսկույն իսրայելացիների քաղաքներում, ի նշան թշնամու պարտության, փողեր է հնչեցնում, ժողովուրդն էլ, պարտվածների հետևից ընկնելով, բոլորին կոտորում է և նրանց բանակն էլ կողոպտում: Սրանից բացի՝ Հուդան, Նիկանովրի մարմինը գտնելով, գլուխը, աջ ձեռքը և լեզուն կտրել տալով, Երուսաղեմ է տանում բոլոր հեթանոսներին խրատ լինելու համար, որպեսզի իսրայելցիներին չվնասեն: Լեզուն, որով հայհոյել էր Աստծուն, կտրատել տալով երկնքի թռչուններին է գցում, ձեռքը, որ հանդգնաբար դեպի տաճար էր պարզել, տաճարի դիմաց կախել է տալիս, գլուխն էլ, մի ձողի անցկացնելով, Երուսաղեմի աշտարակներից մեկին է դնում՝ ի տես ժողովուրդների և համայն աշխարհի:

Այսպիսի մեծ հաղթանակից բոլոր իսրայելացիները անհուն ուրախությամբ գոհություն և փառք են տալիս Աստծուն և Նրա՝ իսրայելացիների հանդեպ ողորմությունը անմոռաց պահելու համար որոշում են մեծ հանդիսությամբ տարեցտարի նույն օրը տոնել: Այս սքանչելի և փառավոր հաղթանակից հետո Երուսաղեմի շրջանը միառժամանակ ազատվում է թշնամու բռնություններից և անիրավ կեղեքումներից:

Հուդայի ձեռքին դրեց ոսկե մի սուսեր: Տալու ժամանակ նա այսպես ասաց. «Ընդունի՛ր այս սուսերն իբրև Տիրոջ կողմից տրված սուրբ պարգև, որովհետև դրանով ես ոչնչացնելու բոլոր թշնամիներին» (*Բ Մակ. 15:14–16*):

Հարց ԻԹ: **Հուդայի՝ Նիկանովրին սպանելուց և նրա ամբողջ զորքը կոտորելուց հետո Դեմետր թագավորը համարձակվո՞ւմ է նորից զորք ուղարկել նրա դեմ:**

Պատասխան: Այո՛, համարձակվում է: Հիրավի, վերոհիշյալ հաղթանակից հետո բավական ժամանակ Հրեաստանը խաղաղ և հանգիստ վիճակում էր, սակայն և՛ Դեմետր թագավորի, և՛ այլ թշնամիների երեսից Իսրայելը չէր կարող տևական խաղաղություն և հանգստություն ունենալ, և սա հայտնի լինելով՝ Հուդան ցանկանում է դաշինք կնքել հռոմեացիների հետ և նրանց հովանու ներքո մտցնել իր երկիրը՝ հուսալով, որ անհրաժեշտության դեպքում նրանք հզորաբար կպաշտպանեն երկիրը:

Որովհետև այն ժամանակ Հռոմի պետությունը շատ զորեղ էր և մեծ փառք ուներ, իր իշխանության ներքո էր վերցրել բազմաթիվ երկրներ, որոնք պաշտպանում էր թշնամիներից, երբ դրանք հնազանդ են լինում իրեն: Այս է պատճառը, որ Հուդան երկու պատվավոր մարդկանց է ուղարկում Հռոմ, որի համար էլ հռոմեացիները, շատ ուրախանալով, խոստանում են նրա խնդրանքը կատարել, ուստի կնքված դաշինքի երկու օրինակ պղնձյա տախտակների վրա գրելով՝ մեկը Հռոմում են պահում, իսկ մյուսն ուղարկում են Հուդային, որ Երուսաղեմում պահի: Նաև գրում են Դեմետր թագավորին, որ նեղություն չտա իսրայելացիներին, իսկ եթե ոչ, իմանա, որ կպատժվի:

Այո՛, դաշնագիրը երկու կողմերն էլ վավերացնում են, սակայն Հուդայի մարդիկ դեռ Հռոմից չվերադարձած՝ Դեմետր թագավորը, որը լսել էր Նիկանովրի մահվան մասին, վերոհիշյալ Բաքիդին քսան հազար հետևակ և երկու հազար ձիավոր զորքով ուղարկում է իսրայելացիների դեմ, որոնք հարձակվում են Մեսաղոթ քաղաքի վրա և շատերին կոտորում: Հուդան, նրանց

գալը լսելով, սկսում է վախենալ և մեծապես մտատանջվում է, մանավանդ այն ժամանակ իր տրամադրության ներքո հազիվ երեք հազարի հասնող զորք է ունենում, որոնցից շատերն էլ վախենալով հետզհետե ցրվում են, և երբ թշնամին արդեն ավերում է երկիրը, Հուդայի մոտ ութ հարյուր մարդ է մնում:

Այստեղ խրա՛տ ընդունիր Հուդայի վիճակից. նա, ով նախկինում, հույսն Աստծու վրա դնելով, մեծամեծ հաղթանակներ էր տանում, այս անգամ հռոմեացիների վրա հույսը դնելով՝ սկսում է վախենալ: Արդարև, Հուդայի մարդկային զորությանը հուսալու պատճառով Աստված էլ նրան թողնում է բնական վիճակում: Այնուամենայնիվ, որովհետև ինքնին անչափ քաջասիրտ էր, ուստի չթերանալով կատարելու իր պարտականությունները՝ այդ ութ հարյուր զորքով ցանկանում է դիմակայել թշնամուն, սակայն զորքը հայտնում է, որ առայժմ անկարող է դիմադրելու թշնամու ահագին զորությանը, ուստի առաժմ պիտի պաշտպանողական դիրք բռնեն:

Հուդան, որ մինչ այդ պահը երբեք թիկունք չէր դարձրել թշնամուն և միշտ քաջաբար կռվել էր և բազմիցս հաղթել, այս անգամ էլ չի ցանկանում թուլասիրտ երևալ և իր զորքին պատասխանում է. «Օ՜ն, քաջությամբ կռվենք, և եթե նույնիսկ մահանանք էլ, գոնե մեր եղբայրների համար մահանալով՝ մեր անվանն անպատվություն չենք բերի»: Այս խոսքերից քաջալերված՝ զորքը, երբ երկու կողմերն էլ սկսում են պատերազմել, նախ թշնամու զորքից շատերին է կոտորում, և շատերն էլ փախուստի են դիմում, սակայն կրկին հարձակվելով՝ հաղթում են, և Հուդան ընկնում է, իսկ մնացած զորքը՝ փախչում:

Լա՛վ հասկացիր. ինչպես որ Հուդան ասել էր, թե մահանանք մեր եղբայրների համար և չարատավորենք մեր անունը, իրոք, մինչև իր կյանքի վերջին ժամը առանց թերանալու կատարում է պարտքը և եռանդուն նախաձեռնությամբ պատերազմի

դաշտում դյուցազնաբար մահանում՝ միշտ Աստծու և իր ազգի սիրով վառված: Կրոնի և օրենքների ջերմ պաշտպան լինելով՝ Իսրայելի բոլոր ցեղերը երկար ժամանակ գովում և ողբում են նրան[394]: Իսկ նրա մարմինը Հովնաթան և Շմավոն եղբայրները բերում և թաղում են Մավդիմում՝ հոր կողքին:

Ինչքան էլ գրվել է Հուդայի մղած պատերազմների և քաջագործությունների մասին, այսուհանդերձ Սուրբ գիրքը հայտնում է, որ դրանք այնքան շատ էին, որ ամբողջն անհնար է եղել գրել[395]:

Հարց Լ: **Հուդայի մահվանից հետո ինչպիսի՞ն է լինում իսրայելացիների վիճակը:**

Պատասխան: Շատ խեղճ ու թշվառ: Որովհետև շատ անզգամ մարդիկ, Հուդայից վախենալով, իրենց սրտերում սնուցած անօրեն և անկարգ խորհուրդները չէին կարողանում գործադրել, և երբ նա մահանում է, պատեհ առիթ գտնելով՝ մինչ այդ պահը գաղտնի պահած իրենց թշնամությունը աշխարհի առջև են պարզում, և ոչ միայն իսրայելացիներին վնասի և տկարության պատճառ դառնում[396], այլև վրեժխնդրության ոգով տոգորված, Հուդայի բարեկամներին հիշյալ Բաքիդի

---

394 Իսրայելացիները մեծ կոծով ողբացին, սուգ պահեցին բազում օրեր.... հետո սկսեցին խոսել և ասել. «Ինչպե՞ս ընկավ, ինչպե՞ս տապալվեց Իսրայելի հզոր փրկիչը» (*Ա Մակ. 9:20, 21*):

395 Այս մատյանում, սակայն, չի գրվել այն բոլոր մարտերի, ճակատամարտերի, պատերազմների մասին, որ մղել է Հուդան, և այն քաջությունների մասին, որ գործել է նա, որովհետև դրանք չափազանց շատ են (*Ա Մակ. 9:22*):

396 Հուդայի մահվանից հետո անօրենները հայտնվեցին Իսրայելի բոլոր սահմաններում, աճեցին, բազմացան նրանք, որ անօրենություն էին գործում (*Ա Մակ. 9:23*):

մոտ տանելով՝ տարատեսակ վիշտ և նեղություն են պատճառում, ծաղրում, անարգում են, և իրենք էլ ծաղրելի դառնում:

Երբ հրեաները այսպիսի ողորմելի և թշվառ վիճակում են լինում, Հուդայի բարեկամները, այսինքն՝ ժողովրդի այն հատվածը, որը նախանձախնդիր էր աստվածային սուրբ օրենքների պահպանությանը, նրա Հովնաթան եղբոր մոտ է գալիս և ասում. «Եղբայրդ՝ Հուդան, մահացավ, նրա նման մեկը չկա, որ թշնամու դեմ կանգնի. արդ, նրա փոխարեն քեզ ենք հարմար գտնում, որ մեզ իշխան և գլուխ լինես թշնամիների դեմ պատերազմելիս»:

Արդարև, հիշյալ Հովնաթանը, նրանց աղաչանքներից դրդված, մանավանդ ազգի փրկության համար ժողովրդի առաջնորդ լինելով, թշնամիների դեմ պատերազմելու հավանություն է տալիս: Այս է պատճառը, որ վերոհիշյալ Բաքիդը հետամուտ է լինում՝ Հովնաթան և Շմավոն եղբայրներին սպանելու, և նրանք ստիպված են լինում փախչելով ապաստանելու Թեկուա անապատում, քանի որ զենք և պատերազմական գործիքներ չունեին:

Հովնաթանը, նաբատացի արաբների հետ մտերիմ և բարեկամ լինելով, իր Հովհաննես եղբորը մի քանի մարդկանց հետ նրանց մոտ է ուղարկում՝ օգնություն հայցելու, նաև խնդրելով, որ հանուն բարեկամության՝ անհրաժեշտ զենք տան: Նրանք թեև բարեկամության համար զենք են տալիս, սակայն երբ Հովհաննեսը դրանք բերելիս է լինում, Դամասա քաղաքի մեծամեծները և Համբրիի որդիները, նրան բռնելով, վերցնում են զենքերը, Հովհաննեսին էլ սպանում:

Այնուհետև, երբ նրանք մի հարսանիքի առիթով ուրախ-զվարթ երգելով և նվագարաններով իրենց քաղաք հարս էին տանում, Հովնաթան և Շմավոն եղբայրները, սրա մասին լսելով, իսկույն զորքով նրանց ճանապարհին դարան են մտնում,

և նրանց անցնելու ժամանակ հանկարծ հարձակվելով՝ շատերին սպանում են և նրանց ունեցվածքն էլ կողոպտում: Այս պարագայում Հովնաթանը, այդպիսի հարված տալով, ոչ միայն իր եղբոր մահվան վրեժը լուծելու նպատակով է փչացնում նրանց հարսանեկան ուրախությունը, այլև որ ուրիշներին էլ օրինակ լինի, որպեսզի այնուհետև ոչ մեկը չհամարձակվի վնասելու հրեա ժողովրդին:

Այնտեղից շարժվելով՝ Հովնաթանը գնում է Հորդանան գետի եզերքին գտնվող մի այնպիսի տեղ, որի չորս կողմը լճեր էին, և միայն մի նեղ ճանապարհով կարելի էր այնտեղ հասնել, հետևաբար իրենց վրա զորքով հանկարծ հարձակվել անհնար էր: Բաքիդը, լսելով Հովնաթանի արարքի մասին, ցանկանում է նրա դեմ արշավել, սակայն այլ օրերի չհամարձակվելով՝ միայն շաբաթ օրն է գնում՝ հուսալով, որ հրեաներն այդ օրը չեն պատերազմի: Սակայն, ինչպես հիշատակվել է ԺԶ հարցում, Հովնաթանի հայրը՝ Մատաթին, շաբաթ օրն է կռվում, երբ թշնամին նախահարձակ է լինում, Հովնաթանը նույնպես, պատրաստ ժողովրդի փրկության համար սուրբ օրը կռվելու, նախապես Աստծուն է դիմում աղոթքով և զորքին էլ խրախուսելուց հետո նախ ինքն է հարձակվում Բաքիդի վրա և մոտ է լինում՝ նրան սրով սպանելու, երբ նա հետ դառնալով փախչում է, նրա զորքերն էլ շփոթված սկսում են փախչել, և Հովնաթանը, նրանց հետապնդելով, հազար մարդ է կոտորում:

Այն ժամանակ Բաքիդը, տեսնելով նրա քաջությունը, չի համարձակվում շարունակել պատերազմը և Երուսաղեմ է վերադառնում, սակայն Իսրայելի տարածքում շատ քաղաքներ ամրացնելով՝ հատուկ զորքեր է թողնում թշնամական դիտավորությամբ, որպեսզի իսրայելացիները միշտ հնազանդ լինեն և իսրայելացիների մեծամեծների որդիներին որպես պատանդ

վերցնելով՝ պահում է Երուսաղեմի բերդում նրանց ծնողներին երկյուղ ներշնչելու համար:

Դու տե՛ս անօրեն Հակիմոսի հանդուգն լրբությունը և նրան հասած աստվածային պատիժը. նա, ով արդեն ապօրինաբար հափշտակել էր քահանայապետությունը, հանդգնում է քանդել տաճարի ներքին բակի պարիսպը (որ կառուցել էին Եզրաս, Անգեաս և Զաքարիա մարգարեները), սակայն աստվածային սքանչելիքով իսկույն պատժվում է, այսինքն՝ կզակն ու ատամները դուրս են ընկնում, լեզուն բռնվում է, խոսելու անկարող և տառապելով՝ չարաչար մահանում է[397]:

Հակիմոսի այսպիսի տանջանքներով մահանալու ժամանակ Բաքիդն էլ Երուսաղեմից Անտիոք է մեկնում թագավորի մոտ գնալու համար: Աստծու ողորմությամբ այսպիսով Հրեաստանը, զերծ թշնամու հարստահարություններից, երկու տարի խաղաղ է լինում, Հովնաթանն էլ իր զորքով հանգիստ մի շրջան է ունենում: Սակայն օրինազանց հրեաները, հենց սկզբից էլ Հովնաթանին թշնամի լինելով, նախանձելով նրա այս խաղաղ վիճակին, հավաքվելով գնում են Բաքիդի մոտ, գրգռում են նրան, որպեսզի սա վերադառնալով մի գիշերում ոչնչացնի և՛ Հովնաթանին, և՛ նրա ամբողջ զորքը:

Եվ քանի որ Բաքիդն արդեն իսկ Հովնաթանից վրեժ լուծելու փափագ ուներ, այդ քսու և նախանձասիրտ մարդկանց մեքենայությունների պատճառով զորք ժողովելու պատրաստություն տեսնելով՝ նախ Իսրայելում գտնվող իր համախոհներին գաղտնի գրությամբ հանձնարարում է մի հնարով բռնել Հովնաթանին: Սակայն Հովնաթանը, իմանալով նրանց չար

---

397 Այդ ժամանակ դիվահարվեց Հակիմոսը.... թուլացավ նրա երախը, պապանձվեց լեզուն. նա ոչ մի բան չէր կարողանում ասել ու իր տան վերաբերյալ կարգադրություններ անել: Այդ ժամանակ Հակիմոսը մեռավ մեծ տանջանքներով (*Ա Մակ. 9:55,56*):

մտադրության մասին, մեծամեծներից հիսուն մարդ բռնելով սպանում է և զորքով Բեթբեսի քաղաք գնալով՝ ամրացնում է այն և այնտեղ բնակվում, ինչպես մի ապահով վայրում:

Այն ժամանակ Բաքիդը անհամար զորքով գալիս և պաշարում է հիշյալ քաղաքը, բայց երբ պաշարումն առաց որևէ ընդհարման երկարաձգվում է, Հովնաթանը մի հնարով քաղաքից դուրս է գալիս՝ իր Շմավոն եղբորն այնտեղ թողնելով, հավաքում է շրջապատի հավատարիմ մարդկանց, հանկարծ Բաքիդի բանակը մտնելով՝ սկսում է կոտորել թշնամուն: Մինչ Հովնաթանի զորքը կռվում է Բաքիդի զորքերի դեմ, Շմավոնն էլ, քաղաքից դուրս գալով, քանդում է Բաքիդի կառուցած պատնեշը և քաղաքի պարիսպները քանդելու համար բերված գործիքները հրկիզելով և քանդելով՝ անխնա կոտորում է այնտեղ գտնվող զորքը:

Այս ձևով հաղթվելուց հետո Բաքիդն իրեն պատերազմի դրդողներից շատերին կոտորում է, քանի որ Հովնաթանից վրեժ լուծելու փոխարեն՝ իր զորքից բազմաթիվ մարդիկ են կոտորվում, և իրեն էլ նախատինք և անարգանք է լինում: Երբ նա հետ է դառնում և իր տեղը վերադառնում, Հովնաթանը, մարդ ուղարկելով, առաջարկում է հաշտվել՝ պայմանով, որ նախկինում գերեվարած բոլոր իսրայելացիներին ազատ արձակի: Ու քանի որ Բաքիդը ճարահարտյալ վիճակում էր և մանավանդ անչափ վախենում էր, ընդունում է հաշտության պայմանները և երդվում այլևս թշնամություն չանել և գերիներին արձակելուց հետո գնում է իր նախկին զորձին:

Հովնաթանն էլ բնակություն է հաստատում Մաքմաս կոչվող վայրում և ամենայն արդարությամբ կառավարելով ժողովրդին՝ երբեք չի թերանում իր պարտավորությունները կատարելիս, սակայն, այնուամենայնիվ, խռովության պատճառ դարձած մարդկանց չարաչար սպանում է, որպեսզի

մյուսներն էլ խրատվեն և իրենց մոլի և վատթար վարքից հետ դառնան: Աստծու ողորմությամբ այս ձևով կարողանում է յոթ տարի կառավարել առանց որևէ վրդովմունքի և թշնամու հարստահարությունից բոլորովին զերծ պահել ազգը, որն էլ առանց արգելքի պահպանում է օրենքը, ուստի ազգը Հովնաթանից բոլոր առումներով գոհ էր:

Հարց ԼԱ: **Դեմետր թագավորը նորից թշնամանո՞ւմ է Հովնաթանին:**

Պատասխան: Թեև հիշյալ թագավորի միտքը միշտ չար էր, սակայն թշնամանալու ժամանակ չի ունենում: Որովհետև Երևելի Անտիոքոս թագավորը Աղեքսանդրոս անունով մի որդի էլ է ունենում, որը հոր մահվանից հետո, մի որոշ ժամանակ գաղտնի ապրելով, այս ժամանակ հայտնվում է: Սա և Դեմետր թագավորը երկու եղբայրների որդիներ էին, ուստի իր հոր թագավորությունը ձեռք գցելու նպատակով Աքիա գալու ժամանակ, տեղի բնակիչներին իր կողմը գրավելով, կարողանում է թագավորել այնտեղ:

Դեմետրը, լսելով սրա մասին, սկսում է զորք հավաքել, սակայն կասկածելով, որ միգուցե իր հակառակորդը, միավորվելով Հովնաթանի հետ, առավել զորանա, շտապում է կանխելու նրան և Հովնաթանին ուղղված մի հրովարտակով ցանկություն է հայտնում հաշտվելու նրա հետ՝ հրամայելով Երուսաղեմի բերդում արգելափակված իսրայելացիներին ազատ արձակել, որոնց Բաքիդն էր բանտարկել (տե՛ս Լ հարցը), և ապա առաջարկում է պատերազմելու համար զորք և զենք պատրաստել: Այսպիսի մի հրաման է կարդացվում Երուսաղեմի բերդում՝ ի լուր պահապան զորքի, որը ոչ միայն արձակում է բերդարգել հրեաներին, այլև սկսում է սաստիկ տագնապել:

Այն ժամանակ Հովնաթանը, վերակառուցելով Երուսաղեմի պարիսպը և Սիոնի լեռան շրջակայքը, շատ է ամրացնում դրանք: Սրանից բացի՝ Իսրայելի բերդերում գտնվող զորքը, որը Բաքիդն էր նշանակել, որպեսզի շրջակայքի ժողովրդին հնազանդ պահի, երբ լսում է, որ Հովնաթանը նորից պատվի և պաշտոնի է հասել, սկսում է հետզհետե փախչել. միայն օրենքը մերժած հրեաները, որոնք Հովնաթանի թշնամիներն էին, մնում են Բեթսոր բերդում:

Այն պարագայում Հովնաթանը մեծապես փառավորվում է. մանավանդ երբ հիշյալ Աղեքսանդրոսը, լսելով Հովնաթանի քաջության մասին, նաև այն, որ Դեմետր թագավորը հրովարտակով օգնություն է խնդրել նրանից, ինքն էլ է շտապում՝ հրովարտակ ուղարկելու Հովնաթանին և նրան քահանայապետ կարգելու, ինչպես նաև ոսկի նշան և թագավորական զգեստ ուղարկելով՝ խնդրում է դաշնակցել իրեն և հավատարիմ մնալ: Հովնաթանը հավանություն է տալիս Աղեքսանդրոսի առաջարկին և հագնում է ուղարկված զգեստները. բոլորն էլ ուրախանում են նրա այս նոր պատվին արժանանալու համար և սկսում են զորք և զենք հավաքել հարկ եղած դեպքում Աղեքսանդրոսին օգնելու համար:

Դու տե՛ս, թե ինչքան մեծ է Աստծու ողորմությունը իսրայելացիների հանդեպ. երկու թագավորները՝ Դեմետրը և Աղեքսանդրոսը, միմյանց թշնամի լինելով, երկուսն էլ Հովնաթանի օգնությանն են դիմում, և մեկը մյուսից ավելի մեծ պատվով և դիրքով է փառավորում նրան: Ինչպես հիշատակվել է վերը, Դեմետր թագավորն արդեն նախապես հաշտվելու ցանկություն էր հայտնել և մեծ լիազորություններ տվել Հովնաթանին, սակայն կանոնավոր պայմանագիր կնքած չլինելու պատճառով նորից հրովարտակ է ուղարկում, որով Հովնաթանին և բոլոր իսրայելացիներին մեծ արտոնություններ շնորհելով հանդերձ՝

ընդունված արքունի հարկն էլ է զիջում և տաճարում մատուցվող զոհերին և պարիսպներն ամրացնելուն անհրաժեշտ բոլոր ծախսերը խոստանում է վճարել արքունի գանձարանից:

Սակայն հրեաները, իմանալով նրա սրտի բնական չարությունը, չեն հավատում նրա ստապատիր խոսքերին և հետևաբար Աղեքսանդրոսի հետ կնքած իրենց դաշինքը հաստատ են պահում: Ապա Աղեքսանդրոսի և հրեաների զորքերը միասին պատերազմում և հաղթում են Դեմետր թագավորին, որն ընկնում է նույն այդ պատերազմում, և նրա զորքն էլ մասամբ կոտորվում է, մնացածները՝ փախչում, և Աղեքսանդրոսին հաջողվում է ձեռք բերել իր հոր թագավորությունը:

Հարց ԼԲ: **Հիշյալ Աղեսքանդրոսը Հովնաթանի հետ միշտ սիրով և հա՞շտ էր:**

Պատասխան: Այո՛: Հիրավի, հիշյալ թագավորը որքանով էլ այս կողմից ապահով էր, սակայն ցանկանում է նաև Եգիպտոսի Պտղոմեոս թագավորի հետ միաբանության դաշինք կնքել, որպեսզի այդ կողմից էլ ապահով լինի: Այս է պատճառը, որ մարդ ուղարկելով Եգիպտոս՝ ցանկանում է թագավորի Կլեոպատրա դստերը կնության վերցնել: Պտղոմեոսը համաձայնելով դստեր հետ Աքիա է գալիս, և հարսանիքի մեծաշուք հանդես կատարելով՝ Աղեքսանդրոսը փեսայանում է Պտղոմեոսին, սակայն հենց այս պսակադրությունն է աղետաբեր լինում Աղեքսանդրոսի համար, ինչպես որ քիչ հետո պիտի պատմենք:

Վերոհիշյալ հարսանիքին հրավիրված լինելով՝ Հովնաթանն էլ մեծաշուք փառքով և նվերներով անձամբ է գնում և երբ ներկայանում է երկու թագավորներին, ընդունվում է արժանի պատիվ և հարգանքներով: Արդարև, Հովնաթանը գործում է ազգային փառքի և կրոնի նախանձախնդրությամբ և Աստծու ողորմությամբ երկու թագավորների կողմից էլ

փառավորվում է, սակայն, այսուհանդերձ, մի քանի չարամիտ մարդիկ, Երուսաղեմից Աքիա գալով, գանգատվում են Հովնաթանից, սակայն Աղեքսանդրոսը, իմանալով նրանց քսության մասին, այդ գանգատներին երբեք կարևորություն չտալուց բացի՝ Հովնաթանին, իսկույն թագավորավայել զգեստներ հագցնելով, իր կողքին է նստեցնում և հրամայում, որ ոչ մեկը չհամարձակվի նրանից իրեն գանգատվել:

Ապա Հովնաթանը մեծ փառքով Երուսաղեմ է վերադառնում, նրա թշնամիները երկյուղից ծակամուտ են լինում և չեն համարձակվում նրա աչքին երևալ: Թեև Աղեքսանդրոսը ձեռք է բերում իր հոր թագավորությունը, բայց Դեմետր թագավորը մի որդի ուներ Կրետեի կողմերում, որի անունը նույնպես Դեմետր էր: Այս երկրորդ Դեմետրը հոր մահը լսելուն պես անհամար զորքով Աղեքսանդրոսի դեմ պատերազմի է դուրս գալիս: Եվ քանի որ Աղեքսանդրոսն ու Հովնաթանը համերաշխ և դաշնակից էին, Դեմետրի Ապողոնիոս անունով զորավարը՝ հպարտ և ինքնահավան մի մարդ, պատերազմից առաջ զանազան ամբարտավան և վիրավորական խոսքերով Հավնաթանին լուր է ուղարկում՝ ասելով. «Գիտեմ՝ դու, հույսդ լեռների վրա դնելով, հպարտացել ես, վե՛ր կաց, արի՛, որ դաշտում պայքարենք, որպեսզի հասկանաս, որ մեր դեմ ընդհարապես կանգնելու և դիմակայելու զորություն և հնարավորություն չունես»:

Հովնաթանը, այս խոսքերը լսելով, բարկանում է և իսկույն տասը հազար քաջամարտիկ զորքով և Շմավոն եղբոր հետ Հոպպե է գնում, որտեղ Ապողոնիոսը պահապան զորք էր տեղակայել, ուստի քաղաքի դռները չեն բացում: Սակայն երբ Հովնաթանը բուռն թափով հարձակվում է քաղաքի վրա, բնակիչները երկյուղից բացում են քաղաքի դռները, որպեսզի քաղաքը չավերի: Այդ ժամանակ Հովնաթանը, քաղաք մտնելով, գրավում է այն:

Երբ Ապողոնիոսը լսում է Հոպպե քաղաքը գրավելու մասին, փախուստ տալով իր զորքով Ազովտոսի դաշտ է դիմում, որտեղ ճանապարհին զորքը թաքստոցներում է տեղակայում՝ իբր թե Հովնաթանի գալու ժամանակ հանկարծ հարձակվեն և ջարդեն նրա բանակը: Սակայն Հովնաթանը, նրա նենգությունն արդեն բացահայտած լինելով, նախ՝ կոտորում է դարանակալներին, և ապա՝ Ապողոնիոսի վրա շարժվելով՝ Աստծու ողորմությամբ նրանց էլ է կոտորում. այդ ջարդից թշնամու զորքի մի մասը խույս տալով Ազովտոսում Դագոն չաստծու մեհյանում է ապաստանում, որն էլ կործանելով՝ Հովնաթանը մեկ օրում ութ հազար զինվոր է սպանում: Հետո Հովնաթանը վերադարձին գալիս է Ասկաղոն, որի բնակիչները, նրան դիմավորելով, մեծ պատվով են ընդունում, և ապա այնտեղից էլ շարժվելով՝ ահագին ավարով Երուսաղեմ է գալիս հաղթական փառքով: Իսկ Աղեքսանդրոս թագավորը, լսելով Հովնաթանի սույն քաջության մասին, այնքան է ուրախանում, որ մի ոսկյա նշան է ուղարկում, որի նմանը կարող էին կրել միմիայն թագավորների եղբայրները, սրանից բացի՝ Ակկարոնի նահանգը, որպես սեփական կալվածք, պարգևում է Հովնաթանին:

Տեսնո՞ւմ ես ինքնահավան և ամբարտավան Ապողոնիոսի թշվառ և խեղճ վիճակը. նա, հույսն իր զորքի զորության վրա դնելով, մեծ հպարտությամբ Հովնաթանին լուր է ուղարկում. այժմ ամբողջ զորքը կորցնելուց բացի՝ ինքն էլ անարգ և խայտառակ ձևով փախչում է:

Հարց ԼԳ: **Եգիպտոսի Պտղոմեոս թագավորը իր փեսա Աղեքսանդրոսի հետ միշտ սիրով և բարեկամությա՞մբ է մնում:**

Պատասխան: Ո՛չ, երբեք: Մանավանդ նենգությամբ գրավելով նրա թագավորությունը՝ նրա մահվան պատճառ է լինում:

Որովհետև Պտղոմեոսը, անչափ չար և անօրեն մարդ լինելով, աչքը տնկել էր Աղեքսանդրոսի թագավորությանը: Սակայն իր նենգ դիտավորությունը թաքցնելու համար իբր թե փեսային շնորհավորելու է գնում, բազում զորքով մեկնում է Եգիպտոսից: Մինչև Անտիոք հասնելու ճանապարհին ո՛ր քաղաք էլ մտնում է, Աղեքսանդրոս թագավորի կարգադրությանը համապատասխան՝ բնակիչները նրան պատվով են ընդունում: Ամեն մի քաղաքում տարբեր պատրվակներով զորք թողնելով՝ Պտղոմեոսը ծովեզրյա քաղաքներին տիրանալուց հետո հասնում է Անտիոք, որտեղ սրտում թաքցրած չարությունը հայտնելով՝ գրավում է քաղաքը: Քանի որ նույն այդ ժամանակ Կիլիկիայի Սիս գավառի կողմերում մարդկանց մեջ խռովություն էր ծագել, և Աղեքսանդրոսը գնացել էր այն հանդարտեցնելու:

Սրանից բացի, վերոհիշյալ Դեմետր Երկրորդին լուր ուղարկելով, գանգատվում է իր փեսա Աղեքսանդրոսից: Ճիշտ է՝ Աղեքսանդրոսը հանցավոր չէր, սակայն անօրեն Պտղոմեոսը իր անօրենությունը թաքցնելու համար ջանում է նրան մեղավոր ցույց տալ: Այս ձևով միավորվելով Դեմետրի հետ, իր դստերն Աղեքսանդրոսից վերցնելով՝ Դեմետրին է կնության տալիս: Թեև սա նախատինք էր նրան, միաժամանակ նաև դստերը, սակայն անօրեն թագավորը երբեք պատվի մասին մտահոգվող մարդ չէր: Թեև Աղեքսանդրոսը բազում զորքով Պտղոմեոսի դեմ է արշավում, սակայն հաղթվելով փախչում է արաբների կողմը, որոնց Զաբեել թագավորը, նրա գլուխը կտրելով, ուղարկում է Պտղոմեոսին:

Այստեղ լա՛վ խորհիր. Աղեքսանդրոսը փեսայանում է Պտղոմեոսին, որպեսզի իր թագավորությունը հաստատուն լինի, սակայն հենց նրա ձեռքով թագավորական գահից զրկվելուց բացի՝ իր կյանքից էլ է զրկվում: Այսուհանդերձ մի՛

մտածիր, որ Պտղոմեոսի չարությունը անպատիժ է մնում, այլ երեք օր հետո ինքն էլ է չարաչար մահանում: Նա, որ իր չարամիտ դիտավորությունն իրագործելու նպատակով քաղաքներում զորք էր տեղակայել, երբ տարածվում է նրա մահվան լուրը, հենց այդ քաղաքների բնակիչներն էլ նրա զորքերը կոտորում են: Այն ժամանակ էլ վերոհիշյալ Դեմետր Երկրորդը գրավում է Աղեքսանդրոսի թագավորությունը:

Հիրավի, Աստծու ողորմությամբ այդ պահին Հովնաթանը զերծ է մնում թշնամու բռնությունից, բայց քանի որ մինչ այդ ժամանակ Երուսաղեմի բերդը նրանց ձեռքին էր, Հովնաթանը այն նույնպես ազատագրելու ցանկությամբ զորք է հավաքում: Բերդի պաշարման ժամանակ օրինազանց հրեաները շտապում են՝ Դեմետր թագավորին տեղեկացնելու, որը Հովնաթանին բարկացած հրամայում է թողնել պաշարումը և շտապ գալ իր մոտ՝ Աքիա: Արդ, թեև Հովնաթանը պաշարումը ավելի է սաստկացնում, սակայն անհնազանդ չլինելու համար ոսկյա և արծաթյա ընծաներով, իր հետ իմաստուն մարդիկ վերցնելով, շտապում է թագավորի մոտ:

Թեև այս արարքով Հովնաթանն իր անձը խիստ վտանգում է, սակայն ազգի խաղաղության համար աներկյուղ գնում է: Աստծու ողորմությամբ Դեմետրը, նրան շատ հավանելով, մեծ պատիվների է արժանացնում և քահանայապետություն տալով, նախկին դիրքում էլ վերահաստատելով՝ զանազան արտոնություններ է տալիս և իսրայելացիներին էլ շատ ու շատ հարկերից և ծախսերից ազատում:

Ուշադրության է արժանի այս Դեմետրի վարքը. քանի որ երբ բավականաչափ հզորանում է, և իր իշխանությանը ենթակա քաղաքներն էլ ամբողջովին հնազանդվում են իրեն, տեղի զորքի վճարը կտրելով՝ ազատ է արձակում նրանց և պահում է միայն Կրետե կղզուց բերած օտար զինվորներին: Այս է

պատճառը, որ տեղացի զինվորները, խիստ բարկանալով, միասնաբար թշնամանում են Դեմետրին, որովհետև նրանք, պատերազմի վարժված լինելով, այլ եղանակով չեն կարողանում հայթայթել իրենց ապրուստը, և մասնավորապես Անտիոք քաղաքի բնակիչներն էլ այլևայլ պատճառներով այս Դեմետր թագավորի վարքից ու գործելաոճից գոհ չեն լինում:

Սրանից բացի՝ վերոհիշյալ Աղեքսանդրոսի փոքր որդին՝ Անտիոքոսը, արաբների թագավորի մոտ էր: Տրիփոն անվամբ մի քաջասիրտ հազարապետ, որը Աղեքսանդրոսի կուսակիցն էր, երբ իմանում է, որ Անտիոքի բնակիչները և տեղի զորքը, Դեմետրից երես շրջելով, թշնամացել են նրան, ցանկանում է հիշյալ մանուկ Անտիոքոսին, արաբների մոտից բերելով, հոր փոխարեն թագավորեցնել Անտիոքում: Այս նպատակով արաբների թագավորի մոտ գնալով՝ իր մտադրությունը հայտնում է նրան, և միառժամանակ անց գրավում է Անտիոքը, նաև տեղի զորքը:

Ահա այդ ժամանակ Դեմետրը Հովնաթանին ճարը կտրած խնդրում է օգնական զորք ուղարկել: Նա էլ երեք հազար քաջարի զինվորներ է ուղարկում Անտիոք: Բնակիչները, սրա մասին լսելով, հարյուր քսան հազար մարդ են հավաքում, որպեսզի սպանեն Դեմետր թագավորին: Երբ սա փախչելով ապաստան է գտնում բերդում, Հովնաթանի զորքը, իսկույն հարձակվելով, հարյուր հազար մարդ կոտորելով, քաղաքն ավարի են մատնում:

Դու Անտիոք քաղաքի բնակիչների եղկելի վիճա՛կը տես. նրանք, ովքեր ապստամբելով ցանկանում էին սպանել իրենց թագավորին, ոչ միայն անկարող են լինում սպանելու, այլև, իրենցից էլ այդքան մարդ կոտորվելով, քաղաքն ավերի և կողոպուտի բաժին է դառնում, այնպիսի ավերի, որ մնացած ժողովուրդը, զենքերն ինքնահոժար վայր դնելով, աղաչում է

թագավորին, որ Հովնաթանի զորքին պատվիրի չկոտորել ժողովրդին: Արդարև, ինչպես որ Դեմետրն իր կյանքին սպառնալու համար ցանկանում է պատժել ժողովրդին, այդպես էլ Հովնաթանի զորքը սաստիկ ցանկություն է ունենում՝ այդ միևնույն ժողովրդից վրեժխնդիր լինելու: Քանի որ նրանք միշտ թշնամի էին իսրայելացիներին. այս է պատճառը, որ պատեհ առիթը ներկայանալով՝ առանց ընդհանրապես գթալու կոտորում են նրանց և անչափ ավար հավաքած՝ մեծ ուրախությամբ և հաղթական փառքով վերադառնում Երուսաղեմ:

Հարց ԼԴ: **Դեմետրը, որը Հովնաթանի օգնությամբ մահից է ազատվում, կատարո՞ւմ է խոստումը:**

Պատասխան: Չի կատարում: Արդարև, նրա թշնամիները բոլոր առումներով տկարացել էին, և նա պարտավոր էր Հովնաթանից շնորհակալ լինելու: Սակայն երբ Անտիոքի ժողովրդին հնազանդեցնում է, ոչ միայն Հովնաթանի հանդեպ իր պարտքը չի կատարում, այլև բացահայտորեն թշնամանում է նրան, սակայն աստվածային ողորմությամբ չարիք հասցնելու ժամանակ չի ունենում: Քանի որ, ինչպես հիշատակվել է վերևում, Տրիփոն հազարապետը, որն արաբներից վերցրել էր Աղեքսանդրոսի Անտիոքոս որդուն, իսկույն նրան թագավոր է հռչակում, և Դեմետրի պաշտոնաթող արած տեղացի բոլոր զինվորները նրա շուրջն են հավաքվում. և երբ երկու կողմերը պատերազմում են, Դեմետրի կողմը բոլորովին տկարանում է, և հենց ինքը՝ Դեմետր թագավորը, ստիպված է լինում սակավ զորքով ամոթալի փախուստի դիմելու, և Տրիփոն հազարապետին էլ հաջողվում է հեշտորեն գրավել Անտիոքը և մանուկ Անտիոքոսին հայրենական գահին նստեցնել:

Այս Անտիոքոս թագավորն էլ Հովնաթանի հետ բարեկամանալու ցանկությամբ հրովարտակ է ուղարկում, որով նրան,

քահանայապետության պաշտոնում վերահաստատելուց բացի, ցանկանում է մեծապես պատվել և թագավորներին հատուկ նշան է ուղարկում: Նաև Հովնաթանի Ծմավոն եղբորը Բարաղամից մինչև Եգիպտոսի ծովեզրյա քաղաքների կուսակալ և զորքի հրամանատար է նշանակում: Այն ժամանակ Հովնաթանն այցելում է Հորդանանի մյուս կողմում գտնվող քաղաքները, և ասորիների զորքը գալով զինվորական պատիվ է տալիս նրան, ինչպես նաև Ասկաղոնի կողմերում շրջելու ժամանակ բնակիչները հարգանքով են ընդունում նրան:

Հովնաթանն այնտեղից Գազա քաղաք է գալիս, որի բնակիչները նրա առջև քաղաքի դարպասները չեն բացում, ուստի քաղաքի շրջակայքի ագարակները և դաշտերը ավերել սկսելու ժամանակ գալիս և անձնատուր են լինում և քաղաքի մեծամեծների զավակներին էլ, որպես պատանդ, Հովնաթանին են տալիս, որոնց Հովնաթանը ուղարկում է Երուսաղեմ և գնում Դամասկոս: Երբ Դեմետրի մարդիկ ցանկանում են խոչընդոտել նրանց առաջխաղացումը, Հովնաթանը դիմադրելով մի լավ ջարդ է տալիս նրանց: Նմանապես Ծմավոնը, գրավելով Բեթսուրա քաղաքը, հատուկ զորք է թողնում այնտեղ, այնտեղի բնակչությանը միշտ հնազանդ պահելու համար:

Երբ Հովնաթանը Նասոր կոչվող դաշտն է գալիս, երկու խմբի բաժանված թշնամին դարանակալում է ճանապարհին. մյուս խումբը պատերազմելու է պատրաստվում: Հովնաթանին շրջապատում են, և Հովնաթանի զորքն էլ անակնկալի գալով երկյուղից փախուստի է դիմում, և Հովնաթանը երկու զինակիցների հետ մնում է շրջափակման մեջ: Հովնաթանը, Աստծուն ապավինած, առյուծի նման հարձակվում է թշնամու վրա և շփոթության մատնում նրան: Թշնամու շփոթությունը տեսնելով և պատկառելով Հովնաթանի քաջությունից՝ փախստական զորքը վերադառնում է և նույն օրը երեք հազար մարդ

կոտորելուց բացի՝ մնացած զորքին էլ փախուստի է մատնում և վերադառնում Երուսաղեմ:

Ու քանի որ Հովնաթանը, թշնամիներին հաղթելով, բոլոր առումներով երջանիկ և փառավոր վիճակում էր, որոշում է հռոմեացիների, սպարտացիների և այլ ազգերի հետ դաշինք կնքել, որպեսզի անհրաժեշտության դեպքում իրեն օգնության հասնեն: Ճիշտ է՝ իսրայելացիները նախկինում դաշնակցել էին նրանց հետ (տե՛ս ԻԹ հարցը), սակայն այդ դաշինքից շատ ժամանակ էր անցել, և Հովնաթանն այդ դաշնագրերը վերակնքելու համար երկու պատվավոր մարդկանց ուղարկում է նրանց մոտ: Սրանք, Հռոմ և Սպարտա գնալով, Հովնաթանի ցանկության համաձայն, նոր դաշինք են կնքում:

Սակայն սրանք դեռ չվերադարձած՝ Դեմետր թագավորի նախարարները բազում զորքով Հովնաթանի դեմ պատերազմի են դուրս գալիս: Հովնաթանը նույնպես պատրաստվում է պատերազմի: Թշնամին խորհում է գիշերը հարձակվել. մտադրության մասին իմանալով՝ Հովնաթանն այդ գիշեր անչափ զգույշ է լինում, որով էլ թշնամու մտադրությունը տապալվում է, և վախից իրենց բանակատեղում իրար մոտ կրակ վառելով՝ փախչում են: Դժբախտաբար, Հովնաթանը չի իմանում նրանց փախուստի մասին, քանի որ կրակը տեսնելով՝ կարծում է՝ այնտեղ են: Առավոտյան եղելությունը հասկանալուց հետո նրանց հետևից է ընկնում, սակայն իզուր. թշնամին արդեն անցել էր Ազատ գետը:

Ուստի այնտեղից հետ դառնալով՝ շարժվում է արաբների վրա, նրանց զգալի հարվածներ տալուց հետո կողոպտում, ինչպես նաև Դամասկոսի և Ասկաղոնի կողմերում գտնվող ամուր բերդերը գրավում: Մանավանդ Հոպպեի բնակիչներն օգնել էին Դեմետր թագավորին, և Հովնաթանը գալով այդ քաղաքն էլ է նվաճում և այնտեղ զորք թողնելով՝ վերադառնում

Երուսաղեմ: Ապա ժողովրդի ծերերի հետ խորհրդակցելով՝ կառուցում է Երուսաղեմի պարիսպները, որովհետև հեղեղը քանդել էր Կեդրոնի ձորի կողմի պարիսպները:

Եվ քանի որ Երուսաղեմի բերդը դեռևս թշնամու ձեռքին էր, այս անգամ, նրա շուրջը բարձր պարիսպ կառուցելով, պաշարում է այն և արգելում բերդում գտնվողների հետ առևտուրը. հրամայում է նրանց պաշար չտալ, որպեսզի նեղության մեջ մնալով՝ հանձնեն բերդը, քանի որ այլ ճանապարհով ուղղակի անհնար էր գրավել այն: Սակայն վերոհիշյալ Տրիփոնը, որը թագավորեցրել էր Անտիոքոսին, այս անգամ միտքը փոխելով, մտադրվում է սպանել նրան և ինքը թագավորել, բայց կասկածելով, որ միգուցե Հովնաթանը արգելք լինի իր չար մտադրությանը, որոշում է նախ նրան մեջտեղից վերացնել:

Այս նպատակով բազմաթիվ զորքով Բեթսան է գալիս, որի դեմ դուրս է գալիս Հովնաթանը քառասուն հազար մարդկանցով: Տրիփոնը, պատերազմելու համարձակություն չունենալով, կեղծավորաբար սեր և բարեկամություն է ցույց տալիս, քանի որ նախկինում արդեն բարեկամներ էին: Սրանից բացի, մեծ պատիվներ և ընծաներ տալով, մինչև իսկ զորքին կարգադրում է հնազանդվել Հովնաթանին, և մանավանդ ձևացնելով, թե իրք եկել է՝ Աքիա քաղաքը Հովնաթանին հանձնելու, ասում է. «Ի՞նչ կարիք կա զորքին այդքան նեղություն տալու, նրանց արձակի՛ր և քեզ մոտ միայն մի փոքր թիվ պահի՛ր, գնանք Աքիա, որ այն քեզ տամ»:

Հովնաթանը, հավատալով նրա խոսքերին, իր մոտ միայն երեք հազար մարդ պահելով, մնացածին հետ դառնալու հրաման է տալիս, ապա երկու հազարին էլ է հետ ուղարկում, և մնում է միայն հազար մարդ: Երբ գալիս են Աքիա, Տրիփոնն իսկույն փակել է տալիս քաղաքի դռները և կոտորելով Հովնաթանի զորքը՝ գերեվարում է նրան և արգելափակելով Աքիայում՝

զորք է ուղարկում՝ վերադարձող երկու հազարին էլ կոտորելու, բայց նրանք, եղելությունը հասկանալով, միավորվելով որոշում են քաջաբար պատերազմել, և վախից Տրիփոնի զորքը նույնիսկ չի էլ համարձակվում պատերազմել և վերադառնում է:

Ապա երկու հազարը գալով Երուսաղեմ պատմում են եղելությունը, և ամբողջ ժողովուրդը մեծապես սգալով սաստիկ ողբում է Հովնաթանի համար:

Խրա՛տ ընդունիր. քանի դեռ Հովնաթանը իր հույսն ամբողջությամբ Աստծու վրա էր դրել, թշնամուն միշտ հաղթելով՝ պատժում էր, սակայն այս դեպքում հռոմեացիների մոտ օգնություն գտնելու ցանկությամբ նրանց հետ միավորվելով՝ սխալվում է, և ինքն էլ կորչելով՝ իսրայելացիներին էլ մեծ վտանգի է ենթարկում: Քանի որ նրա գերի լինելու լուրը տարածվելուն պես շրջակայքի կռապաշտները միավորվում են իսրայելացիների դեմ՝ բոլորին միաժամանակ կոտորելու մտադրությամբ:

Հարց ԼԵ: **Հովնաթանի գերվելուց հետո ո՞վ է կառավարում Իսրայելը:**

Պատասխան: Նրա Շմավոն եղբայրը: Ինչպես նրա հայրն ու եղբայրներն իրենց կյանքը չեն խնայում ազգի և օրինապահության սիրո համար, այդպես էլ Շմավոնը չի խնայում և իսրայելացիների խնդրանքներին ընդառաջելով և զորք հավաքելով՝ Երուսաղեմի պարիսպը վերակառուցելուց հետո գնում և գրավում է Հոպպե քաղաքը: Հետո հիշյալ անզգամ Տրիփոնը բազմաթիվ զորքով Իսրայել գալու ժամանակ Հովնաթանին էլ է իր հետ բերում և լուր ուղարկում Շմավոնին, որ զորք հավաքելն արդեն իմացել է և հայտնում է, որ Հովնաթանն արքունի գանձարանին հարյուր քսակ ոսկի պարտք լինելու համար է կալանավորվել, ուստի նույն այդ գումարը և նրա երկու որդիներին

որպես պատանդ ուղարկի, որպեսզի ազատվելուց հետ թագավորի դեմ չապստամբի:

Թեև Ծմավոնը շատ լավ գիտեր՝ Տրիփոնի միտքը չար է, սակայն կատարում է նրա պահանջները, որպեսզի իր և ժողովրդի միջև հակասություն չլինի, և չասվի, որ գումարի և երկու որդիների պատճառով Հովնաթանի մահվան պատճառ է դարձել: Իրավ է՝ ինչքան Ծմավոնն այս պարագայում խոհեմությամբ է գործում և չի թերանում առ Հովնաթան իր եղբայրական պարտքը կատարելիս, սակայն Տրիփոնը ոչ միայն իր խոստումը չի կատարում, այլև շրջում է իսրայելացիների քաղաքներում և կոտորում նրանց, ուստի Ծմավոնն էլ, ուր Տրիփոնը գնում է, նրա դեմ էր դուրս գալիս, որպեսզի արգելք լինի ժողովրդի կոտորվելուն:

Քանի որ Հովնաթանը Երուսաղեմի բերդի շուրջը նախկինում պարիսպ էր կառուցել, և Երուսաղեմի բնակիչներին արգելել էր որևէ հարաբերություն ունենալ բերդում պաշարվածների հետ (տե՛ս ԼԴ հարցը), այս է պատճառ, որ խիստ նեղ վիճակում հայտնվելով՝ նրանց հաջողվում են մի կերպ լուր ուղարկել Տրիփոնին, որ անապատի կողմից իրենց պաշար հասցնի: Հիշյալը պատրաստելով՝ նա փորձում է Երուսաղեմ տանել, սակայն հենց այդ գիշերը չափազանց շատ ձյուն է տեղում, և նա չի կարողանում գնալ և վերադառնում է Գաղաադի կողմերը, որտեղ էլ սպանելով Հովնաթանին՝ մարմինը թաղում է և այնտեղից մեկնում Աքիա: Այն ժամանակ Ծմավոնը, մարդիկ ուղարկելով, բերել է տալիս Հովնաթանի մարմինը և Մովդիմում՝ հոր մոտ թաղում, նաև գերեզմանի վրա անչափ շքեղ և փառավոր մահարձան է կառուցել տալիս, և բոլոր իսրայելացիները երկար ժամանակ սգում և ողբում են Հովնաթանի մահը[398]:

---

[398] Մեծ ողբով լաց եղան նրա վրա բոլոր իսրայելացիները և բազում օրեր սուգ պահեցին (*Ա Մակ. 13:26*):

Դու Տրիփոնի չարությա՛նը նայիր. նա, ով Աղեքսանդրոսի համար ձեռք է բերում թագավորությունը, այս անգամ պատեհ առիթ գտնելով՝ սպանում է նրան, և ինքն է թագավորում և շատ մարդ կոտորելով՝ մեծամեծ չարիքներ և կորուստներ է պատճառում ժողովրդին: Շմավոնը, լսելով նրա այսպիսի չարագործությունների մասին, Հրեաստանի բերդերն ամրացնելով և մեծ պաշար կուտակելով, ցանկանում է հաշտվել Դեմետր թագավորի հետ և այս նպատակին հասնելու համար մի քանի խոհեմ մարդկանց հետ ընծաներ է ուղարկում նրան: Քանի որ իսրայելացիները, վերոհիշյալ Անտիոքոսի կողմն անցնելով, ըմդդիմանում են Դեմետրին, ուստի նա շատ է բարկանում իսրայելացիների վրա:

Այնուամենայնիվ, Դեմետր թագավորը, ընդունելով Շմավոնի խնդրանքը, մի հրովարտակ է ուղարկում նրան և իսրայելացիներին նախկինում տրված արտոնությունները վերահաստատելով՝ հաշտվում նրանց հետ. Տրիփոնի ոխերիմ թշնամին լինելով և նրանից վրեժխնդիր լինելու փափագով տոգորված՝ գնում է մարերի երկիր, որպեսզի զորք հավաքելով՝ արշավի նրա դեմ: Սակայն պարսիկների Արշակ թագավորը, լսելով նրա գալստյան մասին, զորք է ուղարկում և նրան բռնել տալիս ու շղթայակապ բանտարկում. այսպիսով, Դեմետրը չի կարողանում վրեժխնդիր լինել Տրիփոնից, ինչպես որ իրավացիորեն ակնկալում էր:

Հարց ԼԶ: **Տրիփոնը, որ հանիրավի էր թագավորում, կարողանո՞ւմ է մնալ գահին:**

Պատասխան: Ո՛չ, չի կարողանում: Քանի որ վերոհիշյալ պարսիկ արքայի բանտարկած Անտիոքոսը՝ Դեմետրի որդին, հոր ձերբակալման լուրը ստանալով, զորք է հավաքում, որպեսզի Տրիփոնի դեմ պատերազմելով՝ հոր թագավորությունը

ձեռք բերի: Այս առիթով Շմավոնին հրովարտակ է ուղարկում և նախորդ թագավորների՝ իսրայելացիներին տված արտոնությունները հաստատելով՝ այնպիսի պատիվներ է խոստանում Շմավոնին, որ անգամ դրամ հատելու արտոնություն է շնորհում: Ինքն էլ հայրենի երկրի սահմաններն է մտնում ցամաքից ու ծովից. նրան է միանում նաև Տրիփոնից փախած զորքը, և այսպիսով, հեշտությամբ կարողանում է տիրանալ հոր գահին:

Դու անօրեն Տրիփոնի թշվառությո՛ւնը տես. երբ հակառակորդը խիստ զորավոր է դառնում, զորքն էլ նրանից է երես դարձնում, ու այսպես հուսահատ Դորա է փախչում: Սակայն Անտիոքոսը այն էլ է գրավում, բայց չի կարողանում բռնել Տրիփոնին, քանի որ նա ճարահատյալ այնտեղից էլ է փախչում և ապաստանում Որթոսիա քաղաքում: Խրա՛տ ընդունիր. ինչքան էլ Տրիփոնը անվանի և քաջասիրտ զորավար էր, սակայն մեծության չափազանց ձգտելը կամ փառասիրությունը նրա կործանման պատճառ են դառնում, և առանց իրավունքի գահակալելով՝ հարկադրված է լինում, ի վերջո, անարգանքներով փախչելու արքայական գահից և անգամ նախկինում ունեցած համբավն է կորցնում, քանի որ այնուհետև Սուրբ գրքում այլևս չի հիշատակվում նրա անունը:

Երբ Անտիոքոսն ու Տրիփոնը միմյանց դեմ են պատերազմում, Երուսաղեմի բերդի պահապաններն այլևս որևէ տեղից օգնություն չգտնելով՝ շատերը սովից մահանում են, և այսպիսով, ստիպված բերդը հանձնում Շմավոնին, որն այն մաքրել տալուց հետո օրինապահ հրեաներով է բնակեցնում: Այդ ժամանակ Շմավոնը, խաղաղ պահ գտնելով, նորից ամրացնում է սահմանամերձ բերդերը և նորից գրավում Հոպպեն:

Նա մանավանդ կոտորում է օրինազանց հրեաներին, որ մնացածին խրատ լինի: Նրա ազատասիրությունը և օրենքի հանդեպ նախանձախնդրությունը, ինչպես նաև բոլոր

դեպքերում ցույց տված հավատարմությունը ժողովրդի սիրտն այնպիսի ուրախությամբ են լցնում, որ նրա քահանայապետության ամսաթիվը ճշտելով՝ որոշում են ամեն տարի այդ օրը ուրախ հանդես կամ տոն կազմակերպել:

Հարց ԼԷ: **Վերոհիշյալ Անտիոքոսը, որը մեծ արտոնություններ է տալիս հրեաներին, միշտ հավատարի՞մ է մնում իր խոսքին:**

Պատասխան: Ո՛չ, չի մնում: Որովհետև Տրիփոնը փախել էր Դորա քաղաքը, Անտիոքոսը շտապում է պաշարելու այն և դեռևս կատարյալ հաղթանակ չէր տարել, երբ Շմավոնը երկու հազար զորքի հետ ոսկյա և արծաթյա բազում ընծաներ է ուղարկում նրան: Արդարև, Շմավոնն այդ քաղաքակիրթ վարմունքով ցանկանում է իր հավատարմությունը հայտնել, սակայն երբ Տրիփոնին հաղթելով՝ կատարելապես ապահով է զգում իրեն, ոչ միայն չի ընդունում Շմավոնի ուղարկած ընծաները, այլև իր թշնամանքը բացահայտորեն ի ցույց դնելով՝ Աթենոբիոս անունով իր պաշտոնյայի հետ լուր է ուղարկում, որ պետք է հանձնի իր երկրից գրաված տարածքները, Հոպպեն և Երուսաղեմի բերդը կամ նրանց փոխարեն հինգ հարյուր և մինչ այդ ժամը արտոնությունների համար չվճարած տուրքի դիմաց հինգ հազար քսակ ոսկի պիտի վճարի արքունի գանձարանին:

Աթենոբիոսը, գալով Երուսաղեմ և տեսնելով Շմավոնի փառքն ու շքեղությունը, հարգալից հայտնում է Անտիոքոսի հրամանը և հետևյալ պատասխանը ստանում. «Ուրիշների երկրների վրա չենք բռնացել, այլ մեր հայրենի հողերն են, որ ձեռք ենք բերել պատերազմով, և որոնք թշնամին անիրավացիորեն հափշտակել էր, իսկ Հոպպե և Գազարա քաղաքների բնակիչները մեծամեծ վնասներ էին պատճառել

իսրայելացիներին, ուստի և վրեժխնդիր լինելու համար հարվածել ենք նրանց, որի համար պատրաստ են հարյուր քսակ վճարել»:

Աթենոբիոսը Շմավոնի այս պատասխանից շատ է բարկանում, սակայն ցույց չի տալիս և երբ վերադառնում է Անտիոքոսի մոտ, նկարագրելով Շմավոնի փառքն ու շքեղությունը՝ հայտնում է նրա պատասխանը և սկսում գրգռել թագավորին և նրա նախանձն ու բարկությունը շարժել առ Շմավոն:

Ճշմարիտ է, որ Անտիոքոսի պահանջն ապօրեն էր և բոլոր առումներով արդարությանը հակառակ, բայց նա, անիրավ անձնավորություն լինելով, իսկույն Կենդեբոս անունով զորահրամանատարին հրամայում է անթիվ հետևակ և ձիավոր զորքով արշավել Հրեաստան և պատժել իսրայելացիներին:

Երբ Կենդեբոսը, ըստ թագավորական հրամանի Հրեաստան գալով գործի է անցնում, Շմավոնը իր երկու որդիներին՝ Հովհաննեսին և Հուդային, զորքի հրամանատար կարգելով, Հովհաննեսին հանձնարարում է պատերազմել թշնամու դեմ, քանի որ ինքն արդեն ծեր էր: Նրանք քսան հազար հեծելազորով դուրս գալով թշնամու դեմ՝ Հուդան պատերազմում վիրավորվում է, բայց Հովհաննեսը, Աստծու ողորմությամբ մեծ քաջությամբ հարձակվելով թշնամու վրա, շատ մեծ զորք կոտորելուց բացի, երբ թշնամու փախչող զորքը Ազովտոսի կողմերում գտնվող աշտարակներում է պատսպարվում, ինքը ևս ապաստակելով քանդում և ավերում է թշնամու ամուր համարած այդ բերդերը և թշնամու երկու հազար զորք կոտորելուց հետո հաղթական փառքով և բոլորովին անվնաս վերադառնում է Երուսաղեմ:

Արդ, թշնամին Աստծու ողորմությամբ տկարանում է, և ողջ իսրայելյան ազգը կատարելապես խաղաղ և հանգիստ է լինում: Շմավոնը, բոլոր առումներով փառավոր և զորացած,

ցանկանում է իր եղբայրների՝ Հուդայի և Հովնաթանի նման դաշնակցել հռոմեացիների հետ և միշտ համերաշխ մնալ, որ եթե երբևէ թշնամիները նորից նեղեն իսրայելացիներին, պարտավորված լինեն՝ պայմանագրի համաձայն օգնելու իրենց: Այս է պատճառը, որ հատուկ պատգամավորներով հազար քսակ արժողությամբ մի վահան է ընծա ուղարկում Հռոմ, որպեսզի նախկինում հաստատված դաշինքը նորոգի:

Հիրավի, հռոմեացիները սրանից շատ են ուրախանում և ըստ Շմավոնի խնդրանքի դաշինք կնքելով՝ անհրաժեշտ վայրեր գրություններ են ուղարկում, որ ոչ մեկը չհամարձակվի վնասելու իսրայելացիներին, բայց Շմավոնը հույսը Աստծուց մարդկանց վրա դնելու համար մահանում է հենց իր փեսայի՝ Պտղոմեոս անունով ոմն չար մարդու ձեռքով:

Շմավոնն այս Պտղոմեոսին, որը շատ հարուստ և իսրայելացիների մեջ մեծ փառքի և պատվի տեր էր, Երիքով քաղաքի կառավարիչ է կարգում, բայց քանի որ նա շատ հպարտ և ինքնահավան մարդ էր, դժգոհ իր դիրքից՝ քահանայապետություն էր փափագում, ուստի իր տան մեջ գաղտնի մարդիկ է պահում, որ Շմավոնի՝ հյուր գալու ժամանակ մի որևէ հնարով սպանի նրան և ինքը քահանայապետ դառնա:

Երբ Շմավոնը երկու որդիների՝ Մատաթիի և Հուդայի հետ ժողովրդին կառավարելու գործերով այն կողմերում է լինում, Պտղոմեոսը շտապում է՝ նրան իր տուն հրավիրելու, և ուտելիխմելուց հետո, երբ ուրախ ժամանակ էին անցկացնում, նրա մարդիկ, հանկարծ Շմավոնի վրա հարձակվելով, սպանում են նրան, նրա երկու որդիներին և ծառաներին: Անօրեն Պտղոմեոսը այս գազանային անզգամությունը գործելուց հետո Անտիոքոս թագավորին հաճոյանալու համար իսկույն լուր է ուղարկում, որ Շմավոնից պահանջած քաղաքներն ու գումարը նրան հանձնելու համար զորք ուղարկի:

Հետո Գազար կոչվող վայրում գտնվող Հովհաննեսին բռնելու և Երուսաղեմում տաճարի լեռը գրավելու համար մարդիկ է ուղարկում, սակայն Հովհաննեսը, եղելությունը հասկանալով, սպանում է իրեն բռնելու եկած երկու մարդկանց և միաժամանակ թաքնվում: Այնուհետև նա հոր փոխարեն քահանայապետ է դառնում. սա այն նույն Հովհաննեսն է, որն ընդհանրապես Հյուրկանոս է կոչվում:

Հարց ԼԸ: **Հովհաննեսը, քահանայապետ դառնալով, քանի՞ տարի է կառավարում ժողովրդին:**

Պատասխան: Երեսուներեք տարի: Սա մեծ քաջությամբ հաղթելով իր թշնամիներին՝ մեծ փառքի է արժանանում, և Սուրբ գիրքն էլ է գովաբանում է նրան[399]: Հին Կտակարանում գրված է մինչև սույն Հովհաննեսի ժամանակաշրջանը. այնուհետև և՛ Իսրայելում, և՛ այլոց կողմից նրանց հետ պատահած դեպքերը հիշատակվում են Հովսեփոս անունով հրեա պատմիչի գրքերում: Հիշյալ Հովհաննեսից հետո նրա Արիստաբուղոս անունով որդին է քահանայապետ և թագավոր դառնում: Նրան հաջորդում է եղբայրը՝ Հաննեսը (որը Աղեքսանդրոս Առաջին է անվանվել): Հաննեսից հետո թագավորում է նրա կինը՝ Ալեքսանդրան, որովհետև մահանալիս նա թագավորությունը հանձնում է իր կնոջը, որն էլ իր հերթին՝ որդուն՝ Հյուրկանոս Երկրորդին:

---

[399] Ինչ վերաբերում է Հովհաննեսին, նրա պատերազմներին, տարբեր մարդկանց քաջագործություններին, պարիսպների շինարարություններին կամ բարի գործերին և այլ պատմություններին, դրանք բոլորը գրի են առնված քահանաների մատյաններում, սկսած այն օրից, երբ Հովհաննեսը իր հորից հետո դարձավ քահանայապետ (*Ա Մակ. 16:23,24*):

Սակայն Հյուրկանոսի եղբայրը՝ Արիստաբուղոս Երկրորդը, եղբորը բռնությամբ զրկում է գահից և ինքը ձեռքն առնում իշխանության ղեկը: Սրանք՝ երկու եղբայրները, միմյանց թշնամի լինելով, իրենց հույսը դնում են հռոմեացիների վրա, մինչև որ հռոմեացի Պոմպեոս զորավարը գալով տիրում է Երուսաղեմին և Հյուրկանոսի իշխանությունը վերահաստատելուց բացի՝ Արիստաբուղոսին և նրա երկու որդիներին՝ Աղեքսանդրոսին և Անտիդոնոսին, շղթայակապ ուղարկում Հռոմ: Սակայն Աղեքսանդրոսը, ճանապարհին ազատվելով, Երուսաղեմ է գալիս, և այնուհետև խռովություններն անպակաս են լինում: Միառժամանակ հետո եղբայրը՝ Անտիգոնոսը, հոր հետ մի կերպ ազատվում է Հռոմից և հոր մահից հետո բազում ջանքերով թագավոր դառնում:

Այնուհետև եդովմայեցի կամ ասկաղոնացի Անտիպատրոս անունով մի մարդու որդին, որը Առաջին կամ Մեծ Հերովդես կոչվածն է, հռոմեացիների Օգոստոս կայսեր հրամանով դառնում է Երուսաղեմի թագավոր: Սա, պատերազմելով Անտիգոնոսի դեմ, հաղթում է և նրան Աքիա աքսորելով՝ այնտեղ սպանել տալիս: Սույն Անտիգոնոսով ավարտվում է Հուդայի և ողջ իսրայելյան ազգի թագավորությունը, որի պատմությունը համառոտակի ներկայացրինք:

Այստեղ հարկ է մեծ ուշադրությամբ նկատել, թե մի ազգի կամ քաղաքի մեծամեծների միջև տեղի ունեցող գժտություններն ինչպիսի մեծ չարիքների պատճառ կարող են լինել: Քանի որ վերոհիշյալ Հուդան և նրա եղբայրները՝ Հովնաթանը և Շմավոնը, երբեք փառքի կամ մեծության հետամուտ չեն լինում, միմիայն ազգի և օրենքի եռանդագին սիրով վառված և միաբանության հոգով միշտ միմյանց կապված, իրենց ամբողջ մտահոգությունը ժողովրդի բարեկեցությանն ու հանգստին են նվիրում:

Սակայն, ափսո՛ս, որ Հովհաննեսի մահվանից հետո անձնական փառքին և մեծությանը հետամուտ նրա որդիների միջև կռիվներ և անհամաձայնություններ են առաջանում, որ ոչ միայն նրանց կորստյան, այլև ամբողջ Հրեաստանի՝ հեթանոսների ձեռքն ընկնելու պատճառ են լինում: Հովսեփոս պատմագիրը Պատմության Ա գրքում մանրամասնորեն գրում է նրանց աշխարհիկ իշխանության և մեծության հասնելու տենչանքով միմյանց հասցրած ահավոր չարիքի, քինախնդրության և թշնամանական արարքների մասին: Թեև սրանք Ղևի ցեղից էին, սակայն Հուդայի ցեղը, իսրայելացիների ծերերի կամքով ընտրված լինելով, իշխում է բոլորին: Իսկ վերոհիշյալ Հերովդեսը կռապաշտ ազգից և հռոմեացիների կայսեր հրամանով հրեաների թագավոր նշանակված լինելով՝ իշխանությունը, Հուդայի ցեղից վերցվելով, ուրիշ ազգի ձեռքն է անցնում:

Այս Հերովդեսի թագավորության ժամանակ Հիսուս Քրիստոս՝ մեր Փրկիչն է ծնվում[400] (տե՛ս Երրորդ դար, ԼԹ հարցը), և Աստծու զորավոր ներգործությամբ իրականանում է Հակոբ նահապետի՝ իր չորրորդ որդու՝ Հուդայի ցեղին վերաբերող նախապես ասված խոսքը, թե նրա ցեղից իշխան չպիտի պակասի, մինչև որ Մեսիան աշխարհ գա[401]: Սրա մասին ոչ միայն Հակոբ նահապետի, այլև բոլոր մարգարեների մարգարեությունները լիովին կատարվում են: Նրանք Մեսիայի աշխարհ գալու մասին աստվածային ներշնչումով նախապես գրել են տարբեր ժամանակներում :

---

[400] Երբ Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, Հերովդես արքայի օրով (*Մտ. 2:1*):

[401] Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչև որ գա նա, ում պատկանում են հանդերձյալները: Նրա՛ն են սպասում ժողովուրդները (*Ծնող. 49:10*):

Արդ, հրեաները, չհավատալով Նրա գալստյանը և ասելով, թե դեռևս պիտի գա, պարզապես ամեն կերպ Սուրբ գրքի իմաստի դեմ են խոսում: Քանի որ նույն ինքը՝ Հովսեփոս պատմագիրը, մարգարեների գուշակության համապատասխան, բացահայտորեն գրում է Մեսիայի գալուստը, քարոզությունը, հրաշագործությունները, հրեա ազգի գլխավորների մատնությամբ Պիղատոսի կողմից խաչվելը և երեքօրյա հարությունը[402]:

Մինչ այստեղ Հին Կտակարանում գրված պատմությունների մասին հնարավորինս համառոտակի ներկայացրինք, ինչ որ կարևոր և օգտակար համարեցինք. այսուհետև հինգերորդ դարում գրվելիք նյութերը Սուրբ Ավետարանից ենք քաղելու, որովհետև Հին Կտակարանը՝ մինչև Փրկչի աշխարհ գալու, իսկ Նոր Կտակարանը աշխարհ գալու մասին է տեղեկացնում: Այո՛, Հին Կտակարանը սկզբից մինչև վերջ Փրկչի մասին և՛ հայտնապես, և՛ ծածուկ գրված լինելով՝ Ավետարանի հիմքերը հենց աշխարհի ստեղծումից են դրվել:

Երբ Փրկիչն աշխարհ գալով իր մասին Սուրբ գրքում գրվածքները կատարում է, Նրա պատմությունը բոլորին հայտնելու համար չորս ավետարանիչները՝ Մատթեոսը,

---

402 Այս ժամանակներում էր Հիսուս անունով իմաստուն այրը, եթե իհարկե մեզ կարելի է Նրան այր կոչել. քանի որ հրաշագործ էր և նրանց ուսուցիչը, ովքեր հոժարությամբ ընդունում էին ճշմարտությունը. այն ժամանակվա հրեաներից և հեթանոսներից շատ աշակերտներ ուներ: Նա հենց Ինքը՝ Քրիստոսն էր, որին մեր ազգի իշխանավորների չարախոսությամբ Պիղատոսը խաչի պատժին դատապարտեց: Սակայն նրանք, ովքեր հենց սկզբից սիրում են Նրան, չեն կտրվում Նրա սիրուց, քանի որ երեք օր հետո դարձյալ կենդանի երևում է նրանց, ինչպես որ մարգարեները Աստծու այս և բազում սքանչելիքների մասին ասել էին.... (Հովսեփոսի Պատմության Բ դպրության գրքից. Ժ գլուխ):

Մարկոսը, Ղուկասը և Հովհաննեսը, Սուրբ Հոգու ներշնչմամբ գրում են Ավետարանները, որպեսզի մարդիկ, Նրան հավատալով և Նրա պատվիրանները կատարելով, Աստծու արքայությանն արժանանան. այս է պատճառ, որ այն կոչվում է *Ավետարան*, ինչպես որ Փրկիչ Հիսուս Քրիստոսի ծննդյան ժամանակ հրեշտակն է հովիվներին ավետում. «Այսօր ձեզ Փրկիչ ծնվեց»:

ՑԱՆԿ Բ ՀԱՏՈՐԻ

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ

Հատ Ա: **Հեսուն ինչպե՞ս է ժողովրդին անցկացնում Հորդանան գետը 7**

Հատ Բ: **Երիքովի թագավորը, իմանալով իսրայելացիների՝ Հորդանանը հրաշքով անցնելը, հնազանդվո՞ւմ է Հեսուին 10**

Հատ Գ: **Երիքովի և Գայիի կործանումից հետո մոտակայքում գտնվող քաղաքի թագավորները հնազանդվո՞ւմ են . 15**

Հատ Դ: **Ավետյաց երկիրն ինչպե՞ս է բաժանվում իսրայելացիների միջև 19**

Հատ Ե: **Հեսուի մահվանից հետո իսրայելացիները մշտապես հնազա՞նդ են մնում Աստծուն 21**

Հատ Զ: **Աստված արդյոք իսկույն պատժո՞ւմ է իսրայելացիների անհնազանդությունը. 24**

Հատ Է: **Հիշյալ դեպքերից հետո իսրայելացիներն ուղղվո՞ւմ են 30**

Հատ Ը: **Ինչպիսի՞ն էր իսրայելացիների վիճակը Դեբովրայի մահվանից հետո 35**

Հատ Թ: **Գեդեոնի մահվանից հետո իսրայելացիները նորից կո՞ւռք են պաշտում 46**

Հատ Ժ: **Հետո ո՞վ է լինում իսրայելացիների դատավորը. . . . 50**

Հատ ԺԱ: **Ինչպիսի՞ն էր Իսրայելի վիճակը վերոհիշյալ դատավորներից հետո 55**

Հատ ԺԲ: **Ինչպե՞ս է Սամսոնը վրեժխնդիր լինում կռապաշտներից 60**

Հատ ԺԳ: **Սամվելը ո՞ր ցեղից և ո՞ւմ որդին էր 67**

Հատ ԺԴ: **Կռապաշտները տապանակի պատճառով ինչպե՞ս են պատժվում 75**

Հատ ԺԵ: **Հեղիի մահից հետո ո՞վ է լինում դատավոր 81**

Հատ ԺԶ: **Սավուղը Իսրայելի ո՞ր ցեղից, ո՞ւմ որդին և ինչպիսի՞ մարդ էր 86**

Հատոր ԺԷ: **Սավուղը Սամվելի հանդիմանությանը տալի՞ս է որևէ պատասխան 94**

Հատոր ԺԸ: **Հետայսու ինչպիսի՞ն էր Սավուղի վիճակը 102**

Հատոր ԺԹ: **Սավուղը պատվո՞ւմ է Դավթին, որի շնորհիվ հաղթանակել էր 111**

Հատոր Ի: **Սավուղը Դավթին իրեն փեսա դարձնելուց հետո դադարեցնո՞ւմ է նրա դեմ թշնամությունը 115**

Հատոր ԻԱ: **Դավիթը, Հովնաթանից բաժանվելով, ո՞ւր է գնում . . 122**

Հատոր ԻԲ: **Սավուղը, Դավթի տեղն իմանալով, հետամտո՞ւմ է նրան 126**

Հատոր ԻԳ: **Սավուղը նորից թշնամանո՞ւմ է Դավթին 134**

Հատոր ԻԴ: **Սավուղի «մեղա՛» ասելուց հետո Դավիթը նորից բնակվո՞ւմ է նրա երկրում 137**

Հատոր ԻԵ: **Ի՞նչ վիճակում էր Սավուղը, երբ Դավիթը Սիկիլակում փառավորված և ուրախ էր 142**

Հատոր ԻԶ: **Դավիթը, Սավուղի մահվան մասին լսելով, ուրախանո՞ւմ է 147**

Հատոր ԻԷ: **Դավիթն ու Հեբուսթեն, բանակ կազմելով, միմյանց դե՞մ են պատերազմում 153**

Հատոր ԻԸ: **Քանի՞ տարի է թագավորում Հեբուսթեն 159**

Հատոր ԻԹ: **Քանի՞ տարի է տապանակը մնում Դավթի տանը . . 166**

Հատոր Լ: **Դավիթը իր թագավորության ընթացքում նեղություն և տրտմություն ունենո՞ւմ է. 171**

Հատոր ԼԱ: **Ամոնացիների դեմ պատերազմող Հովաբն իր զորքով ինչքա՞ն է այնտեղ մնում 180**

Հատոր ԼԲ: **Աբիսողոմը ինչքա՞ն է մնում Գեսուրում. 186**

Հատոր ԼԳ: **Ներում ստանալուց հետո Աբիսողոմը միշտ հնազա՞նդ է մնում հորը՝ Դավթին 187**

Հատոր ԼԴ: **Աբիսողոմի՝ Երուսաղեմ գալու ժամանակ բնակիչները նրա դե՞մ են դուրս գալիս 194**

Հատոր ԼԵ: **Աբիսողոմը պատերազմո՞ւմ է Դավթի դեմ. 199**

Հատոր ԼԶ: **Ինչպե՞ս է վարվում Դավիթը՝ լսելով Աբիսողոմի մահվան բոթը 202**

Հատոր ԼԷ: **Աբիսողոմի մահվանից հետո Դավիթը, անմիջապես Երուսաղեմ գնալով, բազմո՞ւմ է իր գահին 205**

Հատոր ԼԸ: **Ի՞նչ է լինում վերոհիշյալ Սաբեեի վախճանը, որը Դավթին չի հնազանդվում և իսրայելացիներին էլ ապստամբության է դրդում 209**

Հատոր ԼԹ: **Ուրիշ ի՞նչ դեպքեր են լինում Դավթի օրոք 210**

Հատոր Խ: **Դավթի օրոք թշնամիները այլ հարձակումներ նախաձեռնո՞ւմ են 213**

Հատոր ԽԱ: **Դավիթը ո՞ղջ էր, երբ թագավորում էր Սողոմոնը . . 219**

Հատոր ԽԲ: **Ինչպիսի՞ն էր Սողոմոնի վիճակը Դավթի մահվանից հետո 226**

Հատոր ԽԳ: **Ամբողջ Իսրայելը հնազա՞նդ էր Սողոմոնին 229**

Հատոր ԽԴ: **Սողոմոնը ե՞րբ է սկսում կառուցել տաճարը 233**

Հատոր ԽԵ: **Քանի՞ տարի է տևում տաճարի կառուցումը 238**

Հատոր ԽԶ: **Սողոմոնը միշտ հնազանդվո՞ւմ է Աստծու հրամանին 242**

Հատոր ԽԷ: **Սողոմոնի մահվանից հետո ո՞վ է թագավորում Երուսաղեմում 246**

Հատոր ԽԸ: **Հերոբովամն ի վերջո արդյոք զղջո՞ւմ է 252**

Հատոր ԽԹ: **Հուդայի Ռոբովամ թագավորը միշտ հնազանդվո՞ւմ է Աստծուն 256**

Հատոր Ծ: **Ռոբովամից հետո ո՞վ է լինում Հուդայի թագավոր Երուսաղեմում 260**

Հատոր ԾԱ: **Ո՞վ է հաջորդում Աբիասին 261**

Հատոր ԾԲ: **Երբ Հուդայի թագավորն ու ժողովուրդը այսպես զգուշավոր էին, ինչպիսի՞ն էին Իսրայելի թագավորն ու ժողովուրդը 262**

Հատոր ԾԳ: **Ո՞վ է հաջորդում Ասային 267**

Հատոր ԾԴ: **Ամրիի փոխարեն ո՞վ է դառնում Իսրայելի թագավոր 269**

Հատ ԾԵ: **Աքաաբը բարկանո՞ւմ է Եղիա մարգարեի խոսքերի պատճառով 274**

Հատ ԾԶ: **Աքաաբը, երբ պարզորոշ տեսնում է, որ Եղիայի աղոթքով է անձրև գալիս, հարգում և հնազանդվո՞ւմ է մարգարեին. 278**

Հատ ԾԷ: **Աքաաբը հե՞տ է դառնում իր չար ճանապարհից. . . 282**

Հատ ԾԸ: **Աքաաբը, իր պատիժը լսելով, զղջո՞ւմ է 288**

Հատ ԾԹ: **ԾԷ հարցում հիշատակված ասորիների մեղավոր թագավորը, որին Աքաաբը չի սպանում, կատարո՞ւմ է իր խոստումը 291**

Հատ Կ: **Երբ Աքաաբը մահանում է, նրա զորքը՝ ցրվում, Հուդայի թագավոր Հովսափաթը վերադառնո՞ւմ է Երուսաղեմ 295**

Հատ ԿԱ: **Աքաաբի մահվանից հետո ո՞վ է դառնում Իսրայելի թագավոր. 299**

Հատ ԿԲ: **Հետո ի՞նչ է լինում Եղիա մարգարեին 300**

Հատ ԿԳ: **Ո՞վ է հաջորդում Ոքոզիային. 304**

Հատ ԿԴ: **Ո՞վ է հաջորդում Հովսափաթին 308**

Հատ ԿԵ: **Ուրիշ ի՞նչ հրաշքներ է կատարում Եղիսեն. 311**

Հատ ԿԶ: **Ասորիների թագավորը դարձյալ թշնամությո՞ւն է անում Հովրամի դեմ. 321**

Հատ ԿԷ: **Հովրամն այսպիսի հրաշքով սովից և թշնամուց ազատվելուց հետո հնազանդվո՞ւմ է Աստծուն . . . 326**

Հատ ԿԸ: **Ո՞վ է հաջորդում Հուդայի թագավոր Ոքոզիային . . 334**

Հատ ԿԹ: **Ո՞վ է հաջորդում Իսրայելի թագավոր Հեուին . . . 339**

Հատ Հ: **Ո՞վ է հաջորդում Հուդայի թագավոր Հովասին . . . 342**

Հատ ՀԱ: **Ո՞վ է հաջորդում Իսրայելի թագավոր Հովասին . . . 345**

Հատ ՀԲ: **Ո՞վ է հաջորդում Իսրայելի թագավոր Հերոբովամ Երկրորդին 348**

Հատ ՀԳ: **Ո՞վ է հաջորդում Հուդայի Ոզիա թագավորին . . . 349**

Հատ ՀԴ: **Ի՞նչ է լինում Իսրայելի վերոհիշյալ Ովսեե թագավորը 353**

Հատ ՀԵ: **Ո՞վ է հաջորդում Հուդայի վերոհիշյալ Աքազ թագավորին 355**

Հատ ՀԶ: **Սենեքերիմը, Եզեկիայից մեծ գումար ստանալով, բավարարվում և հե՞տ է դառնում 359**

Հատ ՀԷ: **Ո՞վ է հաջորդում Եզեկիային 365**

Հատ ՀԸ: **Ո՞վ է հաջորդում Ամոնին 367**

Հատ ՀԹ: **Ո՞վ է հաջորդում Հովսիային 370**

Հատ Զ: **Քանի՞ տարի է թագավորում Սեդեկիան 373**

Հատ ԶԱ: **Երուսաղեմի և տաճարի ավերվելուց հետո ի՞նչ է լինում տապանակը 378**

ՀՌՈՒԹ

Հատ ԶԲ: **Ո՞վ էր Հռութը 380**

Հատ ԶԳ: **Ո՞վ էր Տովբիթը 382**

Հատ ԶԴ: **Ո՞վ էր Հուդիթը 394**

Հատ ԶԵ: **Ո՞վ էր Եսթերը 407**

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐ

Հատ Ա: **Հինգերորդ դարն ինչո՞վ է տարբերվում չորրորդից . . 423**

Հատ Բ: **Բաբելոնյան գերության յոթանասունամյա ժամանակամիջոցում Հուդայի ժողովուրդն ինչպե՞ս է կառավարվում 425**

Հատ Գ: **Ո՞ր թագավորի օրոք են իսրայելացիները ազատվում Բաբելոնի գերությունից 466**

Հատ Դ: **Տաճարի վերակառուցումն արգելող թշնամիներ լինո՞ւմ են 468**

Հատ Ե: **Հրեաներն ո՞ւմ միջոցով են արտոնություն ստանում Դարեհից 469**

Հատ Զ: **Հրեաները տաճարը կառուցելուց հետո միշտ հնազա՞նդ են լինում Աստծուն 473**

Հատ Է: **Երբ Եզրասը ժողովրդի վարքն ուղղելու համար եռանդով տքնում է, ժողովուրդը հնազանդվո՞ւմ է նրան 475**

Հատոր Ը: **Նեեմիի ջանքերին ընդդիմացող մարդիկ լինո՞ւմ են 480**

Հատոր Թ: **Պարսիկ թագավորներից հետո ո՞վ է իշխում Հրեաստանում. 483**

Հատոր Ժ: **Պտղոմեոսը տաճարում Ցիրոջ կողմից պատժվելուց հետո հրեաներին նեղո՞ւմ է 486**

Հատոր ԺԱ: **Երբ հրեաները մահվան աստիճանի են հասնում, օգնություն խնդրո՞ւմ են մարդկանցից 489**

Հատոր ԺԲ: **Վերոհիշյալ հրաշքից հետո Պտղոմեոսը նորից նեղո՞ւմ է իսրայելացիներին 494**

Հատոր ԺԳ: **Հետո հրեաները ի՞նչ վիճակում են լինում 497**

Հատոր ԺԴ: **Անտիոքոսը, Երուսաղեմ գալով, հրեաներին նեղո՞ւմ է 499**

Հատոր ԺԵ: **Անտիոքոսը, Երուսաղեմի բնակիչների խռովությունների մասին լսելով, նեղո՞ւմ է նրանց . . 503**

Հատոր ԺԶ: **Հրեաները, որ այնքան նեղություն են կրում Անտիոքոսից, Աստծուն աղաչելով, արժանանո՞ւմ են գթության 510**

Հատոր ԺԷ: **Հրեաները հնազանդվո՞ւմ են զորավար դարձած Հուդա Մակաբայեցուն. 514**

Հատոր ԺԸ: **Անգութ Անտիոքոսը, տեղեկանալով Հուդայի գործերին, նեղո՞ւմ է իսրայելացիներին 515**

Հատոր ԺԹ: **Այս հաղթանակներից հետո Հուդան ամրացնո՞ւմ է Երուսաղեմը 519**

Հատոր Ի: **Վերոհիշյալ հեթանոս ազգերը իսրայելացիներին նորից նեղությո՞ւն են տալիս 520**

Հատոր ԻԱ: **Ինչպիսի՞ն է լինում անագորույն Անտիոքոսի վախճանը, որը հարստություն դիզելու համար Պարսկաստան է գնում. 524**

Հատոր ԻԲ: **Անտիոքոսն իր խոստովանության և խոստումների համար արժանանո՞ւմ է թողության 526**

Հատոր ԻԳ: **Հուդան, գրված քաղաքներում զորք տեղակայելով, իշխո՞ւմ է այնտեղ. 527**

Հատ ԻԴ: **Հուդան, ընդունելով Լուսիասի առաջարկը, հաշտվո՞ւմ է նրա հետ 529**

Հատ ԻԵ: **Անտիոքոս թագավորը, Հուդայի հետ հաշտություն կնքելով, իր խոստմանը միշտ հավատարի՞մ է մնում . 532**

Հատ ԻԶ: **Հետագայում ի՞նչ են լինում վերոհիշյալ Անտիոքոսը և Լուսիաս նախարարը 537**

Հատ ԻԷ: **Երբ անօրեն Հակիմոսը իշխան է կարգվում, ինչպիսի՞ն է լինում ժողովրդի վիճակը 539**

Հատ ԻԸ: **Այսպիսի անգթություն գործած Նիկանովրը հարձակվո՞ւմ է Հուդայի վրա 542**

Հատ ԻԹ: **Հուդայի՝ Նիկանովրին սպանելուց և նրա ամբողջ զորքը կոտորելուց հետո Դեմետր թագավորը համարձակվո՞ւմ է նորից զորք ուղարկել նրա դեմ . . 546**

Հատ Լ: **Հուդայի մահվանից հետո ինչպիսի՞ն է լինում իսրայելացիների վիճակը 548**

Հատ ԼԱ: **Դեմետր թագավորը նորից թշնամանո՞ւմ է Հովնաթանին 553**

Հատ ԼԲ: **Հիշյալ Աղեսքանդրոսը Հովնաթանի հետ միշտ սիրով և հա՞շտ էր. 555**

Հատ ԼԳ: **Եգիպտոսի Պտղոմեոս թագավորը իր փեսա Աղեքսանդրոսի հետ միշտ սիրով և բարեկամությա՞մբ է մնում. 557**

Հատ ԼԴ: **Դեմետրը, որը Հովնաթանի օգնությամբ մահից է ազատվում, կատարո՞ւմ է խոստումը. 561**

Հատ ԼԵ: **Հովնաթանի գերվելուց հետո ո՞վ է կառավարում Իսրայելը. 565**

Հատ ԼԶ: **Տրիփոնը, որ հանիրավի էր թագավորում, կարողանո՞ւմ է մնալ գահին 567**

Հատ ԼԷ: **Վերոհիշյալ Անտիոքոսը, որը մեծ արտոնություններ է տալիս հրեաներին, միշտ հավատարի՞մ է մնում իր խոսքին 569**

Հատ ԼԸ: **Հովհաննեսը, քահանայապետ դառնալով, քանի՞ տարի է կառավարում ժողովրդին 572**

ՊՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ

ՀԻՆԳ ԴԱՐԵՐԻ ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հատոր Բ

Նախաձեռնությամբ՝
Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ
Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանի

Արևմտահայերենից փոխադրեց
Վաչագան սարկավագ Դոխոյանը

Խմբագիր և սրբագրիչ՝
Նազիկ Հովհաննիսյան

Ձևավորումը և էջադրումը՝
Գոռ Գրիգորյանի

ISBN 978-9939-1-1081-3